

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԸՆՁԱՌՅՈՒԾՆ ԱԶԱՏ,
ՆՐԲԱԳԵՂ ՈՒ ՃԱՊՈՒԿ
ԳՐԵԼՈՒ ԱՐՎԵՍԸ**

**«ԷՂԻՏ ՊՐԻՆՏ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ»
ԵՐԵՎԱՆ, 2013**

Այս գիրքը հեղինակային ոտանավորների ու մի քանի էսեի ժողովածու է: Էսեները խոսում են հայերենի գրական «լեզվի» ցավոտ պրոբլեմներից, ու սրանք շարադրված են մի շատ ընդարձակ նախաբանի մեջ: Գիրքը գրված է Երեվանի բարբառի (խոսվածքի) վրա հիմնված **հեղինակի գրական լեզվով**: Ըստ էության, սա Խաչատուր Աբովյանի **չընդունված** փորձի առաջին հետևողական շարունակությունն է, ու սրա համար էլ հեղինակն իր այս ոտանավորների արանքները դրել է իր տեսական կարճ դիտողությունները (որոնցից ամեն մեկը մի կարճ էսե (essay) է մեր գրական ոճերի բառապաշարի մասին: Բոլոր ոտանավորներն էլ սկսվում են այս էսեներով, որտեղ հաճախ ասվում է նաև, թե այդ ոտանավորն ինչո՞ւ կամ ի՞նչ առիթով է գրվել, ու շատ անգամ էլ հեղինակն իր մտքերն է շարադրում ա՛յն թեմաների մասին, որոնք կապված են այդ ոտանավորի պատմած նյութին կամ պատմելու լեզվին: **Գրքի «փիլիսոփայությունը» բավական մանրամասն բացատրված է նախաբանի մեջ:**

Эта книга – сборник авторских стихов, а также нескольких больших эссе о наблевших проблемах армянских литературных стилей, которые изложены в очень обширном предисловии. Книга написана **на литературном языке автора**, основанном на Ереванском диалекте (говоре). По существу, это первое систематическое продолжение **непринятого** опыта Хачатура Абовяна, поэтому автор часто перемежает свои стихи краткими теоретико-лингвистическими замечаниями о лексике армянских литературных стилей. В сущности каждое такое замечание – маленькое эссе, в котором автор часто рассказывает как и зачем был написан данный стих, или рассуждает на темы, связанные с идеями стиха. С этой точки зрения книга уникальна. **“Философия” книги довольно подробно объяснена в предисловии.**

This book is a collection of poems, as well as a few essays (**these are in the Preface**) on painful problems of Armenian literary styles. The whole book is written **in author’s literary language** based on Yerevan’s dialect (patois). In fact, this is the first systematic continuation of Abovian’s **failed** experiment, and this is the reason author put his brief theoretical linguistic comments about the vocabulary of Armenian literary styles before his poems. Besides, in these comments the author tells why and how every poem was written, and he often gives his considerations on the themes connected with either the ideas of the poem, or its vocabulary, thus making each of these comments a mini-essay. From this point of view, the book is unique. **The “philosophy” of the book is explained in the preface in a rather detailed manner.**

ISBN

© *Մերուժան Հարությունյան, 2012, Երևան, Հայաստան*

ԾՆՈՂՆԵՐԻՍ –
 ԶԱՎԵՆ ՄԻԽԱՅԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
 ՈՒ
 ԼՈՒՍԻԿ ՄՈՎՍԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

*Իրանք շատ հույս ունեին, որ ես հայտնի մարդ կդառնամ:
 Չդարձա, ու երեվի չեմ է՛լ դառնա,
 բայց որ շատ կարեվոր գործ կարացի անեմ,
 կասկած չունեմ:*

Էս գիրքը չէր ընի, թե...

ԵՐԱԽՏԱԳԻՐ

Երախտապարտ եմ իմ սաղ ընգերներին, ովքեր քիչ թե շատ օգնել են ընձի, որ էս գիրքը տեղ հասցնեմ, ու ըստեղ գրում եմ է՛ն ընգերներիս անունները, ում օգնությունը կարեվոր ա էղե:

Արթուր Հարությունյանը (ֆիզմաթ. գիտ. թեկն., ԵՊՀ-ի դոցենտ), 1990-ին ոտանավորներս կոմպով հավաքե եւ շարել էր, ու գրքիս աշխատանքային օրինակը դրանից էի տպե, բայց էտ շարվածքը կորավ, ու բանասեր **Ելենա Զախարյանն** է՛ր օրինակից ոտանավորներս նորից շարեց:

Կազմի նկարագարոն ու իմ լուսանկարը **Արթուր Հարությունյանյանին** ա:

Մանավանդ երախտապարտ եմ լեզվաբան **Հրաչ Մարտիրոսյանին**, ով Լեյդենում (բան. գիտ թեկն., Լեյդենի համալսարանի դոցենտ) չափազանց ուշադիր կարդացել ա գիրքս, բազում կարեվոր դիտողություն ա արե: Մաթեմատիկոսներ՝ **Գագիկ Աղեկյանը** (ֆիզմաթ. գիտ. թեկն., Սլավոնական համալսարանի դոցենտ) ու ֆիզիկոս **Համլետ Կարայանը** (ֆիզմաթ. գիտ. դր, ԵՊՀ-ի պրոֆ., ՀՀ ԳԱԱ-ի թղթ. անդամ) ուշադիր կարդացել են սաղ ձեռագիրն ու կարեվոր դիտողություններ են արե:

Շատ ու շատ երախտապարտ եմ էս մարդկանց ու կնոջս, **Նունե-Սիրանուշին**, հորքուրիս տղա **Ստեփան Հովհաննեսի Հովսեփյանին**, ու ընգերոջս ու կոլեգայիս, **Աշոտ Հարությունի Գեվորգյանին** (ֆիզմաթ դոկտոր, ԵՊՀ-ի պրոֆեսոր), որ անընդհատ սրտապնդել են ընձի ու բարի խոսքը չեն ափսոսացե: Ասում են, չէ՞, որ քաղցր խոսքը կատվին է՛լ ա դուր գալի, իսկ իրանց խոսքերն ինձի ավելի շատ էին դուր գալի (ու էլի՛ են դուր գալի), քան թե էս Մոլորակի ուզածդ կատվին:

*Մերուժան Հարությունյան
16-ը դեկտեմբերի, 2011, Երեվան*

ՑԱՆԿԸ

ԷրկոՒ ԽՈՍՔ.....	10
ДВА СЛОВА.....	15
A FEW WORDS.....	17
Գլուխ 1. ՆԱԽԱԲԱՆ.....	19
1.1 ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ.....	19
1.2 ԼԵԶՈՒՆ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Ա.....	23
1.3 ԱՐՈՎՅԱՆԸ ԳՈՆԵ ՄԻ ՀԵՏԵՎՈՐԴ ՉՊՏԻ՞ ՈՒՆԵՆԱ.....	25
1.4 ԷՐԵՎԱՆԻ ԲԱՐՔԱՌԸ ԺԱՐԳՈՆ ՉԻ.....	26
1.5 ԱՆԲԱԽՏ ԵՆՔ, ՈՐՏԵՎ ՔԻ՞Չ ԵՆՔ.....	30
1.6 ԴԱՆԴԱՂ ԳՈՐԾՈՂ ՈՒՈՒՄԲԸ.....	31
1.7 ՄԵՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՍԿԶԲՈՒՆՔ ՉՈՒՆԻ.....	32
1.8 Ի՞ՆՉ ՊՏԻ ԱՐՎԻ.....	34
1.9 Ո՞ՆՑ ԱՆԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ԳՐԱԿԱՆԸ ՄԵՌԱՃ ՉԸԼՆԻ.....	34
1.10 ՉԵՄ ԱՍՈՒՄ, ԹԵ ԷՎԵՔ ԳՐԱԿԱՆ ՈՃԵՐԸ ԴԵՆ ՔՑԵՆՔ.....	35
1.11 ՈՒՐԻՇՆԵՐԸ Ո՞ՆՑ ԵՆ ԳՐԱԿԱՆ «ԼԵԶՈՒ» ՍԱՐՔԵ.....	36
1.12 ՊՏԻ ԴԱՐԵՐՈՎ ՍԽԱԼՎԵՆՔ, ՈՐ ՃԻՇՏԸ ԻՄԱՆԱ՞ՆՔ.....	37
1.13 ՈՒՒՍԵՐԵՆՆ ԱՓՍՈՍ ՉԷ՞Ր.....	38
1.14 ՀԵՐԻՔ ՉԻ՞ ԽԱՎԱՐ ՄՆԱՆՔ.....	39
Глава 1. ПРЕДИСЛОВИЕ.....	40
РАЗВЕ АБОВЯН НЕ МОГ ИМЕТЬ ПОСЛЕДОВАТЕЛЕЙ?.....	40
1.1 ВСЕГО ОДИН ВОПРОС.....	40
1.2 НАШ ЛИТЕРАТУРНЫЙ “ЯЗЫК” – НАСТОЯЩИЙ ЖАРГОН.....	41
1.3 ЗАЧЕМ НУЖНО ПРИЗНАНИЕ?.....	44
1.4 ПРАВИЛЬНЫЙ СПОСОБ СОЗИДАНИЯ.....	44
1.5 ЗАМЕДЛЕННАЯ БОМБА, ЗАВЕДЕННАЯ АБОВЯНОМ.....	46
1.6 Я НЕ СДЕЛАЛ НИЧЕГО НОВОГО.....	47
1.7 ХОТИМ МЫ, ЧТОБЫ НАРОД БЫЛ ГРАМОТНЫМ?.....	48
1.8 ЧТО НУЖНО, ЧТОБЫ ПИСАТЬ ЖИВЫМ ЯЗЫКОМ?.....	48
1.9 КАКОВЫ СЕГОДНЯШНИЕ ТЕНДЕНЦИИ?.....	49
1.10 ДРУГИЕ КАК СОЗДАЛИ СВОИ ЛИТЕРАТУРНЫЕ СТИЛИ?.....	50
1.11 РАЗВЕ РУССКИЙ ЯЗЫК БЫЛ НЕНУЖЕН?.....	51
Chapter 1 A PREFACE.....	54
1.1 A FEW QUESTIONS, OR WHAT IS A LANGUAGE FOR?.....	54
1.2 WHY HAVE I WRITTEN THIS PREFACE – CHAPTER?.....	59
1.3 IS IT STRANGE THAT THERE IS A FOLLOWER OF ABOVIAN?.....	60
1.4 ARMENIAN LITERARY ‘LANGUAGE’ IS A JARGON!.....	60
1.5 WHY IS RECOGNITION VITAL TO ME?.....	63
1.6 CAN A SMALL NATION CREATE GRAND THINGS?.....	64
1.7 ABOVIAN’S ‘DELAYED-ACTION BOMB’.....	65
1.8 THE MAIN LAW OF LANGUAGE.....	66
1.9 LANGUAGE IS NATURE!.....	67
1.10 HOW TO HAVE A LIVING LITERARY ‘LANGUAGE’?.....	68
1.11 HOW DID OTHERS MAKE THEIR LITERARY STYLES?.....	69
1.12 AREN’T WE BACKWARDED?.....	70
ՈՏԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՆՑ ԷՍԵՆԵՐԸ.....	73
Գլուխ 2 ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՑԱՎ, ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՑԱՎ.....	74
1. ԸՆԶԱՌՅՈՒՆՆ ԱԶԱՏ, ՆՐԲԱԳԵՂ ՈՒ ՃԱՊՈՒԿ.....	75
2. ՀԵ՛ՐՆ Է՛Լ ԱՆԻՃԱՃ.....	77
3. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴԱՐՁ.....	79
4. ԱՆՇՐՁԵԼԻ.....	81
5. ՆՈԿՏՅՈՒՆ.....	83
6. ԵՐԿԻՐՆ ԱՎԵՏՅԱՑ.....	85
7. ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ՝ ԸՆԶԻ ԿԱՐԳԵՔ ՀՐԵՇՏԱԿ.....	87
8. ՀԱՅԱՍՏԱՆ 1988-2088 (կարող ա).....	89
9. ՇԱՐԱՎ ՈՒ ՇԱՐԱՎ.....	91
Հրաչյա Սարգիսյան – ԻՄ ՇԱՆԸ.....	92
Հրաչյա Սարգիսյան – ԱՆՍՊԱՌ ՕՐ.....	92
10. ՍՏՈՒՊԻՆՅԱՆ ՎԱԳՈՆԸ.....	93
11. Է՛Լ ՀՄԻ ԱՐԴԵՆ.....	95
Ռոբերտ Ֆրոստ – ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ.....	96
Գլուխ 3 ԿԱՆՏՈՐԻ ՈՒ ՊԼԱՆԿԻ «ԹԵՈՐԵՄՆԵՐԸ».....	97
3.1 ԽԱՎԱՐԱՄՈՒՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՕՐԵՆՔՆԵՐԸ [16, 19].....	97
3.2 ՄԻ ԵՐԿՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵՐ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՄԱՍՈՒՆԻՆ.....	97
12. ԱՆՀԱՍՅԵ ՈՒ ԱՆՊԱՏԱՍԻԱՆ.....	99
13. ՄԱՀՎԱՆ ՎԱԽՃԱՆԸ.....	101
14. ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՏԱՐԱԳԻՐԸ.....	103

15. ԳԱՐՈՒՆԸ ՔԱՂԱՔՈՒՄ.....105
 Հրաշյա Սարուխան – ՀՐԱԺԵՇՏ.....106
 16. ՄԵՌԵԼՈՑ.....107
 17. ԶՄԵՌԱՅԻՆ ԳԻՇԵՐՎԱ ՊԱՏԿԵՐ.....109
 18. ՄԻՊՏԱԿ ԼՈՒՈՒԹՅՈՒՆԸ.....111
 Գլուխ 4 ՄԱՂԹԱՆՔ.....113
 4.1 ԱՃԱՌՅԱՆԸ ԵՐԵՎԱՆԻ «ԺԱՐԳՈՆԻ» ՄԱՍԻՆ.....113
 4.2 ԱՃԱՌՅԱՆԸ ԼԵԶՎԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....114
 4.3 ԱՃԱՌՅԱՆԸ ԼԵԶՎԻ ՀԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....114
 4.4 ԱՃԱՌՅԱՆԸ ԼԵԶՎԻ ՃՈՒՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....114
 19. ՆՈՐ ՍՈՒՐԱՀ.....115
 20. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....116
 21. ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒ ՄԱՂԹԱՆՔ.....117
 22. ԵՂԵՍՊԱԿԵՏԵՐ, ԵՂԵՍՊԱԿԵՏԵՐ.....119
 Գլուխ 5 ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵՋ Ի՞ՆՉ.....121
 5.1 ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈ՞Ւ, ԹԵ՞ ԳՐԱԿԱՆ ՈՃԵՐ.....121
 5.2 ԷՐԿՈՒ ԼԵԶՎԻ ՀԻՐԻՆԴ ԶԻ ԸԼՆՈՒՄ.....122
 Եղիշե Չարենց – ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ.....124
 ՊՏՈՒՅՏՆ ՈՒ ԱՎԱՐՏԸ.....125
 23. ՊՏՈՒՅՏԸ.....125
 ՄԵԾ ՄԱՐԴԻԿ ՀԱՎԱՏԱՑԵ՞Լ ԵՆ ԱՍՏՃՈՒՆ.....130
 24. ԱՎԱՐՏԸ (Ի ՎԵՐՋՈ ՈՒ ԱՆՇՈՒՇՏ).....131
 Գլուխ 6 ՎԻԼԱՆԵՆԵՐ.....133
 25. ԻՂՁ ՈՒ ՏԱԳՆԱՊ.....135
 26. Ո՞Չ ԼԵՐ ՍՏՐՈՒԿ ԿԱՄ ԲԱՐԲԱՐՈՍ.....136
 27. ԿԱՐՈՑՆ ԱՆԴՈՒՆԴ – ՎԱՌՈՒՄ Ա ՍԻՐՏ ՈՒ ՀՈԳԻ.....137
 28. ԳՈՆԵ ԻՄԱՆԱՆ ՈՒ ՀԻՇԵՆ.....138
 29. ՀԱԿԱՍԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՕՐՅԱ.....139
 Գլուխ 7 ԱՓՍՈ՞Մ, ԱՓՍՈՍ.....142
 5.1 ԳՐԱԿԱՆ ԻՆՉՈ՞Վ Ա ՏԱՐԲԵՐ ԻՐԱ ՄԱՅՐ ԲԱՐԲԱՌՈՒՑ.....142
 5.2 Ո՞Վ ՊՏԻ ԸԼՆԻ ԳՐԱԿԱՆ ՈՃԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ.....142
 5.3 ԼԵԶՎԻ ՀԱՐՑՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉՆ ԷԼ ՎԱՐԺՎԵԼՈՎ Ա.....142
 5.4 ՉԵՄ ԱՍՈՒՄ, ԹԵ ԳՐԱԿԱՆ ՈՃՈՎ ՄԻ ԳՐԵՔ.....143
 Հ. Թումանյան – Ս. ՆՈՒՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ.....144
 30. ԷԼ ՀԵՏ ՉԵՆ ԴԱՌՆՈՒՄ.....145
 31. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԵՎԱՄՏԻՆ.....147
 Հրաշյա Սարուխան – ՀՐԱԺԵՇՏ ԱՆՃԱՆՈՒԹ ՊԱՌԱՎԻՆ.....148
 32. ԱՅԼԱՇԽԱՐԱՅԻՆ ԳՆԱՑՔԸ ԿԱՊՈՒՏ.....149
 33. ՄԱՍՐԵՆՈՒ ԹՓԻ ՄՈՏ.....151
 34. ԱՓՍՈ՞Մ, ԱՓՍՈՍ.....152
 35. ՄԻ ՄՈՒՈՐՅԱԼ ԿԱՄ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՆՔՆԱՍՊԱՆ.....153
 Վ. Տերյան – ՄՈՌԱՆԱ՞Մ, ՄՈՌԱՆԱ՞Մ ԱՄԵՆ ԻՆՉ.....154
 Գլուխ 8 ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ ՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ.....156
 36. ԳԱԼՈ՞Ւ ԵՆ.....157
 37. ԱՎԱՐՏԸ ՀՈՒՍՈ.....159
 William Butler Yeats – THE SORROW OF LOVE.....159
 ԱՎԱՐՏԸ ՀՈՒՍՈ.....160
 38. ՄՆԱՍ ԲԱՐՈ՞Վ, ՄՆԱՍ ԲԱՐՈ՞Վ.....161
 39. ՉՔԱՎՈՐ ՈՒ ՄԻԱՄԻՏ.....162
 40. ՄԻ ՎԱՐԿՅԱՆ.....163
 41. ՎԱԽՃԱՆՎԱԾ ԿԱՄ ՀԻՎԱՆԴ ՕՐԵՐԻ ԽԱՉՈՒՂՈՒՄ.....165
 Վահան Տերյան – ՏԽՈՒՐ ՄԵՌԱՆ ԿԱՊՈՒՏԱՉՅԱ.....168
 42. ՆԱՄԱԿ.....169
 43. ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆԸ, ԹԱՂՈՒՄԻՑ ՄԻ ՔԻՉ ԱՆՑ.....171
 44. ՏԱՐԱԳԻՐ ՈՒ ՏԱՐԱԳԻՐ.....172
 45. ՀԵ՛Տ ԲԵՐԵՔ.....173
 46. ՄԱՀՎԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՂԵՎԱՆՈՒ.....174
 47. ՀԱՄԱՐՅԱ ՉԱՐԵՆՑԻ ՏՈՂՈՎ.....175
 Հ. Թումանյան – ՊԱՏՐԱՆՔ.....176
 48. ԱՆՋՈՐ ԹԱԼԻՍՄԱՆԸ.....177
 49. 70-ԱՄՅԱ ԿԱՋԱՆՈՎԱՆ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ.....179
 50. ԱՍՈՒՊԱՅԻՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ ԱՌԱՍՊԵԼԻ.....181
 51. ԱՆԵՃՔԸ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ.....182
 52. ՄՈՒՐԱՑԻԿ ՀԱՐԲԵՑՈՂԸ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ.....183
 53. ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿՍԿԻԾ.....184
 54. ՄՂՁԱՎԱՆՁ.....185
 55. ՊԱՏԵՐԱՋՄ ՈՒ ԷԿՈԼՈԳԻԱ.....187
 56. ԴԱՐՁ Ի ՇՐՋԱՆՍ ԻՐ.....189
 57. ԱՐՇԱԹԵ ՈՒ ԿԱԹԵ ՓԱՐԻԼԸ ԹԵԹԵՎ.....191
 58. ԷՍ ՀՆԳՕՐՅԱ ԱՇԽԱՐՀՈՒՄ.....192
 59. ԳԱՐՈՒՆԸ ԿԱՆԱՆՉ ԿՏԱՎԻ ՆԵՐՔՈ -1988.....193
 60. ԵՍ ԳԻԴԵՄ.....195

61. Ի՞նչ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	197
62. ԿԵՌՄԱՆՆԵՐ.....	198
***.....	198
Հրաշյա Սարուխան – ԷՍ ԳԻՇԵՐ.....	198
***.....	198
63. Ֆիզիկ.....	200
64. ԳԱՐՈՒՆ ԷՐ.....	201
65. ՍԱՌՑԱՆԱԽՇԵՐ՝ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՇՈՒՇԵՔԻՆ.....	202
Գլուխ 9 ՄԵՐ ԱՐԱԾԸ ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ Ա (Ղ. ԱՂԱՅԱՆ).....	204
66. ԱԻՐ ԽԻ՞ ԳՆԱՑԻՐ.....	206
ԱՌ ՈՐԴԻ ԵՒ ՀԱՅՐ ԻՒՐԵԱՆՑ.....	207
67. ԱՌ ՈՐԴԻ ԻՒՐ.....	207
68. ԱՌ ՀԱՅՐ ԻՒՐ.....	209
Եղիշե Չարենց – ՍՈՄԱ.....	212
69. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՓՈԹ.....	213
70. ՂՈՒՄԱՐԲԱԶԸ.....	215
71. Ի՞նչ ԱՆԵՄ, ՈՐ Ի՞նչ ԱՆԵՄ.....	217
72. ԱՄԵՆ ԻՐԻԿՈՒՆ ԺԱՄԸ 13-ԻՑ ՀԵՏՈ.....	218
Հրաշյա Սարուխան – ՏԱԳՆԱՊ.....	219
Գլուխ 10 ՈՆՑ Ա ԿԱՐՈՏԸ ԿԱՐՈՏԻՆ ԿԱՐՈՏՈՒՄ.....	220
10.1 նՈՐԻՑ ԼԳՕ-Ի ՄԱՍԻՆ.....	220
10.2 ԽԻ՞ Ա ԼԳՕ-Ն ՃԻՇՏ, ՈՒ ԽԻ՞ ՈՒՐԻՇ ՉԱՓԱՆԻՇ ՉԿԱ.....	221
73. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՏՈՂԵՐՈՎ.....	222
74. ՏԵՐՅԱՆԻ ՏՈՂԵՐՈՎ.....	223
75. ՏԵՐՅԱՆԻ ՌԻԹՄՈՎ.....	224
76. ԷՐԿՈՒ ԺԱՄ.....	225
77. ԲԱԼԼԱԴ՝ ՈՂՋԵՐԻ ՈՒ ՋՈՆՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ.....	226
78. ԿԱՐՈՏԸ ՈՆՑ Ա ԿԱՐՈՏՈՒՄ.....	227
79. ԳԱՐՈՒՆԸ ԳՆԱՑԵԼ Ա ՏՈՒՆ.....	229
80. ԱԽ, ԲՐՈՒՏ, ԲՐՈՒՏ.....	230
81. Անլուծելի ոչ մի խնդիր.....	231
Գլուխ 11 ՈՏԱՆԱՎՈՐ ԳՐԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ.....	232
2.ա ՀԵՐՆ Է՛Լ ԱՆԻԾԱԾ.....	232
2.բ ԱՍՏՎԱԾ ՉԱՆԻ-ԲԱՅՑ Ո՞ՆՑ ՉԱՆԻ.....	233
2.գ ԳՐՈՂԻ ՏԱՐԱԾ ՀԱՅԻՆ.....	233
5.ա նՈԿՏՅՈՒՐՆ.....	234
5.բ նՈԿՏՅՈՒՐՆ.....	235
ՀԱՎԵԼՎԱԾ.....	236
1 ՀԱՅԵՐԻ ԳՐԱՊԱՅՔԱՐՆԵՐԸ.....	236
1.1 Ի՞նչ Ա ԳՐԱՊԱՅՔԱՐԸ.....	236
1.2 ՄԵՐ ՀՈՒՆԱՔԱՆ ՄԱՔՐԱՄՈՒՆԵՐԸ.....	237
1.3 ՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՐԱՊԱՅՔԱՐԸ.....	239
1.4 ՀԱՅԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԳՐԱՊԱՅՔԱՐԸ.....	240
1.4 ՀԱՅԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ԳՐԱՊԱՅՔԱՐԸ.....	241
1.5 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՃԻՇՏՆ ԱՍՈՂԻՆ ՉԵՆ ԼՍԻ.....	244
1.5 ՀԱՅԵՐԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ.....	245
2 ԾԱՇԱԿ ՀԱՅ ՀԻՆ ԱԶԱՏ ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐԻՑ.....	247
2.1 ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՆԳԻՐ ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐԻՑ.....	248
2.2 ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ, ԵՐԳ ԵՐԳՈՑ.....	249
2.3 ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ.....	250
2.3 ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՑ.....	250
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ.....	254
ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ.....	255
3 ԱՐՏԵՄԻՋՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	256
The Hollow Men.....	257
ՓՈՒՉ ՄԱՐԴԻԿ.....	260
ՍԵԱՄԵՋ ՄԱՐԴԻԿ.....	258
ԳՈՐԾԱԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ.....	263
ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՐՔԵՐԸ.....	265

ԷՐԿՈՒ ԽՈՍՔ

Էս գիրքը գրելըս տեվել ա 23 տարի: Օղորմածիկ Վահագն Դավթյանը սրա ամենաառաջի տարբերակը հըլ 1990 թվին ուղարկեց Արեվիկ հրատարակչությունը, որ տպեն, բայց գիրքս մի տարի մնաց ընդե, ու որ տեսա, որ հինկարգերն արդեն քանդվել են, ու գիրքս էլ չի էլ տպվի, գնացի հետ վեկալա: Էն վախտվանից մինչեվ հմի էսի անընդհատ դգմզել եմ, մինչեվ որ էսի դառել ա ըսենց:

Էս գիրքը գրել եմ **ի՛մ գրական լեզվով** (չնայած խամ մարդուն երեվի թվա, թե գրել եմ Էրեվանի բարբառով) **հետեվելով Աբովյանին ու Թումանյանին, այսինքը, արել եմ հենց է՛ն բանը, ինչը կանեին Աբովյանն ու Թումանյանը, թե որ էսօր սաղ ըլնեին, ու թե որ իրանց թողային:** Իմ էս լեզվով (ինչն էս տողերը կարդացողը վռազ կհամարի անգրագիտություն), էս գրքի մեջ **արձակ տեքստ է՛լ եմ գրե, ոտանավոր է՛լ, հետեվելով մենակ ու մենակ Էրեվանի բարբառի օրենքներին:**

Էս տողերը կարդացողը թո մի քիչ համբերի ու մի քիչ կարդա էս գիրքը, ու հետո՛ դեն քցի, կամ ընձի հայհոյի: Առանց էսի էլ, ես էնքան անկեղծ ու խոսքը ճակատին ասող մարդ եմ (տես օրինակ, իմ [16]-ը [18]-ն ու [19]-ի **Ողբերգական վերջաբան վերնագիրը**), որ էս սաղ Հայաստանով մեկ ցրված լիքը «հակառակորդ» ունեմ (չհաշված է՛ն մարդկանց, ովքեր ընձի հակառակ կըլնեն, որտեվ հակադրվում եմ հենց է՛ն բաներին, ինչն իրանք մանկո՛ց են համարում ճիշտ ու սուրբ, որտեվ մեր գրականագետներն ու դասատուներն իրանց մոլորացրել են: Ակադեմիկոս Է. Վ. Չուբարյանը մի անգամ ընձի ասեց, որ ես «թշնամի վաստակելու եզակի հատկություն ունեմ»: Ի՞նչ անեմ, մտքինս շասե՞մ, թե որ համոզված եմ):

Էս գրքով ու մեկ էլ իմ **Սիրո չբանաձեվն ու ուսյալ ձիերը** գրքով (որ իրար հետ եմ հրատարակում), ուզում եմ ասեմ, որ Թումանյանը լրի՛վ էր ճիշտ, երբ ասում էր, որ **մեր գրական «լեզուն» պտի դեն քցենք ու գրենք ժողովրդի լեզվով** (տես էս գրքի 96-րդ էջը):

Թումանյանի էս ասածը մեր ժողովրդին չեն ասում, որ ժողովուրդը հենց իմանա, թե մեր գրական լեզուն շատ լավն ա:

Ես ընդամենը հավատացել եմ Աբովյանին ու Թումանյանին ու հենց իրա՛նց ասածն եմ անում: Ու թե որ ես սխալ եմ, կամ հայհոյանքի եմ արժան, **ուրեմը, Աբովյանն ու Թումանյանն է՛լ են հայհոյանքի արժան:**

Խի՞ եմ հենց ե՛ս (այսինքը, ֆիզիկոսըս) ասում էս բաները: Ե՛ս եմ ասում, որտեվ է՛ն մարդիկ, ովքեր պտի էս բաներն ասեին, արդեն մի 100 տարի ա, ինչ էս բաներից ձեն ու ծպտուն չեն հանում, ինչքան էլ հարցնում ես, ու ընենց ձեվ են անում, յանի ոչ մի վատ բան էլ չի էղե ու չկա:

Այնինչ, վիճակը ահավոր վատ ա:

Խաչատուր Աբովյանն ասում էր, որ իր օրերի գրական «լեզուն», այսինքը, գրաբարը, գրելու ու գործածելու համար արդեն էլ բանի պետք չի, որտեվ հասկանալի ա մենակ գրաբարի շատ լավ մասնագետին, այսինքը, շատ ու շատ քիչ մարդու: Ուրեմը, ասում էր Աբովյանը, էսի պիտի դեն շարտենք ու գրենք ժողովրդի լեզվով, ավելի ճիշտ, գլխավոր բարբառներից մեկով, հենց **Արարատյան բարբառի Էրեվանի խոսվածքով:**

Թումանյանը համաձայն էր Աբովյանին, ու ավելացնում էր, որ ի՛ր օրերի գրական «լեզուն», այսինքը, **նոր ստեղծված աշխարհաբարը** (ոչ թե **Աբովյանի Վերքի «լեզուն»**), **բանի պետք չի, որտեվ անհոտ, անհամ ու անկենդան բառերի ... ու դատարկ ֆրագների շարան ա, ու որ մեր գրական «լեզուն» դեռ չի**

կազմակերպվել ու չի էլ կազմակերպվի, մինչև չդիմեն կենդանի բարբառներին, իսկ էղած գրական «լեզուն» էլ պիտի դեն շարտեն ու գրեն ժողովրդի լեզվով (նույն տեղը):

Իսկ էսօրվա գրական «լեզուն» Թումանյանի օրերի գրականից, այսինքը, օրինակ՝ Իսահակյանի ու Չարենցի արձակ գրվածքների «լեզվից», տարբեր չի: **Էսի՝ հաստատ:** Ուրեմը, թե որ հավատանք Թումանյանին, մեր էսօրվա գրական կոչված «լեզուներն» է՛լ են դեն քցելու բան:

Ուզո՞ւմ եք իմանաք, թե Ձեր էրեխեքը խի՞ են հայերենից վատ թվանշան ստանում, խի՞ չեն կարում մի կարգին շարադրություն գրեն. խի՞ են հայ ջահելները, նույնիսկ համալսարանների ֆիզմաթ ու պոլիտեխնիկական ֆակուլտետներում, նորից հայոց լեզու անցնում, ու թե խի՞ կարգին գրականություն ու կինո ու թատրոն ու հեռացույց չունենք:

Ուզում եք իմանաք, թե Դուք է՛լ, Ձեր էրեխեքն է՛լ խի՞ եք վախտին զգվել (կամ էլի՛ եք զգվում) հայերենի քերականությունից, կարդացեք իմ **Կոմիտասի ու Աբեղյանի անձնական ու մեր ընդհանուր ողբերգությունը** գիրքը [19]:

Ուզում եք իմանաք, թե խի՞ ա մեր երգ ու պարն էս ողորմելի վիճակում. ու մեր **կոնսերվատորիան** ինչքա՛ն ա սրա մեղավորը, կարդացեք իմ **հենց նոր ասածս գրքի առաջի մասը:**

Ուզում եք իմանաք, թե խի՞ ա մեր պոեզիան էս ողորմելի վիճակում, ու ո՞վ ա սրա մեղավորը, կարդացեք էս գիրքն ու իմ **Թարգմանելու արվեստը** գիրքը [16]:

Մի քանի խոսք էլ՝ էս գրքի կառուցվածքի մասին:

Իմ էս գիրքը (համ էլ՝ մի ուրիշ գիրքը՝ **Սիրո չբանաձեվն ու ուսյալ ձիերը**, որ սրանից առաջ եմ գրե ու պտի սրա հետ տպեմ) գրելուց հետո նոր տեսա, որ վարվել եմ նույն ձեվ, ոնց որ Խ. Աբովյանը՝ իրա **Վերքը** [4] գրելուց: Այսինքը, համ նոր ձեվի արձակ ու ոտանավոր եմ գրե՝ լրիվ նոր ոճով, համ է՛լ գրելու հետ հիմնավորել եմ, թե խի՞ եմ ըսենց անում: Երեվի նպատակի ընդհանրությունն ստիպում ա, որ ձեվն է՛լ նույնն ըլնի: Ինչ որ ա, հմի կարճ ասելու եմ, թե էս սաղ ո՛նց էղավ:

Հեղինակի սեփական ծանոթագրություններով ու շատ մեծ նախաբանով ոտանավորների այ ըսենց գիրք, ինչքան էս գիրքեմ, առաջի անգամ ա գրվում:

Գրքիս մեջը երեվի շատ կրկնություն կա: Առհասարակ, իմ էս կրկնությունները դիտմամբ եմ անում: Անում եմ, նախ որտեվ իմ սաղ գործունեությունը պայքար ա, ու սրա համար էլ իմ ասածների ահագին մասը կա իմ համ էլ մյուս գրքերի մեջը, մանավանդ որ էսօրվա տիրաժները ահավոր փոքր են:

Հետո էլ, ոտանավոր կարդալը ծանր գործ ա, ու կարդացողը կարող ա սաղ ոտանավորները չկարդա. կարող ա ընտրովի կարդա, ըստուց ընդուց, ու սրա համար էլ ուզեցել եմ, որ ամեն մի ոտանավորի դիտողությունները (կամ ծանոթագրությունները), ինչքան հնարավոր ա, ինքնուրույն ըլնեն:

Բացի էսի, ռուսերեն ու անգլերեն նախաբանները իրարից մի թեթեվ տարբեր են, տարբեր են մանավանդ սրանց վերնագրերը: Սրա պատճառը է՛ն հանգամանքն ա, որ Հայաստանում չապրողները մեր դարդերին քիչ են ծանոթ, ու իմ մտքերն իրանց մի քիչ ուրիշ ձեվով պտի ասվի:

Ոտանավորների դիտողությունների էս ձեվը լրիվ պատահական եմ քթե: Ուրեմը, 1991 թիվն էր: Կիմ Ավագյանի հրատարակչությունն էի գնացե, որ ոտանավորներիս ու թարգմանություններիս գրքի մի օրինակը սարքեմ, որ վրեն աշխատեմ:

Կիմի մոտ մի լավ տղա էր աշխատում, անունը՝ Սիրակ, ու էս Սիրակը ասեց, Մեռուժ, տուր գիրքդ կազմեմ, որ հարմար ըլնի ու չհարչարվես: Գրածներս A4 ֆորմատի թղթի մի էրեսին էին տպած, ամեն մի էրեսին՝ էրկու էջ: Սիրակն էտ սաղ էրեսները մեջտեղից ծալեց՝ չտպած մասը թողալով ներսը, ու գիրքը կազմեց:

Մեկ-երկու տարի որ անցավ, էտ ծալած թերթերից մեկը, չգիդեմ ոնց, բայց հենց ծալի տեղից կեսի չափ ճղվավ, ու որտե՛վ բացելուց անընդհատ ներվայնացնում էր, ես էլ բռնի ու մինչե՛վ ծալի վերջը ճղեցի ու դարձրի էրկու թերթ, ու սրանց արանքը մնաց դատարկ:

Ես էլ իմ ոտանավորներն անընդհատ կարդում էի ընգերներիս ու ծանոթներիս (տոո, ո՛ւմ ասես, որ չէի կարդում. հենց խամ ականջ էի քթնում, կարդում էի: Պոետի խասայթն ըսենց ա, նույնիսկ ստաժավորինը): Կարդալուց՝ հետոն էլ դիտողություններ էի անում, որտե՛վ ընձի թվում էր, թե ոտանավորներս բարդ են ու անսովոր:

(Էս գրքիս էջատակերին էլ եմ լիքը բացատրություն դրե (բացի դիտողությունները), որ խամ կարդացողի համար «փակագծերը բացեմ»):

Ու տենում էի, որ դիտողություններս շատ են հետաքրքրում լսողներին, ու դրանցից հետո ոտանավորների ազդեցությունը շատանում ա:

Ու մի անգամ էլ, երբ գիրքը բացեցի ու հասա էտ դատարկ էջերին, մտքովս անցավ, թե խի՞ չեմ էտ դիտողությունները գրում. ի՞նչ անենք, որ մինչե՛վ հմի ոչ մեկն ըստենց բան չի արե: Ասում են չէ՞, թե «կուժն ու կուլան թրժողն աստվածնե՛րը չեն»:

Ախր ես ինքս հա՛ ուզեցել եմ՝ իմանամ, թե էս կամ էն գրողն ի՞նչ առիթով ա գրե իրա էս մի ոտանավորը, գրելուց ի՞նչ ա մտածե, ո՞նց ա գրե, շատ ա չարչարվե, թե չէ ևն: Ու բռնեցի ու դրանք գրեցի. էտ դիտողությունները քիչ-քիչ շատացան ու տեսքի էկան: Հետո տեսա, որ սրանցից ամեն մեկը դառել ա մի **միսի-էսե** (essay):

Բացի էսի, շատ-շատ էի ուզում, որ ամեն մի ոտանավորի ձախ էջին ըլնի իրա էսեն, ու աջ էջին էլ մենակ ոտանավորն ըլնի, բայց երկար ոտանավորներն անցնում էին էն մյուս ձախ էջը ու էս կարգը խախտում էին, ու հաջորդ աջ էջը թողում էին ազատ: Սրա համար էլ, ստիպված, պտի մի բան անեի, ու ես էլ մտածեցի՝ էս ազատ աջ էջերին դնեմ ուրիշ պոետների իմ շատ հավանած ոտանավորներն ու մտքիցս անցածը սրանց մասին է՛լ ասեմ:

(Իհարկե, ռիսկի գործ ա, որ ընձնից շատ ավելի գերազանց պոետների գործերը դրել եմ իմոնքի կողքը, որտե՛վ կարդացողը վռազ կզգա, թե սրանցից ո՛րն ու ինչքա՛ն ա լավը: Բայց եթե իմ ոտանավորները հեչ բանի պետք չեն, ինչ էլ անեի, բանի պետք չէին դառնա. ընենց որ – թո կարդացողն ի՞նքը որոշի, ու թո ի՞նքը թացը չորից ջոկի):

Է՛ն ոտանավորները, որ իրանց էսենների հետ տեղավորվում են մի էջի վրա, թողել եմ էտ էջի վրա:

Գիրքս ամենավերջի անգամը սրբագրելուց որոշեցի՝ գրեմ թե ինքս իմ ոտանավորները ո՞նց եմ գնահատում, ու ամեն մի ոտանավորի էսեի վերջը գրեցի, թե էտ ոտանավորն ինչքա՛ն ա լավը՝ հենց ի՛մ կարծիքով: Իհարկե, սրանով չեմ ուզեցե՛ ազդեմ կարդացողի վրա: Կարդացողն իրա սեփական խելքն ու ճաշակն ունի, ու թո ինքը որոշի, թե իմ ոտանավորն ինչքան ա լավը: Կարդացողը լրիվ էլ էս իրավունքը ունի, ու կարա իմ ոչ մի ոտանավորն էլ չհավանի, ու համարի, որ ես հեչ մի պոետ էլ չեմ:

Իմիջիայլոց, Հրաչ Մարտիրոսյանը մենակ մոտ մի 10-12 ոտանավոր էր համարե շատ լավը, ու հետաքրքիր ա, որ իրա համարած լավերից մի քանիսը ես համարում եմ թուլ կամ միջակ, իսկ իմ գերազանց համարածներից մի քանիսն էլ Հրաչն էր համարե ոչ գերազանց (Հրաչը շատ նրբավար մարդ ա, ու ոտանավորներիցս ո՛ր մեկը որ չէր հավանե, դրա մասին ոչ մի խոսք չէր ասե):

Էսքանից հետո տեսա, որ գիրքս դառնում ա **գրելու արվեստի մասին մի ուղե-ցույցի պես բան, ու գրքիս վերնագրի տակն էսի է՛լ նշեցի:**

Ես Հայաստանի Գրողների Միության անդամ չեմ, չնայած հլը 1990 թվին օղորմա-ծիկ Վահագն Դավթյանն ստիպում էր, որ անդամ դառնամ, ու հլը նեղացավ, թե՛ «արհամարհում ես մեզ»: Իհարկե, չեմ արհամարհում, ու հլը իրանցից մեկ-երկսին էլ ընգեր եմ, բայց անդամ չըլնելս էրկու պատճառ ունի:

Նախ, ի՛նչ իմաստ ունի է՛ն միության անդամ ըլնելը (նույնիսկ հանուն մի քանի կարեվոր առավելության, որ տալիս ա էտ անդամությունը), ինչի համարյա բոլոր անդամների հայացքները հակառակ են քու հայացքներին: Երկրորդ, իսկական գրողը, համարյա միշտ, ընե՛նց բաներ ա ասում, ինչը հակառակ ա ընդունված ու արդեն քարացած կարծիքներին՝ ստերեոտիպին, այսինքը, ըմբոստ ա ու պայքարող:

Ուրեմը, ըսենց գրողը ոչ մի միության անդամ չպտի ըլնի, թե որ էրկու էրեսանի չի: Կարծում եմ, որ հենց սրա համար էր, որ օրինակ՝ Սարոյանն է՛լ ոչ մի ըսենց ընկերության անդամ չդառավ:

Ավելացնեմ, որ ուղղագրությունս ու կետադրությունս անհատական են, այսինքը, ես լրի՛վ չի, որ հետեվում եմ սրանց ընդունված «կանոններին»: Սրա պատճառների մասին էս գրքի մեջ տեղ-տեղ մի քանի բան ասում եմ, բայց կետադրության մասին ըստեղ պտի մի բան անպայման ասեմ:

Կետադրությունը բանավոր խոսքի դադարները (ու մի քիչ էլ՝ ինտոնացիան) նշելու համար ա: Բայց էս դադարներն ու ինտոնացիան էնքա՛ն են անհատական, ու էնքա՛ն անկանոն են փոխվում (նույնիսկ հենց նո՛ւյն մարդու տարբեր պահերի հենց նո՛ւյն խոսքի մեջը, էլ չասած՝ տարբեր մարդկանց խոսքի մեջը), որ կետադրության անխախտ ու բացարձակ ճիշտ կանոններ չկան **ո՛չ** մի լեզվի քերականության մեջը [տես՝ *ԼՔՀԼ* [6], VI, էջ 357-358]:

Ուրեմը, երբ մեր դասատուներն աշակերտի գնահատականը ցածրացնում են, օրինակ, բութի տեղը ստորակետ դնելու համար, գիտությանը հակառակ բան են անում: (Կետադրության կանոնների մի նվազագույն «խումբը», իհարկե պետք ա, բայց էրեխուն կետադրության համար չպտի գնդակահարես. **տես Տոլստոյը**):

Կետադրությունը մեկ-մեկ (չատ հազվադեպ) համ էլ պարտադիր ա, որ տրամաբանական բազմարժեքություն չառաջանա: (Իմիջիայլոց, մեր քերականները ուղղագրության անխախտ կանոններ է՛լ չունեն):

Քիչ առաջ «**ոչ**» բառի վրա էրկու շեշտ դրի, որտեվ ուզում եմ, որ էսի կարդացողն իմանա, որ էս մի **ոչ**-ը շա՛տ-շա՛տ եմ շեշտում: Հետո ի՛նչ: Ո՞վ ասեց, որ սրա իրավունքը չունեմ, թե որ մեր քերականները, հենց իրա՛նք, ո՛չ կետադրության անխախտ ու բացարձակ ճիշտ կանոններ ունեն, ոչ է՛լ ուղղագրության: Բառը կամ միտքը շեշտելու իմ մյուս ձեվն էլ տառերը հաստացնելը կամ թեթելն ա, կամ էլ՝ էս էրկուսն իրար հետ:

Իմ ևն-ը նշանակում ա կամ և այլն, կամ և այլ, կամ և այլք, այսինքը, սրա պես լիքը ուրիշ բան կամ ուրիշ մարդ ևն. Ib. = Ibid-ը նշանակում ա՝ տես նույն տեղը, sic!-ը նշանակում ա՝ բա՞, ուշադրություն, ԼՔՀԼ-ի ու ՀԱԲ-ի համար տես [6]-ն ու [7]-ը: Երկար գծով նշում եմ է՛ն դադարները, որ ավելի կարճ են, քան թե վերջակետով նշվողները, բայց մնացածներից երկար են, ու մեկ-մեկ էլ՝ անսպասելի են:

Մերուժան Հարությունյան, Երեվան, 2011

ДВА СЛОВА

Этой моей книгой (*Леопард вольный, изящный и проворный – Искусство письма*) и моей другой книгой (*Неформула любви и ученые кони*, которую публикую вместе с этой), хочу показать, что Туманян был абсолютно прав, когда говорил, что “мы должны отбросить наш литературный язык и писать на языке народа.”

Это утверждение Туманяна практически скрывают, чтобы все думали, что наш литературный “язык” очень хорош, и нет никаких проблем, связанных с ним.

Абовян в свое время утверждал, что литературный “язык” тех времен, т.е. древнеармянский литературный “язык” – *грабар*, уже не нужен, поскольку он уже непонятен никому (кроме очень хороших специалистов этого древнего языка), и армяне больше не должны писать на нем, а должны писать на языке народа (точнее, на одном из армянских диалектов, а именно, на Ереванском говоре Араратского диалекта), как уже давно делают все народы Европы (см. *Раны Армении* Абовяна [4]).

Туманян был абсолютно согласен с Абовяном и добавлял, что не только грабар, но и только что созданный в то время светский литературный “язык,” *ашхарабар* (не тот “светский язык”, которым написаны *Раны Армении* и другие вещи Абовяна) должен быть отброшен, так как “этот язык есть вереница безвкусных и невыразительных слов,” и что “наш литературный язык пока еще не организован и не будет организован, пока мы не обратимся к живым армянским диалектам (см. стр 96 в настоящей книге).

Сегодняшний литературный армянский почти не отличается от литературного языка тех дней, например, от стиля прозы Исаакяна и Чаренца (т.е. от литературного языка 1910-1930-ых). Это бесспорно! Значит, если верить Абовяну и Туманяну, наши сегодняшние литературные армянские стили тоже должны быть отброшены, как непригодные!

Эту книгу я написал на своем литературном языке (хотя непрофессионалу может показаться, что она написана на диалекте), следуя Абовяну (и частично, Туманяну). То есть я сделал именно то, что сделали бы Абовян и Туманян, если бы сегодня были живы, и я поместил в этой своей книге и прозу, и стихи на этом моем литературном “языке.”

Я прошу читателя не сразу отбросить эту книгу. Пусть он немножко наберется терпения и продолжит чтение, и только потом отложит ее, и начнет ругать меня. Ведь я только поверил в то, что говорили Абовян и Туманян, и я делаю именно то, что требовали они! И если я неправ или достоин порицания, значит это Абовян и Туманян неправы и это они достойны порицания!

Почему именно я (то есть физик) делаю и говорю все это? Да потому что те люди, которые должны были делать и говорить все это, уже примерно 100 лет палец о палец не ударят и молчат, сколь бы не спроси их об этом, и делают вид, что ничего плохого не было и нет.

Но положение вещей просто невыносимо!

О разных аспектах такого положения вещей рассказано в моих предыдущих книгах на армянском: *Искусство перевода* и *Личные трагедии Комитаса и Абехяна – наши общие трагедии*.

Несколько слов о структуре этой книги.

Только после того, как я закончил эту книгу (а также другую мою книгу, *Неформула любви и ученые кони*, написанную прямо перед данной), заметил, что пошел почти по тому же пути, что Х. Абовян при написании своей *Раны Армении*, т.е. я не только написал прозу и поэзию новой формы, но также практически обосновал, почему поступаю так. Видимо, общая цель диктует и общую форму.

Такой стихотворный сборник с комментариями автора, насколько мне известно, пишется впервые, и этот способ я нашел совершенно случайно. В 1991-ом году у издателя Кима Авагяна я

сделал одну копию рабочего экземпляра книги своих стихов и переводов (почти этих же, но без всяких предисловий, комментариев и аналитического обоснования языка).

Там был переплетчик, Сирак, парень очень душевный, и он почти насильно взял и переплел листы, на которых были отпечатаны мои стихи. И так как стихи были напечатаны только на одной стороне листа формата А4 – две страницы на каждый лист – он свернул каждый лист вдвое и потом только переплел их.

Со временем один из листов разорвался надвое, и из двух страниц получилось четыре, из которых две срединные страницы были пустые. Я все время читал свои стихи друзьям и знакомым (да и вообще всем, кто не ленился слушать – как делают все поэты, даже не начинающие), и перед чтением каждого стиха делал комментарии, т.к. мне казалось, что они сложны (я и в этой моей книге для рядового читателя часто “раскрываю скобки” либо в комментариях, либо в подстраничных ссылках).

Однажды, в очередной раз натолкнувшись на эти пустые страницы, (а также убедившись, что мои устные комментарии важны и интересны всем слушателям и вспомнив, что когда я читаю какой-либо хороший стих, всегда хочу знать, как автор пришел к идее этого стиха и чем он дышит вообще) ко мне пришла идея о том, что мою будущую книгу стихов можно снабдить такими комментариями.

Ну и что, что во всем мире еще никто этого не делал. В конце концов, “не боги обжигают горшки!”

После всего этого я увидел, что моя книга стала чем-то вроде **путеводителя об искусстве письма**, что я и зафиксировал в подзаголовке книги.

Меружан Арутюнян, Ереван, 2011

A FEW WORDS

With this book of mine (*Leopard Free, Graceful and Agile* (or *The Art of Writing*)) I would like to make our smart alecks understand that Toumanian was absolutely right when he said that **“we must throw our literary language away and write in the language of people.”** (See page ... of the present book).

These words have never been introduced to the public, seeing as the literate population intended to promote the literary language, painting it in a magnificent light.

Abovian claimed that the literary ‘language’ of his day – i.e. the ancient Armenian literary dead language – *grabar* – should be cast away, for nobody could understand it (except for a few specialists). The Armenians should stop using it and begin writing in the spoken Armenian, or, to be more exact, in one of the spoken languages, viz. in the **Yerevan patois of Araratyan dialect (or Araratyan vernacular)**, following the European nations.

Toumanian was absolutely in accordance with Abovian. Abovian played practically the same role in the Armenian literary styles as that played by Geoffrey Chaucer (?1340-1400) in English literature. However, Toumanian added that not only should the *grabar* language be cast away, but also the **new secular “language,” – ashkharabar, (not the language in which Abovian wrote his things, but the one that the Aurorists (see below) artificially mastered) must be cast away, for this “language is a succession of tasteless and ugly words” and “that our literary ‘language’ hasn’t been organized yet and it shall never be organized if we don’t apply to the Armenian living dialects.”**

There can be no doubt that the Armenian literary ‘language’ of today almost doesn't differ from that of those days (for instance, from the prose language of 1910-1930-s, say, by Isahakian and Tcharents). Thus, **if one believes in Abovian and Toumanian** (see *The Wounds of Armenia*, by Abovian, and the above-mentioned paper of Toumanian put in this book), **the literary ‘language’ of today must be cast away, too.**

I have written this book of mine in **my own LITERARY ‘language’** (though the lame might think I have written it in Yerevan’s dialect) **following Abovian and Toumanian (mostly Abovian); that is, I have done the very thing that Abovian and Toumanian would have done if they had been alive today and if they were allowed to do. And I put some proze texts and poems and even one translation from English – into Armenian, to demonstrate how easily and freely and magnificently one can use this literary style.**

Let the reader be patient and read my book a bit more, before throwing it away or scolding me and swearing at me. **My own guilt, if any, is that I just believed in Abovian and Toumanian and have done what they required!** And if I am wrong and deserve scolding, **it just means Abovian and Toumanian are wrong and deserve scolding, too!**

I have been busy with physics for the last 48 years. So, why me? Why should it be me who tells and does the very things that are meant for linguists and literary ‘language’ specialists? The reason is that the people who should be telling and doing these things haven’t done it for nearly the last 100 years. Recently I asked them a few questions on this matter, but they behaved as if there was nothing wrong! They just said nothing, or rather, next to nothing!

Meanwhile, the situation with our literary “language,” and culture in general, is terrible!

Would you like to know why your children get bad marks at Armenian lessons and why they cannot write proper essays, or why they must study Armenian language at the university departments of physics and mathematics and engineering, or why we don’t have proper literature, cinema, TV and theatre?

Would you like to know why you and your children have a terrible aversion to Armenian grammar? Read my book [19], *Komitas’s and Abeghyan’s Personal Tragedies Are Our Common Tragedy!*

Would you like to know why our national songs and dances have been in such a terrible, or rather, miserable state and how much of the blame can be put on our State Conservatory? Read *the above-said book of mine!*

Would you like to know why our modern poetry has been in such a terrible, or rather, miserable state? Read my book [16], *The Art of Translation!*

A few words about the structure of the present book.

Such a poetry book with the comments of the author comes out the first time – as far as I have known – and I came along this idea absolutely accidentally. About two decades ago (1990) I made a “working out” copy of my poetry book at a publisher’s, Kim Avagyan, just to work on and improve the book, and there was no comment in it.

There was a bookbinder there, Sirak, and a very hearty guy, and he insisted on binding my work copy. My poems were printed on one side of A-4 format sheets. He took the sheets and folded them in two, thus hiding the unwritten sides, and bound the copy.

In those days I was a beginner poet and, as all the beginners (and not beginners, too) shall do, I had been reading my poems to every my friend who would agree to listen to me. Before reading a poem, I would make some comments on it (for the reason that my poems seemed to be rather complicated for the general reader) and I noticed that my comments had much greater influence on the hearer than I could have expected.

In time one of the two-fold sheets was torn apart making two sheets – and four pages, two of which were empty. These two empty pages would annoy me every time I would open my rough draft, but once I thought I had better written my oral comments down on these empty pages. I then decided to make it a principle. I wouldn’t care that nobody had done such things before me, for I knew that “it is not the gods who make pots,” as they say. Then once I thought that some of my poems need footnotes and I supplied some of them with footnotes (that sometimes are very long, and I’m sorry for that.)

Meruzhan Harutyunyan, Yerevan, Armenia, 2011

Գլուխ 1. ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ

***Մտածելու ունակություն ունեցող մարդու
ու էտ ունակությունից զուրկ մարդու
արանքն անանջանելի անդունդ կա:
Լյուդվիգ ֆոն Միսես***

Մեր էսօրվա լեզվաբանները գիդե՞ն, թե ի՞նչ ա հայերենի իմացությունն ու ի՞նչ ա հայերենը: Սրանից արդեն խոսել եմ մի ուրիշ տեղ (տես իմ [16-ն ու 19-ը]), ու ցույց եմ տվել, որ **մեր էսօրվա հայերենի լեզվաբանները, համարյա միշտ, չգիդեն, թե ի՞նչ ա գրական ոճերի ու իսկական՝ կենդանի լեզվի տարբերությունը, չգիդեն, թե ի՞նչ ա լեզվի իմացությունը ևն:**

Օրինակ, մեր լեզվաբաններն ու մեր մտավորականների մեծագույն մասը, համարյա հաստատ, կասի, որ ես հայերեն չգիդեմ ու անգրագետ եմ ու համ էլ՝ հանցագործ, որտե՛վ վերե՛վը էօժանդակ բայի տեղը գրել եմ՝ գրել եմ **ա**, հետո գրել եմ՝ **չգիդեն**, փոխանակ գրեի **չգիտեն**, ու հլը էսի հերիք չի գրել ու գրում եմ՝ **որտև, խի՞, էսի, էտի, էնի, ըսենց, ըտենց, ընենց, էթամ, քցեմ, օքուրթ, այսինքը, ուրեմը** ևն, ևն, ու էսի հերիք չի, ու շաղկապն էլ վրա-վրա կրկնում եմ ևն, ևն:

Ուղղակի ապշելու բան ա, որ էս մարդիկ չեն տենում, որ առօրյա կյանքում հենց իրանք են էս ձե՛վ (այսինքը, «այս կերպ»), այսինքը, բարբառով խոսում: Ու մեր լեզվաբաններն ու ուսուցիչներն ասում են, թե իբր դասագրքերում որ բարբառ էղավ, մեր էրեխեքը «սխալ հայերեն» կսովորեն ու հետո էտ «սխալ հայերենը» էլ չի դգվի:

Սրանք ոնց որ աչք չունենան, որտե՛վ չեն տենում, որ էտ էրեխեքը, մեկ ա, փողոցում, հենց մանկուց, անընդհատ էտ «սխալ հայերենով» են խոսում, ու որ էսի անխուսափելի ա: Ու սրանք չեն էլ տենում, որ էս վերջի 150 տարվա գրական հայերենով խոսալու իրանց քարոզը լրի՛վ ա անօքուտ էղե ու, քերականության տեսանկյունից, մի գրամ արդյունք էլ չի տվե: Բա էսի ապշելու բան չի՞:

Սրա համար էլ ասածս գրքերիս մեջ տված հարցերս ըստեղ է՛լ եմ տալի, ու սրանց կարճ պատասխաններն էլ (մեկ-մեկ, թե որ պետք ա) դնում եմ փակագծերի մեջ: Երկար ու հիմնավոր պատասխանները գրքերիս մեջ կան, իսկ ավելի հիմնավոր պատասխանները կան իմ **Արդի**

հայերենի տեսության առանցքային հարցերը մենագրության մեջ, որ պիտի հրատարակեմ 2013-ին, թե որ հաջողվի:

- **Հովհաննես Թումանյանը** խի՞ էր համոզված, որ հայերեն «գրական լեզուն» ո՛չ մենակ ոչ մի բանի պետք չի, այլև վնասակար ա, ու որ սրանից պտի անպայման հրաժարվենք: (Տես էս գրքի 96-րդ էջը):

- **Թե որ հայերը հայերեն սխալ են խոսում** (ոնց որ, քափ ու քրտինք մտած, ասում են մեր գրագետները), **բա աշխարհում էտ ո՞վ ա ճիշտ հայերենով խոսում, շինացիներ՞րը, չուկշիններ՞րը, թե՞ նենեցներ՞րը:** (Մեր լեզվաբաններին որ մնա, կասեն, թե մենակ իրանք են ճիշտ խոսում, մեկ էլ՝ մեր հայ գրողները):

- **Թե որ հայերը սխալ հայերենով են խոսում** (ոնց որ ասում են շատ շատերը), **բա հայերն առհասարակ ումի՞ց են հայերենը սովորել:**

(Մեր լեզվաբաններին որ մնա, երեվի ասեն, թե Մաշտոցից, հայ գրողներից ու իրանցից):

- **Թե որ հայերը հայերեն սխալ են խոսում** (ոնց որ ասում են շատ շատերը), ուրեմը, **ի՞նչ ա, հայերը հայ չե՞ն, որտեվ որեվէ լեզվով մենակ այլագգիներն են սխալ խոսում:**

- **Հայերը ե՞րբ են ճիշտ հայերենով խոսել,** որտեվ Մաշտոցից ընդամենը էրկու-իրեք տասնյակ տարի հետո մեր հունաբան հեղինակներն է՛լ էին մտածում, թե «հայերը խոսում են ռամիկ ու գարշելի լեզվով»:

- **Ո՞նց ա հնարավոր, որ 16-17 տարեկան հայ ջահելը հայերենի քննությունից զրո բալ ստանա:** Ի՞նչ ա, էտ ջահել հայը հայ չի՞: Գրածի մի՞տքն ու շարադրելու ունակությունն ա կարեվոր, թե՞ ճիշտ կետադրությունն ու ուղղագրությունը:

Լեվ Տոլստոյը ճիշտ չի՞, երբ ասում ա, թե էրեխու էս տեսակ սխալները չպտի ուղղենք, որ իրա մտքի ազատությունը չսպանենք []:

- **Թե որ հայերենի քննությունից զրո բալ ստացած էս 16-17 տարեկան հայ ջահելն էնքան անգլերեն իմանար, ինչքան որ հայերեն գիդի, չէի՞նք ասի, որ էտ ջահելը հրաշալի անգլերեն գիդի:** Չէի՞նք ասի, թե էտ ջահելը անգլիացո՞ւ պես անգլերեն գիդի:

Անգլիացու պես անգլերեն իմանալուց ավելի լավ անգլերեն իմանալ կա՞: Պարզ ա, որ չկա: Ու թե որ ըսենց ա, էլ ո՞նց ա, որ հայի պես հայերեն իմանալուց ավելի լավ հայերեն իմանալ էլ կա: էտ ավելի լավ հայերենը ո՞րն ա: Ուրեմը, ի՞նչ. հայերենի իմացությունն ինչ-որ մի արտառոց ու գերբնական բա՞ն ա, որ մենակ մեր լեզվաբաններն ու հայերենի դասատուներն ու դասախոսները գիդե՞ն:

- **Թե որ 16-17 տարեկան հայ ջահելը էնքան ընդունակություն ունի, որ յուրացրել ա դպրոցական մաթեմատիայի ու ֆիզիկայի պես բարդ գիտություններն ու ընդունվել ա համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետներն ու ըստեղ էլ շատ հաջող ա յուրացնում բարձրագույն ֆիզիկան ու**

մաթեմատիկան, էլ խի՞ ա էտ ջահելը ցածր կուրսերում նորից հայերեն անցնում:

Ի՞նչ ա, հայ ջահելն էնքա՛ն բութ ա, որ դառել ա 16-17 տարեկան ու չի կարացե գոնե իրա մայրենի լեզուն էլ սովորի՞:

• Մեր «գրական լեզու» կոչվածը լեզո՞ւ ա, թե՞ անհատական ոճերի կույտ: (*Գրական լեզու* տերմինը սխալ ա, պիտի սրա տեղն ասվի՝ *գրական ոճեր*, որտե՛վ գրական ոճերը կենդանի բարբառների մի քանի կարեվորագույն հատկությունը չունեն (տես քիչ հետո): Օրինակ, **գրական ոճերը խոսակցական չեն, դրանցով խոսող գոնե մի հատիկ, գոնե մի փոքրի՛կ-փոքրի՛կ գյուղ էլ չկա:** Հղեվրոպաբանությանն էսի վաղուց ա հայտնի, բայց մեր էսօրվա հայ լեզվաբաններին հայտնի չի):

• **Գրողները լեզու չեն ստեղծում, ինչ էլ որ ասեն մեր լեզվաբաններն ու գրականագետները:** Առհասարակ, անհնար ա, որ անհատը լեզու (ոչ մաթեմատիկական լեզու) ստեղծի: Գրողը մենակ ու մենակ ո՛ճ ա ստեղծում, իրա՛ պատմելու ոճը (կամ ոճերը): Ու գրողն իրա էս ոճ(եր)ը ստեղծում ա մենակ մի բարբառի միջոցով:

Անհատ մարդու լեզուն է՛լ ա անհատական, ու քերականությունները նկարագրում են որե՛վէ բարբառի մենակ «միջինը»:

• **Գրողը (համարյա առանց բացառության) բառ (բառարմատ) է՛լ չի ստեղծում, ոչ մի հատ:**

Երբ գրողը լեզվի երկու բառն իրար ա կպցնում ու մի իբր նոր բառ ա սարքում (օրինակ, *արեվակեզ, ողջակիզված* ևն), էտի ո՛չ նորություն ա (արմատ ստեղծելու տեսանկյունից), ոչ է՛լ մի դժվար բան ա: (Որ դժվար ըլներ, Հայաստանի ու Հայ Սփյուռքի սաղ գրագետները սրանով չէին զբաղվի):

• Ե՞րբ պտի հասկանանք, որ գրական կոչված «լեզուն» մեր ժողովրդի լեզուն չի: Հայերենը, այսինքը, հայերի լեզուն՝ մեր բարբառներն ու առանձին գյուղ ու քաղաքների առանձին խոսվածքներն են: Ախր ո՞նց ենք մոռանում, որ էս «գրական լեզու» կոչածը մեր ժողովրդի լեզուն ըլներ, քիչ առաջվա ասածիս պես՝ գոնե մի փոքրի՛կ գյուղ դրանով կխոսար (առավոտից՝ իրիկուն, ոչ թե մեր գրագետների պես, այսինքը, էպիգրոֆիկ, մեկ-մեկ, ու մենակ գրական իրավիճակներում):

• Ե՞րբ պտի հասկանանք, որ մեր ժողովուրդը երբեք էլ գրական «լեզվով» չի խոսա, որտե՛վ էտի անհնար ա, որտե՛վ շարքային մարդը ոչ գրող ա, ոչ է՛լ՝ լեզվաբան կամ գրականագետ: Ու որտե՛վ էս սաղ աշխարհում ըտենց բան չի էղե ու չկա:

• Բա էս վերջի 150 տարվա փորձը մեզ չպտի՞ խրատ ըլնի. ախր արդեն 150 տարի ա, ինչ ստիպում ենք, որ ժողովուրդը գրական «լեզվով» խոսա, ու չի խոսում:

• **Լեզուն բնական՝ բան ա, բնություն՝ ա, ու իրա սեփական ներքին օրենքներն ունի, ու լեզվին չես հրամայի, ոնց որ բնությանը չես հրամայի:**

Օրինակ, ինչքան էլ բնությանն ասես, որ ուրբաթ-շաբաթ օրերը հրաժարվի ձգողականության նյուտոնի օրենքից, օքուֆ չի ըլնի:

• Սրա համար ա, որ լեզվաբանություն կոչած գիտությանը հայտնի ա, որ **լեզուն (ոչ թե գրական ոճը) չի ենթարկվում մարդկային որեվէ ծրագրի, ու էնքան ա բարդ, որ լեզվի ընթացքը (այսինքը, լեզվի ապագան), անհայտ ա:**

Ուրեմն, լեզուն մարդկային որեվէ ծրագրով կառավարելու կամ ուղղորդելու սաղ փորձերն էլ (համ էլ՝ մեր Լեզվի տեսչության ու Լեզվի բարձրագույն խորհրդի ու մեր լեզվաբանների ու մտավորականների փորձերը) անիմաստ են ու **հենց սկզբից էլ դատապարտված են անհաջողության** (տես **ԼՔՀԼ** [6], **Ներածություն**, էջ 187-202): Բա մեր լեզվաբանները խի՞ են փորձում կառավարեն մեր նույնիսկ անհատական լեզուները:

• Իմ հոդվածների ու գրքերի մեջ, արդեն հինգը-վեց տարի ա, անընդ-հատ ասում եմ, որ **մեր էսօրվա հայ լեզվաբանությունը գիտություն չի, որտեվ իր ասածների ճիշտ ու սխալը որոշելու ոչ մի օբյեկտիվ ու մարդուց անկախ գիտական չափանիշ չունի:**

Մեր լեզվաբանները սրան ոչ մի պատասխան չեն տալի, ու չեն էլ կարա տան, որտեվ էտ չափանիշն իրո՞ք չունեն: Բայց մեր լեզվաբանները խի՞ ձեն չեն հանում, խի՞ չեն անհանգստանում, կամ խի՞ համաձայն չեն ասածներին:

Ազնի՞վ են մեր լեզվաբանները:

• **Թե որ լեզուն մենակ մեր էս «գրական լեզուն» ա, այսինքը, մենակ մեր գրողների՝ ստեղծած ոճերն են, Մաշտոցից առաջ հայերը լա՞լ (հա՞մր) էին, որտեվ, ո՛չ գրող ունեին, ոչ է՛լ՝ դպրոց:**

(Շատ մարդ կա, ով հավատում ա, թե Մաշտոցից առաջ գիր՝ ունեցել ենք. բայց թե որ նույնիսկ ունեցել եք, էտի ոչ մի նշանակություն կամ արժեք չունի, որտեվ էտ գիրը ոչ մի ազդեցություն չի ունեցել ու չունի էլ մեր սաղ մշակույթի ու կյանքի վրա:

(Հին հույները, օրինակ, իրանց գիրը Մաշտոցից մոտ 1200 տարի (իսկ էսօրվանից՝ 2700 տարի) առաջ են ստեղծել (**երկրորդ անգամ**. տես [12], էջ 167 ու հետո) ու դրանով գրանցել են իրանց էպոսն ու հավատալիքներն ու իրանց ստեղծած վիթխարի մշակույթը, ինչի նշանակությունն էսօր է՛լ ա ահռելի, ու էն էլ՝ սա՛ղ աշխարհի համար:

(Հույների առաջին անգամ ստեղծած գիրը համարյա ոչ մի նշանակու-թյուն էլ չունի. իրանց համար է՛լ, մնացած աշխարհի համար է՛լ: Իսկ թե մեր նախամաշտոցյան գիր ունենալու հավատը մենակ մեզ մխիթարելու ու լոպագանալու համար ա, էտ վախտ խի՞ ենք «համեստություն» անում,

որ: Էտ վախտ Էկեք ասենք, որ Նոյից կամ նեանդերթալցուց առաջ էլ ենք գիր ու գրականություն ունեցել. հը՞:

(Պարսիկներն իրանց հավատալիքները գրանցել են մոտ 29 դար առաջ, իսկ իրանց Էպոսը, **Շահ Նամեն**, մշակեց **Ֆիրդուսին (Դադիդիի սկսածը)**, բայց իրանց Էպոսն Էնքա՛ն վաղուց էր գրանցած, որ արաբներն Էտի թարգմանել են (որ կրթվեն) 9-րդ դարում:

(Մենք մեր Էպոսը գրանցել ենք ընդամենը մի 150 տարի առաջ):

• Կա՞ կենդանի լեզուն, այսինքը, «ոչ մաթեմատիկական լեզուն», այսինքը, բարբառներից մեկնումեկը, հսկելու կամ կառավարելու որեվէ հնարավորություն:

(Էս տեսակ հնարավորություն չկա, չի էղել ու չի էլ ըլնի, որտեվ լեզու ասածն Էնքա՛ն բարդ բան ա, որ մարդկային ծրագրով կառավարելի չի (տես **ԼՔՀԼ** [6], **Ներածություն**, էջ 187-202)):

• Էտ ո՞նց ա, որ բոլոր գյուղ ու քաղաքները բարբառ (ավելի ճիշտ, խոսվածք) ունեն, Էրեվանը բարբառ չունի, որտեվ մեր լեզվաբաններն ասում են, թե Էրեվանցիք խոսում են՝ «զզվելի, գարշելի, փողոցային ժարգոնով կամ խոսակցական լեզվով» (մեկ-մեկ էլ՝ թե «ժողովրդախոսակցական լեզվով»:

(Էսի երեվի վաղուցվանից են ասում. տես օրինակ, [5]-ը, էջ 222. (տես համ էլ էս գրքի 203-րդ էջի Դ. Աղայանի ասածները):

(Ըսենց են ասում, որ Էրեվանցիների խոսվածքը հայհոյելու իրավունքն ունենան, որտեվ որ հանգարծ ասեն, թե Էրեվանցիք խոսում են Էրեվանի բարբառով, էլ հնար չեն ունենա ասելու, թե Էրեվանի բարբառը «զզվելի, գարշելի, փողոցային ժարգոն կամ խոսակցական լեզու է», որտեվ լեզվաբանությանը լավ է՛լ հայտնի ա, որ ոչ մի բարբառն էլ զզվելի չի (տես **ԼՔՀԼ** [6], **Ներածություն**, 141-րդ էջը)):

• Կա՞ «չխոսակցական» կամ «չժողովրդական» կամ «չժողովրդա-խոսակցական» լեզու:

(Թե որ «չխոսակցական» կամ «չժողովրդական» լեզու կա էլ, Էտի հենց գրական «լեզուները» (ավելի ճիշտ, ոճերն) են: **Գրական «լեզու» կոչածը հե՛նց ժարգոն ա, որ կա, որտեվ ունի ժարգոնի բոլո՛ր-բոլո՛ր հատկությունները:**

(Ու մեր էս «գրական լեզու» ասածը հենց չխոսակցական ա, ու համ էլ՝ հենց չժողովրդական, որտեվ ժողովուրդը սրանով չի խոսում:

(Ու նույնիսկ մեր լեզվաբաններն ու գրական ոճերի կողմնակիցներն էլ չեն կարում էս գրականով խոսան, խոսան միշտ ու առանց լարվելու, որտեվ ո՞վ կարա Դերենիկ Դեմիրճյանի կամ Ավետիք Իսահակյանի կամ Ակսել Բակունցի արձակի ոճով անընդհատ խոսա:

(Էսի չէին կարա հենց իրանք է՛լ, Դերենիկ Դեմիրճյանը, Ակսել Բակունցն ու Ավետիք Իսահակյանը, որտեվ նորմալ մարդ էին, ոչ թե ձեվամոլ):

• Հայերենը հայերի՝ լեզուն ա, էսի անվիճելի ա: Հայերեն են հայերենի սա՛ղ վիճակներն ու սաղ բարբառները, էսի է՛լ ա անվիճելի: **Ուրեմը, էսօրվա հայերենի իմացությունը՝ հայերենի էսօրվա բարբառներից մեկնումեկի գերազանց իմացությունն ա:**

էսօրվա հայերենի սաղ կրողներն էլ հայերեն գիդեն, որտե՛վ հայ են:

էսի էլ ա անվիճելի:

Տվյալ բարբառի **գերազանց իմացողը՝** էտ բարբառով **գերազանց պատմել կարացողն ա.** օրինակ, Աբովյանը, Պռոշյանը, Թումանյանը, Վրթ. Փափազյանը, Դ. Դեմիրճյանը, ու սաղ է՛ն ասացողները, ումից գրի են առե մեր էպոսն ու հեքիաթները, ու մեկ էլ մի քանի հոգի:

Հնարավոր ա, որ հայը տառաճանանչ էլ չըլնի, բայց հայերենը գերազանց իմանա. օրինակ, Թումանյանի հերոսներից՝ լրիվ անգրագետ Նետն կամ մեր ասացողների մի մասը:

Գրական ոճերն իսկական հայերենից շատ են շեղված, ու շատ անգամ **համարյա հայերեն չեն, ժարգո՛ն են:**

Սրա համար էլ՝ **գրական ինչ-որ մի ոճի իմացությունը, կամ «ճոխ» բառապաշարը, հեչ էլ հայերենի գերազանց իմացության նշան չի:**

Հայերենի իմացությունը ոչ մի կապ չունի բառապաշարի ու ուղղագրական կամ կետադրական կանոնների իմացության հետ:

Հայաստանի սաղ դպրոցներում ու հայերենի սաղ քննություններին հա է՛լ ստուգում են գրական տգեղ ու անընդունելի շտամպի, ուղղագրական ու կետադրական կանոնների ու մեկ էլ բառապաշարի իմացությունը. իսկ սրանք, ըստ էության, առընչություն **չունեն հայերենի իմացության հետ:**

1.2 ԼԵԶՈՒՆ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Ա

Մերոնք շատ անգամ մոռանում են մի պարզ բան: Մոռանում են, թե լեզուն, մարդկայի՛ն լեզուն, ինչի համար ա: Սրա համար էլ նորից եմ ասում.

Լեզուն մարդուն տված ա, որ մարդը խոսա մարդկանց հետ, ու մարդիկ էլ իրան լսեն ու իրա ասածները հասկանան ու իրա՛ հետ խոսեն, ու իրա ասածները հիշեն, ու հետո էլ, իրանց ուզած վախտը, էտ հիշածները նորից ասեն ու հլը մի բան էլ ավել:

Համ էլ, լեզուն է՛ն բանի համար ա, որ մարդը կարենա լեզվով մտածի, որտեղ լեզվով, բառերով մտածելը շատ ու շատ ավելի հեշտ ու բեղուն ա, քան թե կենդանիների պես պատկերներով «մտածելը»:

Պարզ ա համ էլ, որ մարդն ինչքան հեշտ խոսա ու ինչքան հեշտ մտածի, էնքան ավելի լավ:

Բայց մեր մտավորականների մեծագույն մասը, մանավանդ թունդ «հայրենասերները», էս վերի ասածներիս **ընդամենը մի** պահանջ են ավելացնում, ու էս սաղ ասածս ուղղակի հարամում են: Սրանք

պահանջում են, որ սաղ հայերը ոչ թե ուղղակի խոսան, այլ խոսան **«ընտիր հայերենով»**, լսեն էս **«ընտիր հայերենով»**, հիշեն էս **«ընտիր հայերենով»**, հետո նորից խոսան էս **«ընտիր հայերենով»** ևն, ևն:

Էս մի հատիկ պահանջը լրիվ ոչնչացնում ա խոսալու հենց գաղափարը, որտե՛վ մեր նույնիսկ հզոր գրողները, ոնց որ արդեն ասել եմ, երբեք էլ **«ընտիր հայերենով»** չեն խոսացե, ու չէին էլ կարա: Նորմալ մարդը խոսում ա, որ իրա ասածը հասկանան, ոչ թե իրա խոսացածով հիանան ու ասեն. «Տե՛ս է՛, էս ի՛նչ սքանչելի ու **«ընտիր հայերենով»** ա խոսում»:

Ես Մարիամ անունով մի չորրորդ դասարանցի օժտված հարեվան ունեմ: Մարիամը հայ ա ու շատ լավ էլ հայերեն գիդի, ու տանն ու փողոցում խաղալուց հեշտ ու հանգիստ խոսում ա:

Բայց էս խեղճ էրեխեն դպրոցում ուղղակի տանջվում ա, որտե՛վ հենց որ փորձում ա իրա մայրենի հայերեն լեզվով մի բան ասի, դասատուները սրան «տեռորի են ենթարկում», այսինքը, պահանջում են, որ **«ընտիր հայերենով»** խոսա, ընե՛նց խոսա, ինչով համարյա ոչ մի հայ չի խոսում:

Այսինքը, **դասատուները պահանջում են, որ Մարիամը հայերեն չխոսա:**

Ու էս Մարիամը, որ շատ ընդունակ աղջիկ ա, չի կարում լավ սովորի, որտե՛վ սրան չեն թողում, որ իրա մայրենի լեզվով խոսա:

Մերոնք չեն ուզում, որ ուղղակի ֆիզիկա, կամ մաթեմատիկա, կամ քիմիա, կամ կենսաբանություն, կամ աշխարագրություն սովորացնեն: Մերոնք ուզում են էս ֆիզիկան սովորացնեն **«ընտիր հայերենով»**, էս մաթեմատիկան սովորացնեն **«ընտիր հայերենով»**, էս քիմիան սովորացնեն **«ընտիր հայերենով»**, էս կենսաբանությունն ու աշխարհագրությունը սովորացնեն **«ընտիր հայերենով»** ևն:

Ու ջհանդամը գյոռը, որ էրեխեքը ո՛չ էս ֆիզիկա-միզիկան են սովորում, ոչ է՛լ իրանց ուզած «ընտիր հայերենը», ու չեն սովորում, մեծ մասով, հենց էս **«ընտիր հայերենի»** պահանջի համար: **Բա հայ ըլնես, ու չիմանա՞ս, թե հայերենն ի՛նչ ա: Բա չհասկանա՞ս, որ հայերենը հենց է՛ն լեզուն ա, ինչով որ հենց հայե՛րն են խոսում:**

1.3 ԱԲՈՎՅԱՆԸ ԳՈՆԵ ՄԻ ԸԵՏԵՎՈՐԴ ՉՊՏԻ՞ ՈՒՆԵՆԱ

Էս գիրքը գիտա-գեղարվեստական ա, կամ գեղարվեստա-գիտական, ոնց որ իմ գրքերը առհասարակ (մեկը՝ քիչ, մյուսը՝ շատ), որ հա է՛լ թե՛ սիստեմավոր գիտելիքի մաս ունեն, ու հա է՛լ, գոնե մի քիչ, գիտությունից է՛լ են խոսում, չնայած դրանց սաղի շարադրանքն էլ ահագին գեղարվեստական ա:

Էսի երեվի ամերիկացի ֆիզիկոս Ռիչարդ Ֆիլիպս Ֆեյնմանի ազդեցությունն ա, ով 1950-ականներին ֆիզիկան շարադրեց ազատ գեղարվեստական ոճով [30], ու մեկ էլ՝ իմ հիմնական մասնագիտության

ազդեցությունն ա, այսինքը՝ ֆիզիկայինը, ինչով զբաղվում եմ արդեն 48 տարի:

Սրա պատճառը մի քիչ էլ է՛ն բանն ա, որ լեզվաբանության հետեվից ընգա արդեն պրոֆեսիոնալ թարգման ու բանաստեղծ ու արձակագիր դառնալուց հետո: Բայց մենակ Ֆեյնմանի՝ օրինակն էր, ինչն ընձի տվեց ձեվի, ոճի ու բովանդակության ընտրության է՛ն ազատությունը, ինչով պատմում եմ իմ մտքերն ու, առհասարակ, ամեն ինչը:

(Ազատասիրությունը, առհասարակ, իմ բնավորության մեջն ա ու իմ էությունն ա: Սրա համար էլ ոչ մի պաշտոնում չկարացի աշխատեմ, որտեվ ինչ պաշտոն էլ ունեցար, պետ է՛լ կունենաս, ու էս պետիդ պտի անծպտուն ենթարկվես, իսկ ես էսի չեմ կարա. էրկու օր կհամբերեմ, երրորդ օրը էրեսին կասեմ, թե ինչ եմ մտածում (համ էլ իրա՛ մասին): Ու երեվի էսի ա պատճառը, որ սաղ կյանքս մնացի համալսարանի դասախոս (որդե ոչ մի պետ համարյա չունեմ)):

Արդեն 20-22 տարի ա, ինչ ի՛մ գործերը, թարգմանություն ըլնի, թե սեփական գրվածք (այսինքը, է՛ն գործերս, որ պատվերով ու փողի համար չեմ անում, անում եմ «հոգու համար»), գրում եմ Արարատյան բարբառի էրեվանի խոսվածքով **սարքած իմ գրական ոճով**: Ու համարյա սաղ էլ ասում են, թե արածս հիմարություն ա, ու ոչ մեկին պետք չի ու, առհասարակ, անթույլատրելի ա:

Բայց էս նույն մարդիկ ասում են, թե Աբովյանն ու Թումանյանը հանճարեղ են (իրոք է՛լ հանճարեղ են): Բայց ախր Աբովյանը 170 տարի առաջ հենց է՛ն նույն բանն էր անում, ինչ որ ես՝ էսօր, իսկ Թումանյանն աշխատում էր՝ հետեվի Աբովյանին, ինչքան կարում էր, ու ինչքան թույլ էին տալի էն օրերի «ուսյալ» խմբագիրներն ու է՛ն մարդիկ, ումից որ կախված էր հրատարակչական գործը:

Սրանցից Աբովյանին, երկինք են հասցնում է՛ն բանի համար, որ ինքն իրա էն բարդագույն օրերին, աննախադեպ քաջությունով, դեմ հելավ է՛ն անսասան պահպանողականներին, ովքեր պնդում էին, թե սաղ հայերն էլ պտի գրեն (ու նույնիսկ խոսան – sic!) մեռած գրականով՝ գրաբարով:

Իսկ Թումանյանի մասին ներողամտությունով ասում են, թե իբր թե ինքը գրում էր Լոռու բարբառով (ինչը սխալ ա. Թումանյանը գրել ա էրեվանի խոսվածքով, որտեվ Թումանյանն էնքան միամիտ չէր, որ չիմանար, որ ինքը Աբովյանի գործի շարունակողն ա, իսկ Աբովյանը գրել ա էրեվանի՛ խոսվածքով, ոչ թե Քանաքեռի):

Ու ահավոր զարմանալի ա, որ հետագա սաղ հայ գրողներին էլ (չհաշված մեկ-երկսին), համարում են Աբովյանի հետեվորդները, **չնայած սրանք Աբովյանի հետեվորդները չեն: Սրանք է՛ն ուղղության հետեվորդներն են, ինչը հաստատել էր Մոսկվայի հայկական «Հյուսիսափայլ» ամսագիրը, Ստեփանոս նազարյան(ց)ի ու Միքայել նալբանդյան(ց)ի «թեթեվ ձեռով»:** («Հյուսիսափայլի» հետեվորդներին ասում եմ՝ **հյուսիսյաններ**):

Էս երեվոյթը հա՛մ զարմանալի ա, հա՛մ ապշելու, որտե՛վ էս վեջի 90 տարին համարյա ոչ մեկն էսի չի նկատե կամ սրանից համարյա չի խոսացե, ու հիմի սաղ էլ համարում են, թե էսի 100 տոկոսանոց ճշմարտությունն ա: Բայց ամեն մարդ էլ կարա տենա, որ **Աբովյանի արձակի ու պոեզիայի լեզվի ու, օրինակ, 1910-1930 թվերի հայ գրողների, օրինակ, Իսահակյանի ու Չարենցի (ու նույնիսկ Պ. Պռոշյանի ու Վրթ. Փափազյանի) արձակի լեզվի տարբերությունը վիթխարի ա:**

Բայց հենց որ Աբովյանի ձեվով մի բան են գրում, այսինքը, գրում են հենց **ժողովրդի՛** խոսքի ձեվով, հայ «տեսաբանները» հայտարարում են, թե էտի անթույլատրելի ժարգոնն ա, ինչը յանի «խարխլում ա մեր դարավոր սա՛ղ մշակույթի հիմքերը»:

Սրա համար էլ այ ըսենց մի հարց եմ տալի մեր էտ տեսաբաններին ու դրանց կողմնակիցներին:

Լա՛վ, դուք ասում եք, թե Թումանյանն է՛լ, Աբովյանն է՛լ հանճարեղ են (էլի՛ եմ ասում, իրոք է՛լ, հանճարեղ են): Բայց էտ վախտ խի՞ եք զարմանում, որ էտ հանճարեղ գրողները հետեվորդ ունեն, ընդամենը մի հետեվորդ: Ձեր կարծիքով Թումանյանն ու Աբովյանը ոչ մի հետեվորդ չպտի ունենայի՞ն, կամ արժան չե՞ն հետեվորդ ունենալուն:

Իմ էս գիրքն ու իմ էս վերջի 20 տարվա արածը Աբովյանի հուսահատ ու հեղափոխական (ու Թումանյանի բավական վեհերոտ) փորձի շարունակությունն ա: Ու ես էնքան միամիտ չեմ, որ մտածեմ, թե արածս վռազ կընդունվի, ու սաղ էլ վռազ «կյուսավորվեն» ու կհետեվեն ընձի:

Հակառակը: Ես համարյա համոզված եմ, որ համարյա սաղ է՛լ կասեն, որ իմ արածը մի անընդունելի հիմարությունն ա, ու ոչ մի բան էլ չի փոխվի, ու մեր գրական ոճերի ընթացքն էլի՛ ու էլի՛ սխալ կըլնի: Բայց ես գոնե անկեղծ եմ ու հավատում եմ, որ ճիշտ բան եմ անում, ու կյանքիս էս վերջի 20-22 տարին արդեն նվիրել եմ իմ էս համարյա անհույս գործին:

1.4 ԷՐԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ ԺԱՐԳՈՆ ՉԻ

Աբովյանն ու Թումանյանն ուզում էին, որ ժողովրդի համար հենց ժողովրդի՛ լեզվով գրեն: Ու Աբովյանը ժողովրդի լեզվով գրեց իրա վեպերն ու ոտանավորները, որ մեր մյուս գրողներն էլ աչք տան իրան ու իրա՛ պես գրեն, որ վերջը հայերն է՛լ կարգին գրականություն ունենան, ունենան գերմանացիների՛, իտալացիների՛, իսպանացիների՛, ֆրանսիացիների՛, անգլիացիների՛, ռուսների՛ ու առաջավոր մյուս ազգերի գրականության պես գրականություն:

Էսի համ էլ ի՛մ դարդն ա:

Աբովյանին ու Թումանյանին շլտեցին: Մեր հետագա գրողներն Աբովյանի արածը ծռմռին, ու սրա համար էլ մեր էսօրվա գրականությունը **հեչ համեմատելի չի** ասածս ժողովուրդների ստեղծածի հետ:

Էսի ընձի հեչ դուր չի գալի, ու սիրտս ցավում ա, որ մեր գրականությունն էսքան խեղճ ա: **Ու մեր գրականությունն իրո՞ք ա խեղճ, որտե՛վ գրվում ա կեղծ, արհեստական ու մեռած մի ոճով, ինչին ասում են՝ գրական «լեզու», չնայած էսի լեզվի (կենդանի՛ լեզվի), կարեվորագույն հատկություններից շատը շունի: Սրա մեջը կենդանի լեզվի անալոգիայի ու ֆուլկտուացիաների մեխանիզմներն ու նվազագույն ճիգի օրենքը լրիվ չեն գործում, ու հենց սրա համար էլ իսկական լեզու չի: Էսի անհատական ոճերի ու գրելաձևերի մի կույտ, մի հավաքածու ա:**

Ըստ էության, մեր գրական «լեզուն» իրո՞ք որ մի իսկական ժարգոն ա, որտե՛վ ունի ժարգոնի (օրինակ, գողական ժարգոնի) սա՛ղ հատկությունները: Մեր ժողովուրդը գրականով չի խոսում, թե որ «գրական իրավիճակում» չի (ճիշտ՝ ոնց որ գողերը), ու (էլի՛ եմ ասում) **էս սաղ աշխարհում չկա գոնե մի փոքրիկ գյուղ, ինչը խոսի գրականով:**

Ու նույնիսկ հենց իրանք, հենց գրականի «քրմերը» (այսինքը, հայոց լեզվի դասախոս-դասատուներն ու մեր լեզվաբաններն ու գրականագետները), հենց իրանք է՛լ են էս «լեզվով» խոսում մենակ գրական (հմմտ՝ «գողական») իրադրություններում, այսինքը, դասարաններում ու լսարաններում ու խորհրդարանում, միկրոֆոնով ու հեռացույցով են, իհարկե, ահավոր լարվելով ու կակազելով ու շատ անգամ էլ՝ սխալվելով:

Ու ամենաապշելու բանը գիդե՞ք ինչն ա: Էս նույն «քրմերը» պնդում են, թե հենց Արարատյան բարբառի էրեվանի խոսվածքն ա ժարգոնը, ու էս «ժարգոնն» էլ համարում են գրական «լեզվի» աղավաղ ձեվը, չհասկանալով, որ **բարբառը չի կարա ժարգոն ըլնի, չհասկանալով որ հնարավոր չի, որ սաղ ժողովուրդը (օրինակ, Արարատյան բարբառի սաղ կրողները), «ժարգոնիտ անի»:** (Տես *ԼԵՂԼ* [6], Ibid):

Ըստ էության, էս «քրմերը» պնդում են, թե էրեվանի բարբառ (խոսվածք) չկա: Բայց մի 100 տարի առաջ էտ բարբառը հաստա՛տ կար: Ուրեմը, սրանց ասելով, մի սիրուն առավոտ էրեվանցիները զարթնել են ու «ախմախավարի» սկսել են «ժարգոնիտ անելը», փոխանակ է՛լի խոսային «մաքուր ու չքնաղ գրական լեզվով»:

Բա էսի շշմելու մոլորություն չի՞, մանավանդ երբ էսի ասողը լեզվաբան ու հումանիտարիստ ա ու ինքն էլ՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ կամ ակադեմիկոս:

Վերլուծությունը ցույց ա տալի (տես համ էլ ասածս իմ առաջի գիրքը), որ **մեր գրական «լեզուն» էրեվանի խոսվածքից տարբերվում ա իրա մենակ է՛ն սխալներով (մանավանդ՝ շարահյուսական),** որ մեր «ուսյալներն» են առանց գիտակցելու (նմանակելով, մեծ մասով,

ռուսերենին ու համ էլ՝ օտար լեզուներին, ու մեկ-մեկ էլ՝ մեր գրաբարին), բերե ու լցրե մեր գրական «լեզուն»:

Առհասարակ, գրական ուզածդ «լեզուն», որ ազգինն էլ ըլնի, իրա հնարավորություններով կենդանի լեզվին չի հասնի:

Ուրեմը, «գրական լեզու» տերմինը իրո՞ք սխալ ա, ու սրա տեղը ճիշտ կըլնի, եթե ասվի «գրական ոճեր»: Ոճ-ի տեղն էլ ոճեր եմ ասում (հոգնակիով), որտե՛վ սրանք, էս ոճերը, համասեռ չեն ու սրանց թիվը շատ ա:

Գրական ոճերը մենակ է՛ն վախտ են հզոր ու կարեվոր, մենակ է՛ն վախտ մշակութային հզոր նշանակություն ունեն, երբ շատ-շատ են մոտ իրանց ծնող մայր բարբառին: **Իսկ մեր էսօրվա գրական ոճերն էնքա՛ն են հեռու իրանց ծնող Արարատյան բարբառի սա՛ղ խոսվածքներից էլ, որ լրի՛վ են սխալ. ուրեմը, համ էլ կեղծ են:**

Է՛վ Տոլստոյն իզուր չի ասում, թե «գրական լեզվով ինչ ապուշություն ասես, որ չենք ասում, այնինչ, կենդանի, խոսակցական լեզուն չի թողում, որ հիմար բաներ ասենք»: Ու իզուր չի, որ Տոլստոյը մեծ մասամբ գրում ա «գյուղի լեզվով» (տես [27-28]-ը):

Ու էս կեղծ ոճերը մտնում են կինո ու թատրոն ու հեռացույց ու ռադիո, ու հենց սրանց կեղծության համար ա, որ էս ասածս բաները, **աշխարհի սրանց լավագույն տեսակների համեմատ, հեշ մրցունակ չեն, ինչքան էլ որ մենք՝ ինքներս, գլուխ գովանք ու փառաբանենք մեր գրական ու ոչ գրական է՛ն գործերը, որ հիմնված են էս սխալ, արհեստական ու կեղծ գրական «լեզվի վրա»:**

Հյուսիսայանները Աբովյանի արածը չհավանեցին ու «մոնտաժեցին» մի գրական «լեզու», ինչն էսօր, ակնհայտ, չի բավարարում (մեղմ ասած) հայերի մշակութային սաղ պահանջները:

Էս «լեզու» կոչվածը, իրոք, անհասկանալի ա հայերի մի զգալի մասին, մանավանդ արեվմտահայերենով խոսող Սփյուռքի հայերին, ովքեր սխալմամբ կարծում են, թե իրանց (արեվելահայերի գրվածքների) չհասկանալու պատճառն արեվելյան հայերենի ուղղագրությունն ա:

Արեվելահայերի էլ է՛ն մասը, ինչը չի հասկանում էս ոճերը, ամանչում ա ու չի ասում, որ չի հասկանում, որ մարդիկ չմտածեն, թե իրանք անգրագետ են:

Համենայն դեպս, պարզ ա, որ հայերի մի զգալի մասը (շատ մեծ մասը), չի կարում էտ ոճերը կիրառի, կամ ահավոր դժվար ա կիրառում:

Այնինչ, մեր մտավորականները, համարյա լրիվ, ասում են, թե էս գրական «լեզուն» լավն ա ու լրիվ բավարար ա:

Բայց ո՞վ, ո՞նց, որտեղ ու ե՞րբ ա ապացուցե, որ էս «լեզուն» (այսինքը, մեր էս ոճերը) լավն ա ու լրիվ ա բավարար: Ո՞վ ա

ապացուցե, որ Աբովյանն ու Թումանյանը սխալ էին, կամ էլի՝ են սխալ:

Ո՛չ մեկը, ո՛չ մի ձեզ, ո՛չ մի տեղ ու ո՛չ մի անգամ:

Ու խի՞ են զարմանում, որ Աբովյանի ու Թումանյանի միակ հետեվորդը Աբովյանից ու Թումանյանից մի փոքրի՛կ-փոքրի՛կ քայլ ավել ա արե: Այսինքը, քոռ-քոռ չի կրկնե կամ նմանակե իրանց. ինքնուրույն ա, ու իրա գրական ոճը հիմնել ա էրեվանի բարբառի **էսօրվա՛** վիճակի վրա, ու մի քանի բարբառային բառ էլ իրանցից ավել ա գործածե. (*խի՞՞ն, սաղը, էթամ*-ը ևն. մի քանի բառ, որ իրանք չեն գործածե, կամ քիչ են գործածե): Ու խի՞ են զարմանում, որ էս հետեվորդը լրիվ ու սխտեմով ա գործածե բարբառը, այսինքը, իրա արածը կիսատ-պռատ չի:

Ես բարբառով չեմ գրե, ես գրել եմ գրական «լեզվով», բայց ի՛մ գրական «լեզվով», ու մենակ ժամանա՛կը ցույց կտա, թե էսի կընդունվի, թե չէ: **Ու թե էսի շընդունվի է՛լ, էլի՛ չի նշանակի, որ էսի սխալ ա:** Էտի մենակ կնշանակի, որ մեր հետամնացությունն ա անհաղթահարելի:

Իմիջիայլոց, Աբովյանն ու Թումանյանն էլ գրական «լեզվով» չեն գրե, էրկուսն էլ գրել են իրանց է՛ն գրական «լեզուներով», որ սարքել էին էրեվանի բարբառի վրա:

Աբովյանն իրա գործերի մեջ էրեվանի բարբառին շատ ու շատ տեղ էր տվե, իսկ Թումանյանը՝ շատ ավելի քիչ: Սրա հակառակն ասողները կամ սո՛ւտ են ասում, կամ է՛լ չեն հասկանում գրական «լեզվի» ու բարբառի տարբերությունը:

Էս խոսակցությունը շատ ա երկար, ու սրա մի մասը կա իմ ***վերը ասած գործերի*** գրքերի մեջ, ու իմ էս գրքի մեջ է՛լ եմ էսի շարունակում:

Իմ էս գիրքը, մեծ մասամբ, ջահելների՛ համար ա, ովքեր նոր բաներն արագ են ընկալում ու ընդունում, որտեվ ջահելի մտածողությունը քարացած չի: Ու իհարկե, էս գիրքը համ էլ է՛ն հասուն ու տարեց մարդկանց համար ա, ում մտածողությունն էլ հլը չի քարացե, ու ովքեր լավ գիդեն, որ աշխարհում մեկ-մեկ նոր բան է՛լ ա ծնվում:

Ուրեմը, էս գիրքը առաջի հերթին համ էլ հենց ֆիզիկոսների, մաթեմատիկոսների ու սաղ բնագետների համար ա, ովքեր ամեն օր են առընչվում գիտության նորություններին ու լա՛վ են ծանոթ ստեղծելու մեթոդներին:

Ես իմ գրական ու լեզվաբանական աշխատանքն սկսել եմ 37 տարեկանից, ու երբ 41 տարեկան էի, պատահական տեսա, որ կարում եմ ոտանավոր գրեմ, ընդ որում, լավը: Հետո զարմացած գլխի ընգա, որ գեղարվեստական ստեղծագործության սկզբունքները նման են ֆիզիկայի ու մաթեմատիկայի ստեղծագործական սկզբունքներին:

Ամեն մի ոտանավորի գրելը, կամ ամեն մի թարգմանությունը ոնց որ ֆիզիկայի կամ մաթեմատիկայի մի խնդիր ըլներ, ինչը պտի տեղը տեղին

լուծվեր, լուծվեր փորձ ու սխալի մեթոդով, արածդ անընդհատ համեմատելով առաջվա արած է՛ն գերազանց գործերի հետ, որ քիչ թե շատ նման են արվողին:

Իհարկե, գիտության ու գրականության էս ասածս մեթոդների տարբերությունն էլ ա վիթխարի, ու երեվի անհնար ա, որ էս մեթոդները կամ ասածս տարբերությունը հստակ ձեվակերպվեն: Ասածս ես զգում եմ մենակ իմ գեղարվեստական ինտուիցիայով, ինչը մշակվել ա սեփական աշխատանքի երկար փորձով:

Մի բանը հաստատ ա, էս գործն էնքան վիթխարի բավականություն ու ուրախություն ա տալի, որ ոչ մի փողով չես առնի: Իհարկե, լավ կըլներ, որ մի քիչ էլ ուրիշները տենային ու մի քիչ էլ գովային, թե իրոք լավ ու կարեվոր գործ ես արե, ու էսի մի քիչ էլ փող բերեր, բայց երեվի ամեն էրնեկ մի տեղ չի ըլնում: Իսկ ես ահագին կարեվոր գործ՝ իրո՛ք եմ արե:

1.5 ԱՆԲԱԽՏ ԵՆՔ, ՈՐՏԵՎ ՔԻ՞Չ ԵՆՔ

Անգլիացի Ռադյարդ Քիպլինգն ասում աս, թե. «Մամբո-Ջամբո ցեղի բնիկները նույն երգն ասելու 169 ձեվ ունեն, ու դրանք սաղ է՛լ ճիշտ են»: (Որ մեր «ուսայլներն» էսի իմանան, իրանց սովորական գլուխգովանությունով կասեն, թե հայերն էս ձեվերից ավելի շատ ունեն, քան 169-ն աս): Ես է՛լ եմ համոզված, որ կա «գրական «լեզու» սարքելու 169 ճիշտ ձեվ»:

Բայց համ էլ համոզված եմ, որ մենք ընտրել ենք հենց էն մեն-միակ սխալ ձեվը, 170-րդը, ինչն արհեստական աս, ու լրիվ աս կեղծ, ու սրա համար էլ՝ սրա պտուղների մեծագույն մասը մեռած աս ու ամուլ: Էս անպտուղ ու վնասակար ձեվը, ոնց որ արդեն ասել եմ, օտար լեզուները (մեկ-մեկ էլ՝ մեր լեզվի մեռած վիճակը՝ գրաբարը) նմանակելու ձեվն աս:

Էս կեղծ ձեվով մենակ կեղծ գրականություն կստեղծվի, իսկ կեղծ գրականությունը ոչ բանի՛ ա պետք, ոչ կհարգվի՛, ոչ է՛լ կընդունվի՛ ու կսիրվի՛:

Բա մտածելու բան չի՞, որ Րաֆֆու գործերն աշխարհում ճանաչված չեն: Ախր էտ գործերը վաղուց են թարգմանած Սովետի ու Արեվմուտքի ժողովուրդների կարեվոր լեզուներով: Էտ ո՞նց աս, որ անգլիացի Ռ. Լ. Ստիվենսոնի *Քանձերի կղզին* ու *Սեվ նետը* (որ գրվել են համարյա նույն օրերին, ինչ որ Րաֆֆու գործերը), ճանանչում ու սիրում են սաղ աշխարհում, իսկ Րաֆֆունը՝ չէ՛: Կապիտալիստի համար մեկ չի՞, թե ինչ գիրք արտադրի, որ շատ փող աշխատի:

Կարող աս ասեն, թե Անգլիան խոշոր երկիր աս, թե իրա հնարավորությունները վիթխարի են ան, ան: Բայց ախր Նորվեգիան չափերով է՛լ, բնակչությունով է՛լ, համարյա Հայաստանի չափ աս, ու աշխարհին տվել աս Էդվարդ Գրիգի ու Կնուտ Համսունի ու Ֆրիտյոֆ Նանսենի պես բավական շատ մարդ, ում սաղ աշխարհը գիղի ու գնահատում է՛լ աս:

Մերոնք, հաստատ, էլի կառարկեն ու կասեն, թե Նորվեգիայի հարցն ուրիշ աս, թե Նորվեգիան շրջապատած աս քաղաքակիրթ երկրներով, ան: Բայց ախր մի վախտ Հայաստանն է՛լ էր շրջապատած քաղաքակիրթ Բյուզանդիայով ու Իրանով ու հետո է՛լ՝ շատ բարձր մշակույթի տեր Արաբական Խալիֆաթով (հենց արաբները սկսեցին եվրոպական Վերածնունդը ու կրթեցին եվրոպացիներին):

Բացի էսի, Հին Աթենքն ընդամենը մի գավառական քաղաքի չափ բնակչություն ուներ, ամենաշատը՝ մի 100-200 հազար մարդ, իսկ քաղաքացի՝ մի 30 հազար:

Ու Հին Աթենքը ու մեկ էլ մի քանի հունական փոքրիկ քաղաքը (Նորը՝ չէ՛, Նոր Աթենքն ու էսօրվա Հունաստանը մեր պես խեղճ ու կրակ են), աշխարհին տվել աս՝ **տեսական մաթեմատիկան, բնափիլիսոփայությունը (ֆիզիկան ու կենսաբանությունը),**

ողբերգությունն ու կոմեդիան, թատրոնը, հունական քանդակն ու նկարչությունը, ու ամենակարեվորը՝ դեմոկրատիան են:

Հին Աթենքն ու մեկ էլ էտ մի քանի հունական փոքրիկ քաղաքը աշխարհին տվել են՝ Սոլոն, Սոկրատես, Պլատոն, Պերիկլես, Պյութագորաս, Հսքիլես, Սոփոկլես, Էվրիպիդես, Հերոդոտոս, Էվկլիդես, Արքիմեդ, Թուկիդիդես, Ստրաբոն, Արիստոփանես, Քսենոփոն, Արիստոտել, Փիդիաս ևն, ևն, ևն:

Ուրեմը, հարցը երկրի փոքրությունը կամ շրջապատը չի: Հարցը հենց իրանք, հենց ստեղծողներն են, հարցը հենց ստեղծագործություններն են. ու մեկ էլ՝ է՛ն բարոյա-էթիկական նորմերն ու է՛ն տրադիցիաները, որ ծագում են էս նորմերից:

(Սրանց, էս նորմերին ու տրադիցիաներին, մերոնք ասում են *ազգային արժեք ու ավանդույթ*, բայց խաբար է՛լ չեն, թե սրանք ի՛նչ տեսակ պտի ըլնեն, որ կուշտ ու արժանապատիվ ապրենք, որ կարեվոր արժեք ստեղծենք):

Ու հաստատ ա, որ առնվազը մեր նոր հայ գրականությունը, կինոն ու թատրոնը (էս վերջինները նո՛ր են ու նո՛ր) ուղղակի համեմատելի չեն, ո՛չ Հին Հույների, ոչ է՛լ էսօրվա առաջավոր մշակույթների ստեղծած էս բաների հետ:

Գրական ոճերի (կամ «լեզվի») տեսանկյունից՝ Քիփլինգի ասած 169 ձեվի սաղի՛ հիմքն էլ մենակ մի մայր բարբառ ա: Մեր գրական «լեզվի» հիմքը, տեր-տիրականը, մարգարեն ու աստվածը, հսկողն ու պահակն ու գերագույն դատավորը պտի ըլնի **Արարատյան բարբառը, ավելի ճիշտ, սրա ամենագորավոր խոսվածքը, ինչն էսօր էրեվանի բարբառն ա:**

Ափսոս, որ ըսենց չի, ու **հենց էսի՛ ա մեր մշակութային ցավերի մեծ մասի պատճառը:**

Մեր էսօրվա գրական ոճերի աստվածն ու դատավորն ու տեր-տիրականը ռուսերենի ու անգլերենի ոճերն են (շատ անգամ նույնիսկ մեր գրաբարը չի), որտե՛վ մեր «գրագետները» մեր ժողովրդին համոզել են, թե էրեվանի մեր էսօրվա բարբառը մի «գռեհիկ, կոշտ ու կոպիտ, անշնորհք ու անթույլատրելի ժարգոն ա»:

1.6 ԴԱՆԴԱՂ ԳՈՐԾՈՂ ՌՈՒՄԲԸ

Երեվի անհավատալի թվա, բայց հայ գրականությունը սխալ ճամփով տանելու «դանդաղ գործող ռումբը» հենց ի՛նքը, հենց Աբովյանն ա լարե: Խոսքս է՛ն ռումբի մասին ա, ինչը հետո պայթացրեց Աբովյանի գրելու սաղ սիստեմը, այսինքը, մեր նոր աշխարհիկ գրական «լեզվով» գրելու միակ ճիշտ սիստեմը:

Աբովյանը Արարատյան բարբառի կենդանի օժանդակ բայի (**եմ** բայի) անցյալ ձեվերի տեղը գրել ա սրա գրաբարյան ձեվերը: Այսինքը, փոխանակ գրի՝ **ասում ի** (= **ասում էի**), **ասում իր** (= **ասում էիր**), գրել ա՝

ասում էի, ասում էիր, (ու երրորդ՝ **ասում էր** ձեվը, որ Արարատյան բարբառի մեջ հին օրերից մինչեվ իրա օրերը չէր փոխվե, ու հմի էլ ա նույնը): ???

Չգիդես խի, Աբովյանին երեվի թվացել ա, թե բարբառի (առաջի) ձեվերը բարեհունչ ու սիրուն չեն: Համ էլ են երրորդ՝ չփոխված ձեվը, **ասում էր**ը, երեվի ոնց որ մի տեսակ «հուշեր» կամ «ստիպեր», որ առաջի էրկուսն էլ սրա պես ըլնեն: Բայց էս բանը սխալ էր, ու իրա սիստեմի համար էսի ճակատագրակա՛ն սխալ էր:

Բացի էս ֆունդամենտալ ու ճակատագրական ընտրությունը, Աբովյանը (երեվի պատահական կամ իրա հին խասյաթի իներցիայով), շատ քիչ, բայց մեկ-մեկ գրում ա՝ **ասում է**, փոխանակ իրա սովորական ձեվով գրի՝ **ասում ա**:

Էս մի քանի պատահական «սխալն» ճակատագրական էղավ, որտեվ էսի ոնց որ «համոզեր» սաղին, թե **ասում ի, ասում իր** ձեվերն իրա՛նք են հենց սխալ կամ պատահական:

Ու համ էլ, բացի էս էրկու «մանր», բայց ճակատագրական նահանջը (Արարատյան բարբառից), Աբովյանն իրա **Վերք Հայաստանիի** մեջ բավական շատ գրաբարյան բառային ու դարձվածքային արխայիզմ ունի:

Ինչ որ ա, Աբովյանի էս մի քանի ճակատագրական շեղմունքը իրոք քանդեց իրա գրելու սաղ սիստեմը: Հյուսիսյաններն էս շեղմունքներով ահավոր ոգեվորվեցին (որտեվ «գործ էր բացվե»: Իմիջիայլոց, Ստեփանոս Նազարյանը Աբովյանի դասընկերն ա էղե, ու ինքն էլ ա Աբովյանի հետ համարյա նույն տարիներին (մի թեթեվ ուշ) Դորպատում սովորե): Ուրեմը, հյուսիսյանները ոգեվորվեցին ու անցան Աբովյանի գրելու լեզուն «ուղղելուն» (այսինքը, ծռելուն):

Համարյա համոզված եմ, որ եթե Աբովյանը Արարատյան կենդանի բարբառի քերականությունից (ձեվաբանությունից ու շարահյուսությունից) ու բառապաշարից չշեղվեր, հյուսիսյանների մտքով հագիվ թե անցներ, թե Աբովյանի սիստեմը «թերություն» ունի, ու մենք էլ էսօր մեր էս գրական մեռած ոճերի տեղը մի կենդանի ու հզոր գրական լեզու կունենայինք (արդեն առանց չակերտների **լեզու**):

Չունեցանք ու չունե՛նք:

Չենք էլ ունենա՞:

Որ Աբովյանը կարար ըսենց պատահական ու անգիտակից «սխալներ» աներ, սեփական փորձիցս գիդեմ, որտեվ երբ ի՛նքս էի (էրեվյանի բարբառով) իմ գրական ոճը սարքում, իմ գրածի մեջն ըսենց բան շատ էր ըլնում: Էտ պրոցեսը տեվել ա 20-22 տարի, ու շատ-շատ էլ «ցավոտ» էր ու ջանջալ (մանավանդ սկզբից), ու հլը չի էլ պրծե:

Սկզբի տարիներին ընձի անընդհատ թվում էր, թե իմ էս «նորամուծությունները» անբարեհունչ են ու տգեղ, ու երեվի մի հարուր անգամ եմ դրանք ջնջե ու տեղներն էլի դրանց **գրական** համարժեքներն

եմ դրե (է՛ն համարժեքները, որ էսօր աչքիս ու ականջիս անբարեհունչ ու տգեղ են):

Հետո նորից էի դրանք փոխում, բայց հետո էլի՛ հետ էի դառնում հներին, ու ըսենց անընդհատ: Ու ես էսօր է՛լ եմ մեկ-մեկ (անգիտակից կամ ինտրոսպիկ) գրական «մեռած» ձեվերը գործածում, այսինքը, ինտրոսպիկ հենց ի՛մ սկզբունքներին եմ հակառակ էթում: Իրոք որ, **կաթի հետ մտածը հոգո՛ւ հետ ա դուս գալի:**

Վերջը էկա հասա իմ է՛ն ոճին, ինչով որ ես գիրքս եմ գրե, ու անհամբեր սպասում եմ արածիս արդյունքին, հստակ իմանալով, որ էնքան էլ շատ ժամանակ չի մնացե ընձի, ու որ կարող ա՛նչ մի բան էլ երբեք չփոխվի ու արածս գործը ջուրն ընգնի:

(Էսի լրի՛վ ա հնարավոր: Հայերի էն վեճը, թե «ի՞նչ լեզվով պտի գրեն ու խոսան», ձգվում ա արդեն 1500 տարի: Բայց ախր մի քանի շատ խելոք մարդ կա, ով ասում ա, թե մեր քաղաքակրթությանը կարող ա մենակ մի քանի դար ա մնացե, էն էլ՝ թե որ բախտներս բերի):

1.7 ՄԵՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՍԿԶԲՈՒՆՔ ՉՈՒՆԻ

Շեշտում եմ. ԵՍ ՈՉ ՄԻ ԸՆԵՆՑ ԲԱՆ ՉԵՄ ԱՐԵ, ՈՐ ԸՆԶՆԻՑ ԱՌԱՋՎԱ ԸԱՅ ԳՐՈՂՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱՐԱՃ ՉԸԼՆԵՆ, ՈՒ ԻՆՉԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ ՄԵՋԸ ՉԸԼՆԻ: ԵՍ ՄԵՆԱԿ ՀԵՏԵՎԵԼ ԵՄ ՀԵՆՑ ԷՍ ԲԱՐԲԱՌԻ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆԸ (ՀԱՄ Է՛լ՝ ՍՐԱ ԲԱՌԱՊԱՇԱՐԻՆ, ԲԱՅՑ ՈՉ ՄԻՇՏ), ՈՐՏԵՎ ԳՈՐԾԵԼ ԵՄ **ԼԵԶՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՕՐԵՆՔՈՎ (190-**ով, տես էս գրքի 35, 119-121, 219-221 ու 239 էջերը), այսինքը, **ԵՍ ՀԵՏԵՎԵԼ ԵՄ ԿԵՆԴԱՆԻ ԲԱՐԲԱՌԻՆ:**

Բայց գիդեմ, էլի լիքը «լուրջ» մարդ կըլնի (երբ ասում եմ՝ «լիքը», քիչ եմ ասում, շա՛տ-շա՛տ կըլնի), ով կասի, թե ես անթույլատրելի բան եմ անում, կամ ցուցամոլ եմ, կամ խարխուլում ու կործանում եմ մեր նախնիների ստեղծած փառահեղ մշակույթը:

Բայց էս «լուրջ» պարոնների ու տիկնանց սկզբունքը ո՞րն ա, ու սրանք ի՞նչ սկզբունքի են հետեվում: Ես հետեվում եմ Լեզվի Գլխավոր Օրենքին, ու ԼԳՕ-ն ա իմ սկզբունքը: Իսկ մեր «լուրջ ու հույժ ուսյալ» պարոններն ու տիկիները գրելու քիչ թե շատ օբյեկտիվ մի սկզբունք ունե՞ն:

Արդեն ասել եմ, որ **չունե՛ն:**

Հաստատ չունենն, որտեվ էս արդեն 7 տարի ա, ինչ մամուլով ու իմ գրքերի մեջ անընդհատ հարցնում եմ իրանց, որ թե ըսենց մի սկզբունք ունեն, լեզվական գոնե մի՛ սկզբունք, թո ասեն, բայց չեն ասում, որտեվ չունեն:

(Էս 7 տարի ա, ինչ մեր լեզվաբաններին ասում եմ, թե մենք **նույն լեզվի համար** երկու **իրար լրիվ հակասող, իրար ջնջող ու լրիվ անհամատեղ** քերականություն ունենք, մեկը՝ Մանուկ Աբեղյանինը, մյուսը՝ հետաբեղյանականները (Արարատ Ղարիբյանի ու Գուրգեն Սեվակի

հորինածն ու սրա ժառանգները, որ «կատարելագործել են» սրանց հետեվորդները, այսինքը, հասցրել են անհեթեթության [16-19]:

(Ու մեր էսորվա քերականներն ասում են, թե էս էրկու քերականությունն էլ ճիշտ ա, ու երբ հարցնում եմ, թե ըսենց բանը ո՞նց կըլնի, իրանք ձեն ու ծպտուն չեն հանում:

(Համ էլ ասում եմ, որ էսի, հենց **էս փաստը, ապացուցում ա, որ մեր էսորվա քերականությունը գիտություն չի**, որտեվ գիտությունը իրա ասածների ճիշտ ու սխալը որոշելու մի գիտական ու օբյեկտիվ չափանիշ՝ ա՛նպայման ա ունենում, ու էլի ձեն չեն հանում: Ա՛յ, էսի՛ ու ըսե՛նց են մեր լեզվաբանները):

Ուրեմը, **իմ արածը ո՛չ կապրիզ ա, ոչ է՛լ պատահականություն: Մեր լեզվաբանները չեն հասկանում, որ լեզուն բնություն ա, բնության մի մասն ա, ունի իրա հատուկ օրենքները, ու էս օրենքներն է՛լ են բնության օրենք, ու սրանք մարդկային ոչ մի ծարագրի չե՛ն լսում ու չե՛ն ենթարկվում: Մեր լեզվաբանները ոչ միայն էսի չգիդեն, այլև չեն է՛լ կասկածում, որ ըսենց բան կա:**

Ու մեր լեզվաբանները, միամիտ էրեխու պես, ուզում են, որ էտ նույն բնության մի մասի, այսինքը, լեզվի օրենքները, ենթարկվեն իրանց կամքին ու ծրագրերին:

Մաշտոցի կամ մեր լատինաբան հայրերի օրերին կարա՛յին ըսենց մի բանի հավատային, որտեվ էն օրերին էսորվա գիտությունն ու փորձը չկար: Բայց էսօ՞ր: Մենք, ի՞նչ ա, ոչ մի անգամ չե՞նք հրաժարվելու էս էրազային ու մանկական ցանկությունից: Ու ախր խի՞, հանուն ինչի՞:

1.8 Ի՞նչ ՊՏԻ ԱՐՎԻ

Բա մենք չե՞նք անելու էն հասարակ բանը, ինչն առաջարկում էր Աբովյանը: Իսկ Աբովյանն առաջարկում էր, որ Երեվանի բարբառը (իրա քերականությունով ու սաղ բառապաշարով) համարենք գրական, այսինքն, գրելու՛ լեզու: Էկեք մի ըստե՛ք պատկերացնենք, որ էս առաջարկն իրագործվել ա: Ի՞նչ կստացվի:

Կստացվի հետեվյալը:

Արարատյան բարբառի սաղ կրողներն էլ միանգամից կդառնան գրագետ, իսկ իրանք, գրական լեզվի էսօրվա «քրմերը», կդառնան անգրագետ: (Հետո՞ ինչ: Թո իրանք էլ մի քանի շաբաթ չարչարվեն ու սովորեն իրանց մայրենի լեզուն): Ու միանգամից հազար ու մի պրոբլեմ կլուծվի, կամ էլ՝ կվերանա:

Բայց էս «քրմերը» կյանքում չեն համաձայնի, որ սաղ էլ դառնան գրագետ: Ո՛չ մի անգամ չե՛ն համաձայնի: Ախր, թե որ համաձայնեն, էլ ոչ մի բանով ավել չեն ըլնի շարքային մարդուց:

(Իմիջիայլոց, թե որ Աբովյանի առաջարկը հանգարծ իրագործվեր, Արարատյան բարբառի ամեն մի կրողն էլ կդառնար գրական «լեզվի» բարձրակարգ գիտակ, ուրեմը, համ էլ հայերեն՝ լեզվի բարձրակարգ գիտակ, որտե՛վ սխալ կարծիք կա, թե հայերեն լեզուն մենակ գրական «լեզուն» ա:

(Ու էս անգամ էտ կրողները իրոք կըլնեին լեզվի իսկական պրոֆեսոր, ու համ էլ՝ լեզվի առաջնակարգ ու լրիվ ձրի դասատու՝ թե՛ իրարու համար, թե՛ էն էկվորների համար, ովքեր ուզում են հայերենը սովորեն):

1.9 Ո՞ՆՏ ԱՆԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ԳՐԱԿԱՆԸ ՄԵՌԱԾ ՉԸԼՆԻ

Մեր լեզվաբանները բնագործ զգում են, որ մեր գրական լեզուն «կենդանի չի», ու սրա ապացույցն է՛ն պահանջն ա, թե ինչ-որ բան պիտի արվի, որ մեր «գրական տեքստերը կենդանի լեզվով գրվեն»: Լեզվաբան Արտեմ Սարգսյանը (դոկտոր-պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ-ի թղթ. անդամ) իր **Մեր լեզուն, մեր խոսքը** հեռացուցային հաղորդման ժամանակ (2011 թվի գարնանը) ընձի հարցրեց, թե «ի՞նչ պետք է արվի, որ մեր գրական լեզուն դառնա կենդանի»:

Պրն Սարգսյանն է՛լ, ուրիշներն է՛լ էս հարցը վերջերս շատ են տալի: Ուրեմը, էսի շատերին ա նահանգստացնում, ու շատերն են գլխի, որ մեր գրական ոճերի վիճակը հեշ լավ չի:

Ես էտ հաղորդման վախտը էս հարցին պատասխանեցի՝ կարդալով իմ էս գրքի **ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ** վերնագրի մի քանի թեզը, բայց չհասցրի լրիվ պատասխանեմ, որտե՛վ ռեժիսյորն ընդհատեց հաղորդումն ու ասեց, թե ժամանակն սպառվել ա: Հիմի՛ եմ պատասխանում, կարճ ու հստակ:

Թե ուզում եք, որ մեր գրական ոճերը կենդանի լինեն, ուղղակի պտի կենդանի լեզվով խոսաք ու կենդանի լեզվով գրեք, ուրիշ ոչ մի ձեվ սրա համար չկա: Թե նորից ու անընդհատ մեռած ու անկենդան ու կեղծ շտամպ եք գործածելու, ձեր ոճերն ու մտքերն է՛լ են մեռած ու անկենդան ու կեղծ ըլնելու:

1.10 ՉԵՄ ԱՍՈՒՄ, ԹԵ ԷԿԵՔ ԳՐԱԿԱՆ ՈՃԵՐԸ ԴԵՆ ՔՑԵՆՔ

Էս վերջի 20 տարին, գրաքննադատության վերանալուց հետո, հայկական հեռացույցով ու ռադիոյով ելույթ ունեցողներից շատերը, ու թերթերից մի քանիսը ավելի ու ավելի շատ են գործածում կենդանի խոսքը: Կան հայ գրողներ, ովքեր գրում են էրեվանի բարբառով, կամ՝ համարյա էտ բարբառով:

Բայց էս ամենի ընթացքը տարերային ա, ու էտ ելույթներն ու գրվածքներն ավելի շուտ հիշեցնում են «լուսանկար», քան թե գեղարվեստական խոսք: Թվում ա, թե մեր լեզվաբաններն ու գեղարվեստի մասնագետները պտի ահավոր հետաքրքրվեին էս երեվույթներով, բայց՝ չէ՛:

Սրանք ահավոր ջղայնանում ու թունդ հայհոյում են, թե «Երեվանի «Ժարգոնը» հեղեղել ա ռադիոն, հեռացույցն ու մամուլը»: Էս մարդիկ ոնց որ չհասկանան, որ հոսանքին հակառակ չես էթա, որ հարստանալու ցանկությունը կքանդի կենդանի խոսքի դեմ իրանց դրած ամեն մի արգելքը:

Կքանդի, որտեվ խոսքի մասնագետներն ուզում են, որ իրանց ասածները, ինչքան հնարավոր ա, ճշմարիտ ու կենդանի էրեվան, իսկ սրա համար էլ պտի խոսան մարդավարի, ոնց որ կենդանի՝ մարդիկ են խոսում:

Ըստ էության, էս ուզում եմ սիստեմավորեմ էս տարերային պրոցեսը, չնայած սկզբում չէի գիտակցում, որ ըսենց բան եմ անում, ու լրիվ մենակ էի: Բայց էս էնքան միամիտ չեմ, որ մտածեմ, թե կարամ ստիպեմ, որ մարդիկ փոխեն իրանց արդեն մանկուց հաստատված գրական սովորությունները:

Էս մենակ ուզում եմ, որ իմ պատմվածքների, քննական ու քննադատական հոդվածների, թարգմանությունների ու ոտանավորների լեզվի օրինակով տենան, թե էրեվանի բարբառի հնարավորություններն ինչքա՛ն հարուստ, հստակ ու ֆանտաստիկ չքնաղ են, թե որ էտ բարբառը բանըցնես խելքով, շնորհքով ու բավարար վարպետությունով ու ֆանտազիայով:

(Ու նույնիսկ **գրական ոճով** արած իմ ծավալուն թարգմանությունների մեջ (օրինակ, **Արիստոտելի Աթենական հասարակարգ**-ի ու **Կ. Ռ. Պոպերի Բաց հասարակությունն ու դրա թշնամիներ**-ի մեջ), որ արել

եմ հրատարակչությունների պատվերով, իմ գրական հնարքներից շատ կա, բայց շարքային ընթերցողը դրանք չի տեսնում:

(Չի տեսնում, որտեղ իմ սաղ աննկատելի «նորամուծություններն էլ էրեվանի բարբառի օրենքներով են, ուրեմը, համ էլ իսկական հայերենի օրենքներով են, ուրեմը, ընթերցողի մայրենի լեզվի օրենքներով են: Հենց սրա համար էլ կարդացողը դրանք չի տեսնում, որտեղ մայրենի լեզվով խոսալը բնազդի պես մի բան ա դառնում, իսկ բնազդն աննկատելի ա):

Բայց ես չեմ ասում, թե էկեք արգելենք գրական ոճերով գրելը: Թո ամեն մարդ էլ գրի իրա ընտրած ոճով, բայց թո իմ է՛ս ոճն ու սրա պեսերն է՛լ թույլատրելի ըլնեն, թույլատրելի ըլնեն մանավանդ դպրոցում, ու մանավանդ դպրոցի ցածր դասարաններում, **որ էրեխեքի սովորելու բնական ցանկությունները չսպանվեն**: Ու թո ժամանակը որոշի, թե ի՛նչն ա ճիշտը:

1.11 ՈՒՐԻՇՆԵՐԸ Ո՞ՆՑ ԵՆ ԳՐԱԿԱՆ «ԼԵԶՈՒ» ՍԱՐՔԵ

Իմ էս արածը ընձնից առաջ արդեն արվել ա, ու շատե՛րն են էսի արե: Աբովյանի մասին արդեն ասել եմ ու հլը էլի կասեմ իմ մյուս՝ հլը անտիպ գրքի մեջ, բայց ուզում եմ մի էրկու օրինակ էլ բերեմ:

Երբ Շեքսպիրը (1564-1616) հրատարակեց իրա առաջի դրամաներն ու ողբերգությունները, էն օրերի Անգլիայի մտավորականները, մանավանդ Շեքսպիրի մահից մոտ 100 տարի հետո (պոետ Ալեքսանդր Պոպի (1688-1744) գլխավորությամբ) հարձակվան Շեքսպիրի վրա, թե խի՞ էս գրում «Լոնդոնի փողոցների ժարգոնով»:

Բայց Շեքսպիրի վեջն էլ չէր, որտեղ մարդիկ գալիս էին իրա պիեսներին, ու ինքն էլի՛ էր գրում «Լոնդոնի փողոցների ժարգոնով», ու էնքան գրեց, մինչեվ հարըստացավ:

(Ես ըտենց հույս չունեմ, որտեղ ավա՛ղ, Հայաստանը Անգլիա չի, ես էլ Շեքսպիր չեմ):

Անգլիայի մաքրամուլները մոտ մի 100 տարի մաքրում էին «անգլերեն լեզուն», մինչեվ հասկացան, որ Շեքսպիրը բացարձակ ճիշտ ա, ու դրանից հետո՝ սաղ է՛լ գնացին Շեքսպիրի ճամփով:

Ու մոտ 100 տարի մեզնից առաջ անգլիացի լեզվաբան Հենրի Սվիթթը (1848-1912) ձեվակերպեց **Լեզվի Գլխավոր Օրենքը (190-ն)**, ինչ ասում ա, որ ՏՎՅԱԼ ԼԵԶՎԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԱ՛Ղ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐՆ ԷԼ ՃԻՇՏ ԵՆ ՀԵՆՑ ՄԵՆԱԿ Է՛Ն ՊԱՏՃԱՌՈՎ, ՈՐ ԴՐԱՆՔ **ՈՒՂՂԱԿԻ ԿԱՆ** Է՛Դ ԼԵԶՎԻ ՄԵԶ (տես համ էլ՝ 119-121, 219-221 ու 239 էջերը):

Համարյա նույն բանը պատահեց Պուշկինին (1799-1837), երբ ինքը հրատարակեց իրա առաջի հեքիաթ-նտանավորները: Քննադատներ **Բուլգարինն ու Գլագոլյեվը** հարձակվան Պուշկինի վրա, թե «խի՞ էս էտ մութիկների լեզուն բերե լցրե սուրբ գրականությունը» (տես [11], IV հտ, էջ 190-201, 453):

Բայց էն օրերին Ռուսատանում լիքը լուսավոր մարդ կար, ու Պուշկինը հանգիստ շարունակեց իրա գործը ու ահավոր բարձր էլ գնահատվեց ու էլի՛ ա գնահատվում:

(Հայաստանում ըսենց բանը հնարավոր չի՛, խավարամոլությունն ըստե ահավոր ա):

Հետագայում Լեվ Տոլստոյը (1828-1910) գրեց իրա *Книги русского чтения*-ն [28], գրեց հենց էտ «մուծիցկի լեզվով», հենց գյուղի՛ լեզվով, ու Ռուսաստանի էն օրերի լուսավորության մինիստրը, ով իրոք լուսավոր մարդ էր, Տոլստոյի գրքի վրա մակագրեց. «Դասագիրք՝ համայն Ռուսիայի համար»:

Սրա համար էլ էսօր ոռու հասարակ կթվորը կամ «անգրագետը» միկրաֆոնով շատ ու շատ ավելի հանգիստ ու առանց վախի ու կակազելու ա խոսում, քան թե հայ պրոֆեսորը:

Երեվի սաղ էլ համաձայնեն, որ Հայաստանում էսի հնարավոր չի, նույնիսկ ամենալավատես էրագի մեջ: Ախր մենք մեր մինիստրներին (որ de facto հենց նախարար են, *նախարար* բառի հնագույն իմաստով) շատ լավ գիդենք (տես իմ [19]-ի **ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԵՐՋԱԲԱՆԸ**):

Ըսենց օրինակ շա՛տ կա: Վախտին, Վերածննդի օրերին, ըսենց բան շատ ա էղե:

Իտալիայում մեղադրել են **Դանթեին** (1265-1321), ու **Պետրարկային** (1304-1374) ու **Բոկաչոյին** (1313-1375), Իսպանիայում՝ **Սերվանտեսին** (1574-1616), Ֆրանսիայում՝ **Ռաբլեին** (?1494-1553), ու ուրիշ երկրներում էլ՝ հազար ու մի մարդու: (Էս թվականները բերում եմ, որ կարդացողը սրանք համեմատի հայ իրականության նման թվերի հետ ու հասկանա, թե մենք ինչքա՛ն ենք հետ ու համ էլ՝ ինչքա՛ն ենք ...):

Օրինակ, Չեխիայում **Յարոսլավ Հաշեկին** մեղադրում էին, թե ինքը «գրում ա ժողովրդի գռեհիկ լեզվով» (տես **Հաշեկի Քաջ գինվոր Շվեյկի արկածները** վեպի առաջի հատորի վերջաբանը), ու **Յուլիուս Ֆուչիկը** պաշտպանեց իրան. բայց լսել եմ, որ չեխերն էսօր նորից են պնդում, թե պտի անպայման գրական «լեզվով» գրեն: Գերմաներեն գրական «լեզվի» էսօրվա վիճակն ավելի վատ ա, քան թե հայերենինը, չնայած մարդ մտածում ա, թե մերինից ավելի ահավորն ուղղակի հնարավոր չի:

1.12 ՊՏԻ ԴԱՐԵՐՈՎ ՍԽԱԼՎԵՆՔ, ՈՐ ԾԻՇՏԸ ԻՄԱՆԱ՛ՆՔ

Ամերիկյան գրականության հայրը (Ֆոլկների ու Հեմինգվեյի ասելով), **Մարկ Տվենը** (1835-1910), 1885 թվին հրատարակեց իրա **Հեկլբերի Ֆինի արկածները** վեպը, ինչը հմի համարվում ա **ամերիկյան գրականության լավագույն վեպը:**

Էս վեպը գրած ա չորս գլխավոր բարբառով ու իրեք խոսվածքով, ու **սաղ վեպի մեջ գրական «լեզու» չկա: Հեչ չկա**, բացի հեղինակի մի քանի տողանոց նախաբանը, որտեղ հեղինակն ասում ա, որ էտ բարբառներն

ու խոսվածքներն ինքը շատ ուշադիր ու խնամքով ա գործածե, որ հանգարծ սխալ չըլնի:

Էս վեպը հրատարակելուց հետո արդեն մի դարից ավել ա անցե, ու մենք հլը Մարկ Տվենի ոչ լեզվական շնորհքին ու գրական վարպետությանն ենք հասե, ոչ էլ իրա է՛ն գիտակցությունն ունենք, որ կենդանի խոսքից զորավոր բան չկա:

Մենք որոշել ենք մեր սխալներով սովորենք, բայց ախր մեր հնարավոր սխալների քանակն անսահմա՛ն ա: Ու ախր մենք մեր սխալները տենալու զորությունը չունե՛նք: Սրա համար էլ մենք ուրիշներից չենք սովորում:

Բա ռուս հիանալի գրող, դերասան ու ռեժիսյոր Վասիլի Շուկչինի գործերի կենդանի ու հզոր խոսակցական լեզուն մեզ խրատ ու օրինակ չըլնի՞. բա չսովորե՞նք իրանից ու ռուս մյուս հիանալի գրողներից ու ռեժիսյորներից ու դերասաններից:

Բա մարդ էլ էսքան քոռ ըլնի ու չտենա՞, որ ռուսների ու ամերիկացիների լավագույն վեպերի ու ֆիլմերի զորության մեծագույն մասը դրանց լեզվի կենդանության, ուրեմը, հավաստիության մե՞ջ ա:

Բա ո՞նց էր կարելի, որ անկախության մարմաջով տարված՝ ռուսական դրպրոցները փակեինք ու կտրվեինք ռուսական էտ հզորագույն մշակույթից: Բացի սա, ենթադրենք, թե դարձանք անկախ, բայց մի թշվառ ու հետամնաց մշակույթի տեր (հնարավոր ա, համ էլ անբարո, էնքա՛ն անբարո, ինչքան թուրքերը Հայկական Եղեռնի օրերին, կամ գերմանացիները Հիտլերի բռնակալության ժամանակ), ո՞ւմ ա պետք ըտենց անկախությունը:

(Երբ նպատակիդ հասնելու միջոցների մեջ խտրություն չես դնում, նպատակդ լրի՛վ ա այլասերվում, կամ մեռնում ա):

1.13 ՌՌՒՍԵՐԵՆՆ ԱՓՍՈՍ ՉԷ՞Ր

Անձամբ իմ իմացածի՝ ի՛մ գիտելիքի ամենաարժեքավոր մասի մեծագո՛ւյն-մեծագո՛ւյն մասը սովորե ու իմացել եմ ռուսական մշակույթից, ու անպայման ռուսերենով կամ ռուսերենի միջնորդությամբ: Նույնիսկ իմ անգլերեն՝ն եմ ռուսերենին պարտական, որտեվ մենք անգլերեն-հայերեն ու հայերեն-անգլերեն **կարգին** բառարան՝ էսօր է՛լ չունենք:

Բոլշեվիկների տված վնասը մարդկությանն ու մանավանդ հայերին՝ սարսափելի էր, բայց մի օքուֆ՝ դրանք հաստատ տվել էին: Էտ օքուֆն էն բանն էր, որ համարյա ամեն հայ էլ ռուսերեն գիդեր, ու կարում էր ռուսերեն գրականության միջոցով համաշխարհային մշակույթից օքտվի:

Իսկ **ռուսերեն գրականության բազմազան տեսակների քանակը Հայաստանում ուղղակի վիթխարի էր (նույնիսկ էսօ՛ր ա վիթխարի):**

Բա էտ ծով գրականության ազդեցությունը կդարձնեն համարյա զրո՞: Մենք, ի՞նչ ա, անընդհատ պտի ջնջենք ու նորից, այսինքը, էլի գրոյից սկսե՞նք:

Հա՛, հասկացա՛նք, որ անգլերենը կարեվոր ա: Անգլերեն է՛լ սովորենք (տո, հլը ֆրանսերեն է՛լ, գերմաներեն է՛լ ևն): Բայց ո՞ր են անգլերեն գրքերը, ու ոչ թե մենակ գեղարվեստական գրքերը, այլև՝ **մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի, երկրաբանության, աստղագիտության, տնտեսագիտության, բժշկության, պատմության, հնագիտության, հոգեբանության, փիլիսոփայության, ինժեներական գործի ու ճարտարապետության, լեզվաբանության, բանկային գործի** ևն, ևն, ևն:

Մենք փոքր ու աղքատ պետություն ենք, ու էլ արդեն երբեք հնար չենք ունենա, որ էս **օվկիանոսի** չափ գրականությունը թարգմանենք: Նույնիսկ Սովետի վախտը հնար չունեինք, որ, օրինակ, ռուսների պես թարգմանեինք (ու ռուսների պես էնքան լավ թարգմանեինք, որ թարգմանածը դառնար հայերեն ընտիր գրականություն, ու մենակ անունները մնային անգլերեն), օրինակ, Դիկենսի 30 հատորը:

Բայց ըսենց քանի՛-քանի՛ Դիկենս կա թարգմանելու արժան, խաբա՞ր եք:

Բա չհասկանա՞նք, որ **փոքր ազգն ուղղակի դատապարտված ա առնվազն երկու լեզու իմանալուն**, մեկը՝ իրա մայրենին, մյուսը՝ մի զորավոր մշակույթ ունեցող լեզուն: Հայերի համար էս երկրորդ լեզուն էղել ա՝ **պարսկերենը, հունարենը, ասորերենը, արաբերենը**, վերջում էլ **ռուսերենը**: Ու էն վախտերը, երբ հայերը սովորել են էս մշակույթներից, հայերի մշակույթն է՛լ ա ծաղկե:

Բա չհասկանաք, որ ռուսական մշակույթից կտրվելը առաջի հերթին հենց **հայերեն լեզվի ու մշակույթի ահավոր վնասն ա** ու, որ ըսենց էթա, հայերեն լեզուն ժողովրդի եռանդուն ու կրթված մասի համար կդառնա ավելորդ ու հետո էլ կամաց-կամաց կմեռնի, որտեվ ժողովրդի է՛ս մասի համար լեզուն առանց հզոր մշակույթի բանի պետք չի:

1.14 ՀԵՐԻՔ ՉԻ՞ ԽԱՎԱՐ ՄՆԱՆՔ

Հերիք չի՞ անընդհատ հայհոյենք **մարդավարի** խոսացողներին ու պարտադրենք, որ սաղ էլ խոսան «ընտիր ու մաքուր գրական հայերենով»:

Բա չհասկանա՞նք, որ **մեր մայրենի լեզուն հենց մեր մերերի (մայրերի) սովորացրածն ա**, իսկ **հայերենի դասատուների սովորացրածը՝ հենց օտա՛ր լեզու ա**. օտար ա, որտեվ մենակ օտա՛ր լեզուն են գրելով սովորում, ու մենակ օտա՛ր լեզվով ա, որ ազատ ու հեշտ ու հանգիստ ու համ էլ անընդհատ չեն խոսում:

Բա չհասկանա՞նք, որ **է՛ն հարցը**, թե պտի խոսանք ու գրենք մենակ գրական լեզվով, **լրիվ քաղաքական հարց ա** ու կապ չունի **գիտության**

ու արվեստի ու կրթության իսկական պարտադրանքի հետ: Ավելի ճիշտ, հենց որ ըսենց պարտադրանք ա դրվում, գիտության հերն էլ ա անհիծվում, կրթությանն էլ, արվեստինն ու մշակույթինն էլ:

Էլ չասած, որ գրական լեզվով գործելու պահանջը զրկում ա գրողին ու դերասանին ստեղծագործական ազատությունից ու ստիպում ա, որ կեղծ բաներ գրի ու ասի, ստիպում ա, որ հանգարծ **Մարկ Տվենի, Շեքսպիրի, Պուլկինի, Լեսկովի, Բաժովի, Տոլստոյների, Դանթեի, Պետրարկայի, Բոկաչոյի, Սերվանտեսի ու Շուկշինի** պես հրաշալի բաներ չգրի, ու գրի մենակ «մաքուր գրական հայերենով» գործեր:

Բա քաղգործիչներին ու կեղծ հայրենասերներին էլ կհավատա՞ն, ու ըսենց էլ չեն իմանա, որ սրանց դարդը մենակ ու մենակ իշխանությունը գրավելն ու ժողովրդին խաբելով հարստանա՞լն ա: Բա ըսենց էլ չպտի՞ հասկանանք, թե խի՞ են ասում, որ **«տականքի վերջին հանգրվանը հայրենասիրությունն ա»:**

Ու երբ էս կարգի մարդիկ ասում են, որ «Երեվանի բարբառը ժարգոն է», ըստ էության, ասում են, որ մեր մայրենի լեզո՞ւն ա ժարգոն: Բա էսի ասելու կամ համբերելու բա՞ն ա:

Մաթեմատիկոս Անրի Պուանկարեն ասում ա, թե **մարդկանց մեծագույն մասը ալարում ա՝ մտածի, ու էսի ճիշտ ա: Էս ալարող մասը կրկնում ա է՛ն մարդկանց կարծիքը, ում իմաստուն ա համարում, ու խողներին էլ թվում ա, թե էսի, էս մեծագույն մասը, մտածե՛ց:**

Էլի եմ ասում, որ էն մարդիկ, ովքեր համարվում են լեզվի մասնագետ կամ «քուրմ», մոռանում են (մեղմ ասած), որ **լեզուն ուղղակի ասելու, լսելու ու հասկանալու, լսածը հիշելու ու պաշարելու, ու պաշարածն էլ ուրիշներին (մանավանդ սերունդներին) փոխանցելու համար ա, ու հետո նոր ոտանավոր ու վեպ գրելու համար ա (ինչն ամեն մարդու խելքի բանը չի):**

Բայց գրական «լեզվի» էս «քրմերը» պահանջում են, որ սաղ մարդիկ էլ լեզվական ինֆորմացիան ոչ միայն ուղղակի ասեն, հասկանան ու փոխանցեն, այլև էս բաներն անեն **«ընտիր ու չքնաղ ու «մաքուր հայերեն» գրական լեզվով»,** ինչն իհարկե անհնար ա, որտեվ նախ աշխարհում մաքուր լեզու չի եղե, չկա ու չի էլ ըլնի, բայց որ ըլներ է, էսի կարար աներ մենակ շատ լավ գրողը, ինչը չափազանց հազվագյուտ բան ա: Իրոք որ, խավարամոլությունն ահավո՞ր ա տարածված ու սրանից պրծում չկա՛: **ԴԻՍԿԸ**

Глава 1. ПРЕДИСЛОВИЕ
РАЗВЕ АБОВЯН НЕ МОГ ИМЕТЬ ПОСЛЕДОВАТЕЛЕЙ?

*Никогда еще не было такой огромной
нужды и тоски в чистосердечности, как
сейчас, и никогда еще ложь не появлялась в
таком огромном количестве, как сейчас!*

Ованес Туманян

1.1 ВСЕГО ОДИН ВОПРОС

Все говорят, что и Абовян, и Туманян гениальны (они действительно гениальны). А ведь первый из них в свое время делал именно то, что делаю я сейчас, а второй старался следовать первому, насколько это позволяли тогдашние косные издатели и те “грамотеи”, от которых зависело издателское дело тех дней.

Первого из них, т.е. Абовяна, превозносят до небес именно за то, что в то совсем непростое время имел беспрецедентную храбрость выступления против тех упорствующих консерваторов, которые настаивали, что все армяне должны писать (и даже говорить – sic!) на мертвом литературном.

А о Туманяне снисходительно говорят, что он писал на Лорийском диалекте (что неверно, ибо он писал на Ереванском диалекте, т.к. не был настолько наивным, чтобы не осознавать, что он продолжает путь Абовяна).

И как это не удивительно, все последующие армянские писатели (за исключением нескольких) считаются последователями Абовяна, **хотя все они являются последователями того направления, которое было установлено армянским журналом “Северное сияние” в 1860-ые годы в Москве, с “легкой руки” Степаноса Назарян(ц)а и Микаеля Налбандян(ц)а.** (Ради краткости, последователей Северного сияния в дальнейшем буду называть **северистами**).

И этот феномен не только удивителен, но и поразителен, поскольку он ни разу еще не был серьезно оспорен за последние 90 лет, да и сейчас он принимается за чистую монету, хотя даже непрофессионалу видно, что **между языками прозы и поэзии Абовяна и, скажем, армянских писателей 1910-1930-ых лет огромная разница.**

Но достаточно появления какой-то вещи, написанной действительно на манер Абовяна, т.е. стилем, основанным на ереванском говоре, чтобы армянские “теоретики” объявляли его непозволительным еретическим жаргоном, который якобы подрывает основы всей нашей тысячелетней культуры.

Вот почему возникает следующий вопрос.

Разве удивительно, что гениальные писатели Абовян и Туманян имеют по крайней мере одного последователя, всего одного единственного последователя? Неужели наши теоретики литературы и языка абсолютно уверены, что ни Абовян, ни Туманян не должны иметь ни единого последователя, или же они уверены, что ни Абовян, ни Туманян не достойны ни одного?

По сути моя настоящая книга и моя деятельность последних 20 лет являются продолжением отчаянного и революционного эксперимента Хачатура Абовяна (и довольно-таки робкой попытки Ованеса Туманяна).

Я почти уверен, что подавляющее большинство армянской интеллигенции скажет, что мои старания абсолютно ненужные (и даже вредные) глупости, и почти уверен, что мои старания ничего не изменят, и наши литературные стили опять пойдут по их прежнему ложному пути.

Но я по крайней мере говорю от чистого сердца и верю, что я прав. Но все равно, я подарил последние 20 лет своей жизни этому моему почти безнадежному эксперименту, ибо вероятность того, что что-то все же изменится, все же не ноль.

1.2 НАШ ЛИТЕРАТУРНЫЙ “ЯЗЫК” – НАСТОЯЩИЙ ЖАРГОН

Абовян и Туманян хотели, чтобы для народа писали именно на народном языке. И Абовян писал свои прозу и поэзию на народном языке, чтобы остальные наши писатели следовали ему и писали как он, и чтобы армяне тоже имели такую конкурентоспособную литературу, какую имеют италяны, испанцы, французы, англичане, русские.

Я тоже хочу этого.

Но Абовян и Туманян не были услышаны, хотя на словах всегда утверждается, что наши последующие писатели суть их последователи (это, повторяю, неверно). Все наши последующие писатели (за исключением нескольких, и то с натяжкой), исковеркали манеру Абовяна, и наша сегодняшняя литература совсем не сравнима с литературой только что упомянутых народов.

Это мне сильно не нравится, и мне больно, что наша литература такая убогая. А наша новая литература действительно убогая, по сравнению, например, с английской. Она убогая именно потому, что пишется на фальшивом и мертвом “языке,” который носит гордое название “литературный язык,” хотя он лишен нескольких важнейших свойств живого языка. Вот почему литературный “язык” это не язык, а лишь набор индивидуальных стилей, набор индивидуальных манер письма!

По сути дела, наш литературный “язык” настоящий жаргон, ибо он имеет все признаки жаргона (например, воровского жаргона). Наш народ на нем не говорит, и **во всем мире нет даже моллюсенкой деревушки, население которой говорило бы на нашем литературном “языке,”** и даже сами “жрецы” (аналоги воров в законе) этого “языка” на нем говорят только в “литературных ситуациях”, в аудиториях, перед микрофоном и т.д., да и то с трудом и все время запинаясь.

И что поразительно! Эти “жрецы” объявляют жаргоном именно Араратский диалект, особенно Ереванский говор этого диалекта, который считают искаженной формой литературного “языка,” не понимая, что **диалект не может быть жаргоном, что целый народ не может “жаргонить”**.

Эти люди даже утверждают, что Ереванского диалекта (говора) нет. Но лет примерно 100 назад он точно был. Получается, что в одно прекрасное утро ереванцы проснулись и по глупости своей начали “жаргонить,” вместо того, чтобы продолжать говорить на “прекраснейшем и чистейшем литературном армянском языке!”

Ну, не поразительное же это невежество, особенно, если так говорит лингвист, или гуманитарий, который член корреспондент АН АР?

Анализ же показывает (см. также первую упомянутую книгу автора), что **наш литературный “язык” отличается от нашего Ереванского диалекта только теми своими ошибками (особенно, синтаксическими), которые наши грамотеи неосознанно ввели в него, подражая (в основном) русскому**. Это поразительно, ибо получается, что наши грамотеи считают, что заведомо ошибочное –абсолютно верно!

Термин “литературный язык” всегда неточен, но, применительно к армянскому, он также вреден и опасен, поскольку уже 150 лет всех армянских интеллигентов охватила пуристическая мания зачистки языка.

Они также утверждают, что “все-все армяне должны говорить на литературном армянском”, что конечно полнейшая чушь, ибо это невозможно, и такого не было нигде во всем мире, да и не может быть никогда.

Правильнее термин **литературный стиль**, по крайней мере в этой книге.

Вообще, любой литературный “язык”, какой бы нации он не принадлежал, не может соревноваться с соответствующим живым языком, ибо возможности живого языка несоизмеримо богаче.

Недаром Лев Николаевич Толстой говорит, что “на литературном языке мы порою несем всякую чушь, но живой, разговорный язык не позволяет нам говорить глупости.” Более того, ни один писатель не сможет говорить даже на своем собственном литературном “языке!”

Литературный стиль только тогда мощен и важен и только тогда имеет огромное культурное значение, когда он очень и очень близок к своему материнскому языку, как например литературные стили прекрасных английских или русских писателей.

А сегодняшние армянские литературные стили настолько далеки от Араратского диалекта и его Ереванского говора, что большей частью ошибочны, а значит фальшивы!

Эти фальшивые стили захватили все армянские школы и университеты. Они захватили всю армянскую литературу, армянский официальный театр, кино, телевидение, радио и прессу.

“Языковая” деятельность этих “культурных очагов”, по сравнению с их лучшими мировыми образцами, просто ни на что не пригодна (а скорее, вредна), сколь бы мы ни хвастались и ни восхваляли наши художественные и нехудожественные произведения, основанные на этом ошибочном, фальшивом и полностью искусственном “языке.”

Северистам не понравился литературный стиль Абовяна, и они смонтировали такой литературный “язык,” который сегодня явно не удовлетворяет (мягко говоря) всем культурным потребностям армян.

Более того, этот “язык” непонятен значительной части самих армян, особенно в Армянской диаспоре (которые, не сознавая причину своего непонимания, думают, что в этом повинна восточноармянская орфография!).

Во всяком случае, значительная часть армян (если не все) просто не умеет пользоваться им, или применяет его с огромными усилиями.

Тем не менее, преобладающая часть нашей интеллигенции утверждает, что этот литературный “язык” хорош, вполне удовлетворителен, и даже прекрасен!

Но кто и как и когда и где доказал, что сегодняшний армянский литературный “язык” хорош и вполне удовлетворителен? Кто и как и когда и где доказал, что Абовян и Туманян ошибались, или ошибаются и сегодня?

НИКТО И НИКАК И НИКОГДА!

И разве удивительно, что сегодняшний единственный последователь Абовяна и Туманяна не только идет по их дороге, но также делает несколько своих собственных шагов, т.е. не следует им слепо, а самостоятелен и основывает свой литературный “язык” на сегодняшнем Ереванском диалекте, (точно так, как делал Абовян) и употребляет (всего) несколько таких слов этого диалекта, которые либо до сих пор считаются “бяками”, либо никто их до сих пор не писал, либо их писали очень редко?

Итак, я пишу не на Ереванском диалекте, а на литературном “языке”, который я основал на этом говоре, и только время покажет, примет наш народ этот язык, или нет.

Кстати, Абовян и Туманян тоже не писали на диалекте. Они оба писали “языками” своих собственных изобретений, которые они основали на Ереванском говоре. Их различие в том, что Абовян к своему литературному языку добавлял гораздо меньше литературных явлений, чем Туманян. Те, кто утверждает, что они писали на диалекте (а это утверждают почти все), не сознают различие литературного “языка” и диалекта.

Этот разговор очень долгий, и я постоянно возвращаюсь к нему, как только появляется более менее удобный случай. Я его начал 20 лет назад, в армянской прессе и на телевидении, потом продолжил в моих упомянутых двух предыдущих книгах.

Моя настоящая книга в основном для юношества и молодежи, поскольку они всякое новое воспринимают и усваивают быстро, ибо их мышление еще не окостенело.

Но моя книга адресована и тем взрослым, которые еще не потеряли гибкость ума и толерантны к неудобным и непривычным взглядам, и которые хорошо знают, что на свете иногда рождается и что-то новое. (Я себя отношу к этой категории и горжусь этим своим умением).

Значит, эта книга в первую очередь написана для физиков и всех естественников, а также для математиков, которые каждый день имеют дело с новейшими достижениями науки, и хорошо знакомы с методами и искусством созидательной работы.

1.3 ЗАЧЕМ НУЖНО ПРИЗНАНИЕ?

Я начал свою литературную деятельность и исследования по языку в 37 лет, а в 41 совершенно случайно обнаружил, что умею писать стихи, причем хорошие, и тогда с удивлением понял, что методы литературного творчества чрезвычайно похожи на методы физическое или математического творчества.

Создание каждого стиха или его перевода было одной задачей, которую нужно было решать методом проб и ошибок, все время сравнивая уже сделанное с прежними первоклассными и более или менее похожими вещами.

Конечно, есть и огромная разница, и четкое “научное” изложение этой разницы и самого метода художественного творчества невозможно. Только что сказанное я просто чувствую, чувствую своей художественной интуицией, разработанной и накопленной собственным опытом. Но одно несомненно – эта работа доставляет такое огромное удовлетворение и радость, что не купишь ни за какие деньги.

Жаль только, что нет признания, и что не слышно хвалебного поощрения тех людей, от которых я это ожидаю. Признание нужно мне как воздух, ибо без него никто не слушает тебя, будь твоя логика предельно четкая, и будь твое творчество поистине гениально. А я кое-что стоящее уже сделал.

(В конце концов, признание и не так важно. Норберт Винер говорит (см. предисловие его *Кибернетики* []), важен только процесс достижения цели, а не сама цель. Когда цель уже достигнута, говорит Винер, она тут же растворяется в сумерках богов. Но все же хочется признания, ведь я знаю, точно знаю, **что** именно сделал, что сделал что-то очень важное, чего не было еще сделано!).

1.4 ПРАВИЛЬНЫЙ СПОСОБ СОЗИДАНИЯ

Радярд Киплинг говорит, что у племени Мамбо-Джамбо есть 169 способов сочинения песен, и все они правильны. Услышав это, наши армянские грамотеи, по своему обычному бахвальству, наверно сказали бы, что у армян этих способов гораздо больше.

Я также убежден, что есть 169 правильных способов монтирования литературного “языка,” но армяне выбрали именно 170-ый, единственно неверный способ, который абсолютно фальшив и искусственен, и поэтому мертв и бесплоден. Этот

способ основан на иммитировании чужих языков или на иммитировании мертвого состояния армянского литературного стиля, грабара.

Разве не стоит задуматься, что произведения армянского писателя Раффи не признаны в мире? Ведь они давно уже переведены на все языки бывшего СССР и на главные западные языки! Почему же, например, романы *Остров сокровищ* и *Черная стрела* англичанина Р. Л. Стивенсона уже примерно 150 лет широко известны и любимы во всем мире, а произведения Раффи – нет? Не все ли равно капиталисту, какую или чью книгу продавать, когда дело касается денег!

Ответ прост – проза Раффи, с точки зрения мировой литературы, малозначима, впрочем как и вся наша новая проза.

Почему это так? Почему, например, проза англичан такая значительная?

Могут возразить, мол Англия крупная страна и у нее огромные возможности и т.д. и т.п. Но ведь и Норвегия почти такая же маленькая страна, как Армения, и имеет почти такое же население, но дала миру таких людей, как Эдвард Григ, Кнут Гамсун и т.д., которые широко известны и оценены во всем мире.

Опять таки, возразят и скажут, что мол Норвегия окружена цивилизованными странами и так далее. Но ведь есть пример Древних Афин, которые были с современный губернский городок, с населением примерно в 30 000 граждан, а в сумме имели не более 100-200 тысяч жителей.

И Афины дали миру: **теоретическую математику, натурфилософию (физику, биологию и т.д.), трагедию, комедию, театр, греческую скульптуру и, самое главное – демократию! Афины дали миру, Солона, Сократа, Платона, Перикла, Эсхила, Софокла, Эврипида, Геродота, Тукидида, Аристотеля, Аристофана, Фидия** – этот список ведь почти бесконечный.

Значит дело не в малости и не в окружении. Дело в самих творцах, дело в их произведениях, дело в морально-этических нормах, и тех традициях, которые следуют из этих норм.

(Наши называют их “национальные традиции и ценности”, но на самом деле даже не представляют, какими должны эти вещи быть, чтобы следуя им, жить в довольстве и с достоинством). И факт, что по крайней мере новая армянская литература, армянский театр и кино просто неконкурентоспособны! Жаль, тысяча раз жаль!

С точки зрения армянских литературных стилей, или так называемого армянского литературного “языка,” основа всех тех 169 способов, упомянутых Кипплингом, это их материнский диалект, Араратский диалект, мощнейший представитель которого сегодня – Ереванский говор.

Следовательно, основой нашего литературного “языка,” всех наших литературных стилей, их полноправным хозяином, их контролером и хранителем и генеральной судьей, должен быть Ереванский говор, а не языковеды или литературоведы или академия наук или еще кто-нибудь.

К сожалению, это не так, и отсюда большинство наших культурных бед.

Да, к сожалению сегодня нашим литературным языком управляют литературные кальки, заимствованные у русского или английского (или еще откуда-то), потому что наши грамотей убедили наш народ, что сегодняшний Ереванский диалект – “вульгарный, грубый, неуклюжий и непозволительный жаргон.”

1.5 ЗАМЕДЛЕННАЯ БОМБА, ЗАВЕДЕННАЯ АБОВЯНОМ

К несчастью для армянской литературы, именно сам Абовян ввел в действие ту “бомбу замедленного действия”, которая впоследствии взорвала всю его систему нового способа письма, т.е. систему нового светского литературного “языка.”

Вместо живого вспомогательного глагола (которую также называют: **copula, связка**), т.е. вместо следующих редуцированных живых форм Араратского диалекта: *ստուծ ի, ստուծ իր (ստուծ էր)*, он употребил древнеармянские уже мертвые формы: *ստուծ էի, ստուծ էիր (ստուծ էր)*. (Последняя форма не изменилась с древних времен до сих пор).

Видимо, почему-то Абовяну казалось, что первые формы уж слишком неблагозвучны, да и последняя неизменная форма как бы “намекала,” что первые две должны быть похожи на нее. **Но это было неверно и стало роковой ошибкой для его системы письма!**

Кроме всего этого, Абовян, довольно редко и по моему случайно и лишь по инерции, но все таки иногда, пишет – *ստուծ է*; вместо того, чтобы писать – *ստուծ տ*. Это тоже была роковым для его системы, ибо создавало впечатление, что случайными ляпсусами являются именно живые формы: *ստուծ ի, ստուծ իր*.

Кроме этого фундаментального отхода от Араратского диалекта, Абовян употреблял в своем романе *Раны Армении* довольно-таки много древнеармянских архаических словосочетаний (грабаризмы).

Как бы там ни было, этот незначительный отход Абовяна от диалекта стал роковым. Севреисты воодушевились этими грабаризмами и начали “исправлять” стиль Абовяна.

Я думаю, что не будь этой “бомбы замедленного действия” Абовяна, т.е. если бы Абовян в точности следовал грамматике (морфологии и синтаксису) и словарю живого Араратского диалекта, то северисты вряд ли попытались изменить стиль Абовяна, и армяне сейчас имели бы живые литературные стили, вместо сегодняшних мертвых.

То, что Абовян мог делать такие случайные и неосознанные промахи, я знаю по своему собственному опыту, приобретенному тогда, когда я конструировал свой литературный стиль. Это был очень болезненный процесс, который длится уже 20 лет, и он еще не полностью закончен.

Тогда мне все время казалось (особенно вначале), что все мои нововведения неблагозвучны, и я многократно возвращался к старым стилям (к тем, которые

сейчас считаю неприемлемыми для меня). Потом я опять менял их на мои новые, и так до бесконечности.

Я до сих пор по инерции допускаю такие промахи, особенно в моей устной речи. Воистину, привычка – вторая натура!

В конце концов я остановился на том стиле, которым написана настоящая книга, и я с нетерпением жду результатов моих стараний, четко сознавая, что мне не так уж долго остается до отведенного мне времени, и что, наверно, за этот остаток времени ничто не изменится, а может быть ничего не изменится никогда.

(Это вполне возможно. Спор Армян “на каком языке писать и говорить” длится уже 15 веков! А ведь некоторые умные люди говорят, что нашей цивилизации остается всего несколько веков, и то – в лучшем случае!).

1.6 Я НЕ СДЕЛАЛ НИЧЕГО НОВОГО

Подчеркиваю, Я НЕ ДЕЛАЛ АБСОЛЮТНО НИЧЕГО, ЧЕГО ДО МЕНЯ НЕ ДЕЛАЛИ ПРЕДШЕСТВУЮЩИЕ МНЕ АРМЯНСКИЕ ПИСАТЕЛИ, И ЧЕГО НЕТ В АРАРАТСКОМ ДИАЛЕКТЕ. Я ТОЛЬКО СЛЕДОВАЛ МОРФОЛОГИИ И СИНТАКСИСУ ЭТОГО ДИАЛЕКТА (И ЛЕКСИКЕ, НО НЕ ВСЕГДА), ИБО ДЕЙСТВОВАЛ СОГЛАСНО **ОСНОВНОМУ ЗАКОНУ ЯЗЫКА (ОЗЯ**, см. стр. 119-121, 219-221 и 239), т.е Я ЛИШЬ СЛЕДОВАЛ ЖИВОМУ ДИАЛЕКТУ.

Но все равно, находятся “серьезные” люди, которые говорят, что я делаю глупости или непозволительные вещи. В таком случае, какому принципу следуют эти люди? Мой принцип – ОЗЯ, а какой у них принцип, и есть ли у них хоть какой-нибудь объективный принцип?

Нет, и это точно, ибо я уже 7 лет спрашиваю их об этом, и они упорно молчат, т.к. у них нет никакого принципа (см. упомянутые книги автора и ссылки приведенные в них).

(Уже семь лет, как я говорю нашим лингвистам [16-19], что армяне имеют две грамматики для одного и того же армянского “языка”, две совершенно взаимоисключающие и абсолютно несовместимые грамматики, одна – Манука Абеяна, другая – постабеянояская (которую придумали Арарат Гарибян и Гурген Севак, а их последователи “усовершенствовали” ее, т.е. довели до полнейшего абсуда!

(Наши сегодняшние грамматики говорят, что обе эти грамматики верны, и когда спрашиваю, как такое может быть, они упорно молчат.

(Я также говорю, что вот этот один единственный факт доказывает, что **сегодняшняя наша грамматика – не наука, что она лжива, поскольку истинная наука обязательно имеет какой-то объективный принцип, которым определяют истинность ее утверждений**, они опять упорно молчат. Вот какие наши сегодняшние лингвисты!)

Значит, то, что сделал я, не каприз и не случайность. Язык это природа, которая не подчиняется воле отдельных личностей, или программам созданными людьми!

1.7 ХОТИМ МЫ, ЧТОБЫ НАРОД БЫЛ ГРАМОТНЫМ?

У языка свои собственные природные законы, а законы природа не подчиняются программам человека! Наши лингвисты этого не понимают и не подозревают, что это так.

Например, если мы захотим, чтобы закон гравитации Ньютона перестал действовать, или действовал только по пятницам и субботам, ничего из этого не получится, потому что законы природы не зависят от воли одного человека и даже всех людей нашей Планеты. Но почему-то мы хотим, чтобы законы одной части этой природы, т.е. законы языка, подчинялись нам, и не замечаем, что такое желание абсурдно!

Неужели мы и дальше будем настаивать на этом абсурдном желании? И ради чего?

Неужели мы не сделаем ту простую вещь, которую предлагал Абовян? А предлагал он, чтобы мы объявили Ереванский диалект литературным (вместе с его грамматикой и всей лексикой). Пусть читатель представит на минуту, что так и сделано. Что получится? А получится следующее.

Мгновенно весь народ станет абсолютно грамотным, а сами “жрецы” литературного “языка” превратятся в неграмотных. (Ну и что? Пусть они потрудятся пару недель и заново выучат их же родной язык!).

Да разве эти “жрецы” согласятся, чтобы все стали грамотными. Нет, конечно. Ведь тогда у них не останется никакого преимущества над простым человеком, иначе тут же согласились бы с предложением Абовяна.

(Между прочим, если предложение Абовяна вдруг осуществится, каждый представитель Араратского диалекта автоматически превратится в первоклассного знатока литературного “языка”, а значит и армянского языка, ибо литературный считается (ошибочно) языком.

На этот раз эти представители действительно будут настоящими профессорами, а также первоклассными учителями языка друг для друга и для всех приезжих, которые хотят учить язык).

1.8 ЧТО НУЖНО, ЧТОБЫ ПИСАТЬ ЖИВЫМ ЯЗЫКОМ?

Между прочим, наши лингвисты и литературоведы отлично знают, что наш литературный “язык” неживой, и доказательством этого является то требование, что нужно что-то делать, чтобы наши тексты были написаны на живом языке.

Лингвист Артем Саргсян (доктор-профессор, член кор. НАН АР), во время интервью в своей телепередаче, *Наш язык, наша речь*, спросил меня, “что нужно делать, чтобы наш язык прозвучал живее.”

И гн Саргсян, и другие лингвисты и литературоведы задают этот вопрос все чаще и чаще. Значит эта проблема беспокоит многих, и многие догадываются, что состояние нашего современного литературного “языка” не совсем благополучно.

Во время этой передачи я ответил на этот вопрос, прочитав тезисы из заглавия *Несколько вопросов* из моей настоящей книги, но не успел закончить, поскольку режиссер прервал передачу и сказал, что время передачи вышло. Поэтому на этот вопрос отвечаю сейчас.

Если хотите, чтобы наш литературный “язык” был живой, вы просто должны говорить (и писать) живым языком, как простые люди, другого пути нет! А если будете опять и опять использовать мертвый и фальшивый штамп, наш литературный “язык” тоже будет мертвым штампом!

1.9 КАКОВЫ СЕГОДНЯШНИЕ ТЕНДЕНЦИИ?

За последние 20 лет, после упразднения литературной цензуры, многие передачи армянского телевидения и радио, а также отдельные газеты все больше и больше пользуются живыми диалектами. Есть армянские писатели, которые пишут на Ереванском диалекте.

Но все это присходит стихийно, и все это больше напоминает искаженную “фотографию,” чем художественное слово. Казалось бы, наши языковеды и искусствоведы должны были бы сильно заинтересоваться этим явлением, но нет!

Они лишь чрезвычайно возмущены, и сильно ругаются, что Ереванский “жаргон” наводнил литературу, радио, телевидение и прессу. Эти люди как будто слепы, и не понимают, что “против течения не поплывешь,” что желание наживы сотрет все препоны, стоящие перед употреблением живой речи, ибо мастера слова хотят, чтобы их рассказы выглядели насколько возможно правдиво, а для этого нужно говорить по-человечески, как говорят простые люди.

По сути дела я взялся за систематизирование этого процесса, хотя вначале не сознавал этого и был совершенно один. (Теперь я не один). Но я не настолько наивен, чтобы думать, что могу своей волей заставить людей изменить свои устоявшиеся литературные привычки.

Я только хочу примером своих собственных стихов, рассказов, своей публицистикой и своими книгами (критического литературного и языковедческого анализа) показать, какие чудесные возможности у нашего Ереванского диалекта, если к нему подойти с умом, умением, достаточным мастерством и воображением.

(Даже стиль моих довольно-таки объемистых переводов (например, *Афинская политея* Аристотеля и особенно двухтомник *Открытое общество и его враги* Карла Поппера), сделанные на заказ разных издательств, содержат много приемов моего литературного стиля, но для ординарного читателя они незаметны, поскольку все мои “новшества” строго подчинены канонам Ереванского диалекта, а значит

и истинному армянскому языку, а значит родному языку читателя. Поэтому он ничего не замечает, ибо родной язык воспринимается почти на рефлекторном уровне).

1.10 ДРУГИЕ КАК СОЗДАЛИ СВОИ ЛИТЕРАТУРНЫЕ СТИЛИ?

И я лишь делаю то, что многие уже сделали до меня. Об Абовяне я уже сказал здесь и о нем буду говорить (довольно подробно) в моей будущей книге (*Центральные вопросы теории современного армянского языка*), но я хочу привести еще два примера.

Когда **Шекспир** (1564-1616) опубликовал свои первые драмы и трагедии, вся тогдашняя интеллигенция Англии (во главе с поэтом **Александром Попа** (1688-1744, значит почти 60 лет после смерти Шекспира) напала на него, мол он пишет “уличным жаргоном Лондона”.

Такие нападки были и во время его жизни, но Шекспиру было наплевать, поскольку люди ходили на его спектакли, и он и дальше писал на том же “уличном жаргоне Лондона,” и разбогател. (У меня нет такой надежды, ибо увы, Армения не Англия, да и я не Шекспир). И почти 100 лет английские пуристы “очищали” литературный английский, пока не поняли, что Шекспир абсолютно прав, и тогда все пошло по его пути.

И примерно 100 лет тому назад английский лингвист **Генри Свит** (1848-1912) сформулировал ОЗЯ, который говорит, что В ДАННОМ ЯЗЫКЕ ВСЕ ЯЗЫКОВЫЕ ЯВЛЕНИЯ ВЕРНЫ ПРОСТО ПОТОМУ, ЧТО ОНИ *СУЩЕСТВУЮТ* В ЭТОМ ЯЗЫКЕ (см...).

Почти то же самое повторилось, когда **Пушкин** (1799-1837) опубликовал свои знаменитые поэтические сказки; критики Булгарин и Каченовский обвинили Пушкина, что мол он пишет на мужицком языке. Но в тогдашней России было немало поистине просвещенных людей, и Пушкин спокойно продолжил свое дело и был очень высоко оценен (в Армении такое невозможно, слишком уж велика косность!).

Впоследствии **граф Толстой** (1828-1910) написал свои *Книги русского чтения* [], написал именно на “мужицком языке,” и тогдашний министр просвещения России был поистине просвещенным человеком, ибо он поставил свою подпись на работе Толстого и добавил: “Учебник для всея России.”

Все согласятся, что армяне такое не увидят даже в самом оптимистическом сне. Уж слишком хорошо знаем мы наших министров (см. под заглавием *Трагическое послесловие* в упомянутой второй книге автора).

Таких примеров много. В период ренессанса такое случилось и в Италии с **Данте** (1265-1321), с **Петраркой** (1304-1374), и **Боккаччо** (1313 - 1375), и во Франции с **Рабле** (?1494-1553), и в Испании с **Сервантесом** (1547-1616), и в других странах.

Чехи, например, обвиняли **Ярослава Гашека**, мол он пишет на вульгарном народном языке (см. послесловие первого тома его романа *Похождения бравого*

солдата Швейка), и **Юлиус Фучик** выступил в его защиту; но я слышал, что чехи сегодня опять спорят о том, на каком “языке” надо писать.

Состояние немецкого литературного “языка” гораздо хуже, чем армянского, хотя казалось бы, что может быть хуже последнего?

(Я привел все эти даты, чтобы читатель мог их сравнить с аналогичными датами армянской действительности и понял, насколько мы отстаем от других!)

1.11 РАЗВЕ РУССКИЙ ЯЗЫК БЫЛ НЕНУЖЕН?

Отец американской литературы (по Фолкнеру), **Марк Твен** (1835-1910), в 1884 году опубликовал свой роман – *Приключения Гекльберри Финна*, который сейчас считается **лучшим романом американской литературы**.

Этот роман весь написан четырьмя основными диалектами и тремя поддиалектами (говорами), кроме предисловия автора всего в несколько строк, где автор говорит, что он использовал эти диалекты очень аккуратно, все время сверяя написанное с говорами носителей, чтобы не ошибиться.

Прошло уже более века после публикации этого романа, но мы еще не дошли ни до того сознания Марка Твена, что нет ничего мощнее разговорной речи, ни его творческого мастерства.

Ну ладно, скажем, Твен американец и далек от нас, и здесь мало кто читал *Гекка Финна* на английском (наши армянские писатели – уж точно!) Но разве Василий Шукшин и его прекрасные рассказы, его чудесные роли и картины нам не пример, и вся эта мощнейшая русская литература со своими прекрасными писателями не в счет? Почему мы не учимся у них? Что, мы и русского языка не знаем?

Неужели мы все настолько слепы, что не видим, что вся мощь и красота русской и английской литератур в их достоверности, а значит и в жизненности их речи, их разговорной речи?

Да разве можно было настолько “увлечься” манией независимости, чтобы закрыть все русские школы и оторваться от мощнейшей русской культуры?

Ну, допустим, стали независимыми, но отсталыми (такими отсталыми, как представители племени Мамбо-Джамбо и, возможно, аморальными; настолько аморальными, как турки во время Великого Армянского Геноцида (армянских геноцидов было несколько), или немцы во время гитлеровского социал-нацизма); **нужна ли нам такая независимость?**

Когда идешь к цели не выбирая между средствами, эти средства либо разворачивают цель, либо полностью ее уничтожают!

Лично я обязан русской культуре и языку почти всем ценным, что я знаю; а знаю я немало (это я говорю, отбросив ложную скромность). И я особенно обязан русскому языку за свой английский, ибо выучил его тоже посредством русского языка, ведь нормальных англо-армянских и армяно-английских словарей не было, да и теперь нет, а те, которые сейчас “создаются,” создаются опять же ПЕРЕВО-

ДОМ англо-русских и русско-английских словарей (что глубоко непрофессионально!)

Вред, который нанесли большевики человечеству вообще, и армянам в частности, страшен и еще полностью не осознан, но одно преимущество они все же дали армянам. Это то, что почти каждый армянин научился русскому и, через богатейшую русскую литературу, мог пользоваться благами мировой культуры. **А количество разнообразнейшей русской литературы в Армении было просто бесконечно** (да и сейчас оно немало!)

Неужели позволительно свести к нулю это преимущество, этот океан литературы? Мы, что, все время должны все стирать и опять все начинать с нуля?

Да, английский язык важен, и мы должны выучить его (и французский, и немецкий и т.д.). Но где книги на английском, причем, не только художественные, но и по **математике, физике, биологии, генетике, химии, геологии, палеонтологии, медицине, археологии, истории, психологии, философии, инженерному делу, архитектуре, экономике, банковскому делу и т.д. и т.п?**

Мы маленькая и бедная страна, и у нас больше не будет возможности перевести этот океан литературы. У нас этой возможности не было даже в советские времена, и даже тогда мы не могли перевести, скажем, 30-томный сборник Дикенса, причем так хорошо, чтобы эта английская литература стала по сути армянской (как она стала русской).

А знаете ли вы, сколько таких дикенсов есть, которых нужно перевести?

Неужели мы так и не поймем, что маленькая нация просто осуждена знать по крайней мере два языка, один – ее родной, а другой – язык какой-нибудь мощной культуры?

Для армян этот второй язык был персидский, греческий, сирийский, арабский, а в конце – русский. И в те периоды, когда армяне учились у этих культур, армянская культура тоже процветала!

Неужели мы так и не поймем, что отрыв от русской культуры в первую очередь вредит армянской культуре, и что этот вред огромный? И если так пойдет, сам армянский язык станет ненужным для активной и энергичной части армян и постепенно вымрет, ибо язык без мощной культуры не нужен этой части армян!

И разве не пора ли перестать ругать тех армян, которые говорят на нормальном человеческом языке, без всяких выкрутасов? Не пора ли перестать заставлять их говорить “на чистейшем и отборнейшем литературном армянском языке?”

Неужели мы так и не поймем, что **родной язык именно тот язык, которому нас научили наши родители, а тот “язык”, которому нас учили и учат в школе, как раз чужой и иностранный, ибо этому языку учатся только с помощью письма, как и иностранному, и только на иностранном языке не умеют свободно и без натуга говорить, и только на иностранном языке не говорят все время, а только в некоторых “жреческих” ситуациях?**

Неужели мы так и не поймем, что тот вопрос, “что мы должны говорить и писать только на чистейшем армянском литературном языке,” **политический воп-**

рос, и этот вопрос не связан ни с требованиями науки, ни с требованиями искусства и литературы? Точнее, как только ставится такое требование, разворачивается и наука, и искусство, и литература!

Требование писать или говорить только на “чистейшем армянском литературном языке,” лишает писателя и актера творческой свободы и заставляет, чтобы он писал только недостоверные или фальшивые вещи, лишает его возможности писать такие прекрасные вещи, как писали **Твен, Шекспир, Пушкин, Лев Толстой, Данте, Петрарка, Боккаччо, Сервантес, Рабле, Шукшин** и многие, многие другие, поскольку заставляет его писать только на “чистейшем армянском литературном языке.”

Неужели мы так и не поймем, что нельзя верить политикам и лжепатриотам? Ведь у них только одна забота, захватить власть и разбогатеть, обманывая и грабя народ! Говорится ведь, что **“последнее пристанище подонка – патриотизм!”**

И когда такие лжепатриоты говорят, что Ереванский диалект это жаргон, по сути говорят, что наш родной язык – жаргон! Ну неужели можно согласиться с ними?

Как говорит **Анри Пуанкаре**, большинство людей просто ленится думать и повторяет мнение тех немногих людей, которых считает мудрым.

Те, которые слышат “специалистами” или “жрецами” языка, забывают (мягко говоря), что **язык дан для того, чтобы говорить, понимать, запоминать и передавать языковую информацию**, и лишь потом писать стихи и романы.

Эти “жрецы” литературного “языка” требуют, чтобы все-все не просто говорили, понимали, запоминали и передавали языковую информацию, а делали это “на отборном, прекраснейшем литературном языке,” **что невыполнимо, ибо такое под силу только очень хорошим редким писателям.**

Воистину, мракобесие вещь очень распространенная и очень живучая!

Chapter 1 A PREFACE
OR MUSTN'T ABOVEAN HAVE HAD A FOLLOWER?

Both need and anguish for truth have never been so commonspread as today, and the false has never emerged in such immense amount as today.

Hovhannes Toumanian, 1910.

1.1 A FEW QUESTIONS, OP WHAT IS A LANGUAGE FOR?

There is an unsurpassable abyss between a man having ability of thinking and the man bereft of this ability.

Sir Ludwig Mises

Do our Armenian modern linguists know what language is for, or what the Armenian language is? I have talked about these questions in another place (see my above-said books and my papers cited there) and showed that **our Armenian linguists have almost never known the difference between literary styles (see below) and real living language, and they don't know what the knowledge of a language means.**

For instance, a great majority of our linguists, after taking a look at any *Armenian* page of this book of mine, will say that I don't know Armenian and that I'm a language criminal, for I have written the Armenian auxiliary verb **ւ** everywhere, instead of the verb **և**, and because I have widely used spoken Armenian in my book and have almost never used the Armenian dead conjugation **ւ**, which is an abbreviation indeed, like the English symbol, **&**, and have used only the conjugation **ու** instead of **ւ**, etc.

It's just astounding that our Armenian linguists and the greatest part of our intellectuals don't see that they always speak the language of this book; that is, they speak the Yerevan dialect, in their everyday life. And our linguists and teachers have always said and thought that if there is any dialect in our Armenian textbooks, our children will learn a wrong Armenian, and then this wrong Armenian can never be corrected.

It seems they have no eye and don't see that our Armenian children speak the dialect outside their classes and this is unavoidable. And they don't see that all the powerful tries

for the last 150 years of making all Armenians speak in “pure literary Armenian” have fully been in vain and resulted in next to nothing. Isn’t it more than astounding?

This is the reason I almost repeat the questions I asked in my book, *Komitas’s and Abeghyan’s Personal Tragedies Are Our Common Tragedy*, and give their short answers (put in brackets if necessary), too. Their longer and substantiated answers are in my unpublished monograph, the *Central Concepts of the Theory of Modern Armenian Language* that I’m going to publish in 2013, if I can manage it.

- Why was Hovhannes Toumanian convinced that our literary ‘language’ is not only good for nothing, but is also harmful, and why did he suggest that we reject it? (See the short paper of Toumanian below, p 96.)

- **If the Armenians speak incorrect Armenian, as many and many have contended, then who speaks correct Armenian in this world? the Chinese, or Chukchis, or Africans?** (If you asked our linguists, they would say that only they and some of our authors speak this correct Armenian!)

- **If the Armenians speak wrong Armenian, as many and many have contended, then who have the Armenians learned their ‘nice’ Armenian language from?**

(If you asked our linguists, they might say from themselves or Mashtots!)

- **If the majority of the Armenians speak wrong Armenian, as many and many have contended, then this majority isn’t Armenian, for only the aliens speak any language incorrectly!**

- **When did Armenians speak correct Armenian, for our Greek-lover authors in the 5-7th centuries would contend that “the Armenians spoke in a peasant and horrible Armenian?”**

- **How is it possible that some youngsters of 16-17 get zero marks when taking their exams on the Armenian language? Aren’t they Armenians?**

- **If these youngsters of 16-17 (who get *zero* marks on their Armenian exams) knew as much English as they know Armenian, wouldn’t everyone say they know English wonderfully? Wouldn’t everyone say that these youngsters know English as the Englishmen know their own language?**

Is there such knowledge of English that is better than the English that speak the Englishmen? It’s clear, there isn’t. And if it’s true, why is it that there is a knowledge of Armenian language that’s better than that Armenian that the Armenians speak in Yerevan, their capital city? What and where is that better Armenian? So, is the knowledge of Armenian such a heavenly and beyond-natural thing that it can only be known by our linguists and teachers?

- **If these youngsters of 16-17 have as much ability that they can learn such difficult subjects as mathematics and physics etc., then why must they be taught Armenian (again and again) at their science and mathematics departments of the Armenian universities, especially taking into account that they successfully go on**

with their study of science and mathematics? Are these Armenian youngsters just such dimwits, blockheads, nerds and dunces that they couldn't master their own mother (and mothers') tongue, even reaching the age of 16-17?

- **Is the so-called “literary language” a language or it is a pile of individual styles?**

- **(The term “literary language” is wrong; one must say literary styles instead, or mean them at least, for literary styles don't have a few important properties of living dialects. For instance, literary styles haven't been spoken, and there isn't even a tiny village all over the world where a literary style is spoken. It has been well known in Indo-Europeanistics, but the Armenian linguists don't seem to know it.**

- **Authors have never created a language though our Armenian linguists say they have.** In general, it's impossible for an individual to create a (non-mathematical, really living) language. The author creates a style only; the author creates his/her own writing or narrating style. The language an individual speaks is also individual, and grammars describe only some “average” of a given dialect.

- **An author has never created (coined) a living word (except a few words like the word *gas* and *quark*), independent of what our Armenian linguists have said.** When an author attaches two words and makes a word (like the words: *sunshine*, *everyday*, etc.), there is neither novelty in it (from the point of view of emerging a new root), nor difficulty. (If it was difficult, almost all the authors of Armenia and the Armenian Diaspora haven't been able to do this.)

A language is a natural thing and has its own inherent laws proper to it, and you can't command a language or make it obey you, just like you can't command Nature. For instance, if you commanded Nature to stop Newton's law of gravitation on Sundays and Mondays, you'd get nothing.

- **When are we to realize that the so-called literary ‘language’ isn't our people's language? For if it were, there would have been just a tiny village, at least, that would speak this “language.”** (From morning till night, and not in the way our intelligentsia does, that is, accidentally and in the so-called “literary situations” only.)

- **When are we to realize that our people shall never speak this literary “language,” for this is impossible; for an ordinary man is neither an author, nor a linguist, nor a literary man?**

- **Won't this experience of the last 150 years of ours teach us a lesson, for it has already been 150 years we have tried to make our people speak this literary “language,” and we have never succeeded and will never succeed?**

- **This is the reason that the science of linguistics knows that a living language doesn't obey any human programme; therefore, the future of a language is unknown.**

Thus, all the tries to govern or direct a human language (as well as those of our Armenian Language Inspection and the Language Highest Board) have been senseless and condemned beforehand. So why have our Armenian linguists been trying to rule even our individually spoken languages?

- I have contended in my papers and books of these last 5-6 years that **the modern Armenian linguistics isn't scientific, for it hasn't had any (scientific and independent of the caprice of an individual) criterion to decide the truth or fallacy of the statements it has done.**

Our Armenian linguists or any other intellectual have never given an answer to this accusation. Why? Don't they agree with what I have said? Are they honest when doing this?

- **If only this “literary language” is language, that is, if only the language “created” by our Armenian authors is language, were the Armenians completely dumb before Mashtots, the creator of the Armenian alphabet, for they hadn't had either writings or schools before Mashtots?**

(There're many who believe that the Armenians had an alphabet even before Mashtots, though there isn't any fact confirming it. But even if we had had an alphabet before Mashtots, it doesn't matter a bit, for that alphabet had no cultural influence on the life of either ancient or modern Armenians.

(The old Greeks, for instance, invented their second alphabet almost 1200 years before Mashtots (and about 2700 years before our time (see [12], pp 167 and then), and then the Greeks wrote down their epos and beliefs and created such a powerful culture with this alphabet that it has made a huge influence and become hugely significant in the world culture!

The old Persians wrote down their old beliefs about 29 centuries ago, and **Ferdowsi** (940-1020) elaborated their epos, *Shah Name* (this work had started **Daghighi**), but the Iranian epos were written down even before Ferdowsi, and it was ranslated by the Arabs in IX century.

We wrote our epos down only 150 years ago!

(The first alphabet of the Greeks didn't and doesn't matter either for them, or for the rest of the world. And if our belief of having a pre-Mashtots alphabet is only for the occasions of boasting, then why do we limit ourselves? Let us declare that we had an alphabet before Noah or even before Homo Sapiens Neanderthals, shall we?)

- **Is there any way of ruling or controlling a living (non-mathematical) language, that is, a living dialect?**

(There isn't such a way. And it neither has been, nor will be, for a language is such a complicated thing that it can't be ruled or controlled by a human programme (see [6], the *Introductory volume*, pp 187-202)).

- **How can it be that all the villages and towns and cities have got a dialect (or rather, a patois), but Yerevan City hasn't, for our linguists contend that Yerevan's population speaks “a horrible, disgusting and abominable street jargon” or “a horrible, disgusting and abominable street spoken or folk-spoken language.”** This has been said for a long time; see, for instance, [5], p 222, 1941.

(This has been said for having a right to swear the Yerevan patois, for if they happened to say that Yerevan's dialect is “**a horrible, disgusting and abominable**

street spoken dialect,” nobody will admit it, for it is well known that a dialect can’t be such.)

- **Is there a living but “non-spoken” or “non-folk-spoken” language?** (If there is “a non-spoken” or “non-folk-spoken” language in the world, well, they are the very literary styles, for there isn’t even a village in the entire world where people speak in any literary style! **THE SO CALLED “LITERARY LANGUAGE” IS A JARGON, indeed, for it has got all the properties of jargon!**

And even our Armenian linguists can’t speak this “literary language” fluently, without effort and without translating their mother tongue into it in their minds; they can’t speak it from morning to night, for who can speak the language of the prose by Derenik Demirchian, or Avetiq Isahakian, or Axel Bakunts?

They couldn’t even do it, even these authors, Derenik Demirchian, or Avetiq Isahakian, or Axel Bakunts, for they were normal men and weren’t hypocrites!

- **Armenian is the language of the Armenians, it’s undisputable. And all the states and dialects and patois of the Armenian language are Armenian; it’s undisputable, too. Consequently, knowing Armenian is knowing one of the patois of Armenian.**

Thus, all the carriers of modern Armenian do know Armenian, simply for the reason that they are Armenians! Why is this reason disputable or wrong?

- A carrier of a given Armenian patois is an **excellent expert and connoisseur and judge** of that patois, for instance, **Abovian, Toumanian, Proshian** (or a character of one of the **Toumanian’s** stories, **Neso**), and **Vrt. Papazian, D. Demirchian** (except the language of his novel, *Vardananq*, which is artificial), and all those tellers from which our Armenian epos and fairy tales were written down!

It’s possible that someone who doesn’t even know the alphabet, that is to say, he/she hasn’t got any literacy, but is an excellent expert and connoisseur and judge of Armenian! For example, the very tellers! The literary styles are always shifted away from the Armenian very much, and often it’s very possible that they almost aren’t Armenian, and are jargon!

This is the reason that even an excellent knowledge and acquirement of a literary style or a rich vocabulary does not determine expertise in Armenian language.

In Armenia, in all of the exams, only the knowledge of ugly and inadmissible literary style clichés and richness of the vocabulary and the punctuation rules have been tested, and all these have no connection with real knowledge of Armenian, indeed!

1.2 WHY HAVE I WRITTEN THIS PREFACE – CHAPTER?

This is a book of **‘scientific’ poetry**, as much scientific as have been all my preceding books, which, more or less, have always had both elements of systematized knowledge. Both parts are almost equal in this book. Apparently, this is the influence of Richard Philips Feynman, who narrated physics in a free literary style, in 1950 s (see [30]) and it

is the influence of my own profession, physics, that I have been busy with for the last 48 years.

Partially, it is due to the fact that I was carried away with linguistics only after mastering the skills of a professional translator and poet and story teller, but it was only the example of Feynman that gave me the freedom of choice of the style and content with which I usually tell my thoughts and everything in general.

(Love of freedom is deeply in my character; it is my essence, and this is the reason I have only been a teacher at the Yerevan State University (where I haven't had any boss over me but the head of a General Physics Chair). I couldn't have occupied any serious position under a boss whose instructions I must have followed without objection, for a subject mustn't be allowed to have an opinion of his own, and tell directly all he thinks to his boss – including his opinion about the boss.)

For the last 20 years, when I have been translating not for money but “for my own soul” only, and composing my own poems and stories, I have been writing them in **Yerevan patois**, i.e. in the main patois of the **Araratyan dialect, Armenian**. And almost everyone has said that such activities of mine are absolutely wrong and good for nothing and, in general, simply illegal.

And the same people have said that both Abovian and Toumanian were geniuses (and they were, indeed). But **Abovian did the same thing that I do now**, and Toumanian tried to follow the first as much as the stagnant publishers and the “educated” of those days allowed him to.

And they glory Abovian saying he was extraordinarily brave to struggle the stagnant and backward of his time who had been insisting that all Armenians must have written (and even spoken – sic!) in the dead literary Armenian, *grabar*; and now they somewhat leniently say that Toumanian wrote in the Armenian Lori district dialect (which is wrong, for he wasn't as naive as to not realize he was a follower of Abovian.)

And it is enormously strange that all the later Armenian authors have been considered to be the followers of Abovian though *they all haven't been and are not* (if nothing to say about one or two exceptions); but *they have been and are* the followers of the style founded by the Moscow Armenian Journal *Aurora Polaris* (*Hyusisapayl*, in Armenian), founded in 1858, and they have strictly followed the language ideas of Stepanos Nazarian and Michael Nalbandian, the editors of this journal. (I am naming them and their followers *Aurorists* below, for the sake of brevity.)

This phenomenon is not only astounding, but also extraordinary, for it hasn't been challenged for the last 90 years at least, and it is considered to be true nowadays, too, though even the lame can easily see that **there is immense difference between the writing manner ('language') of Aurorists and that of Abovian**.

But the Armenian “theorists” declare heresy everything written in Abovian's manner and principles, i.e. in *spoken Armenian*, claiming that ‘such writings ruin all the basics of the Armenian culture.’

This is the reason I ask these theorists the following question.

1.3 IS IT STRANGE THAT THERE IS A FOLLOWER OF ABOVIAN?

Now, is it strange that the most outstanding and genius authors, Abovian and Toumanian have just one follower, one single follower, me? Are our language and literature theorists absolutely sure that either Abovian, or Toumanian mustn't be followed, or are they sure that both Abovian and Toumanian haven't been worthy to have just one follower?

To tell the truth the present book of mine, and my activities for the last 20 years have been the continuation of the desperate and revolutionary experiment of Abovian (and the somewhat timid try of Toumanian). Abovian tried to convince the Armenians that they had to refuse the eventually obsolete and irreversibly dead Armenian language, *grabar*, and that they had to write in the Armenian main dialect, Araratyan dialect. *I just repeat Abovian's try once more!*

I am almost sure that the vast majority of the Armenian educated shall say that my efforts are absolutely needless, and even harmful or dangerous stupidity (as one of them said once); and I am almost sure that my efforts won't change anything, and our literary styles will go on their wrong ways; but all the same, I devoted the last 20 years of my life to this almost hopeless experiment, for nobody has proved yet that the probability of my success is zero. And I'll stop my try only then when it *is* proved!

1.4 ARMENIAN LITERARY 'LANGUAGE' IS A JARGON!

Abovian and Toumanian wanted for the Armenian authors to write for the people in the language of people. And Abovian did write his prose and poetry in the people's language, in the **Yerevan spoken patois of Araratyan dialect**; for he wanted the Armenians to have such competitive literature as that of the Italians, Spanish, French, English, Russians and other advanced peoples. So do me!

Nobody listened to Abovian and Toumanian though – I repeat it again – it has been claimed that the authors that have come after them have been the followers of Abovian and Toumanian. **This is the tallest lie!** All the other Armenian authors (except a few may be) distorted the style of Abovian, and our modern literature is never comparable to the above-mentioned literatures. Ours is miserable compared with them (and powerful compared to that of the Mumbo-Jumbo tribe! Is it a good comfort?)

I don't like this at all, and I suffer great pain that our literature is in such a state. **And our new literature is miserable, indeed, compared with the English or Russian literature, for instance, and the reason for this is that our authors have been writing in a false and dead 'language' that has simply been (and is) flooded by alien phrases and clauses and, which is the worst, by alien grammar (mostly syntax) forms.**

And this alien gibberish bears the proud name of "Literary Armenian Language" and is considered the only correct and "pure" Armenian, though it doesn't possess many of the most important properties of the living language, i.e. dialects. This is the reason that a

“literary language” is not language, but it is a collection of individual styles, or a collection of individual manners of writing.

Again, to speak the truth, **our literary ‘language’ is a real jargon, for it has got all the properties of jargon** (for instance, the properties of thieves jargon). Neither a thief speaks the thieves’ jargon in every occasion, from morning till night, nor our people do; nor **there is a tiny village all over the world where all people would speak our literary “language.”**

And even the “priests” of the literary “language,” i.e. our language and literature theorists, speak it only in “literary situations” (like thieves who speak it in their “formal” situations), at lessons or before a microphone, or at formal meetings and ceremonies; and they mostly speak it with great difficulty and they stutter all the time, for they translate their thoughts in their mother tongue into this literary ‘language’ all the way long.

Most extraordinarily, our “priests” contend that ‘the Araratyan dialect (and especially its Yerevan patois) is a jargon’ and they think that *‘the Yerevan patois is the distorted version of the literary language’*, not understanding that **it is just the contrary**, and that **the population of a whole city and the whole carriers of a dialect cannot jargon.**

In fact, these people contend that there isn’t such a thing as Yerevan’s dialect (patois). But it did exist about 100 years ago! Of course, yes, they shall say! So what? Did the population of Yerevan wake up one wonderful morning and begin to jargon due to their stupidity, instead of going on speaking the “magnificent and purest Armenian literary language?”

Isn’t this way of thinking an astounding ignorance, especially, if a linguist, or humanitarian, correspondent members of the National Academy of Armenia think it?

Analyses show (also see the first of the above-mentioned books of mine) that **our literary ‘language’ differs from the Yerevan dialect only by those mistakes (especially the syntax mistakes) which our educated men have introduced into our literature, unconsciously imitating the syntax of Russian and other foreign languages.** Most staggering, but it follows from here that **OUR EDUCATED CONSIDER THAT THE ABSOLUTELY WRONG THING IS TRUE!**

The term, “literary language” is always incorrect, and particularly it is incorrect and harmful and dangerous in the case of Armenian, for it has been for 150 years that all the Armenian educated got a mania that “all Armenians must speak in literary Armenian,” which, of course, is a complete nonsense, for it is impossible, and there hasn’t been anything like this all over the world in the whole history of civilization; and there will never be such a thing. Moreover, no author can speak even in his/her own “literary language!”

Thus, the exact term is *literary style* – in this book at least. This is the reason I take the word *language* into quotation marks when I use it with the word *literary*.

In general, every literary ‘language’, independent of its belonging to any nation, can’t compete with its mother dialect, for the possibilities of a living language, of a dialect, are immensely richer. The Russian author, Lev Tolstoy put once that **“we speak every**

absurdity in literary language, but a living conversational language won't let us speak nonsense," and it is true!

A literary style is powerful and important and has got immense cultural significance only when it is **very close** to its mother dialect, as are, for instance, the styles of Russian and English language powerful authors. But **the modern Armenian literary styles are so far away from their mother dialect – the Yerevan patois of the Araratyan dialect that they are mostly incorrect and, as a consequence, they are false!**

These false styles have flooded all Armenian schools and universities both in Armenia and the Armenian Diaspora. They have invaded the Armenian state establishments and army and the theatre and cinema and TV and radio and media in general, and the activities of these 'cultural nidi' compared with those of the best world samples are simply good for nothing and even harmful, **independent of how much we have been praising and glorifying all their products based on the said false and completely artificial "language."**

The **Aurorists** didn't like Abovian's literary style and they constructed such a literary 'language' that obviously can't satisfy (putting it mildly) all cultural needs of the Armenians.

Moreover, **a significant part of the Armenians, especially in the Armenian Diaspora, can't understand or use this 'language' (the latter, not understanding the reason of their such difficulties, think that it is due to the Eastern Armenian ORTHOGRAPHY only that they don't understand the Eastern Armenian literary "language!)** Anyway, a significant part of the Armenians (if not almost all they) simply can't apply this "language," or it applies it with immense difficulty.

Nevertheless, the majority of our educated contends that our literary 'language' is splendid and completely satisfactory, and even powerful! They even declare, **"our literary language is the only acceptable modern Armenian language!"**

But who has proved that our literary 'language' is good and completely satisfactory, and beautiful? Where and how have they proved this? Who has proved that Abovian and Toumanian were wrong, or their concepts still are wrong today? Where is this proven fact and how have they gotten to this conclusion?

Nobody and nowhere and in no way and never!

And is it astounding that the single modern follower of Abovian and Toumanian not only goes on their way, but also does a few steps of his own, that is, he doesn't blindly follow them and bases his literary style on the Yerevan's **modern** dialect (exactly as Abovian did) with the only difference that he uses just a few such words of this dialect, which either have been considered to be baddies, or they have been written very scarcely, or nobody has (often or just once) written them yet?

Thus, I don't write in Yerevan's dialect, but in a LITERARY STYLE of my own that is founded on this dialect; and only the future will show whether the people accept this style, or not!

By the way, neither Abovian nor Toumanian wrote in any dialect. They both wrote in their own literary styles based on Yerevan's dialect. The difference between

their styles is that Abovian added very little literary phenomena to Yerevan's dialect, and Toumanian used very much literary words and syntax compared with those of Abovian's. Those who contend the contrary, that is, say that Abovian and Toumanian wrote in dialect (as they have been contended permanently) either tell lies, or don't understand the difference between a dialect and a literary style.

This talk is very long and I go on with this in the present book. I began this talk some 20 years ago in the Armenian media and then continued it in my two previous books mentioned above.

The present book is mainly for the youth, as the youth is quick and prompt in perceiving new ideas, for their thinking hasn't ossified yet. But my book is also addressed to those grown-ups who haven't lost flexibility of their thinking and are tolerant to unusual and peculiar views that aren't much familiar, and to those who know very well that often there something new can emerge in this world.

So the present book has been written for the representatives of science and mathematicians in the first place, for they deal with the newest achievements of science every day and are used to the methods and principles of creative work very well and know that there emerge new things in their every step.

1.5 WHY IS RECOGNITION VITAL TO ME?

I began my serious literary activities and linguistic investigation when I was 37. And when I was 41, I accidentally found out I could write poems (good ones, as far as I can judge; for instance, see Part 2 of my next book, *Love's Non-Formula and Learned Horses*, which is in English; I am going to publish it with the present one). And then I discovered, to my great surprise, that the methods of writing poems and stories are extremely like those of physics and mathematics. Creation of every poem or its translation was a problem that was to be solved by the method of trial and error, all the time comparing the results with those top class things already done, that more or less resembled the thing being done.

Of course, there are huge differences, too, but a clear scientific statement of these differences and of the creation method is impossible. I simply feel what I just said. I feel it through my literary intuition, which has been worked out and accumulated by my own experience. But one thing is certain; this work undoubtedly gives such immense happiness and satisfaction that nobody could buy with any money.

Unfortunately for me, I haven't won general recognition and praising from those people yet, from whom I would like to get it. Recognition is vital for me (and I think for any other author and any man, in general), for nobody would listen to you without it, independent of clarity of your logic and power of your arguments, even if your creation were simply a work of a genius. And I *have* written a few worthy things!

(After all, recognition isn't so important. Didn't Norbert Wiener put (see the Preface of his *Cybernetics* in Russian) that '*it is the process leading to the aim that counts and not the aim itself?*' Wiener said that '*the aim dies away into the twilight of gods, as*

soon as it is achieved'. Anyhow, I do want recognition, as I know exactly that I have done a few such things that have never been done, indeed.)

1.6 CAN A SMALL NATION CREATE GRAND THINGS?

Rudyard Kipling put once that 'the Mumbo-Jumbo tribe has got 169 ways of composing songs and they all are correct'. If the Armenian educated had known this, they might have said – according to their usual boastfulness – that the Armenians have got much more ways than those.

I am also sure that there is 169 (or much more) ways of constructing literary "languages," but the Armenians chose the 170th **wrong** one that is the absolutely false and artificial one and, consequently, is dead and fruitless. This way is based on **unconscious imitating foreign languages and the dead state of the ancient Armenian literary "language," grabar.**

One can create only false and artificial literature in this false and artificial way, and false and artificial literature is good for nothing; it will neither be respected, nor accepted in the world, nor loved!

Is it not strange that the writings of the Armenian famous (in Armenia only) author Raffi haven't had any fame in the world, despite the fact that they have been translated in the main languages of the former USSR and in the main western languages long ago?

For instance, why have *The Treasure Island* and *The Black Arrow*, by the English author **R. L. Stevenson** been widely well-known and much loved all over the world, but the writings of **Raffi** haven't? Isn't it all the same for a Western book manufacturer what book to produce and sell? Doesn't he want to earn money in every occasion, even in occasion of Raffi's writings?

There can be an objection that 'England is a great country having great possibilities,' etc. But Norway is almost as large as Armenia and it has got almost as much population as Armenia and it gave to the world such men as Edward Grieg and Knut Hamsun, etc, who are widely known and treasured all over the world. But again, there can be an objection that 'Norway is surrounded by civilized countries, meanwhile, Armenia is not'.

But don't we have the example of the Ancient Athens, which had been as big as a modern little town containing a population of about 30 000 citizens, and about 100 000-200 000 people all in all?

And The Old Athens gave the world: theoretical mathematics, natural philosophy (physics, biology, etc.), tragedy, comedy, theatre, Greek sculpture and, most important of all, democracy! The Old Athens gave the world such men as: Solon, Socrates, Plato, Pericles, Aeschylus, Sophocles, Euripides, Herodotus, Thucydides, Strabo, Xenophon, Pythagoras, Euclid, Archimedes, Aristotle, Aristophanes, Phidias, etc. – this list is enormously long!

So it is not the largeness or surrounding that counts! It is the creators themselves and their works, and it is the **ethic and moral rules and traditions and other norms**

following them that count! And it is a certain fact that the Armenian literature, cinema and theatre simply can't compete with those in the West and Russia! What a pity!

From the point of view of literary styles or the so-called literary "language," the base of the 169 ways mentioned by Kipling must be their mother dialect, the Yerevan patois.

Consequently, Yerevan's patois must be the base of our literary 'language' and of all our literary styles, and it also must be their "master and owner and guide and controller and supreme judge" and not the linguists or literary authors or Academy or anything like these. Unfortunately, it is not so, and this is the source of the majority of our cultural misfortunes.

Yes, unfortunately, the foreign literary clichés do rule and master our literary styles today, those clichés that have mostly been borrowed from Russian and English literature (and from other languages, and from *grabar*, too); because our educated have convinced the Armenians that the modern Yerevan dialect is a "vulgar, rough, clumsy, dirty and inadmissible jargon."

1.7 ABOVIAN'S 'DELAYED-ACTION BOMB'

Unfortunately, it was Abovian himself who wound the 'delayed-action or time-bomb' that later exploded all his writing new system, that is, the system of the new literary "language."

Though Abovian wrote his main work *Wounds of Armenia* basically in Yerevan's patois, anyhow, he used the ancient and already dead form of the Armenian auxiliary verb *be* (*եմ*) instead of the living forms of Araratyan dialect, that is, he used the forms, *ստում էի, ստում էիր, ստում էր*, instead of the living forms, *ստում ի, ստում իր, ստում էր*. (The last one hasn't changed since the ancient times up to now in Oshakan village, for instance). The living forms of these auxiliaries probably seemed unbearably ugly to him; besides, the last unchanged form might have "hinted" him that the first two ought to have been like the third.

This was wrong and a fatal error! In addition to these seemingly negligible violation of his language system, Abovian used rather many archaic phrases and clauses (*grabarisms*) in his *Wounds of Armenia* and other works. One thing more; sometimes Abovian wrote things like *ստում է*, instead of *ստում ա*, rather scaresly, of course, but he did! This was fatal too, because it made impression that the living forms like *ստում ի, ստում իր*, were inadmissible.

Anyway, these minor violations with other rare ancient language clauses did become fatal! The *Aurorists* got inspirited by these ancient forms and began to 'correct' the language system of Abovian. I think that if there hadn't been Abovian's 'delayed-action bomb,' that is, **if Abovian had followed his language system strictly and without violating (morphologically and in syntax) the system of the Araratyan dialect, the Aurorists would hardly have tried to change the Abovian's style, and the Armenians would have had a living literary language (language, without quotation marks!) instead of the dead ones of today.**

**But we didn't and haven't!
Shan't we?**

I do know that Abovian could have unconsciously made accidental errors and I know it by my own experience when I was constructing my own literary style. That was a very painful process, which has been going on for almost 20 years and isn't completed yet. It seemed to me all the time – especially at the beginning – that all my innovations didn't sound nicely and I would repeatedly go back to the old “literary” ones (to those that I consider wrong now), then I would come back, again and again. And even now I often do those errors by inertia, especially in my oral speech. Don't they say that **custom is the second character?**

Eventually, I have come to the style in which the present book has been written, and I am looking forward to the results of my efforts, clearly realizing that there isn't left much time for me in this world, and that most probably nothing will be changed for that time, and it may happen that nothing will ever be changed at all. (This is most probable. The Armenians have quarreled on their literary ‘language’ for 15 centuries now! But don't some very keen thinkers say that our civilization has got a few centuries to go on – if not less?)

1.8 THE MAIN LAW OF LANGUAGE

I HAVE TO EMPHASIZE AGAIN THAT I HAVE DONE **ABSOLUTELY NOTHING** THAT SOME OF THE PRECEDING ARMENIAN AUTHORS HAVEN'T DONE BEFORE ME FROM TIME TO TIME, AND WHICH DOESN'T EXIST IN ARARATYAN DIALECT! I HAVE JUST FOLLOWED THE SYNTAX AND MORPHOLOGY (MOSTLY, THE LEXICON, TOO) OF THE ARARATYAN DIALECT, FOR I HAVE ACTED AND DO ACT ACCORDING **THE MAIN LAW OF A LANGUAGE (MLL)**, see pp 35, 119-121, 219-221 and 239 of this book), that is, I FOLLOW THE LIVING DIALECT ITSELF!

But all the same, there always are “serious educated” that say I do nonsense or illegal things. If so, what principle do these people follow? Mine is the MLL, and what is theirs and do they have any objective one? No, they don't, for it is about 7 years that I have been asking them for their principle and they won't give any answer, because they haven't had any (see my *above-mentioned books, especially the second one, and references brought in them.*)

(It has already been seven years I have been telling them that the Armenians have had (since 1934) two grammars for the same Armenian “language,” two absolutely contradictory and incompatible grammars – one of them is the grammar by Manouk Abeghian, and the other was “invented” by Ararat Gharibian and Gurgen Sevak (and the grammars of today have been invented by their followers in the image and after the

likeness of the Gharibian's false grammar, reaching these new "grammars" to the complete absurdity!

(And our modern "grammarians" say that **both** these contradictory grammars are correct, and every time when I ask them how it can be, they stubbornly won't say a word. No answer, no problem, and nobody will notice that there is anything wrong; this is their only way of defense!

(I have also been saying that this single fact, the existence of two absolutely contradictory and incompatible grammars, proves that **the modern Armenian grammar is not scientific, for every science must have a principle by which it decides the truthfulness of its assertions, statements and conclusions**, and our grammarians again stubbornly won't say a word!)

Thus, the things I have done aren't just my caprice or an accident! A living language is a Nature that doesn't submit or obey to the will of individuals or programmes designed by humans! Nature has got its own laws, and the laws of Nature won't submit to the programmes of man!

1.9 LANGUAGE IS NATURE!

For instance, if we wanted that Newton's law of gravity stopped acting on Fridays and Saturdays, we would get nothing (and even less than that). Then why do we want the part of these Nature laws – the language laws – to stop their action or obey us? Don't we see that having such a desire is just nonsense?

One could have believed that such thing is possible in the day of Mashtots 16 centuries ago or even later, in the Middle Ages. But why do they occur now?

Are we going to go on with this absurd desire? If yes, what for?

Why don't we do the simplest thing Abovian offered and some other powerful literature had done? And he offered us to declare Araratyan dialect a legal literary 'language' (with its all lexicon and morphology and syntax.) Let the reader fancy for a minute that it has been done. What will follow it? And what will follow is as this.

All the carriers of Araratyan dialect– but the educated of today – would instantly become educated, and these educated 'priests' of language would turn into the ignorant ones in the world of language! (Well, let them sweat for a week or two and learn their own mother tongue, again and properly!)

But these 'priests' will never agree with Abovian's offer! Never, for they won't agree that ordinary men without high education should be considered language educated. For most of these 'priests' are deeply ignorant, otherwise they would agree with the offer of Abovian.

(By the way, if Abovian's offer was suddenly carried out, then every carrier of Araratyan dialect would turn into a top class literary 'language' practical specialist, consequently, into a top class Armenian language specialist, for literary language is wrongly considered to be the only Armenian. In this case, these carriers will really be language 'professors' and permanent teachers for each other and for the newcomers that want to learn the Armenian.)

1.10 HOW TO HAVE A LIVING LITERARY ‘LANGUAGE?’

Our linguists and literary specialists do know excellently that our literary ‘language’ is partially dead. It is proved by the fact that they often require to do something that our Armenian texts be written in ‘a living language.’ The linguist, Artem Sargsyan (a DSs, professor, cor. member of the National Academy of Sciences, Armenia) asked me in a TV interview: “What must be done to make our literary language more alive?” Our language specialists ask this question more and more often. It means that this problem worries many, and many see that the state of our literary ‘language’ isn’t satisfactory.

I answered to the question reading the theses I’m telling just now, but I wasn’t given enough time to complete my explanation, for the broadcast director interrupted the recording, saying that my time was over. So I answer the question now.

If you want the Armenian literary language to be alive, you simply have to speak and write in a living language, Yerevan’s patois, as do all ordinary men! And there is no other way for this! And if you go on using the dead and false cliché, as you do now, our literary ‘language’ shall eventually die before long!

For the last 20 years, after the abolition of literary censoring, many broadcast programmes of the Armenian TV and radio, and some newspapers as well, have been using Yerevan’s living dialect more and more (and other dialects, too.) There have even been a few Armenian authors who have written in the dialect, too.

But all these have been going on accidentally, and many such phenomena resemble a distorted ‘instant photography’ of the life rather than real literature. At first it seemed to me that our linguists and literature theorists would have been interested in these phenomena very much, but they wouldn’t!

They have only been enormously angered and horribly swearing that Yerevan’s ‘jargon’ has flooded the Armenian ‘sacred literature’ and TV and radio, and media in general. Are these people simply blind and don’t they realize that it is impossible ‘to swim against the stream?’ Don’t they understand that love and need for earning money will destroy all their prohibitions of the living language, for the masterful authors desire their stories and poems appear as much truthful as possible, and to do this their characters **must** speak as men do, as ordinary alive men do?

In fact, I have tackled the task of systematizing this process though I didn’t fully realize the mission at first and was alone. (Now it seems to me I am not alone.) But I’m not so naive as to think that I could make all the Armenians submit to my will and change their steady or even frozen literary customs and views. I only want to show through the example of my stories, poems and essays and translations (and the present book, too) and my linguistic analyses what magnificent possibilities possesses Yerevan’s dialect if one handles it with wit, ability, needed skill and enough fancy.

And even the style of my voluminous translations (for instance, *Athenian Constitution*, by Aristotle, and the two large volumes of *The Open Society and Its Enemies*, by C. R. Popper [22-23]), which I did by publishers order who required

‘standard literary language,’ even their styles possess many tricks of my own literary style, but the lame reader won’t notice them, for all my ‘innovations’ are submitted to Yerevan’s dialect, that is, the modern Armenian, that is, the mother tongue of the reader. This is the reason the reader won’t notice them, for mother tongue is always being mastered almost on the level of instincts, and this can’t be felt.

Again, I have only been doing the things that others have done before me.

And why had others been allowed to do such things and I’m not?

Now I want to bring two more examples of such allowance.

1.11 HOW DID OTHERS MAKE THEIR LITERARY STYLES?

When **Shakespeare** (1564-1616) published his first plays, many of the educated English of his days (and those of later times, leading by the poet **Alexander Pope**, 1688-1744, that is, almost 60 years after the death of Shakespeare) attacked him, saying that Shakespeare was writing in “London’s horrible street language.” But Shakespeare wouldn’t take any notice of such attacks, for people would visit his plays, and he went on writing his tragedies and comedies in the same “London’s horrible street language” and got wealthy. (I haven’t got such hope, for Armenia isn’t England and neither am I Shakespeare.)

And the English purists have been ‘cleaning’ the ‘language’ of the English literature for about 100 years until they realized that Shakespeare was absolutely right, and then all literature went on its true way.

And about 100 years ago the English author Henry Sweet (1848-1912) formulated the MLL, which reads: EVERYTHING IN A LANGUAGE IS RIGHT SIMPLY BY ITS EXISTENCE IN THAT LANGUAGE (see...).

Almost the same happened to **Pushkin** (1799-1837) when he published his first poems of folk tales. The critiques, for instance, **Katchenovski** and **Bulgarin** accused Pushkin that he had introduced the ‘peasant language’ into the ‘sacred literature’. But there were enough enlightened men in Russia during that time period that accepted his innovation, and Pushkin went on with his writings and was very highly treasured afterwards (such things have been (and are) impossible in Armenia, the ignorance is very powerful in here!)

Afterwards, **Leo Tolstoy** (1828-1910) wrote his *Books of Russian Readers* and wrote them in the same ‘peasant language,’ and the minister of Education of the Russian Empire of those days was an enlightened man, indeed, as he put his signature on Tolstoy’s book, adding, ‘**All Russia Readers.**’

All will agree that the Armenians won’t see such a thing even in their most optimistic dream! We do know our education ministers too well, don’t we? (See under the headline *A Tragic Post Word* in the above-mentioned second book of mine.)

There were many such examples. In the period of the Renaissance, such accusations were addressed to **Dante** (1265 - 1321) and **Petrarch** (1304-1374) and **Boccaccio** (1313 - 1375) in Italy, **Rabelais** (?1494-1553) in France, **Cervantes** (1547-1616) in Spain, etc.

For instance, the Czechs accused **Jaroslav Hašek** that he was writing in the ‘horrible folk language’ (see the post word of the first volume of his book, *Good Soldier Schweik*), and **U. Fuchik** defended Hašek, but I have heard that in modern Czechia they again quarrel in what “language they should write”. As far as I know the state of German literary ‘language’ is simply much more horrible than that of the Armenian, though one should ask himself what can be worse than the state of the latter. (I brought all these dates that the reader could compare them to the analogical dates for the Armenian quarrels on the subject!)

1.12 AREN'T WE BACKWARDED?

Father of American literature (as Faulkner and Hemingway put it), **Mark Twain** (1835-1910), published a novel of his, *Adventures of Huckleberry Finn*, in 1884, and this novel is considered the best in American literature.

Mark Twain wrote this novel of his entirely in dialects; in four dialects and three patois, and only the preface up to a dozen lines is in the literary style, in which the author said that he had used these dialects very carefully, all the time verifying the text.

More than a century has passed since then, but we haven't got either the literary skill of Twain, or the idea that the living speech is the most powerful thing for literature.

It seems we have decided to learn through our own mistakes, but isn't their possible number infinite? And we have never found out just one of these mistakes yet! This is the reason we haven't learned writing skills from other nations.

Can't we learn how to use our living language, for instance, from the magnificent stories of the Russian author and film star and director Vasili Shukshin and from other splendid authors?

Have we been blind that we don't see that the power of the best Russian and English language stories and novels is due to their living language, which makes them most truthful?

How could we be carried away by the idea of independence so much that we closed all our Russian schools and rejected the Russian most powerful culture? Well, suppose we are independent, but bereft of proper and competitive culture (and probably, are as amoral as the Turks were in the years of the Armenian Great Genocide, or the Germans in the day of Hitler's tyranny and holocaust and general genocide of many other nations), **do we need such independence?**

When you consider that every way that leads to your aim is good, you can either degenerate the aim, or kill the aim itself!

I am sure that the most and valuable part of my own knowledge I learned from the Russian culture and in or through the Russian language. I owe the Russian language even for my English, because we haven't got good English-Armenian or Armenian-English dictionaries up to now and learning a language without a dictionary is impossible for a foreigner!

The damage of Bolsheviks to mankind and particularly to Armenians was terrible, but the Armenians certainly had one profit from them. This profit was the circumstance that almost every Armenian, more or less, knew Russian and could enjoy the Russian and world culture and their advantages through Russian. And **the amount of various types of Russian books was simply infinite (it is very great even now!)**

Was it reasonable making the influence and benefit of this vast literature almost zero? Are we always going to delete everything and then begin everything again, from its beginning?

Well, we do know that English language is important. Let's learn it; and let's learn French and German, etc, too. But where are the English books we need that we need more than we need air in this country? I mean **the English books on mathematics and physics and astronomy, chemistry and biology and medicine, geology and economics and history and archeology and psychology and philosophy and engineering and architecture and linguistics and banking, etc, etc, etc.**

We have got a small and poor country and will never have a chance to translate this ocean of literature. We hadn't had the chance, as the Russians have had (and they have translated just splendidly, indeed) even in the day of the Soviet rule, for example, of translating the 30-volume collection of Dickens, transporting all these English culture into the Russian one.

And do you know how many authors such as Dickens there are yet to be translated?

Don't we realize that **a small nation is just condemned to know two languages at least**, one of them its own mother tongue and the other one the language of a nation having powerful culture and literature? The second language for the Armenians has been: ?Urtian, Persian, Greek, Syrian, Arabian, and Russian at the end. And **the Armenian culture was prospering in the very periods when they were learning from these cultures!**

Aren't we going to realize that rejecting the Russian culture terribly damages the development of the Armenian language and culture in the first place, and if this is to go on in this way the Armenian language will be unnecessary for the energetic and educated part of the Armenian people and will be dying by and by, for this part of the Armenians won't need the language without a proper culture?

Aren't we going to stop swearing the people who just speak their mother tongue without taking care of "speaking it in a nice and purest literary Armenian language?"

Aren't we going to realize that **our mother tongue is the very tongue our mothers had taught and the 'Armenian language' that they teach us at schools IS FOREIGN, for it is only the foreign language that is taught through writing and it is only the foreign language that is not spoken freely and easily and permanently?**

Aren't we going to realize that the requirement of "speaking in a nice and purest Armenian literary language" is completely **a political requirement** and has no connection with real requirement of humanities and science and culture in general?

Not to say that such requirement bereaves an author and actor of creative freedom and makes them write and say false things and bereaves them the possibility of creating

things like the magnificent things that created **Twain, Shakespeare, Pushkin, Leo Tolstoy, Dante, Petrarch, Boccaccio, Cervantes and Shukshin** etc, giving only the possibility of ‘creation’ of things ‘in a nice and purest Armenian literary language,’ which are totally fruitless.

And why do we believe the politicians and false patriots? Don’t we know that this sort of people has only one prominent care; that is they are only concerned with how to create a rule and rob the citizens and get richer and richer? Don’t we know the saying that **“the last place of refuge of the rogue and scum and bustard is patriotism?”**

In fact, when we say that Yerevan’s patois is a jargon, we assert that our mother tongue is a jargon. Is it permissible?

As once **Henry Poincare** put, **the majority of people are simply lazy enough to try to think. And this majority just repeats those few who this majority considers wise.** And **Ludwig von Mises** put a much stronger thing: **there is an insurmountable abyss between them who can think and them who can’t!**

Those who are usually considered ‘language specialists’ or ‘priests’ always forget (mildly putting) that **language is just for saying, realizing, remembering and passing all these to others, and then only for writing poems and novels.**

Bigotry and obscurantism are very enduring and tenacious, indeed!

ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՆՑ ԷՍԵՆԵՐԸ

Գլուխ 2 ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՑԱ՛Վ, ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՑԱՎ ...

Մեր **և**-ը սիմվոլ ա, ճիշտ անգլերենի *and* ու *&* սիմվոլների պես, ու մեր **և**-ը նշանակում ա՝ **յեվ**: Այսինքը, մեր **և**-ը գրում ենք մի իրեք տառանոց բառի՝ **յեվ**-ի տեղը: Էսի լավ ա, երբ էս **և**-ը առանձին ու շատ ենք գործածում, այսինքը, երբ էս **և**-ը շաղկապ ա: Բայց երբ էս **և**-ը ինչ-որ մի բառի մեջն ա, ու գրվում ա երկու ձայնի՝ **եվ**-ի տեղը, էսի արդեն շա՛տ ա անհարմար, մանավանդ գիրը նոր սովորող էրեխու համար:

Օրինակ, երբ էս էրեխեն վարժվում ա, որ **և**-ը պտի կարդա՝ **յեվ**, ու հետո ուզում ա կարդա՝ **տերև, արև, բարև** բառերը, սովորության ուժով սրանք կարդում ա՝ **տերյեվ, արյեվ, բարյեվ**, ու ահագին ժամանակ ու ջանք պտի ծախսի, մինչև վարժվի, որ բառի մեջն էսի պտի կարդա՝ **եվ**:

Էսի մեծերի համար է՛լ ա ճիշտ: Օրինակ, ես շատ անգամ գրում եմ՝ **որտեվ, որովհետև**-ի տեղը, կամ՝ **էրեվան, էրևան**-ի տեղը բայց եթե սրանք գրեի՝ **որտև, ու էրևան** շատ անսովոր կըլներ, որտեվ առաջի անգամները նույնիսկ մեծը էսի կարդում ա՝ **որտյեվ** ու **էրյեվան**:

Սրա համար էլ բառի մեջի **և**-ի տեղը ամեն տեղ էլ գրել եմ՝ **եվ**, ու **և**-ը մենակ **ևն** = **և այլն** ու **այլև** բառերի մեջ եմ պահե: Էս **և**-ը հեչ չեմ գործածում: Սրա տեղը, ամեն տեղ, գրում եմ՝ **ու**, որտեվ էսօր էրեվանի բարբառն էս **ու**-ն ա գործածում, անխտիր, չնայած մոտ մի դար առաջ **ու**-ի գործածությունն էս բարբառի մեջը էսքան առատ չէր [ԼՔՀԼ [6], V, 376]:

Ջարմանալի ա, որ երբ մեր գրական ոճերը էրեվանի բարբառին էրկու հին շաղկապ առաջարկեցին, մեռած **և**-ն ու քիչ գործածական **ու**-ն, էս բարբառը **և**-ը մերժեց, բայց **ու**-ի գործածությունը դարձրեց առատ ու ընդհանուր:

Մեր **և**-ն է՛լ, **ու**-ն է՛լ առաջացել են հնդեվրոպական նախալեզվի **e'pi* արմատից: **ու**-ն առաջացել ա էս արմատի **opi* ձայնդարձից [ՀԱԲ [7]]: Սրանցից **ու**-ն կամ սրանից առաջացած ձեվերը կային մեր համարյա սաղ բարբառներում [ԼՔՀԼ [6], V, 374, 376]:

«Ս. Գրքում **և**-ը շատ առատ է, բայց սա սեմական սովորություն է, ուր **և**-ը միջակետի արժեք ունի» [ԼՔՀԼ [6], V, 360]:

Ս. Գրքի ազդեցությունն է, որ **և**-ի գործածությունը անսովոր առատ է մեր հին ու նոր գրքերի մեջ, այնինչ, **և**-ը միջին հայերենի մեջ արդեն չկար, ու բարբառների մեջ էսօր է՛լ չկա:

Գրական ոճերին էլ հենց էս մեռած **և**-ի պես մի բան էր պետք, որ տարբերվեն կենդանի լեզվից (նալբանդյանի ասած՝ որ «չստրկանան բարբառներից որեվէ մեկին»): Ու գրական ոճերը գերադասում են **և**-ը, իսկ **ու**-ն էլ գործածում են **և**-ը շատ չկրկնելու համար:

Ու «կանոն» են հորինել, թե իբր **ու**-ն ձայնավորից առաջ գործածելու իրավունք չկա, որտեվ իբր «հայի ձայնային գործարանները (կոկորդը, ըմպանը, քիմքը, լեզուն) հարմարված չեն ձայնավորից առաջ **ու** ասելու»:

Մոլորությունը ի՛նչ աստիճան է մարդկանց կուրացնում, որ չեն նկատում, որ իրենց քթի տակ, համարյա սաղ հայերը, ձայնավորից առաջ է՛լ են **ու** ասում, հետո է՛լ: Օրինակ **կհեղնի ու ուր ուզես՝ կէթա; թո գա ու ասի** ևն: Ու սա ասում են միլիարդ-միլիարդ անգամ ու անընդհատ: **և**-ը էսօրվա էրեվանի բարբառում չկա, ուրեմը, էսօր **և**-ը հայերեն չի: Մի ժամանակ **և**-ը հայերեն էր, բայց էսօր՝ էլ արդեն **հայերեն չի**:

Ախպորս' Սլավին

Պատկերացրեք մի հզոր, կենսուրախ, բարի ու արդար ու ջահել տղամարդ, ով պտի մեռնի. ինչ պատճառով, կարելիոր չի: Էս ոտանավորը էս տեսակ մի տղամարդու մասին ա:

Ասում են, որ փղերը հենց զգում են, որ մեռնելու են, վռագ-վռագ էթում են իրանց հատուկ «գերեզմանոցները»: Ընձառյուծի հատվածը պատմելուց՝ մտքիս Հեմինգվեյի «Ծերունին ու ծովի» ծերունու էրագի պատկերն ա էղե, երբ (իրա էրագին) առյուծներն իրանց ձագերի հետ խաղում էին ծովի ափի ավազների վրա:

Էս ոտանավորի սկզբունքը, ըստ էության վիլանելի սկզբունքն ա, մի քիչ փոխած (տես **Վիլանելներ** գլուխը), բայց ֆռացող տողերը վերջում հանդիպելուց լրիվ մի նոր իմաստ են ստանում, որտեղ արդեն արեվն ինքն ա «տենդահար»:

Մի քանի բան ասեմ իմ բառապաշարի ու ոճի մասին՝ առհասարակ: Գրաբարյան շրջանում ասում էին՝ **այս+ինքն**, բայց էս բառի վերջի ն-ն հողի իմաստ չունեի, որտեղ գրաբարը, առհասարակ, **ը** ու **ն** որոշյալ հողերը չունեի, ոնց որ էսօրվա ռուսերենը ոչ մի հող չունի: Էսօր էս հողերը կան մեր համարյա սաղ բարբառների մեջը, ու գիր ու գրականության հետ գլուխ չունեցող հայն ասում ա՝ **այսինքս** կամ **այսինքը**, ասում ա՝ **այս+ինքը**, բնագրով «մտածելով» (կամ էլ՝ «զգալով»), որ (սաղ անունների պես) է՛ս բառն էլ կարա ունենա սաղ դեմքերի ստացական հողերը՝ **այսինքս**, **այսինքը**, **այսինքը(ն)**:

Ուրեմն, թե համաձայն ենք Լեզվի Գլխավոր Օրենքին (տես էս գրքի 35, 119-121, 219-221 ու 239 էջերը) **պտի անպայման համարենք, որ թե՛ այսինքն ձեվը, թե՛ այսինքը ձեվը թույլատրելի են, բայց առաջինը մենակ ձայնավորից առաջ (եթե ձայնավորի ու սրա արանքը դադար («ստորակետ» կամ՝ «բուլ») չկա), իսկ երկրորդը՝ մենակ ու մենակ բաղաձայնից առաջ, ու մեկ էլ երբ էս բառի ու հաջորդ՝ ձայնավորով սկսվող բառի արանքը դադար կա:**

Ասածս ճիշտ ա գրաբարից վեկայած՝ **ուրեմն, մանրամասը** ու մնացած էս տեսակ բառերի համար է՛լ, **ը**-ով վերջացող մնացած բոլոր բառերի համար է՛լ:

Առհասարակ, էսօրվա հայերենը, թե՛ գրաբարից, թե՛ ռուսերենից վեկայած բառերի **մեջը** հողը շատ անգամ **սխալ ա գործածում**: Իմ գրած էս վերջի՝ «**մեջը**» բառը սրա լավ օրինակն ա, որտեղ ոչ մի մտավորական էսի չէր գրի. կգրե՛ր «**մեջ**»:

«**Որովհետեվ**» բառի տեղը գրում եմ սրա ահավոր գործածական «**որտեվ**» բառը, բայց թե կարիք զգացի, «**որովհետեվ**»-ն է՛լ կգրեմ: Ո՞վ ա ապացուցե, թե սրա իրավունքը չունեմ: Մեր Լեզվի տեսչությունը: Էտ տեսչությունը, թե կարա, թո պատասխան տա իմ էս գրքի **ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ** վերնագրի հարցերին ու իմ արդեն ասածս գրքերիս մեջի մնացած հարցերին: Օրինակ, թո ասի, թե էտ ո՞նց ա, որ մենք հենց նույն լեզվի համար էրկու իրար ահավոր հակասող քերականություն ունենք, ու սրանք էրկուսն էլ ճիշտ են:

Իմիջիպալոց, մեր հետաբեղանական քերականությունները չեն պատասխանում համ էլ է՛ն հարցին, թե խի՞ են, օրինակ, **էթամ-ը**, **խի՞**-ն, **էս-ն** ու **էսի**-ն սխալ, չնայած **բնիկ հայերեն** են: Ու սրանք համ էլ չեն ասում, թե էս բառերը գործածելու իրավունքը խի՞ չունենք, խի՞ են սրանք բոբո:

Մեր էսօրվա լեզվաբանությունը, առհասարակ, իսկական միջնադարյան սքոլաստիկա ա: Էսի ոչ մի անգամ «ինչո՞ն» հարցը չի տալի, մենակ ասում ա՝ «այսպես է», ու վերջ:

Ու մեր էսօրվա լեզվաբանությունն իրա ասածների ճիշտ ու սխալը որոշելու ոչ մի կարգին, այսինքը մարդուց անկախ ու օբյեկտիվ չափանիշ չունի:

Համոզված եմ, որ էսի գերազանց ոտանավոր ա:

Վիրավոր փղի պես, տենդահար,
 էթում ես հեռու, լո՛ւռ ամփոփվելու,
 Արեվդ գիշե՛ր ա ու խավար:

Էլ չունես Սուրբ Ծնունդ ու Զատիկ,
 Ու չունես Վարդավառ,
 Ցանկություն չունե՛ս –
 Ավարտի արբունքից զուր ըսթափվելու –
 էթում ես հեռու, լո՛ւռ ամփոփվելու,
 Վիրավոր փղի պես, տենդահար:

Անուրջդ խաչքարի ժանգառք ա ցավագար,
 Պողպատե ճոպան չմնա՞ց –
 Քեզ հույսի թեվերին կապելու –
 Արեվդ գիշե՛ր ա ու խավար:

Քու հոգում բոց ու լուս –
 Անդադար-անդադար –
 Էթալուց՝ մրմուռ են դառնալու ու ամբոխվելու –
 Վիրավոր փղերի հոտի պես, տենդահար:

Մարե՛լ ա մի վախտվա արունդ հուզավառ,
 Ու էլ գորու չի՛, գորու չի՛ քենդ կոփելու
 Արեվդ գիշե՛ր ա ու խավար:

Ընձառյուծն Ազատ,
 Նրբագեղ ու Ճապուկ,
 Էրագիդ չի՛ գալի
 Հովիտ ու դաշտերում
 Ուրախ խաղալու ու թավալելու,
 Ու քարացել ա մացառուտների մահիճը փափուկ,
 Ու էլ սիրտ չկա,
 Սիրտ չկա՞ –
 Մեռյալ օրերի
 Խիտ թավուտներում
 Լո՛ւռ խարխափելու:

Վիրավոր փղի պես, տենդահար,
 Էթալով էթո՛ւմ ու էթո՛ւմ ես հեռու –
 Լո՛ւռ ամփոփվելու,

Գիշե՛ր ա,
Գիշե՛ր ա արեվդ,
Գիշե՛ր ա ու խավա՛ր –
Վիրավոր փղի պես տենդահար:

2. ՀԵՐՆ ԷԼ ԱՆԻԾԱԾ

Կըլնեի մի 30-32 տարեկան, երբ մի օր Պետական Համալսարանի առաջի հարկի երկա՛ր-երկար միջանցքով թափով դուս էի գալի (ես, համարյա միշտ էլ, վնագում եմ ու քայելուց էլ անընդհատ մտքի մեջ եմ): Դուս գալու դռան մոտ, դեմուդեմ, մի մարդաբոյից ավել հայլի կար:

Մեկ էլ աչքս ընգավ էտ հայլուն ու տեսա, որ ընձի մի ձյաձյա ա մոտենում: Մի մոմենտ հըլ գլխի չէի, որ ընձի մոտեցողը հենց ի՛մ պատկերն ա: Հենց գլխի ընգա, որ էկողը հենց իմ պատկերն ա, ահավոր ապշեցի, որտե՛վ, չնայած արդեն էրկու էրեխա ունեի, ընձի թվում էր, թե ես հըլ էն 17-20 տարեկան ջահելն եմ:

Մարդը որ ամեն առավոտ հայլու մեջ իրան ա նայում, չի զգում, որ մեծանում ա: Ըտենց էլ, ե՛ս չէի զգացե էտի: Ճիշտ ա, մի էրկու անգամ ջահելները տրանս-պորտում ընձի ասել էին «հոպար», ու հըլ հելել էին, որ նստեմ, բայց ես էտի բանի տեղ չէի դրե, մի՛նչեվ ի՛նքս չհասկացա, որ արդեն ջահել չեմ, որ արդեն ձյաձյա՛ եմ:

Էն վախտը հըլ չէի գրում, ու մտքովս է՛լ չէր անցնում, որ մի օր ոտանավոր եմ գրելու, բայց ինքս ընձի մտածեցի, որ էսի գրելու բան ա, որտե՛վ էս բանը երեվի սա՛ղ եմ զգում, ուրեմը, էսի սաղի վրա էլ կազդի:

Ես էսի գրեցի 1989 թվին, բայց հասկանում էի, որ է՛ն վախտվա զգացածս չեմ կարում ճիշտ պատմեմ, ու էս ոտանավորն անընդհատ մշակում էի: Որ ասեմ, թե մի 100 վարյանտ եմ փոխե, սուտ չի ըլնի: Վերջի վարյանտը գրել եմ 1997 թվին, դրանից հետո էս ոտանավորն էլ չփոխվա՛վ: (Օրինակ, ամենավերջի փոփոխությունը արել եմ 2012 թվին, երբ **լափագան** բառը փոխեցի **հաբոգած** բառով: Սրա գրելու պատմությունը դրել եմ էս գրքի վերջը):

Երբ ասում եմ, թե գրողը պատմող ա, ու իրա պատմելիքն էլ կյա՛նքն ա, որ գրողը չպտի հորինի, չպտի գլխից դուրս տա, չպտի մենակ հենց իրա՛ զգացածից խոսա. որ գրողը պտի ասի ու պատմի կարդացողի՛ ցավ ու դարդից, հենց էս ոտանավորի պատմության պես մի բան նկատի ունեմ:

Էն օրերին հըլ եզան պես առողջ էի, ու ո՛չ «մագո» ունեի, ոչ է՛լ «ձմեռ էր չոքե շեմիս», բայց լա՛վ գիդեի, որ սրանք ըլնելու են, որտե՛վ սրանք սաղի համար էլ ըլնում են:

Առհասարակ, մարդը սիրուն ու ճիշտ ա համարում մենակ է՛ն բաները, որ տեսել ա ու դրանց վարժվել ա քյորփա վախտվանից, չնայած էտ բաները շատ անգամ ո՛չ սիրուն են, ոչ է՛լ ճիշտ:

ԼԵԶՎԻ ՈՒ ԲԱՐՈՅԱ-ԷԹԻՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉՆ ԷԼ ՎԱՐԺՎԵԼՈՎ Ա:

ՄԵՆՔ ԾԻՇՏ ՈՒ ՍԻՐՈՒՆ ԵՆՔ ՀԱՄԱՐՈՒՄ ՄԵՆԱԿ Է՛Ն ԲԱՆԵՐԸ, ԻՆՉԻՆ ՎԱՐԺՎԵԼ ԵՆՔ ՄԱՆԿՈՒՑ:

Ու ափսոս, որ մանկուց գոնե մի ոտանավորի մեջ չենք տեսե՛ էթամ, կարամ, որտե՛վ, ըսենց, ըտենց, ընենց, ընձի, էսի, էտի, էնի, խի՞՞ և՛ն ձեվերը:

Հենց սրա՛ համար ա, որ էսօր մեր մեծերն է՛լ, քյորփեքն է՛լ Աբովյանի Վերք Հայաստանի-ն չեն հավանում (չնայած կարող ա ձեն չհանեն ու իրանց անկեղծ կարծիքը չասեն), այնինչ Թումանյանի օրերին Վերք-ն ապշելու չափ դուր էր գալի մեծ ու փոքրին, ու թվում էր ուղղակի աստվածային: Չեն հավանում համ էլ է՛ն բանի համար, որ էրեվանի էն օրերի բարբառի բառապաշարը շատ ա տարբեր էսօրվա բարբառի բառապաշարից ու ահավոր ա խորթ էսօրվա հային:

Իմ կարծիքով, էս մի ոտանավորս իմ ամենալավերից մեկն ա:

Լողո՛ւմ ա դիվոտած գիշերը, մոտ գալի՛, էլի հեռանում,
Մեռնում են թոքախտ աստղերը բորբոսնած երկնքի հոգում,
Հուշերս, ճաք-ճաք ու փխրուն, հաբոգած – աչքով են անում,
Գժվե՞լ ա կարոտիս թթուն – փրփրում ու արուն ա թթում:

Կարո՞ղ ա՛ ե՛ս էլ եմ մի օր – 10 համար կոշիկ հագե:
Երեվի: Եսի՞մ: Չկա՛ – էտ անտեր էրագիս վկան:
Գալիքը սաղ դռներն իրա – կոխպե՛լ ա, ճամփեքը փակե,
Էլ ընձի արդեն ո՛չ մի – 10 համար կոշիկ չկա:

Քյորփա էրագըս մանրից թթվո՞ւմ ա ու քարանում:
Գիշերը – մենակ կմախք – Հնձվո՛րն ա բարեվ տալի:
Ոտներըս՝ ցավո՛ւմ են արդեն, մագուլըս՝ հոգի՛ ա հանում.
Հենց հայլուն մո՛տ եմ էթում – դեմիցըս բիձա՛ ա գալի:

Ու վռագն ի՞նչ էր ախր: Խի՞ էսքան արագ թռավ:
Ինչքան էրագ ու լուս կար – ցնդավ ու դառավ քամի:
Աշխրորքի ցավ ու դարդը... էկավ ու ի՛մը դառավ,
Մի՞ մոմենտ աչքըս կպավ – ձմե՛ռըս չոքեց շեմին:

Ու ո՛նց ա հոգի հանում, էս ո՛նց ա ցավում ախր:

Ու հենց որ մո՛տ եմ էթում, հենց հայլուն մո՛տ եմ էթում,
Ախր հենց մո՞տ եմ էթում – դեմիցըս բիձա ա գալի՞՞:

3. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴԱՐՁ

Հագար անգամ կասեմ, որ գրողը պատմող ա ու ոչ թե հորինող:

«Մանկությունն անդարձ» ոտանավորով ուզեցել եմ՝ պատմեմ, թե էրեխա վախտըս ամեն ինչն էլ ինչքա՛ն էր լավ ու մաքուր: Ոչ մի անհուսություն չկար, ցավ ու դարդը՝ ընդ-պետական էին՝ վռագ անցնում ու պրծնում էին: Ու ամեն ինչն էլ հետաքրքիր էր:

Հիշում եմ, թե ոնց էի անձրեվին նստում տանը, պատուհանի մոտ, ու ժամերով նա-յում ջրափոսերի մեջ թափվող կաթիլներին: Նայում էի, թե ոնց ա կաթիլի ընգած տեղը վռագ մի պղպջակ բսնում, մի քիչ լող տալի ու պայթում:

Էս ոտանավորը գրելուց ուզում էի համ էլ պատմեմ, թե ինչքան հետաքրքիր էր, երբ մեկս տան միջից քիթն ու պռոշները կացնում էր բալկոնի պատուհանի շուշին, մյուսըս էլ դսից նայում էր էտ ծոմոված քիթ ու մռութին: Մեր համար էսի ահավոր հետաքրքիր էր ու զարմանալի: Բայց էս պատկերը չմտավ ու չտեղավորվեց էս ոտանավորի մեջ: Գրելուց՝ շա՛տ ա ըսենց ըլնում:

Էս ոտանավորի հանգերի սիստեմը Բ. Պաստեռնակից եմ սովորե: Բայց պարզ ա, որ էտ սիստեմը լրիվ չեմ պահե:

Հենց էս ոտանավորի առիթով էր, որ օդորմածիկ Սաղաթել Հարությունյանն ասեց.

«Մերուման, իսի՞ ես հետեվում կլասիկ կանոններին: Գրի, ոնց որ գալիս ա»: Սաղաթելի էս ասածը դարձրի կանոն, մանավանդ որ՝ «կճուճ թրծողն աստվածները չեն»: Ու Սաղաթելի էս մի հատիկ դիտողությունը երեվի իմ մի քանի տարին խնայեց, որտեվ եսիմ քանի՛ տարի կկորցնեի, մինչեվ ի՛նքս հասնեի էս մտքին:

(Լրիվ հնարավոր ա, որ առանց Սաղաթելի ասելու էտ մտքին երբեք էլ չհասնեի: Պատահականության դերը մարդու ու համ էլ հասարակության կյանքում ուղղակի վիթխարի ա: Օրինակ, որ անիվը հորինող էն հանճարեղ ու մեզ անհայտ մարդը չըլներ, կարող ա անիվն ու անվին կապված տեխնոլոգիաները մինչեվ էսօր էլ ոչ մեկը հայտնագործած չըլներ:

(Առանց անվի մեր քաղաքակրթության մակարդակը էսօր կըլներ համարյա հենց էն մակարդակին, ինչը ունեին Ամերիկայի ացտեկներն ու ինկերը: Սրանք անիվն ու անվին կապված տեխնոլոգիաները չուներին, չէին քթե: Սրա համար էլ սրանք ընտանի քաշող կենդանիներին չէին ընտելացրե, ու ո՛չ սայլ ունեին, ո՛չ կառք, ո՛չ ջրաղաց, ո՛չ ալյուր, ո՛չ ճոճանակավոր ժամացույց, ո՛չ ճախարակ ու ճախարակային բլոկ, ոչ էլ անվով աշխատող որեվէ մի բան:

(Էսի ցույց ա տալի, թե սովորելու դերը ու, առհասարակ, մշակութային փոխառության դերը, ինչքան ա վիթխարի: Ամերիկայի բնիկները կտրված էին Հին Աշխարհից, ու մշակութային փոխառության ոչ մի հնար չուներին: Մարքսիստներն ու ամեն տեսակ հիստորիցիստներն էսի չգիդեն, ու մտածում են, թե օրինակ, անվի հայտնագործությունը, այսպես ասած, «օբյեկտիվ անհրաժեշտություն» ա):

Էսի իմ է՛ն առաջի ոտանավորն ա, ինչով քթա իմ ոճ կոչվածը: Էտ վախտ 1989 թվի ապրիլն էր: Դրանից հետո ոտանավոր գրեցի մի իրեք-չորս տարի ու էլ (համարյա) չգրեցի, որտեվ տեսա, որ ոտանավորի պահանջարկը չկա: Հայաստանը տխուր երկիր ա:

Էսի իմ ամենալավ ոտանավորներից մեկն ա, բայց Խայամի էս մի քառյակն ուղղակի հանճարեղ ա: Ուրիշները կարող ա մի քանի հատոր գրեն, որ համոզեն, թե կյանքն անցողիկ ա ու անիմաստ, իսկ Խայամն էսի շրրըմփրցնում ա ընդամենը էս չորս տողով:

*էրեկ տեսա ավեր բերդում քաջ Թուսի՛
 Բուն թառել էր սիպտակ գանգին Քաուսի՛:
 – Ափսոս, – ասեց, – խնջույքներիդ ո՛ր կորան,
 Թմբուկներիդ ձենը հասնում էր Լուսին:*

Օմար Խայամ (1048-1122)

Դեմքս հպված էր խոնավ ապակուն:
 Դսում – ջրափոս՝ ջրափոսի մոտ:
 Անձրեվ էր: Ցեխ էր: Մարդ չկար բակում:
 Բայց մեկ ա՛ լուս էր: Լո՛ւս ու առավոտ
 Ու հո՛ղ ու երկինք – հրեշտակահոտ:

Անձրեվն ասում էր անծե՛ր շարական,
 Մեռոնով օծում բակն ու ամենքին,
 Պատարագներով՝ ջե՛րմ, նվիրական,
 Աղոթք էր կարդում սա՛ղ տիեզերքին
 Ու խի՛նդ էր կաթում արդար եզերքին:

Պատուհանի դեմ, մեծ ջրափոսում
 Պղպջակները ձեն չէին հանում.
 Մի քիչ վախվորած՝ անձրեվին լսում –
 Խաչ էին հանում ու սուս մահանում,
 Ու խինդ ու աղոթք չէին ավսոսում:

Պղպջակները դրախտ չեն ընգնում:
 Բայց նորից, շարված անձեն աղոթքի,
 Հուշիս մուրացիկ, որբ ջրափոսում,
 Հավե՛րժ, անընդհա՛տ, առանց բողոքի,
 Խաչ են հանում ո՛ւ – էլի մահանում:

Դեմքս հպված ա էլի ապակուն,
 Ու էլի թա՛ց ա դուսն էս առավոտ:
 Անձրեվ ա: Ցեխ ա: Մարդ չկա բակում-
 Անտեր լո՛ւսն էլ ա խոնավ ու ցեխոտ:

¹ **Թուսն** Իրանի հնագույն շահերից ա:

² **Քաուսը** կամ **Քեյ-Քաուսն** առասպելական շահ ա, ով իբր **էլբորզ (էլբրուս)** սարի վրա յոթ հրաշալի դղյակ ա սարքե:

4. ԱՆՇՐՋԵԼԻ

«Անշրջելին» նախորդ ոտանավորի թեմայի մի ուրիշ պատմությունն է, մի ուրիշ վարյանտը: Առհասարակ, հասուն տարիքով պատմողի (պոետի կամ արձակագրի) համար՝ կյանքի անդառնալության, մանկության կորստի ու մահվան անխուսափության թեման շատ և կարեվոր: Դուրը որ խոսանք՝ անհատ մարդուն հետաքրքրող հազիվ մեկ-երկու ըսենց կարեվոր թեմա ըլնի, թե չէ:

Սրանցից մեկը, իհարկե, սիրելու թեման է. սիրած աղջկան կամ տղուն սիրելու, մարդուն սիրելու, մոտիկներին, իրա հայրենի տունը սիրելու թեման: Թեմա՝ շատ չկա: **Էս լուսնի տակ նոր բան՝ ոտանավորով պատմողը չի կարա ասի:** Խելոքները վաղուց արդեն ամեն ինչ էլ ասել են:

Ուրեմն՝ **կարեվոր պատմելու ձեվն աս:** Այ, էտ ձեվը պտի նոր ըլնի, թարմ ըլնի, որ կարդացողի վրա ազդի: **Պատմողի նպատակն ազդելն աս:**

Էս էրկու ոտանավորի թեման լրիվ նույնն է, բայց ձեվերը տարբեր են: Իսկ կոնկրետ դետալները, մանրամասները՝ վեկայում ես կյանքից, որտե՛վ կյանքից լավ պատմող չկա: Բայց ոտանավորը կամ պատմվածքը լուսանակար չի: **Վիլյամ Սարոյանը ճիշտ ասում, թե կյանքում ոտանավոր կամ պատմվածք չկա:** Ոտանավորը կամ պատմվածքը ստեղծում աս պոետը կամ արձակագիրը: Բայց իրա պատմելիքի նյութը քաղում աս մենակ ու մենակ կյանքում էղած կամ ըլնելիք ու հնարավոր բաներից:

Չպիտի հորինես: Չպիտի քարոզես կամ խրատես: Ու չպիտի պատմես՝ մենակ քո՛ւ համար կարեվոր ու հետաքրքիր բաները: Նույնիսկ թե որ հենց մենակ քո՛ւ անունից ես խոսում, պտի պատմես ու խոսաս կարդացողի ցավ ու դարդից:

Քիփիինգի «Մաուզին» հորինած չի: Պարզ աս, իհարկե, որ «Մաուզի»-ի միջի կենդանիները՝ էտ «լրիվ» հեքիաթային վեպի հերոսները, երբե՛վ չեն խոսե ու մտածե: Բայց «Մաուզի»-ն լրիվ իրական պատմություն է, նացիզմի պատմությունն է, ինչը ազգերն անընդհատ կրկնում են: «Մաուզի»-ն կենդանիների մասին չի, մարդկանց մասին աս:

– **Պատմելուց՝ սուտ մի՛ ասա,**– ասում աս Սարոյանը, **ու շատ ճիշտ ասում:**

Ու երբ կարդում ենք «Մաուզին» կամ նայում ենք ռուսների հանած սքանչելի մուլտերը, վարկյան անգամ չենք մտածում, թե անհնար աս, որ Արշը՝ Բալուն, կամ Պիթոն Կասան, կամ Բադիրա Հովագն ու Վագր Շեր-Խանը խոսան:

Չուկովսկին էս առիթով ասում աս, թե գրողը պտի ստեղծի «անճմարտի ճշմարտանմանությունը»: Ով էսի լավ աս ստեղծում, էնի՛ ա լավ պոետը կամ գրողը:

Էսի ազատ ոտանավոր աս (վեռլիբը, տես իմ [16]-ը ու էս գրքի հավելվածը), ու համոզված եմ, որ վեռլիբըն ըսենց պտի ըլնի, այսինքն, ինչ մետր ու հանգերի ինչ սխտեմ ուզես՝ կարաս վեկայես: Բայց մեջը պտի լիքը ալիտերացիա (նման բաղաձայնների «շարան») ու ասոնանս (նման ձայնավորների «կույտ») ըլնի: Ու իհարկե՝ պտի կյանքից մի կարեվոր ու կարդացողին հուզող բան՝ անպայման՝ պատմես: Ու լավ կըլնի, որ մեջը լիքը հանգ էլ ըլնի:

Վստահ եմ, որ էսօրվա անհանգ ոտանավոր գրելու մոդայի գլխավոր պատճառը մեր «պոետների» թուլությունն աս: Հանգով գրելը շատ ավելի դժվար աս, ու ամեն մի մարդու խելքի բանը չի, մանավանդ երբ հանգավորում ես էրկու կամ իրեք վանկով (ավելը համարյա անհնար աս):

Խի՞՞-ն բնիկ հայերեն բառ աս, ինչի հին ձեվը հի՞՞-ն էր: Էս էրկուսն էլ առաջացել են հին հայերենի ի (բնիկ հայերեն) մի «տառանոց» բառից, ինչը նշանակում էր՝ **բան, մի բան, ինչ-որ մի բան, իսկ հարցական երանգով ի՞նչ բան:** Հենց էս ի-ից են առաջացել **ինչ, իչու, ևն ձեվերը, ու ուրիշ մի քանի մեռած բառ:**

Չե՞մ հասկանում, մեր գրագետները խի՞՞ են **խի՞՞** -ն հայտարարել բարբառային ու գռեհիկ:

(Ջարմանայի է, որ մեր էս հնագույն ի-ն Երեվանի բարբառում էսօր է՛լ կա. էսի ջահելների «գարմացական-հարցական» ի՞՞-ն):

Մեր «խելոքները» իբր «օտար» բառերի դեմ արնահեղ պատերազմ են անում ու դրանց գործածողներին էլ հայտարարում են՝ տգետ, բայց մեր բնիկ հայերն **խի՞՞**-ն հայտարարել են գռեհիկ: Դե հմի ասեք, ո՞վ աս...

*Հսի իմ ամենալավ ոտանավորներից մեկն ա:
Մենք Ռուդարիից էլ սովորելու շատ բան ունենք:*

*Անգամ մետաքս հագած շրջես՝ էս հնգօրյա աշխարհում,
Լա՛վ իմացի, վերջըդ հող ա, գետնի տակն էս անցնելու:*

Աբուարդելլահ Ռուդաքի, 9-րդ դար:

Հրա՛ջք էր:

Ձո՛ւն էլ կար, ձմեռ է՛լ... ու համ էլ – ամառ ու գարուն,
Ծիծա՛ղ կար, ու հետն էլ – հեկեկանք կերկերուն,
Կար համ էլ չանգռվա՛ծք ու արուն,
Բայց գորշ ու սեվի՛ ո՛չ մի նրբերանգ:

Ապագան –

Ա՛նպայման բյուրեղյա ապարանք,
Դոյակնե՛ր, դոյակնե՛ր ու էն էլ՝ ինչքա՛ն,
Ու կույսեր դիցադեմ, ու արքա ու իշխան,
Ու էն էլ – ա՛նպայման, ա՛նպայման –
Հրա՛ջք էր, ուղղակի հրա՛ջք:

Բայց դե խի՞, ախր խի՞,
Դուզ ճամփեն խի՞ ա անպայման գալարվում,
Ու խի՞ ա արեվը անդունդը գլորվում,
Էս անտեր դեղձանն ու ծիրանին ո՞ւր կորան,
Ու մանուկ անրջի լուսավոր քուրան
Օրերն էտ ո՞ր կետում ծամին ու կերան:

Ու անհայտ կորել են –

Ամառ ու ձմեռ ու համ էլ – գարուն,
Դառե ուրվական –
Միակե՛րպ, գորշ ու սեվ օրերի շարում,
Ու չկա էլ ո՛չ մի բյուրեղյա ապարանք,
Ջնջվել ա ամե՛ն մի նրբերանգ,
Աշունն էլ – արդեն –
Իրե՛րն ա ծրարում,
Ու կորան դեղձանն ու ծիրանին, կորա՛ն...

Բայց չէ՞ որ –

Ձո՛ւն էլ կար, ձմե՛ռ էլ,
Ու համ էլ –
Ամա՛ռ ու գարուն:

Պարզ ա, որ **Նոկտյուրն-ն** է՛լ ա նախորդ շարքից, նախորդ պատմությունից:

Նոկտյուրնը «գիշերվա» երգն ա: Սրա գրելու պատմությունը դրել եմ իմ մի անտիպ վեպի մեջ: Էտ պատմությունը կապված ա Համո Սահյանին ու Սաղաթել Հարությունյանին: Հ. Սահյանը 1989-ին ասեց, որ սրա ամեն ինչը լավ ա, սկիզբ կա, ֆինալ կա, հանգերն ու ռիթմն ու ամեն ինչը տեղն ա, բայց հին ա: Ես հո մանդրած չէի, էլ տեղ ու դադար չկար:

Սրանից հետո էր, որ Սաղաթել Հարությունյանն ասեց, թե գրի, ոնց որ գալիս ա, ու հետն էլ զարմացավ, որ փոքր վախտս չեմ գրե:

Ոտանավոր գրելն սկսել եմ 1989-ի ապրիլից, երբ արդեն 41 տարեկան էի: Դրանից չորս տարի առաջ, 1985-ին, հիվանդացա ու մի չորս ամիս պառկա տանը: Սաղ մարմինս դուս էր տվե, դսից է՛լ, ներսից է՛լ: Ոչ կարգին ուտելն էր կարելի, ոչ խմելը, ոչ ծխելը, ոչ է՛լ կարողալու գիրք ունեի. տելեվիզոր էլ փչացել էր, ու լրիվ պարապ էի:

Էրեխեքս երրորդ-չորրորդ դասարան էին, ու առավոտները լրիվ մենակ էի: Կինս՝ Նունեն, էթում ու սարերից անընդհատ դեղաբույս էր բերում, որ օղորմածիկ Սվետան ընձի համար դեղ սարքի: Ես էլ պարապությունից վեկալա ու սկսա Քիլիինգի Just So Stories-ն անգլերենից թարգմանելը:

Մատիտով էի գրում, որտե՛վ պառկած էի, իսկ պառկած տեղը գրիչով գրելը չի ըլնում: Ու տեսա, որ կարում եմ լավ թարգմանեմ: Էս գործս սկսելու մի պատճառն էլ է՛ն բանն էր, որ ուզում էի, որ Էրեխեքս Քիլիինգի էս հեքիաթները **հայերեն** կարդան, իսկ էն օրերին լույս էր տեսե էտ գրքի ուղղակի այլանդակ հայերեն թարգմանությունը: Սրա համար ուզեցա տենամ, թե որ լավ թարգմանեմ, դրանք հայերենով ինչ կդառնան:

Հետո մտածեցի, թե ավելի լավ ա, մի հինգը տարում դառնամ Հայաստանի առաջի տարը թարգմանից մեկը, քան թե ընձի ճղելով դառնամ ֆիզիկայի պրոֆեսոր: Էն օրերին թարգմանությունը (մտավորականի համար) շատ ձեռնտու գործ էր: Տարին էրկու գիրք թարգմանեիր, մի ավտո էիր առնում, մի ավտոն էլ մի կվարտիրայի գին ունեիր: (Բայց էն օրերին ո՛ւմ մտքով կանցնեիր, որ գրողի արհեստն ու, առհասարակ, մտավոր ու ազնիվ աշխատանքն էսքան անպատվաբեր կդառնա):

Թարգմանելու գործը սովորա մի չորսը տարում, ու հետո, լրիվ պատահական, տեսա, որ ինքս է՛լ կարում ոտանավոր գրեմ: Մինչե՛վ էտի մքովս անգամ չէր անցնում, թե մի օր ոտանավոր գրող եմ դառնալու, ու ոտանավորի էնքան էլ սիրահար չէի (տո որ դուրը ասեմ, էսօր է՛լ ոտանավորի մի առանձին սիրահար չեմ: Ողղակի էն անեկդոտի պես. Чужки не читатель, чужки писатель):

Էս մի ոտանավորս գրած ա համարյա կլասիկ մետր ու հանգով, բայց իհարկե մի էրկու տեղ սրանցից շեղվել եմ, որտե՛վ ուզեցել եմ ասածս շատ դիպուկ ըլնի:

Ոտանավոր գրելը թարգմանելով եմ սովորե: Թարգմանում էի մենակ արդեն թարգմանած բաները, որ կանտոլ ունենամ: Ու ձգտում էի՝ արդեն թարգմանածից անպայման ավելի լավ թարգմանեմ: Տեխնիկաս էնքան ուժեղացավ, որ արդեն կարայի արեվելահայ գրողներից ամեն մեկին էլ նմանակեմ: Չորս գոյական տային, համարյա առանց մտածելու ժամերով գրում էի, օրինակ, Սեվակի ոճով: (Ամենադժվարը՝ Թումանյանին նմանակելն ա, հետո՝ Չարենցին ու Տերյանին): Գրագով չորս գոյականով էրկու-իրեք բոլորում մի ռուբայի (լավը) միշտ էի գրում, ու երեվի հմի էլ գրեմ, մանավանդ, որ մի էրկու օր վարժվեմ: Մի մոմենտ կարում էի նույնիսկ չափածո մետրերով խոսամ:

Բայց սեփական, նոր ու կարելիոր ոտանավոր գրելը շատ ա դժվար, որտե՛վ թեման, այսինքը, ասելիքը, դժվար ա քթնվում: Սրա համար է՛լ ամենաշատը հագիվ մի 100 ոտանավոր գրած ըլնեմ (մի էսքան էլ հագիվ թարգմանած ըլնեմ): Թումանյանի ասելով Հայնրիխ Հայնեն ասում ա, թե որ գրողի 7 ոտանավորից մեկը շատ լավը ըլնի, ուղղակի գերազանց ա (տես [1]):

Համոզված եմ, որ էսի գերազանց ոտանավոր ա, ու Խայամի քառյակն է՛լ ա գերազանց: Ես է՛լ, Խայամն է՛լ լրիվ նույն պատմությունն ենք պատմում, լրիվ նույն բանն ենք ասում, բայց իմ ու իրա պատմելու ձեւերն ինչքա՛ն են տարբեր: Ասել եմ

արդեն, որ պատմելու արժան բաների թիվը ընդամենը մի քանի հատ ա: Բայց հնարավոր տարբեր ու չքնաղ ձեվերի թիվը ուղղակի անսահման ա:
Հսի էս ոտանավորի 63-րդ վարյանտն ա:

*Կյանքիս գիրքը, ափսոս, արդեն կարդացի:
Գարունն անցավ լուկ ցավերը մնացին:
Մանկությանըս օրերը վառ ու խնդուն՝
Հավքեր էին, հերթով թռան գնացին:*

Օմար Խայամ, (1048-1122)

Ո՛նց եմ ուզում գրկեմ մանկությունըս ոսկի,
Ու արցունքով սրբեմ մրմուռներիս փոշին,
Որ խեղճացած–
Հա՛ կարոտ են քաղցր խոսքի:
Ախր ո՛րք են,
Ո՛րք են–
Անճե՛ղ
Մատուռներըս հուշի:

Ու թողել եմ օդե դոյակներըս բյուրեղ –
Լավ չեմ հիշում արդեն, ո՞ր մի երկրում հեռու:
Դրախտիս մեջ մանուկ – մենակ փո՛ւշ ու բաղեղ,
Ու էրագըս,
Որ փրփրուն ու եռացող գետ էր գորեղ –
Դառել ա մի –
Թոքախտավոր բարակ առու –
Ու չի եռում:

Ու լա՛վ գիդեմ, որ էլ ո՛չ մի լուս օր չկա
Ապագայիս սըքվոր օրացուցի վրա:
Է՛ ի՛նչ անեմ –
Թո էլ
Ո՛չ մի էրագ չըգա:
Տո, ՚սենց է՛լ մնա, համաձա՛յն եմ սրան:

6. ԵՐԿԻՐՆ ԱՎԵՏՅԱՑ

Ձեկ Լոնդոնին կարդացել եմ 14 տարեկանից, իրա 12 հատորը երեվի մի 100 անգամ: Ռուսերենը դրանով եմ սովորե, ու Ջ. Լոնդոնի ազդեցությունը վրես շատ-շատ էր: (Էտ ազդեցությունը կարող ա հմի էլ կա, բայց չեմ գիտակցում, որտեղ արդեն մոռացել եմ, թե իմացածս ումից եմ սովորե, ու սրա համար էլ շատ անգամ հենց գիդեմ, թե իմացածս համարյա ամեն ինչն էլ (չհաշված գիտական ինֆորմացիա) իմ քթածն ա):

Առհասարակ, բացի իրա մայրենի լեզուն, գրողը պտի ամենաքիչը երկու լեզու էլ իմանա, երկու հզոր գրականության լեզու: Մեր համար էսոր էտ երկու լեզուն ռուսերենն ու անգլերենն են: Առանց սրանք իմանալու՝ գրողը չի կարա (գոնե էսոր) լավ գրի, որտեղ **ԳՐԵԼԸ ԿՈԼԵԿՏԻՎ ԳՈՐԾ Ա:**

Ոնց որ ֆիզիկոսը (բնագետը), մաթեմատիկոսն ու առհասարակ՝ մտավորականն ա ուրիշ ազգերի հզոր մտածողների արածը սովորում ու մարսում, որ մի քիչ էլ ինքն անի, մի քիչ էլ ինքը շարունակի դրանց անցյալի ու էսօրվա արածները, նույնն էլ ոտանավոր գրողն ա: Պոետն էլ պտի ուրիշների ստեղծած ձեվերը անընդհատ սովորի ու տենա, թե դրանք ո՞նց ու ի՞նչ են գրում, որ իրա գրածներն էլ մի բանի նման ըլնեն:

Էտ խի՞ պտի Ջոն Միլթոնն ու Շեքսպիրը սովորեին Չոսերից, Դանթեից, Պետրարկայից ու Բոկաչչոյից ու սրանց հետ միասին՝ համ էլ հին հույներից ու հռոմեացիներից, Թումանյանն ու Չարենցն էլ՝ սրանցից ու Պուշկինից ու Լերմոնտովից, իսկ մեր հիմիկվա պոետներն ու գրողները՝ չէ: Ես հաստատ գիդեմ, որ մեր հիմիկվա պոետների գիտելիքը, մեղմ ասած, չնչին բան ա, որտեղ էսի իրանց գրածներից էլ ա երեվում, ու հետո էլ սրանցից շատի հետ եմ խոսացե, ու սրանք ընձի անընդհատ ապացուցել են, որ ահավոր շատ բան կա, որ պտի իմանալին, բայց չգիդեն:

Ռուսերենն էսօրվա հայի համար օղի պես մի բան ա, առանց ռուսերենի իմացության անհնար ա, որ հայը կարգին մտավորական դառնա: Մի անգամ էլ ասեմ, որ բոլշեվիկների տված միակ օքոյթը հայերին երեվի էնի՛ էր, որ համարյա ամեն մի հայ էլ, քիչ թե շատ, ռուսերեն գիդեր: Տասնիրեք տարեկանից հետո իմ իմացած ամենարժեքավոր համարյա սաղ բաները ռուսերենի միջոցով են էղե:

Ու երբ մեր էս նացիոնալիստները ռուսերեն դպրոցները փակին, չհասկացան ու էլի չեն հասկանում, որ հենց հայ մշակույթի զարգանալու դուռը փակին: Հայ գրականությունը, մանավանդ գիտականը, ահավոր ա խեղճ: Ուզենք, թե չուզենք, մեր գրականության մոտ 100 %-ը թարգմանական ա ու թարգմանական էլ կըլնի, որտեղ մենք քիչ ենք ու ահագին էլ՝ հետամնաց ենք: Իսկ ռուսերենով հլը որ հսկայական գրականություն ունենք, բայց էսօր մեր նոր սերնդի մեծագույն մասը ռուսերեն չգիդի: **Հայ մշակույթն սպանելու ձեվերից մեկը հենց էսի ա:**

Ինչքան հիշում եմ, էս մի ոտանավորի գրելու առիթը Լոնդոնի մի պատմվածքի վերնագիրն ա էղե. *Յa mex, kmo 6 nymu (To the Man on Trail):* Հա էլ գրելու առիթը մի անորոշ գաղափար, մի տող կամ նույնիսկ մի բառ ա ըլնում, ու պատահում ա, որ էտ բառը կամ տողը վերջում դուս ա թռնում էթում ա: Պարզ ա, որ էլի նույն թեման ա՝ կորստի թեման. դետալներն են ուրիշ:

Հայերենի լեզվի մեջ **թող** հրամայականը, բացի իրանից, ճյուղ ա տվե՛ **թո բառը, ինչը մակբայ ա:** Ասում ենք. «**Ձեռս բաց թող**», այսինքը, անպայման **ղ-**ն էլ հետը, ու էս **թող-**ը բայ ա: *Բայց ասում ենք.* «**Թո գա, թո մեծանա**» *ևն, առանց ղ-*ի: Ուրեմը, ունենք երկու բառ . **թող-**ն ու **թո-**ն: Էս տեսակ բան՝ լեզուների մեջ շատ կա ու սովորական ա: Չեմ հասկանում, թե գրելուց խի՞ չպիտի նշենք էսի:

Մի բան էլ. հրամայականի **ր-**ն (**գրկիր-ի, փարատիր-ի վերջի ր-**ն) կենդանի էր մի 15 դար առաջ: Հմի էտ **ր-**ն մեռած ա, չենք ասում: Ուրեմն՝ թե որ համ էլ չգրենք, խելոք բան արած կլինենք: Որտեղ արտահայտած կլինենք լեզվի կենդանությունը:

Հրամայականի էս 1500 տարվա առաջվա **ր-**ին կպած մնալը հետամնացություն կամ երկու երեսանություն չի՞: Մանավանդ, թե որ գիդենք, որ լեզուն ա՛նպայման ա

փոխվում, ու մանավանդ, որ համարյա ոչ մեկս էլ կենցաղում էս ըն չենք ասում:
 Մանավանդ համ էլ, որ հմի 1500 տարի առաջվա պես չենք խոսում ու չենք էլ խոսալու:
 Իմ լավ ոտանավորներից մեկն ա, բայց Թումանյանի քառյակը հանճարեղ ա,
 չնայած Խայամի մի քառյակի պատասխանն ա (տես մի քիչ հետո):

– էս է, որ կա... Ճիշտ ես ասում. թասըդ բե՛ր:
 էս էլ կերթա՛ հանց երազում, թասըդ բե՛ր:
 Կյանքն է հոսում տիեզերքում զնգայեն
 Մեկն ապրում է, մյուսն սպասում՝ թասըդ բե՛ր:

Հովհաննես Թումանյան

Բուքը, ուր որ ա, պտի դադարի:
 Ու հմի՛ քանի՛-քանիսը կհեւլի ճամփա,
 Կքայլի երկա՛ր ու երկա՛ր,
 Ու գուցե Տերը չուզենա խաթարի
 էտ մարդկանց ճամփեն ու կայնի սատար,
 Ու գուցե իրանց իղձ ու տենչանքը –
 Չմնա՛ անկատար:

Ու հես ա – իրա՛նց կենացն եմ խմում էս պահին–
 Մոլորված աշուն ու ձմռան արանքը.
 Թո Տե՛րը... իրանց ուղին անխաթար պահի,
 Թո հանգրվան ըլնի բքի ավարտին,
 Թո իրանք հանդիպեն
 Իրանց էրագի Վահագնին ու Նվարդին,
 Թո ընդե՛, է՛ն յանը –
 Հարեվան ըլնեն Արարչի գահին,
 Ու թո որ իրանք
 Հանգարծ ո՛չ մի օր –
 Յավերի անդունդը չիջնե՛ն:

Թո էթա՛ն: Թո էթան ու հասնեն ավետյաց երկիր,
 Թո իրանց ճամփի ավարտին – ըլնի խրախճանք:
 Տե՛ր Աստված,
 Յավ ու վշտերիս երկիրը գրկի՛,
 Փարատի՛ թախիծս անվախճան.

Իմ ճամփե՛ն
 Վաղո՛ւց ա հասե ավարտին,
 Ես անդարձ հրաժեշտ եմ տվե
 էրագիս Վահագնին ու Նվարդին,
 Ու հմի –
 Էլ արդեն ո՛չ մի տեղ,
 Ո՛չ մի տեղ չե՛մ էթա:

7. ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ` ԸՆԶԻ ԿԱՐԳԵՔ ՀՐԵՇՏԱԿ

Ամերիկացի Ben Ray Redman–ը **Damascus** վերնագրով մի չքնաղ ոտանավոր ունի, ահավոր հետաքրքիր տաղաչափությունով: Ուզեցա թարգմանեմ, տեսա՝ շատ ա դժվար ու կարող ա էտի մի քանի ամիս տեվի, թողեցի: Հետո ուզեցա դրա մետրին մոտ մետրով մի հայերեն բան գրեմ, էսի ստացվեց (առհասարակ՝ մի լեզվի մետրով գրած ոտանավորը չես փոխադրի մյուս լեզու՝ էլի նույն մետրով. անհնար ա, ըստնց օրինակ չկա. տես իմ [16]-ը):

Էս ոտանավորը որ գրեցի, էն ձեվ էի ուրախացե, որ տեղ ու դադար չկար, որտեվ հայերենով մի հետաքրքիր ու նոր մետր էի քթե: Մի քանի տարի հետո Թադեվոս Տոնոյանի խորհրդով մի 10-20 տող դեն քցի ու մի քիչ էլ փոխեցի. ստացվեց էսի:

Երբ ուզում ես ուրիշ մի օտարալեզու հզոր գրողի տաղաչափական ձեվերը սովորես, ու էսի անում ես առանց տաղաչափական անալիզի, այսինքը, առանց դարդ անելու, որ օտարի յամբը կամ անապեստը կամ դակտիլը (ևն) քու հայերենի մեջը ուրիշ մետր են դառե, հայերենով հա՛ էլ մի նոր ու հետաքրքիր չափ ա ստացվում:

Ես համոզվել եմ, որ էս յամբ ու անապեստին հետեվելն իզուր գործ ա: Պոտի հետեվես մենակ ու մենակ ուսումնասիրելիք գործի «երգին» ու երգեցիկությանը, սիրունությանն ու թարմությանը, ու ձգտես այ հենց սրա՛նք հայերենով փոխանցելուն: Թե որ էսի հաջողվում ա, անպայման մի նոր ու ընտիր ձեվ ես քթած ըլնում:

Իհարկե, կարաս դասական չափերով էլ գրես, ու գրես համ էլ դասական ձեվերով. գրես սոնետ, ռոնդո, ռուբայի, գազել ևն: Բայց երբ տենում ես, որ դասական ձեվի ստրուկտուրան քեզ խանգարում ա ու չի թողում որ ոգին ու սիրունությունը փոխադրես հայերեն, պոտի անպայման հրաժարվես էտ ստրուկտուրայի քեզ խանգարող բաներից ու գրես հենց է՛ն ձեվով, ինչը քու ուզածը ամենալավ ձեվով ա արտահայտում:

Էս ոտանավորը հենց էս ասածս ձեվով եմ սարքե: Սրա բովանդակությունը, կոնկրետ ասելիքը, ոչ մի կապ չունի Ռեդմանի Դամասկոսի հետ, ու ոչ էլ սրա չափն ա նման Ռեդմանի գրածի չափին: Բայց եթե Ռեդմանի ոտանավորը դեմս չըլներ, էսի չէր ծնվի:

Ու պոտի գրածդ չափսոսաս, այսինքը , հենց զգում ես, որ գրածդ կարելոր թերություններ ունի, պոտի էտի դենչարտելու ուժ ու կորով ունենաս, ու մտածես, որ դրանից ավելի լավը, ավելի ընտիրը կարաս գրես:

Քու չափանիշը պոտի ըլնի համաշխարհային մակարդակը. թե որ տենում ես, որ գրածդ էտ մակարդակից ցածր ա, էլ մի տատանվի, դեն քից էտ թո էթա: Իհարկե, որոշողը ընթերցողն ա. դու կարող ա մտածես, որ հասել ես էտ համաշխարհային մակարդակին, իսկ ընթերցողն ասի, որ էտի հեչ բան ա: Ի՛նչ արած, էս գործն էլ ըստնց ա:

Համարում եմ, որ էսի հզոր ոտանավոր ա, մանավանդ իրա մետրիկայի նորության տեսանկյունից:

Գի՛նձ կառնեմ ու
Մի քիչ դադձ,
Ու մի հատ էլ էրնջակ,
Ու կղնեմ օդապարիկ –
Պա՛ղ աստղերի շնչի տակ,
Որ վիճակ հանեմ,
Որ վիճակ հանեմ՝
Գիշե՛րն Ամբարձման:

Եղունգ ու մատ կթաթախեմ
Այգացողի խնգի մեջ,
Որ հո՛նք ու կոպ լվանամ,
Որ հո՛նք ու կոպ լվանամ –
Յողո՛վ Ամբարձման:

Ոտով զգույշ կշռափեմ
Գո՛ւղձ ու կոշտ,
Գո՛ւղձ ու կոշտ,
Որ անտեղի չտրորեմ –
Չտրորե՛մ ու չօրորեմ
Ջութակները ծղրիղների,
Ծղրիղների՝ նորահաս:

Շամանդաղը¹ գի՛նդ կանեմ ու
Գի՛նդ² կանեմ ու
Թո որ գան –
Պարիկ, դրուժ ու ջրհարս³ –
Բլթակները զարդարեն,
Բլթակները զարդարեն:

Թողեք գաղձի⁴ հոտով հարբեմ –
Հանգիստ քնեմ
Ցի՛րդ ու գիհու⁵ թփի տակ,
Ցի՛րդ ու գիհու թփի տակ –
Որ էրագիս էրա՛գ տենամ –
Թե արթմնի՛ էրագներս

Հարսանիքի
Նարո՛տ⁶ են կապե,
Նարո՛տ են կապե:

Էրագ տենամ ու նոր էթամ,
Թողնեմ էթամ,
Էթամ առանց հիշատակ,
Իսկ հենց հմի – թողե՛ք քնեմ
Հանգի՛ստ քնեմ
Ցիրդ ու գիհու թփի տակ,
Ես չեմ ուզում –
Ջհանդա՛մը –
Ընձի կարգեք հրեշտակ:

¹ Շամանդաղ – առավուտը ջրից բարձրացող մշուշն ա:

² Գինդ – ականջօղն ա. գինդ-ը բնիկ հայերեն ու շատ սիրուն բառ ա, բարբառներն ունեն, բայց մեր գրական ոճերը գերադասում են ականջօղ տգեղ բառը, ու էսի սպանեց մեր բնիկ գինդ-ը:

³ Օդապարիկ – ըստե՛ օդում սավառնող:

⁴ Պարիկ, դրուժ ու ջրհարս – հեթանոսական՝ իգական սեռի չար (ավելի շուտ չարածնի) ոգիներ. սրանցից՝ դրուժը ջահելներին էրոտիկ էրագներ էր ուղարկում:

⁵ Գաղձ – (բնիկ հայ բառ) գալյուկ բույսն ա. թմրեցնող, հարբեցնող հոտ ունի:

⁶ Ցիրդ ու գիհու... – ծառ են. ցիրդն էլ ա գիհու մի տեսակը, փիճին էլ:

⁷ Նարոտ – գույնզգույն թելերի փունջն ա, այլաբանությունով՝ ծիածանը:

8. ՀԱՅԱՍՏԱՆ 1988-2088 (կարող ա)

Մեր ամբիոնի Մուրադյան Իվետան մի ինչ-որ բարեգործական միության անդամ էր: Գնացել էր Սպիտակ, որ հետ էկավ, պատմեց, թե որբերն ինչ ահավոր վիճակում են. անտեր-անտիրական, ցուրտ հյուղերում, մեն-մենակ: Իվետան ասեց, որ մի անգամ ես էլ էթամ ու մի հողված գրեմ դրանց վիճակի մասին: Հրաժարվա, որտեղ գիդեի, որ հողվածս բան չի փոխի, բայց ես ինքս մի 5-6 ամիս խելքի չեմ գա, հա՛ դրանց մասին կմտածեմ:

Մի քանի ամիս հետո, կարծեմ Տոնոյան Թադեվոսն էր, մի էրեխու մասին էր պատմում, ասեց, որ էտ էրեխեն ասում էր, որ «մաման թո սաղ ըլնեթ, ու էլի ընձի ծեծեթ»: Ոտանավորը գրելու իմ ցանկությունը հենց էս տողի ողբերգությունը պատմելու իմ անզուսպ ցանկությունից ա էղե:

Առհասարակ էրեխեքի «ինքնագորհ» արարքները կամ ցանկությունները (երբ օրինակ քյորփա էրեխեն խղճում ա մեծին ևն) իմ վրա ահավոր են ազդում:

Նույն ձեվ էլ, **Ծերունու ու ծովի** սկզբի ու վերջի դիալոգները քանի անգամ կարդամ՝ էնքան անգամն էլ լաց կըլնեմ, որ էտ 8 տարեկան քյորփա էրեխեն էտ աստիճան խղճում ա էտ մոտ 80 տարեկան ծերունուն, ու հոնգուր-հոնգուր լաց ա ըլնում, որ ծերունին էտքան տանջվել ա:

Թե որ մեկնումեկին պատմեմ Էդվարդ Գրիգի դաշնամուրի առաջին կոնցերտի գրելու պատմությունը, պատմելուց անպայման լաց կըլնեմ:

(Ասում են, որ Գրիգն անտառում ման գալուց ա ըլնում ու, չեմ հիշում, մի սունկ թե ինչ հավաքող փոքրիկ աղջիկ ա տենում: Գրիգն էս աղջկան խոսացնում ա, ու աղջիկն ասում ա, թե էտ օրը իրա ծնունդն ա, ու Գրիգին ասում ա. «Բա դու ընձի ի՞նչ նվեր ես տալի»: Գրիգն ասում ա, որ մոտը նվեր չունի, բայց որ աղջիկը դառնա 17 տարեկան, ինքը իրա ծննդյան օրը իրան մի լա՛վ նվեր կտա:

(Էս աղջիկը մեծանում ու նշանվում ա իրանց գյուղի մի ջահել տղու հետ, ու էս տղեն իրա նշանածին հենց աղջկա ծննդի օրը տանում ա Օսլո, Գրիգի համերգին: Գրիգն էտ վախտ նոր ա մեռած ըլնում, ու որ համերգն սկսվում ա, համերգը վարողն ասում ա, թե էտ օրը, առաջի անգամը, նվագելու են Գրիգի Դաշնամուրի կոնցերտը, ու որ Գրիգը էտ կոնցերտը նվիրել ա էսինչ գյուղի էսինչ աղջկա ծննդին, ում ինքը խոսք ա տվե, որ էտ նվերը կտա: Կոնցերտն սկսվում ա, ու էս աղջիկը կոնցերտի սկզբից մինչեվ վերջը հոնգուր-հոնգուր լաց ա ըլնում: Էս փակագծի մեջի տողերը գրելուց՝ էլի լաց էղա):

(Նույն ձեվով էլ Թումանյանի **Գիքորն** ու սրա պես բաներն են ազդում վրաս): Էս մի ոտանավորն էլ ա մեկ-մեկ ըտենց ազդում:

Որբը թռչուն ա: Թումանյանի մոտ կա՛ **ճշում էր որբը աղեկեգ: Շարավը** թարախաջուրն ա:

Վերնագիրը դրել էի 1988-1998, որտեղ հենց գիդեի, թե որբերի վիճակը մինչեվ 1998 թիվը լավանալու ա: Հետո էս ժամկետը հա՛ շատացրի, հետո էլ տեսա, որ որբերի ու անտերների վիճակը չի դզվում, ու ժամկետը երկարացրի մինչեվ 2088 թիվը, այսինքը, երկարացրի մի դար: Աստված չանի՛ էսի է՛լ կասկածելի ըլնի: Թո սխալվողը ե՛ս ըլնեմ:

Էս գիրքը վերջի անգամը ստուգելուց մտքովս անցավ, որ Հայաստանը մի 20 տարի հետո չի ըլնելու: Իրոք, մինչեվ էս վերջի հեղափոխությունը Հայաստանում 3 միլիոն հայ կար, ու էս 20 տարում մեկ ու կես միլիոնը իրա երկիրը թողեց ու գնաց: Էթալու էս տեմպը չի քչանում, ու չի է՛լ քչանա, որտեղ հույս չկա, որ էս երկրի կարգը կփոխվի:

Թե որ էտ մեկ ու կես միլիոնը մի եղեռնով կոտորվեր, մենք ահավոր աղմուկ աղաղակ կանեինք: Բայց մեր երկրի տնտեսության համար սրանց էթալն ու կոտորվելը նույնն ա:

Հաստա՛տ եմ համոզված, որ էսի հզոր ոտանավոր ա:

Դու պաշտում ես, պաշտո՛ւմ – մորթի բարեխնամ.

Ամե՛ն-ամեն վարկյան՝ դու շոյում ես ոսկի –

Ոսկի՛ հորթիդ մորթին:

Յավի հոգին մրրկում՝ խնդությո՛ւն ես հերկում,
 Դիպկներիդ գրկում ոսկորներդ փրկում –
 Խնջույքների գրկում
 Մորթդ բարեխնամ
 Ձանձրույթից գրկում –
 Բայց կարա՞ս գրկես արոր ու որբին:

Արի էթանք մեր տուն, տես ինչե՛ր եմ գրկում,
 Գիշերները արթուն՝ տես ինչե՛ր եմ կերտում,
 Ի՛նչ աղոթք եմ կարդում –
 Ու տես, թե ո՛նց եմ մրմուռի՛ց հարբում:

Գնա՛ց, գնաց անցավ ի Ամենավերին,
 Վերի՛ն Երուսաղեմ, Վերի՛ն Երուսաղեմ:
 Ձմե՛ռ, մացառ ու փուշ – այգուց արո՛ւն քաղեմ՝
 Ցանցա՛ռ-ցանցառ շաղեմ անտեր շիրիմներին:

Արի հմի՛, հմի՛ էթանք –
 էթանք ուղի՛ղ մեր տուն...

Մարտ ու մայիս – դառա՛ն, դառա՛ն –
 Շարա՞վ դառան,
 Արտերը – սե՛վ ու սե՛վ ու սե՞վ ու
 Մոխրացան,
 Դեղձանները – սե՛վ ու սեվացան,
 Ձմե՛ռ-ձմե՛ռ, ձմե՛ռ,
 Ու մատուռները –
 Լրի՛վ մնացին օշինդր ու գորտին:

Շարավահոտ սնար, ոչ ճար ու ոչ հնար,
 Սեվ ցա՞վ ու անհնար: Թո կենդանի մնար.
 Թո կենդանի՛ մնար –
 Ամեն օր ծեծե՛ր իրա խեղճ որբին:

Արի էթանք մեր տուն, ուր ապակե ցրտում
 Մղձավա՛նջ եմ հերկում,
 Գիշերները արթուն, սեվ շարավի գրկում
 Դժոխքնե՛ր եմ կերտում –
 Դժո՛խք, կարիճ ու օձ,
 Դժո՛խք, կարիճ ու օձ.

Արի էթա՛նք, էթա՛նք –
 Որ ժպիտդ դաջվի ցավերի պորտին:

Դու շոյում ես որդուդ, դու շոյում ես մարդուդ,
 Դու շոյում ես դաժե – հարուր հազարանոց
 Շինշիլայի մորթին –
 Բայց կարա՞ս շոյես անտերունչ որբին:

9. ՇԱՐԱՎ ՈՒ ՇԱՐԱՎ

1988-ի շարժման առաջնորդների ու հին սիստեմի քանդվելու պատմությունն ա, բայց սրիկա սա՛ղ առաջնորդներին է՛լ սազում ա, ու ափսոս, որ չի հնանում: Ըստ էության, գրական քՖուր ա:

Մերոնք կարելիոր բաները սովորելու ժամանակ չունեն, որտե՛վ սաղ էլ իրանց անսխալ մարգարե են համարում, ու իսկական մարգարեներին՝ Սոլոնին, Սոկրատեսին, Հայեկին, Միսեսին, Մենգերին, Ադամ Սմիթին ու սրանց հետևորդներին – չէ: Որտե՛վ որ սրանց ու սրանց պես մարդկանց մարգարե համարեն, ու ժողովուրդն էլ սրա՛նց ճանաչի ու սրա՛նց ասածներն իմանա, բա իրա՛նց ի՞նչ կհամարի:

Մի քաղաքործիչ կա, Արշակ Սաղոյան անունով: Երբ մի անգամ ասի, թե.

– Ա՛յ Արշակ, դու ուզում ես դառնաս պրեզիդենտ, բայց գիդե՞ս, թե կոնկրետ ի՛նչ պտի անես:

– Բա դու գիդե՞ս, – հարցրեց ինքը:

– Գիդեմ, – ասի ես:

– Դե որ գիդես, – ասեց Արշակը, – ասա, մենք է՛լ իմանանք:

– Էտի երկար ա, – ասի ես: – Էտի գիտություն ա, ու գրած ա մի 10-15 գրքի մեջ, – ասի ես: – Թե ուզում ես իմանաս, պտի դրանք կարդաս ու դրանց մեջինները սովորես: Ուզո՞ւմ ես, ասեն թե էտ ո՞ր գրքերն են:

– Բայց էտքան ժամանակ չկա, – ասեց Սաղոյան Արշակը, ով արդեն մի 15 տարի քաղաքործչություն էր անում, ու որ տարին մի գիրք է՛լ կարդար, էտ գրքերը կարդացած կլլներ:

Շարավը վերքի թարախոտ հեղուկն ա, բագին-ը տաճարն ա: Ապակի, շիշ ու շուշա բառերը փոխառություն են պարսկերենից [տես ՀԱԲ-ը, [7]-ը]: Չեմ հասկանում, թե խի՞ ա կարելի, որ ապակի-ն ու շիշ-ը համարենք թույլատրելի ու սիրուն, իսկ շուշա-ն՝ գռեհիկ ու անթույլատրելի:

Իմ լավ ոտանավորներից մեկն ա:

Վռա՛գ անցար ախր, պարո՛ն Պարուր Սեվակ –
 Շարականին արդեն սեվ շարա՛վ ա սառե,
 Սիրամարզն ա դառե՛ սարկավազ ու ավազ,
 Ու շմել ա Վերինն ու երկնքին թառե,
 Երիզորդ ա ներկան՝ բառե՛՛ր, բառե՛՛ր, բառե՛՛ր –
 Ու մատուռ ու տաճար՝ խոզանոց են դառե,
 Հարդագողն էլ հմի՛՛ էպիզոդ ու դրվազ –
 Վռա՛գ անցար ախր, պարո՛ն Պարուր Սեվակ:

Շունը՝ հագած անմե՛ղ-շենշո՛ղ գառան մորթի՛
 Շարավածին շուրթով շարական ա երգում.
 Յանի. «Փառք ու պատիվ՝ պոռնիկ ոսկի հորթին»,
 Ու շարա՛վ ա հմի՛՛ շողակաթի խորքում:

Շնանում են պոռնկածին շնե՛րն ամեն,
 Ու փսիլքն ա փրփուր՝ շարավածին շուրթին,
 Դուռ ու շուշա չկա, որ ջարդուխուրդ չանեն –
 Մատաղացու գառը՝ շան քեֆերին մորթին:

Ըես ա՛ խաչը ձեռին՝ օրհնելո՛ւլ ա խաբում:
 Զավակ-մեր ու մանուկ՝ մոտ են գալի աջին –
 Բառե՛՛ր, բառե՛՛ր, բառե՛՛ր – սեվ շարավ ա թափում
 Ու թառում ա խաչին ու թափածը լափում –

Անմեղի՛ն ա ջոկում ու խաչում ա խաչին:

Վռա՛գ անցար ախր, պարո՛ն Պարուր Սեվակ –
Բագին մտան – չախկալ ու շո՛ւն-շարավահաչ,
Շարականի տեղը շարա՛վ մնաց մենակ,
Վարդավառին – մենակ ժանտախտ – ցավաշառաչ:

Ասել եմ ու էլի՛ կասեմ, որ ի՛մ կարծիքով Հրաչ Սարուխանը Չարենցից հետո հայ ամենագորավոր պոետն էր, բայց ճանաչված չի, չնայած հրատարակվում ա հլը 1960-ական թվերից, ու մի քանի գիրք ունի: Մրա պատճառը մեր գրաքննադատ ու գրականագետ կոչվածներն են, ովքեր չեն տեսնում, որ Հրաչի պոեզիան ուղղակի գորավոր ա:

Մյուս պատճառն էլ երեվի էն բանն ա, որ Հրաչը չդառավ իրա «ժամանակի շունչը»: Երեվի պարտադիր ա, որ գրողը համ էլ ակտիվ ու ազնիվ քաղաքացի ըլնի, իսկ Հրաչը պասիվ ա:

Հրաչը առաջինն էր, ով հասարակ բաների մեջը պոեզիա տեսավ, ու դրանք սարքեց գերազանց ոտանավոր: Հրաչը կարա գրի, օրինակ, իրա շան հաչելու առիթով, կամ տենա, որ մի անտեր-անտիրական պառավ են թաղում, ու զգա էտ բանի ողբերգականությունն ու էտի դարձնի ոտանավոր:

Հրաչի էտ տեսակ էրկու գերազանց ոտանավորը [25] դնում եմ ըստե, ու կողքներն էլ դնում եմ իմ արած լեզվական աննշան խմբագրությունը, որտեվ, իմ կարծիքով, դրանից ոտանավորները շահում են, ու ավելի կենդանի են դառնում:

Հրաչյա Սարուխան – ԻՄ ՇԱՆԸ

Մարդ ես ծնվել, թշվառական,
Սակայն...ինչո՞ւ այդ տեսքով:
Քեզպեսները դիմակ հագան,
Ի՞նչ էղավ քեզ, մարդ ես, տո:

Չէի՞ր լսել ասացվածքն այն,
Թե՛ լավ է ուշ, քան երբեք...
Ուշն էլ անցավ փույ ու ունայն.
Ոչ դիմակ ես, ոչ էլ՝ դեմք:

Էլ հարկ չկա գանգատվելու՝
Ծանրաբարո մի հաչա...
Առ իմ դեմքը, կրիի հլու,
Անունդ դիր Հրաչյա:

Հրաչյա Սարուխան – ԻՄ ՇԱՆԸ

Մա՛րդ ես ծնվե, թշվառական,
Բայց արք խի՞ էտ տեսքով:
Քուպեսնե՞րը դիմակ հագան,
Ի՞նչ էղավ քեզ, մա՛րդ ես, տո՛:

Չէի՞ր լսե ասացվածքն էն,
Թե՛ լավ ա ուշ, քան երբեք...
Ուշն էլ անցավ, փույ ու ամեն.
Ոչ դիմակ ես, ոչ էլ՝ դեմք:

Էլ հարկ չկա գանգատվելու՝
Ծանրաբարո մի հաչա...
Ա՛ռ իմ դեմքը, կրի՛ հլու,
Անունդ դիր Հրաչյա:

Հրաչյա Սարուխան – ԱՆՍՊԱՌՕԲ

Առհասարակ, որ տեսնում եմ, որ Հրաչին չեն նկատում, ոնց որ հենց ընձի վիրավորած ըլնեն:

Ախր ինչքա՞ն կարելի ա, որ մեր դասագրքերի մեջը աննշան պոետի գործերը դնեն, իսկ Հրաչի պես հանճարեղ պոետին չտենան:

Հրաչը գրում ա՝ **տո, հաչա, արին, փոխանակ՝ հաչի՛ր, արեցին:** Ուրեմը, կարար է՛լի բառ փոխեր: Աբեղյանի ասելով, –**բար, –որեն ու –ապես** մասնիկներով «մակբայները» ռուսերենի ազդեցությունով են, ու սխալ են: Աբեղյանն ա ասում, թե **հայերենի ածականն ու մակբայը ձեվով լրիվ նույնն են:** Մրա՛ համար եմ **մոլեռանդորեն-ի տեղը գրե՛ մոլեռանդի պես:**

Արդեն ծաղկահող վերմակի
տակից
Շուրթերն աղոթք են շննջում առ
Տեր...
Մի դեմք էլ զատվեց այս
արեգակից՝
Մի հավատացյալ մարեի
պատկեր:

Թափորը ցրվեց. և ոչ մի սեղան –
Հոգեհանգստյան գինու ու հացի...
Մոլեռանդորեն հուսախաբ եղան
Ողորմաթասի երկու մուրացիկ:
Եվ տեսավ մարեն. այդ նույն
երեկո,
Մուրացիկները, փա՛ռք տալով
հողին,
Իր ծաղիկների վաճառքից հետո

Կոնծահեղձ արին «Մոսկովյան օղին»:
Արդեն ծաղկահող վերմակի տակից
Շուրթերն աղոթք են շնջում առ Տեր...
Մի դեմք էլ զատվեց էս արեգակից՝
Մի հավատացյալ մարեի պատկեր:

Թափորը ցրվեց. ու ոչ մի սեղան –
Հոգեհանգստի գինու ու հացի...
Մոլեռանդի պես հուսախաբ էղավ
Օղորմաթասի երկու մուրացիկ:

Ու տեսավ մարեն. էտ իրիկունը,
Մուրացիկները, փա՛ռք տալով
հողին,
Իր ծաղիկների վաճառքից հետո
Կոնծահեղձ արին «Մոսկովյան օղին»:

10. ՄՏՈՒԻՊԻՆՅԱՆ ՎԱԳՈՆԸ

էսի սկսվել ա ընդհանուր գաղափարից: Սրա ստարտը չեմ հիշում, երեվի ինչ-որ ասոցիացիայից առաջի տողն էլել ա, ու իրա հետեվից էլ բերել ա մնացածները:

Մեկ-մեկ էս ոտանավորի առիթով հարցնում են ընձի. «նստե՛լ ես»: Չէ իհարկե, ոչ մի անգամ, նույնիսկ մեկ-երկու ժամ: Բայց ախր բան պատմելու համար՝ պարտադիր չի, որ անպայման քու հետ պատահած բանը պատմես: Ծիշտ պատմելու համար պտի կարենաս՝ ուրիշի ցավ ու դարդը քո՛ւ վրա վեկայես. խրա համար քեզ պտի դնես էս ուրիշի տեղը:

*Սկզբում, մոտ 20 տարի, Ի՛նչ անեմ, Ջանդա՛մը տանեն բառերի տեղը գրել էի՝ **Տո դե՛ տանո՛ւմ են, տանե՛ն, վրեն, թե չեն տանում:** էս 20 տարում երեվի մի քսան անգամ էս **ջանդամ**-ի ու էտ քֆուրի տեղերը փոխել եմ: Բայց տպագրության պատրաստելուց էս քֆուրը հանեցի:*

Ինչ վերաբերվում ա քֆուրին՝ Յարոսլավ Հաշեկը լա՛վ ա ասում, թե «կուլտուրական մարդը կարա ամեն ինչն էլ կարդա ու լսի, իսկ է՛ն մարդիկ, ովքեր էտ տեսակ բառերից հուշտ են ըլնում, էթում են ու հասարակական արտաքնոցների պատերի զզվելի մակագրություններն են անում ու հաճույքով կարդում»:

Ավելացնեմ. էս տեսակ մարդիկ փողոցում հազար ու մի քֆուր են լսում, բայց դրանցից ո՛վ ա ռիսկ անում սաստի քրֆողին: Ո՛չ մեկը: Որտե՛վ լավ գիդեն՝ սաստեցին՝ կարող ա հենց իրանց քիթ ու մռույթը ջարդեն: Ուրեմն էս տեսակ մարդը ընդամենը կեղծավոր ու երկու էրեսանի ա:

Ստոլիպինյան վագոնները ցարի մինիստր Ստոլիպինն ա ներմուծե, ու էս, պարզ ա, դրանցից չեմ տեսե: Սրա համար էլ սկզբում գրել էի «նայում եմ մեռնող ծառերին ու...»: Երբ էս էս մի ոտանավորը կարդացի օղորմածիկ քեռուս, ով էտ վագոնները նստելու դժբախտությունն ուներ, ինքն ասեց.

– Մեռու՛ծ ջան, դրանք ակուշկա չունեն, որ նայես դուս:

Ու էտ տողը փոխեցի:

Ու երբ ասում եմ, որ պոետը չպտի հորինի, ու պտի իրա գլխից դուս չտա ու պտի դետալները կյանքից ու մենակ կյանքից վեկայի, հենց ըսե՛նց բաներից եմ խոսում (թե՛ պտի գրեի. «Հենց այսպիսի բաները նկատի ունեմ»):

Գրողը պտի անկեղծ ըլնի համ էլ (ու առաջի հերթին), իրա լեզվո՛վ: Պտի անպայման անկեղծ ըլնի, որտե՛վ գրողը պատմող ա, ու իրա միակ միջոցը, իրա միակ գործիքն ու զենքը՝ լեզուն ա: Թե որ գրողի լեզուն հավաստի չէղավ, թե որ էտի հորինովի էղավ, այսինքը, կեղծ էղավ, ուրեմը, իրա պատմածը իրականություն չի: Որ պայթես է՛լ, իրականություն չի ըլնի:

Իմիջիպալոց, էս ոտանավորս համալսարանի հրեյանական տարեգիրք չմտավ մենակ էս ասածս քֆուրի համար: Հետաքրքիր ա, Հաշեկին կարելի ա՛, որ քրֆի, Շեքսպիրին կարելի ա, բայց Երեվանի Խնկո-Ապոր փողոցում ապրող Մեռու՛ծ Հարությունյանին՝ չի կարելի:

Երեվանի Պետական Համալսարանն էս հարցերում ամենահետամնաց հիմնարկներից մեկն ա, ինչքան էլ ասի, որ ամենաառաջավորն ա: Մնացած համալսարաններն էլ, հազար ափսոս, մենակ հետամնացությունո՛վ են հետեվում Երեվանի Պետական Համալսարանին:

Լա՛վ ոտանավոր ա:

Տանո՛ւմ են, տանո՛ւմ ու տանո՛ւմ:
Սիրտս կպայթի՛ որ որ ա:

Սաղիս կոխել են վագոնը,
Ո՛նց որ ձի, ոնց որ կով – վագոնով –
Ո՛նց որ մի ընտանի կենդանի –
Տանո՛ւմ են, տանո՛ւմ ու տանո՛ւմ:

Դաշտե՛րը, դաղձե՛րը, սարե՛րը,
Սարվոր ու ջրվո՛րը
Ու համ էլ –
(Կպայթի՛, ո՛ւր որ ա՛ կպայթի)
Ու համ էլ –
Դաղձե՛րը, դաղձե՛րը, դաղձե՛րը
Ու համ էլ –
Կանա՛նչը, դեղի՛նը, կարմի՛րը
Ու ե՛ս – ընդե չեմ,
Ու հմի
Սա՛ղ էլ երեվի –
Գարո՛ւն ու Զատի՛կ են անում:

Դպրոցում անունս –
Վերջինն էր մատյանում:
Ու չէղավ, մի տեղ, որ էրկու
չստանամ:
Տո ի՞նչ Տեր, ի՞նչ Աստված:
Չկա՛ –
Կա մենակ Սատանա:

Խփին է՛: Խփին ու... առա՛ն սաղ
Ու տարա՛ն –
Ոտ ու գլուխս էր մնացե մենակ –
Հմի էլ – սրա՛նք են
Տանո՛ւմ ու տանո՛ւմ:

Վերջինն ու վերջինն եմ –
Էս անգամ արդեն –
Ամենագլխավոր մատյանում:

Ո՞վ ասաց.
«Ծառերը կայնած են մահանում»:
Պառկել եմ ներքեվի նառերին ու,
Ու հուշս մեռնող ծառերին ու –
Ու սառում եմ ընձի ու ընձի,
Ու ցրտից –

Փետանում,
Ու հետն էլ –
Պառկա՛ծ մահանում:

Հես ա, այ –
Զոնի՛ն ենք մոտենում:

Էս թարախ հոտերին՝
Էլ չե՛մ դիմանում –
Ըստեղ հո –
Լուսն է՛լ ա հոտում ու խորթանում...

Ու ախր, ո՛նց որ ձի, ո՛նց որ կով –
Վագոնով –
Կոխա՛ծ ու կոխա՛ծ –
Տանո՛ւմ են ու տանում:

Բա էտ դաշտե՛րը,
Բա էտ հոտե՛րը,
Բա էտ խոտե՛րը –
Հիշում եմ ու
Սիրտս
Ծակո՛ւմ ա ու
Վախից կոշտանում,
Հիշում եմ ու
Հիշելուց –
Չե՛մ կշտանում:

Տանո՛ւմ են:
Տանո՛ւմ են ու տանում:

Է՛: Հմի էլ – մե՛կ դրին մատյանում:
Տո դէ –
Տանում են, տանեն,
Ի՛նչ անեմ,
Ջանդամը տանեն:

Թո էթա՛մ.
Թո էթամ ու հո՛ւր-հավիտյան
Թաղվե՛մ ու –
Կորե՛մ դրանց էտ
Հավիտյան թարախոտ
Մեղքերի մատյանում:

Բայց ախր տանո՛ւմ են –
Հաստա՛տ են տանում:

11. ԷԼ ՀՄԻ ԱՐԴԵՆ

Ստարտը սրա տակը դրածս Robert Frost-ի տողն ա էղե:

Ռոբերտ Ֆրոստն ԱՄՆ-ում համարյա նույն փառքն ունի, ինչ որ մեր մոտ Թուման-յանը: Ջոն Քենեդու թաղմանը Ֆրոստն իրա նոր գրած ոտանավորն էր կարդում, երբ քամին թուղթն իրա ձեռից թոցրեց տարավ: Ու Ֆրոստը, մեկ-երկու վարկյան դադարից հետո, սկսեց իրա հին ու սաղ Ամերիկային հայտնի մի ոտանավորը: Էտի ինքն ասեց լալով, ու Ֆրոստի հետ էլ լաց էղավ սաղ Ամերիկան:

Գրողը պտի անընդհատ ուրիշ վարպետ գրողներին կարդա, որ հա՛մ իրանցից սովորի, հա՛մ է՛լ իրա համար գրելու նոր թեմա քթնի: Ով ըսենց չի անում, նոր ու իրոք լավ բան չի՛ գրում: Օրինակ, Թումանյանը, անընդհատ ու առանց ամանչելու, սովորում էր, սովորում էր ռուսներից. ու թե որ կարում էր, սովորում էր եվրոպացիներից ու արեվելիցիներից:

Չարենցից հետո մերոնք ուրիշներից սովորելը թարգին, մինչե՛վ որ Հրաչ Սարուխանը նորից սկսեց ռուսներից սովորելը: Բայց ափսոս, որ մենակ Սարուխանը, ու ափսոս որ մենակ ռուսներից: Մնացածներն իրանց հույսը դնում են իրանց «հան-ճարի» վրա:

Որ մեր հայ ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսները մեր էս «հանճարեղ» պոետների պես անեն, ինչի՞ կհասնեն:

Ես համոզված եմ, որ գրողը, բացի իրա մայրենի լեզվից, պտի ուրիշ առնվազը երկու հզոր լեզու իմանա, ու լա՛վ իմանա, մեկը քիչ ա:

Շատ լավ ոտանավոր ա:

I have been one acquainted with the night...¹

Robert Frost

Հմի լուսին էլ ... սովոր՛ եմ մթին:

Աստղածովիս մեջ – թեվաթափ կաքավ,
Չեչոտ-սե՛վ լուսին, խավա՛ր ծիր-Կաթին:

Լուսըս էսո՛ր էլ սգաշոր հագավ –
Ու լա՛ց ա ըլնում խավարի նավից:
Թրծած թոնիրս դառավ խոնավ կավ:

Ու ո՞վ իմանար, որ ջրիկ կավից,
Որ կավի՛ց էի դոյակս սարքե:
Պատերազմներս հոգնե՛լ են արդեն կռիվ ու դավից:

Ընձառյուծներս վաղուց են աստկե:
Ուր դառա՛ շըրը՛խկ, դե՛մ առա պատին:

Էն ե՛րբ էր – մութը հեռու էր պառկե,
Բայց սա՛ղ մոմերս ջարդին ու մորթին –
Ու հմի լուսին – սովոր եմ մթին:

¹ I have been... – (անգլ.) Ես է՛ն մարդն եմ, ով ով ծանոթ ա գիշերվանը:

Ռոբերտ Ֆրոստ – ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ

Ամերիկացի պոետ Ռոբերտ Ֆրոստն է՛ն պոետներից ա, ումից անպայման արժի, որ մենք, հայերըս, սովորենք, թե ոնց լավ ոտանավոր գրենք:

Էս ամերիկացին էնքան լավ ա յուրացրե պարսիկ պոետների ռուբայի գրելու տեխնիկան, որ շատ ոտանավոր ունի, ինչերի սաղ տներն էլ ռուբայի են, իսկ մեր, այսինքը, արեվելյցիներիս, մոտքովն անգամ չի անցե, որ ըտենց ոտանավոր գրենք:

Մեր գլխավոր արտեմիստ Արտեմ Հարությունյանը Ֆրոստի էս ռուբայիներով գրած ոտանավորներից յանի թարգմանել ա, ու չի է՛լ տեսե, որ սրանք ռուբայու սիստեմով են գրած, ու որ սրանց ամեն մի հաջորդ տունն սկսվում ա նախորդի չհանգավորված (երրորդ) տողով: Ափսոս դրանցից ոչ մեկը չեմ թարգմանե, թե չէ՝ կդնեի ըստե: Սրա համար էլ ըստե դնում եմ Ֆրոստի մի ուրիշ ոտանավորի իմ թարգմանությունը [16]:

Թեկուզ գլուխգոլանություն կըլնի, բայց ասեմ. թե որ թարգմանությունը հայ պոետիայի մի ընտիր նմուշ չի, էտի բանի պետք չի ու պտի դեն քցես: Համենայն դեպս, գոնե հենց ինքը՝ թարգմանը, պտի համոզված ըլնի, որ թարգմանելով մի հայերեն ընտիր գործ ա սարքե:

Ֆրոստի էս ոտանավորը հզոր ա, ոնց որ իրա ոտանավորների մեծագույն մասը: (Ափսոս, որ իրա արձակին ծանոթ չեմ): Թարգմանությունըս է՛լ ա հոյակապ:

Իմ դեմ էլ մի օր անդարձ կփակվի դարբասը լուսի:

Ու թե որ տենան՝ լուսնակն ա խավար ամպին մոտենում,

Կամ էլ մայիսին շլորն ա խնդում, տենաս՝ ո՞վ կասի.

- Ըսենց բաները – ինքն է՛լ էր տենում:

Ու որ թունդ շոգին խաժակն բազեն, անծպտուն-անձեն,

Արեվոտ օդի սիրտը մեխվելով, թեթեվ ու ազատ,

Իջնի ու թառի ժայռին կռացած մասըրի թփին, երեվի ասեն,

– Իրան է՛լ էին սրանք հարազատ:

Ու մաշված, բայց տաք, թե մթնշաղին լուծվեմ խավարում,

Երբ որ անտառում, վախվորած ոզնին, նայում ա՝ ի՛նչ կա,

Կարո՞ղ ա ասեն,

– Ըսենց անմեղի համար էր, որ հա կռիվ էր անում,

Բայց ինչի՞ հասավ – իսկ հմի՞ չկա:

Ու թե որ լսեն, որ էլ հա՛ սուս եմ, իրանք էլ շեմին –

Աշկ քրցեն ձմռան ծով-ծով աստղերին ու լա՛վ իմանան,

Որ էլ ո՛չ մի օր ընձի չեն տենա, կգա՞՞ մտքներին.

– Էս խորուրդն ինքն է՛լ հաստատ կտենար:

Ու երբ մթան մեջ խլաձեն թնդա զա՛նգն իմ օրհասի,

Պողթկուն քամին էլ վախտ-վախտ էտ ձենը կուլ տա ու մարի –

Ու է՛լի թնդա, – այ է՛տ արանքում, – տենաս ո՞վ կասի.

– Հմի չի լսում. բայց որ լսում էր, հաստա՛տ համարի:

Գլուխ 3 ԿԱՆՏՈՐԻ ՈՒ ՊԼԱՆԿԻ «ԹԵՈՐԵՄՆԵՐԸ»

3.1 ԽԱՎԱՐԱՄՈՒԼՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՕՐԵՆՔՆԵՐԸ [16, 19]

Խավարամոլության պահպանվելու առաջին օրենքը

Գերմանացի հռչակավոր մաթեմատիկոս, բազմությունների տեսության հիմնադիր **ԳԵՈՐԳ ԿԱՆՏՈՐԸ** (1845-1918) ասում ա.

«Եթե հանկարծ մարդկանց մեծ մասը ինչ-որ մի սխալ եզրակացություն ա անում, համարյա անհնար ա, որ դրա սխալականությունն ապացուցվի: Ու ինչքան անհեթեթ ըլնի էտ եզրակացությունը, էնքան ավելի հավատարիմ են մնում դրան»:

Խավարամոլության պահպանվելու երկրորդ օրենքը

Մաքս Պլանկը (1858-1947), ով Գեորգ Կանտորի ազգակից ու քվանտային ֆիզիկայի հիմնադիրն ա, Կանտորի ասածից ավելի թունդ բան ա ասում.

«Իսկական գիտական տեսությունը ոչ թե է՛ն պատճառով ա հաղթում, որ դրա հակառակորդները համոզվում են, որ հենց է՛տ տեսությունն ա ճիշտ ու լուսավորվում են, այլ միայն է՛ն պատճառով, որ էտ հակառակորդները կամաց-կամաց մեռնում վերանում են, իսկ նոր սերունդն էտ տեսությունը (բառացի) մոր կաթի հետ ա յուրացնում»:

Խավարամոլության պահպանվելու երրորդ օրենքը

Լուդվիգ ֆոն Միսեսը մեր քաղաքակրթության (ի՛մ կարծիքով) ամենահանճարեղ մտածողի՝ Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկի ուսուցիչն ա (ով ինքն էլ պակաս հանճարեղ չի) ասում ա.

«Մտածելու ունակություն ունեցող մարդու ու էս ունակությունից զուրկ մարդու արանքը անանցանելի անդունդ կա»:

Ողբերգական ու անխուսափ ճշմարտություն

Կան ժողովուրդներ, ում հիմնական կրթությունն էնքա՛ն ա թերի, ու բնավորությունն էլ՝ կրքերի, տգիտության ու կեղծ արժեքների է՛ն տեսակ մի տարօրինակ խառնուրդ ա, որ դրանք չեն գտնում իրենց գլխին էկած փորձանքների պատճառներն ու զոհվում են իրենց գլխին էկած չարիքների ծանրությունից:

Ալեքսիս դը Թոքվիլ

3.2 ՄԻ ԵՐԿՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵՐ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ

Զարմանալի ա, բայց էս գրքիս ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ վերնագրի տակ իմ տվածս հարցերը մինչեվ էսօր ոչ մի հայի մտքով չի անցե, չնայած էս մտքին համարյա

հասնող՝ երեվի էղել աս: Ասածս հաստատելու համար բերում եմ Հովհաննես Թումանյանի մի խոսքը, ինչը Թումանյանն ասել աս 1910 թվին [11], այսինքը, արդեն լրիվ հասուն տարիքում:

Շղատառերն ու թավատառերն ու ձեվավոր փակագծի մեջիններն ի՛մն են:

«Էս մի քանի տողով ձեզ, մեր գավառներում լույս տեսնող թերթերին դիմելով {*լրիվ պարզ աս, որ Թումանյանը դիմում աս մեր էն օրերի հայ գրողներին – Մ. Հ.*}, մեր լեզվի ու գրականության առողջ զարգացման համար, ձեր լուրջ ուշադրությունը հրավիրում եմ հետեվյալ խորհուրդների վրա:

«Առաջինը. դուք ապրելու եք ժողովրդի մեջ, ժողովրդի համար և խոսելու եք նրա հետ: Ի՞նչ լեզվով եք խոսելու. շատ կարեվոր խնդիր է: Դուք այժմ խոսում եք **գրական կոչված լեզվով**, էն լեզվով, որով խոսում են Թիֆլիսի ձեր մեծ քույրերը {*այսինքը՝ թերթերն ու ամսագրերը – Մ. Հ.*}:

«Բայց իմացած եղեք, որ էս լեզուն {*այսինքը, գրական կոչված լեզուն – Մ. Հ.*} **չոր ու ցամաք բառերի մի տերփոհորմեա է** {*փխբ. անվերջ շարան է – Մ. Հ.*}, **անփոք ու անկենդան**: Մի շփոթվեք {*խաբվեք – Մ. Հ.*} սրա քաղքենի հավակնոտությունից ու գովասանքից {*գլուխգովանությունից – Մ. Հ.*} և անտես մի՛ անեք կամ վերեվից մի՛ նայեք է՛ն գավառների կենդանի բարբառներին, որոնց մեջ դուրս եք եկել գործելու:

«Էդ բարբառներից ամեն մինը ավելի շատ ուժ ու կենդանություն ունի իր մեջ, քան մեր եղած գրական լեզուն:

«Սա դեռ չի կազմակերպված և չի էլ կազմակերպվելու, մինչև որ մեր ժողովրդի լեզուն իր բոլոր դաշտերից, սարերից ու ձորերից կենդանի վտակներով գա միանալու սրա մեջ **և բոլոր բարբառները հանդես բերեն իրենց գանձերը**: Այժմ դուք փոխանակ էս բնական ու առողջ ճանապարհով գնալու, **հակառակ կգնաք** և փոխանակ ժողովրդի՛ լավը մեզ տալու, **մեր սխալներն ու դատարկ, ողորմելի ֆրագները կտարածեք նրա մեջ**:

«Ես չեմ ասում զուտ բարբառով գրեցեք ձեր հոդվածները, բայց մեծ իրավունք տվեք բարբառներին, նրանց բառերին, ոճերին ու ձեվերին: Իհարկե, շնորհքի բան է, թե ով ինչքան ու ինչպես կօգտվի էդ կենդանի աղբյուրներից, **բայց ինչ էլ լինի ավելի լավը կլինի, քան եղածը**: Եվ էս է ուղիղ ճանապարհը ավելի լավն ունենալու:

«Երկրորդ խորհուրդը: Ուրիշ երկրներում գիտական ընկերություններ, ակադեմիաներ կան, որ զբաղվում են իրենց ժողովրդի հանճարի ծնունդները խնամքով հավաքելով, իրենց մայրենի և ընդհանուր գրականության ու գիտության համար գանձարան ստեղծելով: Եվ դրանց մեջն է, որ կգտնենք ամեն մի ժողովրդի ճշմարիտ կյանքն ու պատմությունը, բնավորությունն ու աշխարհայացքը, շնորհքն ու հոգին:

«Մեզանում չկան էդ տեսակ կարող հաստատություններ և ով գիտի երբ են լինելու: Մեր Ազգագրական Ընկերության կարեվորությունը քիչ է հասկացված և քիչ մարդ կա նրա մեջ աշխատող: Ու՛ր էր, թե մեր Ուսուցչական Միությունը իր ամեն տեղ ցրված անդամ ուսուցիչների ձեռքով մտածեր հավաքել էդ անգին գանձերը կամ թե մեր էջմիածինը մի գեղեցիկ կարգադրությունով հրավիրեր ուսուցիչներին ու կանոնավոր գրել իմացող քահանաներին՝ օր առաջ գրի առնել ու մի տեղ հավաքել էդ բոլորը: Օր առաջ եմ ասում, որովհետեվ արդեն մոռացվում ու կորչում են. հին սերունդը իր իմացածը հետը գերեզման է տանում, իսկ նոր սերունդը՝ չգիտի:

«Եվ այժմ, քանի գործն էս դրության է, դուք, գավառական թերթերդ, ահագին գործ կարող եք կատարել: Ձեր էջերում մշտական տեղ հատկացրեք հայրենի երկրի ժողովրդական բանավոր գրականությանը, նրա ամեն տեսակ

ավանդություններին, հեքիաթներին, առակներին, առածներին, հավատալիքներին, սովորություններին, որ հեշտ ու միշտ կարող եք առատ ստանալ ձեր շրջապատից, և ժամանակի ընթացքում մեծ նյութ կդիզեք:

«Եվ ձեր շատ բաժինները՝ եթե վաղը չէ, մյուս օրը կորցնեն իրենց արժեքը, բայց էդ անկյունը քանի գնա, ավելի ու ավելի կարեվորություն կառնի, ու ապագա սերունդը, մանավանդ գրականությունը, շնորհակալ կլինի ձեզանից ու ձեր հրատարակությունները կպահի իր գրադարանում լավագույն գրքերի հետ»:

12. ԱՆՀԱՍՅԵ ՈՒ ԱՆՊԱՏԱՍԻԱՆ

Իրական պատմությունն ա (ոնց որ 13-18-ը): Գրելուց ահագին անց տեսա, որ ֆինալը երեվի Հ. Թումանյանի ազդեցությունն ա: Մեր բարբառով էլ են ասում՝ **դռկից-դրկից (տրկեց), այսինքն՝ հարեվան, դուռը կից:**

Իմ մայրենի բարբառը՝ Սալմաստի բարբառն ա, Մայիշկա գյուղի խոսվածքը: Մայիշկեցիները հլը «հիշում են», որ 1829 թվին գաղթել են Պարսկական Հայաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ ու Սավրա գյուղերից: Լեզվի ինստիտուտի «Ատլասով» ստուգեցի. Մայիշկայի խոսվածքը բռնում ա Փայաջուկի խոսվածքին:

Պապուս պապու հերը, Մելիք-Շահբազով Խանոն, Մայիշկան հիմնողներից մեկն ա: Սրա որդիները Շահբազն ու Աբրահամն էին, Շահբազի որդին՝ Հարթոնը (Հարությունը), ում շառավիղներից մեկը ես եմ:

Գյուղում մեր տոհմին ասում են՝ Շահբազներ (Շայբազենք): Եռունականների ստալինյան օրերին շահբազներից մի քանի ընտանիք, վախենալով, որ իրանց կուլակ կհամարեն ու կաքսորեն, ազգանունը փոխել ա, դարձրեց Հարությունյան:

Պապս 1-ին Աշխարհամարտի մասնակից էր, ու ոնց որ սաղ շահբազներն են, անխուճ աշխատավոր էր, ու իրա գործը՝ հողը, այգին, անասունն էր, անընդհատ ու օրնիբուն, լուսամութից մինչեվ ուշ իրիկուն, երբ արդեն մութ էր, ու էլ գործ անելու հնար չկար:

Գարունը, ամառն ու աշունն աշխատում էր, կարասները գինի, արաղ, յուղ ու մեղր, դավուրմա լցնում, պանիր, միրգ ու ամեն ինչ պաշարում, ու հետո սաղ ձմեռը խմում էր: Ծխում էր համարյա մինչը մահը՝ 90 տարեկանը:

Իրա մահով չմեռավ: Տուն էինք սարքում (մինչեվ հմի էլ կիսատ ա, չկարացի սարքեմ մինչեվ վերջը, ու երեվի չեմ է՛լ կարա), տանը չենք էղե, նստել ա երկրորդ հարկի բալկոնը, որ տախտակներից քաշած ծուռումուռ մեխերը դգի, որ մենք դրանք դեն չքցենք. ափսոսը գալիս էր: Ոնց ա էղե, ընգել ա:

Ես որ քաղաքից էկա, ինքը շրջկենտրոնի հիվանդանոցում պառկած էր, բերանն էլ լեզու չկար: Ընձի էն ձեվ մի հույս ու հավատով նայեց, որ էլ ասելու չի: Երեվի մտածում էր, որ արդեն «մեծ» մարդ եմ ու իրան կփրկեն: Էն վախտ էտի չհասկացա, հետո՞ գլխի ընգա, թե խի՞ էր ըստնց նայում, ու էտի մտքիցս դուս չի գալի:

Տատս խորթ էր, բայց ես էլ, օղորմածիկ ախպերս է՛լ, քուրքս է՛լ, մինչեվ 15-16 տարեկանը չգիդեհիք էտի, ու տատս մեզ շատ էր սիրում, մենք էլ՝ իրան, մինչեվ իրա մահը:

Պապս, սաղ ձմեռը, կամ հարսնիքի թամաղա էր, կամ էլ կնունք-մնունքի: Առավոտը շուտ վեր էր կենում, մի 100 գ արաղ էր խմում (մի կտոր հաց ու պանրով կամ դավուրմով ու հետն էլ անպայման սոխ), հետո դուս էր գալի փողոց, ու ով պատահեր, տուն էր կանչում, թե՛ խնամի, կամ քավոր կամ ամօղլի են, արի մի բարյուս անենք: Իրիկվա կողմն արդեն լավ էր ըլնում:

Տատս էլ պապուս խմելու վրա անընդհատ խոսում էր: Տատուս ծնգները ցավում էին, ու ինքը դժվար էր քայլում, ու ինչքան հիշում եմ, անընդհատ նստած էր: Նստում էր կամ մեր էրկու պատանոց «սրահը», կամ մեր բակը մի տեղ, կամ տան դեմը, մեր թթի վիթխարի ծառի տակ:

Իմ ոտանավորը լավն ա, իսկ Թումանյանի քառյակն ուղղակի հանճարեղ ա: Դե թո մեր արտեմիստները սաղով գան հավաքվեն ու Թումանյանի էս քառյակի պես մի քառյակ գրեն: Չե՛ն կարա:

**Երկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դրկից,
Թախծում են պաղ ու խորհում
Թե՛ ի՛նչ տարան աշխարհից:**

Հովհաննես Թումանյան

Պատկերնե՛ր, պատկերնե՛ր, պատկերնե՛ր –

Ոնց որ –

Կինոյի խունացած ու պղտոր ժապավեն...

Ու հես ա՛ մեշկ ու ծունգ փետացած,
 Օրերի աննշմար ավարտին մոտեցած,
 Հաշմանդամ տատըս ա մեր հին տան սրահում,
 Ու պապըս ջրում ա հորթերին,
 Ու լկտի հավերն են
 Թոնրատան բաց դուռը գրոհում,
 Ու անշուշտ, պատի տակ,
 Անջուր ու անընգեր,
 Անձրեվ ու արեվին ապավեն,
 Լուռումունջ թախծում ա չքավոր թթենին –
 Էրագին անշերամ երկրներ¹:

Ու տատըս հին քուրջը քաշում ա ոտներին,
 Ձեն տալի, հավերին քշում,
 Ու նորից դառնում ա մշուշված մտքերին,
 Մոլորվում օրերի որբացած փոշում,
 Ու գուցե հենց հմի –
 Գարոն՝ ա հիշում:

Կավածեփ ու գորշ ցանկապատ:
 Սրահի հատակին – արեվի շողերը կարկատան:
 Ու դեմի սարերը անապատ,
 Ու մեկ էլ, ո՞վ գիդի,
 Խնձորներն էս տարի բերք կտա՞ն:

Ու հետո, հետ գալով օրերի մահացած խորքերից,
 Նայում ա անկյունում կուշ էկած խնոցուն,
 Բողոքում ակնբախ ու անտես վերքերից,
 Դառնում ա հեռացող ծերունուն,
 Տնքում ա, հառաչում, փնթփնթում, անիծում. –

–Ա՛յ, գնա՛ց: Տուն դառավ –
 Էլի կատարը տա՛ք կըլնի.
 Սեվ անտա՛կն անցներ – չգա՛ր:
 Գոնե վերջանա՛ր էս անտեր գինին...
 Ա՛խ Աստված,
 Յած գայիր, խփեիր գլխի՛ս,
 Գետնով անեիր –
 Պրծնե՛ի, էթայի:

Գնացին:
 «Սեվ անտա՛կն» անցան միասին –
 Շիրիմներն իրար դրկից:
 Հաշտ ե՞ն, թե՞՞ հավերժ թշնամի մնացին –
 Լուր չկա՛ գետնի տակից:

¹ Շերամի որդին թթի տերեվով են կերակրում:

13. ՄԱՀՎԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Համարյա դոկումենտալ պատմություն ա, Հին Մալիշկայի մասին (տես 12-ը, ու 14-18-ը):

Հին գյուղը պարսկական տիպի էր, տների կտորները խումբ-խումբ իրար կպած, խմբերի արանքները նեղ ու ծառումուռ քուչա: Մինչեվ հմի էլ էրագիս անընդհատ մեր հարեվանի կտորով եմ իջնում մեր էն մյուս փողոցը: Էս փողքը քուչեքը մեկ-մեկ էնքան նեղ էին ըլնում, որ լավ բարձած էն է՛լ չէր կարում անցնի սրանցով:

Գյուղի մեջ մենակ մի՛ լեն փողոց կար, որ Սովետի վախտ էին սարքե: Էս փողոցի վրա կոյխոզի գրասենյակն էր, ու կինոն ու գրադարանը: Մանկությունս էս գրադարանում ա անցե, ու ես դրա գրքերի տեղն ավելի լավ գիդեի, քան դրա վարիչը, Սենիկ տոտան:

Հմի էս տները չկան, գյուղը քանդել են ու իջե այգիները: Սովորություններն էլ կամաց-կամաց փոխվում վերանում են:

Որ ջահել էի, մանկությունից արագին բան էի հիշում: Հմի մանկությանս հիշողությունները քիչ-քիչ դառնում են առանձին ու աղոտ պատկերներ ու կամաց-կամաց ջնջվում էթում են, այսինքը, մեռնում են:

Էրագիս մեկ-մեկ տենում եմ հին գյուղի մի քանի պատկերը: Տենում եմ երեվի հենց է՛ն պատկերները, որ ամենախորն են տպվել ենթագիտակցությանս մեջ:

Տենում եմ, թե ոնց եմ գետի մեջը կանգնած սպասում, որ ջուրը դինամիտի սպանած ձուկ բերի ու ես էլ բռնեմ: Տենում եմ՝ թե ոնց եմ օձ բռնում, ու բռնելուց էս օձերը շատ անգամ կծում են ընձի:

(Գյուղում էրկու օձ բռնող կար, մեկը՝ Գասպարենց Վարազը, մյուսը՝ ես: Էրկուսս էլ, իրարուց անկախ, գլխի էինք ընգե, որ «ջրի» օձերը չեն կծում, ու մենակ էրկուսս էինք, որ դրանք բռնում էինք: Հետո սկսինք «ցամաքի» օձ, այսինքը, գյուրգա էլ բռնելը: Վարազը թարգեց օձ բռնելը, որտեվ գյուրգան հարձակվել էր վրեն, ու ինքը լավ վախեցել էր):

Մինչեվ 1940-ական թվերը դինամիտով ձուկ բռնելու բարբարոսական սովորությունը չկար: Հմի էսի փոխարինել են ավելի բարբարոսական ձեվով. գետի մեջը երկար ու մշտական լարեր են հարմարացրե, ու ձուկը էլեկտրական հոսանքով են բռնում: Թե դինամիտը մի քանի մետր շառավղով էր կոտորում մեծ ու փոքր ձուկը, ձկնկիրթն ու ամեն տեսակ որդ ու միջատը, հոսանքը գետի մի քանի տասնյակ ու նույնիսկ հարյուր մետրի ամմեն՝ ինչն ա կոտորում: Հետո էլ ասում ենք, թե կուլտուրական ժողովուրդ ենք:

Մեկ էլ շատ եմ տենում գյուղի այլանդակ հակասանիտարական զուգարանները:

Գյուղում, ամառվա իրիկուններն ամեն օր մի էրկու ժամ քամի էր ըլնում, ու էս քամին հող ու փոշին մարդու աչք էր լցնում:

Մրափը երեվի հնագույն հայերի քնի աստվածն էր, ու երեվի էս անունը կապ ունի հույների Մորփեոսի հետ (տես **Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական հավատքը**, հատ է, էջ՝ 33-ը, տես համ էլ էջ՝ 35-38-ը): Սալմաստի բարբառոմ էսօր է՛լ են ասում (մի քիչ նախատական ու վիրավորական երանգով) «էն մարդը գո մոփե ծառի տակը», այսինքը, «էն մարդը հրեն, քնել ա ծառի տակը»:

Իմ էս ոտանավորը լավն ա, բայց Խայամի էս մի քառյակն հանճարեղ ա: Թումանյանը հենց էս քառյակին ա պատասխան տվե, երբ գրել ա իրա էս 1 որ կա, ճի՛շտ ես ասում, թասըդ բեր քառյակը:

*Դաշտում բացվեց կարմիր լալան, թասըդ բե՛ր,
Յարիս գրկում ես պիտի լամ, թասըդ բե՛ր,
Թո վի՛ն ածեն, մենք էլ՝ խմենք վարդ գինի.
Թե որ պիտի փոշի դառնամ՝ թասըդ բեր:*

Օմար Խայամ, (1048-1122)

Քմահաճ, ոլորուն քամին,
Խճուղու ավազուտ հողի հետ խաղալով,
Խռպաձեն, հեվասպառ –
Շնչում էր հյուղերի ծերացած կողերին
Ու մինչեվ գիշեր –

Դադար չէ՛ր առնում, կամ էլ՝ ամանակ:

Գիշերը, անտարբեր սողալով,
Ծորում էր գյուղական կավածեփ հյուղերին,
Ու դանդա՛ղ, աննկատ –
Խավարը թորվում էր անապատ սարերին,
Ու հետո՛ լռվո՛ւմ, խոնարհվո՛ւմ, մոլորվո՛ւմ –
Մերվում էր տներին, ծառերին, կալերին:

Ու քարանում էր – դար ու ժամանակ:

Ու հետո, ոնց որ մի վիթխարի կրկեսի վրան,
Բուրգ էին դառնում աստղ ու լուսին,
Ու խոժոռ, թանձրասեվ ստվերը դիմացի լեռան –
Թաթերը ծուլ-ծուլ դնում էր պառաված դեզերի ուսին:

Ճղրի՛ դն էր լալի – երկա՛ր ու մենակ:

Ու մեկ-մեկ, երեփի հիշելով հորթերից մեկին,
Ճորտական թախծով մնչում էր արթնացած կովը,
Ու գյուղը, անհուշ ու հնազանդ խավարի ղեկին,
Ալարկոտ սուզվում էր Մրափի ծովը:

Լուսինը լսում էր գորտերին:

Իսկ էսոր ընդե – ավեր ա ու քամի:
Իսկ գյուղը, հի՛ն գյուղը,
Մահացած-տարագիր,
Բայց ախր հլը-որ կենդանի,
Կպել ա հուշերիս մկանին:

Ինչքա՞ն ա անցե – մեր վերջին համբույրի օրվանից:

Ու հես ա, ուր որ ա,
Սեվազգեստ մի թափոր –
Ընձի՛ էլ կտանի:

էտ օրը հին գյուղը կգրկվի – իրա էտ վերջի՛ օրրանից:

14. ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՏԱՐԱԳԻՐԸ

Դոկումենտալ ա (տես համ էլ՝ 12-13-ն ու 15-18-ը): Հին Մայիշկայի պատկերներից մեկն էմ նկարե: (Իմ կարծիքով, ոտանավորն է՛լ անկար, բայց նկարում ես բառերո՛վ):

Առհասարակ՝ Մայիշկան անապատի մեջ ա: Էս ոտանավորը Հին Մայիշկայի **ամառվա** «նկարն» ա: Ամառը համարյա մարդ չկար գյուղը, որտե՛վ սաղ էլ կա՛մ այգիներն էին, կա՛մ սարերը: Ցերեկն անավոր արե՛վ էր ու շոգ, ու էն օրերին ամեն ինչն էլ ոնց որ անշարժ ու քարացած ըլներ:

Մայիշկա գյուղի անունը, տեղացիների ասելով, յանի մե լիճ կը, այսինքը, մի լիճ կա կապակցությունից ա, բայց էսի ճիշտ չի՝ մի քանի պատճառով:

(Ներքե՛վի բացատրություններն ի՛մ ենթադրություններն են: Ես լեզվի պատմության մասնագետ չեմ, չնայած համոզված եմ (գուցե՛ սխալ), որ Էրեվանի բարբառի ու գրական ոճերի ու սրանց քերականության շատ լավ գիտակ եմ: Էս բացատրություններիս առիթով լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը Լեյդենից դիրողություններ ա ուղարկե ընձի, ու ես դրանք syllable տառատեսակով դնում եմ ձե՛վավոր փակագծերի մեջ, առանց իմ տեքստը փոխելու, որտե՛վ էսի շատ լավ դաս ա մեր «տնական ստուգաբանների» համար):

Առաջինը. Մայիշկայի շրջակայքում վերջին մի քանի հարուր տարին լիճ չի էղե, ա՛ռհասարակ:

Երկրորդ. Մայիշկա գյուղի խոսվածքում (ու Սալմաստի բարբառի մի 50 տարի առաջվա վիճակներում առհասարակ) լիճ բառը մեռած ա, լիճ բառի տեղը բարբառի կրողները ասում են գյուլ:

Երրորդ. Սալմաստի բարբառի հնչյունական օրենքներով մե լիճ կը բառերից արագ ասելով երե՛վի առաջանար **Մեխկյը** բառը, ինչից էլ, արագ ասելով, կառաջանար **Մեշկյը** բառը, (ինչը կխառնվեր **մեշկը = մեջք + ը** խիստ գործածական բառի հետ, իսկ էսի էլ անհնար կդարձներ գյուղի անունը) ճիշտ ոնց որ ինչո՛ւ համար կապակցությունը Մայիշկայի խոսվածքում արագ ասելով դառել ա շըմը՞ կամ շմա՞: {Լրիվ համաձայն եմ, որ դա ժողովրդական ստուգաբանություն է: Բայց առարկություններդ ու հակափաստարկներդ, ըստ իս, ինքնին գորեղ չեն: Հատկապես երկրորդն ու երրորդը: Լիճ բառը տարածված է ու հայտնի, ուստի Մայիշկայի խոսվածքում դրա ՀԻՄԻԿՎԱ բացակայությունը ուժեղ հակափաստարկ չէ: Հիսուն տարին էլ հերիք էր, որ բառը գործածությունից դուրս եկած լիներ: Ապա, ես համոզված չեմ, որ *Մեիճկա-ն պիտի *Մեշկյը դառնար: ինչո՛ւ համար > շըմը՞ արտացոլումը հատուկ՝ allegro կոչված անկանոն հնչյունափոխություն է՝ արագաբանություն, որ հատկապես այս տիպի հարցաբառերում ու ազգակցական բառերում է հանդիպում. պարտադիր չէ սովորական տեղանվան մեջ էլ նմանատիպ զարգացում ակնկալել:

{Ես *Մեիճկա մեկնաբանության դեմ կառարկեի նաև, մասնավորապես, բառակազմական ասպեկտով: Մի լիճ կա – այսպիսի կառուցով տեղանունը խիստ անհավանական ու տարօրինակ է. շատ տիպական է ժող. ստուգաբանության համար – ՀՄ):

Այնինչ, հմի բնիկները Մայիշկա բառը հնչում են Մալիշկյը:

Չորրորդ. Սալմաստի բարբառում անհնար ա, որ Ե ձայնը դառնա ռ, ու առաջինից հետո էսի ամենազորավոր կոչվանն ա: {Եթե սրանում համոզված ես, ապա այ սա ուժեղ կոչվան է – ՀՄ):

Գյուղի անունը, շատ-շատ հավանական ա, առաջացել ա արաբերեն Մալի շուկա կապակցությունից: {Որպես կապակցություն՝ դա արաբերեն չի. տես և ստորև – ՀՄ}: Իրոք՝ արաբերեն մալ բառը նշանակում ա՝ ապրանք, ունեցվածք: Հայերեն բարբառ-ներից շատերը ապրանք ասելով՝ նկատի ունեն տավար-ոչխարը:

{Իմիջիպալոց՝ ռուսերենը հայերենից ընդամենը մեկ-երկու բառ ունի փոխ առած, ու դրանցից մեկը հայերեն տավար բառն ա, ինչն ռուսերենում դառել ա товар, պահելով ապրանք իմաստն ու առաջացնելով товарняк բառը, ինչն սկզբում նշանակել ա իրար հետ ապրանք վաճառող): {ՀԱԲ-ում քննած այս ստուգաբանությունն ինձ համար դեռ պարզ չէ. բայց դա կապ չունի. դու հենվում ես Աճառյանի վրա ու իրավունք ունես – ՀՄ):

Իսկ Մայիշկա գյուղի հին տեղը մինչե՛վ էսօր էլ կա մի վիթխարի աղբյուր, ինչի ջուրը մի փոքր գետակ էր դառնում, ու էտ գետակը հյը իմ մանկության օրերին էլ կար: (Հմի դրա ջուրը բաշխում են գյուղին, ու գետակը դառել ա առու):

Էս աղբրի մոտակայքում ծառ ու թուփ կար, ու ենթադրում եմ (էս խոսքը Հրաչի դիտողությունից հետո եմ ավելացրե), որ էս տեղը շատ էր հարմար անասունի շուկայի

համար, որտեղ առուստուրը տևում էր մի քանի օր, իսկ ջուրը պետք ա թե՛ անասունին, թե՛ մարդուն: Արփա գետից էլ որ հեռացար՝ Մալիշկայի շրջակայքը լրիվ անապատ ա:

Հմի թե որ հիշենք, որ շուկա բառն է՛լ ա արաբերեն, ու թե որ Մալի շուկա բառերը Սալմաստի բարբառի հնչողությունով արագ-արագ ասենք, սրանք, շատ հեշտ ու արագ ու անխուսափ, կղառնան Մալիշկայը, երեվի էլ կասկած չմնա, որ Մալիշկա անունը Մալի շուկա-ն ա, մանավանդ որ արաբները Հայաստանում երկար են մնացել: Հավանական ա, որ փայաջուկցիների Մալիշկա գայուց առաջ էս տեղանունն արդեն էղել ա: {Արաբներենում շուկա՝ բառավերջի -ա-յով ձև կարծեմ չկա: Այդ վերջավորությունը սպեցիֆիկ ասորական / արամեական է, ու համապատասխան ձևերն էլ իսկապես կան: Հիմք չկա արաբական համարելու: Համ էլ, մալի ձևը հայերեն հոլովաձև է, ուստի բոլոր դեպքերում Մալի շուկա բառակապակցությունը (եթե այն կա) սարքվել է հայերենի հողի վրա ու արաբերեն չի կարող համարվել:

{Բացի այդ, ես չհասկացա, այստեղ իսկապես անասունի շուկա եղե՞լ է, թե՞ ոչ: Դու ասում ես, որ տեղը հարմար է. բայց կոնկրետ տվյալ կա՞, որ եղել է, թե՞ ենթադրություն է: Չեմ ասում՝ չի կարելի ենթադրել. բայց պիտի գրածից հստակորեն երևա՝ ենթադրություն է՞, թե ոնց: Եթե եղել էլ է, հենց *Մալի շուկա ձևով կոչել ե՞ն այդ շուկան – ՀՄ}

Հր. Աճառյանի ասելով, Հայաստանում չի էղել լեզվական մի հատված, որ իրեք հարուր տարուց ավել իրա տեղը մնացած ըլնի, անընդհատ տեղից տեղ են քոչե գնացել:

Ասել եմ արդեն, որ Փայաջուկն ու Սավրան Պարսկաստանում՝ մի վախտվա հայկական Սալմաստ գավառի գյուղերից են: Մալիշկեցիները փայաջուկցի են, ու էսի ստուգել եմ Լեզվի ինստիտուտի ատլասով: Գյուղացիներից ոմանք ասում են, թե մալիշկեցիք Սալմաստի Սավրա գյուղից են եկել, բայց նույն ատլասով պարզեցի, որ սավրեցիք Զանգակատան (Չանախչու) բնակիչներն են: Տես սրա նախորդ էրկու ոտանավորը:

Լավ ոտանավոր ա:

Արեվը աշխա՛ր ա լափում:

Դողո՛ւմ ա թափանցիկ օդը:

Երկինքը կրա՛կ ա թափում

Ու մարո՛ւմ ցորենի հոտը:

Փողոցներն անշունչ են, դատա՛րկ, ամայի:

Խաշվել ա խճուղու կաշին:

Գիշերը գթասիրտ քամին կնայի –

Կլիզի շոգեխաշ փոշին:

Մասուրը, պատի տակ, փոշեխեղդ ու հեզ,

Խեղճացած լսում ա արեվին,

Անարցունք, անաղերս, մրմնջում որբի պես,

Ու էլի կորանում տրտմության թեվերին:

Հրացայտ երկնքի կապուտ ալմաստը

Նայում ա անցյալի աչքերին,

Ու հիշում որբերի անեծքն աղեկեզ,

Ու հիշում արընոտ նե՛ռ ու չարքերին,

Ու հիշում, թե էտ ոնց – ծուխ դառան՝

Փայաջուկն ու Սավրան,

Ու համ էլ Սալմաստը,

Ու հիշում, թե էտ ոնց –

Անեծքը չհասավ քաջքերին:

Ու հմի՛...շիկացած սարերը հնոցի նման

Խաշո՛ւմ են գյուղը տարագիր:

Խառնվել ա էրե՛կն ու հիման,

Ու թողե իրան աներկիր:

Անտարբեր ու սուս – դարերը կգա՛ն ու կէթա՛ն –
 Կնայեն սարերի հնոցին:
 Ու հե՛ս ա, մի օր էլ, է՛ս գյուղը կէթա,
 Որ ոնց որ կրկնակ տարագիր –
 Հարի՛ ու հարի՛ – էտ անտեր –
 Մրմուռ կարոտի խնոցին:

15.ԳԱՐՈՒՆԸ ՔԱՂԱՔՈՒՄ

Ես 14 տարեկան եմ էկե քաղաք ու էտ օրվանից էլ իսկական գարուն, գյուղի՛ գարուն – չեմ տեսե (տես համ էլ՝ 12-14-ն ու 16-18-ը):

Երբ գյուղի գարունը նոր ա սկսվում, ու գյուղի կողի մի բարձունքից որ նայում ես կողքերդ, վռագ տենում ես էտ գարունը: Սկզբում նուշն ա ծաղկում (բայց գյուղում նուշ քիչ կա), հետո՝ ծիրանը, հետո՝ շորը, հետո էլ մնացած ծառերը, ու էտի ահավոր սիրուն ա, որտե՛վ ձունը հայելուց հետո, երբ ծառերը հլը չեն ծաղկե, գյուղից ու գյուղի այգիներից դուրսը անապատ ա:

Ծիրանի ծաղկը հենց թափվում ա, տերեփներն են բսնում, ու մի քանի օր հետո սաղ գյուղը թաղվում ա կանանչի մեջը: Հետո մնացած ծառերն են հերթով (կամ միասին) ծաղկում:

Աշունն էլ էտ նույն բարձունքից որ նայես, գույների մի ծով կտենաս:

Գյուղի գարուն ու աշունն էլ՛ ահավոր սիրուն են, իսկ քաղաքում ըտենց սիրուն բան չեմ տեսե:

Հա՛ ասի՛ ժամանակ ընի, հելնեմ էթամ գյուղը (լավ կըլնի՛ գարունը) ու մի անգամ էլ՛ ման գամ սար ու ձորերով: Ըտենց էլ չէղավ, ու երեվի՛ չի էլ ընի: Էտ տեսակ մի ման գալը կարող ա՛ իմ կյանքի ամենակարեվոր բանն ա, բայց մեռնելըս երեվի գա ու նոր լրիվ գգամ, որ էտ ամենակարեվոր բանից ընձի գրկել եմ:

Կյանքն էլ հենց է՛ն բանով ա հետաքրքիր, որ քու մտածած ծրագրով չի էթում, քեզ չի ենթարկվում:

Լավ ոտանավոր ա:

Տո՛ - սա՛ղ էլ կէթան:

Հենց ընենց դո՛ւս կգան տնից
 Ու հանգիստ կնստեն մեքենան,
 Կփախնեն իրանց պատյանից,
 Տո՛ համ էլ էս քարե՛ պատանից,
 Ու կէթան կհասնեն գյուղերին –
 Սա՛ր ու դաշտերին – սա՛ր ու դաշտերին:

Կտենան, թե ոնց ա անհանգիստ ծաղկում
 Խռովված տանձենին,
 Թե ոնց ա ցողը լողըցնում վրդովված դաղձերին,
 Կհոգնեն, կնստեն կանանչին,
 Կնայեն ձորերի, քա՛ր ու սարերի վաշտերին,
 Քամին էլ – հեվասպառ կաղաչի, որ իրանք
 Անընդհա՛տ կռանան քարե բարձերին,
 Ու Մարտը – անընդհա՛տ ականջ չի՛ դնի Արեվի հարցերին,
 Ու հաստատ – խեղճացած –
 Մայիսից կամանչի:

Հա-բա՛: Չե՛ն մնա – կէթա՛ն:

Իսկ ես կմնա՛մ –
 Էրագս ճորտացած –

Քսա՛ն դար տված տհասին ու տգետին,
Ու մաղձոտ հուշերս կձուլվեն
Վախճանված պահերի գետին,
Կմնամ էս քա՛ր ու բետոնի տապանում,
Խելագար կարոտից կհասնեմ վերջնական կետին,
Ու արդեն չի՛ մնա էլ ո՛չ մի տատանում,
Ու հաստատ՝ էս մասը...
Մենակ ե՛ս կիմանամ:

Հրաչյա Սարուխան – ՀՐԱԺԵՇՏ

Բերում եմ Հրաչ Սարուխանի մի ուրիշ գերագանց ոտանավորը, ու աջ կողմն էլ դնում եմ նույն ոտանավորը (ինչն էլի Սարուխանինն ա) մի քանի անձան փոփոխությունով: (Էս փոփոխություններից հանգերը մի թեթեվ տուժում են): Հրաչի էս գրքիս մեջը դրած գործերն էնքան են հրաշալի, որ կուզեի ե՛ս գրած ըլնելի:

Հրաչը շատ անգամ իրեք վանկով ա հանգավորում: Էսի շատ ա դժվար, ու մեր պոետներից երեվի մեկ էլ Թումանյանն ա, որ իրեք վանկանոց հանգ շատ ունի:

Ընձի ըստե ամենաշատը դուր չի գալի 4-րդ տան վերջի տողը, բայց մեկ ա, էս ոտանավորը հանճարեղ ա, ոնց որ Հրաչի բերածս մնացած ոտանավորները:

(Իմ համար անհարկի հոգնակին անտանելի ա, ոնց որ անտանելի ա գոյական-թվական զույգի (ու համ էլ՝ սրանց բայի) սխալ համաձայնությունը (տես իմ [19]-ը), ու ես սրանք սխալ չեմ գործածում՝ նույնիսկ շքեղ հանգի խաթեր: Երբ մենք իրար հետ մեր մայրենի բարբառով անբռնազբոս ենք խոսում, ոչ մի ըսենց սխալ – չենք անում, որտեվ մայրենի լեզվով խոսալը համարյա բնագոյ ա):

Աչքերս բներ են ցավերի:
Լուսինը կարմիր է բարձրանում:
Երագս օրորվող նավերից
Ընկնում է ու ցավից
կարծրանում:

Դու երեկ ավելին ուզեցիր:
Չունեի: Տխուր էր թերևս:
Երագում մազերս խուզեցին...
– Հոգնած են, հոգնած են
թեվերս:

Գնացիր: Ձանձրույթի վտառից
Մի թռչուն վանդակում մեռել էր,
Մի կին էր մահացել վթարից –
Եվ հիմա երկուսն էլ բառեր են:

Կանաչ է ծառերի արյունը:
Էլ երբեք մենք իրար չենք շոյի:
Ափսոս է, ափսո՛ս է գարունը,–
Զոում է իշուկը Սանչոյի:

Մենք Հուդա՞, թե Հիսուս ենք
եղել
Ստվերում Տիրամոր արգանդի...
Լճափին լույսեր կան ու եղեգ:
Ժանգոտ է օրերի գերանդին:

Տխուր է երեվի և ծանր
Առաջին ու վերջին նվերս.–
Ընդունի՛ր կարոտիս
վախճանը...

– Հոգնած են, հոգնած են
թեվերս:
Աչքերս – բնե՛ր են ցավերի:
Լուսինը – կարմի՛ր ա
բարձրանում:
Էրագըս օրորվող նավերից
Ընգնո՛ւմ ա, ու ցավից
կարծրանո՛ւմ:

Դո՛ւ – երեկ – ավելին ուզեցիր:
Չունեի: Տխուր էր թերևս:
Էրագիս մազերս խուզեցին...
– Հոգնած են, հոգնա՛ծ են
թեվերս:

Գնացիր: Ձանձրույթի վտառից
Մի թռչուն վանդակում մեռել էր,
Մի կին էր մահացել վթարից–
Ու հմի երկուսն էլ լոկ բառ են:

Կանանչ ա ծառերի արունը:
Էլ երբեք մենք իրար չենք շոյի:
Ափսոս ա, ափսո՛ս ա գարունը,–
Զոում ա իշուկը Սանչոյի:

Մենք Հուդա՞, թե՞ Հիսուս ենք
եղե
Ստվերում Տիրամոր արգանդի...
Լճափին հա՛մ լուս կա, հա՛մ
եղեգ:
Ժանգո՛տ ա օրերի գերանդին:

Տխուր ա երեվի ու ծանր
Առաջի ու վերջի նվերըս.–
Ընդունի՛ կարոտիս վախճանը...

– Հոգնա՛ծ են, հոգնա՛ծ են
թեվերըս:

16.ՄԵՌԵԼՈՑ

Հին Մալիշկայի պատկերներից ա (տես 12-15-ն ու 17-18-ը): Գյուղի տները կպած էին իրար, տեղ-տեղ կարայիր կտուրներով տնից տուն էթայիր: Պատերը գլաքարերից էին, դսից հազվադեպ՝ ցեխով սվաղած: Լուսամուտ բան՝ չկար, մեկ-երկու երդիկ, մեկ-երկու թոնիր ու վերջ: Գլաքարը երեվի գետից էին բերե, էշերով կամ սայլերով, որտեղ բազալտի քարերը գյուղից ավելի հեռու են, ու համ էլ պատը բազալտով շարելու համար պտի սկզբից քարը մշակես, իսկ էսի դժվար ա:

Շատերը մատղաշ անասունները ձմեռը պահում էին տանը: Կուտակված գոմաղբը հանում փռում էին փողոցը ու կոռնակ էին սարքում: Էրեխեքը սրանց վրա վազվզում էին, **օյիմբշտիկ** էին խաղում ու կոռնակները լավ պնդացնում էին: Գյուղացիները դարդ չէին անում, թե էրեխեքը անասունի կեղտից սարքած կոռնակի վրա խաղալուց կհիվանդանան: Հիգիենայի մասին համարյա գաղափար չկար, բայց էրեխեքը երեվի էնքան էլ շատ չէին հիվանդանում:

Էս կեղտ ու թրիքից ու մեկ էլ հավերի ծերտից ահավոր քանակով ճանճ կար, ու էս աներես ու լկտի ճանճերից ոչ մի պրծում չկար:

Գարունը կոռնակներից բահով ուղղանկյուն սայեր էին կտրում ու դրանից **շար**, այսինքն բրգաձեմ մի բան էին շարում, որ ձմեռը կամ հաց թխելուց վառեն:

Առավոտները կանայք էթում էին նախրի հետեվից ու թարմ **կուն** (կովերի «ախկոն») հավաքում էին վեդրոները կամ էլ հատուկ գոգնոցի մեջ, հետո բերում ու թխում էին տան արտաքին պատերին, չորացնում ու սարքում **փթիր**, ու ձմեռը էլի վառում: Բարդի՝ ահագին շատ կար, որտեղ բարդուց տուն ծածկելու գերան ու տան պյուն էին սարքում:

Էնքան էլ վատ ոտանավոր չի: Երեվի միջակից մի քիչ ա բարձր:

Անմեղ հեքիաթն ա սուսուփուս մեռնում:

Թախիծն ա դուռը բաց անում նորից:

Էրազն ա իրա մոմն էլի վառում –

Ու կրակն ընգնում՝ կարոտի դողից:

Մանկադրախտի միգապատ մառում

Կապուտ հուշերի ծուխն ա գրանցվում

Ու հետո գալի – հուլսին ա թառում,

Շվարում հոգու էրազապատկեր գերեզմանոցում:

Ու քրջահագուստ խճուղին մոլոր

Ձեռը պարզում ա անրջի ձեռին,

Ու էրազների հուշաքարերը,

Նորի՛ց ու նորից, հետ են դառնում ու

Ավելանում են էրազաբեռին:

Էսի է՛լ – վերջի նեղ ոլորանը,

Էսի է՛լ – վերջի աղքատ խաչուղին,

Էսի է՛լ – հիվանդ գետաբերանը,

Ու հե՛ս ա – տե՛ղ ա հասնում խճուղին:

Բայց հեչ բան չկա՛, ո՛չ մի բան չկա՛

Հուշ արարելու մանկադրախտում:

Ո՛չ բարդիները – ճերմակաիրան,

Ագռավառաբերամ,

Անապատային միրածներ ասես,

Հույս ու սպասմունք ամեն մկանում,
 Հույսը – Բարձրյալի վերին հրաշքին,
 Ուսերին – մոմ ու արծաթաշողող թուփ, կաշի ու վարս:

Ո՛չ խրճիթները – կույր ու անտրտունջ,
 Գլխահակ ու մունջ,
 Կողերին – քարե թեփուկներ ասես,
 Իրար փաթաթված, խառն ու անկանոն,
 Հոգնած ուսերին – չորս հազար տարվա ցավերի Մասիս:

Ո՛չ փողոցները – օձալուրան, գոմաղբաբերան,
 Հավերժ քարացած վիշապներ ասես,
 Որ մեկնվել են ու չեն վեր կենում,
 Ու ամուր կպած հյուղերի մեջքին,
 Էլ դուս չեն գալի էտ անլուսամուտ որովայններից:

Ու չկա՛, չկա՛, ո՛չ մի բան չկա՛
 Հուշ արարելու մանկադրախտում:

Ու չկա՛ համ էլ՝ քանդված ժամտունը,
 Լո՛ւռ պահեստացած,
 Աքսորից էկած հավիտենական մուրացկան ասես,
 Կույ չէկած գյուղի վերին անկյունում,
 Բլրի անջրդի, լերկ գանգամաշկին,
 Անհույս, անծպտուն,
 Ընկճված ու հեզ ձայնագուրկի պես:

Ու ե՛ս էլ չկամ: Չկա՛մ ու չկա՛մ,
 Որտե՛վ էրագի էրագը չունի ո՛չ մի հարություն,
 Ու անուրջները
 Անմարմի՛ն են ու առանց մկան:

Ու զուր ա, զո՛ւր ա թախիժը լալի,
 Ու հեկեկալով անընդհատ բախում տրտմության դուռը:

Մեռնող հուշերի անուրջը գալի –
 Հոգիս առնում ա կարոտի բուռը
 Ու արմատախիլ – կրծքիցս հանում:

Էրագ-անուրջը, հենց արարելուց,
 Խա՛չ ա բարձրանում ու աստվածանում,
 Հետո համբառնում,
 Ու արարչատուն-ծընընդավայրը անտե՛ր ա մնում:

Ու հեչ բան չկա՛, բա՛ն չի՞ մընացե
 Հուշ արարելու մանկադրախտում:

17. ՁՄԵՌԱՅԻՆ ԳԻՇԵՐՎԱ ՊԱՏԿԵՐ

Գրելու առիթը չեմ հիշում: Հին Մալիշկայի պատկերներից ա (տես համ էլ՝ 12-16-ն ու 18-ը):

Մալիշկայում **տուն** ասում էին մեծ թոնրատանը, ուր ձմեռը **քուրսին** էին դնում: Քուրսին մի քառակուսի սեղան էր, մոտ կես մետր բարձր, ու ձմեռը էսի դնում էին թոնրի վրա, հետո վրեն մի մեծ ու քառակուսի վերմակ (**քուրսու շոր**) էին փռում: Էս վերմակն էնքան էր մեծ, որ սրա եզրերը մի էրկու-իրեք ասիի չափ փռվում էին գետնին, քուրսու չորս բոլորը:

Հետո քուրսու մի քանի կողմը փայլաս էին փռում, փայլասների վրա էլ հսկայական կապոցներով տեղաշոր էին դնում (էս կապոցներին ասում էին **բաստագյ**), որ մարդիկ նստեին փայլասների վրեն, ոտները մտցնեին վերմակի տակը ու հենվեին բաստագյների: Քուրսու տակը շատ տաք էր, ու էս քուրսին տան տաքությունը պահում էր վառելու օրից մինչեւ մյուս առավոտը:

Քուրսու կողք նստոտում էին սաղ ընտանիքով, շատ անգամ հարեվանների հետ, ու շատ անգամ էլ հաց էին ուտում, ու մեկ-մեկ էլ թեթեվ քեֆ էին անում: Կամ նստում էին ու լսում էին մի «նաղ» ասողի հեքիաթները, կամ էլ ուղղակի գրուցում էին:

Տունը մեկ կամ էրկու պուն ուներ: Մեծ սնից կախ էին տալի մի նավթի ճրագ, իսկ հետո էլ՝ մի էլեկտրական լամպ, կողքն էլ՝ ռադիոն, բայց ռադիոն շատ ուշ էկավ գյուղը, 50-ականներին:

Տան հեռավոր անկյուններում արդեն մութ էր, մանավանդ ճրագի հետեվի կողմը:

Մի պատի տակը **դուլաբ**-ն էր, ինչը ոտներին դրած մի մոտ 6-7 մետր երկար փետի պահարան էր, բազում **աչքով** (դռնով): Դուլաբի առանձին աչքերի մեջ կաշվե պարկերով մթերք էին պահում ցորեն (**դան**, այսինքը, էկիած ու չորացրած ցորեն, որ քցում են ապուրն ու ուրիշ ճաշերը. սրանից **կորկոտ**, **հարիսա** ու ուրիշ ճաշ էին էփում): Դուլաբի մեջը ձավար, չոր միրգ, յոբի ևն բան էլ էին պահում:

Ալուրն աղում էին ջրաղացում ու բերում լցնում էին տան **փեթակի** մի աչքը, իսկ մյուս աչքի (կամ աչքերի) մեջը ձավար կամ սրա պես ուրիշ մի բան էին պահում: **Փեթակը** մի հսկայական փակ արկղ էր, ու էսի դեմից մեկ կամ էրկու բացովի դռնակ ուներ, ինչին ասում էին՝ «բերան»: Ալուրն ու ցորեն-ձավարը սրա մեջը վերեվից էին լցնում: Սրանք բանըցնում էին մի կլոր տարի, հաց էին թխում ևն, որտեղ հացը ու մյուս մթերքը խանութից չէին առնում:

Ղավուրման, պանիրը, յուղը, մեղրը պահում էին կարասներով կամ **խմչաներով** (սրանք կարասից մեկ-երկու անգամ փոքր կարաս էին), որ տան հեռավոր անկյուններում էին: Շատ անգամ տան առաստաղից հատուկ **հաչա** փետերով խաղող էր կախած լինում, բայց խաղողի մեծ մասը էս հաչաներով հատուկ մառանի (**զերզամու**) մեջն էին պահում, որ տաքը խաղողը չնեխըցնի, ու խաղողը մնում էր մինչեւ ուշ գարունը: Գինին ու օղին էլ էին պահում էս մառաններում:

Տունը լուսամուտ չուներ, ու մեծ մասամբ՝ էրկու **երթիս** (երդիկ) ու մի մեծ պահարան (**ըշկաֆ**) ուներ: Պատերին շատ անգամ մեկ կամ մի քանի **ակնատ** (**ակն + հատ**) կար, ինչը էն օրերի դարակն էր: (Իմիջիպլոց, **ակնատ**-ը հենց **լուսամուտն** ա, ու շատ սիրուն էլ բառ ա, բայց մերոնք ո՞րդուց իմանային, որ էս բառն արդեն ունենք, որ **լուսամուտ**-ի ու **պատուհան**-ի պես (իմ կարծիքով) անճոռնի բառերը չմոգոնեին): Նոր սարքած ու լուսամուտներով (եվրոպական) սենյակներին ասում էին **օթաղ**:

(Հրաչ Մարտիրոսյանն ասում ա, որ **ակնատ-ակնատ-ակնահատ** բառն ավելի ջահել ա, քան **լուսամուտն** ու **պատուհանը**: Երեվի, բայց իմ համար **ակն + հատ > ակնատ**-ն ավելի սիրուն ա, որտեվ կարճ ա: Ռուսներն ունեն՝ *окна + о* բառը, ինչը համարյա լրիվ մեր **ակնատ**-ն ա: Իհարկե, Հրաչն ավելի լավ կիմանա):

Տան թոնիրը վառում էին ձմեռը ու աշունը, թե որ ցուրտ էր լինում, բայց աշունը քուրսի չէին դնում: (Գարունն ու ամառը դրսի՝ սրահի՝ թոնիրն էին վառում):

Թոնիրն ահավոր ծուխ էր անում, ու երբ նոր էր վառած ըլնում, ահավոր ծուխ էր լցնում տունը, ու պտի կուզեկուզ ման գալի, որ աչքերդ չմրմռային: Ճաշը, համարյա միշտ, տան կամ դրսի թոնրի վրա էին էփում, մեծ կճուճներով, ու ճաշի մնացորդը պահում էին թոնրում, որ տաք մնա:

Էս ծխից տան պատերը սեվանում մրոտվում էին, ու մեկ-մեկ մենք, երեխեքս, պատերին մատով բան-ման էինք գրում կամ նկարում, ու մեծերն էլ ջղայնանում էին,

որտե՛վ համարում էին, որ սիրուն չի: Ու հենց սրա համար էլ տան պատերը տարին մեկ **չուփի** հողով **չուփում** սիպտակացնում էին: Չուփում էին էտ սիպտակ հողի լուծույթի մեջը թաթախած ավելով, այսինքը, էտ ավելով խփում էին պատին, որ լուծույթը նստի պատին:

Լրիվ ազատ ոտանավոր ա, ու արձակից էտքան էլ շատ չի տարբերվում, հանգ՝ հեշ չունի: Միջակ ոտանավոր ա, իսկ **Անուշը**, իհարկե, սքանչելի ա, ու հարազատ ա թե քաղաքացու, թե գյուղացու հոգուն, ինչքան էլ մեր արտեմիստներն ասեն, թե «Թումանյանը ընդամենը գյուղագիր է»:

*Համբարձման գիշեր, էն դյութիչ գիշեր,
Կա հըրաշալի, երջանիկ վայրկյան.
... էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկնքի անհո՛ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում:*

Հ. Թումանյան, Անուշ

Բանջարանոցում,
Խավարի անծայրածիր թիկնոցի հետ մարտնչելով,
Անարգել ու երջանիկ, վրնջում էր վայրենի քամին:

Գիշերն անհանգրվան ու անվերջ ու ոլորուն մի հեքիաթ էր պատմում,
Ու չարք ու դրուժ,
Սատանա ու պարիկ – (զանազան ոգիներ տնային),
Գիշերվա հեքիաթին լրիվ անտարբեր,
Հավաքվել էին պառաված ու մրոտ ու վիթխարի տան
Հեռավոր ու խավար անկյունում,
Ալրի հսկա ու անճոռնի փեթակի մոտ,
Ցմփոր կարասի կողքը,
Խոսում էին, զրուցում ու բարբաջում, ու չէի՛ն քնում:

Կենտրոնում մրմնջում էր վախճանվող մոմի բո՛ցը դողդոջուն,
Դողդոջուն ու դեղին բո՛ցը,
Դեղին ու անկատար էրազը – ամառվա թիթեռ ու մծեղի:
Երդիկի պատահական բացված արանքից,
Վեհերոտ ու անվստահ, ներս էր նայում,
Ուշադիր նայո՛ւմ էր ու նայում,
Հեռո՛ւ-հեռավոր, մե՛ն ու մե՛ն-մե՛նակ մի աստղ:

Աշխարհի ահավոր հեռու մի անկյունից,
Ցրտից դողալով,
Կարո՛տն էր նայում երեվի –
Ուշադիր նայո՛ւմ էր ու նայում:

Ուշադիր ու սեվեռուն ու թախծոտ,
Անվերջ ու անսահման մրմուռ ու կարոտով,
Ահավո՛ր կարոտով, նայո՛ւմ էր ու ման գալի՛ ինչ-որ մեկին:
Բայց հետո, քիչ հետո ու կամաց-կամաց,
Երկնքում մե՛ն-մե՛նակ դողացող էտ աչքը մարեց:

Երեվի ըտենց էլ չըըթավ իրան ծանոթ
Կամ իրա հոգուն հարազատ –
Մի՛, գոնե մի՛ հոգի:

18. ՍԻՊՏԱԿ ԼՈՌԻԹՅՈՒՆԸ

Հին Մայիշկայի պատկերների պատմությունից ա, էսի էլ Հին Մայիշկայի ձմեռվա՝ նկարն ա: Սիպտակ լուրությունը, ինչքան հիշում եմ, Ջեկ Լոնդոնի ռուսերեն թարգմանության ճեռթե ճեռթե կապակցությունն ա: Մնացածը համարյա դոկումենտալ ա: (Տես համ էլ՝ 12-17-ը):

Հս մի ոտանավորիս բառապաշարն է՛լ ա արհագին արխայիկ (գրական), չնայած արհագին էլ քերե պարզացրել եմ:

Երբ որ մեկը նոր ա պատմվածք կամ ոտանավոր գրում, արհագին արագ թարմացնում ա հայերեն բառերի իրա իմացությունը, ու սրա հետ էլ՝ կախարդվում ա հայերենի է՛ն բառերով, որ մենակ գրքերում կան: Կախարդվում են համարյա սաղ գրողները, ու շատ քչերն են, որ հետո ազատվում են «սիրուն» բառերի էս կախարդանքից:

Ով չի այարում, թող նայի Թումանյանի Անուշի կամ Լոռեցի Սաքոյի առաջին տարբերակները (սրանց մի քանի հատվածը տես, օրինակ [2]-ի ու [5]-ի մեջ): Բայց լավ գրողը հետո էս կախարդանքից ազատվում ա ու, Թումանյանի պես, ինչքան կարում ա, ավելի պարզ բառ ա գործածում:

Թումանյանը իրա Անուշը մշակել ա մոտ մի 15 տարի, ու որ Անուշի առաջի տարբերակները համեմատում ես վերջինի հետ, տեսնում ես, որ ինքը, առաջի հերթին, «բարդ, գրական սիրուն» բառերն ա քերե հանե ու դեն քցե, ու սրանց տեղը պարզ ու սաղին էլ լրիվ ծանոթ, հասկանալի ու գործածական բառ ա դրե:

Ինչքան հիշում եմ, Անուշի մեջ չորս հատ քառավանկ բառ կա, ու սրանք էլ լրի՛վ են հասկանալի բոլորին: (Սրանցից մեկը, օրինակ, սրտակոտոր-ն ա: Հլը էսի համեմատեք արեվակեգ-ի, ողջակիզված-ի ու սրանց պես բառերի հետ, ու հիշեք, թե են օրերի «միջին» հայի ինտելեկտն ի՛նչ մակարդակի էր):

Իհարկե, չեմ ասում, որ լավ գրողը պիտի անպայման մենակ պարզ բառ գործածի: Բառի ընտրությունը ճաշակի հարց ա, բայց պոետի գործն էլ հենց էս ընտրությունն ա: Ե՛ս էլ, սկզբում, «սիրուն, չքնաղ ու էկզոտիկ» բառի սիրահար էի, բայց հետո, բառապաշարս քիչ-քիչ պարզվեց ու շատ մոտեցավ խոսակցական շերտին: (Կարճ ու երկար բառերի մասին տես Ի՞նչ անեմ, որ ի՞նչ անեմ, ու Ամեն իրիկուն ժամը 13-ից հետո ոտանավորների էսենները):

Մենակ խոսակցական լեզվով գրելը շատ անգամ երեվի անհնար ա (կամ էլ՝ արավոր դժվար ա): Նույնիսկ Սարոյանը, ում գրածները համարյա խոսակցական լեզվով են, իրա «հեղինակային խոսքի» մեջ արհագին շատ գրական բառ ա գործածում: (Ինչքան գիդեմ, խոսակցականով մենակ Մարկ Տվենն ա գրե – իրա Թոմ Սոյերն ու Հեկլբերի Ֆինը):

(Սարոյանի ու Տվենի հայերենով թարգմանած գործերը իրանց հանճարեղ բնագրերից շատ են հեռու ու շատ ու շատ անգամ տգեղ են հենց է՛ս պատճառով. էս մեղքի մի մասը իմն է՛լ ա, որտե՛վ Սարոյանի հայերեն ժողովածուի 1-ին հատորի իրեք գործը ե՛ս եմ թարգմանե, 1985-ին, իսկ էս օրերին հլը կախարդված էի հայերենի «չքնաղ» բառերով):

Հայերը գույների անունները, բացի դեղին-ն ու ծիրանի-ն, վեկայել են իրանցիներից, ու հետո սպիտակ-ը դարձրել են՝ սիպտակ, ինչն ավելի բարեհունչ ա, ու սպիտակ-ից մի վանկ կարճ ա: Մեր գրագետներին էսի դուր չէկավ, ու սրանք բռնին ու գրական ոճերի մեջը էս սիպտակ-ը նորից դարձրին սպիտակ: Բայց Թումանյանը չլսեց իրանց ու գրեց. «Հս անջուր լճում լողում են ճշում երեք հատ սիպտակ բառ»: Թումանյանը ճիշտ ա, հազգա՛ր անգամ ա ճիշտ:

Միջակ ոտանավոր ա, բայց նախորդից ավելի լավն ա:

Ադամամթին, խավարի հոգեվարքի ամենավերջի՛ ըոպեին,
Տասը տարեկան մի մանուկ հելավ տնից,
Դուս էկավ բալկոն, ու նայեց աշխարհին:

Էսօր արդեն լրի՛վ էրագ դառած էտ հեռո՛ւ լուսաբացին –
 Անսահման փափուկ ու անսահման սիպտակ ձունը
 Ծածկել էր ամեն ինչը, ու ամեն ինչը ներկել էր կաթնագույն:
 Անդադար ձյան խոշոր փաթիլների սաղ գիշերվա
 Տեղատարափն էլ արդեն չկար,
 Ու բյուր ու հազար ճախրող աղավնուց
 Էլ ո՛չ մեկը չէր երեվում:

Վերեվում գորշ ու անթափանց երկինքն էր:
 Սիպտակ վերմակի տակից, տեղ-տեղ,
 Նայում էին տերեվագուրկ ծառերի
 Մոխրասեվ ու տխուր ոսկորները:
 Լռություն էր – անվե՛րջ ու անընդգրկելի ու սիպտակ լռություն:

Հեռո՛ւ-հեռվից,
 Էսօր արդեն մի լրիվ էրագ աշխարհից,
 Մի ուրիշ ու տարօրինակ ու կախարդական աշխարհից,
 Լսվում էին հողե տափակ կտուրները մաքրող
 Տղամարդկանց հատուկենտ ու խուլ ձեները,
 Ու սրանք, աշխարհ գալով, վռագ մարո՛ւմ էին ու մեռնում:
 Նոր նստած ձունը –
 Ձե՛ն էր ուտում:

Էրեխեն, հոր կոշիկները բոբիկ ոտներին,
 Յրտից թեթեվակի դողալով, նայում էր սիպտակ աշխարհին,
 Նայում ձան բեռից կռացած ծառերի տխուր ճյուղերին,
 Նայում սիպտակ սարերին ու տազնապած ճնճուկներին,
 Ու իրա լուսավոր ու անբիծ ու մանուկ հոգին
 Փոթորկվում էր անծայրածի՛ր ու անզո՛ւսպ բերկրանքից:

Ու անձեն ու անշուկ, նայելով սիպտակ արար աշխարհին,
 Իրա մանրիկ ու արդար շրթունքները լո՛ւռ շարժելով,
 Սրբագան աղոթքի նման, անդադար կրկնում էր ու կրկնում.
 – Ձո՛ւն ա էկե...

Ու էտ նիհար ու բարալիկ մանուկը,
 Յրտից թեթեվակի դողդողացող էտ մանուկը,
 Լրիվ վստա՛հ էր ու համոզվա՛ծ,
 Որ սա՛ղ աշխարհը ձան պես սիպտակ ա ու մաքուր,
 Որ սա՛ղ աշխարհն ու սա՛ղ տիեզերքը,
 Սա՛ղ կաթնաճերմակ աշխարհն ու տիեզերքը,
 Կմնա սուրբ ու երջանիկ,
 Կմնա սիպտակ ու կաթե,
 Կմնա անբիծ ու անեղծ,
 Հավիտյա՛նս հավիտենից կմնա սուրբ ու երջանիկ:

Լռություն էր.
 Անվերջ ու անընդգրկելի ու սիպտակ ու սուրբ լռություն,
 Բերկրագորով ու հրճվաթաթավ լռություն,
 Որտեվ գիշերը,
 Անընդհա՛տ ու անընդհա՛տ,

«Ձո՛ւն էր էկե»:

Գլուխ 4 ՄԱՂԹԱՆՔ

4.1 ԱՃԱՌՅԱՆԸ ԷՐԵՎԱՆԻ «ԺԱՐԳՈՆԻ» ՄԱՍԻՆ

Էս գլխի մեջ բերում են Աճառյանի ասածներից մի քանի բան լեզվի մասին, որ կարդացողը չմտածի, թե մենակ ե՛ս են էս բաները ասում: Սկզբից բերում են Աճառյանի ասածները (**ԼՔՀԼ** [6], **Ներածություն**, էջ` 140 **ու հետո**: Թավատառերն ու շղատառերն ու մեծատառ գրվածներն ու միջակ փակագծերի մեջիններն ի՛մն են):

«Բարբառները բոլորն էլ իրար հավասար են, բայց հենց որ նրանցից մեկն իշխանության գլուխ անցավ, սկսում է տիրել անհավասարության զգացմունքը: Խոսողները իրենք են սկսում արհամարհել իրենց լեզուն և զգում են այն՝ ստորին աստիճանի վրա: Սկսում է տիրել այն սխալ կարծիքը, թե բարբառը մայրաքաղաքի լեզվից ցածր է արժանիքով ու պատվով և կամ տիրող կամ գրական լեզվի հետին աղավաղյալ ծնունդն է:

«Լեզվաբանի համար բոլոր բարբառներն էլ ներկայացնում են մի տիպի շարունակական ձեվափոխությունները: Գրական լեզուն [sic!] էլ բարբառներից մեկն է և հաճախ ավելի ուշ կազմված, քան մի ուրիշ բարբառ»:

(Աճառյանը, իհարկե, սխալ ա, երբ ասում ա, թե գրական լեզուն բարբառ ա, որտե՛վ գրական լեզուն ոճերի հավաքածու ա, ու կենդանի լեզվի սաղ հատկությունները չի, որ ունի: Սրա մասին տես նախաբանը ու իմ **Արդի հայերենի տեսության առանցքային հարցերը** գրքի մեջը, ինչը երե՛վի հրատարակելու են 2013 թվին):

Հետո Աճառյանն ասում է.

«Տգիտություն է բարբառներից մեկը մյուսին ստորադաս համարելը: Որե՛վ է լեզվի պետական լինելը (քաղաքական պատիվը) կամ ճոխ գրականությամբ մշակված լինելը (գրական պատիվը) արժեք չունի գիտության համար:

Բոլոր արդի լեզուներն էլ մի ժամանակ բարբառ էին մի ուրիշ, այս կամ այն ավելի հին լեզվի, իսկ հին լեզուները նույնպես բարբառ էին զանազան մայր լեզուների և այլն»:

Բայց մեր մտավորականները (օրինակ, մեր Ակադեմիայի թղթակից անդամ, թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը), մեր հեռացույցով ու մամուլով ամեն առիթով արհամարհանքով հայտարարում են, թե «երեվանցիները խոսում են Երեվանի ժարգոնով, իսկ օրինակ, ինքը (Հ. Հ.-ն) ու իր հայրական ընտանիքը Երեվանի ժարգոնով չեն խոսում»:

Ու էս պարոնը մենակ չի, հազարներով կողմնակից ունի: Ուրեմը, թե որ Աճառյանը ճիշտ ա, էս պարոնն ու սրա պես սա՛ղ մտածողներն էլ՝ սխալ

Են: Էսօր ըսենց սխալ մտածողների թիվը, համարյա հավասար ա մեր
մտավորականների թվին:

Ուրեմը...

Ու էսի ե՛ս չեմ ասում. էսի Աճառյանն ա ասում: Բա՛:

4.2 ԱՃԱՌՅԱՆԸ ԼԵԶՎԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մի ձև որ գործածական է ժողովրդի բարձր խավերում, մտավորականների, պետական գործիչների և նմանների մոտ, հենց դրանով էլ մեզ գեղեցիկ է երեվում, քան այն ձևը, որ գործածական է ռամիկի և գյուղացու բերանում:

«Մի ժամանակ հայերենը հենց շատ հայերի համար թվում էր նվազ գեղեցիկ և նվազ քաղցրահնչյուն, քան ռուսերենը, որովհետեվ ռուսներն ավելի մեծ, ավելի հզոր և ավելի քաղաքակիրթ էին, ինչպես որ ռուսերենն էլ ռուս ազնվականներին թվում էր նվազ գեղեցիկ և նվազ ախորժալուր, քան ֆրանսերենը, որովհետեվ ֆրանսիացիները ռուս օտարամոլ ազնվականների կողմից ռուսներից ավելի կուլտուրական ժողովուրդ էին համարվում:...

«Բայց այս բոլորը սուբյեկտիվ վերաբերմունք է միայն և շատ անգամ չի դիմանում ամենափոքր քննադատության» (Ib., էջ` 252):

4.3 ԱՃԱՌՅԱՆԸ ԼԵԶՎԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«...լեզվի հարստություն ասելով հասկանում ենք նրա բառամթերքի առատությունը (Ib., էջ` 303):

«...Այս բոլորից հետեվում է, որ լեզվի [բառամթերքի] հարստությունը արտաքին և ձևական երեվույթ է, և շատ անգամ էլ ԱՎԵԼՈՐԴ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒԹՅՈՒՆ:

4.4 ԱՃԱՌՅԱՆԸ ԼԵԶՎԻ ՃՈՒՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աճառյանն ասում է, թե «...լեզվի ճոխություն ասելով հասկանում ենք նրա քերականական ձևերի առատությունը և բազմազանությունը, այն է՝ ձևաշատությունը (Ib., էջ` 303)»:

Հետո Աճառյանը քննում է այս առատությունն ու եզրակացնում, որ.

«Այս բոլորը, ինչպես էլ որ արդարանան լեզվի ծագման ու զարգացման պատմությամբ, մարդկային մտքի համար ավելորդ ծանրաբեռնություն են. և ինչքան էլ որ ճոխություն, զարդ կամ գեղեցկություն, պերճախոսություն կամ շքեղություն համարվեն, հակառակ են լեզվի պարզությանն ու դյուրըմբռնելիությանը (Ib., էջ` 304):

...

«Նշանակում է լեզվի մեջ ձևերի բազմազանությունը և առատությունը նրա կատարելության նշան չէ, ինչպես և դրանց սակավությունն ու միատեսակությունը անկատարության արտահայտությունը չէ:

...

«Այսպիսով ձևերի բազմազանությունն ու առատությունը կամ դրանց սակավությունը լեզվի առավել կամ պակաս զարգացած լինելու չափանիշ չեն (Ib., էջ` 306)»:

19. ՆՈՐ ՍՈՒՐԱԸ

Ինչքան հիշում եմ, Գորբաչովի էրկերեսանության առիթով եմ գրե: Սրա ստարտը Սախարովի է՛ն հայտնի ելույթն էր, երբ իրան շթողին, որ խոսա: Երբ Սախարովն ասեց, որ Աֆղանստանի պատերազմն իզուր ու սխալ բան էր (հաստատ չեմ հիշում, կարծեմ ասածն էսի էր, կամ էլ սրա պես մի բան), դահլիճն է՛ն ձեվ շվրցրեց ու հո՛ւ արեց, որ սարսափը տվեց վրես: Ընձի թվաց, թե եռեսունական թվերը հետ են էկե: Ու ոնց որ նոր հասկանայի, թե խավարամոլությունն ի՛նչ ահավոր բան ա:

Բայց ախր խավարամոլներն ըստե ու էսօր էլ քիչ չեն: Աստված հեռու պահի խավարամոլ, մեծամիտ ու մեծամոլ ժողովրդից:

Բա էտ եվրոպացիներն ու մանավանդ անգլոսաքսոնները ո՛նց ու ի՛նչ արին, որ իրանց խավարամոլությունը, մեծամտությունն ու մեծամոլությունը էնքան քշացավ, որ հմի նորմալ ու մարդավարի են ապրում:

Հմի եմ հասկանում, թե Գոյան ի՛նչ ա զգացե, որ բռնե ու իրա է՛ն շարքն ա նկարե, ինչի անունը դրել ա՝ «Բանականության քունը»: Գոյան էս շարքի մեջ ինչ ճիվաղ ասես՝ որ չի նկարե, ուզենալով ասի, թե երբ մարդը «իրա խելքն ու միտքը անջատում ա», այսինքը, «քնում ա», հավատում ա ճիվաղներին ու դառնում էտ ճիվաղների ճորտն ու ստրուկը:

Հավատո՞ւմ եմ, որ մի օր բանականությունը լրիվ զարթնած ու սթափ կլընի: Էս ոտանավորի մեջ՝ հա՛, բայց թո կարդացողն ի՛նքը որոշի:

Երբ էս ոտանավորը նոր էի գրե, շատ էի հավանում (ոտանավոր գրելը հլը նոր էի սկսե): Հմի բտենց չեմ մտածում:

Թուլ ոտանավոր ա, բայց սրա էսեի պատմածի կարեվորության համար պահել եմ:

Այո՛: Հմի՛ էլ: Զառանցի՛ նորից:

Հոգնե՛լ են օրերի զորքերը:

Բոցեր են թռնում շանթե՛ արորից

Ու լցվում բազմության խորքերը:

Ճորտացած դարերը բացում են

Մի հսկա՛, շիկացած ակո՛ս:

Վիթխարի պատերը սարսում են –

Կքանդե՛ն ու կանեն քարկո՛ծ:

Հլը որ խավա՛ր ու խավար ա:

Զառանցի՛: Զառանցի՛ ու անցի՛:

Թո լո՛ւսը՝ մութ գիշե՛ր համարեն՝

Կանոնը – անկանոն, ցանուցի՛ր:

Դարերի անողորմ քանոնը

Դառել ա խավարի ածելի:

Կմարի գիշերվա անունը՝

Խավարից արեգա՛կ կծլի:

Զառանցի՛: Զառանցի՛ ու անցի՛ –

Վառվո՛ւմ ա շիկահեր քուրան,

Շանթո՛ւմ ա երկինքը լուսածիր

Ու բացում մի նոր սուրա՛հ:

20. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էս մի ոտանավորն սկսվել ա հենց **ահավասիկ** բառից: Էս բառը էն «չքնաղ» բառերից էր, որ սկսնակ գրողին շատ են կախարդում: Էսի ոնց որ ասեր. «Գրի՛, որ սկսես, մի լավ ոտանավոր կգրվի»:

Առհասարակ, հենց հին, գրաբարյան կամ գրաբարից (ոչ բարբառներից) վեկայած բառերն են, որ էս կախարդանքն ունեն: Սրանք մեզ սիրուն ու բանաստեղծական են թվում (որտե՛վ մեզ փոքրուց ասե ու սրսկել են, թե բարբառը կամ խոսակցական լեզուն զգվելի մի բոբո ա:

(Նախաբանի մեջ ասել եմ արդեն, որ չեմ հասկանում, թե լեզուն ո՞նց կարա խոսակցական չըլնի):

Էս բառերը բանաստեղծական են թվում մանավանդ ժուռնալիստի պես դիլետանտին (ժուռնալիստները հա է՛լ դիլետանտ են ու, ոնց որ մեր քաղաքակրթության ամենամեծ մտածողը՝ **Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայելն** ա ասում իրա **Fatal Conceit**-ի մեջ [13], աշխարհի ամենավնասակար արարածներն են. իմ կարծիքով, իրանց տված վնասով՝ սրանցից հետո գալիս ա դպրոցի հումանիտար առարկաների դասատուների մեծ մասը, որտե՛վ սրանք քարացած մտածողություն ունեն ու հայացքներով է՛լ անպայման ազգայնամոլ են: Սրա մի «փայլուն» վկան մեր հայերենի ընդունելության քննությունների շտեմարաններն ու տեստերն են):

Շատ-շատ քերը գիդեն, որ հայերենի սիրուն ու բանաստեղծական համարվող բառերը, համարյա լրիվ ուրիշ լեզուներից են վեկայած: Ամեն մի լեզվի բառերի մի 70 %-ն էլ ուրիշ լեզուներից ա վեկայած, ու հայերենը բացառություն չի:

Էս չեմ ալարե ու մի երկու-իրեք ամիս նստե ու Հր. Աճառյանի **Արմատական բառարանից** քաղել եմ ուրիշ լեզուներից հայերենի փոխ առած էտ բառարանի համարյա սող բառերը: Ով ուզում ա դրանք տենա, թո նայի իմ **Թարգմանելու արվեստը** [16] գրքի հավելվածը:

Միջակից մի քիչ լավ ոտանավոր ա:

Ահավասիկ,

Օրերի գորշ, մանրախնդիր ու տաղտկալի առօրյան,
Ահավասիկ՝ մովսեսները, քաղցրալեզու ու շողում,
Ու անձրեվը մանրահատիկ, ու մշուշը վաղորդյան,
Ու անհաստատ ու անորոշ ապառնին:

Ահավասիկ, համ էլ ներկան, իրա էտ սե՛վ ձանձրությո՛վ անողորմ,
Որ կազմում ա մի ըղձական ժամանակ.
Ահավասիկ, համ էլ հի՛նը ուրվական,
Համ էլ՝ Վանը ու Գառնին –
Համ էլ՝ Լեվո՛նն ու Վանոն:

Այնուհանդերձ, ի՞նչ իմանաս, ի՞նչ կա գալիքի մտքին,
Ու օրերի ոլորագիծ արահետն ո՞ւր կտանի:
Ու ո՞վ կարա ոտը դնի ապագայի անտեսանելի հետքին,
Ու վայրենի քարոզները կհարմարվե՞ն, կամ կդառնա՞ն ընտանի:

Ահավասիկ, որբ ու անտեր, ճղակոտոր ուռենի,
Ու գետ կոչվող խեղճ ու կրակ մի առվակ,
Ու մի տաճար – կիսաքանդ ու ավերակ:
Ու արեվի կարծրությունից կռացած մի մորենի,
Մի կիսաբախտ՝ պատահմունքի ճոճանակ,

Ու մի հոգնած ու ըղձական ժամանակ:

21. ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒ ՄԱՂԹԱՆՔ

Էլի 1988-ին սկսված դեպքերի արձագանքն ա, չնայած արտահայտած միտքն ու պատմությունն ընդհանուր ա: Ընդհանուր ա, որտեղ մեր էս նորոյրա փաշաներն ու սուլթաններն ու խաները մեզ ավելի քիչ վնաս չտվին, քան թե եղեռն արած թուրքերը:

(Ես կարծում էի, թե էս ոտանավորը կհնանա, բայց ափսոս, որ չհնացավ, ու երեվի (աստված չանի) չի էլ հնանա):

Մեկ-մեկ ասում են՝ «մեր ձեռքբերումները» ևն, ևն: Որ լուրջ նայենք, մեր «ձեռքբերումներից» ամենագլխավորը էնի՛ ա, որ էս վերջի 20 տարին մեր ժողովրդի կեսը թողե երկրից գնացել ա: Մյուսն էլ՝ համատարած աղքատությունն ու թշվառությունն ա. մեր ժողովրդի մեծ մասը իրա փաշաների, սուլթանների ու խաների ճորտն ու ստրուկն ա:

Բայց երբ մի երկրի ժողովրդի քանակը երկու անգամ քչանում ա, էտ երկրի հոգեվոր ու նյութական արտադրանքը երկու անգամ չի քչանում, **10-20 անգամ ա քչանում:**

Ու ովքե՞ր են երկիրը թողում էթում: Էթում են է՛ն մարդիկ, ովքեր ավելի ազնիվ են, արդար են, աշխատասեր ու եռանդուն են, ու ովքեր չեն ուզում հարամ բան անեն ու հարամ ձեվով ապրեն: Էթում են է՛ն մարդիկ, ովքեր անսահման զզվել են էս համատարած անազնվությունից ու այան-թայանից, էս համատարած սուտ ու խաբեությունից, ովքեր ուզում են իրանց հայալ քրտինքով վաստակեն իրանց ապրուստը, ովքեր չեն ուզում ճորտ ու ստրուկ մնան:

Երկրում մնում են մենակ է՛ն կարգին մարդիկ, ովքեր էթայու ոչ մի ճար չունեն, ու մեկ էլ՝ ծուլերն ու անկարողները, ծերերն ու անտեր անտիրականները, ու իհարկե՛ անազնիվներն ու անարդարները, ու սրանց փաշաները, սուլթաններն ու խաները:

Մեր երկրի մոտ իրեք միլիոն մարդուց ամենաքիչը միլիոն ու կես մարդ ա գնացե: Թե որ էսի չի գենցիդը, բա ի՞նչն ա: Իզուր չի, որ հզոր տնտեսագետներն ասում են [13-15, 20], թե հետ մնացող երկրները պտի ամեն գնով մեծացնեն իրանց բնակչության թիվը:

Հմի տարին մոտ հարուր հազար մարդ ա էթում երկրից: Ըսենց որ էթան, տասը-տասներհինգը տարի հետո էլ ոչ մի Հայաստան չի մնա:

Ասել եմ արդեն, որ **թո** բառն առանց **ղ-ի՛** ըղձականը շեշտող թարմատար ա (եղանակիչ ա):

Բարբառը, երբ էսի եղանակիչ ա, **ղ-ն** անսխալ ջնջում ա: Ստանում ենք երկու բառ՝ նույն արմատից: նկատի ունեն՝ մե՛կ էլ՝ **թող-ը**, ինչը բայ ա: Չենք ասում՝ **ձեռքս բաց թո**, ասում ենք՝ **ձեռքս բաց թող:** Կամ էլ ասում ենք՝ **իրան թող թո գա**, էս երկուսն էլ իրար հետ:

Վատ ոտանավոր չի, իսկ կառուցվածքը, մետրիկայի ու մեղեդու տեսանկյունից, գերազանց ա:

Տեն՞ում ես,
 Թոքախտ օրերը
 Հրաժեշտ են տվե դարերի շարանին,
 Էկե ու հանել են շապիկ ու փոխան –
 Ու կախե հիվանդ արեվի պարանին.
 Տեն՞ում ես,
 Զարթնե՛լ են դարավոր քնից –
 Փաշա՛ ու սուլթա՛ն ու խա՛ն:

Օրերի նիհար ու կապտած կողերին
 Կպել են լվիճ ու ոջիլ,
 Ու լկտի-լկտի, նայելով հիվանդ շողերին,
 Տզի պես կպել են օրերի մագաղաթ մսին
 Ու ձեռ են առնում զառանցող լուսին:

Արուն ա: Նախճիր ու ոճիր:

Է՛, խմենք: Մեկ չի՞, աստված կամ չաստված...
 Ու այնուհանդե՛րձ,
 Տե՛ր Աստված, շանթերըտ ճոճի՛,
 Բորբոքի՛ արեվի քուրան...

Թո՛ որ զառանցող լուսը գորանա՛ ու շողշողա՛,
 Թո՛ որ արեվի շանթերը սուրա՛ն,
 Կործանե՛ն լվի՛ճ ու ոջի՛լ,
 Ու թո չքանա՛ ողորմածություն վաճառող չարչի՛ն,
 Ու չարչարանքը ստրուկ ու հարճի –
 Տրի՛ ու կարճի,
 Թո որ ամե՛ն տեղ ըլնի սեր ու գուրգուրանք,
 Թո կորչի՛, վերանա ամմե՛ն զարհուրանք,
 Ու թո էս անգամ –
 Քնե՛ն հավիտյան –
 Փաշա՛ ու սուլթա՛ն ու խա՛ն:

22. ԵՂԵՍՊԱԿՆԵՐ, ԵՂԵՍՊԱԿՆԵՐ

Ոտանավոր գրելն սկսել եմ 41 տարեկանից: Էտ վախտերը մեկն ասեց, որ Դիլան Թոմասը լավ վեռ-լիբր (ազատ ոտանավոր) ա գրում ու ասաց համ էլ (մոտավոր), թե ազատ ոտանավորն ինչ ա: Էտ առիթով եմ էսի գրե:

Գրելուց մտքիս Հ. Ք. Անդերսենի «Ձյունե թագուհու» մի էպիզոդն էր, երբ ծաղիկները Գերդային իրանց հեքիաթներն են պատմում: Ու մեկ էլ **եղեսպակ** բառի էկզոտիկան ա էղե:

Եղեսպակը շալֆելն ա, ու էսի էնքան է՛լ մի սիրուն բույս չի:

Հետո իմացա թե վեռ-լիբրն ինչ ա: Լեն իմաստով՝ սրա մեջ կարա հանգ է՛լ ընի, ռիթմ էլ, բայց անկանոն, կամ էլ քու ուզած կանոններով, կամ հեռու-հեռու, կամ շատ մոտ – ոնց ուզես: Բայց վեռ-լիբրին հատուկ են մանավանդ այիտերացիաները՝ նման բաղաձայնների խաղը, ու ասոնանսները՝ նման ձայնավորների խաղը:

Վեռ-լիբր են Խորենացու պահած մեր հնագույն ոտանավորի նմուշները (Վահագնի ծնունդը, Սաթենիկին առեվանգելու պատմությունը ևն). վեռ-լիբր ա մեր գրաբար աստվածաշունչը (սրա առանձին հատվածներին սրա՛ համար են ասում տուն, այսինքը, ոտանավորի տուն: Վեռ-լիբր են՝ Խորենացու ու Բուզանդի պատմությունները ևն:

Ընտիր ու դասական վեռ-լիբր են համ էլ՝ նարեկացու **Մատյանն ու տաղերը**, որ մերոնք բռնե ու ռիթմավորել են էսօրվա մետրերով, ու հարամել են **Մատյանի պոեզիայի վիթխարի յուրօրինակությունը**:

Էս մի ոտանավորըս էնքան էլ դուրըս չի գալի, ու ըստնց էլ չգիդեմ, ճի՞շտ եմ անում, որ էս գրքիցըս չեմ հանում ու դեն քցում:

Մենք շատ կոպիտ սխալ ենք անում, որ երբ **ո-ով (ե-ով)** սկսվող բառերին ուրիշ բառ ենք ավելացնում, ու հետո էլ, երբ էս **ո-ն** ընգնում ա բառի մեջտեղն ու բռնում ենք ու էս **վո** ձենն արտասանում ենք **օ (յե** ձենն էլ՝ **ե)**:

Ու հլը կանոն էլ ենք հորինում, թե պոի ասենք՝ **անօրսայի, անօղնաշար, տասերեք, չենթարկվեց, անօրդի, անօրակ** ևն: Սխալ ա, որտեղ հայերն էս բառերն արտասանում են՝ **անվորսայի, անվողնաշար, տասնիրեք-տասիրեք-տասյերեք, չըլենթարկվեց, անվորդի, անվորակ**:

Հայերենն է՛ն լեզուն չի՞, ինչով որ հայերն են խոսում: Կարո՞ղ ա՛ հայերը չգիդեն, թե հայերեն ո՛նց են խոսում, ու սրա համար էլ սա՛ղ հայերն էլ հայերեն սխալ են խոսում:

Սրա բառապաշարի մասին տես Ի՞նչ անեմ, որ ի՞նչ անեմ, ու Ամեն իրիկուն ժամը 13-ից հետո ոտանավորների էսենները:

Թուլ ոտանավոր ա, բայց մեջը ոնց որ մի կարեվոր բան ընի, ինչը ինտուիցիայով եմ զգում: Սրա համար էլ դեն չեմ քցում:

Ու սուտակե եղեսպակներն օրորվելով
ձեն տվին.

– Ինչքան հանդա՛րտ ու դեղին ա
ծիածանվում ծիրանին,
Տե՛ս, հլը տե՛ս, դանդա՛ղ ու մե՛րկ,
Դողդողում են ոլորտների շղարշները միասին,
Օ՛, դողում են, ու ծածանվո՛ւմ,
ու լողում են
Մթնոլորտի անվորսայի էրեսին,
Ու անսահման ափսոսանքով –
կարոտում մեր էրազին:

Ու սուտակե եղեսպակներն օրորվելով

ձեն տվին.

– Իրա՛նք գիդե՛ն, իրա՛նք գիդե՛ն,
 ա՛խ, գիդե՛ն,
 Որ պտի գա՛,
 ա՛խ, պտի գա՛,
 Հաստա՛տ կգա արքայազնը էրագի,
 Ու հենց էկավ,
 անրջական մեր էրագը կպարուրի
 Անվորսալի շղարշներով բեհեգի,
 Ու հետո էլ, իրա նավով լուսաշաղախ,
 մեզ ըստեղից կտանի –
 Մեր էրագի արքայազն պատանին,
 Ու երկնային շղարշաթեվ ոգիները կնայեն –
 Ու անսահման ափսոսանքով
 կհետեվեն իրա նավի վերելքին:

Ու սուտակե եղեսպակներն օրորվելով
 ձեն տվին.

– Հեռո՛ւ- հեռո՛ւ, մշուշածա՛ծկ,
 ալեծածան մի կղզում,
 Ուր անուրջն ա
 անհանգիստ ու կարոտակեզ
 Ծիածանվո՛ւմ ու հուզվո՛ւմ,
 Շրջանակված արմավներով,
 ձարխոտներով կուսական,
 Ուր էրագի տատասկափուշ շղթաներն են
 կոտորակվո՛ւմ, ավազվո՛ւմ,
 Այ հենց ընդեղ –
 մարմարասալ, մարմարասյուն մի դղյակ կա դիցական,
 Ու դղյակում – լուսակամար մի տաճար –
 դահլիճներով ծիսական.
 Հա՛, կտանի՛, մեզ էն կղզի՛ն կտանի,
 Մեր էրագի արքայազն պատանին:

Ու սուտակե եղեսպակներն օրորվելով դողացին,
 Հետո հանդարտ լռեցին,
 ու անուրջի շղարշներում –
 Անտես, անձեն – անէացան հիացած,
 Ու հեռավոր հորիզոնի
 Մշուշապատ վախճաններում լուծվեցին:

Գլուխ 5 ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵ՛Զ Ի՞ՆՉ

5.1 ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈ՞Ւ, ԹԵ՞ ԳՐԱԿԱՆ ՈՃԵՐ

Հովհաննես Թումանյանն ասում ա՛ «գրական կոչված լեզու», ու ոչ թե՛ «գրական լեզու» [11]: Էսի շատ կարեվոր ա, որտե՛վ լուրջ, գիտական լեզվաբանությունը «գրական լեզու» հասկացությունը չունի: Լեզվաբանությունը, **լեզու** ասելով, նկատի ունի մենակ ու մենակ կենդանի, «խոսակցական» լեզուն, բարբառը:

Էս գրքի նախաբանի մեջն արդեն ասել եմ, որ ավելի ճիշտ կըլնի, եթե «գրական լեզու» բառերի տեղն ասվի՝ «գրական ոճեր»:

Իսկական կենդանի լեզուն, օրինակ, ազատ շուկայի պես, **ինքնակազմակերպ ա ու ինքնակառավար**: Իսկ գրական ոճերը ըստնց չեն: Սրանք կախված են առանձին մարդկանց քմհաճույքից: Սրա համար ա, որ օրինակ, անգլիացիները, մոտ հարուր տարի առաջ, արքիոմ են համարել մի սկզբունք, ինչին ասում եմ՝ **Լեզվի Գլխավոր Օրենք (ԼԳՕ. տես էս գրքի 35, 119-121, 219-221 ու 239 էջերը)**:

Անգլիացի նշանավոր լեզվաբան Հենրի Սվիթի ձեվակերպածով ու իմ լրացրածով՝ էս սկզբունքն ասում ա.

Որե՛վ է լեզվի, այսինքն, բարբառի ամե՛ն-ամե՛ն ինչը, ըլնի էտի՛ հնչունաբանություն, բառակազմություն, ձեվաբանություն, շարահյուսություն, թե նույնիսկ՝ առոգանություն, արտասանություն, ձայնարկություն ու միմիկա ու ժեստ, «ճիշտ ա, բնիկ ա, ընտիր ա, սիրուն ա» ու անպայման ընդունելի ա՛ մենակ ու մենակ հենց է՛ն պաճառով, որ էտ բարբառը կրողների մեծ մասի խոսքի մեջ ուղղակի կա, գոյություն ունի (ու ոչ թե լեզվաբանների կամ ուրիշ մարդկանց ասելով կամ ցանկությունով, կամ էլ պետական մի վճռով):

(Էս օրենքի ու սրա մի կարեվոր հետեվանքի՝ թվական-գոյական զույգի ու սրա բայի համաձայնության մասին, տես հետո ու համ էլ []-ի **Հավելվածի** մեջ):

Խաչատուր Աբովյանը հենց է՛ս սկզբունքն էր հիմք ընդունել իրա գրելու սիստեմի համար, չնայած «Վերքի» մեջը, գրաբարի ազդեցությունով, էս սկզբունքից մեկ-մեկ շեղվում ա, ինչից էս գրքի նախաբանի մեջն արդեն խոսել եմ:

Բայց հազար ափսոս, որ հյուսիսյանները, չհավատալով ԼԳՕ-ին, մեր ուսյալներին համոզեցին, թե Աբովյանը սխալ ա, ու որ իրանք

պտի իրանց ծրագրով է՛ն տեսակ «գրական լեզու» ստեղծեն, ինչը «չստրկանա» ո՛չ բարբառներից որե՛վէ մեկին, ոչ է՛լ գրաբարին, ու հլը պտի էս լեզուն էլ սովորացնեն սա՛ղ հայերին:

Պարզ ա, որ «Հյուսիսափայլի» էս ծրագիրն իրագործելի չի, ու էսօր փաստ ա, որ մեր ժողովրդի մեծ մասը «Հյուսիսափայլի» ծրագրով ստեղծած էս «գրական լեզվին» ուղղակի չի՝ տիրապետում, չի՝ կարում տիրապետի, ու չի է՛լ տիրապետի:

Էլի՛ ասեմ, որ էս սաղ արար աշխարհում չկա գոնե մի փոքրիկ-փոքրիկ գյուղ, ինչի մայրենի լեզուն մեր էս գրական լեզու կոչվածը ըլնի: Այսինքը, որ էտ գյուղացիները էս լեզուն սովորած ըլնեն իրանց մերերից ու հարազատներից, ու անընդհատ խոսան մեր ժուռնալիստների էս գրական կոչված լեզվով, խոսան առանց կակազելու ու կմկմալու ու լարվելու:

Ավելին, սաղ Հայաստանում ու նույնիսկ աշխարհում երեվի չըլնի մեկ-երկու տասնյակ մարդ, ով մեր գրական կոչվածը իրա մայրենի լեզվի պես գործածի:

«Հյուսիսափայլի» ծրագիրը հակառակ ա ԼԳՕ-ին, հակառակ ա լեզվի բնությանն ու էությանն ու, ի վերջո, համաշխարհային լեզվաբանությանը:

5.2 ԷՐԿՈՒ ԼԵԶՎԻ ՀԻԲՐԻԴ ՉԻ ԸՆՆՈՒՄ

Թումանյանը (Աբովյանն է՛յ) ծանոթ չէր ո՛չ հնդեվրոպագիտության իրա օրերի նվաճումներին, ոչ է՛լ Հենրի Սվիթի ձեվակերպած Լեզվի Գլխավոր Օրենքին, ու Էրեվանի բարբառը հետեվողական չէր կիրառում: Ու զարմանալի չի, որ Թումանյանը երեվի կարծում էր, թե մի քանի բարբառը իրար ձուլելու ու մի իսկական լեզու սարքելու հնար կա:

Այնինչ, գիտական լեզվաբանությանը հայտնի է, որ.

Էրկու կամ ավել բարբառն իրար ձուլելու ու սրանցից մի ինչ-որ «միջին» լեզու սարքելու ոչ մի ձեվ, ոչ մի հնար չկա:

Հակառակը, լեզվաբանությունն արքսիոմ ա համարում է՛ն փաստը, որ թե Էրկու բարբառ ինչ-որ ձեվով իրար հանդիպեն, սրանցից մեկն անպայման ու համարյա անհետ մեռնում ա:

Էս դրույթին հակասող ոչ մի դեպք հայտնի չի, ու էս դրույթը հաստատվում ա միլիարդ ու միլիարդ փաստով ու համ էլ տրամաբանական վերլուծությունով:

Զարմանալի ա, որ ոչ մեկը չի տենում, որ.

Երբ Էրկու լեզու ա դեմուդեմ դուս գալի իրարու, սրանցից մեկն ուղղակի մեռնում կորում էթում ա:

Էս տեսակ բան՝ քթերիս տակ անընդհատ ա ըլնում:

Օրինակ, մեր բարբառներն ու Էրեվանի բարբառն էսօր «հագել» են իրար, ու բարբառները մոտ 100 տարի ա, ինչ արդեն փոխվում են: Բայց սկզբում բարբառները փոխվում էին ռադիոյի, դպրոցի, մամուլի ու

գրականության միջնորդությունով, ինչի ազդեցությունը շատ էր հզոր, իսկ էսօրվա փոփոխությունները շատ ավելի դանդաղ են:

Փոխվում էին ու են, մանավանդ, բարբառների հնչունները. մեկ էլ՝ էրեվանի բարբառի առանձին բառերն սպանում էին ու են բարբառների նույն իմաստով բառերն ու բռնում դրանց տեղը: Գրական ոճերն սպանեցին բարբառների (մեծ մասով ու սխալմամբ թուրքերեն համարվող) սպասարկու բառերի մի մասը (օրինակ, *ամա-ն*, *սհաթ-ը* ևն):

Իսկ երբ էրեվան էթալ գալը հեշտացավ, գյուղերի մանուկներից շատերը, ծնողների հարկադրանքով, անցան իբր «գրական լեզվով» խոսելուն, չնայած էտ էրեխեքը խոսում են հենց էրեվանի բարբառով:

Հիմա հարց եմ տալի:

Բացի Արարատյան բարբառի խոսվածքները, մեր բարբառներից հեշ մեկը, գոնե մի քիչ, ազդե՞լ ա էրեվանի բարբառի վրա, խառնվե՞լ ա էրեվանի բարբառին, փոխե՞լ ա էրեվանի բարբառի քերականությունը:

Իհարկե՞ չէ:

Էս վերջերս, 1988 թվի դեպքերից հետո, լիքը ղարաբաղցի էկավ էրեվան: Հիմա՝ էտ ղարաբաղցիների լեզուն գոնե մի քիչ, գոնե աննշան չափով ազդե՞ց էրեվանի բարբառի վրա: Իհարկե՞ չէ:

1946 թվին Ստալինը լիքը արտասահմանի հայ բերեց էրեվան, ու սրանց մեծ մասը խոսում էր «արեվմտահայերենով»: Հմի ի՞նչ, էս արեվմտահայերենն ազդե՞ց էրեվանի բարբառի վրա: Նորից՝ չէ ու չէ:

Երեվան էկած ղարաբաղցիներն ու նորեկ արեվմտահայերն *իրա՛նք* էին ձրգտում (ու հա է՛լ ձգտում են) էրեվանի բարբառով խոսան, որտեվ ամանչում էին (հենց իրանց մայրենի լեզվից, այսինքն, հենց իրա՛նց բարբառից էին ամանչում), իսկ սրանց մանուկ զավակներն արդեն խոսում էին էրեվանի անթերի բարբառով, չնայած, կարող ա հլը մեկ-երկու սերունդ տանը գործածեին իրանց ծնողների մայրենի բարբառը:

Ճիշտն ասած, ազդում ու հաղթում ա մենակ է՛ն լեզուն (չմոռանանք, որ գրականը լեզու չի՛, ո՛ճ ա), ինչը որ ժողովուրդը պատվավոր կամ ձեռնտու ա համարում: Ու երեվի հաղթող լեզվի խոսողների թիվն ու էս լեզվի գրականության մակարդակը կարեվոր չի: Էս թիվն ու էս մակարդակը կարող ա շատ ավելի քիչ ըլնի, քան մեռնող լեզվինը:

Մեր էս տարածքն էկած թուրք սելջուկների թիվը հինգը թումանից (50000 հոգուց) ավել չի էղե: Բայց թուրքերի լծի տակի հայերը մտածում էին, որ թուրքերեն իմանալը պատվավոր ա ու ձեռնտու, մանավանդ որ մեր գրագետներն անընդհատ արհամարհել են կենդանի բարբառները: Ու Արեվմտյան Հայաստանի գյուղերից շատերը, հլը 1915 թվի ջարդերից էլ առաջ, դառել էին թրքախոս:

Ներսես Շնորհալին (օրինակ) պահանջում էր որ գրեն «ծածուկ ճառի», իսկ Գրիգոր Մագիստրոսը՝ «ծածուկ բանի», այսինքը, ընե՛նց գրեն, որ հասարակ ու անկիրթ հայը գրածը չհասկանա: Մերոնց էսօրվա պահանջները սրանցից էնքան էլ տարբեր չեն:

Եղիշե Չարենց – ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Չարենցի էս ութը տողը չեմ փոխի մեր արտեմիստների (տես իմ [16]-ը) 1960-ականներից հետո գրած սա՛ղ «պոեզիայի» ստեղծած «ազատ ու մոդեռն ոտանավորի» հետ, ինչը, իմ հաստատ համոզմունքով, պոեզիա չի, ու մենակ վնաս ա տալի մեր պոեզիային, որտե՛վ ջահելներին մոլորացնում խաբում ա, թե էտի պոեզիա ա:

Հազար ափսոս, բայց մեր էսօրվա պոետների երեվի մի 80-90 տոկոսն իրանց էտ անհամ, անհեթեթ ու այլանդակ «ազատ ոտանավորն» ա գրում, **հենց իմանալով, թե արտասահմանում մենակ ըսենց են գրում:** Մեր հայ «տեսաբան-գրականագետներն» էլ հպարտ-հպարտ հայտարարում են, թե «հայ պոեզիան զարգացման մի նոր ու ավելի բարձր փուլ ա ապրում», բա՛՛:՝

Արդեն ասածս ամերիկացի Ֆրոստը, օրինակ, դասական մետրերով ու հանգերով (նոյնիսկ՝ արեվելյաններով) լիքը ահավոր սիրուն ոտանավոր ունի, բայց հետն էլ՝ լիքը սքանչելի ազատ ոտանավոր ունի: Ու մենակ Ֆրոստը չի, որ ըսենց ա:

Արտասահմանում քսաներորդ դարի երկրորդ կեսի ու էս վերջի տասնամյակի պոետների մեջն էլ լիքը ըսենց պոետ կա, բայց մեր արտեմիստները, ու «տեսաբան-գրականագետներն» իրանց կիսատ-պոատ ռուսերենից բացի, ուրիշ լեզու չգիդեն, որ էս ասածիցս խաբար ըլնեն:

(Էն մեկ-երկու պոետն էլ, որ քիչումիչ եվրոպական լեզու գիդի, էլի մոլորված ա, որտե՛վ ըստեղի նորագույն հովերը մենակ ազատ ոտանավորն են ընդունում, չնայած որ մեր «տեսաբաններին» որ հարցնես, թե ազատ ոտանավորն ի՞նչ ա, ոչ մի խելքը գլխին խոսք չես լսի: Չգիդեն՝):

Չարենցի էս ութը տողի մեջը ոչ մի կոնկրետ ասելիք չկա, բայց սրա մեջը, մե՛կ ա, կյա՛նք կա, պատմություն կա: Սրա մեջը, վա՛խ կա, տազնա՛յ կա, սարասա՛փ կա, ու հլը լիքը ուրիշ բան էլ կա: Էսի իսկական պոեզիա ա, իսկական ոտանավոր ա:

Էսի ոչ սկիզբ ունի, ոչ է՛լ վերջ, բայց սրա վեկայած վայրենի տեմպը, որ մի իսկական **չեքսպիրյան տեմպ ա**, չի թուլանում մինչե՛վ սրա վերջի բառը, ու հլը ուժեղանում ա: Ու չնայած սրա չորսը հանգը իզական ա (այսինքը, տողի վերջի շեշտը նախավերջի վանկի վրա ա, ինչը հայ պոեզիային հատուկ չի), ո՛չ սրա տեմպն ա ընգնում, ոչ է՛լ ռիթմն ա փոխվում: Իսկ սրա վերջի երկու արական հանգը ավելի են ուժեղացնում ֆինալի սրընթաց ողբերգականությունը:

Իրոք որ, էսի հանճարեղ ոտանավոր ա:

Հմի որ սրա մեջի է օժանդակ բայի տեղը դնենք ա-ն, որ Արարատյան սաղ խոսվածքներն են գործածում, սրա սիրունությունից ի՞նչը կպակասի: Ընձի թվում ա, որ սիրունությունը հլը մի բան էլ կշատանա:

Վարժվելու հարց ա: Բայց պտի կարդացողի համ **ա՛չքը** վարժվի, համ է՛լ **ակա՛նքը:** Ու կարդալուց էլ – պտի էսի կարդան **էրեվանի՛** բարբառի ինտոնացիայով, ու ոչ թե մեր ավանդական կոչված գրական դիկցիայով, թե չէ՛ չի սազի ու խորթ կթվա:

Դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են
ձիերը,
Մթի մեջ դոփում են, խփում են
պայտերը,
Պայտերը խփում են, խփում են
հողին.–
Անծա՛յր է գիշերը, անհայտ է ուղին:

Գնո՛ւմ են, գնո՛ւմ են, գնո՛ւմ են
ձիերը,
Մոտիկ են, հեռու են, դոփում են
պայտերը,
Պայտերը դոփում են քունքի՛ս մեջ
հիմա.–
Անհա՛յտ է աշխարհը՝ անցնում է ու
մահ:

Դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են Գնո՛ւմ են, գնո՛ւմ են, գնո՛ւմ են
 ձիերը,
 Մթան՝ մեջ դոփո՛ւմ են, խփո՛ւմ են Մոտի՛կ են, հեռո՛ւ են, դոփո՛ւմ են
 պայտերը,
 Պայտերը խփո՛ւմ են, խփո՛ւմ են Պայտերը դոփո՛ւմ են քունքի՛ս մե՛ջ
 հողի՛ն – հիմա –
 Անծա՛յր ա գիշերը, անհա՛յտ ա ուղին: Անհա՛յտ ա աշխարհը, անցն՛ում ա– ու
 մահ:

ՊՏՈՒՅՏՆ ՈՒ ԱՎԱՐՏԸ

23. ՊՏՈՒՅՏԸ

(Առասպելականն անիմաստ ու ունայն, որ ոչ մեկը չի հիշում)

Էսի 24-րդից հետո եմ գրե: Ընձնից անկախ՝ Հերակլիտոսի կամ Պլատոնի Մեծ տարվա կամ ցիկլի իդեան եմ պատմե, չնայած մտքիս էղել ա համ էլ յանի էյնչտեյնի տեսությունից բխող՝ կծկվող-բացվող տիեզերքի մոդելը: Սկզբում չէի ուզում դնեմ գրքիս մեջ, որտեղ անհարմար էի զգում. ոնց որ մի տեսակ դիտմամբ գիտելիքս ցուցադրած ըլնեմ: Բայց բանաստեղծ ընգերներս ասին, որ դնեմ:

Առհասարակ, մարդը, հլը փոքրուց, հա է՛լ հարց ա տալի, թե էս սաղ արար աշխարհքը ո՞րդուց ա: Էս հարցը վերջը հասցնում ա մահվան անխուսափության իմացությանն ու սրա պատճառած ասրսափին: Հետո էս ասրսափն էլ ստիպում ա, որ մարդ հավատա ինչ-որ մի տեսակ դրախտի կամ գոնե (չէղած տեղը) մի դժոխքի, ուր էլի կյանքը շարունակվում ա: Կամ էլ, որ հավատա մի ինչ-որ գերբնական հորը, ով չի թողում որ մարդն անհետ մեռնի կամ էլ ընենց ա անում, որ մարդը մեռնի, բայց հոգին անմահ մնա:

Իմ համար հեչ էլ կարելի չի, թե էս սաղ Տիեզերքը ե՛րբ ա ստեղծվե, կամ ո՛վ ա ստեղծե, կամ էլ սրան հեռու ապագայում ի՛նչ կպատահի: Իմ համար կարելի ա, որ Արեվը հլը մի հինգ միլիարդ տարի էլ էս թափով վառվելու ա:

Բայց ավելի կարելի ա, որ մարդկային քաղաքակրթության կյանքն արդեն վտանգված ա, ու կարող ա պատահի, որ էս քաղաքակրթությունը նույնիսկ մի 100 տարի էլ չդիմանա, թե որ մարդ արարածը ըսենց անմիտ ձեվով վարվի տնտեսության ու քաղաքականության հետ (տես [13]-ը):

Բայց էս ոտանավորի պատմությունն ի՛մ մասին չի: Ես պրոֆեսիոնալ ֆիզիկոս եմ, ու էնքան շատ բան գիդեմ բնության մասին, որ ոչ մի գերբնական բանի չեմ կարա հավատամ: Էսի, էս ոտանավորը, ուրիշների՝ մասին ա, է՛ն մարդկանց մասին ա, ովքեր բնագետ չեն: Կամ էլ է՛ն բնագետների ու ոչ պրոֆեսիոնալների մասին ա, ովքեր բնագիտության մեթոդը կամ լա՛վ չգիդեն, կամ էլ հե՛չ չգիդեն: Ու էս ոտանավորի հարցերն իրա՛նց հարցերն են: Ու արդեն մոտ ութը հազար տարի ա, ինչ էս հարցերը համարյա ամեն մարդ ա տալի: Ոտանավորով պատմողը (այսինքը հմի՛ հենց ե՛ս) սրա՛նց դարդ ու ցավն ա պատմում:

Իհարկե, էսի էլ ա ազատ ոտանավոր, սրանից հետո էկողն է՛լ, չնայած սրանք հանգ շատ ունեն:

Սրա ստարտը՝ հենց առաջին տողն ա էղե: Էս տողն իրա հետեվից բերեց մնացածը:

Առհասարակ, տողն ու հանգը շատ բան են հուշում ու ստիպում են, որ թեման հենց իրա՛նց ուզածով շարունակես, իրա՛նց ասած տեղը տանես: Շատ անգամ սկզբից չես է՛լ իմանում, թե գրածդ ո՛ր ա էթայու հասնի:

Սրա ու սրա հաջորդի բառապաշարի համար տես **Ի՞նչ անեմ, որ ի՞նչ անեմ, ու Ամեն իրիկուն ժամը 13-ից հետո** ոտանավորների էսենները:

Վատ ոտանավոր չի. որ մեր արտեմիստներն ըսենց մի բան գրեին, երկինք կհանեին: Տեխնիկայի առումով իհարկե նոր ա, իսկ Խայամի քառյակը հանճարեղ ա:

Էս ոտանավորի դեմը դրածս Խայամի քառյակն ուղղակի հանճարեղ ա:

Խայամի էս քառյակը, ինչքան ես գիդեմ հայերեն թարգմանած չի էղե, չնայած մերոնք լավ էլ իմացել են, որ Խայամն ըսենց մի քառյակ ունի, որտեղ Թումանյանը հենց էս քառյակին ա պատասխանե իրա հայտնի քառյակով (ինչը դրել եմ հենց հաջորդ ոտանավորի դեմը):

Մերոնք անընդհատ ասում են, թե մենք ամեն ինչը պտի բնագրից թարգմանենք, որ «ճիշտ» ու լավ թարգմանություն ունենանք: Էսի սխալ ա: Էս քառյակը թարգմանել եմ ռուսերենից ու, իմ կարծիքով, գերազանց եմ թարգմանե: Ուրեմը, հարցը թարգմանի վարպետությունն ա, ոչ թե միջնորդ լեզվի տված վնասը:

Իհարկե, միջնորդ լեզվով արածը պտի շատ լավը ըլնի, որ վերջի լեզվի թարգմանության մեջ շատ բան չկորի: Ես ի՞նչ անեի, որ ռուսերենից չթարգմանեի, ախր ես ոչ՛ նոր պարսկերենը գիդեմ, ոչ է՛լ Խայամի գործածած միջին պարսկերենը: Հայաստանում էսօր ռուսերեն ու եվրոպական լեզու իմացող ահագին մարդ կա, բայց դրանց մեջը շատ ու շատ քիչ գերազանց գրող ու պոետ կա: Ու երբեք էլ չի ըլնի, մինչեվ

մենք էլ մի 100-200 միլիոն շրառնանք: Հո՞ օ՞ճեռներս չպտի ծալենք ու էնքան սպասենք, որ դառնանք էտքան:

*Քանի՞ այգ ու մթընշաղ ա անցե գիրկը անհունի,
Ու պտույտն էս հավերժական, ո՞վ իմանա, միտք ունի՞:
Դեգերելով էս աշխարհում՝ ոտըդ ըզգույշ դիր հողին,
Ո՞վ իմանա, ո՞ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի:*

Օմար Խայամ, 11-րդ դար

Բա էտ դարերը անիմա՞ստ գնացին...
Բա անիմա՞ստ էկան ու ունա՞յն գնացին –
Օսիրիսն¹ ու Ռան² ու ահեղ Օլիմպիացին³,
Ու Հարդագողը վիշապաքաղ⁴ –
Բոցամորուս ու երկնածին,
Ու հաստաբազուկ ու խայտակըն
Աղեղնավորն⁵ օտարածին:

Ու բա՛ անիմաստ ու ունա՞յն գնացին –
Միամիտ էնկիդուն⁶,
Ջորավոր Գիլգամեշն⁷ ու դիցուհին՝ Իշտար⁸,
Ու բա էտ դարերը –
Ոնց որ սուրսայրի նշտար,
Ոչ մի բան չե՞ն թողնի
Պատմության հատորի ո՛չ մի էջին,
Կսափրե՞ն ամեն ինչ,
Կսրբե՞ն մինչեվ վերջակետն ամենավերջին:

Ու բա անիմաստ ու ունա՞յն էր լեռնանում
Օվկիանոս տռփանքը Շամիրամի⁹,
Ու զո՞ւր էր երկրային աշխարհից հեռանում
Միածին Որդին¹⁰ սրտամաշ Մարիամի,
Ու բա անիմաստ ու զուր չի՞, որ չի մոռանում
Էլրհիմ Հոգնակի-Եզակին¹¹
Խարդավանքն Ահրիմանի¹²:

Ու բա անիմաստ ու ունա՞յն էին զորանում
Դուստր ու ուստրերն Ադամ ու Եվայի –
Աքսորյալ ու անապատում – մերկ ու ամայի –
Ու զո՞ւր էր անընդհատ լերդանում
Կոցահար լյարդն արծվաչարչար Տիտանի¹³,
Ու հազարամյակն էս, հլը որ պատանի,
Բա էտ սա՛ղ պտի պատանի՞,
Պտի սափրի՞ ամեն ինչ, սրբի՛ ու տանի՞,
Ու ոչ մի բան չթողնի՞
Էս անհանգիստ ու անդադար Գնդից –
Ու Կռոնոսի¹⁴ արական արգանդից
Բա հեչ բան չծնվե՞ց – պիտանի:

Ու հետո՛ – բա անիմաստ ու ունա՞յն
Խոցվեց ու մահացավ –

Միամիտ ու բռնկվող զայրագին Հերոսի¹⁵
 Թունավոր նետից –
 Իմաստուն Քիրոնը¹⁶,
 Ու բա անիմաստ ու ունա՞յն ծնվեց ու վերացավ
 Հինավուրց ու միամիտ ու մանուկ կրոնը¹⁷,
 Ու քանի՞, քանի՞՞ անգամ
 Անիմաստ ու ունայն անցավ գետը Անհուշի¹⁸ –
 Անտարբեր ու անմռունչ Քարո՛նը¹⁹,
 Ու Վերինն ի՞նչ առիթով ասաց.– Եղիցի՛ ²⁰,–
 Ու վառեց էս մարմրող ու ծխարձակ կերո՛նը²¹:

Ողորմյա՛ ու քա՛վ լիցի,
 Բայց հաստատ – ամեն ինչ կմեռնի՛ ու կեթա՛,
 Ու ախր չի մնա ո՛չ զեռուն, ո՛չ կարիճ,
 Էս անգամ ո՛չ մեկն էլ չի՛ դառնա
 Ո՛չ կիր, ո՛չ կավիճ,
 Ու ո՛չ մի միջատ, մանրէ ու ուտիճ,
 Ո՛չ մի շյուղ, ո՛չ մի ծեղ չի՛ մնա,
 Չի՛ մնա ո՛չ թույն, ոչ մեթան²²
 Ու ո՛չ էլ երկնային մանանա²³:

Ու բա ոնց – կմեռնեն համ էլ չարե՛րը,
 Կմեռնի ջո՛ւրը, հո՛ղը, ավա՛զը համ էլ,
 Ու համ էլ քարերը,
 Որտե՛վ ա՛նպայման
 Մի օր կխզվեն էս Հողակոշտի
 Գե՛րծանրաբեռնած լարե՛րը,
 Ու էսի կցնդի ու կանհետանա²⁴,
 Ու լուսի շողից – մութ է՛լ չի մնա,
 Որտե՛վ, իհարկե, ի վերջո,
 Պտի որ օրերից մի օր
 Պոռթան ու կորեն
 Սա՛ղ Տիեզերքի գա՛մ ու կարե՛րը:

Բայց համ էլ – քանի՞ անգամ ա
 Տիեզերքն ըսենց մաշվե, քչացե,
 Քանի՞ անգամ ա
 Աստղ ու մոլորակ հալվե, չքացե²⁵,
 Քանի՞ ծննդյան օր ունի Միակ-Անիմանալին²⁶,
 Ու Տիեզերքի ո՞ր խուլ անկյունն ա
 Հանգրվան սարքե կյանքի բանալին,
 Կամ էս Անդադար Ջրադացի²⁷ մեջ
 Քանի՞ անգամ ու –
 Ի՞նչ ա փչացե:

Ու ո՛չ մի կասկած, որ Տիեզերքը
 Միլիա՛րդ ու միլիա՛րդ անգամ ա ծնվում,
 Ու որ անիմաստ ունայնն ունայնից

Միլիա՛րդ ու միլիա՛րդ անգամ ա սնվում,
 Ու որ մի օր էլ,
 (Իհարկե, թե որ
 էտ օրն ունենա – իմաստ ու կամ էլ – նշանակություն)
 Արարչությունը կունենա մի նո՛ր,
 Անիմա՛ստ, ունա՛յն շարունակություն,
 Որտե՛վ վախճանը հա՛ վախճանվում ա –
 Ու նոր սկզբի սկի՛զբ ա դնում:

Ու ո՛չ մի կասկած,
 Որ հա՛ ու հաստատ – ամե՛ն ինչ պտի նորից կրկնվի՛,
 Ու որ անիմաստ ունայնը նորից պտի զորանա՛,
 Որ հետո անվե՛րջ ժամանակի մեջ –
 Նորից վայրկյանվի՛,
 Որ հետո անվե՛րջ ժամանակն ի՛նքը
 Դարերով նորից անվե՛րջ կուրանա՛:

Բայց համ էլ՝ թե որ
 էղել ա արդեն
 Ամեն-ամեն ինչ –
 Մաշված դարերի գոմ ու փարախում,
 Ու ժամանակը կրկնել ա իրան
 Բազմաթիվ անգամ, ու անշեղ ու ճիշտ,
 Թե որ էս աշխարհն իրա պատճե՛նն ա,
 Միշտ ու փաստացի,

Խի՞ քան չենք հիշում Նախորդ Գալարից²⁸,
 Կամ խի՞ ենք վախում Աշխարարարից²⁹:

1. **Օսիրիսը** – Պտղաբերության մայր աստծո (տես 8-րդ դիտողությունը) կամ սրա դստեր սիրեկանը, ով ինչ-որ մի ողբերգական անցքով զոհվում ա: Ադոնիսի, Ատիսի, Արայի ու այլոց եգիպտական նմանակը, ավելի ճիշտ, նախակերպարը:

2. **Ռան** – Հին եգիպտացիների Արեվի աստվածը:

3. **Օլիմպիացին** – Հունական դիցարանի գլխավոր աստվածը, իրանա-հայկական Որմիզդ-Արամազդի նմանակը:

4. **Հարդագողը վիշապաքաղ, բոցամորուս ու երկնածին** – հայերի Վահագնը, ով «քաղում» քոքահան էր անում երկնային վիշապներին: Հնդիրանական **Վրաթրագնայի** նմանակը կամ զուգահեռը:

5. **Աղեղնավորն օտարածին** – Հայկ նահապետը, ով, ըստ Խորենացու, Հայաստանում չի ծնվել:

6. **Էնկիդուն** – Շումերաաքադական էպոսի գլխավոր հերոս հսկայի՝ Գիլգամեշի ախպերացուն, ով սկզբում գազանի պես ու գազանների հետ էր ապրում:

7. **Գիլգամեշը** – Շումերաաքադական էպոսի գլխավոր հերոս հսկան, Էնկիդունի ախպերացուն:

8. **Իշտարը** – Մայր աստծո սեմաբաբելական տարբերակը, Կիբելե-Աստարտե-Դեմետր-Պերսեփոնե-Վեներա-Ափրոդիտե-Անահիտ-Աստղիկի ու այլոց նմանակը: Սրա (կամ սրա դստեր) սիրեկանը՝ Ադոնիս-Ատիս-Օգիրիսը նն, զոհվում ա, ու էսի սուգ ա անում, ու բնությունն էլ հետն ա սուգ անում, ու սրա համար էլ իբր աշուն-ձմեռ ա ըլնում: Բայց երբ տարվա էն մի կեսը սիրեկանը հարություն ա առնում, Մայր աստվածն ուրախանում ա, ու գարուն-ամառ ա ըլնում: Սրա ու անտառի արքա

աստծո հավատալիքներին են կապված նոր տարվա, տյառն ընդ առաջի, վարդավառի, ծաղկագարդի ու բազում ուրիշ տոնը, որոնք քրիստոնեությունն անկարող էղավ վերացնելու ու հարմարեց իրա նպատակներին: Չափազանց տարածված էր սաղ Հին աշխարհում:

9. **Շամիրամը** – Սիրահարվել էր հայկական Արային: Շամիրամին ա վերագրվել Մայր աստծո մի քանի գիծը:

10. **Միածին Որդին** – Հիսուսը:

11. **Էլոհիմ Հոգնակի-Եզակին** – Աստվածաշնչի եբրայական տեքստը հրեաների գլխավոր աստծուն՝ **Յահվեհն**, զուգահեռ՝ գործածում ա համ էլ **Էլոհիմ** անունը, ինչը նշանակում ա՝ «աստվածներ» ու Յահվե բառի հոգնակին ա: Էսի ցույց ա տալի, որ հրեաների բազմաստվածության հետքերը Հին Կտակարանի մեջը հլը կան:

12. **Ահրիմանը** – Հին իրանցիների երկրորդ գլխավոր աստվածը, ով կերպավորում էր չարն ու չարի սկզբունքը: Ահրիմանը Բարու աստծո՝ Արամազդի հակոտնյան էր:

13. **Արծվաչարչար Տիտանը** – Պրոմեթեյսը, ում Զեվսի հրամանով Հեփեստոսը գամել էր Կովկասի ժայռերից մեկին, ու ամեն օր մի արծիվ էր գալի ու կտցով քրքրում էր էս տիտանի յարդը:

14. **Կռոնոսը** – Հին հույների ժամանակի աստվածը, սաղ աստվածների հայրը:

15. **գայրագին Հերոսի թունավոր նետը** – Հերակլեսը իր ուսուչին՝ Քիրոնին, պատահմամբ սպանեց թունավոր նետով:

16. **Քիրոնը** – Իմաստուն կենտավորս՝ կեսը ձի, կեսը մարդ. հույն հերոսներից շատի ուսուցիչը:

17. **միամիտ ու մանուկ կրոնը** – Հեթանոսական կրոնները:

18. **Անհուշի գետը** – Հին հույների անդրաշխարհի գետերից մեկը՝ Լետան (հռոմեական տրադիցիայով՝ Ստիքսը): Իբր ով խմեր էս գետից, ամեն ինչ կմոռանար:

19. **Քարոնը** – Մեռյալների հոգիներին Քարոնն էր իր նավակով անցկացնում Լետայի կամ Ստիքսի մյուս ափը, ընդ որում, անծայտուն ու վճարով:

20. **Եղիցի**՝ – Ըստ Աստվաշնչի, Աստվածն ասեց. «Եղիցի» ու լույս էղավ: Բայց Աստվածն Արեվը հետո՝ ստեղծեց (ըստ նույն աղբյուրի):

21. **մարմրող ու ծխարձակ կերոնը** – Մեր Արեվը, որ արդեն մի հինգը միլիարդ տարի ա, ինչ վառվում ա. բայց մի հինգը միլիարդ տարի հետո Արեվը պայթելու ա, հետո մի քանի ժամում էնքամ ա լեռնանալու, որ սաղ ինը մոլորակն էլ երեվի հալելու ու եռացնելու ու գազ ա դարձնելու, ու հետո էլ՝ կծկվելու ու դառնալու ա հազիվ մարմրող (հմիկվա համեմատ) սպիտակ թզուկ:

22. **Չի՛ մնա ոչ թույն, ո՛չ մեթան** – Երկրի սկզբնական մթնոլորտը թունավոր ա էղե: Էսօրվա մթնոլորտով մոլորակներից, օրինակ, Յուպիտերի մթնոլորտը թունավոր մեթան ու ամիակ գազերից ա:

23. **երկնային մանանա** – ըստ Աստվածաշնչի՝ Մովսեսը իր ցեղի հրեաներին կերակրեց աստծու ուղարկած երկնային մանանայով, երբ հրեաները Եգիպտոսից փախնելուց հետո թափառում էին անապատում:

24. **Էսի կցնդի ու կանհետանա** – Տես 21-րդ դիտողությունը:

25. **քանի՞ անգամ ա...հավլե չքացե** – Յանի, Էյնշտեյնի հավասարումների լուծումներից մեկի համաձայն, հնարավոր ա, որ Տիեզերքը լեռնանա՛, լեռնանա՛, հետո էլ՝ կծկվի ու դառնա համարյա կես, հետո պայթի (սրան ասում են՝ Մեծ Պայթյուն), ու հետո նորից լեռնանա ու էլի նորից կծկվի, ու ըսենց անընդհատ:

26. **Միակ-Անիմանալին** – Կրոնը համարում ա, որ Աստծո գործերն անքննելի ու անիմանալի են, բայց անընդհատ հայտարարում ա, թե ինքը գիտի, թե Աստված ո՞ր մի բանն ա պահանջում կամ համարում գովելի ու խոտելի: Այսինքն, կրոնը հակասում ա ինքն իրան:

27. **Անդադար Զրադացը** – Տիեզերական մեծ ու փոքր ու նույնիսկ վիթխարի օբյեկտներն անպայման պտտվում են:

28. **Նախորդ Գալարը** – Տիեզերքի լեռնանալու նախորդ ցիկլը, շրջանը: Տես 25-րդ դիտողությունը:

29. **Աշխարարարը** – Էն գերբնականը, ինչը գուցե ամեն ինչի ստեղծողը կամ սկսողն ա: Տես 24-րդ դիտողությունը:

Աստվածի գոյությունը հիմնավորելու համար շատ անգամ ասում են, թե հանճարեղ մարդիկ (օրինակ, Էյնշտեյնը), հավատացել են աստվածին: Բայց հենց որ պրպտում ու քթնում ես էտ մարդկանց ասածները, տենում ես, որ ըստենց բան չի էղե, կամ էլ էտ մեծերը լրիվ ուրիշ բան են նկատի ունեցե:

Սրա համար էլ բերում եմ Էյնշտեյնի մի նշանավոր նամակի մի կտորը, ինչը հայտնի ա **Նամակ՝ Աստծուն** անունով: Էյնշտեյնն էս նամակը գրել ա փիլիսոփա Էրիխ Գուտկինդին, իրա մահից մի տարի առաջ, 1954 թվի հունվարի 3-ին:

«Աստված բառը իմ համար ընդամենը մարդկային թուլությունների արտահայտությունն ա, իսկ Աստվածաշունչը լեգենդների հավաքածու ա, ու չնայած սրանք հարգանքի են արժանի, բայց բավական պրիմիտիվ են: Էս լեգենդների նույնիսկ ամենանուրբ մեկնությունը չի փոխի իմ էս կարծիքը:

«... Ես է՛լ եմ հրեա, ու ես է՛լ եմ հրեաների ներքին ողջ աշխարհի կրողը, բայց հրեաները մյուս մարդկանցից լավը չեն, ու ոչ մի բանով էլ ընտրյալ չեն»:

Երբ մարդամեկն ասում ա, թե աստծուն չի հավատում, կարա՞ս էտ մարդուն, հավատաս (օրինակ, Էյնշտեյնին, որտեվ հրեաների մեծ մասը համարում ա, որ իրանց Յահվեին հավատալը ճիշտ ա ու լավ, ու Էյնշտեյնը երեվի չէր ուզենա նեղացներ իրա ազգակիցներին):

Բայց երբ Էյնշտեյնի պես մեկն ասում ա, թե հավատում ա աստծուն, էս անգամ էլ ոչ մի կերպ չես իմանա, ճի՞շտ ա ասում, թե՞ խաբում ա:

Բացի էսի, հենց ինքը՝ Էյնշտեյնը, տարբեր առիթներով տարբեր բաներ ա ասե աստծու մասին, տարբեր ծավալով ու տարբեր խորությունով: Էսի չպտի մոռանանք:

Պարսիկ պոետ Բաբա Թահեր Օրիանին (Տկորը), ում պարսիկները համարում են աստվածավախ, ասում ա (երեվի 10-րդ դարում).

Էս աշխարհը ծերից ծեր սա՛ղ կվառեմ:

Տիեզերքի փեշե՛րը սաղ կվառեմ:

Գործս թե որ գլուխ չէկավ, ո՛վ Աստված,

Տունըդ մինչեվ աստղերը սա՛ղ կվառեմ:

Թե հարբած ենք, դո՛ւ խմցրիր, Քո՛ւ գործն ա,

Թե ուժ չունենք ու ոչ էլ կամք, Քո՛ւ գործն ա,

Մահմեդական, կրակապաշտ, խաչապաշտ,

Ազգ ու կրոն՝ ինչ որ ունենք՝ Քո՛ւ գործն ա:

Օրիանուց հետո Օմար Խայա՛մն ա ասում.

Էս խի՞ ջարդիր, Աստված, գինուս սափորը,

Ուրախության դուռըս դո՛ւ ես փակողը,

Հենց դո՛ւ թափիր վարդի նման իմ գինին,

Բա ե՛ս խմեմ, ու դո՞ւ ըլնես հարբողը:

24. ԱՎԱՐՏԸ (Ի ՎԵՐՋՈ ՌԻ ԱՆՇՈՒՇՏ)
(Հայտնությունն անպարականն)

Էս մի ոտանավորը սրա նախորդի տրամաբանական շարունակությունն աս, բայց էսի սրա նախորդից շուտ եմ գրե: Սրա ստարտը էղել աս մտքիս պատահական էկած. «**Բա էտ դարերը միամի՞տ գնացին**» տողը, ինչը ոնց որ ասեր. «Էսի ոտանավոր աս, գրի՛ մի հետաքրքիր բան կստացվի»: Էսի որ գրի պրծա, երեվի մի քանի ամիս հետո, որ մի անգամ նորից էի կարդում, մտքիս էկավ սրա նախորդի առաջի տողը. «**Բա էտ դարերը անիմա՞տ գնացին**» տողը, բայց չեմ կարա ասեմ, թե էս խոսքը խի՞ անցավ մտքովս: Վերջի անգամ կարդալուց նոր գլխի ընգա, որ էս հարցը ընձի համար վախտին նշանակել աս. «Բա կյանքս խի՞ միամիտ կամ անիմաստ անցավ»:

Առհասարակ, հա է՛լ զարմանում եմ, թե ո՞նց աս ըլնում, որ մտքիդ էկած մի բառը կամ տողը դառնում աս մի եքա ոտանավոր: Ոտանավոր գրելն այ ըսենց անհասկանալի, ավելի ճիշտ, անբացատրելի բան աս: Ու շատ հետաքրքիր աս, եթե էս գործի տեխնիկան լավ ես սովորում:

Երբ տեխնիկադ նորմալ աս, մնում աս պատմելու թեմա քթնես, այսիքն, մնում աս, որ սրա առաջին տողի պես մի տող գա մտքիդ: Բայց էս տողը, կամ բառը շատ հազվագյուտ աս գալի: Ոտանավոր՝ մի երկու իրեք տարի եմ գրե, բայց էս կարեվոր տողից մի 100 հատ հագիվ քթած ըլնեմ:

Որ ասեմ, թե էս ոտանավոր «հերոսները» ի վերջո ու մեկ էլ՝ անշուշտ բառերն են, էնքան էլ սխալ չեմ ըլնի: Էս ոտանավորը գրելու օրերին հլը արխայիկ (գրաբարյան) բառերի կախարդանքի տակ էի:

Վատը չի, իսկ Թումանյանի քառյակը Խայամի (նախորդ) հանճարեղ քառյակն աս՝ «քառակուսի բարձրացրած»:

*Խայամն ասաց իր սիրուհուն. – ոտո՞ղ ըզգոյշ դիր հողին,
Ո՛վ իմանա ո՞ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...
Հե՛՛յ, ջա՛ն, մե՛նք էլ ըզգոյշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
է՛ն սիրուհո՞ւ բիբն ենք կոխում, թե՞ հուր լեզուն՝ Խայամի:*

Հովհաննես Թումանյան

Բա էտ դարերը միամի՞տ գնացին...

Ի վերջո, անընդհա՛տ կըլնի շարություն,
Մեղքերին անընդհա՛տ հարկավոր կըլնի քավություն,
Պողպատե երկիրն անընդհա՛տ կդառնա կավե տուն,
Ի վերջո, Ադալնու Որդին միածին¹ –
Անընդհա՛տ կառնի հարություն²,
Փորձության գավաթում ի վերջո,
Անընդհա՛տ կըլնի դառը թույն³:

Ի վերջո՛, սա՛ղ էլ միամիտ մնացին.
Յա՛վն ու մրմո՛ւռը,
Անդունդ կարոտը՝ միամիտ ու անմեղ մնացին,
Ծառերն ու ջուրը, հուսո նարոտն ու օվկիանոսը միասին,
Ու անշո՛ւշտ, ի վերջո,
Համ էլ վիթխարի էս Գո՛ւնդը հրածին⁴:
Ու անշուշտ, աշխարհը ի վերջո կդառնա բյուրեղապակյա,
Փխրուն ու թեթեվ ու համ էլ օդե՛⁵,
Չի՛ ըլնի երազը, դեղին ու սաթե,
Վիթխարի պարանը կդառնա բուսաթել,
Ի վերջո, կջարդվի նույնիսկ ապագան բյուրեղապակյա⁵,
Ի վերջո, ժանգը կմաշի, կուտի
Համ էլ էտ սիպտակ խա՛չը արծաթե⁶,

Ի վերջո, ինչ էլ որ ըլնի, կամ ինչ էլ որ գա,
Զի՛ ըլնի նույնիսկ չքնաղ կամ դժնի ապագա:

Ու անշուշտ, ի վերջո կգա՛ սատանան,
Կգա, որ սա՛ղ էլ դժոխքի իրանց բաժինը ստանա՛ն,
Կգա, որ բուսաթելն ի վերջո
Անսահման բարակի ու խզվի՛,
Կգա, որ երկնքի անարատ կապուտը խազվի՛,
Կգա, որ դեղինն ու որդան կարմիրը կապտանա՛ն,
Ու անշուշտ, կգա, որ կապուտն էլ ի վերջո սեվանա՛,
Իհա՛րկե, ի վերջո կգա՛ սատանան,
Ու սա՛ղ մոմերն էլ՝ կհալվեն ու կվերջանան⁷:

Ու էլ ո՛չ մեկին չի՛ օգնի Որդին Աղավնածին:
Զի օգնի ... ո՛չ կասկածին, ո՛չ հաստատին,
Ու ո՛չ էլ կեղծածին,
Ո՛չ չարին, ո՛չ բարուն ու ո՛չ էլ եղծածին,
Ու ո՛չ էլ կավից կամ հողից արարածին⁸,
Ու իհարկե, համ էլ՝ դրա կողից ստեղծածին⁹,
Ու անշուշտ –
Ո՛չ օժյալ հհեշտակին ու ո՛չ էլ դաջվածին¹⁰,
Ու էլ չի՛ ըլնի ուղղափառ կամ հերձվածող,
Ու ամմե՛ն-ամմե՛ն ինչ՛ կդառնա բարձիթող:

Ու անշուշտ,
Անսահման ուժե՛ղ ու զորավո՛ր ա սատանան:
Ու սրա ստեղծած խավարում անսահման –
Մոլորակ ու արեվ ու աստղ՝ կհալվեն ու կէթան,
Ու չի ըլնի – ո՛չ թթվածին ու ո՛չ մեթան,
Ու ամմե՛ն-ամմե՛ն ինչ՛ միամիտ կվերջանա,
Ու սա՛ղ էլ կէթան,
Ու անշուշտ, ի վերջո, վերջակետ կդրվի
Օրերի ու ցավ ու մրմուռի էս վիթխարի՛ փաթույթին,
Ու անշուշտ –
Էս անվե՛րջ, անսահմա՛ն ու միամի՛տ պտույտին¹¹:

1. **Աղավնու Որդին Միածին** – *Ըստ եկեղեցական ավանդության, Աստվածամայրը բեղմնավորվել էր Աղավնու տեսք առած Աստծուց:*

2. **Կառնի հարություն** – *Հարության գաղափարը շատ ա հին ու կար հյը էն շրջանում, երբ կրոնը հյը չէր ձեկավորվել ու մարդը հավատում էր շփածին ու համակրական մոգությանը:*

3. **Փորձության գավաթում...կըլնի դառը թույն** – *Ըստ նոր Կտակարանի, Հիսուսը պտի խմեր փորձության գավաթը, ինչի մեջ շատ դառը մի բան էր, ու Հիսուսը շատ դժվարությունով խմեց էտ գավաթը, չնայած գիդեր, որ աստված ա, ուրեմը անմահ ա:*

4. **Էս Գունդը հրածին** – *Երկիրն ամենաքիչը 1-1,5 միլիարդ տարի էղել ա հրահեղուկ գունդ:*

5. **Աշխարհը ...կդառնա...օղե** -*Տես նախորդ ոտանավորի 21-րդ դիտողությունը:*

6. **Խաչը արծաթե** – *Այսինքն, նույնիսկ կրոնը:*

7. **կգա սատանան...ու սաղ...կհալվեն ու կվերջանան** – *Այսինքն, ամեն ինչն էլ անխուսափ վերջ ունի:*

8. **կավից կամ հողից արարածին** – *Ըստ Հին Կտակարանի, Աստված Ադամին հողից կամ կավից արարեց: Ադամ բառը հենց նշանակում ա՛ հող, կավ:*

9. **դրա կողից ստեղծածին** – *Ըստ Հին Կտակարանի, Աստված (կնոջը երկրորդ անգամ արարելուց) Եվային Ադամի կողից արարեց:*
10. **ոչ է՛լ դաջվածին** – *Միջին դարերում հանցագործներին համ էլ խարանում էին:*
11. **անսահման... պտույտին** – *Տես նախորդ ոտանավորի 27-րդ դիտողությունը:*

Գլուխ 6 ՎԻԼԱՆԵԼՆԵՐ

Բանաստեղծության էս տեսակի անունը վիլանել ասած, ընձնից ահագին գոհ եմ, որ վիլանելը հայերենով առաջի անգամ ես եմ կիրառե:

Սրա առաջի տերցինի (եռատողի) առաջի ու երրորդ տողերը հերթով անցնում են մյուս տերցինների երրորդ տողը, ու քառյակի վերջում՝ հանդիպում իրար: Տերցինների ու քառատողի սա՛ղ առաջի տողերը հանգավորվում են իրար հետ, սա՛ղ երկրորդները՝ իրար հետ, ուրեմը, երրորդներն էլ՝ իրա՛ր հետ:

Վիլանել գրելու էս պայմաններն էնքան շատ են, որ վիլանել գրելը ու մանավանդ՝ թարգմանելը համարյա ռեկորդային դժվարություն ունի:

(Մեր ազատ «ոտանավորիստները», ում ասում եմ՝ արտեմիստ (տես [16]-ն ու [19]-ը) էս տեսակ դժվարություններից փախնում են, որտեղ հարկավոր տեխնիկան չունեն: Սրա համար էլ գրում են արձակով, բայց ասում են, թե իրանց էս գրածները «ոտանավոր» են, ու հլը միամիտներին էլ համոզում են, թե էս «ոտանավորները» յանի էնքա՛ն խորը իմաստ ունեն, էնքա՛ն խորը, որ մեր պես հասարակ մահկանացուներին էտ իմաստը անհասանելի աս:

Այնինչ, սրանց սաղի գրածներն էլ, համարյա միշտ, անհեթեթ ու տգեղ բաներ են: Ես էս ֆենոմենին ասում եմ՝ թագավորի նոր հագուստի սինդրոմ [Ibid]:

Վիլանելը հայտնագործել են ֆրանսիացիները, 17-րդ դարում: 19-րդ դարի վերջին ու 20-րդում անգլիացիներն էս ձեվով ստեղծեցին իրոք չքնաղ գործեր (Ալֆրեդ Թենիսոնը, Ջեյմս Զոյսը, Վիլիամ Էմ(փ)սոնը, Դիլան Թոմասը ևն):

Ամեն ժողովուրդ չի, որ կարա լուրջ պոեզիայի ու լուրջ գիտության պես բաներ ստեղծի: Ժողովուրդ կա, որ սրանցից շատ աստեղծե, ու հլը ուրիշներն էլ օրինակ են վերցրե էս ժողովրդից, սովորել են սրանցից ու հասել են էս ժողովրդին:

Շատ անգամ էս զորավոր բաներն ստեղծող ժողովուրդն ի՛նքն աս հետ ընգնում, ու նույնիսկ հենց իրա ստեղծածն աս մոռանում, ու դառնում աս իրանից սովորած ու իրանից անցած ժողովուրդներից շատ հետամնաց, ոնց որ էսօրվա հույները:

Էս տեսակ բաներ ստեղծելու համար ժողովրդի անդամները, այսինքը, հասարակ մարդիկ, պտի ազատ ու կուշտ ըլնեն, պտի անընդհատ չմտածեն, թե իրանց օրվա ապրուստի հացը որդուց ճարեն: Թե որ մարդը սոված ու թշվառ էղավ, ու անընդհատ մտածեց, թե ընտանիքը պահելու օրվա հացը ոնց ու որդուց ճարի, էլ չի կարա մի կարգին ոտանավոր կամ

թերեմ ստեղծի: Ու թե որ մի կերպ ստեղծեց էլ, էտի հասարակության մնացած անդամներին հետաքրքրի չի ըլնի, որտե՛վ մնացածներն էլ են սոված ու թշվառ, ու դրանք է՛լ են մտածում մենակ մի կտոր հացի մասին:

Թումանյանն ասում ա, որ հայ գրողի ողբերգությունն է՛ն բանն ա, որ էսի չի կարա մենակ գրելո՛վ իրա ապրուստը ճարի, ու պտի մի ուրիշ գործ անի, որ ընտանիքը պահի, ու սրա համար էլ հայ գրողի համար գրելը երրորդական-չորրորդական գործ ա: Ափսոս, բայց էսի էսօր է՛լ ա ճիշտ, ու էսօր սրան ավելանում ա համ էլ է՛ն հանգամանքը, որ էսօր հայ գրողը է՛ն պատիվը չունի, ինչը ուներ Թումանյանի օրերին, երբ գրողը հազվագյուտ ու արտառոց բան էր:

Սրա համար էլ հայերը մինչե՛վ հմի վիճակի չէին գրե: Ոտանավորի շատ տեսակ կա, որ հայերը լավ չեն մշակե: Էս գրքում մի տեղ ասում եմ, որ, օրինակ, ամերիկացի Ֆրոստը արեվելիցիների ստեղծած ռուբայիներով ոտանավորներ ա գրե, այնինչ արեվելիցի հայերի մտքով անգամ ըսենց բան չի անցե: Էս նույն ձեվով, հայերը լավ չեն մշակե, օրինակ սոնետ գրելու իրանց ձեվերը կն:

Անգլիացիք, օրինակ, սոնետը հոյակապ են մշակե: Մենակ Շեքսպիրի գրած սոնետները ուղղակի գերազանց են, էլ չասած՝ Միլթոնի, Բլեյքի, Բայրոնի ու մյուսների սոնետների մասին: Իսկ թե ինչքա՛ն նոր ձեվ են քթե անգլիալեզու ժողովուրդներն ու եվրոպացիք 20-րդ դարում, էլ ասել չի ըլնի:

Մենք էս նորագույն պոեզիայից համարյա խաբար չենք, որտե՛վ էս վեռ-լիբրային (ազատ ոտանավորի) ցավով ենք տառապում, ու մենակ էսի՛ ենք համարում սովորելու արժան, բայց նույնիսկ էսի էլ կարգին չենք սովորե:

Ասել եմ արդեն, որ ազատ ոտանավորի գերազանց վարպետներից մեկը մեր Նարեկացին ա, բայց մեր պոետներից ո՞ր մեկն ա Նարեկացու տեխնիկան սովորե: Սրանց որ հարցնես, Նարեկացին ու Թումանյանն իրանց համար արդեն անցած էտապ են, ու իրանք պտի Թումասն Ստիրնգ էլիոթից ու սրա պեսերից սովորեն, բա՛:

Բայց որ սրանք ուզեն էլ, Նարեկացուց չեն կարա սովորեն, որտե՛վ գրաբարը չգիդեն, իսկ Նարեկացու գործերի աշխարհաբար թարգմանությունների տաղաչափությունն անսահման ա հեռու բնագրից, ու ահավոր էլ բարդ ա ու սիրուն:

Սովորելու բանը էսի՛ էր: Ես չեմ ասում, էկեք Նարեկացու ասածները նմանակենք, չէ՛: Էսօրվա կյանքն ուրիշ ա, էսօրվա ասելիք-պատմելիքն է՛լ ա ուրիշ, բայց Նարեկացու ոտանավորի ձեվերը գերազանց են համ էլ հենց էսօրվա՛ համար: Ուրեմը, պտի Նարեկացուց է՛լ սովորենք, էլիոթներից է՛լ: Բայց հենց Նարեկացո՛ւց ու հենց էլիոթների՛ց, ոչ թե սրանց գործերի **անհամ թարգմանություններից**:

Մեր ֆիզիկոս-մաթեմատիկոսներն ու մյուս գիտնականներն ամեն օր են աշխարհի գորավոր գիտնականներից սովորում, սրա համար էլ սրանց գործերը սաղ աշխարհում են բանի տեղ դնում: Բայց մեր հումանիտարյանների ու մանավանդ մեր արձակագիրների ու պոետների գործերը բանի տեղ դնող չկա:

Մերոնք ասում են, թե մեր հայերեն գործերի ուրիշ լեզուներով թարգմանությունները լավը չեն, սրա համար էլ ուրիշներն էտ գործերը ճիշտ չեն գնահատում: Ըսենց չի՛: Ուղղակի մերոնց գործերը դրսում բանի պեսք չեն, որտե՛վ իրանք սրանցից շատ ու շատ ավելի լավ ու ավելի

որակով լիքը գործ ունեն: Որ մեր գործերն էլ հարկավոր որակով ըլնեին, իրանց էլ պետք կըլնեին:

Յավոք, էսօր մեր Հայաստանի հասարակությանը ոչ ֆիզիկա-մաթեմատիկա ա պետք, ոչ է՛լ վեպ ու բանաստեղծություն: Ոտանավորը հեշ պետք չի, որտե՛վ կարդացողը չկա: Ու ես էս գործը լրիվ անհույս եմ անում, որտե՛վ համարյա ոչ մի շանս չկա, որ ասածներս բանի տեղ կդնեն, ոչ էլ՝ որ գիրք առնողը կշատանա: Բայց ի՞նչ անեմ, հո արածս գործը իմ ձեռով ջուրը չե՞մ քցի:

Մեր սեփական գրականությունը (շատ քիչ բացառությունով) հա՛մ շատ քիչ ա (ծավալով), համ է՛լ շատ ա խեղճուկրակ: Իսկական ու կարգին գրականություն ունենալու համար պտի ուրիշների հզոր գրականությունները թարգմանենք, որ համ մեր գրողները թարգմանելու վախտը սովորեն, թե ոնց են կարգին բան գրում, համ էլ մեր էրեխեքն իմանան, թե լավ ու վատ գրականությունը ո՛րն ա:

(Ոնց որ ռուսներն արին, ու մի 150-200 տարում իրանց գրականությունն ու գիտությունը դարձրին աշխարհի առաջիններից մեկը): Բայց էս վերջի մի 20 տարին մենք գեղարվեստական համարյա ոչ մի արժեքավոր բան չենք թարգմանե, թարգմանածն էլ հեշ ընդունելի չի: Ափսո՛ս:

25. ԻՂՁ ՈՒ ՏԱԳՆԱՊ

Վիլանելլ գրելու համար պետք ա՛վեցր նույն հանգով բառ – առաջի տողի համար (ըստե սրանք՝ **ավերակ, մոլորակ, անճարակ, ջնարակ, անճրագ(ք), անկրակ** բառերն են), վեցը հատ էս հանգով, բայց ուրիշ բառ – երկրորդ տողերի համար (ըստե սրանք՝ **կանթեղին, գաղթերին, անտեղի, արտերին, անթեղի, կանթեղին** բառերն են), ու հինգն էլ՝ երրորդ տողերի համար, բայց սրանք արդեն կան, որտե՛վ կրկնվում են:

Թե որ էսքանից հետո համ էլ ուզում ես, որ գոնե էրկու վանկով հանգավորես, արդեն խնդիրդ արհավոր ա դժվարանում, ու քեզ պետքական բառերը ման գալուց՝ աչքի ես անցկացնում լեզվի գործածական բառերը՝ համարյա լրիվ:

Թե որ չես կարում միշտ էրկու վանկով հանգավորես, ուզում ես, որ չհանգավորածի վանկի մեջը գոնե նման բաղաձայն կամ ձայնավոր ըլնի (օրինակ, առաջի խմբի **անճրագ** բառը, ինչի **ք**-ն մնացածների **կ**-ին մոտ ա): Մեկ-մեկ էլ, ստիպված, հանգավորող բառը կրկնում ես, թե որ ավելի լավը չես քննում (օրինակ, երկրորդ խմբի **կանթեղին** բառը):

Բայց վիլանելլը կատարյալ ա, երբ սրա առաջի ու երրորդ տողերը իրարու հանդիպելուց, այսինքը, քառատողի վերջում, լրիվ կամ գոնե մի քիչ ուրիշ իմաստ են ունենում: Էսի միշտ չի, որ հաջողվում ա: Ես, օրինակ, մենակ մի անգամ եմ կարացել ըսենց բան անեմ՝ իմ **Ընձառյուծն ազատ...** ոտանավորի մեջը, բայց ընդե էլ վիլանելլի դասական սկզբունքներից շատ եմ շեղվել:

Էս ոտանավորը Սպիտակի երկրաշարժից ա պատմում:

Տանելի ոտանավոր ա:

Կմարի՛ բուրվառը տաճարում ավերակ,
Ու մրմուռն անմռունչ լաց կըլնի կանթեղին –
Շո՛ւտ արի, շո՛ւտ արի, երկնային նվիրակ¹:

Սարսուռը դառել ա վիթխարի մոլորակ,
Անտարբեր – աստղերի համաստեղ գաղթերին –
Կմարի՛ բուրվառը տաճարում ավերակ:

Եղեմյան Բրուտը, մոլոր ու անճարակ,
Նստե ու նայում ա ավերին անտեղի –
Շո՛ւտ արի, շո՛ւտ արի, երկնային նվիրակ:

Կարոտը դառել ա խավարի ջնարակ
Ու թառե դողդոջուն մրմուռի արտերին –
Կմարի՛ բուրվառը տաճարում ավերակ:

Կումայրին հառել ա աչքերը անճրագ՝
Մարմրող բուրվառին, որ կրակն անթեղի –
Շո՛ւտ արի, շո՛ւտ արի, երկնային նվիրակ:

Մի պահ էլ՝ աշխարհը կմնա անկրակ,
Ու ծո՛վս էլ չի ըլնի Բարձրյալի կանթեղին,
Կմարի՛ բուրվառը տաճարում ավերակ –
Շո՛ւտ արի, շո՛ւտ արի, երկնային նվիրակ:

¹ Նվիրակ - արքայական հանձնակատար:

26. Ո՛Չ ԼԵՐ ՍՏՐՈՒԿ ԿԱՄ ԲԱՐԲԱՐՈՍ

Վիլանելլա: Ազատության ու սրա հետ էլ՝ հանդուրժողության մասին ա:

Երբ ասում եմ, թե մեր էսօրվա գրական ոճերը լավը չեն ու սրանցից պտի հրաժարվենք ու գրենք էրեվանի բարբառի վրա հիմնած գրական ոճերով, **չեմ ասում, թե չպիտի ոչ մի գրական բառ գործածենք: Ու չեմ է՛լ ասում, թե թո ոչ մեկը մեր էսօրվա գրական ոճերով չգրի:**

Ազատությունից թանգ բան չկա, ու ես գրելուց ազատ եմ, բայց լրիվ ազատ չեմ, որտեղ հետևում ու ենթարկվում եմ մեր ժողովրդի մեծ մասի խոսքին: Օրինակ, հենց նոր գրեցի՝ թանգ ու որտեվ, չնայած լավ գիդեմ, որ գրական ոճերը գրում են՝ թանկ ու որովհետև: Լա՛վ եմ անում, մեր ժողովրդի մեծ մասն ասում ա՝ թանգ ու որտեվ, ու ես էլ հենց ըստենց եմ գրում: Էսի ի՛մ գործն ա, ում դուրը չի գալի, թո չկարդա:

Իվերջո, ո՞վ ա ապացուցե, որ սխալը ե՛ս եմ, ու ոչ թե **թանկ ու որովհետև** գրողները: Բա չե՞ն հայտարարում, թե մեր գրական «լեզուն» պտի հիմնվի Արարատյան բարբառի վրա: Ես էսի օրենք ու կանոն եմ համարում, ու հենց սրա՛ն եմ հետևում: Ուրեմը, իմ սխալը ի՛նչն ա:

Գրելու ձևի ազատությունն է՛լ ա էս արեվի տակի ամենաթանգ բաներից: Թո ամեն մարդ էլ գրի էն ոճով, ինչով ի՛նքն ա ուզում: Օրինակ, արեվմտահայերենով կամ գրաբարով, թե կարա, կամ էլ իրա ուզած բարբառով: Երեվի ասեն, թե էտ վախտ կաշա կստացվի: Խի՞, հմի կաշա չի՞:

Տեղյա՞կ եք, թե մեր դպրոցներում էրեխեքին ի՛նչ ահավոր գրական շտամպ են սովորացնում: Մեր խեղճ էրեխեքն անընդհատ վախում են էրեվանի բարբառը գործածելուց, գրական ոճերով էլ չեն կարում մի կարգին բան ասեն ու գրեն, որտեվ էս ոճերը հային խորթ են ու անճոռնի:

Մենք մեր գրելու ոճերի համար էրեվանի՛ բարբառն ենք վեկայե, ու պտի սրա՛ն հետեվենք: Մնացած բարբառների կրողները (համ էլ՝ արեվմտահայերը), թե ուզում են մեր գիր ու գրականությունից օքտվեն, բացի իրանց մայրենի բարբառը, պտի էրեվանի բարբառն է՛լ սովորեն, որտեվ էսի՛ ա իրանց հայրենիքի գրելու ոճը: Ուրիշ ձեվ՝ չկա, ու աշխարհի սա՛ղ ժողովուրդներն էլ իրանց բարբառներից մենակ մեկն են ընտրում դարձնում իրանց գրական ոճերի հիմքը:

Էնքան էլ թույլ ոտանավոր չի:

Չդառնա՛ս ո՛չ մի օր լուռ ու ձեռնասուն:

Քա՛րբը¹ կուզենա՛ կարոտդ խանձի՛ –

Չդառնա՛ս վայրենի – օրերի օրհասում:

Խավարի բոցը բոսո՛ր ա ու հոսում,

Ու հաստատ, կուզենա՛ կարոտդ սանձի՛ –

Չդառնա՛ս ո՛չ մի օր լուռ ու ձեռնասուն:

Կարոտի լավան, դժո՛խքով հրասուն,

Անցյալի արտերի եղի՛նջը կհնձի –

Չդառնա՛ս վայրենի – օրերի օրհասում:

Խնձո՛ր ա քարբը ամեն օր դարպասում

Ու ուզում, որ գրկում – նոր Կայեն² գրանցի –

Չդառնա՛ս ո՛չ մի օր լուռ ու ձեռնասուն:

Գրողը³ մահացած օրե՛րն ա դարսում,

Բայց որ Լուսինն էլ – լա ու գառանցի –

Չդառնա՛ս վայրենի – օրերի օրհասում:

Գերանդին⁴ կարող ա չի՛ էլ սպասում,

Կարող ա չի ուզում էտ մաքսը գանձի –

Չդառնա՛ս վայրենի – օրերի օրհասում,

Չդառնա՛ս ո՛չ մի օր լուռ ու ձեռնասուն:

¹ Քարբ – օձարքա. բնիկ հայերեն բառ ա:

² Կայեն – Կայենը սպանեց իրա ախպորը՝ Աբելին:

³ **Գրողը** – Ճակատագրի աստված՝ Տիրը, կամ Աստվածը: Տիր աստծուն մերոնցից շատը համարում և գրի ու գրչության հովանավորը, ինչը սխալ և: Տես 68-րդ ոտանավորի 3-րդ դիտողությունը:

⁴ **Գերանդին** – Հներից ոմանք մահի աստծուն՝ (օրինակ, Թանատոսին) պատկերում էին գերանդին ձեռին:

27. ԿԱՐՈՏՆ ԱՆԴՈՒՆԴ – ՎԱՌՈՒՄ Ա ՍԻՐՏ ՈՒ ՀՈԳԻ

Էլի վիանել և, ու էլի անխուսափ կորստի հավերժ թեման և: Ճիշտն ասած՝ ինքս ոչ հավատացյալ եմ, ոչ էլ՝ ֆատալիստ: Ու երբ աստծուց կամ բախտից եմ խոսում, կամ՝ ուղղակի ձեպի համար եմ խոսում, կամ էլ՝ նկատի ունեմ բնական պատահականությունն ու ամեն ինչի վերջ ունենալը:

Պատահականության դերը վիթխարի և մշակութային էվոլյուցիայի համար, ու իմ կարծիքով էսի շատ-շատ են թերագնահատում, մանավանդ մեր պես մարքսիզմով ու հիստորիցիզմով կրթված մեծացածները: Օրինակ, շատերը կարծում են, թե մարդկային քաղաքակրթության ընթացքը կանխորոշ և էղե, ու որ էս ընթացքը ինչ-որ օրենքներ ունի, է՛ն տեսակ օրենքներ, որոնք նման են ֆիզիկայի օրենքներին:

Շատ մարդ կա, ով մտածում և, թե, օրինակ, որ անվի պես «հասարակ» բանը մի 5-6 հազար տարի առաջ հայտնագործած հանճարեղ մարդը չըլներ, մեկ և, էտ օրերին մի ուրիշ մարդ կծնվեր ու անիվը կհայտնագործեր: Էսի ճիշտ չի: Անիվը լրիվ պատահական և հայտնագործվե, ու թե որ է՛ն վախտը չհայտնագործվեր, **կարող և** մինչեվ հմի էլ չհայտնագործվեր, ու մենք էլ կարող և հմի վաղ միջնադարի մակարդակին ըլնեինք: Սրա մի գորավոր ապացույցը կա:

Իրոք, երբ իսպանացի կոնկիստադորները մտան Ամերիկա, տեսան, որ Ամերիկայի բնիկները, ինկերը, ացտեկներն ու մայաները, անիվը չէին հայտնագործե, ու սրա համար էլ չունեին անվի կապված տեխնոլոգիաներից ոչ մեկը: Չունեին՝ սայլ, կառք, ջրաղաց, այլուր ու այլրից թիվող հաց, ժամացույց, ճախարակ, չէին ընտելացրե քաշող անասուններին ու ձի չունեին, ու սրա համար էլ սկզբում սարսափում էին ձիավոր իսպանացիներից, սրանց համարելով կենտավրոսի պես արարարած ևն, ևն, չնայած էս ժողովուրդները շատ զարգացած մշակույթ ունեին:

Հետաքրքիր է, որ սրանք մետաղագործություն ունեին, բայց մետաղը հայելու տեխնոլոգիան չէին քթե. սրանք երկաթը ոսկուց թանկ էին համարում, իսկ հասպիսը՝ ադամանդից: Սրանք պահպանել էին վաղնջական ժողովուրդներին հատուկ մարդ մատաղ անելու սովորությունն ու ծիսական մարդակերությունը: Շատ անգամ սրանք պատերազմ էին անում, որ թշնամուն գերեն ու հետո մատաղ անեն իրանց պատերազմի գարշելի աստվածին: Մատաղ արվող գերիների թիվը կարող և հասներ տասնյակ հազարի:

Պատահականության դերը, իրոք, ուղղակի վիթխարի և, ու իմ կարծիքով մեր իսկական աստվածը պատահականությունն և, բա՛խտը: Իզուր չի, որ ասում ենք՝ «բախտի բան և»:

Մարտին Ահարոնյանն էս ոտանավորը սարքել և երգ: **Էնքան էլ թույլ ոտանավոր չի:**

Օրը թնդում՝ անէանում – դառնում և լո՛ւս ու ոգի:

Մայրամուտը կուլ և տալի – էրա՛զը շող ու լուսի:

Կարո՛տն անդունդ, կարո՛տն անդունդ – վառո՛ւմ և սիրտ ու հոգի:

Ձանգը զանգում – սո՛ւս և անում, առանց ձեն ու բողոքի:

Անդունդ ցավը քրքրում և լե՛ռ մրմուռը մայր Կուսի:

Օրը թնդում՝ անէանում – դառնում և լուս ու ոգի:

Գիշերն անսիրտ – չի՛ ողորմի արշալուսի ողորին:

Մութ երկնքում ծափուն չկա, ո՛չ ճրագ կա, ո՛չ լուսին:

Կարո՛տն անդունդ, կարո՛տն անդունդ – վառո՛ւմ և սիրտ ու հոգի:

Հոգերնձա պահը կանցնի ու դա՛րն էլ չի ամոքի

Վայրկյանների կոտորածը, ու կմնանք մեկուսի:

Օրը թնդում՝ անէանում – դառնում և լուս ու ոգի:

Ու էլ ո՛չ ոք չի՛ հավատում աղաչանք ու աղոթքի:

Նորից անհույս լաց և ըլնում Մարիամ Կուսը, շա՛լն ուսին:

Կարո՛տն անդունդ, կարո՛տն անդունդ – վառո՛ւմ ա սիրտ ու հոգի:

Ոլորտներում Ի՛նքն ա շարում բախտի հուլունքն անհոգի,

Ու Եդեմում բանտ ա շինում – դնում աղյուսն աղյուսին,

Օրը թնդում՝ անէանում – դառնում ա լուս ու ոգի,

Կարո՛տն անդունդ, կարո՛տն անդունդ – վառո՛ւմ ա սիրտ ու հոգի:

28. ԳՈՆԵ ԻՄԱՆԱՆ ՈՒ ՀԻՇԵՆ
(Զոհվածներին ու զոհվելու ենթականերին)

Վիլանելլի ա: Գրելու առիթն էղել ա մտքիս էկած՝ «Մոնչալով մոնչում ա» բառերը:
«Լուսնամահիկը» իսլամի սիմվոլն ա:

Մտքիս Ղարաբաղում կռվող մի զինվոր ա էղե, ում թշնամին խփել ա, ու ինքը պառկած ա արտի մեջ, ու գիդի, որ արդեն մեռնելու ա:

Գրել եմ՝ **ծունգ, խունգ**, որտեղ էրեվանի բարբառը ն-ից հետո էկող կ-ն անխտիր սարքում ա **գ**: Էս օրենքն էնքա՞ն անխախտ ա, որ նույնիսկ **մանկապարտեզ** բառի կրճատ ձեվն էլ ա ըսենց փոխե: Էրեխեքը (մեծերն է՛) **մանկապարտեզ**-ին, համարյա անխտիր, ասում են՝ **մնգո**:

Ջորավոր բան ա կենդանի լեզուն, ոչ մեկին չի ենթարկվում, ոչ մի դասատուի կամ ակադեմիկոսի կամ պետական օրենքի, ու մենակ իրա ուզածով ա փոխվում, որտեղ հենց ինքն ա իրա օրենքը:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:
Լավ ոտանավոր ա:

Մոնչալով մոնչում ա ու տրորում ծո՛ւնգը սեվ:
Լարի վրա էրկու թռչուն քամուն արցո՛ւնք ա դաջում –
Ու հառաչում ու ափսոսում – էրազամեռ խո՛ւնգ ու սեր:

Վլանչո՛ւմ ա լուսնամահիկն ու կոնչո՛ւմ – ցո՛ւրտ ու սեվ:
Ըսփռվում ա թունդ կարմիրն ու անհերկ ակոսը թրջում –
Մոնչալով մոնչում ա ու տրորում ծո՛ւնգը սեվ:

Վրնջո՛ւմ ա էրազատենչ հրաբո՛ւխը – սի՛րտը սեվ:
Այգաբացի դարպասներին կռունկի ձա՛գ են խաչում –
Ու հառաչում ու ափսոսում – էրազամեռ խո՛ւնգ ու սեր:

Ու դրախտի մի անկյունում – մի կտոր հող – ցո՛ւրտ ու սեվ,
Ուր որ կենաց ծառի ճյուղին խնձորը սե՛վ ա աճում –
Մոնչալով մոնչում ա ու տրորում ծո՛ւնգը սեվ:

Վայրենի կոնք, հուլանի կուրծք, մե՛րկ ուսեր,
Վրնջո՛ւմ ա հուշը վայրի – վրնջո՛ւմ ու մոնչում –
Ու հառաչում ու ափսոսում՝ էրազամեռ խունգ ու սեր:

«Մնացողին – մնաս բարով, գնացողին – էլ ի՞նչ սեր,
«Լեռնանում ու լերդանո՛ւմ ա սիրուս ցա՛վը հարաճուն,
«Մոնչալով մոնչում եմ ու տրորում ծո՛ւնգըս սե՛վ
Ու հառաչում ու ափսոսում – էրազամեռ խո՛ւնգ ու սեր» :

29. ՀԱԿԱՍԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՕՐՅԱ
(Պոեմ՝ համարյա վիլանելներով)

Անկախ ընձնից՝ էլի Հերակլիտոսի, ավելի շուտ՝ Պլատոնի է՛ն մի տեսության պատմությունն ա, թե ամեն ինչն էլ անընդհատ փշանում ապականվում այլասերվում ա:

Գրելու առիթը չեմ հիշում, երեվի Սարուխան Հրաչի մի ցիտատն ա էղե Սեսարից, թե «աստիճաններով ցած եմ բարձրանում»:

Էն վախտերը ո՛չ Հերակլիտոսին էի լավ ծանոթ, ոչ է՛լ Պլատոնին: Բայց էս էրկուսն էլ էնքան են մերվե մեր սաղ մշակույթին (ու շատ ավստս, որ մերվել են), որ միջնորդությունով երեվի ազդել են սաղիս ու իմ վրա է:

Հերակլիտոսը Սեսարից հլը մի 26 դար առաջ ա ասում. «Վեր տանող արահետն ու վար տանող արահետը՝ նույնն են»: Տես [22]-ը:

Էս երկար ոտանավորի համարյա ամեն մի տողն էլ հակասական ա, բայց որ մի քիչ մտածում ես, տենում ես, որ էտի ոնց որ հեջ էլ հակասություն չի, ու ոնց որ ճիշտ ա:

Մի քանի տարի մտածում էի, թե չարժի, որ էս ոտանավորը դնեմ գրքիս մեջը, բայց տղերքն ասին, որ սխալ եմ, ու որ էսի լավ ոտանավոր ա: Է՛հ, թո կարդացողն ինքը որոշի:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:
Էս ոտանավորը միջակից երեվի մի քիչ ա բարձր:

ա

Ու հենց ծննդից ստրուկ ա արքան – ճորտ ու թիապարտ,

Ու ուղղագիծ են արահետները կեռ ու զարտուղի –

Հավերժ պարտության զորախաղերից չի փրկում ո՛չ սուր, ոչ է՛լ սաղավարտ:

Դատապարտված էր նույնիսկ Օլիմպոսն աստվածահպարտ,

Ու բնականոն պողոտաները չունեն՝ անցուղի,

Ու հենց ծննդից ստրուկ ա արքան – ճորտ ու թիապարտ:

Ու նույնիսկ Ի՛նքն էր Գողգոթահլու, խոնարհ մահապարտ,

Անթեյն անպայման հրաժեշտ ա տալի Գեա-սնողին,

Հավերժ պարտության զորախաղերից չի փրկում ո՛չ սուր, ոչ է՛լ սաղավարտ:

Հրճվանքի ծառը թունաարմատ ա ու թունասաղարթ,

Ու ժա՛հր ա բարու ու իմացության կենաց ճյուղերին –

Ու հենց ծննդից ստրուկ ա արքան – ճորտ ու թիապարտ:

Ու հաղթանակը հենց պարտություն ա – անվե՛րջ, անավարտ,

Ու չի՛ էրեվում վախճանը սրա գոնե մի տողի...

Հավերժ պարտության զորախաղերից չի փրկում ո՛չ սուր, ոչ է՛լ սաղավարտ:

Ու հենց ծննդից ստրուկ ա արքան – ճորտ ու թիապարտ,

Ու ուղղագիծ են արահետները կեռ ու զարտուղի –

Հավերժ պարտության զորախաղերից չի փրկում ո՛չ սուր, ոչ է՛լ սաղավարտ,

Սկիզբը համ էլ վե՛րջ ա անպայման, վե՛րջ ա անպայման, վախճա՛ն ու
ավարտ:

Բ

Խավար ա ժայթքում լուսի հրաբուխը վիթխարաճագար,
Ու աստվածները հուսալիք են ու ինքնախարագան...
Ամենակործան մղձավանջներում անրջի նա՛վն ա – ո՛րբ ու խելագար:

Իրականացող սպասմունքների նեռամուլագար
Ջայրույթն ա կազմում տիեզերական հսկա ավազան –
Խավա՛ր ա ժայթքում լուսի հրաբուխը վիթխարաճագար:

Մո՛լթն ա խորտակում խավարաարգել ամեն որձաքար,
Խզվում ա իմաստ արարող ամեն լա՛ր ու առասան –
Ամենակործան մղձավանջներում անրջի նա՛վն ա – ո՛րբ ու խելագար:

Ու անծպտուն են տաճար ու խորան, ու չկա ժամհար,
Չի լսվում սաղմոս, կամ էլ պատարագ – աղոթք սրբագան –
Խավա՛ր ա ժայթքում լուսի հրաբուխը վիթխարաճագար:

Բոլորակվում են տիեզերքները դժոխանկար,
Ու արշավում են զառանցանքների զորքերն այլազան –
Ամենակործան մղձավանջներում անրջի նա՛վն ա – ո՛րբ ու խելագար:

Խավա՛ր ա ժայթքում լուսի հրաբուխը վիթխարաճագար,
Ու արշավում են զառանցանքների զորքե՛րն այլազան –
Ամենակործան մղձավանջներում անրջի նա՛վն ա – ո՛րբ ու խելագար
Ու լա՛ց ա ըլնում, ու լա՛ց ա ըլնում – կարոտի մանուկ ջա՛հը ցավագար:

Գ

Ու ժամանակի գետն անծպտուն ա ու անհանդուրժող –
Հետդարձը լուսի կամ էլ մահացած երկնակամարի –
Անէանում են էրագ-անրջի փոթորիկները խրախճանաշող:

Հրեշտակները, թեթեվաբարո ու ցավը գարշող –
Լքել են գմբեթ, խորան ու գավիթ – վանք ու ժամերի –
Ու ժամանակի գետն անծպտուն ա ու անհանդուրժող:

Բերկրանքն ի վերջո մի ժանտամուլար կտտանք ա պատժող,
Ու բանտապետը դժնի հեծության խորխորատների –
Անէանում են էրագ-անրջի փոթորիկները խրախճանաշող:

Ու Դժնիշխանն էլ, գոռոզ ու հպարտ, դրախտը մերժող,
Չի կարա մի օր նորից ոտ դնի էրագ շեմերին –
Ու ժամանակի գետն անծպտուն ա ու անհանդուրժող:

Ու էրագները խոլ հրաբուխ են, ցա՛վ արտավիժող,
Ու ո՛ղբն ա թառե տխուր արտասվող դեղին մոմերին –

Անէանում են էրագ-անրջի փոթորիկները խրախճանաշող:

Ու ժամանակի գետն անծպտուն ա ու անհանդուրժող,

Ու ո՛ղբն ա թառե տխուր արտասպող դեղին մոմերին –

Անէանում են էրագ-անրջի փոթորիկները խրախճանաշող –

Թախի՛ծն ա մնում: Թախի՛ծն ա մնում ու բորբոքում ա ամենադժո՛խք:

դ

Ու ունայնն ի՛նքն ա ազնվածնունդ զարմն իմաստության,
 Ու արեվները ունայն ու պատիր լուս են արեվում –
 Ու հենց սկզբից ունայն ա էղե պատրանքը բարու ու իմացության:

Ու անտեղի էր գավաթի ժահրը՝ վերջին փորձության,
 Ու հեշ բան չկա հույս ու բաղձանքի երկնակամարում –
 Ու ունայնն ինքն ա ազնվածնունդ զարմն իմաստության:

Ու ճշմարիտն ա կորիզ-արմատը սուտ ու եղծության,
 Ու հեշ բան չկա էս ողբերգության ամեն արարում –
 Ու հենց սկզբից ունայն ա էղե պատրանքը բարու ու իմացության:

Ու զուր էր տենչում սեվ Աբիսակին զառամյալ արքան,
 Ու հեշ բան չկա ինքնաբոցավառ, որ լուս չի մարում...
 Ու ունայնն ի՛նքն ա ազնվածնունդ զարմն իմաստության:

Ու արեվները միշտ ճորտն են էղե ժահրոտ մթության,
 Ու հեշ բան չկա «եղիցի»-ն լսած է՛ն տաղավարում –
 Ու հենց սկզբից ունայն ա էղե պատրանքը բարու ու իմացության:

Ու ունայնն ի՛նքն ա ազնվածնունդ զարմն իմաստության,
 Ու հեշ բան չկա ինքնաբոցավառ, որ լուս չի մարում,
 Ու հենց սկզբից ունայնն ա էղե պատրանքը բարու ու իմացության
 Ու անպատեհ ու անծրագիր ա ընդարձակվելը սա՛ղ արարչության:

ե

Անկեռման ճամփեն պարո՛ւյկ ա մենակ – մենա՛կ տատանում,
 Անդրանդունդից – հլը որ հեշ մարդ – էս յան չի դարձե -
 Անվայրէջք ուղին, լո՛ւռ ու վեհասպառ, մենա՛կ ու մենա՛կ անդո՛ւնդ ա
 տանում:

Ու ոչ մի անգամ՝ ո՛չ մի բառ կամ տող – չի էլ գրանցած վերին
 մատյանում,

Որ իրա ճամփեն չի շրջե, թեքե կամ հակադարձե –
 Անկեռման ճամփեն պարո՛ւյկ ա մենակ – մենա՛կ տատանում:

Կարոտ-անրջի շիրմաքարե՛րն են ցավի ոստանում:
 Ակնկալիքներն արդեն վաղո՛ւց են երկինք համբարձե –
 Անվայրէջք ուղին, լո՛ւռ ու վեհասպառ, մենա՛կ ու մենա՛կ անդո՛ւնդ ա
 տանում:

Շնորհն ունայն ա, ու պարտապանը հեշ բան չի տանում:
 Պարուրագծերն ուղղագծվել են ու կարծրացե –
 Անկեռման ճամփեն պարո՛ւյկ ա մենակ – մենա՛կ տատանում:

Անկեռման ճամփեն պարո՛ւյկ ա մենակ – մենա՛կ տատանում,
 Անդրանդունդից հլը որ հեշ մարդ էս յան չի՛ դարձե,

Անվայրեջք ուղին, լո՛ւռ ու վեհասպառ, մենա՛կ ու մենա՛կ անդունդ ա տանում,
 Ու էրազների մո՛մն ա լաց ըլնում, մո՛մն ա լաց ըլնում – թախծի գնդանում:

Գլուխ 7 ԱՓՍՈ՛Ս, ԱՓՍՈՍ

5.1 ԳՐԱԿԱՆ ԻՆՉՈ՞Վ Ա ՏԱՐԲԵՐ ԻՐԱ ՄԱՅՐ ԲԱՐԲԱՌԻՑ

Ես 49 տարի ա (սրանից 20-ը գիտակից ու գիտության մեթոդով), ինչ ուսումնասիրում եմ մեր գրական ոճերի ու էրեվանի բարբառի տարբերությունները, ու եզրակացությունս անհավատալու ա, ուղղակի ֆանտաստիկ ա:

Մեր գրական «լեզու» կոչածի ու մեր էրեվանի բարբառի քերականական տարբերությունները հենց մեր գրական լեզու կոչածի սխալներն են, է՛ն սխալները, որ հայերենը լավ չզգացող կամ բարբառներն արհամարհող «թարգմաններն» են լցրե հայերեն գրական ոճերը:

5.2 Ո՞Վ ՊՏԻ ԸԼՆԻ ԳՐԱԿԱՆ ՈՃԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ

Ուրեմը, էրեվանի բարբա՛ռը, այսինքն, Լեզվի Գլխավոր Օրե՛նքը պտի ըլնի մեր գրական լեզվի տերն ու տիրականը, ղեկավարն ու պահապան հրեշտակը:

Մեր գրական ոճերի մեջ իմ արած փոփոխությունները ոչ թե մասնակի ու մեխանիկական են, այլ սիստեմատիկ ու համակողմանի ու նպատակային: Եթե էս ամենը իրար հետ չարվեր, ոտանավորներս սոգեղ կըլնեին ու ականջ կծակեին:

Սրանք հմի էլ անվարժ ականջին (ու մեկ էլ՝ աչքին) շատ սոգեղ կէրեվան: Բայց ի՛մ ականջը վարժվել ա ու հմի ականջիս մենակ է՛ս տեսակ բանաստեղծությունն ա սիրուն (ո՛ւմ էլ կարդամ՝ անկախ ընձնից՝ մտքումս օտար շերտը փոխում ու նոր եմ կարդում):

5.3 ԼԵԶՎԻ ՀԱՐՑՈՒՄ ԱՄԵՆ ԻՆՉՆ ԷԼ ՎԱՐԺՎԵԼՈՎ Ա

Էլի՛ եմ ասում, ՄԵՆՔ ՍԻՐՈՒՆ ԵՆՔ ՀԱՄԱՐՈՒՄ ԷՆԻ՛, ԻՆՉԻՆ ՎԱՐԺՎԵԼ ԵՆՔ ՄԱՆԿՈՒՑ:

Մի բան էլ կա.

էրեվանի բարբառի արտասանությունը, մանավանդ ինտոնացիայի առումով, թեկուզ շատ քիչ, շատ չնչին, բայց էլի տարբեր ա գրական լեզվի արտասանությունից ու ինտոնացիայից:

Ընենց որ՝ գրածս կարդացողը՝ պտի բարբառի հնչողությունով կարդա:

Այսինքը, թե որ գրած ա՝ *ինչ-որ, ոչ մի, հեշ մի, մեջք, աչք, էջմիածին*, պտի կարդաս՝ *իչ-որ, ոչ մի, հեշ մի, մեշկ, աշկ, էջմիածին* ևն, որտեվ էրեվանցիք ու Արարատյան բարբառի սաղ կրողները բաղաձայնից առաջ *չ*-ն դարձնում են *շ*: Թե չէ, կարդալուց խորություն ու կեղծիք ես զգալու, ոնց որ խորություն ու կեղծիք ենք զգում մեր տելեվիզորի «բարբառախոսների» արտասանությունը լսելուց:

(Իմիջիայլոց, էս բարբառը (համ էլ մյուս բարբառներից մի քանիսը) բաղաձայնից առաջ համ էլ՝ *ց*-ն դարձնում ա *ս*, *ձ*-ն դարձնում ա *զ*, *ջ*-ն դարձնում ա *ժ*: Թե ուզում եք համոզվեք, արագ-արագ ասեք բառերի հետեվյալ զույգերը. *կամաց-կամաց* (դառնում ա՝ *կամաս-կամաց*), *տանձ-տանձ* (դառնում ա՝ *տանզ-տանձ*), *գաջ-գաջ* (դառնում ա՝ *գաժ-գաջ*):

Մեր հայ թատրոնի ու կինոյի համար էս դիտողությունս ահավոր կարեվոր ա, թե որ սրանց պրոֆեսիոնալներն ուզում են, որ իրանց պատկերած մարդիկ հավաստի էրեվան:

5.4 ՉԵՄ ԱՍՈՒՄ, ԹԵ ԳՐԱԿԱՆ ՈՃՈՎ ՄԻ ԳՐԵՔ

Ես չեմ ասում, թե էկեք հրաժարվենք մեր մյուս բարբառներից ու գրաբարից, համ էլ չեմ ասում, թե գրական ոճերով չգրենք, ու չեմ ասում, թե գրենք մենակ ու մենակ բարբառով:

Մեր սա՛ղ բարբառներն են լավը ու շատ էլ թանգ են: Ով վերամբարձ ոճի ցանկություն ունի, թո գրի ու ասի՝ *քավ լիցի, հավուր պատշաճի, ոչ երբեք, զորս պատվիրեցեր* ևն, էտի արդեն իրա՛ գործն ա: Ամեն մարդ էլ լեզվական ազատության (բայց ոչ թե գռեհիկ հայհոյանքի կամ զրպարտանքի) իրավունքը ունի՛:

Ուրեմը, համ էլ չեմ ասում, որ պտի հրաժարվենք մեր գրական ոճերից:

Բայց թե որ մեկը գրական ոճով ա գրում, պտի անպայման գրի **բարբառի քերականությունով**, որ իրա գրածը հայերեն ըլնի, թե որ ուզում ա, որ հայերենով գրած ըլնի:

Թե չէ՝ էսօրվա գրական ոճերը, առանց բացառության, էնքա՛ն են սխալ, որ հանգիստ կարանք ասենք, որ հայերեն չեն:

Ուրեմը, ես մենակ ասում եմ, որ հայերեն բառերով պտի անպայման հայերենի՛ քերականությունով գրենք, իսկ հայերեն բառերն էլ հայերի գործածած բառերն են:

Ու որ ընձի լսեն, մեր էրեխեքի սովորելու գործը շա՛տ- շատ կհեշտանա:

Փի՞ս բան եմ ասում:

Ը. Թումանյան – Ս. ՆՈՒՆԵԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

Ոտանավոր հասկանալը շատ և նման անձանոթ, օրինակ, սիմֆոնիկ երաժշտություն հասկանալուն: Ով սիմֆոնիկ երաժշտությունը համարյա մանկուց չի լսե, ու ականջն ու ուղեղը սովոր չեն երաժշտության էտ տեսակին, դրա ականջին սիմֆոնիկ երաժշտության նույնիսկ ամենարագ ընկալվող գործերն էլ (օրինակ, Գրիգի դաշնամուրի 1-ին կոնցերտը) աղմուկ կթվան: (Նույնն էլ վերաբերվում և մեր հայ ազգային երգին, է՛ն երգին, ինչին սխալ-սխալ ասում են՝ Կոմիտասի երգ (տես իմ [16]-ը)):

Թումանյանը ծնվել և համարյա է՛ն թվին, որ թվին որ մեռել և ֆրանսիացի պոետ Արթուր Ռեմբոն, բայց Թումանյանը Ռեմբոյի (կամ 4 դար առաջ մեռած Շեքսպիրի) պոետական վարպետությանն ու խորությանը չհասավ: Սրա պատճառը Թումանյանի հանճարի պակասը չէր: Նախ՝ Թումանյանը չուներ էն տեսակ հզոր նախորդներ, ոնց որ Ռեմբոն ու Շեքսպիրն ունեին: Երկրորդ, Թումանյանը չուներ է՛ն ընթերցողը, ինչը որ իրանք ունեին:

Ըմի բերում եմ Թումանյանի մի իրոք որ **չքնաղ** ոտանավորը, **Ս. Նունեի պատկերի առաջ** վերնագրով, ինչն էսօր է՛լ և քիչ հայտնի ու քիչ և գնահատված: Աջ կողմը դրել եմ նույն ոտանավորը, էրեվանի բարբառով արած աննշան փոփոխություններով, որ Թումանյանը ինքն է՛լ կաներ, ոնց որ ասել եմ իրա նախորդ ոտանավորի առիթով: **(գեղ = գեղեցկություն, անկար = անզոր, անփույթ = հանգիստ ու անդարդ):**

Խունկի բուրյան մշուշներում,
Մըրմունջներով պատած երգի՝
Կանգնած է նա կապույտ հեռվում՝
Վարդը կյանքի, հարսն երկընքի,
Եվ չըգիտեմ՝ աղո՞թք անեմ,
Թե՞ ըզմայլեմ իր գեղի դեմ:

Համակ շնորհք ու սըրբություն,
Նայում է լուռ՝ լուռ սըրտիս մեջ,
Լույս հայացքի խորքում անհուն
Վառված սիրո կրակն անշեջ ...
Եվ ո՞վ կասի՝ կրա՞կն է շատ,
Թե՞ սըրբությունն իր անարատ:

Խաչ է բռնած իր կույս ձեռին,
Որ նըման չի ոչ մի խաչի,
Ու որթն, ասես, աստվածային,
Պիտի շնչի ու կանաչի.
Մի նշանում կապված հանդարտ՝
Տանջանքը վեհ, կյանքը զըվարթ.

Մութի թեթեվ քող է իջել
Պայծառությանն իր երկնային,
Վշտի ամպից լույս ճաճանչել,
Լույսն ըսքողվել վշտովն իր հին.
Ու չարիքն էլ, ասես, անկար,
Զարդ է դարձել իրեն համար :

Ա՛խ, առնեի եղբոր ձեռով
Բախտի ձգած քողը տըրտում,
Որ նա հառներ իր ողջ գեղով,
Ապրեր անփույթ էն ճոխ հովտում,
Վերին Պոետն ուր որ նըրան
Կերտեց դարձավ ապշեց վըրան:

Խունկի բուրյան մշուշներում,
Մըրմունջներով պատած երգի՝
Ի՛նքն և կանգնած, կապո՛ւտ
հեռվում՝
Վարդը կյանքի, հարս՝ երկընքի,
Ու չըգիտեմ՝ աղո՞թք անեմ,
Թե՞ ըզմայլեմ էտ գեղի դեմ:

Համակ շնորհք ու սըրբություն,
Նայում և լո՛ւռ, լո՛ւռ սըրտիս մեջ,
Լուս հայացքի խորքը անհուն
Վառած սիրո կրակն անշեջ ...
Ու ո՞վ կասի՝ կրա՞կն և շատ,
Թե՞ սըրբությունը անարատ:

Խաչ և բռնած էտ կույս ձեռին,
Որ նըման չի ոչ մի խաչի,
Ու որթն ասես՝ աստվածային,
Պտի շնչի ու կանաչի.
Մի նշանով կապված հանդարտ՝
Տանջանքը վեհ, կյանքը զըվարթ.

Մութի թեթեվ քող և իջե
Պայծառությանն էտ երկնային,
Վշտի ամպից լուս ճաճանչե,
Լուսն ըսքողվե վշտով էտ հին.
Ու չարիքն էլ, ասես, անկար,
Զարդ և դառե իրա համար:

Ա՛խ, առնեի ախպոր ձեռով
Բախտի ձգած քողը տըրտում,
Ինքն էլ հառներ էտ ողջ գեղով,
Ապրեր անփույթ էն ճոխ հովտում,
Վերին Պոետն ուր որ իրան

Կերտեց – դառավ ապշեց վըրան:

30. ԷԼ ՀԵՏ ՉԵՆ ԴԱՌՆՈՒՄ

Անխուսափ կորստի պատմությունն ա:

Մտքիս մեկ էլ հանգուցյալ ախպորըս մահն ա էղե: Երբ ախպերս կար՝ չէի հասկանում, որ ինքն էտքան թանգ ա ընձի համար: Թանգը՝ է՛ն խոսքը չի, ուղղակի անփոխարինելի էր: Ափսոսանքըս ուղղակի ահավոր էր, հմի քշացել ա (արդեն 32 տարի ա անցե իրա մահից):

Իսկական՝ ռեալ սեր ասածը էնի չի, ինչը որ միջակ գրքերն ու միջակ կինոներն են ասում: Մեր կյանքում մենք էս կարգի գրքերի ու կինոների ասածի պես ո՛չ տիրում ենք, ո՛չ ուրախանում, ո՛չ հրճվում, ո՛չ սգում ու ողբում: Մեզնից ամեն մեկն էլ մարդ ա, ու շատ անգամ նույնիսկ մերձավորին թաղելուց, կարող ա՝ ժպտա կամ խնդա, բայց էսի չի նշանակում, թե ինքը չի ափսոսում կամ չի ողբում իրա սիրած մերձավորի մահը:

Շատ անգամ էլ պատահում ա, որ մարդը իրա մերձավորի կորուստը հետո, մի քանի ամիս կամ տարի հետո ա լրիվ ու խորը ափսոսում, մանավանդ, եթե էս մերձավորը տարիքը լրիվ առած ա ու մեռնում ա իրա «բնական» մահով:

Կարծեմ՝ նորբերտ Վիներն ա ասում, թե սերը մարդու ուղեղի տազնապահար վիճակն ա: Էս տազնապի պատճառը սիրած անձին կորցնելու վախն ա: Էս վախն է՛ն վախտ ա դառնում ողբերգություն, երբ ոչ մի կերպ չես ուզում հաշտվես իրա կորստի հետ: Էս թեմայով մի պատմվածք ունեն, ինչը դրել եմ իմ **Սիրո չբանաձեվն ու ուսյալ ձիերը** գրքի մեջը:

Էսի ազատ ոտանավոր ա, իհարկե՝ լավ ռիթմ ու հանգով:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Համարյա լավ ոտանավոր ա, մետրիկայի կոմպոզիցիան էլ ահագին նոր ա:

Հենց հզորացող մղձավանջներն են –
 Հյուր-խաթարողը՝ ջինջ էրազների:
 Ու կասկած չկա, որ սրանք շա՛տ շուտ –
 Տնվո՛ր են դառնում:

Շնչավոր-անշունչ արարվածների,
 Հուշի շիրիմում դագաղվածների ուրվականները –
 Էլ հետ չե՛ն դառնում:

Ու կասկած չկա,
 Որ տաճարները ծերանում են ու
 Չե՛ն ըմբոստանում,
 Ու ավերակված, հա՛ կարոտում են
 Խունգ ու բուրվառի դառնահրաշքին:

Անկելանում են պարտեզներն անգամ
 Տռփոտ թագուհու գոռ անդաստանում¹,
 Ու վախճան չկա –
 Գթասրտության անվերջ երաշտին:

Էրազի նինջը խարիսխ ա քցում
 Հուշերի մանուկ նավահանգստում,
 Երբ էրազաբեկ ու անհանգրվան օրերի գետով
 Քրջոտ ու ուզվոր հորիզոնները
 Թափառում են ու...լուս չե՛ն ավետում:

Խարիսխ ա քցում:
 Խարիսխ ա քցում, հետո ծերանում,
 Հրաժեշտ ա տալի համ էլ դեղձանին, համ էլ ծիրանուն,
 Կարճատեսանում, գույն ու կյանք խառնում, քունը մոռանում,
 Հանգրվանում ա հույսերի սովի գոլորշիացած անդնդաժովում,
 Հետո գառամո՛ւմ, մղձավա՛նջ դառնում,
 Ու մի վերջնագիր հրաժեշտ տալով –
 Ի՛նքն է՛լ ա ուզում ստվերահովտում
 Անվե՛րջ, հանգիստ քուն:

Բայց, այնուհանդերձ, նույնիսկ էտ վախտ է՛լ
 Անդարձ ծերացած, խե՛ղճ տաճարներում
 Մի՛ օր չի՛ հնչում՝ ո՛չ կոչնակ, ո՛չ զանգ –
 Ու անսահմա՛ն թանգ –
 Շնչավոր-անշունչ արարվածների,
 Հուշի շիրիմում դագաղվածների
 Ուրվականները –
 Էլ հետ չե՛ն դառնում:

¹ Ա.կնարկը Շամիրամն ու իրա առասպելական կախովի այգիներն են:

31. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԵՎԱՍՏԻՆ

Առաջի երկու տողը գրել եմ երեվի 70-ական թվերի վերջին: Էն օրերին ինքս ընձի պոետ չէի համարում ու չէի կարում սկսածս բանը վերջացնեմ: Սրա վերջացնելու առիթը չեմ հիշում:

Կյանքը, մեծ հաշվով, տխուր բան ա, որտեղ ամեն մեկս էլ մեծանում ու ծերանում ա, ու սրա հակառակը ոչ մի անգամ չի ըլնում: Փոքր էրեխեքը սաղ է՛լ չքնաղ են, բայց մեծ մարդկանց մի մասը սիրուն ա, մի մասը տանելի ա, մի մասն էլ, արդեն լրիվ գառամները, համարյա սաղ էլ, տգեղ են, ու մեկ-մեկ էլ՝ այլանդակ:

Ես լավ գիդեմ, որ իքնս էլ կդառնամ այլանդակ, բայց ի՞նչ անեմ, սրա ձեռից պրծում չկա: Ինչ էլ ըլնի, կյանքը հա է՛լ հետաքրքիր ա ու քաղցր, ու մարդն ուզում ա ապրի, անպայման ապրի, թեկուզ հաշմանդամ, թեկուզ անկողնուն գամված, բայց ապրի:

Բա ողբերգություն չի, որ մի վախտվա չքնաղ ու ջահել աղջիկը դառել ա պառավ ջադու: Բայց մեկ ա, պառավ ջադուն ավելի լավ ա, քան թե պառավ ու անշունչ դիակը:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Վատը չի, մետրիկայի կոմպոզիցիան էլ ահագին թարմ ա:

Դու նման էիր հուրը փոթորկող, տիեզերական չքնաղ մեղեդու:
Հարեմում փակած չքնաղ պարսկուհու նման էիր դու:

Բա դու չե՞ս հիշում,
Թե էտ ո՛նց էիր սավառնում օդում,
Թե էտ ո՛նց էիր լուսը շղարշում,
Թե էտ ո՛նց էիր հրճվանքի պահին
Զույգ արեվներդ լո՞ւռ բոցավառում,
Ու քու շուրթերից
Շող ու ծաղկունքի օրհնան՝քն էր կաթում:

Աստվածանկար տաճար ու դղյակ
Ծնվում են՝ մենակ, որ ավերակվեն,
Ու հրեշտակային երկինքները բիլ –
Դառնում են սեվ ու կնճիռաակոս:

Կենսոլորտագուրկ մոլորակները
Հա՛ աննպատակ կբոլորակվեն,
Ու գոռ խաչքարի ճակատն ի վերջո –
Կվարագուրի ժանգ ու քարաքոս:

Դու հեռացար պաղ
Ու անապագա
Ադամամթին:
Բայց թե որ հանգարծ
Դեսպան ուղարկես,
Էս – հմի արդեն
Անտարբեր ու լուռ
Ու անշառագույն
Արեվամտին,
Հույսերի մահվան սե՛վ, եղերակա՛ն
Էս խառնարանում –
Էլի հետ կգամ, որ մոմս վառեմ
Ավերակներիդ հուշախորանում:

Հրաչյա Սարուխան – ՀՐԱԺԵՇՏ ԱՆԾԱՆՈՐ ՊԱՌԱՎԻՆ
ԳԱՐՆԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Բերում եմ Հրաչ Սարուխանի մի գերազանց ոտանավորը: Էս ոտանավորը ես կարդացել եմ 1960-ականների վերջին կամ 70-ականների սկզբին, երբ մտքովս էլ չէր անցնում, որ մի օր ինքս էլ եմ ոտանավոր գրելու: Էտ օրերին, երբ Հրաչին տեսա, ասի, որ ինքը մեծ պոետ աս:

Մինչեվ էս ոտանավորը ընձի էս տեսակ ոտանավոր չէր հանդիպե, որ հենց կոնկրետ ու շարքային մարդու մասին ընձի, մի սովորական ու անծանոթ պառավի մասին: Ես ուղղակի ապշել էի, որ Հրաչը կարացել աս էտ շարքային իրադարձության մեջը էտքան խորը պոետիկա տենա:

Հետեվելով Էրեվանի բարբառին, աջ կողմինի մեջը մի քանի փոփոխություն եմ արե: Երրորդ տան մեջի **հասցեներ-ի** հոգնակին ավելորդ աս, **չմոռնաս-ն** էլ տիպական չի: **ժպտալիս-ը** մեռած աս, իսկ **տալիս-ի ս-ն** բարբառն ասում աս մենակ էն վախտ, երբ էս բառի (ու համ էլ՝ **լալիս-ի** ու **գալիս-ի** հետեվից օժանդակ բայ աս գալի):

Առաջին էրկու դիտողությունը Հրաչն էլ տեսած կըլնի, բայց մերոնք էնքա՛ն այլանդակ են գրում, ու ոտանավորն էլ (նույնիսկ էս տեխնիկական թեություններով) էնքա՛ն աս գերազանց, որ ալարել աս ու չի դգե:

Ես ըսենց թերություն չեմ հանդուրժում. սրա համար էլ ի՛մ վարյանտներն եմ առաջարկում, ու չնայած իմ փոփոխություններից 2-րդ ու չորրորդ տողերի հանգերը տուժում են, բայց կարծում եմ, որ ավելի լավ աս՝ հանձր կաղա, քան թե գրածս բարբառին հակառակ ըլնի: Որոշողը բարբա՛ռն աս, ե՛ս չեմ: Ծիշտն ասած, սրա **գնում-ը** փոխել էի **էքում-ով**, բայց հետո տեսա, որ էս փոփոխությունից հանգերն ու մեղեդին շատ են փոխվում, (**Գնում-տանում-անուն-անուն-Տանում-գնում-քնում** շարքը շատ հարուստ աս երգեցիկ մ-ով ու ն-ով) ու **գնում-ը** թողի, որ մնա:

Ինչ ո՛ր աս, համարում եմ, որ աջ կողմինն էլ աս լրիվ Հրաչինը:

Հրաչ Սարուխան

Գնում ես: Ծիշտն ասած՝ տանում եմ,
Պառա՛վ իմ, անծանոթ պառավ,
Եվ ասա –
Շրջում է անունդ՝
Մահագրի շրջանակն առած:

(Ինչ դառն է) ... Գարեջուր եմ խմում:
Գլխարկս թողել եմ տանը:
Դագաղը քսվում է քամուն:
Մեղեդին թեթեվ է ու ծանր:

Քեզ համար էլ չկան հասցեներ:
Իմ բաժին հրաժեշտն եմ տալիս:
Չմոռնա՛ս տեր աստծուն հարցնել՝
Ինչու են մահանում ժպտալիս:

Պառա՛վ իմ, անծանոթ պառավ,
Ես ի՛նքս էլ անուն եմ երթեվել.
Մահագրի շրջանակն առած –
Ես էլ եմ շրջելու երբեվէ ...

Տանում եմ: Ծիշտն ասած՝ գնում ես:
Քեզ համար – մենք արդեն թքած ...
Իսկ այստեղ Սամվելը քնում է՝
Գլուխը գավաթին թեքած:

Հրաչ Սարուխան

Գնում ես: Ծիշտն ասած՝ տանում եմ,
Պառա՛վ իմ, անծանոթ պառավ,
Ու հե՛ս աս –
Շրջում աս անունդ՝
Մահագրի շրջանակն առած:

(Ինչ դառն աս) ... Գարեջուր եմ խմում:
Գլխարկս թողել եմ տանը:
Դագաղը քսվում աս քամուն:
Մեղեդին թեթեվ աս ու ծանր:

Մի քիչ էլ, ու հե՛ս աս, կհասնե՛ս:
Իմ բաժին հրաժեշտն եմ տալի:
Տեր աստծուն իմ տեղը կհարցնես–
Թե խի՞ են մահանում ժպտալուց:

Պառա՛վ իմ, անծանոթ պառավ,
 Ես ի՛նքս էլ – անո՛ւն եմ երթեվեկ.
 Մահագրի շրջանակն առած –
 Ես է՛լ եմ շրջելու երբեվէ ...

Տանում են: Ճիշտն ասած՝ գնում
 ես:
 Քու համար – մենք արդեն թքած ...
 Իսկ ըստե Սամվելը քնում ա՛
 Գլուխը գավաթին թեքած:

32. ԱՅԼԱՇԽԱՐԱՅԻՆ ԳՆԱՑՔԸ ԿԱՊՈՒՏ

Սրա գրելու առիթը ինչ-որ երգից լսածըս *золушой вагон* բառերն են էղե (Չերուրաշիկի մոլտիկինը չէ):

Օղորմածիկ Վահագն Դավթյանը որ կարդաց, սկզբում ասաց. «Զգուշ էղի, նեղոգիզմները շատ-շատ են, կարող ա՛ չափը խախտես», հետո էլ ավելացրեց. «Մերուժան, գիտե՞ս, որ նոր ուղի ես բացում հայ պոեզիայի մեջ»: Հո չէի ուրախացե ու ոգեվորվե, էլ ասելու չի: Էտի 1990 թիվն էր:

Էտ օրը էս խոսքերից հետո մի քանի ուրիշ բան էլ էր ասե: Ես արդեն 41 տարեկան էի, ու որ **Գարուն** ժուռնալը, առաջի անգամը, իմ մի քանի ոտանավորը վեկալավ, որ տայի: Ես էլ ոգեվորված գնացի Վահագն Դավթյանի մոտը, որ մի քանի ոտանավոր ցույց տամ իրան, ու տենամ, թե ի՞նքը ինչ կասի: Էն օրերին ինքը **Ավետյաց երկիր** թերթի խմբագիրն էր:

Մենք իրար չգիդեհինք, ու որ ինքը իմ տված առաջի ոտանավորը կարդաց, ասեց.

– Շատ լավն ա, հենց հմի տպում եմ:

Ես ասի, որ **Գարունն** էտի արդեն տպում ա, ու ես ուղղակի ուզում եմ՝ իրա՛ կարծիքն իմանամ, ու մի էրկու ոտանավոր էլ տվի, ու ինքը հերթով կարդաց ու հերթով էլ ասաց.

– Շ՛ատ ինքնատիպ ա:

– Շա՛տ վառ անհատականություն կա:

– Հրաշալի տեխնիկա ունես:

– Էս *служебный* բառերից ո՞նց ես էսքան լավ խուսափում:

– Տեխնիկադ ուղղակի գերազանց ա:

Մի քանի ամիս հետո էլ ասաց.

– Մերուժան, դու ուղղակի խելագար ես. ախր մեր գրականության մեջ ոչ մեկին նման չես, է՛:

Հո չէի ոգեվորվել: Ընձի թվում էր, թե ամենաշատը մի տարի չի անցնի, ու ժողովուրդը կընդունի, որ ես հզոր պոետ եմ: Մտքովս չէր է՛լ անցնում, որ 20 տարի էլ անցնի, կմնամ աննկատ, ու երեվի հա է՛լ մնամ աննկատ: Ըսենց է՛լ ա ըլնում: Բա՛:

Հմի էլ ըսենց նեղոգիզմ չեմ սարքում: Զգտում եմ՝ խոսքս պարզ ըլնի:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Լավ ոտանավոր ա, մետրիկայի կոմպոզիցիան էլ լրիվ թարմ ա:

Էլ հետ չե՛ս դառնում...

Ու ժամանակի հոսանքը հետդարձ – էլ չի՛ ունենա,

Ու անարձան են հուշերի կապուտ երկնակամարի պատվանդանները:

Օազիսները հրաժարվում են անապատներից – ու վեր սավառնում,
Հետո՛ համբառնում,

Մնում ա մենակ – ավազաքամի՛, ավազապատկե՛ր, ավազաբլո՛ւր:

Երա՛շտն ա մնում:

Երա՛շտն ա մնում,

Ու հուշակարոտ, մայրցամաքազուրկ թախծամրմուռի հրվանդանները
Դառնում են լավա՛, դառնում են սամո՛ւմ –

Ու փոթորկվելով – էրազանկար երկի՛նքն են ծամո՛ւմ:

Հորիզոններում զորություն չկա՛ –

Սիրտ չի՛ դիմանում:

Սպասումների ասեղնակարը

Մեկ մարմրում ա ու մեկ առկայծում,
 Ու լաց ա ընում արմավատեսիլ արհամարանքից,
 Ու հլը որ կա՝ օազիսների մարող ճախրանքի մանրանկարը,
 Բայց անուրջն արդեն նավաբեկվո՛ւմ ա
 Երաշտացավի քամահրանքից:

Օազիսների մահաավերում
 Ապագան մենակ օշինդրամրմուռ ցա՛վ ա նվիրում,
 Ու երկնաշողշող ամպանավերում
 Էրազամանուկ մանկապատկերդ ձեռով ա անում,
 Ու հրավիրո՛ւմ ու հրապուրո՛ւմ,
 Բայց ո՛չ մի կաթիլ զորություն չկա՝ հորիզոններում:
 Սիրտ – չի՞ դիմանում:

Ավազադեղին էս անապատում
 Հուշապատկերիդ մահարձաններն են թեվերը կանթում –
 Ու տարուբերվում
 Կարոտածածան երկնակապուտում –
 Անայլայլ նայում լուս ու կայծակին՝ թախիծանկար ու անապաքեն,
 Քմծիծաղ տալի ու հեզնում անփույթ –
 Ու էլ ո՛չ ուժ կա դիմադրելու,
 Ո՛չ էլ մի կորո՛վ –
 Ճամփա ընգնելու:

Ու ամպատաճար, սուրբ պատկերներից արցունք ա կաթում,
 Ու քիչ-քիչ, կամաց, կաթ-կաթ ու պուտ-պուտ,
 Լցվո՛ւմ, լճանո՛ւմ, լեռնանում ա ու
 Օվկիանոսանում,
 Ու արդեն մեկ ա, որ գիշերները էլ չեն լուսանում:

Ու այնուհանդերձ,
 Մշուշապատկեր էրազահուշդ թո՛ղ չհեռանա:
 Համբերի՛ մի քիչ:

Ու ի՞նչ ա մնում, կամ էլ կորցնելու
 Ի՞նչ կա էս տկլոր,
 Անուշապահպան անապատներում:

Էլ ո՛չ մի կաթիլ զորություն չկա,
 Զորություն չկա՛,
 Սիրտ չի՛ դիմանում –
 Անիծված ըլնեմ,
 Թե ըստե մնամ,
 Համբերի՛ մի քիչ,
 Էրազարեվ սի՛րտ,
 Սի՛րտ իմ, սիրելի՛,
 Բա դու չե՞ս տենում,
 Գալի՛ս եմ, գալի՛ -

**Արդեն նստել եմ,
գնացքը կապուտ:**

33. ՄԱՍՐԵՆՈՒ ԹՓԻ ՄՈՏ

Գրելու առիթը չեմ հիշում: Հիշում եմ, որ բառերն ու ձե՛վը տարան առաջ: Էնքան էլ չեմ հավանում էսի, բայց մեջը ոնց որ մի տեսակ էկզոտիկա ըլնի:

Ընձի դուր ա գալի, որ ոտանավորի մեջը ներքին հանգեր են ըլնում: Ու համ էլ դուր ա գալի, որ ասելիքի մեջը մի քիչ ռեբուս ա ըլնում: Երեվի սրա պատճառն էն բանն ա, որ երբ մտքինդ քյասար ես ասում, էֆեկտը թույլ ա ըլնում, իսկ ռեբուսն ստիպում ա, որ խողը գոնե մի քիչ մտածի:

Առհասարակ, կարող ա պոետը գրելուց մի կոնկրետ միտք կամ պատկեր նկատի ունենա, բայց կարդացողն էտի լրիվ ուրիշ ձեվ հասկանա: Գրողը շատ անգամը չի էլ իմանում, թե բառերն իրան ուր կտանեն, կամ ուր կհասցնեն: Գրելուց մենակ մի դարդ ես ունենում – ընե՛նց մի բան գրես, որ անպայման սիրուն ու թարմ ըլնի, ու իմաստի համար էնքան էլ դարդ չես անում:

Արվեստի մեջ ձեվի սիրունությունն ու թարմությունը առաջնայինն ա, ու կոմունիստների ասած «ձեվի ու բովանդակության միասնությունը» սխալ ա: Թե որ ձեվը ճիշտ ես քթե, սուտ չես ասում ու քու կարծիքով կարեվոր բան ես պատմում, էտ միասնությունն ա՛նպայման ա ըլնում:

Ջոռով չպտի գրես, այսինքը չպտի նստես ու ասես՝ «բռնեմ ու մի հատ ոտանավոր գրեմ»: Որ ըտենց անես, գրածդ կեղծ կըլնի, իջքան էլ տեխնիկադ բարձր ըլնի:

Գյոթեն ասում ա, թե իրան մեկ-մեկ հարցնում են, թե իրա Ֆաուստն ինչի՛ մասին ա: Ու Գյոթեն պատասխանում ա. «Ես շա՛տ գիդեմ, թե իմ Ֆաուստն ինչի՛ մասին ա: Ես կարամ ասեմ, թե դրա սյուժեն ինչ ա, դեպքերը ոնց են իրար հաջորդում, բայց ես չգիդեմ, թե Ֆաուստն ինչ մասին ա: Արվեստի գործը պտի մտքի համար անչափելի ըլնի», ասում ա Գյոթեն:

Ես էնքան էլ լավ չեմ հասկանում, թե Գյոթեն ինչ ա ուզում ասի, երբ ասում ա, թե արվեստի գործը պտի մտքի համար անչափելի ըլնի, բայց որ գրելուց հետո գրածդ սկսում ա իրա սեփական կյանքով ապրելը, ու որ կարդացողը կարա քու ասածից ու նկատի ունեցածից մի լրիվ ուրիշ բան հասկանա կամ զգա, էսի հաստատ ա:

Ամանակը երաժշտական դադարն ա: Ներքեվից երրորդ-չորրորդ տողերի իդեան, իհարկե, մի վիթխարի միստիֆիկացիա ա:

Վատ ոտանավոր չի:

Մասրենու ու քու վարսերին դողում էր երկնագույն քամին:
Իրար հետ, նայելով իրար, բառերի վախճանի համար
Անբարբառ խաչեցինք իրար, ու հենց էտ անգույն վարկյանին
Մասրենին դողաց քամու տակ, ու անկյանք տերեվի նման,
Էրկու գորշ, տենդահար ոգի՛ կախ ընկավ մահվան արկանին:

Էս Գնդին նայում եմ հմի՛ – ապակու հետեվից մենակ:
Էրագի շեներում արդեն՝ էլ քա՛րը քարին չմնաց:
Տաղտուկ ու աշուն ա մենակ, ու մի վի՛թխարի ամանակ:
Անիմաստ դարը ո՛նց էկավ՝ ըտենց էլ անիմաստ գնա՛ց:

Մասրենին դողում էր արդեն՝ վարսերին ալ-կարմիր հինա,
Երբ ոգիդ դառնացած ասաց.
– Ըտենց էլ կմնա քնա՛ծ.
– Սաղ կյանքդ, ա՛յ, ասում եմ քեզ, սաղ կյանքդ քնա՛ծ կմնաս:

Կարող ա՛ – հենց ըտենց ըլնի: Կարող ա՛ ճիշտը էտի՛ ա:
Էս Գունդը, հենց ինքն էլ, կարող ա՛ սա՛ղ կյանքը էղել ա քնա՛ծ՝
Մի հավի քրջոտ էրագում: Քրջոտ, ապուշ ու անիմաստ:

Էրագի քրջոտ շեներում էլ քա՛րը քարին չմնաց:
Անիմաստ դարը ո՛նց էկավ՝ ըտենց էլ անիմաստ գնա՛ց:

34. ԱՓՍՈՂՍ, ԱՓՍՈՍ

Գրելու առիթը՝ ֆրանսիացի Ռոմեն Ռոլանի ժան Քրիստոֆի մի հատվածն ա էղե՝ Քրիստոֆի հուշերը Սաբինի մասին: Էս թեման առհասարակ ընձի շատ ա հետաքրքիր:

Ռոլանի Քրիստոֆը շատ կարեվոր ա ինտելեկտուալ մարդու կրթության համար – իմ համար որ՝ կարեվոր ա էղե: Առհասարակ, Ռոլանը չափազանց հզոր ինտելեկտուլ ու շատ բարի, արդար ու ազնիվ մարդ ա էղե:

(Իմիջիայլոց, մեր Կոմիտաս Վարդապետը Ռոլանի հրավերով Ռոլանի ինտելեկտուալ լեկցիաներ ա կարդացե ու հետն էլ մեր հայկական երգերն ա երգե, ու երեվի մեր հայակական փողն էլ նվագել ա):

Ռոլանը Առաջին համաշխարհայինի վախտ եվրոպացիներին համոզում էր, որ չկռվեն իրար հետ, որտեվ, ասում էր ինքը, Եվրոպան իրանց ընդհանուր տունն ա: Իրա հայրենակիցներին՝ ֆրանսիացիներին, ասում էր, որ եթե իրանք պատերազմում նույնիսկ հաղթեն էլ, էտ հաղթությունը կդառնա պարտություն, ու էտի ըտենց էլ էղավ պարտվեց սա՛ղ Եվրոպան:

Սրա համար ա, որ մինչեվ հմի էլ ֆրանսիացիները Ռոլանին էնքան էլ չեն «սիրում»:

Ռոլանը հայտնի դառավ 50 տարեկան վախտը, իրա Քրիստոֆը տպելոց հետո: Մի վախտ էսի ընձի հույս էր տալի, որ ես հայտնի կդառնամ գրնե 60 տարեկան: Հմի էս ժամկետն էլ ա անցե, ու էլ ըսենց հույս չունեմ, բայց ջհանդամը: Գրելը, մեկ ա, հետաքրքիր ա:

Կերցավ-ը ոռակ հիվանդությունն ա, կոպար-ը եզրն ա, սահման-ը:

Վատ ոտանավոր չի, մետրիկայի կոմպոզիցիան էլ լավն ա:

Ամեն հոգու անդնդախոր անկյուններում մեկուսի
Յավ-մրմուռ կա, վարագուրված ու անթեղված սե՛վ թախծով.

Մի սե՛վ թախիծ, որ նման ա կերցավի չար վիրուսի –

Մի սե՛վ թախիծ, որ ծորալով, կամաց-կամաց,

Լճանում ա, դառնում ծով,

Ծով, որ հետը մեկը տանում –

Ու թաղում ա հուշի խորքը կապարի,

Ու էլ կյանքում ձեռ չի տալի էտ ջրին,

Ու էտ ծովում անշարժ ջուրը դեմ ա առնում –

Մրմո՞ւռ ցավի կոպարին:

Բայց դե՛... հենց որ շունչ ա առնում հուշի թեթեվ մի զեփյուռ,

Ցիրուցան ա դառնում անթեղ –

Քող-վարագուրը թախծի,

Շիկանում են մրմուռների ածուխները համասփյուռ,

Ու փոթորկում – է՛ս մի ծովը – հիշողության ու քաղցի:

Փոթորկվում ա է՛ս մի ծովը՝

Կարոտախանձ, մղկտացող հիշողության ու քաղցի,

Ու պայթում ա ափսոսանքի համաաշխարհ երկրաշարժ –

Որ կապարի գրկում չկա –

Շունչ ու շշունջը դաղձի,

Շենք ու շնորքը դեղձի,

Նարնջալուս ու տերեվ,

Հենց ընենց լուս ու արեվ –

Տո հենց ցերեկ ու բարեվ,

Որ է՛ն ծովում, է՛ն մի ծովում,

Ջուրն անխռով, անտարբեր ա –
Ու անշարժ:

35. ՄԻ ՄՈՒՈՐՅԱԼ ԿԱՄ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՆՔՆԱՍՊԱՆ

Ինքնասպանության փաստը եղելություն ա, մանրամասներն ասելու իրավունքը չունենմ:

Սրա ստարտը չեմ հիշում:

Երբ մեկը մի հարազատ մարդ ա կորցնում. ահագին երկար չի հաշտվում էս հարազատի կորստի հետ: Առաջ ընձի թվում էր, որ ես քարսիրտ մարդ եմ, որ է՛ն տեղերը, երբ պտի գրքերի ասածի պես հուզվեմ, «ցնցվեմ» ևն, հեչ էլ չեմ հուզվում, չեմ «ցնցվում», թաղումներին մեկ-մեկ նույնիսկ ծիծաղում եմ, փոխանակ յաց ըլնեմ:

Բայց երբ ախպերս մեռավ, մի քանի ամիս անընդհատ խելքի չէի գալի. անընդհատ մտածում էի, թե գնաց, թե էլ չկա՛նու չկա, թե հրես, ես քայլում եմ, իսկ ինքը պառկած ա հողի տակը, թե հրես, այ, էս մարդիկ, քայլում են, նայում են կողքները, տենում են էս արար աշխարհը, տենում են էս արեվն ու լուսինն ու աստղերը, իսկ ինքը չի տենում:

Ու ես նոր հասկացա, թե ինչքան խորը պտի ըլնի էն քյորփա էրեխեքի ցավն ու մըմուռը, ում հորն ու մորը, մանավանդ մորը (որտեվ էրեխեքն իրանց մորը ահավոր են սիրում) թուրքերը հենց էրեխեքի աչքերի առաջը տանջել են, բռնաբարե ու կտորկտոր են արե:

Բա է՛ն քաղզործիչները, ովքեր չեն ընդունում որեվէ մի կոտորածի փաստն անգամ, մա՛րդ են: Բա սրանք էրեխա չունե՞ն, ծնող չե՞ն կորցրե, սրանց ոչ մի սիրելի հարազատը չի՞ մեռե:

Մենք ուղղակի շատ անգամ չենք ուզում ուրիշի ցավը տենանք, ուրիշի դարդի մեջը մտնենք, որտեվ ըսենց հեշտ ա, որտե յանի մե՛նք խի պտի դարդ անենք, որ: Բայց մեր դժբախտությունների գոնի մի մասի պատճառը մեր այ հենց է՛ս տեսակ վերաբերմունքը չի՞:

Հաթերը էն ժողովուրդն էին, որ ապրում էին հեթիթների պետության տարածքում, հնդեվրոպացի հեթիթների նվաճումից առաջ: Հաթերը լուծվեցին հեթիթների մեջը:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Վատ ոտանավոր չի, մետրիկան էլ հետաքրքիր ա:

Անհակադարձելի շրջապտույտը չորն անվերադարձ խառնում ա թացին:

Դարերի փոշին ծածկում ա հուշը – է՛լ բաբելացու,

է՛լ եգիպտացու, խեթի ու հաթի:

Անորոշ ողջույն, բաբել ընթացիկ –

Ու հե՛ս ա – աշխարհը խառնվեց անցյալի գետին:

Աստղե՛րը – մնացին:

Հինավուրց մի Ծիր-Կաթին – ներկա-Ապառնու մատյանի թերթին:

Դիցածին հույսերը մնացին՝ Իրանց պատանի անրջի ասպետին:

Խաժակն երկինքը թափանցիկ – մենակ մի՛ վարկյան կնայի

էս անտեղի՛ գարնան կանանչ կարպետին,

Ու հենց մի՛ վարկյան հետո –

Հե՛չ մարդ չի՛ ասի, ո՛չ մեկը, անշարժ կամ ընթացիկ,

Չի՛ ասի, որ չկա՛ս, որ արդեն գնացի՛ր:

Ու կէթան: Ո՛չ իհարկե միասին:

Իշխան ու ազնվածին, խափշիկ ու թաթար ու խառնածին –

Կէթան ու կձուլվեն Անցյալի կայրասեվ ասֆալտին,

Ու գեղչ չի՛ ըլնի ո՛չ արծաթին, ո՛չ ոսկուն,

Ու ո՛չ էլ – ամրակուռ ու աստեղափայլ ավմաստին:

Բայց ո՞վ կամ ի՞նչն ա որոշում, հենց մեզնից բացի,
 Որ վերջը հասել ա իրա հենց վերջի՝ կետին:
 Մի անորոշ ողջույն – ու հրաժեշտ հպանցիկ,
 Ու հե՛ս ա – Աշխարհը խառնվեց անցյալի գետին:

Աստղե՛րը – մնացին:

Վ. Տերյան – ՄՈՌԱՆԱ՛Ս, ՄՈՌԱՆԱ՛Ս ԱՄԵՆ ԻՆՉ

Մեր գրական ոճերը, շատ անգամ, ռուսատիպ են: Ասածս հաստատելու համար մի օրինակ բերեմ: Վահան Տերյանը, ով հանճարեղ բանաստեղծ ա ու գերազանց ոտանավոր՝ շատ ունի, գրում ա.

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
 Ամենին մոռանալ.
 Չսիրել, չխորհել, չափսոսալ –
 Հեռանա՛լ...
 Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
 Գիշերում այս անշող,
 Արդյոք կա՞ իրիկվա մոռացման,
 Մոռացման ոսկե շող...
 Մի վայրկյան ամենից հեռանալ,
 Ամենին մոռանալ.–
 Խավարում, ցավերում քարանալ
 Մեն՝միայն...
 Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
 Ամենին մոռանալ.
 Չըսիրել, չըտենչալ, չըկանչել –
 Հեռանա՛լ:

Էսի, իհարկե, **գերազանց ոտանավոր ա**, բայց սրա մեջի բոլոր անորոշ դերբայները, անառարկելի, գոյական են (տես [3]-ը), ու ոչ մի տեսակ բայ չեն: Ուրեմն, էս ոտանավորը հայերեն չի, կամ էլ՝ կոտորտված հայերենով ա: Ապացուցելու համար էկեք էս անորոշ դերբայ-գոյականների վերջից ավելացնենք **ը** որոշյալ հոդը, որ տենանք, թե սագո՞ւմ ա, համ էլ՝ որ տենանք, թե էսի հայավարի՞ խոսք ա, թե՞ չէ:

Մոռանա՛լը, մոռանա՛լը ամեն ինչ,
 Ամենին մոռանալը.
 Չսիրելը, չխորհելը, չափսոսալը-
 Հեռանա՛լը...
**Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
 Գիշերում այս անշող,
 Արդյոք կա՞ իրիկվա մոռացման –
 Մոռացման ոսկե շող...
 Մի վայրկյան ամենից հեռանալը,
 Ամենին մոռանալը.-
 Խավար ու ցավի մեջ քարանալը-
 Մե՛ն-միայն...
 Մոռանալը, մոռանալը ամեն ինչ,
 Ամենին մոռանալը.
 Չըսիրե՛լը, չըտենչա՛լը, չըկանչե՛լը –
 Հեռանա՛լը:**

Ակնհայտ ա, որ Տերյանը էսի՛ չի ուզե ասի: Սրա մեջը մենակ մի՛ հատ նախադասություն կա, ինչը ես հաստատեցի եմ: Տերյանի ուզածը իղձ էր, ցանկություն էր, բայց քանի որ ռուսերենի ու մանավանդ ռուս սիմվոլիստ պոետների ազդեցությունը Տերյանի վրա շատ հզոր էր, Տերյանը վերի սխալ ռուսատիպ ձևով ա գրե.

ЗАБЫТЬ БЫ, ЗАБЫТЬ ВСЕ,
ЗАБЫТЬ БЫ ВСЕХ!

Ան, ան:

Եթե Տերյանն իմանար, որ գրածներն ռուսատիպ են, ու բարբառն էլ էտքան չարհամարհեր, կուղղեր էսի ու կգրեր, օրինակ, ըսե՛նց.

Մոռանա՛ս, մոռանա՛ս ամեն ինչ,
Ամենքին մոռանաս.
Չսիրե՛ս, չխորհե՛ս, չափսոսա՛ս-
Հեռանա՛ս...
Էս տանջող, էս ճնշող ցավի մեջ,
Մութ գիշերն էս անշող,
Տենաս կա՞ իրիկվա անհուշի –
Անհուշի՞ ոսկե շող...
Մի վարկյան ամենքից հեռանաս,
Ամենքին մոռանաս.-
Խավար ու ցավի մեջ քարանաս-
Մե՛ն-մենակ...
Մոռանա՛ս, մոռանա՛ս ամեն ինչ,
Ամենքին մոռանաս,
Չսիրե՛ս, չտենչա՛ս, չկանչե՛ս-
Հեռանա՛ս:

Հայերենը էսի՛ ա, ու տաղանդավոր հայը, որ տխուր ու հուսահատ լինի, լրիվ հնարավոր ա, որ մտնի սենյակ ու այ հենց ըսե՛նց բաներ ասի: Բայց եթե մի հայ, թեկուզ հուսահատ ու թեկուզ տաղանդավոր, մտնի սենյակը ու իրար հետևից մի քանի դերբայ-գոյական շարի, օրինակ, ասի.

Փախչել(ը), կորչել(ը), գնալ(ը),

էսի հայերեն չի ըլնի, ու լսողները վռագ կզգան որ հայերեն չի, ու դժվար թե ըսենց խոսողի հայերենի մասին լավ բան մտածեն:

(Որ լրիվ հնարավոր է, որ Վ. Տերյանը կույր-կույր ընդօրինակեր ռուսերենին, ապացուցում է Տերյանի հետևյալ խոսքը, ինչը ոչ մի «գրականագետ-ուսուցիչ» չի նկատում.

Դու անհոգ նայեցիր ինձ վրա...

(Մենք՝ հայերս, **չենք նայում մեկի վրա կամ մի բանի վրա: Աշտը չի նայում Գոհարի վրա, Գոհարը չի նայում պատի վրա** ևն: Աշտը նայում է **Գոհարին**, Գոհարը նայում է **պատին** ևն: Էսի՛ ա հայի «նայելու ձևը»: Ռուսներն են՝ որ նայում են՝ **ինձ վրա, Գոհարի վրա, պատի վրա** (на

меня, на Гоар, на стену) ևն, բայց էտի ռուսների գործն ա, ու իրանք լավ են անում, որովետև ռուսներն ըստե՛նց են խոսում:

Բայց մեկ ա, Տերյանի էս ոտանավորը հոյակապ ա: Հայացնելուց հետո:

Գլուխ 8 ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ ՈՒ ԹԱՓԱՌԱԿԱՆ

Սարոյանն իրա Վեսլի Ջեկսոնի արկածները գրքի մեջ մի բան ա պատմում:

Ուրեմը, երբ էս Վեսլին դառնում ա սաղ Ամերիկայով մեկ հայտնի գրող, իրա մոտ ա գալի իրա խուլիգան, ու համ էլ՝ երեվի մաֆյոզ ընգերներից մեկը՝ Վիկտոր Տոսկան: Ու էս Տոսկան ասում ա համարյա էս ձեվ մի բան.

– Վեսլի, դու մեծ մարդ ես: Ես ահավոր հպարտ եմ, որ քու պես հանճարեղ ընգեր ունեմ, ու էս ո՞նց ա, որ էսքան վախտ գլխի չեմ ընգե, որ դու հանճարեղ ես: Վեսլի, ես որ քու գրածը կարդացի, ոգեվորվեցի, ու էրեկ սա՛ղ գիշերը չեմ քնե ու մի բան էլ ե՛ս եմ գրե, առ, կարդա:

Վեսլին վեկալում ա ու կարդում ա Վիկտոր Տոսկայի գրածը.

ՎԻԿՏՈՐ ՏՈՍԿԱՅԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (գրի առավ Վիկտոր Տոսկան)

Մասն առաջին

Էրեկ ընձի ծանոթացրին մի մարդու հետ:

Մասն երկրորդ

Մի շաբաթ հետո տեսա, որ էս մարդը աչք չունի:

Ու վերջ: Էսի՛ ա Վիկտոր Տոսկայի գրած «Էրկու հատորանոց» սաղ պատմությունը: Էս վերջերս առիթ էղավ, որ ես ահագին մանրամասը ծանոթանամ մեր օրերի արձակագիրների ու պոետների գրածներին: Վկտոր Տոսկայի էս պատմությունը դրանց մեծագույն մասից (սաղ իրար հետ վեկալած) շատ ու շատ հզոր ա: Հատորն ըստե՛նց ա ըլնում:

Ու մենք՝ հայերս, էսօր աչք՝ չունենք, հե՛չ չունենք:

36. ԳԱԼՈՒՒ ԵՆ...

Էլի 88-90 թվերի դեպքերն են: Առ ու փախի մասին ա, ու մեկ էլ՝ Է՛ն մասին, որ էս առ ու փախը եսիմ քանի՛ անգամ ու քանի՛ դար ա էղե: Մնացածը ոտանավորից էլ ա էրեվում:

(Էս ոտանավորը գրելու թվերին Լենինին կպնելը հլը էտքան սովորական չէր, ես էլ հլը չգիդեի, որ չարի արմատները Հերակլիտոսից, Պլատոնից ու Հեգելից ու սրանց հետևորդներից են գալի. տես՝ [22-23]-ը):

Երբ մարդը իրա դժբախտությունների պատճառները հա էլ իրանից դուրս տեղերն ա ման գալի, ոչ մի անգամ էլ էդ պատճառները չի քթնի, ու ոչ մի անգամ էլ էտ դժբախտություններից չի ազատվի: Չարին պտի պատրաստ ըլնես, որ կարենաս դեմն առնես:

Պատրաստ ըլնելու համար էլ պտի հոգով ուժեղ ըլնես, ուժեղ ըլնելու համար էլ պտի վերջը մի օր հասկանաս, որ քեզ չափազանց թանգ թվացող բաները կարող ա քեզ էնքան են խանգարում, որ չեն թողում, որ իսկականից ուժեղանաս:

Ու մեկ էլ, պտի մի օր գլխի ընգնես, որ քեզ պարզ ու հասարակ ու հասկանալի թվացող բաները կարող ա էնքան էլ պարզ ու հասարակ ու հասկանալի չեն. որ սրանք, հնարավոր ա, որ լավ էլ բարդ են ու դու սրանք հեչ էլ չես հասկանում:

Օրինակ, հնարավոր չի՞, որ մեզ խանգարում են հենց էն բաները (կամ դրանցից գոնե մի քանիսը), ինչը մենք համարում ենք «ազգային ավանդույթ» կամ «արժեքային համակարգ»: Իմիջիայլոց, ում էլ հարցնես, թե սրանք ի՞նչ են, ոչ մի անգամ պարզ ու հասկանալի պատասխան չես ստանա: Կամ էլ կասեն, թե գնա ու նժդեհի գրքերը կարդա:

Բայց նժդեհի գրքերը Հիտլերի գրքերից էնքան էլ տարբեր չեն, իսկ Հիտլերի գրքերը գերմանացիներին մի անգամ քիչ մնաց լրիվ կործանեն: Բա Սարոյանի Վիկտոր Տոսկան ճիշտ չի՞:

Ու մեկ էլ՝ ե՞րբ պտի հասկանանք, որ մեր մեջի նեռերը կարող ա ավելի սարսափելի են, քան թե դրսինները: Մեր էսօրվա տնական նեռերը չե՞ն մեր մի միլիոն ու կես պանդուխտ ու տարագրի պատճառը: Բայց մենք չե՞նք, որ ինքնակամ հանձնվել ենք էս նեռերին ու դառել ենք սրանց ճորտն ու ստրուկը:

Էսի, իհարկե ազատ ոտանավոր ա, ու էնքան էլ լավ ոտանավոր չի:

Տա՛ս տարի, քսա՛ն, թե՞ հիսուն –
 Կարող ա՛ մի դար անցավ.
 Ու նորից նեռերի հորդան
 Ոռնա՛ց ու արթնացավ,
 Ու նորից դիակին դիա՛կ են դարսում,
 Ու նորից խանձահո՛տ ու ծծումբ ու ցավ,
 Ու նորից բորենին ոռնո՛ւմ ա դրսում,
 Ու նորից քարերը դողո՛ւմ են ու սարսում,
 Ու նորից էրա՛զ-անո՛ւրջը –
 Դառնում ա – պանդուխտ ու տարագիր...

Թալանած, բզկտված, սահմռկած, գաղթական –
 Գալի՛ս են ու գալի՛ –
 Ու հլը՝ քանի՛-քանի՛սն է՛լ կգան...

Վիթխարի, արընոտ, ու կանանչ յաթաղան,
 Անպատիժ, ուրեմը, համ է՛լ մարտական,
 Հոգեվոր զավակը օրդենի Լենինյան –
 Ուրեմը, համ էլ հաղթական,
 Ու Մոլորակը – անսահման արընի վկան...

Բայց ախր գալո՛ւ են օրերը հաղթական:
 Ա՛նպայման, ինչքան էլ հորդան լրբանա,
 Ինչքան էլ խարդավի ճիզվիտը շողոմ –
 Լուսավոր ու սուրբ էրագը
 Սե՛րմ կտա, կծլի նո՛ւյն հողում,
 Ու թեկուզ մի նոր Գողգոթա,
 Թեկուզև առժամ սարերը որբանան –
 Երկիրը չի կարա դառնա տարագիր,
 Երբե՛ք ու երբե՛ք սարերը չեն մնա աներկիր,
 Ու ա՛նպայման, ա՛նպայման –
 Նորից տո՛ւն կգան –
 Պանդուխտ ու գաղթական:

37. ԱՎԱՐՏԸ ՀՈՒՍՈ

Սրա առաջին ու վերջին քառատողերը մի քանի բառով են տարբերվում: Առաջին տան պատկերները չքնաղ են ու լուսավոր, վերջինինը՝ խավար ու մռայլ: Ու մեջտեղը մի վատ բան ա ընունում:

Էս ձեվը Yeats-ից (Եյցից) եմ սովորե: Ինքը բերված անգլերեն տողով սկսվող մի հրոք որ չքնաղ ոտանավոր ունի (էրկու վարյանտով):

Էտի մի վախտ ուզեցա թարգմանենմ, տեսա՝ անհամ բան ա ստացվում, թողի: Հետո նույն սկզբունքով մի բան գրեցի. արդյունքն էսի՛ էր:

Առհասարակ, մի վանկով հանգավորելն էնքան էլ դժվար չի: Էրկու վանկով հանգավորելն արդեն ահագին դժվար ա: Ինչքան հանգավորվող վանկերի թիվը շատացնում ես, կամ էլ ուզում ես, որ հանգավորվող վանկերի հետ գոնե մեկ-էրկու նման բաղաձայն ու ձայնավոր էլ ըլնի, էնքան ոտանավոր գրելը դժվարանում ա: Երեվի սրա համար ա, որ անհանգ ու անոռիթ գրելը էսօր մոդա ա:

Մեր արտեմիստներն են [18-19] մեր ժողովրդին համոզե, որ իրանց գրած էս «ազատ ոտանավորները» իսկական պոեզիա են: Բայց սրանք պոեզիա չեն, ինչքան էլ իրանք ու իրանց պաշտպանող գրականագետներն ասեն, թե պոեզիա են: Պոեզիան պտի հուզի, ա՛նպայման:

Էս գրքի մեջ էս ոտանավորի սկզբունքով մի քանի բան էլ ունեմ. տես սրանից հետո:

Համենայն դեպս՝ Եյցի ոտանավորի երկրորդ վարյանտն էլ եմ բերում.

William Butler Yeats – THE SORROW OF LOVE

The brawling of a sparrow in the eaves,
The brilliant moon and all the milky sky,
And all that famous harmony of leaves,
Had blotted out man’s image and his cry.

A girl arouse that had red mournful lips
And seemed the greatness of the world in tears,
Doomed like Odysseus and the labouring ships
And proud as Priam murdered with his peers;

Arouse, and on the instant clamorous eaves,
The climbing moon upon an empty sky,
And all that lamentation of the leaves,
Could but compose man’s image and his cry.

Հրես էս անգլերեն ոտանավորի բառացի թարգմանությունը.

ՍԻՐՈ ՄՂԿՏՈՅԸ

Ճնճղուկների տուրուդմփոցը քիվերի ներքո,
Շողշող լուսինն ու սաղ կաթն երկինքը,
Ու համ էլ տերեվների հանրահայտ էտ սաղ հարմոնիան
Ծածկել էին մարդու կերպարն ու վայնասունը:

Կարմիր ու սգավոր շուրթերով մի աղջիկ էրեվաց,
Ով իր արցունքով զգաց վսեմությունն աշխարհի,

Ով ինքն է՛լ էր դատապարտված, ոնց որ Ողիսեվսն ու իրա տանջված նավերը,

Ու ով հպարտ էր, ոնց որ մորթված Պրիամոսն ու իրա իշխանները:

Էրեվաց ու հենց նույն պահին տուրուղմփոցը քիվերի,

Դատարկ երկնքով հելնող լուսինն ու

Տերեվների էտ սաղ լաց ու կոծը,

Յույց էին տալի մենակ ու մենակ մարդու կերպարն ու վայնասունը:

Հմի էլ տեսնենք, թե Եյցի սիստեմով հայերենո՛վ ինչ եմ կարացե անեմ:

ԱՎԱՐՏԸ ՀՈՒՍՈ

The brawling of a sparrow in the eaves...¹

William Butler Yeats

Խաչուղիներում – բիլ արեգակներ:

Լուսինը – ճերմակ ու բախտաշող ձի:

Երկնքում՝ հնչեղ աստղազանգակներ –

Ու ամառային խրախճանք՝ դաղձի:

Ձո՛ւն էկավ: Ցավի զարկերակները

Արուն են մղում – սիրո ու քաղցի:

Ծիածանների ավերակները

Գալի թառում են ստվերի մաղձին:

Խաչուղիներում – մեռած կրակներ,

Լուսինը – ժանգոտ, թոքախտակող ձի,

Երկնքում՝ մաղձի ամպակուտակներ –

Ու ձմեռային դագաղը դաղձի:

¹The brawling ... - (անգլ.) *ճնճողուկների տուրուղմփոցը քիվերի ներքո...*

38. Երկիր հայրենի ու թափառական)

Գրելու առիթը չեմ հիշում: Ընձի դուր ա գալի, որ համ ներքին հանգեր ընեն, համ էլ նույն հանգերը մենակ մի տան մեջ չընեն. ինչքան շատ ընեն, էնքան լավ (բայց պտի լրիվ նույնը չընեն, որտե՛վ էտ վախտ ոնց որ անընդհատ խփես դաշնամուրի նույն մատին): Էս ոտանավորի հետ համեմատելու ա '37-րդը, 38-րդ-ն ու 39-րդը:

Շիկահեր վիշապը՝ Չինգիզ խանն ա, ու ասում են, որ ինքը շեկ ա էղե:

Հայաստան լցված թուրք-սելջուկներն ընդամենը հինգը թուման (50000 զինվոր) են էղե: Հայերն էտ օրերին ամենաքիչը մի հինգ-վեցը միլիոն կընեին (Ստրաբոնի նկարագրությունից էրեվում ա, որ մոտ 24 դար առաջ հայերը ամենաքիչը մի միլիոն էին, իսկ Ստրաբոնից մինչե՛վ թուրքերի գալը 16 դար էր անցե), բայց էս 50000 թուրք-սելջուկը գրավեց Հայաստանն ու էլ իրա ձեռից բաց չթողեց:

Ժամանակին, մի էրկու-իրեք հազար տարի առաջ, քասիտները գրավեցին Բաբելոնն ու մի 150 տարի Բաբելոնի տեր-տիրականն էին: Բայց հենց իրանք, հենց քասիտները լուծվան սեմիտ բաբելացիների մեջ ու կորան գնացին: Ըսենց օրինակ շատ կա: Իհարկե, հակառակն էլ կա:

Մեկ-մեկ ասում են, որ մեր եկեղեցին ահավոր դեմ ա էղե, որ Հայաստան լցված է ցեղերը ձուլվեն հայերին ու հայանան: Եկեղեցուց ըսենց բաները սպասելի են: Ինչ որ ա, էղածն էղած ա, ու թե ուժ ունենք, պտի անցյալի համար դարդ չանենք, ու հենց էսօ՛ր մարդավարի ապրելու գոնե մի ձե՛վ քթենեք, թե չէ՛՝ էս մղձավանջը չի անցնի:

Երկրորդ տան առաջի տողն իրեք կտոր եմ արե, որ հանգարծ սխալ ռիթմով չկարդան, ինչը հնարավոր ա, որտե՛վ էտ տողն ռիթմական թեություն ունի, ու ես էլ չկարացի դգեմ:

Առհասարակ, ես մենակ սրա համար եմ տողերըս կտոր-կտոր անում, որ խամ կարդացողը, նույնիսկ անկախ իրանից, ճիշտ ռիթմ ու մետրով կարդա: Օրինակ, թե որ էս ասածս իրեք տողը գրեի մի տողով.

Ու շիկահեր օձը ոնց որ երախը...

Խամ կարդացողը կարող ա կարդա էս կտորն ու դադար տա: Էտ վախտը կարդացածը կդառնա արձակ: Կամ էլ տողի սկզբի Ու-ից հետո էլ դադար տա, ու էտ վախտը մնացածի մի մասի ռիթմը կջարդվի ու էտի կդառնա արձակ.

...շիկահեր օձը ոնց որ երախը...

Իմ կետադրության մեծագույն մասը ըսենց բաների համար ա:

(Մեր «պոետներից» մի քանիսը լրիվ մետրական ոտանավոր են գրում, ու հետո բռնում ու հատածների տեղերից տողատում են, յանի դասական ազատ ոտանավոր են գրում (օրինակ, Վուիթենի պես), չնայած տողատելու կարիքը հեշ չկա):

Շատ լավ ոտանավոր ա:

Ծաղկաբյուրեղ սիրո դաշտեր, ու օրհնության ճերմակ վարդեր,
Ու առափնյա լուսարձակ ծով ու առափնյա թեթե՛վ փրփուր:
Ջրի վրա – խոնավաբույր, արե՛վային անմեղ զարդեր,
Ու մանկության լուսաջահի աստեղաբույլ, կաթե սարսուռ:

Ու շիկահեր

օձը ոնց որ

երախը բաց հսկա թրթուր,

Արե՛վելքից ձգվեց հասավ ծովափրփուր լուսին կաթե:

Դողդողացին տենչանք ու հուր, ու չորացան վարդ ու փրփուր,

Ու երերաց զարդ ու բյուրեղ, կղզիացավ ջահ ու կանթեղ:

Ցնորական անուրջները ծերացան ու դառան մի բուռ:

Մղձավանջը այցի էկավ – տանտիրոջ պե՛ս, չղջիկաթե՛վ,

Մղձավանջը գեհենական, ծծմբագո՞րշ, ահասարսո՞ւռ,

Ու ծանրացավ վաղվա վրա – կապարաձե՛վ ու էրկաթե:

39. ՉՔԱՎՈՐ ՈՒ ՄԻԱՄԻՏ

Էս ոտանավորը ընդհանրություն ունի Եյցի *ոտանավորի իմ սարքած նմանակի* հետ:

Էս մի ոտանավորի ստարտը հենց սրա առաջին բառն ա էղե: Աշուն էր, տրամվայով տուն էի էթում, մեկ էլ, ընձնից անկախ, մտքիս էկավ սրա առաջի էրկու բառը՝ **դեղի՛ն, դեղի՛ն**: Ինքս ընձի ասի. «Բայց ի՛նչ սիրուն ու տխուր բառ ա՝ **դեղի՛ն, դեղի՛ն**: Սրանցից պտի որ ոտանավոր ստացվի»: Էկա տուն ու գրեցի, հետո էլ մի քիչ դգմզի ու ստացվեց էսի:

Մենք մեզ համոզել ենք, թե մեր գրական ոճերի սաղ տրադիցիաներն էլ լավն են ու սիրուն, թե օրինակ՝ մեր իրար կպցրած երկար բառերը արտակարգ չքնաղ են: Էս տեսակ երկար բառ սարքելը դառել ա մի ահավոր մողա, բայց էս մողան ճիշտ չի ու էս բառերի գործածությունն էլ իզուր ա, ու կա՛մ մոլորության, կա՛մ ծուլության նշան ա:

Պարզ, հասարակ լեզվով ու ժողովրդի գործածած բառերով գրելը, Թումանյանի՛ պես գրելը, դժվար բան ա: Սրա համար էլ մեր գրողների մեծագույն մասը գրում ա խրթին լեզվով, երկարաշունչ ու ճոռոմ բառերով, որ շատ չարչարվի, որ թաքցնի իրա ասածի դատարկությունն ու ձեվ անի, թե մի կարեվոր ու խորը բան ասում:

Էս բնավորությունը մեր քաղգործիչներն էլ ունեն, բայց վաղուց ա հայտնի, որ քաղգործիչն ա՛նպայման ա խաբբբա կամ առնվազը՝ մոլորված: Բա մեր գրողնե՛րը:

Թո մեր գրողներն անգլերեն սովորեն ու վեկավեն կարդան Սարոյանին, ու տենան, որ Սարոյանը համարյա ոչ մի ստերիլ, գրական բառ չի գործածում, ու պարզ, հասարակ, մերոնց ասած՝ «փողոցի լեզվով» հանճարեղ բաներ ա գրում, ճիշտ ու ճիշտ Շեքսպիրի պես, ում մասին անգլիացի պոետ Ալեքսանդր Պոպն ասում ա, թե գրել ա «Լոնդոնի փողոցների գռեհիկ լեզվով»:

Որ էս ոտանավորս մի քիչ ուշ գրեի, սրա մեջ էս «խուճուճ» բառերից շատ քիչ կըլներ:

Սրա բառապաշարի մասին համ էլ տես Ի՞նչ անեմ, որ ի՞նչ անեմ, ու Ամեն իրիկուն **ժամը 13-ից հետո** ու 32-րդ ոտանավորների էսենները:

Միջակ ոտանավոր ա:

Դեղի՛ն, դեղի՛ն,
Դեղի՛ն էրագների
Շանթաձիու թամբաղեղին –
Կաթն ու մանուկ լո՛ւսն էր շողում –
Սլանո՛ւմ էր նարնջահուր,
Սլանո՛ւմ էր՝ ոսկեղմեղու...

Երկնագորով ապառաժն էր ոգեվորում
Խոլորձներին ու բաղեղին,
Համ էլ թեղո՛ւն, համ էլ թեղո՛ւն,
Ու ամպ ու ջինջ մառախուղում
Շո՛ւրջն էր նայում անուրջաբույր –
Թեղի՛ն, թեղի՛ն, թեղի՛ն...

Խորխորատը աղմուկ էղավ.
Անդունդներից մելան ու թույն,
Դառն ու դեղին
Ժահրը հելավ – լեղի՛, լեղի՛ –
Հասավ թեղո՛ւն,
Հասավ թեղո՛ւն...

Լեղի՛,
Լեղի՛, լեղի՛, մղձավանջի
Թույն ու շարավ թամբաղեղին –
Շարավագույն ցա՛վն էր դողում՝
Խոլանո՛ւմ էր մահափրփուր,
Խոլանո՛ւմ էր՝ ժահրալեղի –

Անտանելի՞ ու անտեղի...

40. ՄԻ ՎԱՐԿՅԱՆ

Իհարկե «ազգային» բանաստեղծություն ա: Հմի ըսենց չեմ մտածում: Առհասարակ, վրեժը՝ վենդետան, վերջ չունի: Կամ է՛ս մի կողմն ա վերանում էթում, կամ մյո՛ւսը, կամ էլ երկուսն իրար հետ (տես Մարկ Տվենի «Հեկլբերի Ֆինը»):

Մենք հա է՛լ սպասում ենք, որ մի թագավոր, մի պրեզիդենտ կամ մի Սասնա Մհեր գա ու մեզ ճորտացնողներին ու չարչարողներին պատժի կամ կոտորի, ու մեզ էլ տեր կայնի ու մեզ լավ պահի:

Ոչ մի անգամ մտքներովս չի անցնում, որ կարող ա մեր դժբախտությունների պատճառը հենց մեր սեփական նեղմտությունն ու մեր խավարամոլությունն ըլնի:

Մենք առասպել ենք հորինե, որ յանի մեր հայ ազգը մի արտասովոր հանճարեղ ու կուլտուրական ազգ ա էղե, ամենահինն ու ամենակարեվորը, ու որ մնացած ազգերը կամ մեզնից են առաջացե, կամ էլ մեզնից շա՛տ հետ են էղե, բայց էղել են վայրենի, արյունարբու ու մեզ անընդհատ խեղճացրել են: Իսկ մենք էլ, դե՛, բախտ չենք ունեցե, որ Անգլիայի պես մի կղզու վրա ապրեինք, որ մեզ ճորտացնելը դժվար ըլներ:

Բայց էս ոտանավորի պատմածը հատուկ ա շատերին, ու երեվի սրա համար էլ արժի, որ մնա, որտե՛վ էսի մտածելու մեր ընդհանուր ձեվն ա:

Սրա գրելու առիթն էի 88-ից սկսած դեպքերն ու սկզբի հուսահատությունն ա էղե:

Վայրկյան բառի առաջի 1-ն խի՞ ենք գրում. որ չգրենք ու էրեխեքին չչարչարենք, չի՞ ըլնի: Նույն ձեվով էլ, խի՞ ենք պարսկերենից վեկայած **դաստիարակ բառի** երկրորդ **ա-ն** գրում. ախր սաղս էլ ասում ենք **դաստիրակ:** Խի՞ ենք պարսիկներից վեկայած **աշխարհ բառի հ-ն** գրում: Ըսենց իզուր բան շատ-շատ ենք անում:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսեները:

էնքան էլ վատ ոտանավոր չի:

Գորշ ու սե՛վ ամպերը մեխվել են երկնքին:
 Բարձրյալը բացել ա մի միլիարդ ջրհորդան,
 Զարկո՛ւմ ա,
 Կայծակո՞ւմ էս Երկրի քունքին,
 Ու հմի մնացել ա մենակ –
 Մի՛ վարկյան,
 Հենց մի՞ վարկյան ա մնացե
 Հինավուրց սարերի երկունքին,
 Մի՞ վարկյան ա մնացե, որ դրանք –
 Պոռթկա՛ն,
 Որ թողած պատարագ,
 Աղոթք ու շարական –
 Ահավոր լարումից գոչեն ու որոտան.
Ի գե՛ն, ի վրե՛ժ, օն անդր առա՛ջ
Բամ փորոտան՝¹ –
 Ու ժայթքեն կրակե քա՛ր ու լավա,
 Ու Երկրին փռվի շիկաբոց մի սավա՛ն,
 Ու բոցերն ամեն ինչ կիզեն,
 Մաքրագործեն ու լվանա՛ն,
 Որ Երկիրն անցնի դժոխքի միջով ու –
 Սրբագործվի՞ ու նորանա՛,
 Ու Երկրի թարախոտ էս սա՞ղ վերքերը –
 Լավանա՛ն:

Ու համ էլ
 Մի՛ վարկյան ա մնացե, որ բացվեն քարակոփ
 Դռներն Ագռավաքարի,
 Ու որ խռոված Սասունցին
 Հելնի իրա երիվարին,
 Գոտկին՝ Թուր-Կեծակին,
 Բազկին՝ Խաչ-Պատերազմին,
 Ու որ փոթորկվի, Մասիսը անցնի,
 Ու հասնի դարերով անարգած,
 Խաչա՞ծ էրագին,
 Ու որ Քուռկիկ Ջալալին
 Իրա հո՞ւր ու հրեղեն սմբակներով
 Դժոխքի հուռուքը կործանի՛,
 Ու լուծի շարի հաղթության առեղծվածն ու –
 Բախտի քարկապը վերծանի՛:

Բայց հմի՛, հենց է՛ս վարկյանին,
 Բարձրյալը բացել ա –
 Մի՞ միլիարդ ջրհորդան,
 Ու ոռնում ու փրփրում ա ամպերի –
 Գո՛րշ ու սեվ հորդան,
 Երկիրը – ահից փակել ա աչքերը,
 Ձեռները սեղմել ա քունքերին,
 Կայծակը մի՞ միլիարդ բոցեղեն
 Նիզակ ա մեխում
 Երկրի աչքերի՛ն ու ունքերին,
 Ու տիեզերական կսկիծը
 Քրքրո՛ւմ ա խաչագեն հերոսի
 Հեթանոս հոգին
 Ու մեխվում իրա –
 Կարոտի՞ վերքերին:

¹ Հայաստան երգի մի տողն ա:

41. ՎԱԽՃԱՆՎԱԾ ԿԱՄ ՀԻՎԱՆԴ ՕՐԵՐԻ ԽԱՉՈՒՂՈՒՄ

Գրելու առիթը, ինչքան հիշում եմ, Պաստեռնակի մի բառակապակցությունն ա էղե՝
 слово небо-ն:

Էլի կորստի, մանկության անդառնալույթյան ու անխուսափ վերջի թեման ա: Ձեվը նոր ա ու ահագին բարդ: Մի քանի հանգը մինչեվ վերջ ա էթում: Մի տեղ ակնարկ կա **Արորն ասաց տատրակ հավքուն երգից:**

Երբ կարդում ես 19-20-րդ դարերի անգլիական պոեզիան, ուղղակի շշմում ես, թե էտ ինչքան շատ հրաշք ոտանավոր ունեն էտ անգլիալեզու ժողովուրդները, ապշում ես, թե իրանց ասելիքը պատմելու էտ ինչքա՛ն նոր ձեվ են քթե դրանք: Ու ափսոսում ու ցավում ես, որ մեր պոեզիան էսքան խեղճ ա: Իսկ մեր պոեզիան իրո՛ք ա խեղճ, ինչքան էլ գլուխ գովանք:

Մենք ջայլամի պես ենք. գլուխներս կոխել ենք ավազը, ու որ ուրիշներին չենք տենում, գիդենք, թե էտ ուրիշներն ուղղակի չկան:

Մենք խաբար չենք, որ մեր պոեզիան խեղճ ա, որտեվ լավ չգիդենք նույնիսկ ռուսական պոեզիան, էլ չեմ ասում անգլիականն ու եվրոպական մյուս ժողովուրդների տեղծածը, կամ չինացիներինը, ճապոնացիներինը ու արեվելյան մյուս ժողովուրդներինը: Հլը կարդացեք չեխ Յան Երոուլայի ռուսերեն հոյակապ թարգմանությունը ու տեսեք, թե ինքը ի՛նչ հզոր պոեզիա ունի: Բայց չեխերն ուրիշ հզոր պոետներ էլ ունեն, մենակ Երոուլան չի:

Չեխերի արձակը աշխարհին ա հայտնի ու, բացի Երոուլան, որ մենակ Հաշեկին ու Չապեկին հիշենք, հերիք ա: Բայց մենք համարյա խաբար չենք 19-20-րդ դարի ֆրանսիացի, գերմանացի, իտալացի, իսպանացի պոետների ու արձակագրերի գործերից:

Մեկ-երկու մասին լսել ենք, լսել ենք մեծ մասով ռուսերենի միջնորդությունով, բայց էս ձեվ թռուցիկ ծանոթությունը շատ ու շատ ա քիչ. էսի համարյա նույնն ա, ինչ որ հեչ բան լսած չըլնեինք:

Հա՛ ասում եմ, ու էլի կասեմ, որ պոետն ու արձակագիրը պտի ուրիշ ազգերի գրականությունը կարդա, հիեն է՛լ, նորն է՛լ: Պտի կարդա, որ դրանց ստեղծած հրաշք գործերից ոգեվորվի ու ուզենա, որ էտ գործերի պես բան՝ հայերենով է՛լ ստեղծի: Սրա համար էլ գրողը պտի անպայման մի քանի օտար լեզու իմանա:

Գրելը, ասել եմ արդեն, քանի՛ անգամ, կոլեկտիվ գործ ա: Ֆիզիկոսները, մաթեմատիկոսները, ու բնագետներն առհասարակ՝ լավ գիդեն, որ իրանց գործը կոլեկտիվ գործ ա:

Ու սրանք էսոր անպայման գոնե ռուսերեն ու անգլերեն գիդեն, ու ուշադիր էլ հետեվում են, թե սաղ աշխարհում իրանց բնագավառներում ի՛նչ են անում: Հետեվում են, որ հա՛մ հետ չմնան, համ է՛լ ուրիշներից սովորեն: Խաբա՞ր եք, թե մեր գրողների միության անդամներն ու Հայաստանի էսորվա լեզվաբաններն ի՛նչ են անում, ու ի՛նչ գիդեն, կամ է՛լ քանի՞ լեզու գիդեն, ու ի՛նչ մակարդակով գիդեն:

Ես էսի հա՛ կրկնում եմ. բայց ի՛նչ անեմ, որ չկրկնեմ, ախր ուզում եմ, որ մեր գրականությունն ու մշակույթն էսքան խեղճ չըլնի:

Մենք տարգալ գրաբարյան բառը, որ էսորվա գղալ բառի առաջվա ձեվն ա, գրում ենք՝ **գղալ**, որտեվ էսոր **գղալ-գթալ-քթալ** ենք ասում, ու էսի շատ ճիշտ ենք անում:

Բայց խի՞ ենք հուշտ ըլնում բնիկ հայերեն **էթամ** բայից, ինչն էսոր **գնամ** անկանոն բայի զույգն ա, ու ահավոր էլ գործածական ա՝ թե՛ Արարարատյան բարբառի խոսվածքներում, թե՛ հայերենի մնացած բարբառներում: Խի՞ են մերոնք թշնամացե էս բառի հետ, ու խի՞ են ուզում էս բառն (ու սրա պես բառերն) սպանեն:

Մենակ է՛ն բանի համար, որ սրա **ր**-ն արեվելյան բարբառներում ընգե՞լ ա: Խի՞, **տարգալ, քարշել** ու **խարշել** բառերի **ր**-երը չե՞ն ընգե: Բա սրանք խի՞ ենք գործածում, թե որ **ր**-ի ընգնելը էտքան գարշելի բան ա, էլ չեմ ասում, որ **տարգալ**-ը, մերոնց տեսակետով, ուղղակի այլանդակվել ա:

Հայերենը մի 17 անկանոն բայ ունի, ու **էթամ-գնամ**-ը էս բայերից մեկն ա, ու բնիկ ա: Մերոնք էսի չգիդեն:

Առհասարակ, ըսենց անտեղի բան՝ շա՛տ ենք անում, ու ես էլ անընդհատ կրկնում եմ էս նորվա ասածներս, բայց ի՛նչ անեմ, որ չկրկնեմ: Բա ասողին հեչ մի լսող պետք

չի՞:

*Ջահել վախտըս տնից դուս գալու հազար ու մի առիթ կար: Հմի չկա:
Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:
Գերազանց ոտանավոր ա, ու մետրիկայի կոմպոզիցիան է՛լ ա գերազանց:*

Երկնքի կեղտոտ կտավից կաթո՛ւմ ա ու կաթում:
 Մե՛ն-մե՛նակ, չո՛րս պատի արանքում,
 Կարոտը վերքե՛րն ա կարկատում:
 Վախճանի իլի՛կն ա մրմուռի թելը փաթաթում –
 Պտտո՛ւմ ու թախծի առանցքին փաթաթում:

Ո՞ւր էթաս:

Ո՞չ մի տեղ չկա՛ էթալու:

Արեւլնե՛ր կային երկնքի անցյալի կապուտում:
 Օշի՛նդրն արմա՛վ էր:
 Ու նույնիսկ անցքից բանալու –
 Մի հսկա ու հեքիաթ աշխա՛րհ էր էրեվում,
 Ու Տե՛րը վերեվում –
 Նստե ու ժպտո՛ւմ էր ու բարեվում,
 Ու անբիծ երկնքի կապուտից –
 Օրհնա՛նք էր կաթում:

Ու արքայական շքահանդե՛ս էր ամեն անկյունում:
 Օ՛րն էր տարփածու ու հոմանուհի մի ազատություն,
 Գալիք-ապառնին ո՛չ մերկանում էր, ո՛չ էլ բարկանում,
 Ու մի՛ վարկյանում –
 Անընդգրկելի կյա՛նք ու աշխարհ կար –
 Մի Բաբելոնի կամ Եգիպտոսի երկա՛ր պատմություն:

Ու օվկիանո՛ս էր ամեն մի փոքրիկ ջրափոս:
 Քարայրը – դոյա՛կ էր:
 Ու հաստատ, երգ ու խաղալու
 Բե՛մ էր ամեն մի բացատ, բլո՛ւր ու ակոս,
 Ու լե՛րկ սարերում, քարերի արանքից,
 Դրախտ ու եդե՛մ էր արեվում,
 Ու չկար թախիծ ու մրմուռ,
 Ու չկա՛ր...
 Գո՞նե մի հատիկ «ափսոս»:

Ու պողոտա՛ էր ամեն մի տատասկոտ կածան:
 Ժա՛յռն էր գահաթոռ – մեղմ ու ողորմած ունկնդրելու
 Էրա՛գ-անրջի խրախճանքները ամենավարկյան,
 Ու վարկենական երջանկությունը –
 Անվերջ էր ու հավիտենական,
 Ու առիթ չկար –
 Պի՛ղծն ու անպի՛ղծը – զանազանելու:

Ու անուրջներն այեժածան –
 Տարուբերվում էին ու փողփողում,
 Թափառում, ըսփռվում ամենուր,
 Ու ահ ու սարսափից չէ՛ին դողդողում,
 Ու նույնիսկ գիշերվա խավարում –

Բո՛ւ չկար ու
 Բվե՛՛ճ չկար,
 Ու ամեն խաչուղում
 Մենակ ու մենակ
 Բարի՛ հրեշտակ էր ժպտում ու շողշողում,
 Ու գարնան ծիծաղը, ոսկեփայլ ու ծիածան,
 Ձմեռվա տագնապը
 Չէ՛ր աղճատում ու խաթարում.
 Արորն էլ՝
 Տատրակին
 Չէ՛ր մխիթարում:

Ու անընդհա՛տ, ամմե՛՛ն օր, ամմե՛՛ն վարկյան,
 Դո՛ւս էին կանչում – սա՛ր ու ձոր, անձրե՛՛վ ու ծիածան,
 Ու թովո՛ւմ ու հմայո՛ւմ ու կախարդո՛ւմ,
 Ու կաթի՛՛լ անգամ ցանկություն չկար – տանը մնալու:

Կարոտի արո՛ւնն ա կաթում:
 Կաթո՛ւմ ա, կաթո՛ւմ ու կաթո՛ւմ,
 Ու արո՛ւն ներկում ամեն ծիածան,
 Ու էրագ-անուրջը դասալիք –
 Հերարձակ ու ալեծածան –
 Դեգերո՛ւմ ա անդունդներում,
 Ու հույսը, մի վախտվա մանո՛ւկն օվկիանոս,
 Ալի՛ք-ալիք – ցնդում ու դառնում ա ջրափոս:

Կարոտի արո՛ւնն ա կաթում:
 Կաթո՛ւմ ա,
 Կաթո՛ւմ ու կաթո՛ւմ ու կաթո՛ւմ,
 Ու վե՛րջ էլ չկա – էթալու կամ մնալու վեճին,
 Ու արցունքի փշուր ու կտո՛՛ր էլ չկա –
 Մրմուռի մեհյանում հեղելու:

Մարելուց առաջ, մե՛կ-մեկ ու անխոս,
 Աստղե՛րն են վախվորած թարթում,
 Ու գուշակ ու պատգամախոս –
 Ապագայի ամենավերջի էջին –
 Մենակ կարկուտ ու կայծա՛կ են կարդում,
 Ու բան չի՛՛ մնացե ավարտի վերջին:

Բայց էլի մեկ ա – նորի՛՛ց ու նորի՛՛ց,
 Կպել եմ հույսի մկանից,
 Ու ախր... ոչ ո՛ւժ կա – տնից դուս գալու,
 Ո՛չ էլ՝ զորություն՝՛ն – Տանը մնալու:

Ո՞ւր էթաս:
Ո՞չ մի տեղ չկա էթալու:

Վահան Տերյան – ՏԽՈՒՐ ՄԵՌԱՆ ԿԱՊՈՒՏԱՉՅԱ....

Տերյանի էս **գերագանց** ոտանավորից մեր «վեռ-լիբրիստ» պոետները պտի՛ որ սովորեին, բայց չեն սովորում, ու նորից գրում են իրանց ճապաղ «բանաստեղծությունները»: Սրա առաջի տունն իրոք հանճարեղ ա, ու էս տան վեկայած տեմպն ուղղակի վիթխարի ա, բայց Տերյանը չի կարում էս տեմպը պահի, ու մնացած իրեր տան տեմպն է՛լ, թեմայի սրությունն է՛լ ընգնում ա:

Առաջի տան միտքը շա՛տ-շատ ա ընդհանուր, ու էս միտքը սազում ա թե՛ սաղ մարդկանց, թե՛ սաղ սիտուացիաներին: Ընենց մարդ երեվի չընի, ում «երկնաշող ու կապուտաչյա էրագները տխուր չեն մեռնում», ու էսի համաշխարհային ողբերգություն ա:

Հաջորդ տան 1-ին էրկու տողն էլ ա նույն տեմպով, Տերյանն էսի ահավոր ճիշտ ու դիպուկ ա նկարե: Բայց էս 2-րդ տան երրորդ-չորրորդ տողից պարզվում ա, որ պատմողը (Տերյանը) ընդամենը իրա սիրածի խղճահարությունն ա հայցում, կամ խնդրում ու աղաչում: Էսի ոտանավորի ըսկզբի տիեզերական ողբերգությունը դարձնում ա մի մասնավոր ու անբախտ սիրո պատմություն, ինչը թուլացնում ա սրա սաղ իդեան: (Չեմ ասում, թե էսի թուլ ոտանավոր ա. էսի հոյակապ ա, ու Տերյանը սրա պես ու սրանից հզոր գործ՝ շա՛տ ունի: Բայց Տերյանը ո՛չ Շեքսպիր ա, ո՛չ Հարդի):

Իսկական լավ գրողը, օրինակ, Շեքսպիրը, կամ Բայրոնը, եթե վեկայած վայրենի տեմպն անընդհատ չի ուժեղացնում, գոնե պահում ա մինչեվ վերջ: Հիշենք, օրինակ, Շեքսպիրի սոնետները, որ վերջի էրկու տողում ուղղակի պայթում են (օրինակ, Then hate me when thou wilt; if ever now...-ն, կամ օրինակ, Բայրոնի When we two parted ոտանավորը), ինչը ինչ տեմպով որ սկսվում ա, էտ տեմպով էլ պրծնում ա.

When we two parted
In silence and tears...

.....
And if I meet you
After long, long years,
How shall I greet you?
In silence and tears.

(Աջ կողմը նույնի ի՛մ վարյանտն ա, ու գիրքս տպելուց հենց առաջ գլխի ընգա, որ կարամ էսի մի քիչ փոխեմ, ու որ կարող ա էսի հետաքրքիր ընի: Ափսոս ժամանակ չկար, որ անեի:

(Էսօրվա հայերենը ոչ մի նախդիր չի գործածում, ու **դեպի**-ն սրա՛ համար եմ հանե: Վերջի տողի հրամայականի մեռած **ր**-երը հանել եմ, ու սրանից **անպատիր**-ի հանգային **ր**-ն մի քիչ թուլացել ա: Մեր էսօրվա հրամայականին 1500 տարվա առաջվա **ր**-ն կպցնելը լրի՛վ ա անտեղի):

Տխուր մեռան կապուտաչյա
Երագները երկնաշող.–
Գագաթներից ես ցած իջա
Անդունդները սիրտ մաշող...

Էլ ոչ մի թեվ ինձ չի տանի
Դեպի բարձունքն արծաթյա,
Խենթ անկումիս գերեզմանի
Խավարներում ինձ գթա՛...

Ցուրտ է դարձյալ, մութ՝ իմ ուղին,
Սրտումս մահ և աշուն,
Մոռացել եմ ես ամենքին,
Միայն քեզ եմ ես հիշում...

Միայն քեզ եմ ես աղոթում,

Քո հրաշքին անպատիր.–
Հայտնվիր սեվ անապատում –
Ամոքի՛ր ու ազատի՛ր...
Տխուր մեռան կապուտաչյա
Էրագնե՛րըս երկնաշող.–
Գագաթներից լո՛ւռ ցած իջա
Անդունդնե՛րը սիրտ մաշող...

Էլ ոչ մի թեվ ինձ չի տանի
Բարձունքները արծաթյա,
Խենթ անկումիս գերեզմանի
Չար խավարում – էլ չկամ...

Ցուրտ ա էլի, մութ՝ իմ ուղին,
Սրտումս մահ ու աշուն,
Մոռացել եմ ես ամենքին,

Վերինն է՛լ – ինձ – չի՛ հիշում...

.....,
.....,
.....:

.....,

Սրա գրելու ստարտն ինչքան հիշում եմ՝ Պուշկինի մի ոտանավորն ա էղե, կարծեմ **Նամակ Դելվիգին:**

Պուշկինի գեղարվեստական արձակն ու պոեզիան ռուս գրականության հասուն փուլի հիմքը դառան, մանավանդ իրա արձակը:

Պուշկինը հորինող չէր, Պուշկինը պատմող էր:

Իրա մի փոքրիկ վիպակը, **Կապիտանի աղջիկը**, գրելու համար Պուշկինը իրեք տարի ցարական արխիվներն ա քրքրե ու Պուզաշովի ապստամբության արդեն այնվոր ականատեսներին ա հարց ու փորձ արե ու էտ սաղ գրի ա առե, որ հետո, սրա հիմքի վրա, մի վեպով պատմի էտ ապստամբության անցքերը:

Էս նյութերը Պուշկինը հրատարակել ա էրկու հատորով, **Պուզաշովյան ապստամբությունը** վերնագրով, ու էսի մի ֆունդամենտալ պատմագրություն ա, ինչի համար որ Պուշկինի ակադեմիկոսի կոչում էլ տային, քիչ կըլներ:

Ու Պուշկինը ինքը գիդեր, որ ինքը պատմող ա, որ ինքը համ էլ լուսավորիչ ա, որ ինքը հորինող չի:

Երբ Պուշկինը հրատարակեց իրա առաջի չափածո հեքիաթները, Բուլգարինը, Գլագոլյեվն ու Կաչենովսկին հարձակվան վրեն, թե խի՞ ա Պուշկինը գրում էտ «ռամկական լեզվով», այսինքը, ժողովրդի լեզվով:

Բայց ռուսները բախտ ունեն, որ Ռուսաստանում լուսավոր մարդ շատ կա, ու Պուշկինը հաղթեց, իսկ իրան փնովողները ձենները կտրին, ու էսօր թե իրանց հիշում են, մենակ Պուշկինին փնովելու համար են հիշում:

Պուշկինը մեռավ 1837 թվին, 38 տարեկան: Էտ վախտը ռուսների աշխարհիկ գրականությունն արդեն շատ հզոր էր, իսկ հայերինը հլը չկար էլ: Մխիթարյան հայր Արսեն Բագրատունին 1858 թվին գրաբարով հրատարակեց իրա **Հայկ դյուցազնը**, ինչը **Իլիականի** թույլ նմանությունն էր, ու լրի՛վ էր հորինած (մանավանդ կոլորիտի ու դետալների տեսանկյունից, ու հորինած էր **Իլիականից** 27 դար հետո) ու իհարկե՛ մեռած էր հենց ծնված օրվանից:

Գուստավ Ֆլոբերն իրա **Սալամբո** պատմավեպը գրելու համար օքտվել ա 1500 գրքից, իսկ մեր պատմավեպ գրողները թե որ մեկ էրկու պատմագրություն աչքի անցկացնեն՝ լավ ա:

Աբովյանը ռիսկ արեց ու 1848 թվին Էրեվանի բարբառով մի հսկայական վեպ գրեց, ինչը հրատարակվեց 1858 թվին, բայց մերոնք չհավանեցին Աբովյանի վեպի լեզուն ու սկսան դգելը էտ լեզուն, մինչե՛վ որ մոգոնին մեր էսօրվա գրական անճոռնի ոճերը:

«Բագինը» տաճարն ա: Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Լավ ոտանավոր ա:

Ախր մի՛ անգամ նամակ չուղարկիր, կամ էլ ըսփոփանք:
 Օղն է՛լ ա գունատ: Յրտից դողում են ապակիները:
 Աշունը բակում քարոզ ա կարդում ծեր կաղամախուն:
 Արեվի լուսը լուսամուտներից ծորում ա, ոնց որ լո՛ւռ քամահրանք,
 Ու զառանցում են հեթանոս հույսի եղեռնակործան, որբ բագինները:
 Հուշի սլաքը
 Արուն-կարոտը
 Հոգո՛ւս ա մեխում:

Հիվանդ եմ հմի՛, ու արդեն մե՛կ ա, թե վաղն ինչ կըլնի:
 Գարունը արդեն կծաղկի մենակ գերեզմանոցում:
 Դու բույրն ես շնչում արեվագինու, ես – ֆորմալինի,
 Ես զառանցում եմ, իսկ դու – ճախրո՛ւմ ես էրազանցում:

Ձերբազատվեի էս կապանքներից, ու մոտդ գայի:
 Ու ձեռ ու հոգի իրար պարզեինք,
 Ու անունկնդիր, առանց վկայի,
 Պա՛րզ, անսեթեվեթ, իրար ասեինք.
 – Ողջո՛ւյն, բարեկամ, ողջո՛ւյն, հարազատ,–
 Հանգիստ նստեինք ու զրուցեինք,
 Մի քիչ ժպտայինք,
 Մի քիչ լռեինք – էս հարածնունդ, լիրբ տականքներից,
 Ու հեկեկայինք, ու էրազեինք,
 Որ մի լավ օր էլ – կձերբազատվենք էս կտտանքներից,
 Ու որ ա՛նպատճառ՝ էրազամատուռ, էրազատաճար –
 Կդառնան ազատ:

Բայց ո՛չ մի անգամ նամակ չուղարկիր, կամ էլ ըսփոփանք:

Անցյալի համար չկա քավություն,
 Ու արդեն մե՛կ ա, թե վաղն ինչ կըլնի,
 Որտե՛վ գարունը կծաղկի մենակ գերեզմանոցում,
 Ու պետք չի ըլնի – էլ հեչ մի զղջում, ներում կամ գինի,
 Ու պետք չի ըլնի – էլ հեչ մի աղոթք կամ ապաշխարանք:

43. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ, ԹԱՂՈՒՄԻՅ ՄԻ ՔԻՉ ԱՆՑ

Էս մեկը, ոնց որ ասում են՝ «բառերի գիմնաստիկա» ա: Պատմություն չի էղե, սկսել եմ մի ինչ-որ բառից ու թողել եմ, որ բառերն իրանք առաջ էթան: Ուզում էի մերոնց պես «խնայրեսիոնիստական» կամ «ավանգարդային» մի բան գրեմ: Ընձի համար հետաքրքիր էր, թե ինչ կստացվի: Ստացվածը, իհարկե, **ախմախություն ա**, բայց որ մեր արտեմիստներն էս ձեվ մի բան գրեն, կհայտարարեն, թե հանճարեղ ա: Էսի դնում եմ, որ սկսնակ պոետներն իմանան, թե ճիշտն ու սխալը ո՞րն ա:

Առհասարակ Հայաստանում հենց գիղեն, թե վեռ-լիբրը պոտի ո՞չ հանգ ունենա, ո՞չ տաղաչափություն, ոչ է՛լ այլիտերացիա ու ասոնանս: Սրա պաճառը 60-ական թվերի մի քանի անտաղանդ թարգմանությունն էր (ինչքան հիշում եմ Պրեվերից ու Ապոլիներից):

Սրանցից հետո մերոնք հենց իմացան, թե արտասահմանում ըտենց են գրում: Ի-հարկե ըտենց չի, ու սրա մասին ես մանրամասը գրել եմ իմ մի հոդվածի ու մի գրքի մեջ [16, 18]: Նույնիսկ Վոլոյ Վիթմենը, ով շատ ազատ ա գրում, շատ տեղ հանգ է՛լ ունի, բանաստեղծական մետր է՛լ, իսկ այլիտերացիաներն ահավոր շքեղ են: Էլ չեմ խոսում օրինակ D. H. Lawrence-ի կամ Dylan Thomas-ի ու ուրիշ շատ ու շատ պոետի մասին:

Է՛ն վեռ-լիբրը, ինչով գրել ա, օրինակ, Էլիոթն իրա **Ամայի երկիրը (Waste Land-ը)** կամ **Փուչ մարդը (The Hollow Man-ը)**, էս վերջինը թարգմանել եմ, բայց չեմ տպե, ընձի դուր չի բայի: Ես կարամ ըտենց, հենց է՛տ ոճով գրեմ, բայց չեմ ուզում ու չեմ գրում (էս մեկից բացի), որտեվ ուզում եմ, որ պատմածիս մեջը անպայման պատմություն ըլնի, կյանք ըլնի:

Էս մի ոտանավորիս մեջը կոնկրետ կյանքը չկա, սրա մեջը մենակ բառերն ու իրանց հարուցած պատկերներն ու զգացմունքներն են, իսկ սրանք էլ, իմ կարծիքով, քիչ արժեք ունեն, որտեվ կարդացողի վրա շատ քիչ են ազդում: **Գրողի հիմնական նպատակն էլ հենց ազդելն ա:**

Կոնկրետ բանը, կոնկրետ կյանքը պատմելը, օրինակ, Շեքսպիրի, Թումանյանի, Ֆրոստի, Հարոլդի ու մյուս հզոր գրողների պես, դժվար բան ա: Երեվի սրա համար ա, որ մեր էսօրվա պոետների մեծագույն մասը բառադի-բառադի բառերի շարան են գրում, անկյանք ու անկենդան, ու իհարկե՝ անպայման խրթին, **որ խելոք բան ասելու տպավորություն ստեղծեն:**

Միամիտներն էլ կամ հավատում են սրանց, կամ է՛լ էն վախից, թե տգետ կերեվան, ասում են, թե սրանց գրածները կարեվոր են ու հանճարեղ: Էլի Անդերսենի թագավորի նոր հագուստի սինդրոմն ա [Ib.]:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Օրորվելով ճերմակաշունչ ու դանդաղ առագաստանավի սեվ տախտակամածին

կնայեն ճռնչալով բարձրացող ծանրածանր խարսխարտին սլաքասեվ ժպիտներին արցունքածին օրըստօրե ու լուռ-լուռ մնաս բարով կասեն

հրածեշտ կտան մտքում դառնափրփուր մոռնչալով

կապուտ կասեղանան ու մեղմ կհյուծվեն

կսկծասիրտ ու անմռունչ

հարամրմուռ կլուծվեն

ծխնելույզի ծխին

տեղը կմնա

լոկ շունչ

ու վերջ:

Անվերջ

անշշունջ

ճահճաճղճիմ ցեխում

բախտահիվանդ ոգի ու շունչ

կտեղեկանան թե արդյոք կապտակապար

խավարի սրտում ծիլ չի՞ տա մի օր մարջանը լուսե

բայց անկարեկից լուսնալուսի ներքո կռնչալով շղարշալուս-տորտում ու մշտաթափառ ու խավարասեր կծածանվեն սեվ ժպիտների սեվ ոգիները սեվ

Ու կտարուբերվեն մահաշունչ դանդաղ դագաղաառագաստ տախտակամածին:

44. ՏԱՐԱԳԻՐ ՈՒ ՏԱՐԱԳԻՐ

Ինչքան հիշում եմ՝ պտի որ նմանակած ըլնեմ ճապոնական տրադիցիային: Տողերի վանկերի թիվը հավասար չի: Ոտանավորի ռիթմը թույլ ա, ու էսի համարյա արձակ ա:

Էս ոտանավորի տողերի դասավորության ձեւն ընենց ա, որ սրա առաջի էրկու նախադասությունը կիսաէլիպսի նման ա, ոնց որ սրա նախորդինը: Նախորդի կիսաէլիպսական ձեւը արհեստական ա, բայց սրանը լա՛վ ա մտածված ու արդեն բնական ա, որտեւ սրա ամեն մի տողը մի առանձին պատկեր ա:

Ավետիս Բահայթյանը նարեկացու **Մատյանի** գրելու տեխնիկայի մասին մի մեծ գիրք ունի գրած, ուր ուզում ա ցույց տա, թե նարեկացին լանի ընենց մի կողավորած ձեւով ա գրե, որ Մատյանի ոտանավորի առանձին կտորները, դիտմամբ, առանձին պատկերների (օրինակ, խաչի պատկերի) պես ա ստեղծե:

Չարենցը հավատացել ա Բահայթյանին ու ասել ա, թե Բահայթյանի գիրքը հանճարեղ գիրք ա, բայց Բահայթյանի ասածները ոչ մի հիմք չունեն: Ազատ ոտանավորը կարաա շատ ձեւով դասավորես, մանավաղ որ նարեկացու օրերին երեւի հլը բառերն իրարից անջատ չէին գրում (տես իմ **Զվարճալի այբ ու բենը**, 2003, «Անտարես»), ու էսօրվա տողատելը չկար:

Ես փորձե ու համոզվել եմ, որ նարեկի կտորները (ու նույնիսկ, օրինակ, հենց է՛ս գրքի ոտանավորները) տարբեր ձեւերով դասավորելու շատ ձեւ կա. մենակ Բահայթյանի ասած ձեւե՛րը չեն, որ հնարավոր են:

Էս արտաքին ձեւի հետեւն ընգնելը երեւի իզուր ա, ու մեկ-մեկ էլ՝ թիթիզություն ա, (իմ նախորդ ոտանավորինը հենց **թիթիզություն ա, որ կա**, բայց անում եմ) որտեւ կարեւորը ասելիքիդ ազդեցիկությունն ա, ինչին հասնում ես մետրական ձեւերի թարմությունով ու խոսքի ինամքով ընտրելով: Էս մի ոտանավորի մեջը էս ասածս բաները երեւի տեղին են:

Մեր գյուղում, Հին Մալիշկայում, ըսենց տուն ու ըսենց պառավ կին շատ եմ տեսե, ու երեւի դրանք իմ համար շատ են տպավորիչ էղե, սրա համար էլ էս ոտանավորի պատմելիքը իմ համար կարեւոր ա էղե, ու էտի բռնե ու ոտանավոր եմ սարքե:

Իմոնքի համեմատ՝ գերազանց ոտանավոր չի:

Տարագիր մի գյուղի ամենավերին ու առանձին մի անկյունում,
 Լո՛ւռ ու մերկ ու անապատ սար ու քարից ցած,
 Մնացած տուն ու բակից մեկուսի,
 Արեւի այրող շողերի տակ,
 Կծկված ա մի խրճիթ –
 Մեն ու մեն-մենակ –
 Ու անընգեր:
 Փոքրիկ բակում,
 Մարած թռնրի մոտ –
 Նստած ա մի ծեր կին –
 Կորամեջք ու սեվաշոր մի կին,
 Ու մոմե ձեռները դրած ծնկներին,
 Լո՛ւռ ու շրջապատին միանգամայն անտարբեր,
 Մշուշոտ հայացքով նայում ա դիմացի անապատ սարերին:

Տան կողքով,
 Դանդաղ ու անշտապ,
 Առանց էս կնոջը բարեվելու –

Անցնում էր գյուղի փոստատարը:

45. ՀԵ՛Տ ԲԵՐԵՔ

Սկսվել ւ առաջին տողից: Որ նոր էի գրե՛ շա՛տ էի ուրախ: Ընձի թվում էր, թե մի արտառոց նոր ձեվ եմ քթե: Հիշում եմ՝ էս ոտանավորը երկա՛ր-երկար չէր ստացվում: Մեկ էլ հանգարծ՝ չորրորդ տողերի իդեան էկավ:

Հանգավորված կրկնվող բառերի կապակցություններին ասում են՝ **ռեդիֆ:** Ռեդիֆով շատ անգամ կարում ես՝ ասելիքիդ ազդեցությունն ուժեղացնես: Ռեդիֆը համ էլ ռետարդացիայի, այսինքը, գործողությունը դանդաղացնելու համար ւ:

Ռեդիֆը շատ ւ մանավանդ պարսկական ռուբայիների ու ժողովրդական հեքիաթների մեջը:

Հեքիաթների եռապատիկ կրկնության սկզբունքը համ էլ լսողին ասելիքը լավ բացատրելու ու անգիր անել տալու համար ւ, որ հետագա պատմության ազդեցությունը ուժեղ ըլնի:

Առհասարակ, գրելու վախտը ըսենց բաների կամ ոտանավորիդ տաղաչափության մասին չես մտածում: Ես, օրինակ, «բանավոր եմ գրում», այսինքը, գրածս բարձր-բարձր ասում եմ, ու թե որ ականջիս էտի անթերի ւ հնչում, մետրիկայի ու ռիթմի տեսանկյունից համարում եմ ընդունելի: Մնում ւ, որ ասելիքն է՛լ սիրուն ու դիպուկ ըլնի:

(Բայց հենց որ ականջս ռիթմի թերություն ւ զգում, վանկերի՛ թիվն եմ ստուգում, ու թե որ սրանք արդեն դուզ են, կամ էլ հենց ե՛ս եմ դգում, ու թերությունը չի վերանում, էտ վախտը մետրիկա՛ն եմ ստուգում (յամբ-անապեստի պես բաները, կամ շեշտերի դրությունը, բայց մենակ լսողությամբ, առանց հիշելու, թե էս անապեստ-մանապեստն ի՛նչ ւ):

Մեկ-երկու անգամ կարդացել եմ Աբեղյանի տաղաչափության հոյակապ գիրքը, ու մի վախտ անգիր գիրեի, թե ինչ ւ յամբը, քողաղոտը, անապեստն ու դակտիլը, բայց հետո սրանք սաղ էլ մոռացա, որտեվ գրելուց քե՛զ ես լսում: Թե սրանք ինչ-որ բանի համար պետք էկան, էտ գիրքը կվեկայեմ ու կիմանամ: Սրանք պետք չեն համ էլ թարգմանելուց, թե որ դարդդ մենակ բնագրի սիրունությունն ու ասելիքի դիպուկու-թյունը «թարգմանելն ւ» (տես իմ [16]-ը):

Նարոտը՝ գույնզգույն թելերի փունջն ւ: Այլաբանական իմաստով (ոնց որ ըստե), ծիածանն ւ:

Գերազանց ոտանավոր ւ, ու իրա մետրիկայի կառուցվածքն է՛լ ւ գերազանց:

Վերեվը – արեվախինդ,

Ներքեվը – արեվախինդ,

Արանքը – նարոտ...

Բերե՛ք թասերը ու գինի՛ բերեք:

Վերեվը – քուրա՛ ու բոց,

Ներքեվը – քուրա՛ ու բոց,

Թախիծը – թե՛լ-թե՛լ...

Չիմացա, թե ի՞նչ պատահեց էրեկ:

Վերեվը – կապո՛ւտ երիզ,

Ներքեվը – կապո՛ւտ երիզ,

Արանքը – սե՛վ-սե՛վ...

Ո՞վ թափեց կարմիր արընագինին:

Հե՛տ բերեք նորից,

Հե՛տ բերեք նորից

Գինի՛ ու արեվ,

Հարս ու հարսնաքող –

Նորից հե՛տ բերեք:

Վերեվը – նե՛ռ ու դժոխք,

Ներքեվը – նե՛ռ ու գեհեն,

Ծժո՛ւմբ ու կարոտ...

Հե՛տ բերեք նորից,
 Հե՛տ բերեք նորից –
 Գինի՛ ու արեւ,
Թե չէ – չե՛մ նայի ես արյան գնին:
 46. ՄԱՀՎԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՂՐԵՎԱՆՈՒ

Ինչքան հիշում եմ, գրելու առիթը, **եղրեվանի** բառի էկզոտիկան և էդե ու մեկ էլ՝ ձեպի նորության հետաքրքրությունը:

Իհարկե բառերի ու ձեպի գիմնաստիկա ա: Գրած և ընենց մի ձեպով, որ ուղղաձիգ առանցքային «արդարացված» սիմետրիա ունենա:

Լավ, շատ լավ ոտանավոր գրելը, ճիշտ ա, հազվադեպ ա, բայց պատահում ա, ու կարծում եմ, որ էս գրքիս մեջը մի 10-20 հատ շատ լավը ունեմ, բայց ավելի լավ ա, որ մի օր հենց կարդացողնե՛րն ասեն, որ սրանք շատ լավն են: Թումանյանն ասում ա. «թե որ գրող 6-7 լավ ոտանավոր ունի, բոլորովին էլ քիչ չի» [11, IV]:

Պատո՞նովը Մայակովսկու մասին ասում ա. (հիշելով եմ գրում) «Մայակովսկու համար հանճարեղ ոտանավոր գրելը հեշտ էր, բայց, պոետ ընելուց բացի, ինքն է՛լ էր սովորական մարդ, մարդ՝ ով ապրում ա առօրյա հոգսերով, ու ինքը, էս հոգսերի հետ, պոտի ստիպված ապացուցեր քարացած ուղեղներին, որ իրա գրած (ձեպով լրիվ նոր) ոտանավորները իրո՞ք հանճարեղ են: Հենց էս առօրյայի ու իր հանճարեղության հակասությունն էլ էղավ իրա ողբերգության պատճառը»:

Ես հաստատ գիդեմ, որ իմ գրած ոտանավորներից մի քանիսն ու իմ գոնե **Սիրո չբանաձեվը** պատմվածքը շատ լավն են, ու իրանց մակարդակով ոչ մի բանից պակաս չեն (գրողի ծոցը կեղծ համեստությունը): Ու իհարկե, ես էլ եմ մնացած գրողների պես ուզում, որ ընձի է՛լ ասեն, որ հանճարեղ եմ: Բայց արդեն քսան տարի ա, ինչ չեն ասում:

Սրա համար էլ արդեն հաշտվել եմ, որ չեն է՛լ ասի, ու կարող ա՝ մեռնելուցս հետո է՛լ չասեն: Ժան-ժակ Ռուսոն իրա **Էմիլը և դաստիարակությունը** գործի մեջը ասում ա, թե է՛ն մարդը, ում ցանկություններն իրա հնարավորություններից ավել էղավ, անպայման դժբախտ կըլնի: Սրա համար էլ ես իմ ցանկությունները քսացրե ու հարմարացրել եմ հնարավորություններին, որ դժբախտ չըլնեմ, ու հեչ էլ դժբախտ չեմ:

Թուլ ոտանավոր ա, ձեպի համար եմ դրե էս գրքիս մեջը: Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Թուլ ոտանավոր ա:

Արեվները կմարեն լուռ,
 Կխորտակվեն գեհենական ծծմբաբեռ ծովի մեջ,
 Կդատարկվեն հովիտների խորանները մեհենական,
 Անվերջ ցավի թունալեռներ կկուտակվեն
 Վաղնջական գարունների մովի մեջ,
 Ու ամեն մի անրջաբույր –
 Ծո՛ւխ կդառնա –
 Անէության՝ ծովի մեջ,
 Անէության՝ ծովի մեջ:

Ժայռաստերջ հողերի մեջ
 Այգիների եղրեվանին կըլնի մե՛րկ,
 Լո՞ւռ ու խեղճ,
 Կփաթաթվի լուսնակարմիր բագիններին –
 Սե՞վ բվեճ –
 Ու կաղճատի ու կաղտոտի –
 Հոգիների էրագներն ու անուրջները –
 Գո՞՞ռ ու պերճ,
 Ու չի՞ ըլնի արարչություն.

Տեղը կրնի –
Մենակ վե՛րջ,
Մենակ վե՛րջ,
Մենակ վե՛րջ:

47. ՀԱՄԱՐՅԱ ՉԱՐԵՆՑԻ ՏՈՂՈՎ

Առաջին տողը Չարենցինն ա (համարյա), ու չգիդեմ, թե էտ տողն ո՛վ ասեց ընձի: Ինքս էտ ոտանավորը չգիդեմ:

Առհասարակ, թե որ Մանեն կարա Գոյայի Մախան իրա՛ սեփական ձեվով նկարի, խի՞ չպիտի բանաստեղծն էլ ուրիշի ոտանավորի վրա ոտանավոր գրի: Համ էլ ըստենց օրինակ շատ կա, օրինակ, Թումանյանի Իմ հայրենիքը տեսե՛լ ես...-ը, Օսկար Վայլդի Դորիան Գրեյի պորտրեն, ինչը Բալզակի Շագրենի կաշու մի տարբերակն ա, Ռոդրոն Ըջեդրինի (կամ Շեդրինի) Կարմեն սյուիտը, որ Բիզեի Կարմենի տարբերակն ա նն, նն:

Շեքսպիրի սա՛ղ դրամաների սյուժեներն էլ իրանից առաջ արդեն գրած գործերից ա վեկայած, բայց էտ ուրիշների գործերը ոչ մեկը չի է՛լ հիշում, այնինչ, Շեքսպիրին հիշում ու գնահատում են արդեն չորսը դար, որտե՛վ Շեքսպիրը էտ տկլոր ու անշունչ սյուժեներին կյանք ու շունչ ա տվե, ու էն էլ՝ է՛ն տեսակ կյանք ու շունչ, որ արդեն չորսը դար ա, ինչ չի մեռնում կամ հնանում:

Կարեվորը սյուժեի հիմնական գծերը չեն. կարեվորը ասելիքիդ է՛ն ձեվն ա, ինչի ազդեցությունը հզոր ա: Մեկ ա՛նոր բան չես ասի, ու ասելուդ **ձևն ու մանրամասնե՛րը** պտի նոր ըլնեն:

Բացի ձեվի թարմությունից՝ ոտանավորի համար իրեք կարեվոր բան կա՛ ալիտերացիաները (այսինքը, նման բաղաձայնները) ասոնանսները (այսինքը, նման ձայնավորները) փռելը, ռիթմն ու հանգը: Օրինակ, սրա մեջը, ուրիշ բաղաձայնների հետ, **ժ-ն ու ա-ն** շատ ա, առաջինը՝ մանավանդ վերջում:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Վատ ոտանավոր չի:

Ու օրերի ժա՛նգն ա իմ հուշերի վրա անգո՛ւթ-անգութ չոքե:
Սպառվե՛լ ա մանկությանս շոգենավի ծխամարմին շոգին:
Մղձավանջ ու էրազ խառնվել են իրար,
Ու չե՛մ կարում ջոկեմ հանգը ժամանակի,
Ու հեղձուկ ու տոթ ա – ստվերում ու շոգին:

Կառամատույցներում էլ ուղեկցող չկա՛ –
Նո՞ւյնիսկ Վարդավառին:
Խռովել են արեվները –
Անրջագույն հեքիաթների զորքի:
Ու զորություն չկա՛ – վանք ու մատուռ գալու,
Որ մո՛մ վառեմ գոնե սուրբ ու մեղավորին,
Ու օրերի ժանգը ժա՛նտ ա ու անհոգի:

Ժամանակի վա՛րզն ա ապագայի վրա անգութ-անգութ չոքե:
Հուշիդ միակ մոմն է՛լ մարեմ,
Ու խառնվեմ ժամազանգի ժանգին:
Մղձավանջ ու էրազ խառնվել են իրար,
Ու չե՛ս կարում կոկես ցա՛վը հուշաժանգի,
Վերի՛ն ժամհար, ժա՛մն ա – սպասում եմ զանգիդ:

Հ. Թումանյան – ՊԱՏՐԱՆՔ

Մեր էսորվա պոեզիան, մեծ մասով, սխալ ճամփով ա էթում: Մեր էսորվա պոետների մեծ մասը, համենայն դեպս, է՛ն պոետները, ում համարում են պետական ու ուրիշ հեղինակավոր մրցանակի արժան, համարյա լրիվ, հրաժարվել են դասական չափ ու հանգից, ու գրում են (իրանց արեվին) վեռ-լիբր, այսինքը, ազատ ոտանավոր:

Սրանց գրածը պոեզիա չի, որտեղ չի ազդում կարդացողի վրա, չի հուզում լսողին, ու սրանց մեջը կյանք չկա, կյանքի պատմությունը չկա: Ու սրանց գրած վեռ-լիբրը լրիվ արձակ ա: (Էս վեռ-լիբրների մասին տես իմ [16]-ն ու [18]-ը):

Հայ պոեզիայի ամենաչքնաղ վեռ-լիբրը գրել ա նարեկացին (տաղերը), ու նարեկացու վեռ-լիբրի պոետական վարպետությանը էսոր հըր ոչ մեկը չի հասե:

Ինչ ուզում ա սրանք ասեն ու գրեն, սրանց ասածները ավելի խորը չեն ըլնի Թումանյանի 1918 թվին գրած էս էսեի տակը դրած փոքրիկ, բայց **չքնաղ** ոտանավորից: Ու ինչքան էլ սրանցից ոմանք (իրանց ստերիլ ու անկյանք գրական «լեզվով») ասեն, թե «Թումանյանն ընդամենը գյուղագիր է», կամ թե՝ «Թումանյանի գրածներից գունի հոտ է գալիս», մեկ ա, Թումանյանն իմ համար պաշտելի ա:

Ես Թումանյանի՛ հետեվորդն եմ, ու ոտանավոր գրելը Թումանյանից եմ սովորե (համ էլ՝ Տերյանից ու Չարենցից), ու Թումանյանի էս մի փոքր, բայց **հանճարեղ** ոտանավորը չեմ փոխի մեր պետական մրցանակ ստացած էտ սաղ արտեմիստների սաղ գործերի հետ:

Հետաքրքիր ա, մեր արտեմիստներն գրելն ումի՞ց են սովորե, ու իրանք էտ ու՞մ հետեվորդն են:

Հոտը հենց սրա՛նց գրածներից ա գալի:

(Կողքը դնում եմ էս ոտանավորի իմ խմբագրած վարյանտը, որ Թումանյանն ինքն է՛լ կաներ, թե որ էն օրերի խմբագիրները թողային):

Վեր է կացել էն սարում
Մեր Չալակը իր թեվից.
Գրնում է մուօ անտառում,
Քաջ ախպերըս ետեվից:

Զրընգում են նրանք խոր
էն անտառում կուսական.
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թըվում է, թե՛ կըզան:

Զո՛ւր ... վաղո՛ւց են, ա՛խ,
նրանք
Մեր սարերից գընացել.
էն զի՛լ ձեներն են մենակ
Իմ ականջում մընացել:

Վեր ա կացե էն սարում
Մեր Չալակը իր թեվից.
Գրնում ա մուօ անտառում,
Քաջ ախպերըս հետեվից:

Զրընգում են իրանք խոր
էն անտառում կուսական.
Ես կանչում եմ, նորից նոր,
Ինձ թըվում է, թե՛ կըզան:

Զո՛ւր ... վաղո՛ւց են, ա՛խ,
իրանք
Մեր սարերից գընացել.
էն զի՛լ ձեներն են մենակ
Իմ ականջում մընացել:

48. ԱՆՋՈՐ ԹԱԼԻՍՄԱՆԸ

Գրելու առիթը չեմ հիշում: Էս ոտանավորը ինքս էլ շատ չեմ կարդում:

Ջահելի կյանքի ամենահիմնական իմաստներից մեկը հակադիր սեռի բարեհաճությունն ա: Տարիքովներն էսի հաճախ մոռանում են ու համ էլ հենց սրա՝ համար ա, որ ջահելներին լավ չեն հասկանում:

Սեռերի հարաբերությունը տարիքովների համար էլ ա առանցքային ու կարեվոր: Թե որ էրկու հոգի իրար կապվեն ու էկզյուպերու ասածի պես «վարժվեն իրարոս», հետո, երբ սրանցից մեկնումեկը թողնի մյուսին ու էթա, էս մյուսը «կարող ա լաց էլ ըլնի»: Պատահական չի, որ էս տեսակ հեռանալը էս զույգի թայերից մեկը համարում ա դավաճանություն:

Դավաճանությունը խոստումը դրժելն ա: Խոստումը, երդում ուտելու սովորությունը (երդվելու ինստիտուտը, կասեր իրավաբանը կամ տնտեսագետը) ամենահին սովորություններից մեկն ա: Հին մարդը, օրինակ, երդվելուց ավելացնում էր, որ թե ինքը իրա խոստումը դրժի, թո էս կամ էն մի աստվածն իրան պատժի, ու սրա համար էլ խոստումը շատ հազվադեպ էր դրժում, որտեղ վախում էր էտ աստվածի գայրույթից:

Հետագայում, օրինակ, Հին Հունաստանում, երբ ամեն մարդ չէր, որ աստվածներին էտքան լուրջ էր հավատում, արդեն թե որ մեկն իրա խոստումը կամ երդումը դրժում էր, դատում էին դրան, ու թե որ վկաներով ապացուցվում էր, որ էտի իրոք խոստումը կամ երդումը դրժել ա, բռնում ու խիստ պատժում էին, ու կարող ա՝ երկրից էլ քշելն (օստրակեին):

Ըստ էության, խոստումը կամ երդումը դրժելը կապվում ա խաբելու կամ սուտ ասելու սովորությանը, ուրեմը, համ էլ՝ ազնվության սովորությանը: Ըսենց բաներին մենք ասում ենք՝ բարոյա-էթիկական նորմեր, ու էս բարոյա-էթիկական նորմերի համախումբն ա հենց հնարավոր դարձրե ու դարձնում մարդկային համակեցությունը:

Բարոյա-էթիկական նորմերն առաջացել են առանց մարդկային որեվէ ծրագրի, ու անհնար ա, որ մեկնումեկը կարենա ծրագրով, այսինքը, իրա մենակ տրամաբանությունով է՛ն տեսակ նորմերի համախումբ ստեղծի, ինչը հակասի բնական նորմերին ու կործանարար չըլնի տվյալ հասարակության համար:

Իրոք էլ, կոմունիստները իրանց ծրագրերով նորմեր ստեղծին՝ Սովետում, Չինաստանում, Կամբոջայում ևն ու ամեն տեղ էլ էս նորմերը հասցրին ահավոր արնագործության, աղքատության ու թշվառության:

Գերմանացիներն ստեղծին նացիստական նորմերը, ու սրանք քիչ մնաց Գերմանիան վերացնելին աշխարհի էրեսից:

Էս նորմերը մեր մեջը շատ խորն են նստած, ու երբ մեր մոտիկները սրանք խախտում են, ահավոր վատ ենք զգում:

Էս ոտանավորի ներքին ու չէրեվացող շերտը երեվի հենց էս բաների մասին ա: Ու երբ էս ասում եմ, որ էս կյանքն եմ պատմում, հենց ըսենց մի բանն եմ ուզում ասեմ, չնայած պատմելուս ձեվը կարող ա էնքան քողարկված ու ռեբուսային ըլնի, որ չէրեվա է՛լ, թե կոնկրետ հենց ինչը նկատի ունեմ: Չնայած էսքան բան ասի էս ոտանավորի մասին, մեկ ա՝ էսի միջակ ոտանավոր ա:

Սրա հետ համեմատելու ա՝ 49-րդն ու 51-րդը:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Իմ լավերի համեմատ՝ թույ ա:

Էսքանից հետո կմնաս տանը,
Թե կապականես սիրտդ ու հոգիդ
Բուժ ու սեթեվեթ մայթերի ախտով –
Էտի էլ արդեն – հեշ կարեվոր չի:

Դե մնաս բարով: Մանր, առօրյա,
Սին բամբասանք ու հոգսի արանքում –
Նկարդ արդեն չի խանդավառում,
Ու քեզ չեմ հիշում արդեն օրերով:

Դու փոթորկվում ես մայրաքաղաքում,
Իսկ ես, բույսի պես,
Օրըս եմ մաշում տաղտուկ գավառում:
Ըսե՛նց ա: Արդեն չի՛ խանդավառում:

Արեվը արդեն է՛ն արեվը չի,
Էրազս դառել ա գունատ ու պղտոր,
Ու հրեշտակները «Մեծն Արարչի» –
Էլ չե՛ն զբաղվում բույսերի բախտով:

Ու սաղ ճամփեքն էլ –
Տանում են ուղիղ հուշաքարերի բանջարանոցը,
Ու բոլորովին կարեվոր էլ չի – ճամփա ընգնելուց –
Կճարվի՞ հեշ մի բարի բախտ մաղթող:

Կհարատեվի բույսերով լեցուն,
Համաշխարհային բորոտանոցը –
Մազաչափ անգամ էլ կարեվոր չի:

Թեկուզ Բարձրյալը նորից բաց անի
Տիեզերական բրուտանոցը,
Գույն ու էրազի արհեստանոցում –
Սե՛վը կդառնա ամեն ինչ հաղթող:

Դեն կչարտես իմ թալիսմանը,
Թե կպահպանես ու կբոլորես հուշիդ դրախտով –
Մազաչա՛փ անգամ – էլ կարեվոր չի:

Բայց էլի մեկ ա – հաջողություն քեզ.
Հաջողություն քեզ – ու մնաս բարով:

49. 70-ԱՄՅԱ ԿԱԶԱՆՈՎԱՆ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

Ծերանայլը հա է՛լ ողբերգական բան ա: Ծերանայլը նման ա հզորագույն իշխանությունը կորցնելուն:

Հայտնի բան ա, որ երբ մեծ պաշտոնյային հանում են իրա պաշտոնից, կյանքը դրա համար կորցնում ա իրա իմաստը: Հին թագավորներն ու հզոր իշխանները համարյա երբեք չեն համակերպվե իրանց իշխանությունը կորցնելու հետ, ու շատ անգամ մահվան վտանգն ու նույնիսկ մահը գերադասել են ապրելուց:

Ջահելը կյանքի թագավորն ա, իշխանն ա, ու համարյա միշտ՝ էսի չի գիտակցում: Ու երբ էս ջահելը ծերանում ա, տենում ա, որ իրա ամենակարեվոր պաշտոնն իրանից խլել են, որ ինքը էլ կյանքի գահին չի:

Սարդ կա, որ սրա հետ ոչ մի կերպ չի համակերպվում: Օրինակ, Հեմինգվեյլը, ով հենց զգաց, որ արդեն ծեր ա, փորձեց իրան սպանի: Երբ իրա առաջին փորձն անհաջող անցավ, ու բժիշկները փրկին իրան, ինքը երկրորդ անգամն էլ հրացանը դրեց գետնին, փողը մտցրեց բերանն ու իրան սպանեց:

Ուրեմը, Հեմինգվեյլի կյանքի իմաստը ջահել մնալն էր – սրա սաղ հետեվանքներն էլ հետը: Երբ էս իմաստը կորավ, կյանքը, ապրելը – էլ Հեմինգվեյլին պետք չէր: Ուրեմը, Հեմինգվեյլը էտ ի՛նչ աստիճան ա ջահելությունը սիրե, որ առանց սրան մի՛ վարկյան էլ չի ուզեցե ապրի:

Լեվ Տոլստոյը, մոտ 60 տարեկանից հետո, սկսել ա ահավոր լուրջ մտածելը ինքնասպանության մասին: Ի՛նքն ա ասում, որ իրա տնից սուր առարկաները, պարաններն ու սրանց պես բաները թաքցնել ա տվե, որտեվ զգացել ա, որ կարող ա ինքն իրա վերջը տա:

Տոլստոյն ասում ա, որ հենց ինքը զգաց, որ ինքն ավելի շատ գործ ա արե, քան թե, օրինակ, Շեքսպիրը ու մյուս նշանավոր գրողները, տեսավ, որ կյանքն իրա համար էլ արդեն իմաստ չունի: (Բայց հետո ինչ-որ մի իմաստ քթել ա, որտեվ ապրեց մինչեվ խորը ծերությունը):

Կիբեռնետիկայի հիմնադիր, մաթեմատիկոս Նորբերտ Վիներն ասում ա, որ կարեվորը ոչ թե նպատակն ա, այլ նպատակին հասնելու պրոցեսը: Վիներն ասում ա, որ հենց հասնում ես նպատակիդ, էտ նպատակը լուծվում մերվում ա աստվածների աղջամուղջի մեջը: Էսի, իհարկե, ճիշտ ա:

Սրա համար էլ, հենց նպատակդ իրագործվեց պրծավ, պտի վռագ մի նոր նպատակ քթնես, թե չէ՛ կյանքդ կդառնա անիմաստ: Ու պտի հիշես, որ քու կյանքի իմաստը ընտրողը հենց դո՛ւ ես, ոչ թե ուրիշ որեվէ մեկը:

Կազանովան Դոն-ժուանին տվե անցել էր լրբության գործերով: Լրբությունը Կազանովայի կյանքի իմաստն էր, ու հենց սրա հնարավորությունները պրծնեին, պտի որ իրա կյանքի իմաստը կորեր: Մերիմեի մոտ Լեպորելլոն Դոն-ժուանի ծառան ա:

Սրա հետ համեմատելու ա՝ 48-րդն ու 51-րդը:

Միջակ ոտանավոր ա:

Ես ճի՛շտ եմ ասում, ճի՛շտ, Լեպորելլո: Շա՛տ սիրուն կին էր:
 Չէ, ի՛նչ եմ ասում, Մադոննա՛ն վկա. Սիրունը՝ է՛ն չի:
 Ասում ես՝ ո՞նց էր: Ոնց որ արեվը խառնես ծաղկունքին,
 Մի կին արարես, աչքերի տեղն էլ – հրաբուխ դնես:
 Հենց է՛տ տեսակ էր:
 Ոնց որ նայեի ջահել օրերիս կապո՛ւտ երկնքին:

Եռսուն անգա՞մ եմ կրկնում արդեն: Թեկուզ տաս հազար:
 Գինի՛ լից, գինի՛. էտ քու գործը չի՛: Դու որկորային քու բախտին հասար:
 Բայց դե – չէ՛ր նայում, պատկերացնո՞ւմ ես, ընձի՛՛ – չէ՛ր նայում.
 Իմ նման մարդուն – ում դեմ թզուկ էր Դոն-Խուանն ինքը:
 Դրան երեվի ինչ-որ անբեղի մետաքսաթավիչ շորն էր հմայե:

Պատկերացնո՞ւմ ես, հենց գլխի ընգա,
 Ոնց որ խավարե՛ր էս սաղ երկինքը:
 Էս թասն էլ խմենք – էթանք ըստեղից: Հարցնում ես, թե ո՞ւր:
 Ո՞ւր պիտի էթանք: Հասկանալի ա, որ ո՛չ մանկատուն:

Տխո՞ւր: Ե՞ս: Տո չէ՛: Ի՛նքս – տխուր չեմ: Էտ կյա՛նքն ա տխուր:
 Դե վե՛ր, վե՛ր կենանք: Վեր կենանք էթանք գերեզմանատուն:

Հարցնում ես, թե խի՞: Էթանք ու նայենք մեր ապագային:
 Չէ, ի՞նչ եմ ասում. էթանք ու նայենք մեր հենց – ներկայի՛ն:

Գիդե՞ս: Ի՞նչ գիդես: Դու ի՞նչ ես տեսե, որ ի՛նչ իմանաս:
 Է՛խ, Լեպորելլո, էտ ի՛նքս կարամ նայեմ ներկային:
 Դո՛ւ ինքդ էտի –տեսե՛լ ես արդեն: Մենակ մի՛ վարկյան:
 Ծնվելուդ պահին: Մենա՛կըս կէթամ:
 Ասա թո նորից գինի՛ բերեն քեզ: Ըստե՛ կմնաս:

50. ԱՍՈՒՊԱՅԻՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ ԱՌԱՍՊԵԼԻ

Գրելու առիթը չեմ հիշում:

Պոետի համար տաղաչափության ձեվի ընտրությունն առաջնայինն ա: Հին ժողովուրդների համար ամենակարեվորը էղել են այիտերացիաները (նման բաղաձայն կուտակելը) ու աստնանսները (նույնական ձայնավորները կուտակելը):

Օրինակ, որ նայես, թե հին գերմանացիների (կամ անգլիացիների) բանաստեղծական էպոսը, **Բեյվուլֆը (Beowulf-ը)** ոնց ա սարքած, կտենաս, որ էտի հանգ՝ հեչ չունի, իսկ դրա ռիթմը էսօրվա ոտանավորից լրիվ տարբեր ա: Բայց **Բեյվուլֆի** ստրուկտուրան լրիվ հիմնած ա այիտերացիաների ու աստնանսների վրա: Հները այիտերացիաներից ու աստնանսներից ահավոր բավականություն էին ստանում:

Հայերի գրած արձակ ու ոտանավոր գործերը, մեծ մասով, կրկնում էին Ս. Գրքի թարգմանության ազատ ոտանավորը՝ վեռ լիբրը: Նարեկացու գրած տաղերի մեջը, օրինակ, զգացվում ա **Երգ երգոցի** հզոր ազդեցությունը: Ս. Գրքի ոճը զարգացրին մեր պատմիչները, մանավաղ Բուզանդն ու Խորենացին: Իրանցից հետո, մեծ մասով, մեր ոճերը շատ չեն զարգացե (մինչեվ նարեկացին):

Բայց հասարակ ժողովուրդն էտքան պահպանողական չէր, ու իրա ոտանավորի սեփական տրադիցիան, էնի՛, որ կար Վահագնի ծնունդի ու Սաթենիկին փախցնելու ոտանավորների պեսերի մեջ, երեվի շարունակում էր: Սրա վկայությունը **Խաչգոռուզ** անունով պոեզիայի սիրահարի պահպանած մեր միջնադարյան ոտանավորներն ու էն հայրեններն են, որ էսօր վերագրում ենք մենակ Քուչակին: (**Մնացականյան Ա. Ե. – Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր**, էջ 10-11, 113, ՀՍՍՌ ԳԱ հրատ, Երևան: Էս հղումն ընձի Հրաչ Մարտիրոսյանն ա ուղարկե, Լեյդենից: Իսկական գիտնականն ըսենց ա ըլնում, Մնացականյանի գիրքը ձեռի տակն ա էղե, չի այարե ու չի ափսոսացե, ու իրա ընգերոջը մի փոքրիկ նվեր ա արե):

Նարեկացին է՛լ ա մենակ վեռ-լիբր գրե: Իսկ հասարակ ժողովուրդը կողքի ժողովուրդներից, օրինակ, պարսիկներից ու արաբներից, տաղաչափական նոր ձեվեր էր սովորում, ու սրանցով սքանչելի ոտանավոր էր սարքում:

Նարեկացուց էրկու դար առաջ, արաբ Աբու-լը-Ալա-ալ-Մահարին, համ հիանալի արձակ ա գրե, համ հիանալի ոտանավոր, ու է՛ս Մահարին գործածել ա էսօրվա հայտնի տաղաչափական համարյա սաղ դասական մետրերը (9-րդ դարում): Աբու-լը-Ալայի ոտանավորն էնքան սքանչելի ա, որ մենք սրանից Իսահակյանի արած փոխադրությունը (միջնորդ լեզվից) էսօր է՛լ ենք համարում հանճարեղ:

Բայց, բացի Խաչգոռուզ-Խաչիկի պահպանած ոտանավորներից, ուրիշ շատ բան չի մնացե, որ իմանանք, թե մեր գոնե վաղ միջնադարի ոտանավորը ո՛նց ա էղե, որտեվ մեր եկեղեցին ահավոր դեմ ա էղե ժողովրդական «պարականոն» ստեղծագործությանը:

Իմ էս մի ոտանավորը, համարյա լրիվ, դասական մետրով ա, ու երբ էսի գրեցի պրծա, տեսա, որ դասական մետրով է՛լ կարաս լավ ու ազդեցիկ բան գրես, թե որ ասելիք ունես, ու կյանքն ես պատմում, ու սուտ չես ասում: Ու ես շատ եմ հավանում իմ էս ոտանավորը:

Գրածս էպիկական մի վիթխարի հիպերբոլա ա: Սրա հետ համեմատելու ա՝ 37-39-րդը:

Արուս-Արուսյակը կամ Լուսաստղը կամ Վեներան ա՝ Աֆրոդիտեն: Բիլ բառը նշանակում ա՝ կապուտ (գույնը), ու էս բառի էս իմաստն առաջացել ա թյուրիմացությունից (տես [7]-ը): Աղայան 1974. 44-47: #ՀՄ}}]-

Գերազանց ոտանավոր ա:

Նորահնար, անմեղաշունչ աստեղային օվկիանոսում
Բոցամորուս դյուցազո՛ւնն էր աճապարում աշխարհաբայլ,
Ու հեթանոս, զվարթախի՛նդ ժամանակի ծովածոցում
Չէ՛ր նկատում Արուսյակին եթերափայլ:

Ու ծովածին Արուսյակը, բիլ հույսերով հրահոսուն,
Սրտատրոփ ունկնդիր էր անծայրածի՛ր աստղադողին,
Ու վիթխարի լռության մեջ ամպ ու լուսին չէին խոսում –
Ուղեկցելով – բոցամորուս – Հարդագողին:

Ու հրավարս դյուցազունը հորիզոնում անէացավ,
Ու ծիրանի հուշը ձուլվեց աշխարհային աստղափոշուն:
Լուսաստղի ցնորական անուրջները էրազացան –
Հետո դառան համաաշխարհ – մահաաշո՛ւն:

Ու որբում ա մա՛հն անուրջի – Աստղը Լո՛ւս – խելակորո՛ւս,

Ու արցունքներն ասուպային՝ կաթկթում են լուսնաշողին.
–Անվերադարձ անէացավ դյուցազունը բոցամորուս –
Հավերժական հե՛տքը մնաց Հարդագողին:

51. ԱՆԵԾՔԸ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ

Էս մի ոտանավորը նախապատմություն ունի: 16-19 տարեկան վախտըս Ձկան խանութի մոտ մի ուղղակի չքնաղ աղջիկ տեսա: Ու ոնց որ 13-րդ ոտանավորիս առիթով եմ ասե, էտ վախտ արավոր ուզում էի, որ աղջկները, ու անպայման չքնաղները, ընձի սիրեն: Բա՛:

Էս աղջկան որ տեսա՝ ինքս ընձի մտածեցի. Ըմի եսիմ ինչ փողավոր անասունի հետ կէթա: Ախր խի՞ չի գալի ֆիզ-ֆակ կամ մեխ-մաթ, էնքան լավ տղա կա ընդե՞: Իհարկե, ես համոզված էի, որ էտ լավ տղերքից մեկն էլ հենց ե՛ս եմ:

Ու էս բանը շատ եմ ուզեցե պատմեմ: Էսի էտ բանը պատմելու ձեվերից մեկն ա. էս թեմայի մյուս վերսիաներն են՝ 48-49-րդը: Բայց մեկ ա՝ զգում եմ, որ ուզածս չեմ կարում ճիշտ պատմեն: Հույս ունեմ, որ մի օր կկարենամ:

Առհասարակ, 15-20 տարեկան ջահել տղան, կյանքը հասկանալու իմաստով, էտ նույն տարիքի աղջկանից արագին հետ ա: Աղջիկը՝ աղջիկ ա, ու աղջկա մտքին հա է՛լ պսակվելն ա, հա է՛լ իրա զույգը ճարելն ա, ու երեվի էսի՛ ա ստիպում, որ աղջկերքը կյանքը տղերքից շուտ հասկանան:

Տղերքի սրտին էլ կանում ա, որ իրանց տարիքի աղջկերքը իրանց լուրջ չեն վերաբերվում ու էթում ու իրանցից տարիքովներին են ջոկում, չնայած էսի լրիվ բնական ա:

Էս թեման շատ եմ ուզեցե պատմեմ, ու երեվի սրա ամենահաջող ռեալիզացիան՝ **Գարուն էր** ոտանավորն ա (64-րդը), բայց դրա մեջ էս թեման չի էրեվում, որտեվ մտքումս էղել ա, բայց գրելուց ուրիշ բան ա դառե:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 71-րդ ու 72-րդ ոտանավորների էսեները:

Թույլ ոտանավոր ա:

*****բառապաշարի-32,71,72; աղջ-48-49,51; 64-գարուն; երկիր հայր-37-39, 50**

Մայրամուտին կտենաս մի կապուտ հիրիկ՝ անրջական,

Բայց կողք-կողքի – ինքը կըլնի հեռո՛ւ, հեռո՛ւ,

Ու անուրջ մահակենդան – կբորբոքվի, թե բախտ չկա՛,

Թե էկել ա հիրիկը, տե՛ս, բայց դե հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ,

Թե ուրվական անուրջների ճահճամառում

Էրագի ծառ ու անտառը – արդեն ո՛չ մի ընձյուղ չի տա,

Ու հատել ա էրագների բարակ առուն,

Ու հուշերիդ կրա՛կն անթեղ – կմորմոքվի:

Ու կնայի հիրիկը քեզ, ու հայացքը ուղահայաց –

Աչքերիդ մեջ կթափառի օտարական գարուններում –

Գարուններում օտարական – անծանոթ ու հեռո՛ւ, հեռո՛ւ,

Ու կանիծես հանկարծամահ տարիների անրջաղաց,

Ու չի ըլնի բախտիդ համար գոնե մի գեղջ կամ էլ՝ ներում,

Ու կտենաս – ո՛նց ա կմախքն իրա էտ սո՛ւր –

Սե՛վ գերանդին տարուբերում – փականբանցք տարիներում,

Արդեն մոտիկ, ու ո՛չ հեռու, ու ո՛չ հեռու,

Ու խելահեղ կմղկտաս, որ երգերդ օտարական –

Հիրիկներին էլ չեն հուզում, խանդավառում,

Ու անրջիդ սպիացած վե՛րքը նորից կվերքոտվի:

Ու աշնանն է՛լ, ու աշնանն է՛լ, հիրիկները ձոն են կարդում գարուններին,

Ու ՊԱՏԱՆԻ՝ մեղուների համերգներն են փառաբանում:

Էրեկների թախծանկար վերջաբանում

Նախկին ջահել մեղուների երգն ա մարում ու վերջանում:

52. ՄՈՒՐԱՑԻԿ ՀԱՐԲԵՑՈՂԸ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

Գրելու առիթը չեմ հիշում: Հակոբ Մովսեսն ասեց, որ վերջի տողի թեման Սիամանթոյի մոտ էլ կա: Երեվի: Իմը անկախ ա ստացվե:

Առհասարակ՝ Հակոբ Մովսեսին շնորակալ եմ, որ հենց առաջին գրածներս կարդաց ու ոգեվորեց: Ասաց. «Պոտենցիալըտ անսահման ա»: Ըսենց մի դիտողությունը կարա մարդու սաղ կյանքը փոխի:

Ու մեկ էլ՝ շատ-շատ եմ շնորհակալ Սաղաթել Հարությունյանին ու Վահագն Դավթյանին:

Իհարկե, Հակոբ Մովսեսն իրա գովասանական էս խոսքից մի 20 տարի հետո ասեց համ էլ, որ անգլիացի Դեյվիդ Հերբերթ Լովրենսից արած թարգմանություններս «գարշելի են», որտե՛վ դրանք գրել էի հենց է՛ն ոճով, ինչով որ էս գիրքն եմ գրե, բայց էտի իրա ընձի տված իմպուլսի արժեքն իմ համար չի քչացնում: Ամեն մարդ էլ իրավունք ունի իրա կարծիքը ունենալու:

Երգահան Մարտին Ահարոնյանն էսի սարքել ա երգ: Մի անգամ լսեցի, երգելու ձեպն էնքա՛ն էր արհեստական, ու արտասանությունն էլ էնքա՛ն ստերիլ գրական էր, որ երգողի տեղը ես ի՛նքս ահավոր ամոթ արի, ոնց որ մեղավորը ե՛ս ըլնեի:

Թույ ոտանավոր ա:

Հուշերի շիկացած ածուխն ա թշուում
Գավաթում խելագար գինու.
Զառամած կրքերն են օձի պես ֆշում –
Գալարվո՛ւմ, գլորվո՛ւմ, ընգնո՛ւմ:

Էլ բան չի՛ մնում, էլ բան չի՛ մնում –
Մենակ մուխ ու աղմուկ ու քրքիջ,
Էլ բան չի՛ մնում, էլ բան չի՛ մնում –
Մենակ ճիչ, աղաղակ ու խրխինջ:

Թանձր ծուխ ու ճոճվող, օրորվող պարողներ –
Զամբիկներ՛, նժույզներ՛, զամբիկներ՛,
Տոփաղեմ, տենդագար օրհորդներ, պարոններ –
Վայրենի, վավաշոտ թմբուկներ:

Մեն-մենա՛կ թողիր, մեն-մենա՛կ թողիր, ո՛վ Փրկիչ,
Օրհնանքդ մի օր չկաթեց վերքերիս,
Ու էլ չե՛մ ուզում բուրվառ ու մեռոն,
Ոչ էլ – Մկրտի՛չ,
Հարություն չկա՛ արդեն երգերիս,
Ու հիմնահատա՛կ
Քարուքա՛նդ էղավ
Օվկիանո՛ս հույսի
Լո՛ւս եկեղեցիս:

Վերջացավ հեքիաթս, ու էլ չե՛մ հորինում –
Էրագս հիվանդ ա վերջերս,
Ես լաց չե՛մ ըլնում, ես լաց չե՛մ ըլնում –
Ես լաց չե՛մ ըլնում – էտ ծո՛ւխն ա լցվում աչքերս:

53. ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿՍԿԻԾ

Գրելու առիթը չեմ հիշում: Մանկությանս պատկերներից ա, բայց շատ ա արստրակտ:

Համոզված եմ, որ թե ես երկար գրեի (ու ոչ թե մի 2-3 տարի), ուրիշ լավ գրողներից ոտանավոր գրելու շա՛տ ձեւվ կսովորեի: Օրինակ, Հրաչ Սարուխանից կսովորեի, թե կոնկրետ մի մարդու, օրինակ, մի անտեր պառավի մեռնելու մասին ինչ ու ո՞նց պատմեմ:

Հրաչը կարում ա ըսենց բաների մեջը ահավոր կարեվոր պոեզիա տենա, պատմելու բան տենա: Ահոսոս, որ մեր գրականագետները Հրաչի սարքած պոեզիայի կարեվորությունը չեն տենում, որտե՛վ սեփական կարծիք չունեն, իսկ Կոմունիստական պարտիան (Կոմկուսը) էլ արդեն չկա, որ ասի, թե ո՞ր մի պոետն ու ոտանավորն են լավը: Սրանց պոի մեկնումեկն ասի, որ օրինակ՝ Չարենցը հանճարեղ ա: Հենց իմացան, որ Չարենցը հանճարեղ ա, էտ վախտ էլ չեն վախենա, ու Չարենցի նույնիսկ թուլ ոտանավորները կհայտարարեն հանճարեղ:

Հրաչը մեր էն վախտվա հայտնի պոետների պես կառչուն պայքարող չի, որ կարենար սրան-դրան բրթբրթեր ու էս արեվի տակը իրա արժանի տեղը հաստատեր: Լավ գրելը քիչ ա, պոի համ էլ կռվելու շնորհք էլ ունենաս, որ սաղին համոզես, որ լավ ես գրում: Էսի ահավոր դժվար ա, ու երեվի ես է՛լ եմ էս շնորհքից զուրկ:

Էսքանն ասի, որ արդարացնեմ էս ոտանավորի ահագին շատ վերացականությունը: Այ, որ սրա մեջը կոնկրետ մարդիկ ըլնեին, ոնց որ կան Հրաչի կամ, օրինակ, ամերիկացի Ֆրոստի կամ անգլիացի Հարդիի ոտանավորների մեջը, իհարկե, էսի շատ ավելի լավը կըլներ: Բայց ես էսքանն եմ կարացե: Թո ուրիշներն ընձնից ավելի լավը անեն:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Միջակ ոտանավոր ա:

Ու այնուհանդերձ, ինչքա՛ն նման ա գարունն ինքն իրան,
Ու ինչքա՛ն տարբեր – շիրիմավորված է՛ն գարուններից:
Ուր որ ա – նորից արեվ ու հալոցք, ծաղիկ ու տերեվ – աշխա՛րհ կտիրեն:

Եղեգնուտները նորից կհրճվեն, նորից կուռճանան վարարմունքներից,
Կարոտած հողը պինդ կփաթաթվի սառը պողպատին,
Ու չի՛ ուզենա – պոկ գա իր կուրծքը պատռող արորից,
Արեվատոչոր եղինջը նորից – հուզախանդավառ կկայնի պատին,
Ու քարահագուստ սարերը նորից սիպտակ թիկնոցը դեն կշարտեն,
Ու երամները էս մի անգամն է՛լ – գարնանաժպիտ գալիք կավետեն:

Ծաղկած դեղձենին, անցյալ օրերի հուշամատյանը վերընթերցելով,
Աղոթք կկարդա իրա ծաղկունքին մոմ ու խունկ վառող սուրբ մեղուներին,
Անարատ ցողը մեռնո՞վ կօժի մատղաշ դաղձերին,
Սեվասարյակը հանդա՛րտ կքայլի սեվաթույր ցելով,
Ծիծեռնակները կհանգրվանեն իրանց հարազատ, սե՛վ ձեղուններին,
Ու տերեվները – էս մի գարունն է՛լ իրանց սնուցող բունը կպատեն:

Անցյալ օրերը – անմեղ, միամիտ, պարզ ու հպարտ են,
Ու մանկան մեղքը մեղսագերծ ա ու կարոտաթաթավ:

Թեև գարուններն անմեղսունակ ու անմեղապարտ են –
Օրերի խինդը – անմրմունջ լռեց, անշշունջ հատավ:
Ու այնուհանդերձ, ինչքա՛ն նման ա գարունն ինքն իրան,
Ու ինչքա՛ն տարբեր – է՛ն գարուններից շիրիմավորված...

Անցած կիրակի, երբ մեր տուն էկա,
Շեմին ինձ մե՛կը չդիմավորեց:

54. ՄՂԶԱՎԱՆՁ

Գրելու առիթը կամ ստարտը հենց մղձավանջ-կոշմար բառն ա էղէ: Նպատակըս՝ բառերով մղձավանջ նկարելն ա էղէ:

Շատ ա պատահում, որ ընձի ասում են, թե ճիշտ չեմ գրում, ու սկսում են խելք սովորացնելը: Մեկն էլ, մի պատմաբան, մի օր ասեց.

– Որ թողալիր, ոտանավորներդ մի լավ կղզեի:

Մեր տանն էինք, ու ես տեղիցս հելա, գնացի մի թուղթ ու գրիչ բերի տվի իրան, ու ասի.

– Առ քեզ թուղթ ու գրիչ, ու իմ գրածիցն ավելի լավ մի ոտանավոր գրի:

– Բայց ես ոտանավոր գրելու տաղանդը չունեմ, – ասեց էս ընգերս:

Էս տեսակ մարդիկ մենակ ուրիշներին սովորացնելու «տաղանդը» ունեն, բայց որ սրանց հարցնես, թե օպերացիա անող բժշկին է՞լ կսովորացնես, կասեն՝ չէ: Մարդ ապշում ա, որ սրանք կարծում են, թե իրանք իրավունք ունեն պոետիկ սովորացնելու, որտե՛վ մի քանի ոտանավոր են կարդացե:

Սրանց մտքովը չի անցնում, որ աշխարհում կարող ա նոր ձեվի ոտանավոր էլ ըլնի, որ կարող ա մեկը ընենց մտածի, ինչը սաղի մտածելու ձեվերից տարբեր ա, ու կարող ա հենց էս տարբեր ձեվն ավելի՛ ճիշտ ա, քան թե մնացած է՛ն ձեվերը, ինչին սաղ մարդիկ են հետեվում:

Ըսենց մարդիկ մանավանդ շատ են խառնվում լեզվի է՛ն հարցերին, ինչը պրոֆեսիոնալ լեզվաբանի գործն ա: Օրինակ, մեր տելեվիզորով շատ են վիճում մեր ուղղագրության ու մեր գրական ոճերի ճիշտ ու սխալից, ու էս վեճերին հա է՛լ կանչում են քաղգործիչ Պարուր Հայրիկյանին ու Հայրիկյանի պես լեզվաբանությունից հեռու մարդկանց, ում իմացածի գիտականությունը, ամենաքիչը, շա՛տ ա կասկածելի:

Կարծիք ունենալու իրավունքը ամեն մարդ էլ ունի, նույնիսկ, ասենք, էյնշտեյնի է՛ն տեսություններից, ինչից գաղափար անգամ չունի: Բայց թե որ մարդը շարչարվել ա, ու մեր գրական ոճերը քիչ թե շատ սովորել ա, էսի հեչ էլ չի նշանակում, որ էտ մարդու դատողությունը լեզվի կամ ուղղագրության պրոբլեմներից ճիշտ են կամ արժեք ունեն, թե որ ինքը շատ լավ լեզվաբան ու հլը գրող էլ չի:

Օրինակ, ամեն մարդ էլ լավ քայլում ա, վազում ա, սրանցից շատը՝ լողում ա ու ակրոբատի վարժություն ա անում, այսինքը, «մեխանիկական շարժում» անելու հրաշալի վարպետ ա, բայց ակրոբատների նույնիսկ չեմպիոնը կասի՞, թե ինքը նյուտոնյան կամ քվանտային մեխանիկայից դատողություն անելու իրավունքը ունի (թե ֆիզիկոս չի, իհարկե):

Բայց մեր գրական ոճերը մի քիչ սովորածներն էս տեսակ հանդգնությունն ունեն, համարյա սաղ է՛լ:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Էնքան էլ վատ ոտանավոր չի, ու ձեվով էլ նոր ա:

Յուրտ ա ու լուսինն ա խռպոտ դողդողում –
 Լալիս ա ամառը վաչկատուն:
 Ջրերի ջղերն են սողսողում սեվ հողում:
 Կատաղած ու չո՛ր լուսնահաչ:

Տենդահար, զառանցող, հոգնատանջ –
 Գարունը – հարկատու,
 Ամառը – վաչկատուն –
 Տա՛սը բյուր, մի՛ միլիարդ չար կատու:

Էրազիս – սեվագորշ, կիսաքանդ մի տաճար,
 Ու անձեն պատարագ – հուսաբեկ:
 Արեվը – հոգնաբեկ ու հիվանդ լուսաջահ,
 Երկնքում – զառանցող լուսախաչ – կիսաթեք:
 Փայփայե՛ք, հագցրե՛ք, փաթաթե՛ք,
 Սառցացող մատները շոշափե՛ք,
 Խա՛չ հանեք էս Գնդի էրեսին:

Որձկացող հրաբուխ հրաշեկ –
 Ու հե՛ս ա – դագաղը բերեցին...

Հեղե՛ղն ա սար ու ձոր ողողում:

Երկնքում խելագար ցայգերգի
 Քրքրված ծվեններն են լողում –
 Հալո՛ւմ ա կորուսյալ գարունների չուն.
 Սարսուռ ու սարսա՛փ ա երկյուղի ջրհորում:

Լուսինը – չար ու շեկ, սողացող մի մրջյուն,
 Անհեթեթ ինքնասպան մի ողջուն:

Տենդահար, զառանցող, հոգնատանջ –
 Կատաղած ու չո՛ր լուսնահաչ:
 Գարունը – հարկատու,
 Ամառը – վաչկատուն –
 Տա՛սը բյուր, մի՛ միլիարդ չար կատու:

55. ՊԱՏԵՐԱԶՄ ՈՒ ԷԿՈԼՈԳԻԱ

Գրելու առիթը չեմ հիշում: Վերջին տողի իդեան չգիտեմ ումից լսած մի էկզոտիկ խոսքից ա. «Կանգնեցրեք Երկրագունդը, ես իջնում եմ»:

Ղովտի պատմությունը Աստվածաշնչի ամենազգվելի պատմություններից մեկն և [Ծննդոց, 19]:

Ղովտենց քաղաքը երկու տղամարդ մարդ ա գալի, ու Ղովտը, համարյա զոռով, սրանց տանում ա իրա տունը, բայց քաղաքի բնակիչները, մեծից փոքր, սաղ էլ արվամոլ են ըլնում, ու սրանք սաղ իրար հետ գալիս են ու Ղովտից պահանջում են, որ սա իրա հյուրերին տա իրանց, պարզ ա, թե ինչ նպատակով:

Մեր «սուրբ» նահապետ Ղովտի արձագանքը «հանճարեղ ա», որտեվ Ղովտն ասում ա, թե ինքն երկու կույս աղջիկ ունի, ու թո էս քաղաքի բնակիչները վեկայեն իրա աղջկերքին ու ի՞նչ ուզում են՝ անեն, մենակ թե իրա հյուրերին ձեռ չտան:

Բնակիչները չեն համաձայնում, ու հյուրերը, որ աստվածի հրեշտակներն են ըլնում, Ղովտին, Ղովտի կնգան ու երկու աղջկան փրկում են, աստվածն էլ քար ու կրակ ա թափում էս քաղաքի վրա ու կործանում ա էս քաղաքը:

Էս հրեշտակները Ղովտին ու իրա ընտանիքին ասում են, որ քաղաքից հեռանալուց հետ չնայեն, բայց Ղովտի կնիկը մի անգամ հետ ա նայում. երեվի քաղաքում ազգ ու բարեկամ ա ունենում, ու դրանք իրա մեղքը գալիս են: Սրա համար աստվածը Ղովտի կնգան դարձնում ա աղի սյուն:

Հետո Ղովտն իրա երկու կույս աղջկա հետ էթում ու մի քարանձավում ա բնակվում, ու Ղովտի աղջկերքն իրանց հորը գինի են խմցնում, ու հերթով պառկում են իրանց հոր հետ, ու իրանց հորից հղանում են, որ «իրանց հոր սերմը չկորի»:

Էս սաղ հյը մի յան, բայց ես ոչ մի անգամ չեմ հասկացե, թե Ղովտի կնգա մեղքը ո՞րն էր, որ աստվածն իրան դարձրեց աղի սյուն: Ավելի լավ չէ՞ր ըլնի, որ արնապղծության համար աստվածը հենց Ղովտին կամ իրա երկու աղջկան դարձներ աղի սյուն:

Աբրահամն էլ, Ղովտի ախպերը, իրա կրնգան, Սառային երկու անգամ ծախում ա [Ծննդոց, 12-րդ ու 20-րդ գլուխները]: Ծախում ա խաբեբայությունով, մի անգամ Եգիպտոսի փարավոնին, մյուս անգամն էլ քանանացիների թագավորին, ասելով, թե Սառան իրա կնիկը չի, քո՛ւրն ա:

Ու աստվածն էլ, փոխանակ Աբրահամին պատժի իրա էս «սուրբ» արարքի համար, բռնում ու փարավոնին (հետո էլ՝ քանանացիների թագավորին) ա պատժում մի սարսափելի հիվանդություն ուղարկելով իրանց: Ու որ էս փարավոնն իմանում ա, որ Սառան Աբրահամի քուրը չի, կնիկն ա, կանչում ա Աբրահամին, թե խի՞ չասիր, որ կնիկըտ ա, ու ընձի էս կրակը քցիր:

Ու փարավոնը Աբրահամին լիքը ոսկի ու ոչխար տավար ու ուրիշ հարստություն ա տալի, որ էսի սրանք վեկալի ու էտ երկրիցն էթա: Էս նույն բանը, ճիշտ նույն ձեվով, Աբրահամն անում ա քանանացիների թագավորին:

Այսինքը, մեր «սուրբ» նահապետ Աբրահամը ամենախիսկական կավատ (сутенер) ա էղե:

Ու մենք էսոր պտի պաշտենք Աբրահամին ու Ղովտին: Բա՛:

Ես չեմ հասկանում, թե մարդը խի՞ պտի անպայման հավատա 28-20 դար առաջվա քոչվոր հրեաների գրած տգետ ու պրիմիտիվ ու ահավոր հակասական լեգենդների հավաքածուին (էս հակասությունների թիվը, Լեո Տաքսիլի ասելով, 30-40 հազար ա), էն էլ՝ տերտերների միջնորդությամբ ու բացատրություններով: Չի՞ ըլնի, որ մարդն իրա խելքով ու իրա ստեղծած աստվածին հավատա:

Ու ես չեմ հասկանում, թե Հայաստանի դպրոցներում խի՞ պտի 5-րդ դասարանից մինչև 12-րդ դասարանը կրոն անցնեն (հայ եկեղեցու պատմության անվան տակ): Որ մեր էրեխեքն ըսենց «սուրբ» բաներ սովորե՞ն: Ուրիշ կարեվոր բան չկա՞ սովորելու:

Առհասարակ, ով ուզում ա՝ թո հավատա, թե հավատալու բանը արյան քարոզը չի (այսինքը, նացիզմն ու սրա պես բաները), որտեվ հավատալու իրավունքը մարդու ամենակարեվոր իրավունքներից մեկն ա: Բայց թողեք, որ ով էլ չի ուզում հավատա, թո հանգիստ չհավատա: Էսի էլ՝ ա մարդու կարեվոր իրավունքը: Թո ամեն մեկը ինքը ընտրի, թե սրանցից ո՞րն ա ուզում: Իսկ էրեխեքին էլ թողեք մեծանան ու իրանք որոշեն՝ հավատո՞ւմ են, թե՞ չէ:

Կարծում եմ, որ էսի լավ ոտանավոր աս:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Վատ ոտանավոր չի:

Փողոցների վտառները միանում են
 դժկամ տոթին,
 Ու ոռնում ա տարին սարդանման
 Ու խառնվում սառցասարսուռ սղոցների
 գուժկան բոթին –
 Ու մեռնում ա սե՛րը անխարդավան:

Գալարվում ա ջղագրգիռ էրազների
 ժանգոտ գոտին –
 Գարո՛ւն ըլներ, գարո՛ւն ըլներ հմի –
 Քաղաքների ծծմբահոտ կաթսաներից
 հելավ ոտի –
 Համայնավար լեղին ժահրաժանի:

Դառնաերկինք գիշերները ըսփռվում են
 պագշոտ հովտին –
 Կարոտները՝ սուր-սո՛ւր, սվի՛ն, եղա՛ն:
 Աղասյունը արձանաձեն աղերսում ա
 պոռնիկ Ղովտին –
 Գարունները ծվեն-ծվեն էղան:

Դառնալեղի, դառնալեղի քաղցկեղ –
 էս աշխարհի պորտին:
 Անհենակե՛տ, անտո՛ւն, անտե՛ր, տնա՛նկ:
 Թո վարդերը ժառանգություն մնան –
 լորձունքամաշկ գորտին:
 Վեր կաց իջնե՛նք էս կանգառում:
 Իջնե՛նք մնանք:

1988-89 թվերի դեպքերի մասին ա: Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայելի **Ծորտության ուղին** (The Road to Serfdom) նոր էի կարդացել, ու լավ էի գգում ու համ էլ՝ հասկանում, որ Հայաստանի նորահայտ «մարգարեները» երկիրը քանդելու են:

Երբ ժողովրդի մեծ մասը, մանավանդ մտավորականությունը, անընդհատ «լավ, իմաստուն ու բարի թագավոր-մարգարե» կամ պրեզիդենտ ա ման գալի, որ էսի իրան «դեկավարի ու պահի», խուսափում ա պատասխանատվության իրա մասից: Կառլ Պոպերն ասում ա, որ **իշխանավորների բարոյական ու մտավոր մակարդակը հա էլ միջակ ա, ու շատ անգամ էլ՝ միջակից ցածր ա:**

Ուրեմը, լավ իշխանավոր ման գալը խելագարություն ա, ասում ա Պոպերը: Ու Պոպերն ասում ա, որ սրա համար էլ «ո՞վ իշխի, որ մեր համար լավ ընի» հարցի տեղը պտի ուրիշ հարց տանք՝ «հասարակական ո՞ր կարգն ընտրենք, որ մեր իսկ ընտրած իշխանավորները մեզ գոնե քիչ վնաս տան, որտե՞վ դրանք հա էլ վնաս են տալու»:

Մենք մի հասարակ բան չենք հասկանում: Մենք չենք հասկանում, որ թե որ ավտոն փչացել ա, թե որ «ավտոյի մատոռը խփել ա», շոֆեռին ինչքան էլ փոխենք, էտ ավտոն, մե՛կ ա, չի՛ էթա: Մեր 1988 թվի հուզմունքի առաջնորդներն իմ համար սաղից շատ են ասելի, որտե՞վ դրանք սպանին ժողովրդի է՛ն հավատը, թե լավ ու լուսավոր ու արդար կյանքի հնարավորությունը կա՛:

Սովետի օրերին մարդիկ մտածում էին, թե «**ըսենց էկել ա, ըսենց էլ կէթա**», բայց երբ էս նորահայտ մարգարեները մեջտեղ էկան ու գոռգոռացին իրանց «պայքա՛ր, պայքա՛ր մինչե՞վ վերջ»-ը, ժողովուրդը հույս ու թե՛վ առավ, որտե՞վ ենթադրում էր, թե սրանք նորմալ հասարակարգ են սարքելու: Բայց երբ սրանք ավելի ահավոր ալան-թալան արին, քան սովետի պաշտոնավորներն էին անում, ժողովուրդը ոնց որ մի տեսակ հուսահատվեր ու համոզվեր, թե՛ իրոք որ, «**ըսենց էկել ա, ըսենց էլ կէթա**»:

Ծիշող իմանալը, այսինքը, իսկական մարգարեներին ու իրանց ասածը ճանանչելը շատ դժվար բան ա, որտե՞վ էտի սովորելով ու մտածելով ա, իսկ **մարդկանց մեծագույն մասը կամ տգետ ա, կամ տգետ ու հետն էլ ծույլ, ու սովորելուց հը դպրոցում ա հրածարվե,** ու հմի էլ ո՞րոց սովորի: Արդեն ուշ ա:

Բայց երբ որե՞վ մի ժողովրդի մեծ մասը չսովորեց, ու մեր ժողովրդի պես խավար ու հետամնաց մնաց, հա էլ կմնա ճորտ ու ստրուկ ու ոչ մի անգամ էլ չի հասկանա, թե խի՞ ա ճորտ ու ստրուկ, ու չի ազատվի իրան բռնաբարողների ձեռից:

Ջարմանայի բան ա. որ մի դաժե մաթեմատիկայի ակադեմիկոսի ասես. «Մի ջուխտ կոշիկ կարի», կասի. «Ո՞նց կարեմ, ախր ես կոշիկ կարելը չեմ սովորե: Ա՛յ, որ մի տարի էտի սովորեմ, ու 5-6 տարի էլ կարեմ ու վարպետանամ, էտ վախտը կկարենամ կարեմ»:

Բայց որ էս նույն ակադեմիկոսին որ ասես. Արի դառի երկրի պրեզիդենտը ու երկիրը լավ կառավարի, հը՞», կասի. «Կառավարե՛մ, ընե՛նց կառավարեմ, որ քեֆըտ գա»: Էս նույն բանը կասի ուզածըտ հայր, ուզում ա՝ ակադեմիկոս ըլնի, ուզում ա՝ չոբան ըլնի:

Ուրեմը, ի՛նչ, երկիր կառավարելը ավելի հե՛շտ գործ ա, քան թե կոշիկ կարելն ու չոբանություն անելը. հը՞:

Իմիջիպայոց, հայերեն լեզվի օրենքով, շեշտած ձայնավորին նախորդող բաղաձայնը կարա կրկնվի:

Վատ ոտանավոր չի, իսկ Ֆիրդուսու էս երկու տողը շա՛տ ա խորը:

**Դու ապրում ես է՛ս աշխարհում, քու է՛ս տան մեջ կավաչեն,
Դե ուրեմը՝ դո՛ւ որոշի չար ու բարին, տնա՛ շեն:
Ֆիրդուսի**

Մարդկանց մեծագույն մասը ալարում ա մտածի:

Անրի Պուանկարե

Արե՛վը էսօր էնքա՛ն ա կարմիր,
Երկինքը էնքա՛ն ու էնքա՛ն արուն ա թափում,
Որ արար աշխարհը դառել ա – արընոտ մարմին,
Որ Տերը նայում ա ու սարսափում,
Որ ծառ ու տերե՛վ – քա՛ր են ու սարսուռ –
Ու չե՛ն սոսափում:

Ու անցել աս Ջատիկ ու անցե Վարդավառ,
 Ու գարթնել աս նեռը ու էլ չի՛ մրափում,
 Խուժում աս կենտրոն – լցվում աս գավառ,
 Պարուրված ժանտահոտ արընով –
 Կանանչ ու հրավառ,
 Խժռո՛ւմ աս, գռփո՛ւմ ու թրատո՛ւմ:

Ջնջված աս արդեն ամե՛ն գարդանախշ,
 Ու տեղը չոր գիծ աս –
 Սուրսայր ու շեշտակի,
 Լուսերը մեռած են ու համ էլ հրախաշ,
 Ու էլ ոչ մի մարդ չի՛ հավատում օծյալ հրեշտակին,
 Ու մոմ է՛լ չի վառում իրա – հավատի հիշատակին:
 Ու ամբոխվել են մեկերը գինավառ,
 Ու դառե վիթխարի բանակ,
 Ու արդեն չե՛ն լսում ո՛չ մեկին,
 Ու արդեն չկա՛ ժամանակ,
 Որ մոմ վառեն –
 Վարդավառին կամ Ջատիկին:

Ու արդեն չե՛ն լսի ո՛չ մեկին:

Արդեն հենց իրա՛նք կարարեն –
 Առաքյալ ու մարգարե,
 Որ սրա՛նք,
 Որ հենց էս նորարար առաքյալ ու մարգարեն,
 Հենց սրա՛նք կայնեն մեկերի ղեկին,
 Որ սրա՛նք աշխարհի պատռված արգանդը կարեն,
 Որ սրա՛նք նոր սուրբ ու նո՛ր աստված նկարեն:
 Ու թե որ հանգարծ մեջտեղ գա իսկական մարգարե,
 Ու ցույց տա Ավետյաց երկրի ուղին,
 Կհեզնեն՛ն իրան, կանարզե՛ն ու կքարեն՛ն,
 Ու հլը կասեն, որ իրանք ճի՛շտ են,
 Ու որ իրանք խելոք ու իմաստուն ու արդար են:
 Ու ձեն չի՛ հանի, սո՛ւս կանի,
 Կմնա անծպտուն – իսկական մարգարեն:
 Կմնա անծպտուն, որ մեկերն իրան չքարեն,
 Որ իրան չխաչեն ու պատին չկարեն,
 Ու ծնունդ ու որդին իսկական Սինայի,
 Սուսուփուս ու արցունքն աչքերին կնայի,
 Թե ոնց աս էս ինքնակոչ մարգարեն
 Մեկերին շոյում ու շողոմ համբուրում,
 Ու ոնց աս սրանց Սինայի Սուրբ սարը տանում,
 Որ ընդե իրան օժեն ու արարեն –
 Մի նոր հրեշտակահամբարու*:

էտ օրը՝ ... արեվը կարմիր կդառնա նորից:
 Երկինքը կթափի ահավոր արուն,
 Ախպերը կվախենա ախպորից,
 Առյուծը նորից կդառնա կորյուն,
 Երկիրը նորից ու նորից կգրկվի շորերից,
 Ու ամմե՛ն-ամմե՛ն ինչ կսկսվի նորից:

*Համբարու-շար ոգի, ճիվար:

57. ԱՐԾԱԹԵ ՈՒ ԿԱԹԵ ՓԱԹԻԼԸ ԹԵԹԵՎ

Գրելը որ նոր էի սկսե, հա մտածում էի, թե ինչի մասին գրեմ ու բնագրով զգում էի, որ երեվի կարելի ա, որ ամեն ինչի մասին էլ գրվի (հմի գիղեմ, որ գրելու առիթներն ահավոր քիչ են): Մի օր համալսարանից դուս էի էկե ու տունն էի էթում ու մեկ էլ՝ մտքովս անցավ. «կարա՞մ ձյան փաթիլի մասին գրեմ: Ախր էտ թեման էնքան ա ծեծված փաթիլի մասին ի՞նչ պատմես, որ մաշված չընի»:

Տունն էկա ու առաջին տողը քթա: Ինչքան հիշում եմ, էս ոտանավորն սկսելու իղեան Պաստեռնակի **Եղրեվանին** (Сирень) ոտանավորի սկսելու ձեվից ա: Մնացածը, ոնց որ ասում են՝ տեխնիկայի հարց էր: Մի 10-15 վարյանտից ստացվեց: (Մի թափով գրած կամ թարգմանած գործ չունեմ: Պատահում ա՛ մի 100 վարյանտ ա գրվում մինչեվ էլ փոխելու բան չի ըլնում):

Առհասարակ՝ որ մարդ ուզի, ամեն ինչի մեջ էլ ողբերգություն կտեսնա: Երեվի՝ էն բանի համար՝ որ ամեն ինչ էլ վերջ ունի, ամեն ինչ էլ՝ մահ ունի:

Պատմողը, արձակով պատմի, թե ոտանավորով, պտի կյանքի հենց ողբերգությունն էր պատմի, որտեվ մնացած ամեն ինչը ոնց որ սովորական ու անհետաքրքիր ըլնի: Կարեվորը առաջի բառը կամ տողը քթնելն ա: Իհարկե, հա է՛լ կոնկրետ մի դեպք ես ման գալի, որ հենց էտ դեպքի առիթով պատմես ասածս ողբերգությունը, պատմես հենց է՛ն մի (սաղի համար էլ կարեվոր) բանը, ինչը հենց քու համար էլ ա կարեվոր:

Թե որ առողջ ես ու հոգով էլ խաղաղ, մնացածն աշխատանքի, չարչարանքի հարց ա, որտեվ տեխնիկական հարցերն արդեն լուծել ես, հանգերի սիստեմդ մտքիդ մեջը արթուն ա, ականջդ վարժ ա, վանկ բան՝ չես հաշվում, ու ըսլուխով զգում ես, որ էս մի բառը չեղավ, սրա տեղը պտի մի ուրիշ բան ըլնի. կամ էս մի միտքը տեղին չի, կամ սիրուն չի, կամ պոետական չի, կամ էլ էս մի ոտանավորինը չի:

Էս մի ոտանավորն է՛լ ա ազատ ոտանավոր, այսինքը, վերլիբր ա:

Տանելի ոտանավոր ա:

Ու համ էլ – փաթիլը – փխրուն ու թեթեվ...
Բարալիկ ասեղներ, բյուրեղներ նրբաթեվ –
Կաթնագույն հեքիաթի շղարշով զարդարած,
Երկնային մեղեդի – չքնաղ ու բարդ շարած,
Թափանցիկ, արծաթե ու համ էլ – կաթե:

Ու ո՞ր ա էն հրաշք զնդանը երկնային,
Երկնքում էս գիշեր
Ի՞նչ տեսակ հրաշք քարտաշներ կային,
Կամ ո՞վ ա մոգական դարբինն էն,
Կամ էլ էն –
Ո՞ր մուրճն ու քուրան են արարե –
Արծաթե հրաշքն էս,
Կամ ո՞վ ա ըսենց կախարդե,
Բայց հե՛ս ա փաթիլը,
Փխրո՛ւն ու թեթեվ:

Ու հե՛ս ա –
Արեվի հրաթեվ թաթերը կպան,
Մահացան բյուրեղ ու ասեղ,
Ու դառան կաթիլ – արծաթե ու կաթե,
Ու մե՛կը չի՛ ասում մահախոսական,
Ու մե՛կը, ո՛չ մեկը –
Փաթիլի տնքոցը չի լսե:

58. ԷՍ ՀՆԳՕՐՅԱ ԱՇԽԱՐՀՈՒՄ
(արեվելյան մոտիվ)

Էս վերջինները շատ ուշ եմ գրե, երբ արդեն ոտանավոր գրելը համարյա թարգել էի:

Գրելը զարմանալի բան ա: Հենց գրելու ձեվը սովորար, անընդհատ ուզում ես գրես, ու համ էլ ուրիշների գրածները կարդաս: Պոտի ուրիշներին անպայման կարդաս, որ «լցվես», թե չէ՝ վռագ դատարկվում ես, կամ էլ՝ սկսում ես ինքդ քեզ կրկնելը:

Բայց հենց որ ոտանավոր գրելը թողում ես, էնքան ես դատարկվում, որ էլ գրելու ոչ հավես ա ըլնում, ոչ էլ թեմա, որ պատմես: Ու ոտանավոր գրելը ոնց որ խելագարության կամ մանիայի պես մի բան ըլնի, ու հենց գրելը թարգում ես, էս խելագարությունն անցնում ա, ու էս մանիայից էլ բուժվում ես:

Արձակը ըսենց չի, արձակով հա՛ կարաս գրես, թե որ կարգին պատմող ես, թե որ հորինող չես, այսինքը, թե որ կյանքն ես պատմում: Կյանքը հա էլ պատմելու թեմա ա տալի, ամմե՛ն, ամմե՛ն օր, ու նույնիսկ՝ ամմե՛ն ամմե՛ն ժամ:

Ես զարմանում եմ, որ մեր արձակագիրները գրելու բան չեն ունենում: Սրանք անընդհատ ուզում են՝ մի «ցնցող» բան գրեն, որտեվ չեն տենում, որ կյանքի ամմե՛ն մի ակնթարթն էլ «ցնցող» ա: Սարդանի Վիկտոր Տոսկայի ասածի պես՝ սրանք աչք չունեն: Սրանք նայո՛ւմ են, բայց չեն տենում:

Միջակ ոտանավոր ա, այնինչ Ֆիրդուսու էս երկու տողն ուղղակի հանճարեղ ա: Մեկ մեկ ասում են, թե մեր նարեկացու Մատյանը բողոք ա աստվածի դեմ: Աստվածին հակառակվելն այ ըսենց ա ըլնում, Ֆիրդուսու էս տողերի պես, ով աստվածին ոնց որ երկրորդ դասարանցու տեղը դրած ըլնի:

**Ոչ հավատ եմ քու մեջ տենո՛ւմ, ոչ բանական միտք անմահ,
Ամանչում եմ ես քու տեղակ, ո՛վ Արարիչ երկնագահ:**

Ֆիրդուսի

Որ կաս – մեզ ի՞նչ ես արե էս հնգօրյա աշխարհում,
Մենակ ցավ ես արարե, մենակ մրմուռ ես շարում:

Ո՞ր մի ծուռը դգիր դու էս հնգօրյա աշխարհում,
Փակել ես սաղ ելք ու դուռ, մարդ բալնիք էլ չի ճարում:

Ո՞ւմ ցավ ու դարդը բուժիր–էս հնգօրյա աշխարհում,
Զոռըտ տվել ես ուժիտ՝ խեղճերին ես չարչարում:

Բա զորավոր անմահը էս հնգօրյա աշխարհում,
Ոչ մի անգամ չիմանա՞, թե խի՞ ա սաղ փչանում:

Հես ա, էլ բան չի մնա էս հնգօրյա աշխարհում,
Բայց ըտենց էլ չիմանա՞ս, որ հե՛չ բան չես բաշարում:

1988 թվի դեպքերի պատմություններից ա: Սումգաիթն էր, թուրքերն էին, սաղս էլ անգիր գիդեիք, որ թուրքերի դրոշը կանանչ ա ու վրեն էլ՝ լուսինն ա, սաղս էլ մտածում էինք, որ ռուսները (կեչին) թուրքերի յանն են, որ բախտ չունենք ևն: Ու մի մոմենտ կար, երբ Գորբաչովին համարում էինք մեր ամենամեծ թշնամին:

Մեր ամենավատ սովորություններից մեկն է՛ն ա, որ մենք հա՛ էլ մեր դժբախտությունների պաճառները մե՛ր մեջ չենք ման գալի:

Մենք հա էլ մտածում ենք, որ մեր անհաջողության պաճառն ուրիշներն են: Ու հա էլ՝ հերոս ենք ման գալի (մի թագավոր, մի պրեզիդենտ, մի Քրիստոս, ևն), որ սա գա ու մեզ փրկի, ու հետո էլ գողերին ու ավագակների պատժի ու մեզ էլ պահի: Մենք չենք հասկանում, որ մեր կյանքի տերը՝ հենց ինքներս ենք:

(Մենք համաձայն ենք ու ուզում ենք, որ ոչ մեկը կաշառակեր չըլնի, բացի մեզնից. ոչ մեկը օրենքը չխախտի, բացի մեզնից. ոչ մեկը գողություն ու ավագակություն չանի, բացի մեզնից): Բայց ախր՝ օրենքը սաղի՛ համար ա, ու սաղ էլ օրենքի առաջ հավասար են: Չկա մի մարդ, ով օրենքի համար ավելի կարեվոր ըլնի, քան թե մյուսները:

Երբ ասում են, թե է՛ս մի ժողովուրդն իմաստուն ա, է՛ն մի ժողովուրդն աշխատասեր ա, է՛ն մեկն էլ տաղանդավոր ա. երբ այ ըսենք բաներ են ասում, մի շատ տարածված ու վիրթխարի սխալ են անում: Իմաստուն կամ աշխատասեր կամ տաղանդավոր կարա ըլնի մենակ ու մենակ անհատ մարդը: **Ու կոպիտ ու անթույլատրելի սխալ ա, երբ անհատ, առանձին մարդու հատկությունները վեկալում ու անհատների խմբին ու նույնիսկ մի սաղ ժողովուրդին են վերագրում:**

Ես կարամ անհատի հետ խոսամ ու իրա խելքը չափեմ, ինքն էլ իմ խելքը չափի, ես իրա՛ն համոզեմ, իրա՛ն համաձայնեմ կամ չհամաձայնեմ, բայց ես (ու ոչ մեկն էլ) չեմ կարա հայ ժողովուրդին նստրցնեմ ու հետը խոսամ, ու հայ ժողովուրդն էլ ի՛մ հետ խոսա:

Ու երբ «ժողովուրդը» միաբերան նույն բանն ա ասում, էտի չի նշանակում, որ ժողովուրդը, անհատի պես, մտածել ա ու էկե հասել ա էտ եզրակացությանը: Ուղղակի, ժողովուրդի սաղ անդամներն էլ կրկնում են մեն-մի հատիկ մի մարդու ասածը, հենց է՛ն մի մարդունը, ով մտածելու շնորհք ունի, ու էտ բանն ի՛նքն ա հայտնագործել: Երբ սաղ ժողովուրդը, օրինակ, ասում ա, թե Երկիրը կլոր ա, կրկնում ա մի Էրատոսթենեսի կամ մի Կոպեռնիկոսի ասածները:

Բայց ժողովուրդը, մեծ մասամբ, կրկնում ա ոչ թե սրանց պես իրո՛ք իմաստուն մարդկանց ասածները, այլ մեծագույն խարդախների ու ավագակների ասածները, է՛ն ավագակների ասածները, ովքեր շողոքորթելով ժողովուրդին, իրանք իրանց մարգարե են հռչակում ու խաբում են սաղին ու տանում իրանց հետեվից:

Սրանցից են՝ նապոլեոնը (ով 10 միլիոն ֆրանսիացի զոհեց՝ հանուն իրա անձնական նպատակների), Լենինը, Ստալինը (էս էրկուսն իրար հետ, հանուն իրանց անձնական շահի, ամենաքիչը 100 միլիոն մարդ կոտորին), Հիտլերը (տասնյակ միլիոնով էլ էսի կոտորեց), Մուսոլինին, Տրոցկին, Հոմմի առաջվա պապերն ու եկեղեցիների հայրերը ևն, ևն: Իսկական մարգարեներին՝ Սոկրատեսներին, Գալիլեյներին ու Ջորդանո Բրունոներին, Ադամ Սմիթներին, Լուդվիգ Միսեսներին ու Ֆրիդրիխ Ավգուստ Հայեկներին, բանտարկում կամ վառո՛ւմ են, կամ էլ բանի տեղ չեն դնում, կամ էլ ժողովուրդին համոզում են, թե սրանց ասածները սուտ են:

Լավ ոտանավոր ա:

Գարունը գունատ ա ու վտիտ:
 Տոխպ ա համը արեվի:
 Գորշ ձունը, վհատ ու անքթիթ,
 նայում ա արեվի բառերին –
 նայում ա, բայց ախր –
 Չի՛ տենում դրանք երեվի:

Լուսինը փախել ա երկնքից
 Ու մերվե կանա՛նչ կտավին:
 Ի՞նչ մնաց արեվի երկունքից.
 Բա՞ն չկա - ո՛չ մի բան տակավին:

Անուրջը,
 Արեվի վկան,
 Կամուրջ ա կավի –
 Մի բարակ մկան:

Կարիճը դառել ա հրեշտակ
 Ու լռվե երկնքի կոկորդում:
 Կավիճե մի բախտ – խաչի տակ,
 Ու էրազ – թոքախտ հիշատակ:

Կեչի՛ն ա կանանչը մկրտում:
 Վիշապը ոռնում ու գկրտում –
 Արուն ա թքում ու հոխորտում,
 Ու չկա վերջին դատաստան –

Հայաստա՛ն,
 Հայաստա՛ն,
 Հայաստա՛ն...

Գարունը վախճանվեց
 Ու գնաց ամառվա հետեվից:
 Բարուրը – ո՛խ ծնեց:
 Կարմի՛ր ա կաթում կանանչ կտավից:

Գրելու առիթը չեմ հիշում: Հիշում եմ, որ էսի համարյա միանգամից գրվեց: Ինչքան հիշում եմ ստարտը «Հետո՞ ինչ» բառերն էին: «Հինգ միլիարդը» երկիր մուլտրակի տարիքն ա:

Էսի միակ ոտանավորն ա, որ ես քեֆըս լավ վախտն եմ գրե ու համարում եմ տպելու արժան: Առհասարակ, մեկ-երկու անգամ էլ ա պատահե, որ քեֆըս լավ վախտ ոտանավոր եմ գրե: Գրելուց՝ թվում ա, թե ուղղակի հանճարեղ բան ես գրում: Առավոտը կարողում ես ու զարմանում. «Նուժելի՞» էս էշությունը ե՛ս եմ գրե»:

Իմ համար գրելը շատ աշխատատար գործ ա: Պատահում ա՝ մի 20-30 տողանոց ոտանավորը մի 100 անգամ մշակում եմ, էն էլ՝ մի քանի ամիս (ավել էլ ա ըլնում):

Առհասարակ, նույնիսկ ծխելը, ընձի շատ վնաս ա տվե: (Խոսքս առողջական վնասները չեն, չնայած սրանք երեկի ամենակարեվորն են): Երբ հլը չէի ծխում, 15-16 տարեկան վախտս, կարայի օրեկան (համարյա անընդհատ, առանց ընդմիջելու), մի 12-16 ժամ աշխատեի, օրինակ Համայնարանի գարադարանում նստած:

Հենց ծխելը սկսեցի, արդեն (սկզբում ժամը մեկ) մի կես ժամ կամ մի ժամ ընդմիջումնք էի անում, հետո էլ էսի դառավ կես ժամը մեկ, հետո էլ՝ 15-20 րոպեն մեկ: Ուրեմը, ծխելը ծուլության հարազատ ծնողն ա, ու հզոր աշխատավոր ինտելեկտուալի առաջին թշնամին ա:

Խմելն ավելի վատ ա, որտեվ էսի ստիպում ա, որ հետն էլ ծխես, ու շատ ծխես, ու հետո էլ՝ մյուս օրն արդեն չես կարում լավ աշխատես, ու տարիքի հետ խմելու հաջորդ անաշխատունակ օրերի թիվը շատանում ա:

Սրան գումարվում ա խմելու հաջորդ օրերի զոջմունքի ու մեղքի զգացմունքը, ինչը ամենածանրն ա, որտեվ խմած վախտող անպայման մի սխալ (տո՛՛ ի՛նչ մի, մի հարուր հատ), մի անհամ բան ես արած ըլնում, կամ իզուր տեղը չեղած փողոց ես ծախսում, որ օյաղ վախտողը չէիր անի:

Իմիջիալոց, Ջեկ Լոնդոնը խմելու մասին մի հոյակապ քննություն ունի, **Գարեհատիկ Ջոնը (John the Barley-ն)**, որ ջահելներն անպայման արժի, որ կարդան:

Էսի էնքան էլ լավ ոտանավոր չեմ համարում:

Հետո՞ ինչ:
Տո, թեկուզ հարո՛ւր մարգարե:

Չե՞ն սիրում:
Թո քարե՛ն, թո քարե՛ն:

Ամե՛ն ինչ – բվեճի կռինչ:

Լուսերը, ես գիդեմ, տկա՛ր են:
Աշխարհի մեղքերը, ես գիդե՛մ,
Կբերեն – հենց ընձի՛ կկարեն:

Ողջույնի ժամանակ չմնաց:
Ապագան – անհեթեթ մարգարե,
Անանուն, անունակ, անիմաց:
Ինչ կա որ, կթողես ու կէթաս:

Հետո՞ ինչ: Օրերը չիմանան – կմնան:
Մնալը – ահավոր մի կարիճ,
Մնացիր – կիմանա՛ս:

Ինչքա՞ն են համբերե, մինչե՛վ գան –
Ու դնեն հինգ միլիարդ վերջակետ:
Արծաթը արո՛ւյր ա, ցի՛նկ, մանգա՛ն,
Ողջունդ – հենց մենակ չակե՛րտ:

Տո, կգա՛ն:
Հետո՞ ինչ: Թո գա՛ն:
Դրվե՛լ ա արդեն հի՛նգ միլիարդ վերջակետ:
Ես գիդե՛մ, լա՛վ գիդեմ,
Օրերն է՛լ կդառնան դժոխքին աշակերտ:

Չե՛ս մնա – կէթա՛ս:
Հետո՞ ինչ:
Աշխարհը կմնա քնած,
Անկյունում – մի բահ,
Մի մանգաղ ու մի թաս:
Չակերտից ո՛չ մի բան չմնաց:

Երբ կայիր,
(Ես գիդե՛մ, էլ չկա՛ս),
Երբ կայիր,
Գիդեի, թե չկա՛ վերջակետ:

Իսկ հմի –
Վերջակե՛տ,
Վերջակե՛տ,
Վերջակե՛տ:

61. Ի՞նչ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կյանքը, մեծ մասշտաբով, իհարկե իմաստ չունի: Այսինքն, չկա ընենց իմաստ, ինչը սաղ մարդկանց համար էլ նույնը ըլնի ու սաղին էլ հարմար ըլնի: Ուրիշ խոսքով, ով ու ինչ էլ ասի սրան հակառակ, կյանքի մի (սաղի համար) ընդհանուր նպատակ չկա՝, չի ըլնի ու չի է՛լ էղէ:

Իրոք էլ, գիտությունն ասում ա, թե Արեվը մի օր, երեվի մի իրեք-չորս միլիարդ տարի հետո (էսի շա՛տ-շատ ա, քաղաքակրթության կյանքը սրա 100 միլիոներորդ մասից էլ ա քիչ) կայայթի, ու մեր Երկրի վրայի կյանքը լրիվ կվերանա: Էսի համարյա հաստատ ա: Բայց թե որ ըսենց ա, էտ վախտ կյանքի էտ ընդհանուր իմաստը կամ նպատակը ո՞ր մնաց: Մանավանդ, թե որ ոչ մի դրախտ ու դժոխք էլ չկա: (Թե որ սրանք ըլնեն էլ, որ արեվը պայթեց, սրանք է՛լ են վերանալու):

Կյանքի իմաստը անհատական ա: Ամեն մարդ ի՛նքն ա ընտրում իրա կյանքի իմաստը, թե որ էնքան ուժ ու խելք ունի, որ չի թողում, որ իրա կյանքի իմաստն ուրիշներն ընտրեն: Ու ընտրածդ կյանքի իմաստը կարող ա մեկից ավել ըլնի (օրինակ, աշխատանքդ, ընտանիքդ լավ պահելը ևն), ու կարող ա սրանցից մի քանիսը փոխվի: Ու սրանք փոխվում է՛լ են, անընդհա՛տ են փոխվում, բայց լավ կըլնի, որ փոխելու տերը դո՛ւ ըլնես:

Քյորփա էրեխու կյանքի իմաստը խաղն ա ու համով բաները, ու մեկ էլ՝ որ սաղ է՛լ իրան հա՛ սիրեն: Դպրոցականի կյանքի իմաստն արդեն մի քիչ ուրիշ ա: Բարձր դասարաններում էրեխեքից շատերի համար արդեն կյանքի իմաստը սերն ա կամ ինքնահաստատվելը, ևն:

Մեկը կարող ա իրա կյանքի իմաստը համարի իրա էրեխեքին կրթելն ու դաստիարակելն ու լավ մարդ դարձնելը (ինչը կյանքի հրաշալի իմաստ ա, չնայած շատ վախտ՝ անշնորհակալ ա): Մյուսը կարող ա իրա կյանքի իմաստը համարի գիտությունը, կամ արվեստը, կամ արհեստը, ևն, ևն:

Կարեվորը՝ չպտի թողաս որ քո կյանքի իմաստն ուրիշը որոշի կամ ընտրի, ու չպտի թողաս, որ կյանքդ անիմաստ անցնի, ու չպտի թողաս, որ կյանքիդ իմաստը դառնա չարությունն ու դաժանությունն ու ուրիշներին վատություն անելը:

Միջակ ոտանավոր ա:

Արեվը հմի դեղին թզուկ աստղ ա: Թե որ էտի մի օր պայթի, կդառնա կարմիր հսկա, ու իրանից էնքան լուս ու ուրիշ բան կժայթքի, որ Երկրի վրայի կյանքը լրիվ կմեռնի, ու հետո էլ Արեվը կմեռնի ու կդառնա սիպտակ թզուկ:

Կմեռնի՛:

Ու մնաց մենակ աղոթքի՛ ժամանակ:

Մեն-մի պատարագ,

Մի սաղմոս, մի երգ ու մի շարական,

Կարո՞ղ ա մի իղձ՝ սուրբ, նվիրական,

Բայց մե՛կը: Շողերը կգա՛ն:

Ու ո՞վ իմանա, թե ինչքան մնաց,

Արեվի ճակտին վաղո՞ւց ա գրած:

Կա՞, արդյոք, գոնե մի՛ բան իրական –

Իմաստ կա՞:

Կգան շողերը – վա՛ղն ու էրե՛կը,

Երկի՛նքը հալող հրե՛ շողերը:

Ասում են՝ կգա՛ն: Երեվի՛ կգան:

Թե որ ըսենց ա՛, ու էտ ժամանակ՝

Ծառ ու կարիճի ու կամ էլ իմ մեջ –

Ի՞նչ տարբերություն:

Բայց վերջին անգամ՝
Մի սաղմոս, մի երգ ու մի շարական
Ու կամ պատարագ:
Ու համբերություն:

Ի՞նչ տարբերություն:

62. ԿԵՌՄԱՆՆԵՐ

Ես իրո՞ք եմ հավատում, որ Սարուխան Հրաչը 1937 թվից հետո ծնված հայ ամենագորավոր ոտանավոր գրողն ա (իմ կարծիքով): Հրաչը նոր ճամփա բացող բանաստեղծ ա: Ինքը շատերի վրա ա ազդե: Ի՛մ վրա էլ: Բայց ավստս՝ Հրաչը կռվող չի, տուսուփուս ա: Երեվի էս ոտանավորս Հրաչի մասին ա: Կամ էլ՝ «Բոցամորուս» Հրաչի, ում «աչքն էին արեգակունք»:
Էրկուսին էլ սագում ա (հյը որ):

Հրաչ Սարուխանի մի գիրքն ունեմ, **Վկայություններ**-ը [25]: Սրա մեջ մի քանի հրաշայի ոտանավոր կա: Սրանք էնքա՛ն լավն են, որ կուզեի՝ ես գրած ըլնեմ:

Սրանցից մեկը դնում եմ ըստեղ, որ կարդացողը տենա, թե մեր գրականագետներն ու քննադատներն ինչքան խեղճ ու կրակ են: Խեղճ ու կրակ են, որտեվ թե որ խեղճ ու կրակ չըլնեին ու գրականությունից գոնե մի քիչ բան հասկանային, Հրաչին վաղուց էին հայտարարե Չարենցից հետո մեր առաջին հայ պոետը:

Մեր էսօրվա (մանավանդ պետական պատիվ ստացած) պոետների ոտանավորների տողերի տեղերը որ ուզածդ ձեվով փոխփխես (օրինակ, տների առաջի, երկրորդ, երրորդ ու չորրորդ տողերից նոր տներ սարքես նև), սրանց ոտանավորների ազդեցությունը չի փոխվի, ու կթվա, թե ստացվում ա նույն բանը (որտեվ սրանց ասածների մեջ պատմություն ու կյանք չկա): Հրաչի ոտանավորները՝ անհնար ա, որ ըսենց փոխփխես, որտեվ Հրաչը ասո՛ղ ա, պատմո՛ղ ա, ու իրա ամեն մի տողը (կամ երկտողը) մի պատկեր ա:

Հրաչի ոտանավորի աջ կողմը դնում եմ նույն ոտանավորը, բայց բառապաշարն ու կետադրությունը մի թեթեվ փոխած, այսինքը, ի՛մ ոճով: Հրաչն ի՛նքը մի անգամ ընձի ասաց, որ գրելուց ինքն է՛լ ա բարբառով մտածում, բայց ըստենց չի գրում, որտեվ ոնց որ մի տեսակ չսագի կամ ռիսկ չանի: Աջ կողմի իմ «խմբագրածը», իհարկե, էլի՛ Հրաչի ոտանավորն ա:

Առհասարակ, երբ ես ուրիշի ոտանավորն եմ կարդում, **կենդանի՛** հայերենով եմ կարդում, ում ոտանավորն ուզում ա ըլնի: Ըստենց կարդալուց էտ ոտանավորները ավելի են շահում ու ավելի մտերմիկ են դառնում, մանավանդ՝ Թումանյանի ու Հրաչի ոտանավորները: Թումանյանն է՛լ ա հաստատ «բանավոր» գրե, ինչը էրեվում ա է՛ն բանից, որ, օրինակ, **եկան** բառի պես բառերին նախորդող բառի **ը** հոդը փոխարինել ա **ն**-ով, որտեվ էս **եկան**-ը կարդացել ա՝ **էկան**:

Հրաչի ոտանավորից հետո դրածս իմ ոտանավորը միջակ ա, իսկ Հրաչի է՛ս մի ոտանավորի համեմատ՝ շատ ա թուլ:

Հրաչյա Սարուխան – ԷՍ ԳԻՇԵՐ

Տերեվների տակ թող սերը
քնի:—

Մոմերը հալվեն կաթիլ առ
կաթիլ:

Մի քիչ հաց լիներ ու մի քիչ
գինի...

Ատի՛ր, խնդրում եմ, շուրթերս
ատիր:

Լուսինն այս գիշեր ագռավ
կդառնա:

Աստղերը՝ մոշի փայլփուն
հատիկ:

Խղճմտանքներիդ հաշիվը
խառնած –

Ատի՛ր, խնդրում եմ, աչքերս
ատիր:

Թող այս գիշեր էլ սրբերն ինձ
խաբեն:

Սատանան հառնի երկնքի
պատին:

Աղոթագրքի մրո՛ւրը լափեմ...

Ատի՛ր, խնդրում եմ, մեղքերս
ատիր:

Թող զուգավորվեն ժպիտով
ցինիկ,

Ստույգ դրախտն ու դժոխքը
պատիր:

Մի քիչ հաց լիներ ու մի քիչ
գինի...

Ատի՛ր, խնդրում եմ, աղոթքս
ատիր:

Հրաշյա Սարուխան – ԷՍ ԳԻՇԵՐ

Տերեվների տակ ... թո սե՛րը
քնի:

Մոմերը ... հալվե՛ն՝ կաթիլ առ
կաթիլ:

Մի քիչ հաց ըլներ ու մի քիչ
գինի...

Ատի՛, խնդրում եմ, շուրթերս
ատի՛:

Լուսինն էս գիշեր ագռա՛վ
կդառնա:

Աստղերը՝ մոշի փայլփյուն
հատիկ:

Խղճմտանքներիդ հաշիվը
խառնած –

Ատի՛, խնդրում եմ, աչքերս
ատի՛:

Թո էս գիշերն է՛լ սրբերն ինձ
խաբեն:

Սատանա՛ն հառնի երկնքի
պատին:

Աղոթագրքի մրո՛ւրը լափեմ...

Ատի՛, խնդրում եմ, մեղքերս
ատի՛:

Թո զուգավորվեն ժպիտով
ցինիկ,

Ստույգ դրախտն ու դժոխքը
պատիր:

Մի քիչ հաց ըլներ ու մի քիչ
գինի...

Ատի՛, խնդրում եմ, աղոթքս
ատի՛:

ԿԵՌՄԱՆՆԵՐ
(Հրաչին, բայց ո՞ր)

Հետո ի՞նչ...
Քարի տակ – մի կարիճ,
Մի թռչուն, մի սողուն, մի գազան,
Խարխուլ խրճիթի մրտաված դռան մի ճռինչ,
Մոռացված պատկերներ զանազան,
Բվեճի մի կռինչ,
Հետո՞ ինչ:

Հետո՞ ինչ–
Նաիրյան մի տաճար,
Ծերացած, կորացած մի գրիչ –
Ապագա դարերին հլը որ անհայտ մի հանճար,
Նաիրյան բառերի արարիչ.
Քարուքանդ մի կանառ:
Հետո՞ ինչ:

Բաղձանքից մինչեվ տրտմություն –
Կա մենակ մի քանի միջակետ,
Ու անվե՛րջ, անվե՛րջ պարտության
Մի քանի հսկա պետություն,
Ու անհայտ, անմեկին մի չակերտ:

Հետո՞ ինչ...
Կայծակը –
Կարա՛ր շառաչեր:
Մարե՛լ ա օրերի շառաչը –
Էտ մենակ՝ առա՛ջ էր:

Ո՞ւր թեքեց
Իր ճամփեն
Հրաչը...

Սաղ կյանքս ուզեցել եմ աշխարհը ման գամ չի էղե: Ֆիզիկ էն տեղերից մեկն ա, որ կուզեի գնացած ըլնեն: Ըտենց էլ չէղաւ: Ըմի արդեն դրա հավեսն էլ չունեմ: Ուրեմը, կյանքիս իմաստը գի՛լ ա փոխվե:

Ես մի 6 ամիս Մոսկվայում եմ ապրե, երբ դիպում էի գրում, 1971 թվին (մի քանի ամիս էլ՝ 66-67 թվերին, երբ ուզում էի փոխվելի Մոսկվայի համալսարանը, ինչը չէղավ): Մեկ էլ մեկ-երկու շաբաթ Տալինում եմ էղե: Թիֆլիսում շատ եմ էղե, որտեղ կինս թիֆլիսցի ա, բայց քաղաքում շատ քիչ եմ ման էկե, որտեղ աներս ուտող խմող մարդ էր:

Աներս վեցը դասարանի կրթություն ուներ ու հավոր էլ քչախոս էր, ու չնայած շատ լավ մարդ էր, հետը խոսալու հեշ թեմա չկար: Մսի ավտո էր քշում, ու Սովետի օրերին խանութներին միս էր բաժանում: Պարզ բան ա, ջեբը հա է՛լ փող կար, ու օրվա առածն էտ օրն էլ ծախսում էր, ու քեֆն իրա տնից անպակաս էր: Ես էլ ուտել խմելու հետ հա է՛լ լավ եմ էղե, ու սրա համար էլ երբ էլ որ Թիֆլիս էթայի, առավոտներն աներոջս հետ իրա ավտոյով էթում էի հետը, իրիկունն էլ սեղան էինք նստում:

Ո՛ր մի խանութն էլ միս տանեինք, ներս էին կանչում, ու մի երկու իրեք չայի բաժակ արող էինք խմում, զակուսկով, իհարկե: Էն վախտվա զակուսկեն ի՛նչ էր որ, մենակ կայրաս ու վիչինա: Իրանք վրացերեն էին խոսում, ես էլ սուսուփուս լսում ու խմում էի: Աներս էլ ամեն անգամ ասում էր. «Բլա-բլա ունիվերսիտետի լեկտորի բլա-բլա-բլա», ու ես հասկանում էի, որ իմ մասին ա ասում, յանի ես համալսարանի դասախոս եմ այսինքը, գլուխ ա գովում:

Առհասարակ հա էլ մտածել եմ, որ վրացերենը շատ հեշտ լեզու ա. հայերեն կամ իմացածդ ռուսերեն բառերին մի հատ ի ես ավելցնում ու վերջ: Օրինակ, մի անգամ Թիֆլիսի կայարանում մի վրացու հարցրի. «ԿՐՏԻՑՈՒՑԱ, տՏՁՈՍՏՈՐՏՈ, վկ րՍՈՁԱՅԱ, չՊԱ ջՊԱՐՑ ՑցՈՍԱՅՑ?» ու էտ վրացին ասեց. «Բլա-բլա-բլա-բլա **տուայետի ռեմոնտի** բլա-բլա-բլա», ու ես վռազ գլխի ընգա, որ դրանց կայարանի տուայետը ռեմոնտ ա: Բա՛:

Ջահել վախտս մտածում էի, որ Ֆիզիկ պես տեղերը հաստա՛տ եմ տենալու: **Ֆիզի** անունի պես բառերն իմ համար կախարդական հնչյուն ունեին, ինչը հաստատ գրքերից էր: Մեծացա ու հասկացա, որ ըտենց էլ էտ տեղերը չեմ էթա, բայց հմի էտի արդեն կարեվոր չի: Ըմի ընձի համար կարեվորը մենակ էս գրածներս տեղ հասցնելն ա:

Ես հարուր տոկոս գիղեմ, որ շատ կարեվոր գործ եմ արե, ու ուզում եմ, որ ուրիշներն էլ էսի իմանան ու ասեն «ապրես»: Բայց արդեն 25 տարի ա, ինչ չեն ասում, ու երեվի մինչեվ մեռնելս (ու նույնիսկ մեռնելուցս հետո էլ) չասեն: Հետո՞ ինչ: Չեն ասում, թո չասեն: Ես հո գիղեմ, ի՛նչ եմ արե:

Թուլ ոտանավոր ա:

Դժնի տարտարոս: Բվեճ ու կարիճ:

Ոռնում են բառերը բարբարոս:

Կանանչը դառել ա քար ու խիճ:

Չասեմ էլ – հո մի օր կիմանաս –

Ծծմբե խավարի սեվ ոգուն հակադիր –

Հենց դո՛ւ կաս, հենց դո՛ւ կաս, հենց դո՛ւ կաս:

Էլ հեչ մի անգամ – չթողա՛ս ու չէթաս:

Էրազիս Ֆիզիկ էր – հեռավոր ու անհաս:

Կորալյան կղզիներ, նա՛վ ու առագաստ,

Կոկոսյան արմավներ, բանան, անանաս...

Ո՛վ Ֆի՛ջի, ավետյա՛ց դու երկիր...

Իղձ ու բաղձանքի էտ երկրում – չկայի՛ր:

Էլ չէթաս:

Երբ չկաս –

Դրա՛խտն էլ, Ֆի՛ջին էլ

Դառնում են դժնի տարտարո՛ւ:
Չէթա՛ս, ասում են:
Էլ հեչ մի անգամ - չթողա՛ս ու չէթաս:

64. ԳԱՐՈՒՆ ԷՐ

Ջահել վախտս՝ 15-25 տարեկան վախտը՝ գժվում էի ուղղակի, որ իմ ուզած աղջկերթն ընձի չեն սիրում: Ընձի թվում էր, որ դրանք չեն գնահատում իմ «եզակիությունը», իմ «անկրկնելիությունը»:

Վերնագիրը երեվի «Գարուն ա, ձուն ա արե» ողբերգական երգի ազդելով ա:

«Նախնական բույոն» – մոտ 4,5 միլիարդ տարի առաջ Երկրագունդը ահավոր տաք հեղուկի գունդ ա էղե: Հետո սառել ա, պնդացե, էրեսի կեղեվը կնճռոտվե ու ծալ-ծլվել ա, առաջացել են դար ու փոսերը՝ սար ու լեռներն ու վիթխարի խոռոչները:

Երկիրն էնքան տաք ա էղե, որ մի կաթիլ ջուր, պարզ ա, չի էղե՝ ոչ մի տեղ: Հետո առաջացել են ջրի մոլեկուլները, ու հետո էլ՝ գոլորշին:

Էս գոլորշին էլ խտացել ա ու դառել ա ամպ: Հետո Երկիրը մի քիչ էլ ա սառե, էնքան, որ անձրեվ ա էկե՝ տաք, եռման անձրեվ: Ու փոս ու խոռոչները լցվել են, դառե ծով ու օվկիանոս:

Էս անձրևն էկել ա եսիմ քանի միլիոն տարի: Անընդհատ անձրև, հետո էտ ջուրը գոլորշիացել ա (ոչ լրիվ), նորից ա դառե ամպ, ու հետո՝ նորից անձրև: Ու ըտենց՝ երեվի մի քանի տասնյակ միլիոն տարի: Ուրեմը, էս անձրևն անընդհատ ողողե լվացել ա Երկրի էրեսն ու ինչ քիմիական նյութ ասես, որ չի լցրե համաշխարհային օվկիանոսը: Ու էս օվկիանոսը մի կաշա, մի բույոն ա դառե, ու դրա մեջ ինչ (քիմիա) ասես, որ չի էղե: Դրան ավելացրեք միլիարդներով կայծակ, հրաբուխ ու երկրաշարժ:

Ու հավանական ա, որ առաջին վիրուսներն ու միաբջջի կենդանիները հենց էտ «նախնական բույոնի» մեջ են առաջացե, սրանցից էլ առաջացել են մնացած կենդանիներն ու բույսերը, ու մենք էլ հետները, բայց մենք առաջացել ենք մենակ էս վերջերս, երեվի մի 5-7 միլիոն տարի առաջ: Իսկ էս ասածս պատմությունը տևել ա մոտ մի 4 միլիարդ տարի:

Լավ ոտանավոր ա:

Դե ասա՛, արեվը խի՞ ա տաքացնում.

Խի՞ ա սառուցը սառըցնում:

Հա էլ թա՛ց են էղե ծովի ջրերը:

Քու համար – տկլոր եմ: Տարե՛լ են լուսերը:

Ասում ես – իմ համար չկա՛ սրբություն,

Որ ընձի – պտի վառե՛ն, քցեն գեհե՛նը.

Որ ամառվա մեջ չկա նրբություն:

Ես գիղեմ: Գարունը ընձի գերե՛լ էր:

Դժվա՞ր ա – սպանես մի ջորի կամ մի ձի:

Չորս յանը – սա՛ղ էլ մեռել են: Ես էլ եմ մեռել:

Դիա՛կ եմ կենդանի մի անձի:

Ես գիղե՛մ: Գելերը մի գելի կերե՛լ են:

Նախնական բույոնի ո՞ր բջջից,

Ո՞ր մեկից էր բուսե մեր սերը:

Էս կեղտոտ աշխարհի ո՞ր բջջից –

Վատն եմ ես,

Որ ջնջում ես հույսերս:

Գարուն էր:

Հա՛մր էին գետի պղտոր ջրերը:

Ամպերը երկնքում գրում էին «ոչ»:

Քամին քրքրում էր փոշու ջղերը:

Ես գիդե՛մ –
Սառո՛ւց էր կապե աշխարհը ամբողջ:

65. ՍԱՌՑԱՆԱԽՇԵՐ՝ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՇՈՒՇԵՔԻՆ

Փոքր վախտս լուսամուտների ձմեռվա նախշերի վրա շատ-շատ էի գարմանում: Հմի, երբ արդեն տարիքս առել եմ ու քաղաքում եմ ապրում, դրանցից էլ չի ըլնում, որտեղ տները գիշեր ցերեկ տաքացնում են, կամ էլ երեկի է՛ն ձեզ ցուրտ չի անում, որ էտ նախշերն է՛լի ըլնեն: Էտ նախշերն ուղղակի սքանչելի էին ու անկրկնելի: Հետաքրքիր ա, գյուղում էտ նախշերը հմի է՛լ են ըլնում, թե՞ չէ:

Քաղաքի էրեխեքը շատ բանից են զուրկ. ո՛չ էս նախշերն տենում, ո՛չ առավոտվա շաղ ու ցողն ու եղամը, ո՛չ գարնան գալն են լրիվ տենում, ո՛չ աշնան դաշտ ու այգիները, ո՛չ ձմռան ձնով ծածկված սար ու դաշտերը, ո՛չ այգի ու այգեփոր, ո՛չ հունձ ու այգեքաղ: Ոչ էլ տարվա էս տարբեր եղանակներին հելնում են ու թափառում սար ու ձորերով, ոչ էլ գետ ու առու են մտնում: Բայց ախր էս բաներն է՛լ են կրթություն, ու կարող ա՝ սրանք կրթության ամենակարեվոր մասն են: Հազար ափսոս:

Ինչքան էլ որ հաստատ գիդեմ, որ կյանքը վերջի հաշվով անիմաստ ա, մեկ ա՝ էլի գարմանում ու մտածում եմ, ախր՝ խի՞ ա անիմաստ, բա՞ էս սաղ ինչի՞ համար ա: Էսի «արատավոր օղակ» ասածի իսկական մի օրինակն ա: Մարդ որ սրա մասին երկար մտածի՝ կգժվի:

Սրա համար էլ պոի էնքան էլ լուրջ չմտածես: Կյանքն էնքան էլ կարճ չի: Ու հետո՛ կյանքի մեջ իմաստ դնողը՝ հենց դո՛ւ ես, ի՛նքըտ ես: Դի՛ր ու ապրի՛:

Ես ոչ մի տեսակ աստծու էլ չեմ հավատում, ու երբ աստծու անունն եմ տալի, նկատի ունեմ կամ բնությունն ու պատահականությունը, կամ էլ **վերացական** հարց եմ տալի:

Զհավատալը հլը որ չի խանգարե ընձի, որտեղ հլը 15-16 տարեկան վախտս հաշտվել եմ, որ սաղ մարդկանց պես ե՛ս էլ եմ մի օր մեռնելու, ու որդերն ընձի է՛լ են ուտելու: Ուրեմը, թե որ մեռնելն անխուսափ ա, վախենալն անիմաստ ա, իզուր տեղը քե՛զ ես ներվայնացնելու ու չարչարելու:

Հակառակը, չհավատալն ստիպում ա, որ հույսըս չդնեմ էն մի յանի աշխարհի կյանքի վրա, ու ինչքան կարամ, կյանքս, է՛ս աշխարհի նաղը կյանքս, իզուր չանցկացնեմ:

Հավատացողները հույսները դնում են է՛ն մի կյանքի վրա, բայց ախր ի՞նչ երաշխիք կա, որ էտ դրախտ ու դժոխք ասածը, կամ էլ՝ էտ անմահ հոգի ասածը կա: Բա որ չէղա՞վ:

Կարող ա՝ մեռնելուս վախտը գա, ըսենց չմտածեմ, բայց դժվար թե:

Առհասարակ, երբ հլը մարդու մահը հեռու ա, իրան թվում ա, թե կյանքն անվերջ ա: (Ու Էսի շա՛տ լավ ա. ըսենց որ չըլներ, ապրելը դժոխք լըլներ): Երեկի սրա՛ համար ա Սարոյանը մեռնելուց առաջ ասե.

– Ես հա՛ մտածում էի, թե մահը ընձի համար բացառություն կանի, բայց չարեց:

Սրա բառապաշարի մասին տես 32-րդ, 69-րդ ու 71-րդ ոտանավորների էսենները:

Վատ ոտանավոր չի:

Իրեք լուսամուտ, տասնույթը շուշա
Ու հլը մի տես, թե ոնց ա նախշե՛ ...
Ու թե բյուրեղյա հեքիաթը կաթե
Պտի տեվեր հենց մի՛ քանի վարկյան,
կամ մի քանի ժամ –
Արժե՞ր, որ Տերը...
հելներ ու էսքան չարչարանք քաշեր...

Ու ի՞նչ խորհուրդ կա կատարյալի մեջ բոպեական,
Ու առհասարակ, գոնե հեչ մի տեղ խորհուրդ-իմաստ կա՞.
Գուցե՞ իմաստը դժոխայինի ու չարի՛ մեջ ա –
Կամ էլ տգեղի – ժահրոտ, այլանդակ:

Շուշեքի վրա, կամ ուրիշ մի տեղ,
 Ով ի՛նչ էլ գրի կամ էլ նկարի,
 Օրինակ, ասենք, Մեծն Արարչի գերդիֆերենցիալ,
 Կատարելագույն մի հավասարում,
 Իբր գուշակող կյանքն ամեն վարկյան,
 կամ էլ ամեն ժամ –
 Մեկ ա, ըլնելիք ուղին աշխարհի կամ էլ հյուլեի –
 Չի՛ ուղղագծի կամ էլ երկարի,
 Ու չի հայտնվի խորհուրդ կամ իմաստ
 Վիթխարածավալ տիեզերական էս ավագանում:

Ու դժնին, ժպիրհ ու ժահրածնունդ,
 Համ էլ այլանդակ,
 Իրա մեջն ունի իմաստ ու խորհուրդ
 Մենակ է՛ն չափով ու մենակ էնքա՛ն,
 Ինչքան վսեմը կատարելագույն –
 Ու մենակ էսքա՛ն:

Ո՞ր մեկս կարա
 Ասի, թե ի՞նչ ա իմաստը ինքնի՛ն,
 Կամ իմաստ ունի՞ ի՛նքը՝ իմա՛ստը,
 Կամ թե ի՞նչ բան ա ի՛նքը՝ խորհո՛ւրդը,
 Կամ խորհրդրդի մեջ կա՞ ըսկի խորհուրդ:

Բայց մեկ ա, էսօր, լո՛ւռ ու անմռունչ,
 Դեմս են էլի՛ իրեք լուսամուտ, տասնութը շուշա,
 Ու վրեքը՝ նախշ, անթիվ ու անվերջ,
 Միաձո՛ւյլ, կաթե՛, անվերծանելի՛,

Ասես՝ Արարիչն ի՛նքն ա մոլորվե
 Խորհուրդ-իմաստի առեղծվածի մեջ:

Գլուխ 9 ՄԵՐ ԱՐԱԾԸ ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ Ա (Ղ. ԱՂԱՅԱՆ)

Ահա թե ինչ ա ասում Ղազարոս Աղայանը «Աղբյուրի» 1888 թ. 12-րդ համարում [5, էջ՝ 216-222] (թավատառերն ու միջակ փակագծերի մեջիններն ի՛մ ավելացրածներն են, ուղղագրությունն Աբեղյանինն ա)։

«Մի ազգի գրականությանը կարող են բառեր տալ նույն ազգի բոլոր բարբառները, և մինչև անգամ ոտար լեզուները ևս, բայց նրա **քերականությունը** բոլոր բարբառներից միայն **մեկը** կարող է տալ, վասնզի **ամեն բարբառ ունի իր առանձին քերականությունը**, և այն [էլ] - **շատ ճիշտ ու կանոնավոր**»:...

«Վորպեսզի գրական լեզուն և՛ վորևե բարբառի չափ ճիշտ ու կանոնավոր լինի, եղած բարբառներից **միայն մեկի** քերականությանը պետք է հպատակվի: ... Ու, եթե մի անգամ ընդմիջտ միայն մեկ բարբառի քերականություն ունենանք մեզ առաջնորդ և **ոչ մի քանի** [բարբառի], այնուհետև ամեն մի դժվարություն կվերանա մեջտեղից, ու մեր գրական լեզվի համար կունենանք կենդանի և ժողովրդական քերականություն, լրիվ կանոնավոր, ուրեմն և ուսանելու համար շատ հեշտ:...

«Հիրավի՜ ինչի՞ նման կլինի մեր գրական լեզուն, եթե նրա բայերն այնպես խոնարհենք, ինչպես խոնարհում են Թիֆլիսի բարբառում, անուններն այնպես հոլովենք, ինչպես հոլովում են Արարատյան բարբառում, որոշ և անորոշ հոդերը վանեցու նման գործածենք, լեզվի ճարտասանությունը գերմաներենից փոխ առնենք, տրամաբանությունը՝ ռուսերենից: Եվ մեզանում այսոր, **առանց չափազանցության ասած**, ճիշտ այսպես են վարվում: Եվ առավել ևս՝ ավելի՜ վատ, վորովհետև նույնիսկ բայի մի ժամանակը մի՛ բարբառից են վերցնում, մյուսը՝ մյուս, և գործի չեն դնում մեր բայերի այն բոլոր ձեվերը, **վորոնք ռուսաց լեզվումը չկան, ինչպես չեն գործածում մեր այ՛ն դերանունները, վորոնք նույնպես ռուսաց լեզվումը չկան**: Առհասարակ մեր բուն ազգային **վոճերը մնում են անգործադրելի**:...

«Եթե ռուսները մեր պես չեն ասում, այլ բուն ռուսերեն, ինչու՞ մենք էլ բուն հայերեն չասենք, այլ [փոխարենը] ռուսերենի նման [ասենք]:...

«Արդյո՞ք այսպես են վարվում և Գերմանիայում կամ մի ուրիշ աշխարհում, յես չգիտեմ, բայց գիտեմ հաստատ, վոր նրանք խելոք մարդիկ են, և **անկարելի է, վոր մեր նման խելագարություն անեն**:...

«Թե աշխարհաբարի քերականությունը վո՞ր բարբառից պետք է վերցնեն ու ինչպես – այս մասին մի վորոշ գիտակցական գաղափար չունեին ու **չունեն մինչև այսոր էլ**: Թեպետև, այսուամենայնիվ, մենք Արարատյան բարբառի քերականությանն ենք հետևել ու ըստ արտասանության՝ դրա՛ ուղղագրությանը [այս երկուսն էլ՝ կիսատ-պռատ], բայց այս արել ենք բնագործ և ո՛չ գիտակցաբար:...

«Մեր նոր սերնդի անտարբերության պատճառը հանդեպ մեր գրողները [Խ. Աբովյանն ու Պ. Պռոշյանը], մեր նոր գրականության սխալ ընթացքն է – այն բանասերների [սխալ ընթացքը], որոնք հույունքն ադամանդի տեղ են ընդունում ու ադամանդն [էլ]՝ հույունքի, որոնք հանճարներին բան-ճար ու բան-ճարներին հանճար են շինում: Սթափվե՛ք, սթափվե՛ք, պարոններ, ձեր ցա-

նած սերմերի պտուղները հասել են արդեն, ճաշակեք ու տեսե՛ք, քա՞ղցր են արդյոք, թե՞ դառն»։...

Սրանից մի տարի առաջ, նույն «Աղբյուրում» Աղայանը գրում ա [Ib., 246].

«Գավառալեզվի (բարբառի), հորինիչը՝ արդարև ժողովուրդն է, ու նա հորինում է անսխալ, կանոնավոր, ներդաշնակ: Նա նույնիսկ բառերի աղճատմունքներն էլ է կանոնավոր անում, հնչյուններն էլ է կանոնավոր ու ներդաշնակ փոխում: Բայց այսու ամենայնիվ նա [բարբառը] չէ գրական լեզու:

«Բարբառը հորինվում է բնագոյով [այսինքն, բնական ձեվով, առանց մարդկային՝ գիտակցական ծրագրի], մինչդեռ գրական լեզու հորինելու մեջ գիտակցություն կա, ու այդ գիտակցությունը երբեմն հասնում է սուպռ [զըռ] ու խորին սոցիալության: Այս սոցիալության մեջ ընկղմվում են բոլոր այն գիտնականները, վորոնք իրենց լեզվագիտության վրա հույս դրած՝ ապագայի լեզվի վրձուն խորթ և ոտար վրձեր ու բառեր են գործ դնում, վորով հորինում են մի... այլանդակ հրեջ»:

Էսի, անկասկած, ճիշտ ա ու անվիճելի: Ծիշտ համ էլ, որ բարբառը գրական լեզու չի, որովհետև բարբառի բառապաշարը խիստ աղքատ ա, ու պիտի լրացվի լեզվի ավելի հին վիճակներից, թե որ սրանք կան, ու մեկ էլ՝ օտար լեզվական փոխառություններով: Ուրիշ ելք չկա ու չի էղե:

Մեր դժբախտությունն էլ հենց էնի՛ ա, որ Ղազարոս Աղայանի մոտ մի դար առաջ ասածները՝ էսօր է՛լ են ճիշտ: Սրա օրինակներից մի ուրիշ տեղ [16, 19] շատ եմ բերել, բայց երկուսն էլ ասեմ: Վերջերս մեր գրական ոճերը փորձ են անում հարություն տալու մեր հնագույն սեռական հոլովի մի քանի ձեվի:

Ասում են.

մամլո ասուլիս, սգո թափոր, Հայաստանյաց եկեղեցի, ուսուցչաց սենյակ, ներքին գործոց նախարարություն, փոխանակ՝ մամուլի ասուլիս, Հայաստանի եկեղեցի, ուսուցչանոց, ներքին գործերի նախարարություն ևն:

Որտեվ սրանց թվում ա, որ «յոյժ» գեղեցիկ ոճով են խոսում: (Բախտ ունենք, որ սրանք շատ քիչ գրաբար գիտեն, թե չէ՝ սրա պես բաները շատ-շատ կըլնեին, որտեվ, ոնց որ փորձն ա ցույց տալի, լեզվական թիթիգությունն ահավոր վարակիչ ա): Մեր հաղորդավարներից շատերը, էլի էս վերջի 22 տարին, ամսաթվերն ասելիս, ամսի անունը դնում են ուղղական հոլովաձեվով, փոխանակ՝ սեռականի. **Հունվար 27-ին, փետրվար 14-ին:**

Էսի իհարկե հայերեն չի, ու հենց սրա համար էլ տգեղ ա, որտեվ մենակ իրա՛նք են սրա պես ասում ու մեկ էլ՝ անգլիացիք, բայց անգլերենով, ու էսի էլ՝ այն պատճառով, որ անգլերենը ուղղակի հոլովաձեվ չունի (չհաշված՝ ուղղականը):

Մեր գրական ոճերն ուղղակի հեղեղված են սրանց պես անտեղի բաներով, ու մեր մտավորականների մեծ մասը համարում ա, որ էս անտեղի բաները ոչ միայն չքնաղ են, այլև բարձրագույն ճաշակի նշան են:

Բայց Աղայանը, մնացած համարյա սաղի պես, չգիդեր, թե բարբառի քերականությանն ու բառերին ինչքան տեղ պիտի տրվի: Էսի չգիդեր համ էլ Աբովյանը, ով իր **Վերքի** սկզբում ասում ա.

«Էս ա պատճառը, որ մեր նոր լեզվի կեսը Թուրքի ու Պարսից բառ ա: Բայց սրա դեղն էլ հեշտ ա, քիչ քիչ կարելի ա իստակել, երբ որ ազգը ուսումն առնի ու իր լեզվի բառերը քիչ քիչ հասկանա»:

Աբովյանի էս մի երկու տողի սխալ միտքը հետո դառավ մի հսկա «ծրագիր», հյուսիսյանների ծրագիրը, ինչը ստիպեց, որ հրաժարվեն Աբովյանի է՛ն լեզվից, ինչով որ ինքը գրել ա իրա **Ջանգուն**, ու ինչի լեզուն իրոք որ չքնաղ ա (է՛ն օրերի համար):

66. ԱԽԻ ԽԻ՞ ԳՆԱՑԻՐ

«Սիրում եմ» պատմություններից ա:

Սկսվել ա առաջին տողից:

«Ամանոր» բառը չեմ սիրում, բայց պատճառ էլ չկա, որ չգործածեմ: Առհասարակ, ես ասում եմ, որ առաջնությունը, ինչքան հնարավոր ա, պտի տրվի բարբառի կենդանի բառերին, սաղին էլ, որտե՛վ դրանք հայերեն են ու հայերեն են մենակ է՛ն պատճառով, որ էրե՛վանի բարբառով խոսացողների մեծ մասը բանըցնում ա դրանք: Հայերենության ուրիշ չափանիշ չկա ու չի էղե:

Ու ես համոզված եմ, որ է՛ն մարդը, ով համառ-համառ նոր տարի բառերի տեղը անպայման ասում ա՝ ամանոր (ու հլը նոր տարվա բառերի տեղն էլ՝ ամանորյա, ինչը սխալ ա, որտե՛վ պտի ըլնի՝ ամանորի, ոնց որ նոր բառի սեռական հոլովաձեղն ա), ուղղակի թիթիզություն ա անում:

(Հին հայերենն ուներ ամ բառը, ինչը չնայած բնիկ հայերեն ա, բայց արդեն մեռած ա: Սրա տեղը վաղուցվանից բռնել ա՝ տարի-ն, ինչի ծագումը անհայտ ա: Ամ բառից բարբառների մեջ կա՝ ամրըտ/ումբրըտ երկար ընի (տարիներդ-կյանքդ երկար ըլնեն) մաղթանքն ու գրական ոճերի նորաստեղծ ամյակ-ը: Լեզուն քմահաճ բան ա, որ պայթես էլ, քեզ չի լսի, թե չուզեց: Թե լեզվին ստիպես, որ փոխվի, կփոխվի՛, բայց քու ուզած ձեղնով չի փոխվի, կէթա մի ուրիշ յան):

Լավ ոտանավոր ա:

Գնացիր մի՛ վարկյանով –
Տեվեց – հարո՛ւր հազար դար:

Էս անձրեվն էլ – ամեն օր,
Տարվա վախտը – անարդար՝
Հա՛ գարո՛ւն ու հա՛ գարո՛ւն –
Ու պարտքե՛րս – հին ու նոր:

Ասիր – կգաս նոր տարուն:
Կարող ա՛ գաս, բայց դե ե՞րբ,
Ի՞նչ պայմանով, ինչքանո՞վ:

Մի բան անեմ, ամեն կերպ,
Պարտքերս տամ՝ հին ու նոր:

Եղանակը անարդար,
Էս անձրեվն էլ – ամեն օր –

Մնաց ուղիղ հազգա՛ր դար
Մինչեվ ձո՛ւն ու ամանոր:

ԱՌ ՈՐԴԻ ԵՒ ՀԱՅՐ ԻՒՐԵԱՆՑ
(Աստվածային ողբերգություն)¹

67. ԱՌ ՈՐԴԻ ԻՒՐ

Գրելու առիթը John Boyd-ի *The Last Starship from Earth* ֆանտաստիկ վեպի մի մի նոտանավորն ա էղե: Boyd-ն ասում ա, որ ինքն էտ ոտանավորը մոնտաժ ա արել Միլթոնի, Յեյցի (Yeats-ի) ու Շելլիի (Shelly-ի) տողերից ու երեվի ուրիշների տողերից էլ: Ես էլ մտածեցի, որ իրավունք ունեմ ե՛ս էլ իրանի՛ց մոնտաժ անեմ, որտե՛վ չկարացի թարգմանեմ (չնայած առաջի տան մենակ մի էրկու իդեան եմ վեկայե):

Ու չնայած մի 3-4 տողի իդեան Բլեյքից ա (կամ էլ՝ Միլթոնից) մեկ ա՛ լրիվ ուրիշ ոտանավոր ստացվեց: Էջատակին մի քանի ռեբուսը բացել եմ:

Մոտ տարի ու կես հետո սրա շարունակությունը գրվեց:

«Շնչահեղձ Յերորթ» ասելով՝ նկատի ունեմ, որ մարթ արարածը Յերկիրը համարյա կերել ա: Տրոյականի մեջ Ագամեմնոնը Աքիլեսից խլեց Աքիլեսի հարճը: «Ժայռին խաչածն» իհարկե՛ Պրոմեթեոսն ա: «Խումարը» հարփածությունն ա:

Սրանցից 67-րդը գրել եմ **մի հնչյուն՝ մի տառ ու մի տառ մի հնչյուն** ուղղագրությունով, փորձի համար: Օրինակ, որ ըսենց գրենք, այսինքը, ի՛նչ լսում ենք, էտի էլ՛ գրենք, ճիշտ չի՞ ըլնի: (Էսի համարյա Աբեղյանի ուղղագրությունն ա, թե որ բաղաձայն տառերի ուղղագրությունն ու գաղտնավանկ **ը**-ի գրելը չհաշվենք: Մեկ էլ՝ Աբեղյանը **է**-ն ու **օ**-ն հանել էր:

Համոզված եմ, որ հգոր ոտանավոր ա:

*Since you are tortured on a rack of time compressing...***John Boyd**

Որ չըպըխտորես էյության անմեղ ախպուրը վըրհիտ –
Գյուլլելու եմ քեզ՝ հոքիս, է՛ս ա օրհնանքըս վերչին,
Չե՛մ թողնի մըտնեն՝ ո՛չ պալատ, ո՛չ խըրճիթ,
Թո՛ւյն եմ խառնելու նեկտարիտ փարչին:

Հըլ է՛ն վախտ էր Օցն² ասում, երփ ծպտուն էլ չըկար.
«Հոռացողը կխաչվի, թե կողի ընգավ երկար,
Որ թե էկող ըլներ՝ առանց խաչելո՛ւ էլ կըգար»:
Կանչո՛ւմ էյի ամեն օր, ախըր խի՞ չէկար:

Ասում էյի՛, չէ՞. «Մի՛ հավատա ամբոխի բառաչին,
Վոր ասուպային խումարըտ անցավ՝ կդառնաս տըկար» –
Ասում էյի՛ –
«Յերո՛րթն³ էլ կմերվի Ծիր-Կաթնի անլըռելի հառաչին»:
Ասո՛ւմ էյի: Ասում ու ... կանչո՛ւմ ամեն օր: Բայց է՛լի չէկար:

Լավը չի՛ մընում լավ, չարը՝ չար, ու չըկա՛ միչին:
Զուգահե՛ռն էլ ա խաչվելու, թե գընաց երկար,
Աշկը մենակ անճա՛րը⁴ կըտընգի աղքատի քրչին –
Կանչո՛ւմ էյի ամեն օր, ախըր խի՞ չէկար:

Ու էս ի՞նչ օրը քըցիր խարխափող խեղճին.
Խելագար ու քյոռ ու քյառ – էթում են – մոլոր ու կամկար,
Մըմընջում⁵, գառանցում, ճակատները խըփում քըրչին –
Աշկները – քու գալուն կամ Յերորթի վերչին –
Ու կանչում ու ճըչում ամեն օր, որ էլի՛ չէկար:

Շընչահեղձ Յերորթի ուսին՝ կապտած ու դիյակ մի Լուսին:
Բա Աքիլեսը ձեռը կըքըցե՞ր ուրիշի հարճին:
Ժայռին Խաչածը⁶ լա՛վ գիղեր – կմնան էլի արեվի՛ հույսին –
Բա դո՛ւ, դո՛ւ ախըր...
Թույնըտ խի՞ խառնիր էտ գուլա՛լ ջրի փարչին:

Անցավ արթեն –
Ասուպային խումարըս անցավ ու յե՛ս էլ եմ դառնում տկար,
Հես ա՛ այ, քիշ մնաց – մերվում եմ պարուրաձեվ պոչին⁷.
Զուգահեռն է՞⁸ խաչվեց, որտեվ էլ արթեն՝ տե՛ղ չկար,
Ու ականջ դընող չեղավ – ճմարիտ ու անպաճույճ կոչին:
Հոքնել եմ կանչելուց: Հալ – չըկա՛ էլ: Բայց ախըր խի՞ չէկար:

¹ Էս ոտանավորը լրիվ էրեվանի բարբառի արտասանության ուղղագրությունով ա գրած:

² Օցն... – այսինքը, նախասօը՝ կուցիֆերը:

³ Յերո՛րթն – Արեվից հաշված՝ յերորթ մոլորակը Յերկիրն ա:

⁴ անճարը – մարթկության սաղ խոշոր քարոզիչների վերջին միտքը էնի ա էղե, որ խուզեն անթիվ ու անհամար խեղճ ու ախքատ միամիտներին:

⁵ Մըմըջում... – աղոթելու ձեվերն են:

⁶ Ժայռին Խաչածը – Պրոմեթեևսը:

⁷ Մեր Գալաքտիկան պարուրաձեվ պոչ ունի:

⁸ է՝ – էլ:

68. ԱՌ ՀԱՅՐ ԻՒՐ

Մի գիշեր տեղաշորիս մեջ Ռաբլեին էի կարդում: Ժամի իրեքն էր, մեկ էլ ծանոթագրությունների մեջ կարդացի Հիսուսի խոսքերը. «Խի՞ ընձի թողիր մեն-մենակ» (սրանք դրել եմ ոտանավորի դեմը): Վռագ հասկացա, որ 65-րդի «պատասխանն ա»: Վեր կացա տեղիցս, վռագ-վռագ գրեցի՝ ինչը որ էկավ: Հետո արդեն մի 15-20 վարյանտ էլ գրվեց, մինչեվ պրծավ:

Ամոնիակն ու մեթանը թունավոր գազեր են: Լուսաբերը՝ Լյուցիֆերն ա:

Լյուցիֆերի կերպարը ստեղծվել ա երեվի թյուրիմացությունից: Ըստ ավանդույթի՝ Լուսաբերը գլխավորեց Աստծու դեմ ապստամբած հրեշտակներին: Լուսաբերն իբր թե ուզեցավ դառնա Աստծուն հավասար, ու Աստված էլ սրան խփեց քցեց դժոխքը:

«Բեղավոր ու անբեղ» ասելով՝ նկատի ունեմ չար բռնակալներին (Հիտլերին, Ստալինին («Պողպատիցին»), նապոլեոնին ևն): Արուսը Վեներան ա, Սահակը՝ Աբրահամի որդի Իսահակը:

Միջակից մի քիչ ա լավ:

–...է՛ղի, է՛ղի, դամա սաբաքթանի՞

(որ թարգմանի.

(Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս):

(Մատթեոս, ԺԵ; 32)

Օրհնանքդ հո օրհնանք չէր, անե՛ծք էր՝ բացեիբաց,
Ու նույնիսկ էտ քոսոտ խրճիթն էլ – աչքիտ շա՛տ էրեվաց,
Ու ամեն ինչ... հարամ ու քանդուքարափ արիր,
Ո՛չ ծխնի թողիր, ո՛չ շառնիր,
Հարամ արիր, հարա՛մ – ապագա ու ապառնի,
Հո մենակ նեկտարի՞ն չէր, որ թույնըդ խառնիր:
Է՛: Ի՞նչ ասեմ ախըր՝ ըտենց բաներ անողին –
Բաց ու արձակ դաշտերի օձն է՛լ չի կծում ջուր խմողին:

Դարդըտ 3-րդն էր մենակ, որ հանկարծ ծուռ ճամփով չէթա:

Ընձի՛, ընձի՛ չթողայիր դե:

Բռնե՛իր, կապե՛իր, քցեի՛ր վերեվները մի սենյակ,

Տենում էիր չէ՞, որ կամաց-կամաց էթում եմ Գողգոթա:

Մեղավորը դու՛ ես: Խի՞ ընձի թողիր մեն-մենակ:

Թո է՛ն գլխից էլ – ինքս ընձի՛ մնայի:

Դու՞ չէիր, որ էկար ու ասիր, թե –

– Վերջը, տե՛ս, քեզ քթա:– Հետո՞ ինչ, որ քթար:

Ախըր ի՛նչ ասեմ, է՛հ:

Ի՛նչ էլ որ ասեմ, մեկ ա,

Դու հա է՛լ հավան ես մենակ քո՛ւ արածին:

Արածդ էլ՝ մենակ ո՛խ ու թշնամա՛նք ու քե՛ն:

Որ մե՛ռնես էլ՝ ուզածդ ո՞վ կըտա,

Կամ մեր պեսերից էտ ո՞վ ա,

Որ ծնված օրվանից – հերո՛ս ա կամ տիտան:

Մեր պեսին՝ ո՛չ լետենանտ են տալի, ո՛չ կապիտան,

Ու ո՛չ էլ գեներալ ու թթվածին –
Մենակ սալդաթ, ամոնիակ ու մեթան:

Ասում ես՝ «մեղք են», ասում ես՝ «3-րդին գթա»,
Բայց 3-րդն ընձի գթա՞ց, որ ես էլ՝ իրան գթամ:
3րդի հերն է՛լ անիծած – մե՛կը չկա՛, որ ընձի՛ գթա,
Ու համ էլ՝ Ժայռին Խաչածը – գթաց մի անգամ,
Բայց դու գթացի՞ր իրան:

Լուսաբերն էլ ուզեց դառնա կապիտան –
Ու ի՞նչ արիր իրան:
Բա կբռնեն ու հույսերի գանգին էտ ձեզ կտա՞ն:

Ասում ես՝ «դու՛ ես մեղավոր»: Տո՛ խի՞ եմ մեղավոր:
Սրանց կարա՛՛ արուն-արցունք լացըցնի –
Պողպատե կամ կավե ամեն մի անբեղ ու բեղավոր,
Ու միլիոնից մեկն ա, որ – քյոռ ու քյառ չի ծնվում:

Աքիլեսը ձեռ չէր պարզի, գիդեմ:
Աքիլեսներին՝ կրակի՛ մեչ են կոփում ու սնում,
Ու զուգահեռն էլ – խաչված ա էղե է՛ն գլխից
Ու հա՛ էլ ըստենց – խաչված ա էթում,
Բայց ու՞ր էր էտ անտեր կրակից –
Խեղճ ու կրակ նազարեթում:

Ժայռին Խաչածը, պարզ բան ա, գիդե՛ր:
Ու քեզ էլ գիդեր:
Բայց ախրը ի՞նքն էր զորավոր,
Թե դո՞ւ էիր ավելի զորավոր –
Դրանց խի՞ էիր թողե անկրակ ու որփեվեր,
Կամ խի՞ թողիր, որ նորից մնան մենակ արեվի՛ հույսին,
Ու համ էլ՝ խնձորով Պարիսի,
Խի՞ կռվըցըրիր Հերային ու Արուսին,
Ու իրար վրա քսի տվիր՝ Աթենասին ու Արեսին:

Դու հա՛ էլ՝ տեր ես կայնե՛ մարդագել ու ստահակին:
Բա մա՞րդ էլ բռնի ու մատաղ անի՛ իրա հարագատ տղու՞ն:
Թասի միջինը հո՛ քո՛ւ լցածն էր – լեղի ու թույն ու աղո՛ւ:
Ու Տե՛ր մեր, որ տեր չէ՛իր կայնելու,
Խի՞ բռնիր ու բըստրիր էտ առաջի ձուն,
Ու դու՞ չէիր, որ վեկալար ու ըստիպիր բիձուն,
Որ տանի ու մատաղ անի Սահակին:

Ասում ես – «ականջ դնող չէղավ՛ ճշմարիտ ու անպաճուճ կոչին»:
Կոչըտ մենակ էն չէ՞ր որ
Սուրըտ ահավոր –
Ճոճես ու գոռգոռաս ու անընդհատ գոչես,
Որ, – Չպըտի ունենաք ուրիշ ո՛չ մի նպատակ, –
Որ, – Թեկուզ նահատակ,
– Հանգարծ ընենց չընի՞, որ ուրիշի հետեվից էթաք, –
Որ, – Մենակ ու մենակ՛ ի՛մ հետեվից էկեք,

– Ու ճամփեքդ չթեքեք, –

Որ, – Մենակ ի՛մ ախպուր ու ջրհորի մեջ չթեքեք, –

Ու որ մենակ դո՛ւ ես ամենագոր ու անհատակ:

Էրկու հսկա քաղաք, համարյա մի երկիր,

Մինչեվ էգ ու որձով՝ սաղ է՛լ պոռնիկ չդառան –

Աշկիցդ չընգան:

Բայց ախրը՝ որ ամենագոր էիր, եզակի ու ընտիր,

Հեն ա՛ չթողայիր, որ ըտենց դառնան,

Ու համ էլ խի՞ քարաղի սուն սարքիր

Պոռնիկ Ղովտի խեղճ կընգան:

Գնացե նստել ես – եսիմ՝ ո՞ր ջըհանդամի ծերին¹

Ու հըմի էլ ասում ես թե – Չեմ խառնվելու ձեր գործերին: –

Է՛ն գլխից հանգիստ թողայիր սաղին՝

Գող ու անմեղին, քյաչալ ու կաղին,

Աղջիկ ու տղուն, ջահել ու բիձուն –

Ու թե քունը չէր էն առաջի ձուն,

Թո ամեն ինչ – ինքն իրան մնար,

Թո ինքն իրա՛ն – ծիլ տար ու շատանար:

Է՛: Ավելի լավ ա՛ ո՛չ ես, ոչ դու՛ – մեղավոր ման չգանք:

3-րդը , մեկ ա, միտք չունի մնալու մեր հույսին:

Ու հենց է՛ն օրվանից, երբ բըստրիր աշխարհն էս արար,

Ես ու դու – ո՛չ մի անքամ չհասանք իրար,

Ու 3-րդին – ո՛չ մի անքամ վախտին մոտ չէկանք –

Արժե՛նք էրկուսըս էլ՝ մեկըս մյուսին:

Էթում ե՛մ ու էլ հետ չե՛մ գալու –

Ինչքան էլ հակառակը տարածես:

Է՛ն գլխից էլ գիդեիր, որ չես ներելու –

Ու չե՛ս հավանելու արածըս,

Խի՞, քու՞ գրածը չէ՞ր որ –

Չքըթածըս –

Ծնվելուցս առա՛ջ եմ կորցնելու

Ու որ պարուրածեվ պոչումն էլ –

Չե՛մ քըթնի կորցրածըս,

Ու որ էս մոմենտին՝

Մի կաթիլ էլ՝ հավես չի՛ ըլնելու՝ ներում խնդրելու,

Ու որ՝ հենց էսքա՛նն էր կարեցածըս:

Բայց ախր ընձի

Խի՞ թողիր մեն-մենակ:

¹ Հին աստվածները ապրում էին մարդկանց մեջ, մոտիկ էին իրանց. հույներինը՝ Օլիմպոսի գագաթին, հրեաներինը՝ Տիգրիս-Եփրատի ավազանում ևն: Ու աստվածներն անընդհատ խառնվում էին մարդկանց գործերին: Ինչքան գիտությունը զարգացավ, էնքան աստվածները մարդկանցից հեռացան, ու էնքան ավելի պասիվ դառան:

Եղիշե Չարենց – ՍՈՄԱ

Մեր արտեմիստները [18-19] խի՞ չեն սովորում մեր Չարենցից. ախր Չարենցը ոտանավորի էնքան շատ նոր ու գերազանց ձեւ ունի, որ իրանք չեն յուրացրե, ու չեն բանըցնում: Չարենցի հենց մենակ **Սոմա՛** պոեմը սովորելու էնքան նյութ ունի մեզը, էնքան շատ տարբեր չափ կա ընդե, որ երեւի մի քանի ամիս ա պետք, որ պոետը նստի ու էդ փոքրիկ պոեմը յուրացնի:

Ինքը՝ Չարենցը, Թումանյանի ու մյուսների պես, սովորել ա ուրիշներից, մանավանդ Թումանյանից, Տերյանից, Մայակովսկուց ու Եսենինից, իսկ մեր արտեմիստներն իրանց էնքան հանճարեղ են համարում, որ մենակ իրանց «հանճարի ուժով» են գրում:

Չարենցի Սոմա՛ն ուղղակի հզոր ա, հզոր ու սքանչելի (ըսենց «ճոխ» բառերից առհասարակ խուսափում եմ, բայց ախր Սոմա՛ն իրո՞ք ա **սքանչելի**):

Հետաքրքիր ա, որ էս պոեմը չափազանց արստրակտ ա, ու սրա հույժ անորոշ թեման էլ մեզ լրի՛վ ա անժանոթ. Սոմա՛ն ու Ազնի՛ն ո՛ւր, մե՛նք ուր: Ու որ ճիշտն ասենք, էս պոեմը մի կոնկրետ բան էլ չի ասում, բայց մետրիկայի ու բառերի կախարդանքն էնքան ա հզոր, որ կարդացողը, իրանից անկախ, մի վիթխարի ողբերգություն ու պայթետիկա ա տեսնում ու ապրում: Էսի հենց վեռ-լիբր ա, որ կա:

Սրա համար էլ բերում եմ Սոմայից մի քանի բնութագրական կտոր, տարբեր մետրերով, որ սկսնակները տեսնան, թե Չարենցն ինչքան հզոր պոետ ա (էս կտորները թերեւակի փոխել եմ ի՛մ գրական ոճով. մի քիչ էլ կետադրությունն եմ փոխե):

Որպես քուրմը Գանգեսի,
Կարոտակեզ, սիրակեզ –
Կյանքս տվել եմ լույսիդ
Ու երգում եմ քեզ:
Քե՛զ եմ երգում էս կարմիր
Աշխարհում հիմա –
Քե՛զ եմ երգում, քա՛ղցր քույր,
Խելագա՛ր Սոմա՛:
.....
Ու չէի քթնում, Սոմա՛ ոչ մի տեղ
Քու դեմքը հրե –
Բայց ես գիդեի, որ մեռնում ա նա՛,
Ով որ քեզ սիրե:
.....
Ու քեզնով հարբած՝ կանչեցի՛
իրանց
Հրդեհի պարին –
Ու կյանքս տվի, պարզ ու
սրտաբաց,
Վառվող աշխարհին:
.....
Սոմա՛, ես գիդեմ, մի աղջիկ ես դու,
Երկնային մի քույր,
Որ տալիս ա մեր սուրբ
ծաղիկներին
Թույն, թախիծ ու բույր:
.....
Քո՛ւյր, քու գինին մեր սրտերում

Մխացել ա դա՛ր ու դարե՛ր,
Քո՛ւյր, քու գինին մեր սրտերում
Քանի՛ ոսկի ջահ ա վառե...
Քանի՛ ոսկի ջահ ա վառե
Երկրի մուժում,
Քանի՛ ոսկի ջահ ա վառե,
Կյանքի փոշում:
Դա՛ր ու դարեր մեր սրտերում
Վառվել ա վառ,
Բայց հրդեհվել չի ուզեցե –
Աշխարհը քար:
.....
Սոմա՛, գինիդ (ինչով հարբե –
Խենթ ենք հիմա) –
Դա՛ր ու դարե՛ր տվել ա մեզ
Երկունք ու մահ.
.....
Ու արունը մեր, խառնված հրին,
Վառվո՛ւմ ա ագահ –
Ու լո՛ւս ա տալի վառվող
աշխարհին
Դե՛՛մքդ հեռակա:
.....
Ամբոխները զրահապատ
Ծա՛փ են զարկում ու պարում,
Ջա՛հ ա դառե ամեն մի մարդ
Կրակապատ աշխարհում:
.....

Հո՞ւրը թո՞ մնա,
Հրդե՛հը հոգու,
Որ հրաշք դառնա

Սոմա՛, խոսքը քու:

.....

69. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՓՈԹ

Հրեական Հին Կտակարանի Աստվածը (նորինն է՛) ընձի հա է՛ զարմացրել և իրա անհետեվողականությունով, անհեթեթ վճիռներով ու արյունարբու դաժանությունով: Ու մինչեվ հմի էլ զարմանում եմ, թե էսօրվա մարդը ո՞նց ա հավատում ու հավանում, ու շատ անգամ էլ՝ պաշտում էտ Աստվածին, այսինքը, հին, քոչվոր ու տգետ հրեաների հորինած Աստվածին:

Հետո էլ սաղըս զարմանում ենք, թե խի՞ ենք հավատում մեր էսօրվա քաղաքործիչներին:

Մարդիկ տգետների՛ն են լսում ու հավատում, ու հավատում են առանց մտածելու ու առանց սրանց ասածները քննելու ու վերլուծելու:

Զարմանալու բան ա էս հավատը: Հավատալու համար պետք չի, որ քսան-եռեսուն տարի (կամ էլ, իմ պես 50-60 տարի) սովորես, որ քեզ կարծիք հայտնելու իրավունք վերապահես: Հավատալու համար ընդամենը պետք ա, որ մի քանի «անլուրջ» գիրք ու ժուռնալ կարդաս, մեկ-մեկ տելեվիզոր նայես ու թերթ կարդաս ու քու պես «գիտունների» հետ սուրճ-մուրճ խմես ու բառադի գրուց անես, ու կարդացածիդ ու լսածիդ հավատաս:

Մարդը ուզո՞ւմ ա հավատա, մանավանդ ծույլ մարդը, մանավանդ կինը, ով առհասարակ հեշտ ա հավատում: (Իզուր չեն ասում, թե կնոջ լոգիկան ականջների մեջ ա):

Հավատալու ցանկություն ունեցող մարդը կհավատա, թե որ լսի, որ էվոյուցիայի Դարվինի տեսությունը փչոց ա, թեկուզ էտ մարդը գաղափար անգամ չունենա էվոյուցիայից է՛, Դարվինից է՛, գենետիկայից է՛լ ու գիտության մեթոդից է՛:

Էս տեսակ մարդիկ հավատում են, թե «կյանքի սկիզբը արտաերկրային բանական արարածներն են հիմներ», թե Նոստրադամուսն ամեն ինչ կանխատեսել ա, թե (օրինակ) հայերն ամենահանճարեղ ու ամենաընտիր ազգն են, թե բոլոր լեզուները (օրինակ) հայերենից են առաջացե, թե (օրինակ) հայերն ամենահինն են ևն, ևն:

Էս տեսակ մարդը հավատում ա՝ Լոխ Նես լճի դինոզավրին, Բերմոնդյան եռանկյունու հրաշագործությանը, Եհովային, Քրիստոսին, Բուդդային, Մուհամմեդին, Հեգելին, Նիցշեին, Մարքսին, Լենինին, Հիտլերին, Ստալինին, Մուսոլինին, Էքստրասենսներին: Տո էլ ո՞ւմ ասես, որ չի հավատում: Ու հավատում ա՝ հաճույքով ու ոգեշունչ:

Թե էս տեսակ մարդն ինչին հավատա, կարելի է չի, մենակ հավատալու բան՝ ընի: Էսի կհավատա, թե որ ասեն, թե «թռչող ափսեներով բանական արարածներ են եկել ու կառուցել են եգիպտական բուրգերը, Թաջ Մահալի կամ Բահալ Բեկի հուշարձանները», ևն, ևն, ևն:

Սրանց համար կարելի էր ա մենակ, որ իրանց լսած բառերը սիրուն ու իմպրտնի ըլնեն՝ Թաջ Մահալ, Բահալ Բեկ, բուրգ, արտաերկրային, բանական արարած, պայծառատեսություն, ոգեկանչություն, տելեպատիա, տելեկինեզ, տելեպորտացիա, ֆիլիպինյան բժշկություն, Լոխ Նես բառերի պես, որ էս բաները լսելուց ու հիշելուց հետո իրանք էլ լիքը ըսենց սիրուն բառ ասեն ու ուրիշներին զարմացնեն:

Մարդիկ հավատում են, որտեվ «հիվանդ են»: հիվանդ են՝ տգիտությունով, հիմարությունով, փառասիրությունով, քաղքենությունով ու էլի հազար ու մի ըսենց բանով: Ու որտեվ էս հիվանդությունները չեն էրևում, չեն բուժվում, չեն դատապարտվում: Ու որտեվ սրանց համար, համարյա միշտ, չեն տուգանում, չեն պախարակում, չեն բանտարկում:

Իհարկե, պատահել ա (ու հմի է՛լ ա պատահում), որ հավատի համար տանջում ու խոշտանգում ու սպանում ու վառում ու հազարներով մարդ են կոտորում ու աքսորում, բայց էս բաներն արդեն մոլեռանդ հավատի կամ տոտալիտարիզմի հատկություններն են, ինչի համար հատուկ պայմաններ են պետք, իսկ վերելի ասածներս սովորական, առօրյա հավատից են:

Բայց ըսենց վախտ էլ, թե որ Սոկրատեսի, Ջորդանո Բրունոյի ու Գալիլեյի պետերին մի յան թողանք, մնացած «սովորական հավատացողների» ակտիվ մասը հավատում ա, որտեղ հավատալը համ էլ ձեռնտու ա, **որտեղ հավատը կրթության տեղ ա անցնում:** Սրանց պատիվ մասն էլ հավատում ա, որտեղ չհավատալն «ամոթ ա», որտեղ սա՛ղ են հավատում, որտեղ շատ անգամ էլ՝ չհավատալը վտանգավոր ա, կամ ձեռնտու չի՝:

Հավատի **ամենառացին ու հիմնական** պատճառը՝ մահվան սարսափն ու կյանքի վերջավորությունն ա: Սրա համար ա մարդը հորինե անդրաշխարհի առասպելը: **Երկրորդը** երեվի մեղքի զգացմունքն ա, ու թողություն ստանալու անզուսպ ցանկությունը, ընենց մեկի թողությունը, ում սա՛ղ են հարգում ու ընդունում, ով ամենագորավորն ա: **Երրորդն էլ** կյանքի իմաստի բացակայությունն ա, որտեղ շատ ա ընում, որ մարդը մեկ էլ տենում ա, որ իրա կյանքը կա՛մ իմաստ չունի, կամ է՛լ գրկվել ա իմաստից:

Իմիջիայլոց, երբ մարդն ասում ա, թե հավատում ա աստծուն, ոչ մի ձև չես կարա իմանաս, էտի անկեղծ ա, թե՛ չէ: Ա՛յ, երբ մեկն ասում ա, թե չի հավատում, կարա՛ս հավատաս, մանավանդ, երբ էսի մողա չի ու ձեռնտու էլ չի, որտեղ էս անգամ էտ մարդն ի՞նչ շահ ունի, որ տուտ ասի (թե որ ահավոր թիթիզ ու կեղծավոր չի):

Բայց ամենաարտառոցն էնի՛ ա, երբ մարդիկ հավատում են հանուն հավատալուն, երբ չհավատալը մի գրամ էլ վտանգավոր չի: Բա ապշելու չի, որ էս «լուսավոր» դարում մարդ կա, (ու շատ), ով հավատում ա, որ Եղիա մարգարեն կառքով համբարձել ա երկինք: (Թե հետո Եղիան ո՞ր ա գնացե իրա էտ կառքով, կամ էլ էտ դատարկ կոսմոսում ո՞նց ա շնչե, էս տեսակ մանրունքներն էտ տեսակ հավատացողների մտքով չի անցնում, որտեղ դրանց մտածողությունը կես քայլանոց ա, ավել չի: Հին Կտակարանը Եղիա մարգարեի համբարձվելու պես ըսենց «գիտությունով» լիքն ա):

Շատ լավ ոտանավոր ա, բայց Խայամի էս քառյակը հանճարեղ ա, ու հըը մի բան էլ ավել, ու իս էլ (համեստությունը մի յան) **ռուսերենից էսի հենց հանճարեղ է՛լ թարգմանել եմ (տես 23-րդ ոտանավորի էսեն):**

Մեկը մի անգամ հարց տար Արարչին,–

- **Խի՞ մահ խառնեցիր Ադամի շնչին:**
- **Թե կատարյալ ե՛նք, բա խի՞ ենք մեռնում:**
- **Թե կատարյալ չենք, ո՞վ ա փինաչին:**

Օմար Խայամ

Գեհոն¹ գետի ափով, բացած կուրծքը մազոտ,
Ալեկոծ ու թափով – Տե՛րն էր քայլում:
Տիրոջ հզոր գանգին, ոնց որ կանանչ մազութ,
Կաթի՛լ-կաթի՛լ – սուրբ քրտինքն էր փայլում:

- Հըըը մի տե՛ս, մի տե՛ս, սրանք էս ի՛նչ արին,
- էս մի թաբուն² անցան՝ համը տեսան՝ չար ու բարու²,–
- Մրմնջաց Տե՛րն ու սու՛րբ գանգով կասկած անցավ,–
- Ըստե մնա՛ն, ձեռ կըքցեն արդեն ... կենա՛ց ծառին³,
- Մնան, վայ թե վերջը ըլի արուն,
- Անմահացան ու չարացան, վարյանտ չկա,
- Ուրե՛մն աստվածացան:

Ու Տե՛րն աջով շոյեց կուրծքը մազոտ,
Ու դրախտի դուռը քացով բացեց:
Դըսում – ազոտ, շըմոլ, ծըծըմբահոտ,
Քրտինք⁴, ծննդացավ⁴, բորբոս ու ցեց:

Ու տազ արած, մարդ ու կնիկ,
Մի հողածին, մի կողածին,
Անփաստաթուղթ ու անկնիք,

Կամաց-կամաց դուս սողացին:

Բաց թողալով՝ մի քիչ շըմուլ, մի քիչ ազոտ,

Ու շոյելով (աստվածածին ու ինքնածին)

Մի քիչ քրտնած՝ կուրծքը մազոտ,

Արարիչը, թեթեվացած, ասեց Օձին,

– Գեհոն գետի ափին ... խաղաղությո՛ւն հաստատեցի:

¹ **Գեհոն** – դրախտի չորս գետից (Տիգրիսից, Եփրատից, Փիսոնից) մեկը, երեվի՝ Արաքսը):

² **թաբու-թոբա** – մոզական արգելք: (Էս **թոբա**-ն կա Մալիշկայի խոսվածքում):

³ Հին հրեաների դրախտում յանի էրկու կարեվոր ծառ կար. մեկից ուտելի՞ր՝ չարն ու բարին կտարբերելի՞ր, մյուսից ուտելի՞ր՝ կանմահանալի՞ր: 1-ը իմացության, իսկ 2-րդը՝ կենաց ծառն էր:

⁴ Աստվածը, դրախտից վռնդելուց, Ադամին ասեց. «Հացդ քրտինքով վաստակես», Եվային էլ, թե՛ «Ցավով ծնես»:

Հարդիի հենց է՛ս տողով սկսվող ոտանավորի տարբերակը ար:

Երբ իմ իմացած մի օտար լեզվով շատ սիրուն ոտանավոր եմ տեսնում, մի լրիվ նոր ձեւ, է՛ն տեսակ ձեւ, որ ասելիքը շատ-շատ ա ուժեղացնում, ու ինչը հայերը հլը չեն գործածե, ուզում եմ էտի ինչ-որ մի ձեւ դարձնեմ հայերեն: Թարգմանեմ, փոխադրեմ կամ դրա պես մի բան գրեմ:

Որտե՛վ անհամբեր էրեխու պես ուզում եմ, որ ուրիշներն է՛լ կարդան էտ ոտանավորն ու իմ պես հավես անեն, ճիշտ՝ ոնց որ կինո նայելուց ես տնեցիներին կանչում, թե «հլը էկեք տեսեք, թե ի՛նչ են ցույց տալի»: Իմ կարծիքով, խմբական բալետ անելու հիմքը՝ էսի՛ ա, օրինակ, ֆուտբոլի վախտ: Ոտանավորը կամ սիմֆոնիան «բալետ անելու» համար մի թեթե՛վ ավելի շատ «պատրաստություն» ա պետք:

Ասում են, թե Աստվածը ամենագոր ա, ամենաբարին ա, ամենաարդարն ա, ու սեր ա: Աստվածը յանի սեր ա: Էս բաներն ասողները կամ կարդալ չգիղեն ու Գիրքը չեն կարդացե, կամ է՛լ կարդացե ու ոչ մի բան չեն հասկացե:

Տեսեք, թե ինչ ա ասում (Ելից, Ի, 5) Հին Կտակարանի Աստվածը. «...գի ես եմ Տէր Աստուած քո՛ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց՛ որդւոց, յերիս եւ ի չորս ազգս ատելեաց իմոց»: Ինչը նշանակում ա. «Ես եմ տեր աստված քո, ու ես չար եմ. (չար-ը նախանձոտ բառի հին իմաստներից մեկն ա, չնայած նախանձոտ աստվածն է՛լ մի բարի բան չի. տես Աճառյանի Հայերեն արմատական բառարանը – Մ. Հ.) ու հայրերի մեղքերի համար (եթե ինձ ատեն) իրենց որդիներին մինչե՛վ երրորդ ու չորրորդ սերունդը կպատժեմ»:

Նոր Կտակարանի մեջը (Մատթէոս, Ժ) Հիսուսն ասում ա. «34 Մի՛ համարիք եթե եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սո՛ւր: 35 Քանզի եկի քակել՛ զայր ի հարէ իւրմէ. եւ զդուստր ի մարէ, եւ զհարսն ի սկեսրէ՛՛ իւրմէ: 36 Եւ թշնամիք առն՛ ընտանիք իւր: 37 Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, ո՛չ է ինձ արժանի: Եւ որ սիրէ ուստր կամ զդուստր առավել քան զիս, չէ՛ ինձ արժանի:...»

Սա նշանակում է. «Մի՛ կարծեք, թե ես եկել եմ խաղաղություն տարածելու երկրի վրա: Ես եկել եմ ո՛չ թե խաղաղություն տարածելու, այլ սո՛ւր: Քանզի ես եկել եմ, որ որդուն բաժանե՛մ իր հորից, դստերը՝ իր մորից, ու հարսին՝ իր սկեսրոցից: Տղամարդու թշնամին պիտի հենց իր ընտանիքը լինի: Ով իր հորը կամ մորն ավելի շատ սիրեց, քան ինձ, ինձ արժան չի՛: Ու ով իր որդուն կամ դստերն ավելի շատ սիրեց, քան ինձ, ինձ արժան չի՛»:

Ով ինչ ուզում ա ասի, ես էս տողերին ոչ մի ձեւ չեմ համաձայնի, որտե՛վ ոչ մեկն ու ոչ մի բան չի ստիպի ընձի, որ ես էտ մեկին ավելի շատ սիրեմ, քան իմ մերձավորներին, թեկուզ էս բանը ասողը Հիսուս Քրիստոսը ընի: Ավելի լավ ա՛ Դժոխքը էթամ, քան թե հրաժարվեմ իմ ամենասիրելի մերձավորներից, ու հետե՛վեմ էս աշխարհը սուր բերողին:

Սովետի օրերին պտի հավատայիր մենակ ու մենակ Կոմունիստական կուսակցությանը (Կոմկուսին): Կոմկուսն էլ ասում էր, որ ճիշտը աթեիզմն ա, որ աստված չկա, ու սրա համար էլ կրոնը համարյա արգելված էր: Ու Սովետի օրերին աթեիստ ըլնելը ձեռնտու էր: Էն օրերին նույնիսկ անկեղծ հավատացյալն էր շատ անգամ ասում, թե չի հավատում, որտե՛վ եթե ըսենց չասեր, կհալածեին կամ էլ, ամենաքիչը, պաշտոնի հույս չէր ունենա:

Էսօր սրա լրիվ հակառակն ա: Էսօր Աստվածին հավատալն ա ձեռնտու, սրա համար էլ նույնիսկ չհավատացողներն են ասում, թե հավատում են: Մի բանը հաստատ ա: Էսօրվա պաշտոնյաներից ոչ մեկն էլ չի հավատում (իմ կարծիքով, էսօրվա տերտերներից էլ ոչ մեկը չի հավատում): Համենայն դեպս, սրանցից ոչ մեկն էլ իրա կյանքում քրիստոնեական կանոններին չի հետե՛վում:

Էսօր եկեղեցին օգնում ու աստարում ա էս թալանչի պետությանը (այսինքը, պետ-ությանը, ուրեմը, պետերի խմբին), որտե՛վ էս երկուսի նպատակներն էլ մեկ են: Ու էսօր աստծուն չհավատացողից շատը, ստիպված, ասում ա, թե հավատում ա, որտե՛վ էսօր աթեիստ ըլնենը վտանգավոր ա, կամ է՛լ ձեռնտու չի: Ընձի մի դպրոցի դասատուի պաշտոնից հանին մեծ մասով հենց էն բանի համար, որ աթեիստ եմ ու նացիոնալիստ չեմ, ու սեփական կարծիք ունեմ:

Բայց ես չեմ հասկանում, թե խի՞ պտի ես ինքս հավատալ-չհավատալու ընտրության իրավունքը չունենամ: Խի՞ պտի տելելիզորը կրոնի քարոզի այլք ունենա, ու աթեիզմ քարոզելունը չունենա: Խի՞ պտի իմ էրեխուն դպրոցում դարձնեն հավատացյալ, խի՞ են իրան զրկում հավատացյալ դառնալու կամ չդառնալու ընտրության իրավունքից: Ու էս ի՞նչ բան ա, պետությունը համարյա շաբաթը մեկ ազատ օր ա տալի, յանի եկեղեցական տոն ա կամ մեռելից: Ի՞նչ ա, մեր պետությունը կրոնական պետությո՞ւն ա: Բա էլ ո՞նց ա դեմոկրատական:

Լավ ոտանավոր ա:

*If but some vengeful god would call to me...
Thomas Hardy*

Ու թե հանգարծ մի օր
Քեն քռող հրեղեն մի երկնավոր
Տած իջնի ու խնդա, թե.
–Խաբա՞ր ես, որ երբ ցավերը քեզ
Մորկում են՝ ու դադում²,
Ամեն ցավ ու դարդըտ իմ համար
Քե՛ք ա փառավոր,
Թե,–խաբա՞ր ես, որ
Երբ էրա՛զըտ ես տանում ու թաղում,
Ատելությանըս հարսնիքն ա էտի,
Ու էտ վախտ
Հոգիս երգում ա, պարում ու –
Խաղում:–
Այ, թե որ էտի գա ու էս ձեվ խնդա,
Կո՛ւլ կտամ էտի, ալոռեքըս կսխմեմ
իրար,
Ու կմեռնեմ:
Կդիմանամ, որտեվ լա՛վ գիդեմ,
Որ հոգիս –
Կատողած ու խելառի՛ մեկն ա առնում.
Որ էտ մեկը,
Ով որ ընձնից շա՛տ-շատ ա զորավոր,
Կաթ-կաթ արցունքով
Լսնում ա մի անդո՛ւնդ ահավոր:
Բայց դե... չի՛լնում անտերը,
Մարդ չի՛ դիմանում:
Որտեվ ախր ո՞վ ա իմանում,
Թե խի՞ ա հա խավա՛րը
Լուսին չարչարում,
Ու խի՞ են էրազի լուս սերմերը

Տո հենց – էրազի՛ մեջ պակասում:
Արմավի ծառի համար
Հավատը քյոռ ու խելառի՛
Ոնց որ թույն ըլնի՛ ջրի տեղակ:
Հույսըտ դրիիր Վերինի զառին՝
Լաց ու կոծ, ճիչ ու աղաղակ –
Հարսնիքըտ կդառնա վայնասուն:

Խառնել ա Վարդավառ ու
Զատի՛կ ու Ամանոր,
Դու-շեշ ա պետք, չի տալի, կպել ա
ջհարին,
Բայց որ ջհար ուզես՝
Հենց մենակ իքյի-բիր ա բերելու,
Ամմե՛ն-ամմե՛ն, ամմե՛ն օր:

Գիժ ա էս Գրողը³, տո՛:
Զառեքը քցում ու
Դարդ ա որ
Շարո՛ւմ ա ու շարում...
Մենակ զառեռն ա իզուր շարչարում:

Տափակի խելառ ա իսկական,
Սար ու ձոր տեսավ՝
Վեկավում ա ու տավակում,
Ու սրա սեվցրածը
Էլ կյանքում
Չի սիպտըկում:

Ճամփա ու դուռ, ասում ես՝ չես ասում,
Բառադի-բառադի,
Մեկ բացում ա, ու մեկ էլ՝
Շըրըխկ –
Տալի՛ս ա ու – փակում:

¹ **Մորկել**– ճիպրտով կամ սրա պես մի բանով դաղել:

² **Դադել**– մրրկել, ձաղկել: վառել, խարանել:

³ **Գրողը** – Տիր անունով աստվածը: Էս Տիրը մարդու ճակատագիրը գրող աստվածն էր, ու էսի ոչ մի կապ չունեիր գիրն ու գրականությունն ու կրթությունը հովանավորելու հետ:

Հին Աշխարհում, բացի Հին Հույները, Հռոմեացիներն ու մեկ էլ՝ երեվի Կարթագենցիները, սովորական բան էր, որ նույնիսկ իշխանն ու թագավորը գրել կարդալ չիմանար: Սրա համար էլ հին թագավորները, իշխաններն ու հարուստ ազնվականները հատուկ կրթված մարդիկ էին պահում, որ սրանք իրանց համար նամակ բան գրեին, առեվտրական գործարք կապեին, հեքիաթ բան կարդային:

Էս նույն ձեվով էլ հին մարդը մտածում էր, որ ամեն մի աստված չի, որ գրել կարողալ գիրի, ու հատուկ աստված էին հորինել, ով գրելու «կախարդանքը» գիրեր, ու մյուս աստվածների համար բան-ման էր գրում: Ուրեմը, հին մարդն իրա հորինած աստվածներին օժտում էր հենց էն գծերով, ինչը ինքն ուներ:

Հին հայերը Տիր աստվածի պաշտամունքը (մնացածների էլ) փոխ էին առե իրանց հարեվան-ներից, ու հլը էն օրերին, երբ սեփական գիր չուներին:

Մեր հները գիր իմացողին ասում էին՝ գրիչ, այսինքը, գրող: Հայ գրիչներից մի քանիսը կարողալ չեն իմացել:

Հին ազգերից շատի մարդիկ համարել են, որ գրել կարողալ իմացողները կախարդ են, կամ կախարդական գորություն ունեն, որտեղ սրանք նայում էին «ինչ-որ անհասկանալի նշանների ու դրանց միջոցով խորհրդավոր ու սիրուն բաներ էին ասում»: Նույն գորությունը վերագրում էին համ էլ դարբիններին, որտեղ սրանք էլ «չէղած տեղից» մետաղի առարկա էին կարում սարքեն:

Լուկրեցիոս Կառն ասում ա, թե որ ձիերն աստված ունենալին, էտ աստվածին ձիու կերպարանքով կպատկերեն:

71. Ի՞նչ ԱՆԵՄ, ՈՐ Ի՞նչ ԱՆԵՄ

Գրելու առիթը չեմ հիշում: «Գարունում» տպելու առիթով փոխփխել եմ: Կապարը թույլ մետաղ ա, դրանից խոփ չի ստացվի: Խոփը պողպատից են սարքում:

Էս ոտանավորը ու սրա նմանները գրելու վախտը արդեն հաստատ համոզվել էի, որ մեր գրական ոճերը պտի իրանց ամեն ինչով հիմնվեն Էրեվանի բարբառի վրա: Սրա համար ա, որ էս ոտանավորների լեզուն ահագին պարզ ա, ու սրանց մեջը գրական բառերը քիչ են:

Սրա մեջը, օրինակ, 87 բառ կա: Էս 87 բառից 2-ը (հուշկապարիկ-ն ու թավալզոր-ը) քառավանկ ա (առաջինը համ էլ «հույժ» գրական ա), 10-ը՝ եռավանկ ու շատ գործածական, 18-ը՝ երկվանկ, 50-ը՝ միավանկ: Այսինքը, միավանկ բառերը սաղի 57,5%-ն են, երկվանկերը՝ մոտ 21% -ը, եռավանկերը՝ մոտ 11,5 %-ը, քառավանկերը՝ մոտ 2,3% -ը: Երկվանկ ու միավանկ բառերը սաղի մոտ 78,5%-ն են:

Բարբառի բառերի մեծ մասը կարճ ա, ու բարբառի բառերը ահավոր դիպուկ են, որտեղ չափազանց գործածական ու սաղին էլ լրիվ հասկանալի են: Էսի շատ ա կարեվոր, երբ օտար մի լեզվից ոտանավոր ես թարգմանում հայերեն:

Գրական ոճերի սիրած բառերը, մեծ մասով, երկար են, եռավանկ, քառավանկ ու նույնիսկ ավել, ու երբ սրանք դրվում են հոգնակիով ու հլը հոլովվում են, ավելի են երկարում (օրինակ, հուշկապարիկների-ն արդեն 7 վանկանի ա. տես համ էլ հաջորդ ոտանավորը):

Եթե բնագրի տողի վանկերի թիվը քիչ ա, ոնց որ Եսենինի կամ անգլիայեզու պոետներից շատի ոտանավորներն են, որ շատ անգամ մի տողի մեջը ընդամենը 4-7 վանկ ունեն, թարգմանը կրակն ա ընգնում, թե որ ուզում ա անպայման գրական ոճերով թարգմանի:

Մեր գրական ոճերի սիրահարների էս երկար բառերը, համարյա միշտ, բառաբարդմունք են: Բռնում են էրկու (մեկ-մեկ էլ՝ իրեք) բառ իրար են կպցնում ու հլը գլուխ են գովում, թե յանի «նոր բառ են ստեղծե», ճիշտ գերմաներենի գրական ոճերի պես:

Էս տեսակ բառերը հեչ էլ նոր չեն, ու մեծագույն մասով կամ տգեղ են, կամ անհարմար: Օրինակ, բա լավ չի՞ ըլնի, որ ցածր դասարանի մայթեմատիկայի գրքերի մեջը յուրաքանչյուր բառի պես «բորոյի» տեղը ասեն՝ ամեն մի, որ էտ 5-8 տարեկան խեղճ մանուկները չսարսափեն ու կյանքից չհիասթափվեն, ու մենակ խնդրի մասին մտածեն, ու խնդիրն էլ հասկանան ու վրագ լուծեն:

Լավ ոտանավոր ա, մանավանդ ձեվը:

Մատուռիս մեջ – դեղձի մի տունգ,

Մի վառվող մոմ, մի կտոր խունգ –

Բայց ուխտս, մե՛կ ա, քո՛նն էր:

Սուրբս խնդաց արուն-արցունք,

Ճեժեց կուրծք ու ճակատ ու ծունգ –

Ափսոս որ – չարի տոնն էր:

Էսօր ու էրեկ –

Ո՛չ ջուր, ո՛չ պարեկ,

Ո՛չ սուրբ, ո՛չ պարեն –

Լոկ հուշկապարիկ՛ –

Արտս կվարեն
 Խոփո՛վ կապարի:
 Կռունկս չվեց տուն գնաց,
 Սրունքիս ցավը հա՛ մնաց,
 Քայլերս – օլոր-մոլոր,
 Աղոթքս – թավալգլոր –
 Բայց ուխտս, մե՛կ ա, քոնն էր:
 Մատուռիս մեջ – կռապաշտ քուրմ,
 Պաղ ջրի տեղ – մրմուռ ու թուրմ,
 Քրտինքս – գլոր-գլոր,
 Դեղձի ծառին – վայրի շլոր –
 Ու տանը – չարի տոնն էր:

¹ **Հուշկապարիկ** – հունական սիրենները. չար ոգու մի տեսակ:

72. ԱՄԵՆ ԻՐԻԿՈՒՆ ԺԱՄԸ 13-ԻՑ ՀԵՏՈ

«Սիրում եմ» պատմություններից ա: Սկսվել ա հենց առաջին տողից: Նշան կա՝ կկուն քանի անգամ կանչեց, էտքան տարի էլ կապրես: «Արկղ» բառն էլ էնք փոխ առե, «յաշիկն» էլ: Առաջինը՝ յատիներենից, երկրորդը՝ ռուսերենից: Իսի՞ պտի «յաշիկը» չգործածենք:

Էս մի ոտանավորի մեջն էլ, օրինակ, 135 բառ կա: Էս 135 բառից 1-ը (գիշերները-ը) քառավանկ ա, 14-ը՝ եռավանկ ու շատ գործածական, 46-ը՝ երկվանկ, 74-ը՝ միավանկ: Այսինքը, միավանկ բառերը սաղի 55%-ն են, երկվանկերը՝ մոտ 34% -ը, եռավանկերը՝ մոտ 10 %-ը, քառավանկերը՝ մոտ 0,7% -ը: Երկվանկ ու միավանկ բառերը սաղի մոտ 89%-ն են:

Սա համեմատենք էս գրքի 20-րդ ոտանավորի (Քերականություն-ի) հետ: Էս մեկի սաղ բառերի թիվը 117-ն ա, սրանցից 1-ը հինգ վանկ ունի, 17-ը՝ 4 վանկ, 30-ը՝ իրեք վանկ, 14-ը՝ 2 վանկ, 55-ը՝ 1 վանկ: Ուրեմը, միավանկ բառերը սաղի 47%-ն են, երկվանկերը՝ մոտ 12% -ը, եռավանկերը՝ մոտ 26 %-ը, քառավանկերը՝ մոտ 14,5% -ը, իսկ հնգավանկերը՝ մոտ 0,9% -ը: Երկվանկ ու միավանկ բառերը սաղի մոտ 59%-ն են:

Իհարկե, ես չեմ ասում, թե բազմավանկ բառ չպտի գործածենք: Թումանյանի ասած՝ ինչ ուզում ես՝ գործածի, ճաշակի ու շնորհքի հարց ա:

Միջակ ոտանավոր ա:

Նունեյին՝ այսինքն՝ Սիրանուշին

Բան չեմ ուզում, արի տուն:

Ձմեռ կըլնի, փոթորիկ,
Հարսանիք – բուք ու կնունք,
Ծիծաղ, թաղում, վայնասուն,
Կարկուտ կգա, ձուն կգա –
Գալիս ա՛ գա – արի տուն:

Էս ռադիոն էլ անընդհատ –
Խոսո՛ւմ, խոսո՛ւմ ա – խոսում:

Անցած օրը մեր սարում
Չիմացա – ի՞նչ էր ասում –
Չորս-հի՛նգ անգամ –
Չիմացա – ո՞ւմ էր ասում –
Չորս-հի՛նգ անգամ –
Էտ կկուն:

Էս յաշիկն էլ անընդհատ –
Խոսում, խոսո՛ւմ ա՛ խոսում:

Ինչ որ ասի՝ դուր չէկավ,
Ինչ որ արի՝ դառավ ցավ,

Հա սո՛ւս արի, հա՛ կովար,
Վերջն էլ թողիր գնացիր,
Ու ես մենա՛կ մնացի –
Էս դատա՛րկ տան մեջ:

Ի՞նչ ա ուզում էս անտեր
ու դուս յաշիկն ընձընից:

Երկինքը՝ քուն, ըստե՛ քուն,
Մղձավանջը՝ վերադիր,
Գիշերները՝ օձի թույն –
Օձի թո՛ւյն ու գերանդի –
Խուզում, խուզո՛ւմ են, խուզում

–

Կարոտի հոգին:

Մարդ բռնի ու գետնին տա –
Էս յաշիկը շատախոս:

Հավատա որ – բան չեմ ուզում,
Բա՛ն չեմ ուզում – մենակ արի:
Արի՛ տո՛ւն:

Հրաչյա Սարուխան – ՏԱԳՆԱՊ

Էս ոտանավորը Հրաչ Սարուխանի **գերագանց** ոտանավորներից մեկն է, **ու էսի դնում եմ ըստե, որտեվ ազատ էջ ունեմ**: Աջ կողմը դնում եմ նույն ոտանավորը, բառապաշարի աննշան փոփոխությունով: Վերջի տողը (մի թեթեվ էլ՝ 10-րդը) փոխել եմ, որտեվ իմ կարծիքով Հրաչի վարյանտը տեմպը քցում ա: Իհարկե, աջ կողմինն էլ ա Հրաչի ոտանավորը:

Ղ. Աղայանը պատմում ա, որ մի օր ինքը Պոռոշյանին ասում ա, թե քու էսինչ գրածիդ էսինչ կտորը պտի ա՛յ ըսենց ըլներ: Պոռոշյանն էլ խնդում ա ու ասում. «Խելոք, գրելու վախտը խի՞ կուտորս չէիր»: Հմի ի՛մն ա. գրելու վախտը Հրաչի կողքն ըլնեի, վերջի տողը չէի թողա, որ էտ ձեվ գրեր:

Շուն եք,– ասի,– էջի՛ լակոտ,
Ի՛նչ եք ոռնում եռաձայն ...
Իմը չէին՝ օտարահոտ
Ու այլավազ հեռացան:

Բոլորվում էր գիշերը կես,
Ու թվում էր՝ չկայի ...
Սնահավատ ու սնատես –
Երանի դուրս չգայի:

Մութը վաղվա դուռն էր
բանում,
Ի՛նչ իմանար՝ ինչեր կան ...
Օրհասների հրվանդանում
Ջրահեղձ էր իմ ներկան:

Սակայն հույս էր ներարկում
ինձ
Խորհրդավոր ձայնն օձի.
«Վախն անցնում է երեք
կումից,
Հե՛րն անիծած ոռնոցի»...

Քափ-քրտինքում վեր թռա ես,
Ձմռան օր էր հանապազ ...
Սնահավատ ու սնատես
Գրի առա տագնապն այս:

Շո՛ւն եք,– ասի,– էշի՛ լակոտ,
Ի՛նչ եք ոռնում եռաձայն ...
Իմը չէին՝ օտարահոտ
Ու այլավազ հեռացան:

Բոլորվում էր գիշերը կես,
Ու թվում էր՝ չկայի ...
Սնահավատ ու սնատես –
Էրնեկ ըստե չգայի:

Մութը վաղվա դուռն էր
բանում,
Ի՛նչ իմանար, թե ի՛նչ կա ...
Օրհասների հրվանդանում
Ջրահե՛ղձ էր իմ ներկան:

Բայց դե – հույս էր տալի ընձի
Խորհրդավոր ձենն օձի.
«Իրեք կումից վախըտ
կանցնի,
Հե՛րն անիծած ոռնոցի»...

Քափ ու քրտինք – վեր թռա ես,
Ձմռան օր էր հանապազ ...
Սնահավատ ու սնատես
Ու մահվան շո՛ւնչը վրաս:

Գլուխ 10 ՈՆՑ Ա ԿԱՐՈՏԸ ԿԱՐՈՏԻՆ ԿԱՐՈՏՈՒՄ

10.1 ՆՈՐԻՑ ԼԳՕ-Ի ՄԱՍԻՆ

Արդեն քանի քանի տեղ եմ ասե, որ արդի հայերենի (դասա)գրքերը, իրանց «ծագում ու ծննդով», համարյա լրիվ են թարգմանական, (ինչը, հաշվի առնելով պատմական ու զանազան այլ հանգամանքները, գուցե բնական ա, բայց ավելի շուտ՝ ցավալի ա), ուղղակի հեղեղված են **քերականական** օտարաբանություններով [16-19]:

Էս ցավալի իրողության հետեվանքով արդի հայերենի գրական ոճերն ու սա՛ղ գրականությունը, համարյա ծերից ծեր, ծանրաշունչ են, խրթին ու անընդհատ հեռանում են իրենց հիմք ու ծնող բարբառից, ու քիչ-քիչ դառնում են ժողովրդի մեծ մասին անհասկանալի, ուրեմն, համ էլ խորթ:

Սրա՛ համար ա, որ Հայ Սփյուռքի արեվմտահայերենով խոսողները պահանջում են, որ հայաստանցիները փոխեն իրենց ուղղագրությունը, որտեվ հենց գիդեն, թե արեվելահայերենի ուղղագրությունն ա պատճառը, որ իրանք արեվելահայերենը վատ են հասկանում, ու չեն գիտակցում, որ հենց քերականական օտարաբանություններն ու զանազան հնաբանությունները (արխայիզմներն) են պատճառը, որ արեվելահայ գրական ոճերը ո՛չ միայն իրա՛նց են անհասկանալի, այլև է՛ն արեվելահայերին, ովքեր շատ քիչ են առնչվում գրական ոճերին:

(Գրական ոճերին «քիչ առնչվող» արեվելահայերը երբեք չեն ասում, որ էտ ոճերն իրենց անհասկանալի են, որ մարդիկ չմտածեն, թե իրենք «էն-քա՛ն են տգետ», որ իրենց մայրենի լեզուն է՛լ չգիտեն:

«Սփյուռքը» էսի ասում ա, որովհետեվ արդարացնող մահանա ունի, ու էտ պատրվակը ուղղագրությունն ա):

Քերականական օտարաբանությունները մանավանդ շատ են դպրոցական ու բուհական դասագրքերում (շատն է՛ն խոսքը չի, դրանց քանակն ուղղակի վիթխարի ա): Իսկ էսի շատ ցավալի բան ա, որովհետեվ մանուկներն ու պատանիները փոքրո՛ւց վարժվում են սրանց:

Վարժվում են, ու հետո իրանց սաղ կյանքում համարում են, որ սրանք հայերեն են: Հետո էլ բուհական դասագրքե՛րն ու մեր էսօրվա ողջ գրականությունն ա խորացնում ու հաստատում էս համոզմունքը: Էս հայերի մի մասը, դառնալով դասախոս ու ուսուցիչ, իրենց սաներին «կրթում ա» հայերենին խորթ ու օտար էս գրական ոճերով:

Վա՛խտն ա, որ էս արատավոր օղակը քանդվի ու վերանա, բայց սրա համար պետք ա, որ էս մեր գրագետ հանրությունը լրիվ հասկանա, որ կենդանի ամեն մի բարբառը, ու առաջի հերթին՝ էրեվանի բարբառը, ինքնին ճիշտ ա ու սիրուն, ու հեչ է՛լ ժարգոն չի:

Ու պտի հասկանա, որ **բարբառի համարյա ամե՛ն ինչն էլ ընդունելի ա ու սիրուն հենց մենակ է՛ն պատճառով, որ կա՛, գոյություն ունի՛, ու որ մենակ բարբառը կարա ու հենց բարբա՛ռը պտի որոշի, թե**

լեզվական տվյալ երեվոյթը հայերե՞ն ա, թե՞ օտար: Հենց էսի՛ ա Լեզվի Գլխավոր Օրենքը՝ ԼԳՕ-ն:

Սրա համար մեր մանավանդ լեզվի մասնագետները պտի գիտակցեն, որ սրանից իրեք սկզբունք ա բխում:

1. Ամեն մի մարդ էլ խոսալու (համ էլ՝ գրելու) իրա՛ ձեվը ընտրելու իրավունքն ունի, ու ուրիշներն իրավունք չունեն խոսալու հենց իրա՛նց ձեվը պարտադրելու որեվէ մեկին: Խոսալու անհատական ձեվը տվյալ մարդու անհատական սեփականությունն ա:

2. Տվյալ խոսվածքի անհատական լեզուների միօրինակությունը ապահովվում ա ինքնին, իրար ընդօրինակելու կամ անալոգիայի մեխանիզմով, որտեվ հանրության անդամներից ոչ մեկը չի ուզում մյուսներից շատ տարբեր խոսա (կամ գրի), որ ծիծաղելի չըլնի:

3. Լեզվական նոր երեվոյթներն առաջանում են առանձին անհատական շեղմունքների («սխալների, ֆլուկտուացիաների») ընդհանրանալու միջոցով, նախորդ կետի անալոգիայի ու պատահական ընտրության մեխանիզմով, ուրեմը, նոր երեվոյթները դատապարտելի չեն, ու անհատական սխալների իրավունքն է՛լ ա անհատական սեփականություն: Անհատական շեղմունքների պատճառը մարդկանց տարբերությունն ա, ու մեկ էլ՝ ու նվազագույն ճիգով խոսելու բնազդային ցանկությունը:

Էս ասածը չի նշանակում, թե քերականական, ուղղագրական կամ կետադրական կանոն բոլորովին չպտի ըլնի: Էսի ուղղակի նշանակում ա, որ էս կանոնները պտի հաստատվեն ԼԳՕ-ի միջոցով, այսինքը, միայն ու միայն լեզվի տվյալ վիճակը դիտելով ու էս կանոնները բացահայտելով:

Էս իրեք սկզբունքն իրար հետ, ի վերջո, հենց ԼԳՕ-ն ա, որ կա:

10.2 ԽԻ՞ Ա ԼԳՕ-ն ճԻՇՏ, ՈՒ ԽԻ՞ ՈՒՐԻՇ ՉԱՓԱՆԻՇ ՉԿԱ

Գերբարդ ու բաց համակարգերը, ու սրանց հետ էլ՝ համ էլ լեզուն, չեն ենթարկվում մարդու կամ մարդկանց խմբերի գիտակցական ծրագրերին: (Տես՝ [12-15, 20]. համ էլ՝ [6]-ի ներածական հատորը):

Եթե սրանց պես բարդ համակարգերին ստիպես, որ սրանք ենթարկվեն մարդկային ինչ-որ մի ծրագրի, «չե՛ն լսի», չե՛ն ենթարկվի էտ ծրագրին, ու էտ ծրագրի հետեվանքն էտ ծրագրածից անպայման մի անսպասելի տարբեր, մի ուրի՛շ բան կլինի [Ibid], (ինչքան էլ որ մեր **Լեզվի տեսչությունն** ու մեր լեզվաբանները ծրագիր կազմեն ու լեզուն կառավարելու փորձ անեն):

Հենց էս պատճառներով էլ՝ պիտի լեզվի տվյալ պահին արդեն ԸՆԴՀԱՆՐԱՑԱԾ լեզվական սաղ երեվոյթներն էլ համարենք ճիշտ, ընտիր ու անպայման ընդունելի, որովհետեվ եթե ուրիշ մի «հավերժական» ու «ճշգրիտ» սկզբունքով որոշենք լեզվական երեվոյթի ճիշտն ու սխալը, էս ուրիշ «ճշգրիտ» սկզբունքը, ի վերջո, անպայման կդադարի ճիշտ լինելուց, որտեվ լեզուն ա՛նպայման է փոխվում, իսկ փոխվելու ուղիներն էլ կատարյալ են անհայտ:

Ուրեմն.

Լեզվի Գլխավոր Օրենքն անպայման ա ճիշտ, ու սրան այլընտրանք չկա:

73. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՏՈՂԵՐՈՎ

Ոտանավոր գրելը թարգմանելով եմ սովորե: Թարգմանության արհեստն սկսել եմ 1985 թվին, երբ որոշեցի, որ 5 տարում պտի դառնամ Հայաստանի առաջի 10 թարգմանից մեկը: Թարգմանում էի մենակ արդեն ուրիշի թարգմանած գործերը, որ իմանամ, լա՞վ եմ թարգմանե, թե՞ չէ: Ու ձգտում էի, որ արդեն թարգմանածից անպայման ավելի լավ թարգմանեմ: Չգիդեի, որ էտ ձեվով գրելու արհեստն եմ սովորում:

Իմ կարծիքով, Իսահակյանի ամենալավ ոտանավորը **Ռեալտոյի Կամրջին** գործն ա, ինչի էրկու տունը, մի թեթեվ փոխած, մոնտաժ եմ արե սրա մեջ:

Երբ հասկացա, որ ե՛ս էլ եմ կարում գրեմ, սկսեցի մեր հայ գրողների գրելու ձեվերը յուրացնելը: Էսի էտ փորձերից մեկն ա, ու սրա հաջորդն էլ ա էտ փորձերից:

Իսահակյանը մեր վրա ազդում ա, մեծ մասամբ, իրա **Աբու Լալա Մահարի-ով**: Երեվի Իսահակյանի **Աբու-ն** փոխադրություն ա բուն Աբու-Լը-Ալա-Ալ-Մահարուց, իրա **Հրահանի Կայծերը** ու **Պարտադիրը Անպարտադրի** չափածո գործերից: Համենայն դեպս, հապճեպ նայելով, մի քանի բեյթ քթա, որ Իսահակյանը, համարյա «բառացի», վեկայել ա Աբու-Լը-Ալայից:

Էս հանգամանքը, իհարկե, հեչ է՛լ չի նվազացնում Իսահակյանի արած գործի վաստակն ու կարեվորությունը: Արվեստի ու գրականության պատմության մեջ լիքը դեպք կա, երբ մի ստեղծագործողը «մշակում ա» իրանից առաջ ապրած ու գործած հեղինակներին:

Օրինակ, Լերմոնտովը յուրովի ա մշակե Պուշկինի գործերից մի քանիսը, Շեքսպիրի սա՛ղ պիեսներն ու դրամաները արդեն էղած գործերի մշակածներն են (ու՞մ հեղինակներին էսոր մենակ նեղ մասնագետներն են հիշում մենակ), ու ոչ մեկը չի ասում, թե Մանեի «Մերկ Մախան» արտագրություն ա Գոյայից, կամ է՛լ՝ Շչեդրինի «Կարմեն Սյուիտը» Բիգելինն ա Լն, Լն:

Լավ ոտանավոր ա:

Էրե՛կ էր որ... նա՛վ բարձրացա: Օրհնանք-աղոթք կարդացին,
Կարոտ սրտով հրաժեշտ տվին – հեռացան:
Էտ մոմենտից փարոսներս... մեկ-մեկ, հերթով թարթեցին,
Աղոտացան, մարմրեցին ու անցան:

Հու՛րն էր ընգե – հոքիս վառում – էրազներով վառվում,
Ընձի տանում՝ անուրջ-անուրջ աշխարհներ:
Լեռնանում էր իղձրս հեռվում, փողփողում ու թրթռում
Ու խոստանում – եղեմ-եղեմ նշխարներ:

Ու էթալիք ճամփես ոնց որ... ամենալուս փողոցն էր,
Աջ ու ձախին – ափ ու կայան – լուսավոր,
Ու իմ անձն էլ – էրազներիս ամենազոր հերոսն էր,
Ու գալիքն էլ – լուս ու հույզի մի հրաբուխ անսովոր:

Ու մրահոն կույս աղջիկ կար՝ Ռիալտոյի կամրջին,
Աչքերը սեվ, արեվների պես անշեջ,
Հորդ մազերը՝ գետ գիշերվա, ու հակինթներ ականջին,
Էրազ-էրազ – ծաղկանկար շալի մեջ:

Վարդ ու բոսոր հույզ ու հույս կար, հրահեղուկ ու պոռթկուն,
Ու էտ ինչքա՛ն... չքնաղ կույս կար էրագի,
Որ թովում ու կանչում էին բարձունքները փոթորկուն,
Տանում հանում – երկինքները հրածին:

Էսոր... սիրտըս... հեչ չի թնդում... կուսիտ համար մրահոն,

Որ կայնել էր Ռիալտոյի կամրջին:
Երեբալով ու զիլ հոգնած – հրաժեշտի սրահում –
Ձեռն ա պարզե – հագիվ շնչող անրջին:

74. ՏԵՐՅԱՆԻ ՏՈՂԵՐՈՎ

Սրա առիթով տես սրա նախորդ ոտանավորի նախաբանը: Տերյանն ռուսական ու եվրոպական ոտանավորների տարբերակները շատ ա մշակե ու հայացրե, ու սրա համար էլ իրա գրվածքներում ռուսիզմներն ահագին շատ են (մանավանդ որ լեզվի հարցերում ինքը ահագին հակառակ էր Թումանյանին ու Աբովյանին, ու համարում էր, որ կենդանի լեզուն գռեհիկ ա:

Տերյանի «Դու անհոգ նայեցիր ինձ վրա», տողի օրինակն արդեն բերել եմ (տես էս գրքի 153-154 էջերը): Հայր, ոչ մի բարբառով, «չի նայում մեկի» կամ «մի բանի վրա»: Հայր «նայում ա ինձ (ընձի), Աշոտին, կնոջը, պատիին, քարին» ևն:

Տերյանի ոտանավորների մեջ փոխադրությունները շատ են (մանավանդ ռուս սիմվոլիստներից), ու շատ քիչ մարդ գիդի էսի, որտեվ ինքը շատ անգամ սկզբնաղբյուրը չի նշում:

Օրինակ, ես Տերյանի գործերի մեջ քթա Բայրոնի **When We Two Parted** ոտանավորը, ահագին փոխփխած ու առաջի տունն էլ տարած երրորդի տեղը, ու որ ես էտի անգլերենից թարգմանած չըլնեի, չէի էլ գլխի ընգնի, որ Բայրոնինն ա:

Կարող ա՝ Տերյանն էսի փոխադրել ա ռուս սիմվոլիստների մի թարգմանությունից կամ նույնիսկ փոխադրությունից, ու ինքն էլ չի իմացե, որ էտի Բայրոնինն ա: Ո՛վ իմնա:

Տերյանի ոտանավորները, իրոք, շատ կարեվոր ու խոշոր քայլ էին հայ պոեզիայի համար, մենակ ափսոս, որ Տերյանն էրեվանի բարբառի կրողը չէր, ու «գրական-գրաբարյան» ոճերն ավելի սիրուն էր համարում, քան բարբառները:

Տերյանը գրում ա՝ «ջերմ լալու փափագ», բայց պտի գրեր «լալու ջերմ փափագ», այսինքը, ի՛նձ գրածի պես:

Լավ ոտանավոր ա:

Թե գերեզմանիս մեկը մոտ էլ գա՛ –
Ոչ մի հյուլես էլ – հեչ բան չի ըզգա:
Խունգ է՛լ, աղոթք է՛լ, գինի է՛լ, ճառ է՛լ –
Հարկավորըս չի՛: Թո՛նձի չըսըքան:

Թո որ շիրիմիս արխեյին գան մոտ,
Որտեվ չի զարթնի «լալու ջերմ փափագ»,
Որտեվ չեմ ըզգա՝ ո՛չ ցավ, ո՛չ ամոթ,
Ո՛չ խանդ, ո՛չ նախանձ – ու ոչ էլ պապակ:

Իմ գերեզմանը շատ հեռու կըլնի,
Թե ուխտատեղի, վանքի պարտեզում –
Ի՞նչ տարբերություն: Մեռելոցներին –
Ե՛ս չեմ էթալու: Տո – չե՛մ էլ ուզում:

Ու մեկ էլ՝ երբ սաղ
Գունդն ի՛նքն ա անտեր
Ու դուս թափառում հիվանդ երկնքում,
էտ գերեզմանին պե՛տք ա՝ խնամող, այցվոր կամ էլ տեր...
Թո կորի էթա՝ համաշխարհային մահվան երկունքում:

75. ՏԵՐՅԱՆԻ ՌԻԹՄՈՎ

Էս մի ոտանավորս էն հազվագյուտներից ա, որ արագ եմ գրե, մոտ մի ժամում, ու մի 5 վարյանտ հետո պրծել եմ: Երեվի էսի եամեմատելու ա 151-րդ էջի ոտանավորի հետ:

Որ ասեմ, թե էսի մի եսիմ ի՛նչ ոտանավոր ա, ճիշտ չի ըլնի, բայց էնքան էլ վատը չի: Ես դժվար եմ գրում, ու երկա՛ր-երկար էլ փոխփխում եմ, մի՛նչեմ համարում եմ, որ գրածս մի բանի նման ա, ու էլ հնարավոր չի, որ լավանա: Նույն ձեմ էլ վերաբերվում եմ ուրիշների գրածներին:

Իմիջիայլոց, մեր գրական ոճերն ասում են՝ «նույն **կերպ** էլ վերաբերվում եմ...», ու սա լրիվ ճիշտ են համարում: Մեր ցահելներն էսօր ասում են՝ «նույն **ձեմ** էլ վերաբերվում եմ», ու մեր գրական ոճերն ասում են, թե էսի սխալ ա, թե պտի ասեն՝ «նույն **ձեմով**...»: Ի՞նչ? **Կերպ**-ն ու **ձեմ**-ը նույն բանը չե՞ն: Օրինակ, որ ասենք, թե «նույն **կերպի** էլ վերաբերվում եմ ուրիշներին», կըլնի՞:

Երբ էս տեսակ մի բանը լեզվաբանությունից հեռու մարդն ա ասում, հըր տանելի ա, բայց արի ու տես, որ մեր սաղ լեզվաբաններն ըսենց բան ասում, ու ասում են՝ ամմե՛ն րոպե: Օրինակ, սրանք կարող ա ասեն, թե հենց նոր էս **ամմե՛ն** բառը խի՞ էրկու **Վ**-ով գրեցի: Հաստատ կասեն, որտեմ չգիրեն, որ Աճառյանն իրա **Լիակատար քերականության** մեջը ասում ա, թե էս տեսակ բառը էրկու **Վ**-ով ա, երբ շեշտվում ա: Էլ ի՛նչ ասես:

Երբ 1990 թվին օդորմածիկ Գ. Զահուկյանին ասի, թե Աճառյանի **Լիակատար քերականությունը** (8 հատորը, վերջինը չունեմ) իրեք անգամ եմ մանրամասը կարդացե, ասեց որ ես երկրորդ մարդն եմ, որ էտի լրիվ ա կարդացե: Էսի ե՛ս չեմ ասում. էսի Զահուկյանն ա ասում: Ափսոս:

Հմի մի լեզվաբան է՛լ կա, Լեյդենի համալսարանի դասախոս Հրայ Մարտիրոսյանը, ով լրիվ կարդացել ա **Լիակատարն** է՛լ, Աճառյանի մնացած գործերն է՛լ: Ափսոս, որ Հրային արդի հայերենի տեսությունը քիչ ա հետաքրքրում, թե չէ՝ մի հզոր համախոհ էլ կունենայի:

Միջակ ոտանավոր ա:

Ոնց որ նվաղ մի տերեմ,
Որ դողում ա քամու տակ,
Տեսքըդ՝ տարտամ, անարեմ –
Սուզվեց հու՛շըս անհատակ:

Խառնվելով ընդեղի
Բուն դրած հի՛ն տեսքերին,
Վեճ սկսեց անտեղի,
Փորփրելով խո՛սքը հին:

Ու էլ խանդի տեսարան,
Էլ արցունք ու տրնքտրնքոց.
Ինչքան ասին,–սուս արա,
– Բերանդ փակ, սիրտդ գոց,–

Բան դուս չէկավ արդարեմ:
Ու լքեցիր հուշըս տաք,
Ու հեռացար անվավեր –
Կրկնապատիկ նահատակ:

76. ԷՐԿՈՒ ԺԱՍ

Էս մի ոտանավորըս երկար ժամանակ, էս գրքիս մեջ դնելուն արժան չէի համարում: Վերջը տեսա, որ մեջը համ կեղծ բան չկա, համ է՛լ էնքան էլ վատը չի:

Էրեխեն է՛լ, ջահելն է՛լ (մինչեւ մի 35 տարեկանը) գիդի, թե կյանքն անվերջ ա, ու հեշ չի մտածում, որ էտի մի օր պրծնելու ա: Ու տարի-մարի չի հաշվում:

Բայց թե որ ջահելը մտածող ա, ու մինչեւ էս տարիքին հասնելը տենում ա, որ մի առանձին բանի չի հասե (Օստապ Բենդերի ասած՝ ոչ ուսմունք ա ստեղծե, ոչ էլ աշակերտ ունի), արդեն սկսում ա տարի հաշվելը: Ու ինչքան շատ ա մեծանում, էնքան ավելի շատ ա դարդ անում, որ կյանքը գնաց, որ էլ համարյա բան չի մնացե:

Հերրս ընձնից 24 տարի մեծ էր: Հերրս մեռավ 65 տարեկան, երբ ես 41 տարեկան էի, ու էտ վախտ ընձի թվում էր թե հերրս ընձնից շա՛տ-շատ ա մեծ: Ու իմ նույնիսկ է՛ս տարիքին, նույնիսկ հմի, երբ հենց ի՛նքս եմ 65 տարեկան, ընձի հյը թվում ա, թե հերրս ընձնից շա՛տ-շատ էր մեծ: Բայց հմի ես ի՛նքս եմ արդեն շատ անգամ հաշվում եմ, թե ինչքան մնաց: Բա՛:

Լավ ոտանավոր ա:

Մինչեւ նոր տարին – մնաց էրկու ժամ,
Հե՛ս ա, զանգերը կխփեն.
Հես ա կխփեն զանգերը խուժան
Ու է՛ս տարին էլ կլափեն:

Երեվի հարո՛ւր տարի առաջ էր –
Տոնածա՛ռ, տոնածա՛ռ, տոնածա՛ռ,
Ձմեռն էլ – կանա՛նչ ու կանանչ էր,
Կանա՛նչ ու – էրագի անտառ:

Երեվի հազա՛ր նոր տարի անցավ,
Օրերը դառան մարդակեր,
Ձմեռվա էրագը չիրականացավ,
Գարունը մնաց անընգեր:

Չմնա՛ց, չմնա՛ց, չմնա՛ց
Ու թթվա՛վ արեվագինին:
Քացախահա՛մ ա ու անիմաստ–
Ու լեղի՛” էս դարաշեմին:

Մինչեւ նոր տարին – մնաց էրկու ժամ,
Հե՛ս ա, զանգերը կխփեն,
Հես ա, կխփեն զանգերը խուժան,
Որ էս տարին է՛լ լափեն:

77. ԲԱԼԼԱԴ՝ ՈՂՋԵՐԻ ՈՒ ԶՈՇՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

76. Ուրեմը, երեվի 98 թվից հետո երգար ժամանակ էլ ոչ մի հայերեն նոտանավոր չեմ գրե, որտեղ մտածում էի (ու հմի էլ եմ մտածում), որ հայերեն կարգին նոտանավորը ոչ մեկին էլ պետք չի, ու ոչ մի պահանջարկ չունի: Էս մեկը գրել եմ 2006, թե 2007 թվին, լավ չեմ հիշում:

Տաղաչափությունը Եսենիինի ազդեցությունն ա:

Մտքովս անցել ա մի ջահել կին, ում ամուսնուն տարել են պատերազմ, ու էս ամուսինը հետ չի էկե, ու հմի էտ որպիեվերի կինն էլ խելքի չի գալի:

Էս նոտանավորն ընձի շատ ա դուր գալի, ու համարում եմ, որ իմ լավերից ա:

Չնայած նվնվալը տղամարդուն վայել բան չի ու ես հեչ էլ նվնվան չեմ, բայց մեկ ա, մեկ-մեկ մտածում եմ, որ էս մի նոտանավորը որ Թումանյանը, կամ Տերյանը, կամ էլ Չարենցը գրած ըլնեթ, հմի էսի երկինք էին հանե: Էհ, ի՛նչ անեմ, իմ բախտն էլ էսի՛ ա: Գրելուց հո լա՛վ ուրախացել եմ, որ ըսենց լավ բան եմ կարացե գրեմ: Էսի էլ ա մխիթարանք:

Գերագանց նոտանավոր ա: Էսի գրել եմ դասական մետրերով, հմի էսի վա՛տն ա մեր նոր պոետների վեռ-լիբրերից, կամ սրա ոճը հնացե՞լ ա: Մեր էս արտեմիստների ազատ նոտանավորները սրանից ինչո՞վ են լավը:

- | | |
|---|---|
| Մուֆ էր, որ արեվի տակ – | – Սեվ բվեճ ու սեվ ագռավ |
| Գե՛տն էր ձեն տալի. | Արե՛վ են ջնջում: |
| – Մի անմեղ ու թաք տատրակ
Բուն էր ման գալի: | Կայծակի նախշն ամպերին –
Գե՛տն էր վռազում:
Մո՛ւֆ էր, բոթը տուն բերին,
Ո՛նց էին վազում: |
| Մուֆ էր, որ արեվի տակ – | Կարմի՛ր-կարմի՛ր ծիածան –
Մի տատրակ անթեվ. |
| Գե՛տն էր նվաղում. | – Ախ, կարմիրըս խի՞ անցավ –
Ու մնացի սեվ: |
| – Սեվ ծիծեռնակ ու տատրակ
Ցա՛վ էին շաղում: | – Լաց՛լի, լալկան ուռենի,
Ե՛ս – դարդըս կարդամ:
Թո մղկտամ ու էլի –
Սո՛ւս-սուս տուն էթամ: |
| Ուռենու կախ ճղներին –
Հերվա՛ քանդած բուն. | Օլոր-մոլոր արահետ –
Գե՛տը մի ծերին: |
| Ծուխ չհասավ ամպերին ² , | Ձեն ա տալի քամու հետ –
Սեվ դարդի գերին: |
| Անտեր ու անտուն: | |
| Ու աղոթում են ջրին – | Ձեն ա տալի, – Ախ, արի՛,
– Արի՛, որ չգամ,
– Գնացել ես, հե՛տ արի,
– Չէկար, ե՛ս կգամ: |
| Լալկան ճուղ ու ծամ. | |
| – Ուր էլ էթաս՝ հե՛տ արի,
Չէկար, ե՛ս կգամ: | Ձեն ա տալի քամու հետ –
Սեվ դարդի գերին:
Օլոր-մոլոր արահետ –
Սեվ հարսը ծերին: |
| – Ախ, էրագըս ցավ դառավ,–
Ծառն ա մրմնջում,– | |

¹Հերվա – անցած տարվա:

²Ակնարկը՝ Արորն ասաց տատրակ հավթուն երգի՝ «Ծուխ կհանեմ վեր ամպերուն» տողն ա, այսինքը, «ամեն բան լավ կըլնի, ու մենք էլ՝ բախտավոր կըլնենք»:

78. ԿԱՐՈՏԸ Ո՛ՆՑ Ա ԿԱՐՈՏՈՒՄ

78. Էսի սկսվել և Հարդիի սրա տակը դրած վերնագրով ոտանավորից, բայց հետո խառնվավ Բրեդբերիի մի շատ սիրուն պատմվածքին, ինչի վերնագիրն էլի դրած և ներքելը:

Հարդին համարյա Թումանյանի ժամանակակիցն և, ու երեվի մի 1000-ից ավել ոտանավոր ունենա, մեկը մեկից լավը: Էսի զարմանալու չի, որտե՛վ **անգլիացիների նոր գրականությունն սկսվել և Վերածննդից, ու Հարդիի նախորդները գիգանտ են եղէ՝ Չոսերը, Շեքսպիրը, Միլթոնը, Բայրոնը, Շելլին, ու ուրիշ շա՛տ-շատերը:** Հարդին իմիջիայլոց, գորավոր էլ արձակ ունի, ու շատ:

Թումանյանն ուղղակի բախտ չուներ, որտե՛վ Հայաստանի պես խեղճ ու կրակ երկրում էր ծնվե: Երեվի սրա՛ համար և Թումանյանն ասում, թե «Հայաստանում բանաստեղծություն հասկացող՝ հագիվ մի 10 հոգի ըլնի»: Իսկ **անգլիացի հասարակ, շարքային մարդը, Թումանյանից հլը 400 տարի առաջ, Լոնդոնի Գլոբուս թատրոնում Շեքսպիրի՛ գործերն էր նայում:**

Անգլիայի է՛ն օրերի «մտավորականները», պոետ Ալեքսանդր Պոպի գլխավորությունով, լցվել էին Շեքսպիրի վրա, թե «խի՞ ես Լոնդոնի փողոցների գռեհիկ ժարգոնով գրում», ճիշտ ոնց որ վախտին Թումանյանին էին ասում (ու հմի էլ ընձի են ասում: Թո ընթերցողը ներող ըլնի, որ ընձի համեմատում եմ Շեքսպիրի հետ, որտե՛վ Թումանյանի ասածի պես, հայերը մտածում են, թե անհնար և, որ Հայաստանում է՛լ Շեքսպիրի պես մեկն ապրի, էն էլ՝ Էրեվանի Խնկո Ապրո փողոցում: Այ, որ մեռած ըլնեի, ուրիշ հարց, չնայած, էսի է՛լ և կասկածելի):

Վատ ոտանավոր չի:

Woman Much Missed
 Thomas Hardy
Screaming Woman
 Ray Breadbury

Էրագիս –
 էտ ինչքա՛ն ու ինչքա՛ն ես –
 գոռո՛ւմ ու կանչում,
 մեղանչում, մեղանչում, ձե՛ն
 տալի,
 ձե՛ն տալի – աղաչում,
 թե յանի – էլ էն վախտվանը
 չե՛ս,
 երբ ասիր,
 որ ընձի էլ չե՛ս ճանանչում.
 Բայց հենց զարթնում եմ –
 մոտ է՛լ չես գալի,
 մոտ է՛լ չես գալի:

*էս էրկու փշատն էլ –
 անընդհատ –
 ո՛չ չորանում են,
 ոչ է՛լ մի կարգին
 կանանչում...*

Էլ էն վախտվանը չե՛ս,
 առաջվանը չե՛ս, առաջվանը
 չե՛ս:

Ու լեզուդ ո՛նց ֆռռաց,
 ո՛նց ֆռռաց –
 մնացի ուղղակի սառած –
 բայց ասի՛ն,
 որ հաստատ ասել ես,
 որ թե գամ,
 գան ասեն – տանը չես:

*Քամի՛ն ա փշատը
 թրատում...*

Կայնել եմ էս ե՛զ դաշտում,
 Խչոյ՝ պես, մոլոր ու սառած,
 նայում եմ դափ-դատարկ
 հայաթին,
 ուր կին ու բիձա խոսում են,
 բամբասում.
 լսո՛ւմ եմ, չնայած չե՛մ լսում,
 հիշում եմ Խչոյին ու ասում.

– Ի՞նչ անեմ: Կանչե՛մ քու
 նման:

Կանչեմ – բայց... ի՞նչ կանչեմ,
 մուղա՛մ – թե՞ – բայաթի:

*Ջրո՛ւմ եմ ախր,
 խի՞ չի կանանչում:
 Կարո՞ղ ա,
 ինքն է՛լ ա ամանչում...*

Ե՛զ աշուն, ե՛զ ամառ, ե՛զ գարուն,
 դղակս ո՛նց դառավ կավի տուն,
 գինի է՛լ չմնաց բակալում:

Քամի՞ն էր, կարող ա, հենց ընենց
 վեկալեց դաշտերի վրով
 տարավ ու անցածը սո՛ւս ցրեց,
 իրա էտ անկո՛ւշտ թեվերով:

*Պտտո՛ւմ ա: Պտտո՛ւմ ու
 թախծի առանցքին
 փաթաթում...*

Ու հմի –
 կայնել եմ էս հոգնա՛ծ դաշտում,
 չեմ նայում ո՛չ մեկին –
 ո՛չ մեկին, ո՛չ մեկին –
 ո՛չ Մահմադ, ո՛չ Բուդդա,
 ո՛չ Հիսուս – չեմ պաշտում –
 ո՛չ դաշտում ու ոչ է՛լ պալատում,
 չեմ սիրում, չեմ ստում
 ոչ իրա՛նց, որ վե՛րն են,
 (տո դրանց հենց մե՛րն էլ)
 ու ոչ է՛լ – ու ոչ է՛լ բոշեքին:

*Չի՛ գալու, լա՛վ գիդեմ, չի՛
 գալու...*

Բայց ո՞րդուց էս անտեր ու ե՛զ –
 էս պայթած ու հոգնա՛ծ դաշտում
 –
 էս ո՞րդուց – հենց ընձի՛ ձեն
 տվող,
 ճչացող, աղաչող, մեղանչող –
 ու կանչող մի կին,

ու կանչող մի կին...

***Անտեր – կարո՛տն ա
կարոտին կարոտում:***

Էսի շուտ եմ գրե, բայց դրել էի սեվագրերիս մեջը, որտեղ մտածում էի, թե լավը չի: Հետո մի քիչ էլ դգեցի ու դրի: Նույն անխուսափ կորստի թեման ա: Էս ոտանավորի մետրն ու թեման թերութուն չունեն, հանգերն էլ իրար շատ են մոտ, շատ անգամ մի բաղաձայնով են տարբեր:

Ես հավես եմ անում, երբ կարում եմ ոտանավորի համարյա սաղ տներն էլ նույն բարդ ձեվով հանգավորեմ, ու ըսենց բան՝ շատ եմ անում: Հավես ա համ էլ, երբ մեջը լիքը ներքին հանգ ա ըլնում:

Միջակ ոտանավոր չի:

Աչքերդ նայում են՝ սիրտըտ չի տենում:

Օրերը պատա՛ն են կարում:

Ու մղձավանջն ա թաքուն մոտենում –

Էրազիդ սե՛վ տատասկ շարում:

Ձեռներըս պարզում եմ ու լուռ պաղատում –

Խնդի՛րք եմ անում Իրան,

Էրազիս մի կտոր լո՛ւս տու էս բանտում,

Ու աչքդ լա՛վ պահի վրան:

Աչքերդ հասնում են, սիրտըտ չի հասնում:

Էրազի դյա՛կն են քանդում:

Մղձավանջն ա հա՛ – բո՛լ-բոլ բորբըսնում

Անրջի անտա՛ռ ու հանդում:

Աչքն ախր – հե՛ջ բան ա, սի՛րտն ա սրատես,

Բախտն էլ – սե՛վ, չարագո՛ւժ կատու,

Էս մղձավանջն էլ – լրտե՛ս ու լրտես –

Անուրջ ու էրա՛զ ա ուտում:

Աչքերդ տենո՛ւմ են, սիրտըտ չի՞ նայում,

Անուրջըս – անտե՛ր ու անտուն,

Հույսի օրհասը սիրտ չի՞ խնայում,

Գարունը գնացել ա տուն:

Որ ոտանավոր գրելը նոր էի սկսե, միտք ունեի՝ ոտանավորի սաղ ձեվերի տեխնիկան էլ սովորեմ ու սաղով էլ լավ ոտանավոր գրեմ ու շա՛տ գրեմ: Այսինքը, ուզում էի տնետ, տրիոլետ, ռոնդո, տերցին ու սրանց պես ուրիշ բան գրեմ. գրեմ գագել, ռուբայի ու բեյթ ևն: Մեր գրականությունն էս ձեվերից աղքատ ա, սրանցով կարելոր քիչ բան ունի:

Ասել եմ արդեն, որ ամերիկացի Ֆրոստը, օրինակ, ռուբային պարսիկներից ա սովորե, բայց ռուբայիով մի քանի տնանոց շատ սիրուն ոտանավորներ ա գրե, ու ամեն մի հաջորդ տունն էլ սկսել ա չհանգավորվող տողով: Մեր օրերի հայ «հանճարեղ» պոետներից մեկը սրանցից թարգմանել ա, ու գլխի չի ընգե, որ սրանք էս ձեվով կապված ռուբայի են):

Ուզում էի՝ ուրիշ, օտար պոետներից սովորեմ սրանց գրելու ձեվերը, ու էս ձեվերով հայերեն սիրուն բաներ սարքեմ:

Բայց երբ տեսա, որ ոտանավորի պահանջարկը չկա, ու համ էլ պտի տունդ պահեա (ոտանավոր գրելով տունդ էլ չես պահի, մենակ քեզ է՛լ չես պահի), էլի հետ դառա աշակերտ պարագելուն, բայց ազատ ժամանակս էլի գրականությունով ու լեզվաբանության պրոբլեմներով էի զբաղվում:

Ուրեմը, 1990 թվին Արեվիկ հրատարակչության տնօրենն առաջարկեց, որ Հեմինգվեյի **Ծերունին ու ծովը** թարգմանեմ: Թարգմանեցի, բայց արածիցս գոհ չէղա, դուրըս չէր գալի: Հետո հասկացա, որ էտ 70-ն անց ու համարյա անգրագետ ծերունին ու լրիվ անգրագետ ութ տարեկան Մանդյոն իրար հետ չպտի գրական ոճով խոսան, չի սագում:

էտ վախտը գրական ոճերի թունդ հետեվորդն էի, բայց հենց որ հասկացա, որ էս ոճերի հնարավորությունները շա՛տ են սահմանափակ, ու որ սրանք հազվադեպ են սիրուն, քիչ-քիչ անցա էրեվանի բարբառով սարքած իմ գրական ոճին: Սկզբում փորձեցի հրաժարվեմ **այս, այդ, այն** ցուցականներից, ու գրեմ **ես, էդ, էն**-ով. հետո քիչ-քիչ բարբառի գործածությունը շատացրի, մինչեվ լրիվ հասկացա, թե ինչը ոնց պտի անեմ:

էս պրոցեսը շատ տանջալի էր, որտեվ սաղ էլ ասում էին, որ սխալ բան եմ անում, ու էս անընդհատ հետ էի դառնում գրական ոճերին, հետո գրածներս նորից փոխում էի իմ բարբառային գրականով: Հմի չեմ է՛լ հիշում, թե քանի՛ անգամ եմ գրածներս ըսենց հետ ու առաջ փոխփխե, մինչեվ հասել եմ իմ էս բարբառային գրական ոճին: Իմ էս գիրքը գրելը տևել ա 23 տարի:

էս մի ռուբային ու էս ոտանավորը շատ ուշ եմ գրե, երբ արդեն ոտանավոր էլ համարյա չէի գրում: Սրա համար էլ սրանց գրելու վախտը արդեն ահագին «դատարկ» էի (տես սրա նախորդ ոտանավորի էսեն), ու սրանք արդեն էնքան լավը չեն, ինչքան իմ ամենալավ ոտանավորները:

Առհասարակ, հա՛ ուզեցել եմ լիքը ռուբայի գրեմ, բայց հա է՛լ ժամանակ չի էղե: Ափսոս, բայց ի՞նչ անեմ:

Միջակ ոտանավոր ա, բայց վրի իմ քառյակը՝ ոչինչ:

81. Անլուծելի ոչ մի խնդիր չի էղե ու – չի էլ ըլնի էս աշխարհում:
 Անմեկին ու անհայտ մի բան – չի էղե ու – չի էլ ըլնի էս աշխարհում:
 Ով ծանոթ ա հող ու որդին, ու մեռել ա գեթ մի անգամ, լավ գիդի, որ –
 Անպատասխան հարց-հանելուկ – չի էղե ու – չի էլ ըլնի էս աշխարհում:

Խփի՛, նորի՛ց խփի:
 Ու թե կուզես –
 Չարքի՛ նման խփի:
 Ու թո հազար կատղած
 Ցուլ ու բուղա ու եզ –
 Գա ու վրե՛ս թափի...

Կամ թո հազար արլեզ
 Հոտած լե՛շըս լափի –
 Արդեն մի թափ –
 Մեռած մարդու համար
 Մեկ չի՞:

Մեկ չի՞,
 Սաղ, թե մեռած,
 Թե որ –

Հազար-հազար աստղ –
 Ու մոլորակ –
 Ու լուսին կա սառած:

Ու թե Ի՛նքն ա չարչի,
 Էտ Բրուտը –
 Յանի՛
 Անգերազանց,
 Հողից ծնվածն էլ ի՞նչ անի,
 Վարի՞, ցանի՞,
 Համ էլ՛ իրա բախտի թե՛ լը մանի.
 Էլ ի՞նչ անի էտ խեղճ հողածինը –
 Ծորտը ամեն մեծ ու մանր
 Լկտի՛ խանի:

Ու էս բեռը,
 Անտանելի ծանր,
 Ո՞վ չի հետը տանի,
 Որ սառն ու սեվ հողի տակի –
 Որդ ու թրթուրների՛ն –
 Բաժին հանի:

Գլուխ 11 ՈՏԱՆԱՎՈՐ ԳՐԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Ոտանավոր գրելն իմ համար որակյալ արհեստի կամ էլ՝ գիտական աշխատանքի պես մի բան ա: Էս գրքիս մեջ ես դրել եմ իմ գրած 81 ոտանավորը, ու սրանք համարյա սաղ էլ, չհաշված մի իրեք-չորս հատը, համարում եմ տպելու արժանի ու ոչ վատը: Էն մի քանի թույլ ոտանավորն էլ կամ ձեվո՛վ են հետաքրքիր, կամ էլ մի ուրիշ կարեվոր բան ունեն (ի՛մ համար, իհարկե, բայց համ էլ՝ ոտանավոր գրելը նոր սովորողների համար):

Արդեն ասել եմ, որ սրանք, համարյա սաղ էլ, չարչարանքով եմ գրե: Բայց երեվի կարդացողին, մանավանդ սկսնակ պոետներին, հետաքրքիր ըլնի, թե ոտանավորի սկզբի վարյանտների ու վերջնական տեսքի տարբերությունն ինչքան ա: Սրա համար էլ էս ոտանավորների մեկ-երկու սկզբի վարյանտներից դնում եմ ըստեղ (ափսոս, ամենասառաջի վարյանտները չքթա, որ դրանք է՛լ դնեմ):

2.ա ՀԵՐՆ Է՛Լ ԱՆԻԾԱԾ

**23-րդ տարբերակը
10.06.89**

Դողում է, լողում գիշերը, մոտ գալիս, էլի հեռանում,
Թարթում են աղոտ աստղերը՝ խավար երկնքի հոգում:
Ավերակներիս հուշերը հեռվից ինձ ձեռքով են անում:
Փրփրում է կարոտիս գինին ու ցավս էլի նորոգում:

Մի՞թե ես էլ եմ մի օր տաս համար կոշիկ հագել:
Չեմ հիշում, գուցե: Չկա իմ անցյալ երագի վկան:
Ապագան դռներն իր լուսե՝ գոցել է, ճամփեքը փակել,
Ինձ համար արդեն ոչ մի տաս համար կոշիկ չկա:

Ո՞ր է որբացած շիրիմը՝ մանկության երագ դրախտի:
Կուզեի մեխակներ դնել, խունկ ծխել հուշերիս համար,
Հեկեկալ սգվորի նման, ու մի լավ հայհոյել բախտին,
Որ այդպես բթամիտն է նա: Թե՞ ես եմ բութ ու հիմար:

Դիվահար գիշերը լողո՛ւմ, լողո՛ւմ է հուշերիս շեմին:
Ավերակներիս փշերը քրքրում են կարոտիս ցավը,
Աստղալույսի փեշերը դողում են երագիս բեմին,
Փրփրում հուշերիս գինին ու լցնում ցավիս գավը:

Ես շատ պոետ գիղեմ, ով որ էսի գրեր (ու նույնիսկ սրանից թույլը), կհամարեր, որ արդեն պրծել ա, որ արդեն մի ընտիր բան ա գրե: Բայց ես իմ գրածը, ահավոր դաժանությունով, էնքան եմ խմբագրում ու փոխփխում, մինչեվ որ հասնեմ ասելիքիս, այսինքը, պատմածիս մաքսիմում ճշտությանը: Ու ես սրանից տարիներով գոհ չեղա, մինչեվ չհիշեցի Համալսարանի հայրու պատմությունը: Թե խի՞ ու ո՞նց հիշեցի, իմ համար էլ ա գաղտնիք: Պրոֆեսսորնայի ինտուիցյան էլ հենց ըսենց բաներ հիշելն ա:

Պոետը իրա պրոֆեսսորնալ ինտուիցիան պտի զարգացնի, պտի մշակի: Դուզը որ ասեմ, էտ ինտուիցիան ճաշակից էնքան էլ տարբեր չի: Ծաշակդ էլ զարգաց-

նում ես՝ ուրիշ վարպետ գրողներին կարդալով ու սկզբում սրանց նմանակելով: նմանակելն էլ ըլնում մենակ ու մենակ թարգմանելով, ուրիշ ձեզ չկա:

Նկարիչներն էսի լավ գիդեն, ավելի ճիշտ, նարչություն դասատուներն էս լավ տրադիցիային անպայման են հետեւում, ու ստիպում են, որ իրանց աշակերտները կոպյա անեն անցյալի ու ներկայի մեծ վարպետներին, որ հետո նոր իրանց ձեւն էլ քթեն, որտեւ արվեստագետի միակ նպատակը՝ նոր ձեւ քթելն ա, ու ո՛չ թե նոր բան ասելը, ոնց որ սխալ-սխալ մտածում են թույ կամ սկսնակ ոտանավոր գրողները:

Ես սեփական փորձով համոզվեցի ու հազգար անգամ կասեմ, որ պոետի (ու համ էլ՝ լեզվաբանի) համար մենակ մի հատ օտար լեզվի գերազանց իմացությունը քի՛չ ա: Ոտանավոր գրողը պոտի ամենաքիչը էրկու հզոր օտար լեզու իմանա, ու լա՛վ իմանա. էնքան լավ իմանա, որ դրանց բարբառներն ու ըսլանգները տարբերի դրանց գրական ոճերից:

Ռուսական գրականությունը հենց սրա՛ համար մի 150 տարում հասավ համաշխարհային մակարդակին ու էտ մակարդակից չի իջնում:

Իմ ճաշակը 89 թվից միչեւ 96 թիվը հաստատ արդեն լավացել էր, ու սրա համար էլ 96-ին գրեցի հետեւյալ էրկու վարյանտը:

2.բ ԱՍՏՎԱԾ ՉԱՆԻ-ԲԱՅՑ Ո՞ՆՑ ՉԱՆԻ

28.04.96

Դիվոտած քշերը լողո՛ւմ ա, մո՛տ գալի՝ էլի հեռանում,
Թարթում են թթու աստղերը բորբըսնած երկնքի հոգում:
Հուշերիս փխրուն ճաքերը – չարախի՛նդ աչքով են անում,
Փրփրում ա կարոտիս թթուն ու ցավս էլի քոքում:

Կարո՞ղ ա ես էլ եմ մի օր տաս համար կոշիկ հագե:
Երեվի: Եսիմ: Չկա՛... անցած էրազիս վկան:
Ապագան սա՛ղ դռներն իրա՛ կողպել ա, ճամփեքը փակե,
Էլ ընձի արդեն ոչ մի... տաս համար կոշիկ չկա:

Քյորփա երազըս մանդրից թթվո՛ւմ ա ու քարանում:
Քշերը մենակ կմախք հնձվո՛րն ա բարեւ տալի:
Ոտներըս ցավում են արդեն, մազոլըս հոգի յա հանում,
Հենց հայլուն մոտ եմ էթում՝ դեմիցս բիձա՛ յա գալի:

Հուշերս շնչում են արդեն...մազե անցյալի հաշվին,
Ու ընենց բրուտ չկա՝ ճաքերս նորից կարի:
Ու բա որ հենց օրվա վերջին... էս կարասն ընե՛նց մաշվի,
Որ ըսկի ոգի չըլնի, որ մեջի մոմը մարի՞...

Դիվոտած քշերը դողո՛ւմ, դողո՛ւմ ա գալիքիս շեմին,
Ավերակներիս ճաքերը փորփրում են կարոտիս ցավը,
Անրջիս ծակ-ծակ փեշերը թառում են մաղձերիս վեմին,
Քրքրում քարացած թթուն ու լցվում օրհասիս նավը:

Մի ամիս հետո էս ոտանավորը դառավ, ա՛յ, ըսե՛նց.

2.գ ԳՐՈՂԻ ՏԱՐԱԾ ՀԱՅԼԻՆ

01.05.96

Լողո՛ւմ ա, դողո՛ւմ քշերը, մո՛տ գալի-էլի հեռանում:
Թարթում են թթու աստղերը բորբըսնած երկնքի հոգում:

Հուշերիս ճաքերը փխրուն – չարախիհնդ աչքով են անում,
Փրփրում ա կարոտիս թթուն ու ցավս էլի քրքում:

Կարո՞ղ ա ես էլ եմ մի օր տաս համար կոշիկ հագե:
Երեվի: Եսիմ: Չկա՛ անցած էրագիս վկան:
Ապագան սա՛ղ դռներն իրա՛ կողպել ա, ճամփեքը փակե,
Էլ ընձի արդեն ոչ մի... տաս համար կոշիկ չկա:

Քյորփա երազըս մանդրից թթվու՛մ ա ու քարանում:
Քշերը մենակ կմախք հնձվո՛րն ա բարեվ տալի:
Ոտներըս ցավում են արդեն, մազուլըս հոգի յա հանում,
Հենց հայլուն մոտ եմ էթում – դեմիցս բիձա՛ յա գալի:

Հուշերս շնչում են արդեն – մազե անցյալի հաշվին,
Ու ընենց բրուտ չկա – ճաքերս նորից կարի:
Ու բա որ հենց օրվա վերջին... էս կարասն ընե՛նց մաշվի,
Որ ըսկի ոգի չըլնի, որ մեջի մոմը մարի՞...

Խի՞ էսքան արագ թռավ:
Ինչքան որ փուշ ու սուր կար – սաղ լցվավ մաղձերիս վեմին:
Աշխրըքի ցավ ու դարդը – էկավ ու ի՛մը դառավ,
Մի՛ վարկյան աչքըս կպավ – ձմեռը չոքեց շեմին:

Էս ո՛նց ա ցավում ախր, էս ո՛նց ա հոգի հանում...

Ու հենց որ մո՛տ եմ էթում, ախրը հենց մո՛տ եմ էթում,
Հե՛նց հայլուն մո՛տ եմ էթում- դեմիցըս բիձա՛ յա գալի:

Էսքանից հետո մոտ մի տարի էլ պետք էղավ, որ էս ոտանավորը, ՀԵՐՆ ԷԼ ԱՆԻԾԱԾ վերնագրով, դառնար է՛ն տեսակ ոտանավոր, ինչն արդեն էլ չի փոխվում, որտեվ պատմելիքս, ի՛մ կարծիքով, արդեն լրի՛վ ա ճիշտ: Ես էսքանն եմ կարում, ու էսի՛ ա էս պատմությունը պատմելու ի՛մ ձեվը: Ով կարա, թո ավելի լավ պատմի:

Մի օրինակ էլ բերեմ. բերեմ էս գրքի 5-րդ ոտանավորի 88-89 թվերի երեվի մի 25-րդ վարյանտը.(Համո Սահյանն է՛ս վարյանտին ասեց, թե «հին ա»):

5.ա ՆՈԿՏՅՈՒՐՆ

Կուզենայի գրկել մանկությունս ոսկե,
Ու հեկեկալ անմեղ երագներիս համար,
Որ չորացան դարձան տերեվագուրկ ոստեր,
Եվ հուշերիս ծառը անմարմին է հիմա:

Ու հիշում եմ թեև այն երկիրը հեռու,
Ուր թողել եմ օդե դոյակներս բյուրեղ,
Յամաքել է, սակայն, երագներիս առուն,
Անուրջներիս վարդն էլ՝ դարձել է սև բաղեղ:

Եվ լա՛վ գիտեմ, որ էլ լուսե օրեր չկան
Ապագայիս սզվոր օրացույցի վրա:

Բավական է, թող էլ նոր երազներ չգան,
Թող որ այսպես մնա, համաձայն եմ սրան:

Հրեն մի վարյանտ էլ, ինչը, իմ կարծիքով, արդեն շատ լավ ուտանավոր ա: Բայց ես էլի գոհ չեղա, ու էնքան փոխեցի, մինչեւ էլ չփոխվեց:

Տ.Ք ՆՈԿՏՅՈՒՐՆ

2007, 52-րդ վարյանտը

Ո՛նց եմ ուզում գրկեմ մանկությունըս ոսկի
Ու արցունքով սրբեմ հուշ անցյալըս փոշի,
Որ խեղճացած–
Հա՛ կարոտ ա քաղցր խոսքի:
Ախր ո՛րբ են, ո՛րբ են անմեղ երազներըս հուշի:

Ու թողել եմ օդե դոյակներըս բյուրեղ
Լավ չեմ հիշում արդեն՝ ո՞ր մի երգրում հեռու:
Դրախտիս մեջ մանուկ՝ մենակ փո՛ւշ ու բաղեղ,
Ծով անուրջըս–
Գյո՛ւ ա արդեն, գյո՛ւ ա արդեն ու չի՛ եռում:

Ու լավ գիդեմ, որ էլ ո՛չ մի լուս օր չկա
Ապագայիս սրբվոր օրացուցի վրա:
Է՛ ի՛նչ անեմ–
Թո էլ՝ ո՛չ մի երազ չըգա:
Տո թո՛ սե՛նց մնա, համաձայն եմ սրան:

ՀԱՎԵԼՎԱԾ

1 ՀԱՅԵՐԻ ԳՐԱՊԱՅՔԱՐՆԵՐԸ

1.1 Ի՞նչ Ա ԳՐԱՊԱՅՔԱՐԸ

«Գրապայքար» են ասում այն հինավուրց վեճին, թե գրողներն ի՞նչ լեզվով գրեն, հենց ժողովրդի խոսակցական լեզվով, թե՞ գրողների հորինած գրական ոճերով:

Հայերն ամենաքիչը հինգը գրապայքար են արել, մի անգամ 5-7-րդ դարերում, երկրորդը՝ 16-17-րդ դարերում, երրորդը՝ սրանից հետո մինչեւ Աբովյանը, չորրորդը՝ Աբովյանի օրերից մինչեւ 20-րդ դարի սկզբները, հինգերորդը՝ սկսած 1992 թվից մինչեւ հմի: (Հինգերորդը ես եմ սկսել, Արմեն Շեկոյանն ու ուրիշներն էլ հետո միացան, բայց ոչ հետևողական):

Առաջին «գրապայքարի» հեղինակները մեր *հունարան* կոչված հեղինակներն էին, ովքեր, Մաշտոցից ընդամենը 20-30 տարի հետո, ուզում էին, որ քերականները գրեն ու խոսան **հունարենի ձևով սարքած մի «հայերենով»:**

Հունարանների էս փորձն անհեթեթ էր ու այսօրվա տեսանկյունից՝ անհավատալի, ու դատապարտելի չէր, որովհետև այն օրերին գիտության մակարդակը ցածր էր, ու մարդկության փորձն էլ շատ քիչ էր: Ինչ որ է, **այս արտառոց գրապայքարը տևեց ամենաքիչը՝ 200 երկար ու ձիգ տարի,** մինչև հունարանները հրաժարվեցին սրանից, որովհետև տեսան, որ իրենց վիթխարի ճիգ ու ջանքը ոչ մի պտուղ չի տալիս:

Խորենացու վկայությունով («Հայոց պատմություն», Գիրք II. գլ. է) այն օրերի **գյուղացիները (գեղջուկները), թագավորների հրամանով պարտավոր էին հարգեն քաղաքացիներին ու պաղաքացիներին վերաբերվեն այնպես, ինչպես իշխաններին են վերաբերվում:**

Պարզ է, որ սա պիտի **գեղջուկի ու ամեն գեղջկականի նկատմամբ առաջացներ խոր մի արհամարհանք,** ինչը հին աշխարհում տարածված ու սովորական բան էր: **Արհամարհանք առաջացավ նաև «գեղջուկ բանի»,** այսինքն, **լեզվի նկատմամբ,** բուն հայերեն ու միակ ճշմարիտ, միակ գեղեցիկ լեզվի նկատմամբ:

Օրինակ, ներսես Շնորհալին, Հովհաննես կաթողիկոսը, Գրիգոր Մագիստրոսը՝ իրենց այս արհամարհական վերաբերմունքն են արտահայտել պարզ խոսքի («մեկին բանի») նկատմամբ ու հորդորել են, որ գրեն՝ «ծածուկ ճառի», որ ժողովրդի մեծ մասը չհասկանա (տես, օրինակ՝ **Ս. Ղ.**

Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երեվան, 1981, էջ 191-192):

Դավիթ Անհաղթ փիլիսոփան, օրինակ, կշտամբանքով ասում ա, որ ուրիշ տեղերը խոսում են սովորությունով, ոչ թե «հմտաբար». «Բայց յայլ վայրս, որպես Կորճայք, վարին կրականին ոչ հմտաբար, այլ ըստ սովորութեան» (*ԻԲ.*, էջ 177): Ուրեմն, Դավիթ փիլիսոփան է՛լ է դեմ եղել կրավորականի կենդանի ձևերին:

Այս մտայնությունն այսօր էլ կա: Այսօր էլ մեր քերականները ահավոր արհամարհում են «փողոցային» լեզուն, որովհետև հաճախ սրանով խոսում են իրենց համար «հույժ» ասելի մարդիկ: Բայց լեզուն ի՛նչ մեղավոր է, որ սրանով գո՛ղն էլ է խոսում, խաբեբան է՛լ, խարդախն է՛լ, ավազակն է՛լ, անբարոն է՛լ ևն:

Լեզուն բոլորի՛ համար է:

Մեր քերականները, սրան հակառակ ու հակառակ Լեզվի Գլխավոր Օրենքին, իրենց զգվանքն ու ասելությունը (այս իրոք որ անընդունելի մարդկանց նկատմամբ) տարածում են հայերեն կենդանի լեզվի վրա, ու քանի որ զորություն չունեն էտ մարդկանց ստիպելու, որ հենց դրա՛նք ուրիշ լեզվով խոսեն, իրեն՛ք են իրենց լեզուն փոխում ու «խոսում են» «գրական լեզու» կոչված արհեստական ոճերով:

Ու ի՞նչ է ստացվում: Ստացվում է հետևյալը: **Ճիշտ հայերենով խոսում է հենց այս «ասելի, զգվելի» մարդկանց խումբը:** (Նկատի ունեմ քերականությունը ու ոչ թե ոճը կամ կեցվածքն ու խոսակցության բովանդակությունը, ինչը սրանց խոսք ու ձևի մեջ, իհարկե, զգվելի է):

1.2 ՄԵՐ ՀՈՒՆԱԲԱՆ ՄԱՔՐԱՄՈՆԵՐԸ

Նո՞ր երևույթ ա էսի: Պարզվում ա, որ չէ: Պարզվում ա, որ էսօրվա մաքրամոլները՝ հնագույն մաքրամոլների նորօրյա ժառանգներն են միայն:

Գրերի գյուտից ու Ս. Գիրքը թարգմանելուց հետո, մեր առաջին թարգմանները «ձեռք զարկեցին «հայոց լեզուն» մշակելուն», Ս. Գրքի օրինակով, այսինքը, օտարաբանություններին հետևելով: (Ս. Գրքի մեջ թերևս լիքը օտարաբանություն կա, որ ուղղակի թարգմանական կալկա է): Արդեն մոտ 460 թվից՝ մեր հնագույն մաքրամոլները (հունաբան հեղինակները կոչվածները), էս գործը «գիտական հիմքի վրա դրեցին»:

Տարօրինակ ա, բայց հունաբանների արածն էսօր էլ ա համարվում ինչ-որ չափով դրական (տես, օրինակ *նույն տեղը*, էջ 162-194): Այնինչ, սրանց գործունեությունը դեմ էր Լեզվի Գլխավոր Օրենքին ու արտառոց էր՝ **կենդանի հայերենի նկատմամբ իր ասելությունով:**

- Հունաբանները հայտարարեցին, որ հունարեն լեզուն չքնաղ ա, իսկ կենդանի հայերենը ռամիկ ու զգվելի, ու որ հայերեն լեզուն պտի «մշակվի» հունարենի ձևով ու ոգով, որ դառնա կատարյալ: Ու այ թե ինչ արեցին հունաբանները:

• Սրանք, հետևելով հունարենին, նախ բազմաթիվ նախածանց հորինեցին ու սրանց միջոցով ստեղծեցին վիթխարի քանակով բառ ու տերմին: Էս բառերը, չնչին բացառություններով երևի, կենդանի լեզու չմտան: Սրանց մեծ մասը մեռավ, մի մասն էսօր գործածում են մենակ էսօրվա գրական ոճերը: Սրանք սաղ էլ բազմավանկ են ու հաճախ՝ անճաշակ: Բայց ոչինչ, էսի էսօր է՛լ են անում:

(Օրինակ, *երկրաչափություն* ու *տրամագիծ* տերմինները հունաբանների հորինածն են: Առաջինի տեղը հնարավոր էր, որ ասվեր, օրինակ, *չափոցք* կամ *չափուց*, կամ *չափանք* ևն, իսկ երկրորդի տեղը, օրինակ, *գերլար*: Բայց հունաբանները ուղղակի պատճենել են հունարենի *գեոմետրիա*-ն ու *դիամետր*-ը, որովհետև մտքներով չի անցել, որ լավ կլինի, որ տերմինը կարճ լինի: Իհարկե, էսի մեղադրանք չի, ուղղակի էն օրերի գիտության մակարդակն էսի՛ էր:

(Եվրոպացիներն ու ուրիշները վեկավել են էս տերմինների հենց հունարենը, ինչն ավելի ձեռնտու ա):

• Հին հունարենը, եզակի ու հոգնակի թվի հետ միասին, ուներ համ էլ **երկակի** թիվ, ինչը գործածվում էր զույգ առարկաների համար: (Էսի հատուկ ա լեզուների հնագույն շրջանին ու սրա հետքերը, օրինակ, էսօրվա հայերենի մեջ է՛լ, անգլերենի մեջ է՛լ, էլի՛ կան):

Իսկ ռուսերենն էսօր էլ ունի երկակի թիվ, ինչը տարածել է երեքի ու չորսի վրա): Օրինակ՝ ռուսն ասում է.

один стол (եզակի թիվ),
два стола (երկակի թիվ),
три стола (երկակի թիվ),
четыре стола (երկակի թիվ),
пять столов (հոգնակի թիվ մինչև 20-ը),

հետո

двадцать один стол (եզակի թիվ),
двадцать два стола (երկակի թիվ),
двадцать три стола (երկակի թիվ),
двадцать четыре стола (երկակի թիվ),
двадцать пять столов (հոգնակի թիվ մինչև 30-ը) ևն:

• Հայերենը, Մաշտոցի օրերին արդեն, երկակի թիվ չուներ, ու հայերն էն օրերին գաղափար անգամ չուներին, որ հայերենը մեզնից մի 5000 տարի առաջ երկակի թիվ ա ունեցել: Հայերենի երկակի թվի մի քանի բեկորը Մաշտոցի օրերին էլ հլը կար:

Օրինակ, հայը մի *աչքին* ասում էր՝ *ակն*, երկուսին՝ *աչք*, իսկ երկուսից ավելին՝ *ակուոնք*: *Ակն-ը* հնագույն (հլը հնդեվրոպական ընդհանրության շրջանից ժառանգած) եզակին էր, *աչք-ը*՝ էս բառի երկակի թիվն էր, իսկ

ակունք-ը՝ հոգնակին: Նույն ձևով, հայր մի ականջին ասում էր՝ **ունկն**, երկուսին՝ **ականջք**, իսկ երկուսից ավել ականջին՝ **ունկունք**:

- Հունաբանները հայերեն գոյականների ու բայերի համար երկակի թիվ հորինեցին ու հետո էլ՝ սրանց համար երկակի հոլովմունք ու խոնարհմունք հորինեցին:

- Հունաբան փոխողները հորինեցին հոլովական շատ նախածանց ու վերջածանց, որ հայոց լեզուն ուղղակի չուներ, բայց հունարենն ուներ:

- Հունաբան փոխողները երկակի թվով դերանուններ հորինեցին, դերանունների համար սեռ հորինեցին, որ հայերենը չուներ, բայց հունարենն ուներ (հմմտ. ռուս. **он, она, оно**):

- Հունաբան փոխողները թվականների համար էլ սեռ հորինեցին, որ հայերենը չուներ, բայց հունարենն ուներ (հմմտ. ռուս. **одна, одна, одно**):

- Հունաբան փոխողները հոլովներ հորինեցին, որ հայերենը չուներ, բայց հունարենն ուներ:

- Հունաբան փոխողները բայերի համար՝ ձևով տարբերվող սեռ հորինեցին, որ հայերենը չուներ, բայց հունարենն ուներ:

- Հունաբան փոխողները հորինեցին բայի է՛ն տեսակ ժամանակներ ու եղանակներ, որ հայերենը չուներ, բայց հունարենն ուներ:

- Հունաբան փոխողները գոյականների համար սեռ ու դրանց համար հոլովմունք հորինեցին, որ հայերենը չուներ, բայց հունարենն ուներ (հմմտ լուս. **дом, стена, поле**):

- Հունաբան փոխողների թարգմանություններն էնքա՛ն «մշակված» ու հունացված, որ շատ հաճախ, դրանց գործերը հասկանալու համար, ստիպված պիտի բնագիրը կարդաս:

Հունաբան փոխողներն էլի շա՛տ ու շա՛տ անտեղի բան են արել, բայց հիմա տեղը չի դրանց մասին պատմելու (**Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները**, Վիեննա, 1925, **Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն**, I, II., **Ծ. ԸՊՏՎՓ, ԺՆՏՎՌՐՈՒՆ ԻՐՈՍՈՒՌՍՈՒՆ ՌՐՎ՝ վրՍՌպ ՅՏսՍՏՂՈՑպսՌ**, 1915):

Հունաբան փոխողների էս էքսպերիմենտը տևել ա մոտ **երկու հարուր** երկար ու ձիգ տարի: Էս էքսպերիմենտն ապշեցնում է իրա համառությունով ու հետևողականությունով ու **կենդանի հայերենի նկատմամբ իրա անսահման արհմարհանքով**:

Միաժամանակ էսի անառարկելի ապացույց ա, որ **գրական հայերենը համարվել ա մենակ գրագետ վերնախավի մենաշնորհը**, իսկ ժողովրդի ստեղծած բանահյուսությունը, մանավանդ հեթանոսականը, լրիվ արհամարհվել ու թաքուի տակ ա եղել:

Մեր առաջին թարգմանները (սրանց հետևելով՝ նաև հետագաները) երբեք էլ մենակ զուտ գրական կամ գիտական գործիչ չեն եղել: Մեր թարգմանները եղել են ուսյալ քաղգործիչներ, որովհետև հենց սրանք էին, որ պիտի քաղաքականությունը վարեին, սկզբում՝ մեր պարթև

Արշակունիների օգտին, իսկ հետո էլ՝ հայ եկեղեցու օգտին, որ ժողովրդին հավատափոխ անեին ու դարձնեին քրիստոնյա:

Էսի էլ պետք էր, որ մեր պարթեվ Արշակունի թագավորներն իրանց իշխանությունը չկորցնեին:

1.3 ՀԱՅԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՐԱՊԱՅՔԱՐԸ

Երկրորդ փորձն արին լատինաբանները՝ Մխիթարյան հայրերը, ում վաստակը, իհարկե, անուրանալի է: **Բայց սրանք էլ ուզում էին հայերեն գրական ոճերը ձևեն ու կարեն լատիներենի օրինակով:** Մի 150, եթե ոչ 200 տարի էլ՝ է՛ս «գրապայքարը» տևեց, ու իհարկե՝ է՛լի անարդյունք:

1.4 ՀԱՅԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԳՐԱՊԱՅՔԱՐԸ

Երբ մեր եվրոպայի լատինաբան հայրերը տեսան, որ իրանց չարչարանքն իզուր ա, ու անհնար ա, որ հայերենը դառնա լատինատիպ, որոշեցին, որ հայերը պտի գրեն ոսկեդարյան գրաբարով, ու հետո էլ, յուրացնելով էս գրաբարը, համ էլ խոսան էս գրաբարով:

Ոսկեդարյան գրաբարն է՛ն գրաբարն ա, ինչով գրում էին Մաշտոցն ու իրա աշակերտները՝ մինչև հունաբան հեղինակները, այսինքն, մինչև մոտ 440-450 թվերը: Էս գրաբարով են գրված Ս. Գիրքն ու մեր առաջին հեղինակների գործերը:

Ոսկեդարյան գրաբարը երեվի շատ էր մոտ էն օրերի Արարատյան բարբառին, ու այս բարբառից տարբերվում էր իրա բառապաշարի մի մասով, ու թարգմանական է՛ն անխուսափելի կալկաներով, որ Մաշտոցն ու մեր առաջին հեղինակներն էին արե հունական ու ասորական ու ուրիշ աղբյուրներից թարգմանելուց:

(Մի ուրիշ տեղ ասել եմ **[]**, որ Մաշտոցի թարգմանած առաջին իսկ խոսքը հունարենի կալկան ա, ու էսի բնական էր, որովհետև թարգմանական արվեստն ու լեզվաբանությունը էն օրերին նոր էր ձևավորվում, մանավանդ Հայաստանում:

(Ուրեմն, մեր էս շրջանի հին գրականության մեջ պտի որ լիքը թարգմանական կալկա ընի, թե՛ բառապաշարային, թե՛ շարահյուսական: Բառերի փոխառյալությունը քննվել է, ու էսի ամփոփված է **Հր. Աճառյանի []** ու **Հր. Մարտիրոսյանի [] հրաշալի բառարաններում:**

(Բայց է՛ն հարցը, թե էս փոխառյալ բառերից որո՛նք էին արդեն հայերեն, այսինքը, որոնք էին փոխ առնվե բանավոր ճամփով, ու ժողովուրդն արդեն դրանք գործ էր ածում համարյա բնագրով, ճիշտ՝ ոնց որ էսօրվա հայերն են համարյա բնագրով գործածում ռուսերենից փոխ առած **դաժե** (= **նույնիսկ**) ու **պռոստը** (= **ուղղակի**) բառերը, երբևէ լուրջ ու հանգամանալի չի քննվել:

(Իսկ ձևաբանական ու շարահյուսական փոխառությունների հարցը հեշ չի քննվել, ինչն ապացուցվում է այն փաստով, որ մինչև իմ ասելը ոչ

մեկը չէր նկատել, որ Մաշտոցի թարգմանած հենց առաջին խոսքը հունարենի կալկան է:

(Իհարկե, էս քննությունը չափազանց դժվար ա, բայց հայագիտության համար խիստ կարևոր ա):

Ոսկեդարյան գրաբարով գրեցին մինչև Աբովյանի Վերքի հրատարակությունը, գրեցին, օրինակ հայր Ղևոնդ Ալիշանը, հայր Արսեն Բագրատունին ու ուրիշները:

Էս փորձն էլ տևեց մի 150 տարի: Ու մինչ եվրոպացիք ու ռուսները վաղուց արդեն գրում էին ժողովրդի կենդանի՝ բարբառներով, կենդանի՝ լեզվով, ու հրաժարվել էին նույնիսկ կլասիցիստական ոճից, մխիթարյան հայր Արսեն Բագրատունին, կլասիցիստներին ու *Իլիականին* ընդօրինակելով, ընդամենը մի 150 տարի առաջ (**բայց հույներից 26 դար հետո**), գրեց իրա **Հայկ դյուցազնը**, գրեց էտ գովաբանած ոսկեդարյան գրաբարով: Գրեց, բայց արդեն ուշ էր, ու համարյա ոչ մեկն էլ չկարդաց էս գործը, ու հայերի մեծ մասն էսօր սրա մասին նույնիսկ չգիդի:

Գրեց, ու գրեց է՛ն օրերին, երբ իրենց աշխարհաբարներով գրել էին՝ **Չոսերը, Շեքսպիրը, Միլթոնը, Սերվանտեսը, Լոպե դե Վեգան, Դանթեն, Պետրարկան, Բոկաչոն, Ռաբլեն, Հոլբախը, Վոլտերը, Դիդրոն, Գյոթեն, Հումբոլդտը, Լոմոնոսովը, Կռիլովը, Ժուկովսկին, Պուշկինը, Բալզակը, Ստենդալը, Մերիմեն, Դիկենսը, Շիլերը, Վուլթմենը**, ևն, ևն:

Բայց Վերքի հրատարակությունից հետո արդեն պարզ էր, որ ճիշտ ուղին աշխարհաբարով գրելն է, ու համարյա սաղ էլ դադարեցին գրաբարով գրելը, նույնիսկ եկեղեցականները:

1.4 ՀԱՅԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ԳՐԱՊԱՅՔԱՐԸ

Հերթը հասավ Խաչատուր Աբովյանին:

Աբովյանն սկզբում գրում էր գրաբարով, ինչը հոյակապ գիտեր, բայց Դորպատի համալսարանն ավարտելուց ու Հայաստան գալուց հետո, համարյա առանց ընդմիջելու, գրեց **Արարատյան բարբառի համարյա հրեվանի խոսվածքով**: Գրեց միանգամից շատ, ու էն օրերի համար կարևոր բաներ գրեց: Գրեց իրա *Նախաշավիղը, Վերք Հայաստանին, Հազարփեշեն* ու *Պարապ վախտվա խաղալիքն* ու էլի ուրիշ բաներ, ու էսի՝ արդեն 1839-1848 թվերին:

Աբովյանի կենդանության օրոք սրանցից հրատարակվեց մենակ *Նախաշավիղը*, հրատարակվեց կիսատ-պռատ ու բազում սխալով, իսկ *Վերքը* հրատարակվեց Աբովյանի կորելուց 10 տարի հետո միայն, 1858 թվին, երբ որ հայր Արսեն Բագրատունին գրաբարով հրատարակեց իր **Հայկ դյուցազնը**:

Ես Աբովյանի կյանքն ու գործերն ու գրածները ահագին մանրամասն եմ նայե, ու ընձի թվում ա, թե իրան շատ լավ եմ հասկանում, որովհետև

ընձի է՛լ են անընդհատ հայհոյում, ու համարյա նույն պատճառներով ու նույն բաների համար, ինչ որ (ու ոնց որ) իրան:

Ես համարյա չեմ կասկածում, որ երբ Աբովյանի Դորպատի պրոֆեսորներն Աբովյանի պատմաժներից իմացել են, որ հայերն արդեն 15 դար ա, ինչ այբուբեն ու գիր ունեն, բայց մինչև հիմա իրենց գրաբարից չեն հրաժարվել, շատ են զարմացել, ու Աբովյանին բացատրել են, որ հայերը գրաբարից պիտի անպայման հրաժարվեն, որովհետև **գրագետը ժողովրդի՛ համար ա գրում:**

Իսկ էսի նշանակում ա, որ գրողը գրում ա **ժողովրդի մե՛ծ մասի համար**, ու ոչ թե էլիտայի (այսինքն, «ընտրյալների») համար, որովհետև, **թե որ ժողովրդի մեծ մասը հասկացավ էս գրածը, էլիտան կհասկանա՛ ու կհասկանա:**

Ու Աբովյանի պրոֆեսորները համ էլ երեվի բացատրել են Աբովյանին, որ էն օրերի լուսավոր Եվրոպայի առաջավոր ժողովուրդներն արդեն մի հինգ-վեց հարուր տարի ա, ինչ հրաժարվել են իրանց գրաբարներից:

Բացատրելը քիչ ա: Աբովյանը Դորպատի կյանքի ամեն մի չնչին մանրամասնով տեսե ու զգացե ու համոզվել ա, թե մենք՝ հայերս, ի՛նչքան հետամնաց ու խեղճուկրակ ենք: Ու Աբովյանը Հայաստան ա էկե, որ ի վերջո իրո՛ք լուսավորի իրա հարազատ ու միակ ազգին, էն հույսով, որ հենց որ ինքը ճիշտը ասեց, սաղ էլ վռազ գոռալու են.

– Ուռռաա՛, վերջը մեր միակ ճշմարիտ մարգարեն էկավ ու ճշմարտությունն ասեց, ու մենք սաղս էլ էթալու ենք իրա հետևից:

Բայց էսի չեղավ: Էն օրերի հայ գրագետները չհամաձայնին Աբովյանի արածներին ու գրածներին:

Աբովյանը հետ էր դառե Հայաստան, որ ազգին լուսավորեր է՛ն լուսով, ինչը Դորպատից էր բերե, ու էս լուսավորչությունն իրա կյանքի ողջ իմաստն ու միակ նպատակն էր: **Ու տեսավ, որ ինքն ու իրա արածները ոչ մեկին պետք չեն:**

Աբովյանն ահավոր վառ երևակայությունով մի սարսափելի զգայուն մարդ էր, ու շատ-շատ էլ փխրուն փսիփսիկա ուներ: Հայտնի ա, օրինակ, որ **Վերք Հայաստանին** գրելու ժամանակ էնքան ուժեղ էր ապրում իրա ստեղծած հերոսների կյանքով, որ հենց գրելու ընթացքում իրանց հետ ծիծաղում ու լաց էր ըլնում, ու մեկ-մեկ էլ, ապրածի ուժգնությունից ուշքը գնում ու ընգնում էր, ու ժամերով պառկած էր մնում:

Չնայած ոչ մի փաստ չունեմ, բայց համարյա վստահ եմ, որ Աբովյանին ոչ մեկն է՛լ չի սպանել: Ես համարյա վստահ եմ, որ երբ Աբովյանը տեսել ա, որ իրա արածները չեն ընդունում, որ ըստ էության՝ ինքը ոնց որ թե Հայաստանում ոչ մեկին պետք չի, մի օր սուսուփուս գլուխն առել, տնից դուս ա էկե ու գնացել ա՝ ու ո՞վ իմանա, թե ո՛ր քարից ա թռե ցած, որ ազատվի իրա ու իրա ազգի դարդ ու ցավերի մասին մտածելուց, որտեղ տեսել ա, որ իրա կյանքն էլ ո՛չ մի իմաստ չունի: Բա էլ ի՞նչ աներ:

Ես սրան հավատում եմ, որտեղ Աբովյանն իրա **Վերքի Հառաջաբանում** ասում ա, թե մեր ազգի ցավ ու դարդի մասին

«...մտածելով՝ օրս ու ումբրս մաշվել էր: Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: ...»

«Թո լսողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ ետ սիրտս լիքը տուն գալիս: ... Հենց է՛ս էր պատճառը, որ...մեկ օր էլ...գնացի նեմեցի կոլոնիեն, մեկ նեմեց բարեկամի մոտ. նրանք էլ ինձ վրա ցավելով՝ իրեք օր չթողին գամ քաղաքը: Բայց քաղաքում... իմ սուգս վաղուց էին արել»:

Երվանդ Շահագիզի ասելով (*Դիվան Խ. Աբովյանի*, Արմֆան, Յերեվան, 1949, էջ՝ 346), էս բանը էղել ա հլը 1841 թվին, ու Աբովյանի աշակերտները վերջը Թիֆլիսի էտ գերմանական գաղութում քթնում են Աբովյանին «մի գերմանացու տան լուսամուտի առաջ տխուր նստած»:

Սրան հավատում եմ, որտեղ Աբովյանն իրա **Վերքի Հառաջաբանում** պատմում ա, թե գրելուց հետո որ քնել ա, ոնց ա սաղ գիշերը զառանցե.

«...սաղ գիշերը անդադար դելը տվել, գոռացել, ա՛խ քաշել, խոսացել, ինչ որ հարցրել են տանըցիք, միշտ էլ գերմաներեն [այսինքն, ո՛չ հայերեն – Մ. Հ.] պատասխան տվել ու հազար տեսակ վայրիվերո բան ասել, էլ ետ իր կոնվն սկսել»:

Սրան հավատում եմ, որտեղ Ե. Շահագիզի ասելով (*Ib.*, էջ՝ 16).

«Ըստ տանեցոց բացատրության, նա, անհայտանալուց յերեք որ [օր] առաջ, մտատանջության մեջ ե ընկած յեղել, գրեթե չի կերել, սակավ ե խոսել, շորերը չի հանել և իբրև թե անքնությունից տանջվելիս ե յեղել: ...Խոր Վիրապի մոտ, վանքից ոչ այնքան հեռու, Յերասիսի ափին, ազգականները յերևան են հանել մի յերկարաճիտ կոշիկ,... [ինչը – Մ. Հ.], Աբովյանի կնոջ վկայությունով, ճանաչվել ե իբրև Աբովյանի կոշիկը, իսկ Աբովյանի կոշկակարի վկայությունով՝ վոչ իր կարածը»:

Սրան հավատում եմ, որտեղ Ե. Շահագիզն ասում ա (*նույն տեղը*, էջ՝ 345346).

«Աբովյանը, իր մասին պահպանված հիշողությունների համաձայն, մի բարի, ազնվասիրտ, անձնվեր, բայց և իր արժանապատվությունը պահող և պահանջող մարդ ե յեղել. նա շատ հուզվող ու վոգևորվող խառնվածքի տեր ե յեղել: Նրա դյուրաբորբոք բնավորությունն իսկույն հայտնվել ե մեկի հետ խոսելիս կամ աշակերտներին դաս պատմելիս, անչափ զգայուն, ջղային, ամենաթեթև առիթներից հուզվող, բռնկվող:

«Համբերությունը հատած ժամանակ նա իրեն կորցրել ե, չի կարողացել իրեն զսպել և ձեռք ե բարձրացրել աշակերտների վրա, բայց և միաժամանակ այնքան քնքույջ սիրտ ե ունեցել, վոր քիչ ժամանակից հետո սկսել ե ծեծված աշակերտին փափայել և իր արածը զըղջալ և արտասվելու չափ զգացվել [ե]:

«Ի հիշատակ այդպիսի սիրո ե յեղել, վոր նրա անդրանիկ աշակերտ Գեվորգ Աքիմյանցն ամեն միջոց գործ դնելով, վերջապես հաջողել ե, Հովսեփ Փոնդոյանի հետ միասին, առաջին անգամ տպագրել «Վերք Հայաստանին». նույնպիսի սիրո ար-

տահայտությունն է յեղել, վոր Աբովյանի մյուս աշակերտ՝ Գաբրիել Խատիսյանը նախաձեռնող է հանդիսացել և «վարժապետի» վորդի վարդանին ուղարկել [Է – Մ. Հ.] Դորպատ՝ ուսանելու, հոգալով նրա բոլոր ծախսերը»:

Սրան հավատում եմ, որտեվ Աբովյանը լա՛վ էր ճանանչում էն օրերի պաշտոնավորներին ու դրանց ստեղծած միջավայրը: Ծանանչում էր՝ պատանությունից ու վաղ ջահելությունից: Ե. Շահագիզն ասում ա (***նույն տեղը***, էջ՝ 1213).

«[Աբովյանին] Լազարյան ճեմարան ուղարկելու գործը, մեզ անհայտ պատճառով, մնացել է անկատար, և Պարրոտը վերադարձել է, խոստանալով պետական թոշակ նշանակել տալ Դորպատում ուսանելու համար: Աբովյանը սրտատրոփ սպասել է Պարրոտի միջնորդության բարհաջող ելքին և պատրաստություն է տեսել.

«Նա հագիվ կարողացել է իր ծնողների համաձայնությունն ըստանալ և թախան-ձանքով կոտրել կաթուղիկոսի համառությունը, բայց չի կարողացել հաշտեցնել հակառակորդների գլխավոր՝ Մարուքեի թոռ Կարբեցի Հովսեփին:

«Յերբ 1830 թվի ապրիլին ստացվել է Պարրոտի ուրախարար նամակը, և Աբովյանը վերջին հրաժեշտն է տալիս յեղել վանքին, նա [Հովսեփը – Մ. Հ.] յուրայիններով հարձակվել է նրա վրա, խլել նրա շորերը և անշոր, անհաց ու անպաշար արձակել վանքից [Աբովյանը մինչև 1838 թիվը հոգևորական էր – Մ. Հ.], մի վայրագություն, որ Աբովյանը յերբեք չի մոռացել և միշտ էլ հիշել է դառնությունով:

«Աբովյանը 1830 թվի սկզբին արդեն Թբիլիսիումն է յեղել, և զինվորական գեներալ նահանգապետ Ստեպան Ստրեկալովը, Պասկևիչի պատվերով, հոգացել է նրա բոլոր կարիքները և ամեն բան պատրաստել՝ «արժանավայել եղանակով» նրան ճանապարհ գցելու համար...

«Վեց տարի նա մնացել է Դորպատում և վերադարձել է հայրենիք, բայց սառն ընդունելություն է գտել իր հայրենակիցներից և անբարյացակամ վերաբերմունք՝ հոգևորականությունից. ժամանակի կաթուղիկոս Կարբեցի Հովհաննեսն զգուշացել է նրանից, լյուտերադավան դարձած համարելով նրան, նամանավանդ վոր նա հակառակ Յեփրեմ կաթուղիկոսի ցանկության և Եջմիածնի թույլտվության եր գնացել Դորպատ»:

1847 թվի ամառը Աբովյանը գրում ա (***Վերք Հայաստանի***, Սովետական գրող, 1984, էջ՝ 709).

«Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիզ ինձանից գանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել...»:

Այ, էս ահավոր չուզողության ու էս թունավոր նախանձի մեջ ա ապրե ու աշխատե Աբովյանը՝ մինչև իրա կորելը:

Հավատում եմ, որ Աբովյանն ինքնասպան ա էղել, որտեվ էսօր է՛լ ա համարյա նույնը, որովհետև իմ արածներին էլ են համարյա ըսենց վերաբերվում: Մի օրինակ բերեմ:

1.5 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾԻՇՏՆ ԱՍՈՂԻՆ ՉԵՆ ԼՍԻ

Մի քանի տարի առաջ մի հողված տպեցի *Չորրորդ իշխանություն* թերթում (ուրիշ ոչ մի թերթ չտպեց գրածս, էս թերթն էլ կիսատ-պռատ տպեց), **Հայագիտության ամենաողբերգական ու ամենախայտառակ էջը** վերնագրով:

Էս հողվածիս հիմնական միտքը մի հարց էր ու մի եզրակացություն, ինչն ուզում էի (ու էլի եմ ուզում), որ մեր լեզվաբանությունն ու գրականագետներն ու գրողները հերքեն, թե կարան:

Ես էս հողվածի մեջ ասել էի (ու էլի եմ ասում), թե մենք՝ հայերս, էսօր էրկու քերականություն (**հենց քերականություն, ոչ թե ուղղագրություն**) ունենք, մեկը՝ Հանգուցյալ Մանուկ Աբեղյանինը, մյուսը (կամ՝ մյուսները) Արարատ Ղարիբյանի ու սրա հետեվորդներինը, ու ասել էի, որ **էս էրկու քերականությունը լրիվ հակասում ա իրարու**, ինչը հաստատել էի Մ. Աբեղյանի առարկություններով (էջերն էլ դրել էի) ու իմ դատողություններով:

Ու քանի որ մեր էսօրվա լեզվաբանությունն ասում ա, որ Աբեղյանի քերականությունը հույժ գիտական է, ու մի ամրակուռ կառույց ա, (չնայած է՛ն փաստին, որ ուղղակի մորթում սպանում է իրանց «քերականությունը»), եզրակացրել էի, թե **մեր էսօրվա լեզվաբանությունը գիտություն չի, որտեվ հակասական բաները ճիշտ ա համարում, ինչը իսկական գիտության համար անհնար ա:**

Հողվածս գրելուց հետո համարյա մի տարի սպասեցի, բայց ոչ մեկը մամուլով մի ծպտուն չհանեց:

Էս հողվածը տպելուց հետո դիմեցի Էրեվանի Պետական համալսարանի ռեկտորին ու խնդրեցի, որ հողվածս գիտական խորհրդում քննեն: Ռեկտորը հողվածս ուղարկել էր բանասիրական ֆակուլտետի քննությանը, ու էս ֆակուլտետի չորս հեղինակավոր դոկտոր պրոֆեսոր գրել էին, թե ես «տգետ եմ, զառանցում եմ ու զրպարտում եմ իրենց»:

Սրանց պատասխաններն էլ գրեցի, բայց էս անգամ արդեն ոչ մի թերթ չտպեց: *Չորրորդ իշխանությունը* տպեց հողվածիս միայն նախաբանն ու վերջ:

Սրանից հետո, 2010-ին, հրատարակեցի իմ **Կոմիտասի և Աբեղյանի անձնական ու մեր ընդհանուր ողբերգությունը** գիրքը ([19]), ու սրա մեջ մանրամասն պատմել եմ էս պատմությունն ու մեր քերականության էսօրվա ողբալի վիճակը: Գրքիս մեջ մի վերնագիր եմ դրել. «Ե՛ս եմ ավելի միամիտ, թե՞ Պետհամալսարանի ռեկտորը»: Էս գիրքս տարա ու նվիրեցի Պետհամալսարանի ռեկտորին ու վերնագիրն էլ ցույց տվի իրեն: Արդյունքը՝ զրո:

Բա՛: Էլ ո՞նց չմտածես, որ Հայաստանը հմի է՛լ ա տխուր երկիր:

(Շատերը գիդեն, թե տառերի գյուտից հետո հայերի մի ստվար մասը դարձավ գրագետ: Բայց «հայկական միջնադարում» նույնիսկ բարձր դասի հոգևորականների մեծ մասը մենակ կարդալ գիդեր ու գրել չգիդեր: Ահագին մասը կարդալ էլ չգիդեր: Կային գրիչներ, որ մենակ գրել գիդեին ու կարդալ բոլորովին չգիտեին (Ղ. Աղայան, Ա. Մեյե []):

(Նույնիսկ 19-րդ դարում լրիվ անգրագետ հոգևորականը բացառիկ բան չէր: Պ.Պռոշյանը պատմում է մի քահանայի մասին ով հրաժարվում է նամակ գրելուց, ասելով, թե ոտը ցավում է: Երբ հարցնում են, թե հո ոտով չի՞ գրելու, ասում է. «Օրհնած, իմ ձեռացագիրը մենակ ես կարամ կարդամ: Նամակս որ հասավ էն մի գյուղը, կգան, որ ինձ տանեն, որ ձեռացագիրս կարդամ: Էս ոտովս ո՞նց գնամ հասնեմ էդ գյուղը»:

(Ասվեց, որ մեր էպոսը գրանցվեց մենակ նախանցյալ դարում, չնայած սրա ահագին մասը հեթանոսական հնություն ունի: (Հույները իրանց էպոսը գրանցել էին մոտ 25 դար առաջ, իսկ շումերները՝ մոտ 50): Հոգեվորական բանաստեղծությունը մինչեվ 12-13 (կամ՝ մինչեվ համարյա 19-րդ) դարը մենակ «ազատ բանաստեղծություն» (Ver libre) տեսակն ուներ, այնինչ, Աբու-լը-Ալա-ալ-Մահարին, արդեն 9-րդ դարում, գործածում էր էսօրվա հայտնի համարյա բոլոր չափ ու ռիթմերը (Ըոց-սՖ-Ոս՝-ՈսՖ-ԾՈՈՐՌ, "ԼեոնովվՍպ" ԾՏրՍՉՈ, 1990, էջ՝ 3-20):

(Իսկ մեր ժողովրդական բանավոր բանաստեղծությունը հոգեվորից շատ-շատ էր առաջ: Սրա վկայությունն ա «Խաչգռուզի շարքը», ինչն արտագրել ու պահել էր Ղրիմի գաղութի ինչ-որ մի սիրող, *Խաչգռուզ* կամ *Խաչիկ* անունով, 16 տարեկան:

(Էս շարքի առաջին բանաստեղծությունն էնքան ա չքնաղ ու կատարյալ, թե՛ պատմելու ձևով, թե՛ ոտանավորի տեխնիկայով, որ ապշում ես, թե մեր եկեղեցին խի՞ ա սրա պես բաներն ատե ու ու սրանք արգելե (Աս. Մնացականյան, *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երեվան, 1956:

(Սրա 11-րդ էջում հեղինակն ասում է, որ ժողովրդական երգերը գրանցող Խաչիկ երեցին «էտ գործի համար եղել են ատողներ և նույնիսկ հայհոյողներ», իսկ ինքը Խաչիկ-Խաչգռուզն ասում ա.

«Ինձ նման մարթի, [էն մարդը – Մ. Հ.], ով չի գիտե գիր կարդալու և ոչ մտիկ անե էն պես բաներու և հայհոյե գիս, թե գրողին ձեռքն չորընտեր է...»):

Հետագայում մեր բանաստեղծներից Հ. Թումանյանը առաջինն էր, որ հասավ ժողովրդական ոտանավորի էս բարձր մակարդակին: Ահա էտ ոտանավորը [Ib., 113].

– Կըտրի՛ճ, գնե՛, թե գնել կարես
Ճորտակ, ու չեմ ծանտրագնոչ:
– Թո՛ւխ, ամ ծոցուտ գի՛ն հրամե՛,

Գընեմ գքեգ, թե գնել կարեմ:

– Թուխ մաստն դու՛ ի թուխս ի յուս,

Օղս էր ընկեր. գին՝ ծոցերուս:

Մի՛ գալ երկնով,
Մի՛ գալ գետնով,
Կըտրի՛ճ,
Ու մի՛ – երկնաւորով:

Մի՛ գալ ամպով,
Մի՛ գալ պարզով,
Կըտրի՛ճ,
Ու մի՛ – բարկ արևով:

Մի՛ գալ մերկիկ,
Մի՛ գալ բոբիկ,
Կըտրի՛ճ,
Ու մի՛ – քուռ հալաւով:

Մի՛ գալ ձիով,
Մի՛ գալ ջորով,
Կըտրի՛ճ,
Ու մի՛ – գալ հետևակ:

Կըտրիճն խէռ զան իմացեր,
Ան վերի ճամեր էր իջեր,
Իրեք օրիկ որս էր արեր,
Խրգագուին ձագ էր գըգուեր.

Խրգագուին ձագ էր գըգուեր,
Քաջ արծուին թև էր նստեր,
Քաջ արծուին թև էր նստեր,
Թռչել, թուխին դուռն էր իջեր:

– Թո՛ւխ, դուն ի դո՛ւրս արեկ, ի դո՛ւրս,
Արեկ ու կամկար ճմալով,
Ինչ դո՛ւն արիր՝ նա ես արի,
Ինչ ե՛ս ասեմ՝ զա՛յն բեր ի դո՛ւրս:

Բեր ինձու, ինձու բանիր,
Շէկ մոջումէ աջըրէ դըգալ,
Բեր ի քարոսոսօզիս սըմա պնակ,
Բեր ինձ ընձու խօռոսոսօզիս շօրափսած:

Թուխն ալ չուներ, որ զայն բերեր.
Ծով-ծով աչվին արտըսըվեր,
Ծով-ծով աչվին արտըսըվեր,
Կամար օնքվին թօթուեցեր.

Կամար օնքվին թօթուեցեր,
Կանաչ արտեր դեղնեցընէր,
Մէկ-մէկ կոճակն արձկրէր,
Թագվորն ի ծոցն մեծարէր:

Ի վերջո, սաղ գրագետներն էլ հասկացան, որ մեր էս սաղ գրապայքարներն էլ իզուր էին: Բայց **«ժածուկ բանի» կամ «ճառի» գրելու մարմաջը մնաց, գրաբարին ընդօրինակելու սերը միշտ մնաց, որովհետև գրաբարի գործածությունը, թեկուզ քիչ, թեկուզ մեկ-երկու բառ ու դարձվածք, այնուամենայնիվ, համարվում էր գրագիտության նշան, ճիշտ ոնց որ էսօր:**

2 ՃԱՇԱԿ ՀԱՅ ՀԻՆ ԱԶԱՏ ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐԻՑ

Ըստե մի քանի հատված եմ դնում մեր հայ հին բանաստեղծությունից, որոնք մեր պոետների ու արձակագիրների մեծ մասի կարծիքով արձակ են: Սրանք գիդեն, թե մենակ նարեկացին ա ոտանավոր գրե, ու մեկ էլ մտածում են, որ Խորենացու ու մյուս պատմիչների պահած մեր հեթանոսական երգերի հատվածներն են ոտանավոր էլե:

Սրանք համ էլ չգիդեն, որ որ մինչեվ համարյա 12-երորդ դարը փոքրատառ չենք ունեցե, իսկ կետադրության էսօրվա նշաններից էղել ա մենակ կետը (չհաշված մեջ բերելու նշանը. սրա համար ենք ասում՝ **կետադրություն**):

Ու սրանք հենց գիդեն, թե էս առանց կետադրության «ոտանավորները» մենակ ու մենակ եվրոպացիք են «հայտնագործե», ու իրանք էլ եվրոպացիներից են սովորե էս «հանճարեղ հայտնագործությունը»:

Չգիդեն համ էլ, որ մինչեվ ասածս դարը բառերն իրարից անջատ չեն գրե, ու տողադարձի ոչ մի կանոն չի էղե: Ուրեմը, չի էղե համ էլ ոտանավորը տողատելու էսօրվա սովորությունը): Բերածս սաղ ոտանավորներն էլ ես ի՛մ ձեվով եմ տողատե):

Մերոնք շատ են ասում, թե գրաբարը սիրուն ա: Իհարկե սիրուն ա, բայց սիրուն ա, որտեվ **մեր գրաբար գրած սաղ գործերն էլ ոտանավոր են, ազա՛տ ոտանավոր են**: Ոտանավորը, լա՛վ ոտանավորը, հա է՛լ սիրուն ա:

Թե որ գրաբար ազատ ոտանավորը բռնես ու արձակով թարգմանես, էտ սիրունությունը կկորի, ոնց-որ հա է՛լ կորում ա (օրինակ, Խորենացու Հայոց պատմության Ս. Մալխասյանի «թարգմանությունը», ինչը թարգմանական կալկա ա ու տգեղ ա):

Ասածս հաստատելու համար բերում եմ Թումանյանի **Լոռեցի Սաքոյի** սկզբի տունն ու էտի «Մալխասյանի պես եմ թարգմանում».

*Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ:*

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց ժայռերը խորունկ նոթերը կիտած ու դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ հայացքով հանդարտ իրար են նայում:

Ըստե ընդամենը էրկու հատ **ու** ու մի հատ էլ **և** եմ ավելացրե, ու մեկ էլ բառերը շարել եմ արձակ խոսքի օրենքներով: Սրանից չափածոյի մետրն ու ռիթմը լրիվ կորել են: Բայց գրաբարից թարգմանելուց շատ անգամ բառերն է՛լ են փոխվում, որտեվ անհույս մեռած բառերը հասկանալի չէին ըլնի:

Ու քանի որ թարգմանողները, համարյա միշտ, պոետ չեն, գրաբար ոտանավորը դառնում ա անհամ արձակ: Օրինակ, Թումանյանի իմ արդեն փոխած խոսքը կթարգմանեին հետեվյալ ձեվով.

Լոռու ձորում հանդիպակաց ժայռերը խորունկ նոթերը կիտած ու դեմուդեմ կանգնած, համառ ու անթարթ հայացքով հանդարտ իրար են նայում:

Որ վեկալես ու մեր էսօրվա «արտեմիստների» ազատ «ոտանավորները», թեկուզ ոչ մի բան չփոխելով, շարես իրար հետեվից, առանց տողատելու, վռագ կերեվա, որ դրանք անհեթեթ են:

Դե հմի պատկերացրեք, թե մեր գրաբար տեքստերը թարգմանելուց ինչքա՛ն բան ա կորում: Համ էլ երեվի պարզ ա, թե հները խի՛ էին համարում, որ իրանք բանաստեղծություն են գրե, ու **բանաստեղծություն** տերմինը խի՛ են վերագրում ոտանավորներին (**ոտ + ա + վորներին**, բանաստեղծական **ոտք** ունեցողներին):

2.1 ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՆԳԻՐ ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐԻՑ

Էս հատվածները վեկալել են հետեվյալ գրքից. **Աբրահամյան Ա. Ա. – Գրաբարի ձեռնարկ**, 1976, էջ՝ 283-285, «Լույս», Երևան:

Նկատի առեք, որ տողատածն ի՛մն ա (համարյա՛ մետրական հատածներով), իսկ կետադրությունն ու մեծատառերը հանել են (չնայած հայերը մինչեվ համարյա 12-րդ դարը ոնց որ արդեն ասեցի, մենակ մեծատառերով էին գրում): Հետո, հին հայերը բառի սկզբի **ե**-ն (բառի մեջինինն էլ) չէին արտասանում **յե**, այլ էսօրվա Մալիշկայի **ե**-ի պես, մի տեսակ բաց **է**-ի պես: Նույն ձեվով էլ բառի սկզբի **ո**-ն (բառի մեջինինն էլ) չէին արտասանում **վօ**, այլ էսօրվա Մալիշկայի **ո**-ի պես, մի տեսակ բաց **ուօ**-ի պես:

*երկներ երկին
երկներ երկիր
երկներ եւ ծովն ծիրանի.
երկն ի ծովուն ուներ
եւ գկարմրիկն եղեգնիկ.
ընդ եղեգան փող
ծուխ ելանէր
ընդ եղեգան փող
բոց ելանէր
եւ ի բոցոյն վազէր
խարտեաշ պատանեկիկ.
նա հուր հեր ուներ
(ապա թե)
բոց ուներ մորուս
եւ աչկունքն էին
արեգակունք.*

(Խորենացի, I, ԼԱ/ԼԲ)

*հատուած գնացեալ
վարդգէս մանուկն
ի տուհաց գաւառեն
գքասաղ գետով
եկեալ նստեալ
գշրեշ բլրով
զարտիմեղ քաղաքաւ
գքասաղ գետով
կռել կոփել գդուռն
երուանդայ արքայի.*

(Խորենացի, II, ԿԵ)

քեզ ասեմ
այր քաջ արտաշէս
որ յաղթեցեր
քաջ ազգին այանաց,
եկ հաւանեաց բանից
աչագեղոյ դստերս այանաց
տալ զպատանիդ.

(Խորենացի, II, Ծ)

Եթե դու յորս հեծցիս
յազատն ի վեր
ի մասիս
զքեզ կայցին քաջք
տարցին
յազատն ի վեր
ի մասիս
անդ կայցես
եւ զլոյս մի տեսցես.

(Խորենացի, II, ԿԱ)

ո տայր ինձ
զծուխ ծխանի
եւ զառավոտն նաւասարդի
զվազելն եղանց
եւ զվարզելն եղջերուաց
մեք փող հարուաք
եւ թմբկի հարկանեաք
որպէս արէն էր թագավորաց.

(Մագիստրոս, ԼԳ)

2.2 ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ, ԵՐԳ ԵՐԳՈՑ

Բ, 11-14

...արի եկ
մերձատր իմ
գեղեցիկ իմ
աղավնի իմ.
զի ահա ձմեռն անց.
անձրեւք անցին
և գնացեալ մեկնեցան.
Ժաղիկք երեւեցան յերկրի մերում.
Ժամանակ եհաս յատանելոյ.
ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում.
Թզենի արձակեաց զբողբոջ իւր.
որթք մեր ծաղկեալք ետուն զհոտ իւրեանց.
արի եկ
մերձատր իմ
գեղեցիկ իմ
աղավնի իմ.
եւ եկ դու
աղավնեակ իմ
ընդ հովանեաւ վիմիդ առ պատուարաւ.
երեւեցո ինձ զերեսս քո

Եւ յսելի արա ինձ զբարբառ քո.
 զի բարբառ քո քաղցր է
 եւ տեսիլ քո գեղեցիկ...

Դ, 1-8

ահավադիկ կաս գեղեցիկ
 մերձավոր իմ
 ահավադիկ կաս գեղեցիկ.
 աչք քո աղանիք
 բաց ի լռութենէդ քումմե.
 վարսք քո իբրեւ գերամակս այծից
 որք երեւեցան ի գաղաադէ.
 ատամունք քո իբրեւ գերամակս կտրելոց
 որք ելանեն ի յուլեաց.
 ամենեքեան երկուորիք են
 եւ անորդի ոչ գոյ ի նոսա.
 իբրեւ զթել որդան են շրթունք քո
 եւ խոսք քո գեղեցիկք.
 իբրեւ զկեղեւ նռան են այտք քո
 բաց ի լռութենէդ քումմե.
 իբրեւ զաշտարակն դավթի պարանոց քո
 որ շինեալ է թալիպոլթ.
 հազար վահանք կախեալ են զնմանէ
 եւ ամենեան նետք սպառագինաց.
 երկու ստինք քո իբրեւ երկուս ուլս երկուրիս այծեման
 որ արածիցին ի մէջ շուշանաց
 մինչեւ տիւն նուաղեսցե եւ ստորեքն շարժեսցին.
 գնացից ես ինձէն ի լեառն զմրոնենեաց և ի բլուրն կնդրկի.
 ամենեւին գեղեցիկ ես մերձավոր իմ
 եւ արատ ինչ ոչ գոյ ի քեզ.
 եկ ի յիբանաէ հարսն եկ այսր ի յիբանանէ...

2.3 ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ահա մի պատահական կտոր **Եսայու մարգարեությունից** (Ա, 2-

լուր երկին եւ ունկն դիր երկիր
 զի տէր խաւսեցաւ.
 որդիս ծնայ եւ բարձրացուցի
 եւ նոքա զիս անարգեցին.
 ծանեալ եզն զստացուցչ իւր
 եւ էջ զմտոր տեառն իւրոյ.
 եւ իսրայէլ զիս ոչ ծանեալ
 եւ ժողովուրդ իմ
 զիս ի միտ ոչ առ.
 վայ ազգին մեղավորի.
 ժողովուրդք որ լի է մեղաւք
 սերմն ժանտ
 որդիք անարէնք...

2.3 ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՑ

Հետեվյալ հատվածները վեկայել են Շարաբխանյան Պ. Ե.-ի **Գրաբարի դասընթաց**-ից, 1974, էջ՝ 5-15, ԵՊՀ հրատ, Երևան:

Ահա մի կտոր Եղիշեի **Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին** երկից, երկրորդ եղանակ, 1.

*Որոց ոգիքն թուլացեալ են երկնաւոր առաքինութենէն
յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ.
յամենայն հողմոյ շարժի
եւ ամենայն բանէ խռովի
եւ ամենայն իրաց դողայ
երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում
եւ անգիտ կորուստն յուղարկի ի մահովան իւրում.
որպէս եւ ասաց ոմն ի հնումն
մահ ոչ իմացեալ մահ է
մահ իմացեալ անմահութիւն է:
որ զմահ ոչ գիտէ
երկնչի ի մահուանէ
իսկ որ գիտէ զմահ
ոչ երկնչի ի նմանէ.
եւ այս ամենայն չարիք
մտանեն ի միտս մարդոյ
յանուամենութենէ.
կոյր զրկի ի ճառագայթից արեգական
եւ տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց.
յաւ է կոյր աչաւք քան կոյր մտաւք.
որպէս մեծ է ոգի քան զմարմին
այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց...*

Ահա մի հատված Ագանթանզեղոսի **Պատմութիւն Հայոց**-ից: Նախորդների համեմատ՝ էս պատմիչ բանաստեղծն ավել շատ երկար «տողերի» սիրահար ար:

1

*սակայն առեալ խոսրոպու զբազմութիւն զաւրաց իւրոց
եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս
աւզնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի.
իսկ իբրեւ ետես թագավորն պարսից զայն ամբոխ բազմութեան գնդի
զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա
ել եւ նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի.
բայց սակայն ոչ կարաց ունել զդէմ նորա
փախստեալ լինէր առաջի նոցա.
գհետ մտեալ կոտորէին զամենայն զաւրս պարսից
և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւալ կացուցանեին
եւ չարախտաւատ վատնէին
եւ անհնարին հարուածս հասուցանէին.*

Ահա մի հատված Փաւստոս Բուզանդի **Պատմութիւն Հայոց**-ից.

(Երրորդ դպրութիւն, Ի)

...զայնու ժամանակաւ

ձի մի էր
 երիվար
 արքային տիրանայ
 զորմէ կարի զարմանային.
 Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն
 սա յի էր քաջութեամբ
 անուանի եւ հոյակապ
 մեծ եւ բարձր
 երկայն քան զամենայն ձիս
 Եւ տեսանելով քան զայլս գեղեցիկ զանազան
 որ համեմատ նմա այլ ոչ գտաներ.
 զորմէ երթայն իւրոյ դեսպանութեանն
 սենեկապետն արքայի փիսակ
 մատնեաց զձին վարազայ
 վասն զի բարեկամեացեալ էր ընդ նմա
 եւ ի նմանէն ինքն թուղթ առեալ
 բերեալ մատուցանէր արքային հայոց
 զորմէ չհաւանեալ տալ ոչ առնոյր յանձն.
 այլ վասն զի կասկածէր յառնէն
 զի գոյժ խռովութիւն ինչ
 ի մեջ թագաւորացն երկոցունցն արասցէ
 ի խնդիր արկանէր
 զնոյն գոյն ձի
 զնոյն նշան
 զնոյն պատկեր
 բաց ի մեծութիւնէ
 զի այնչափ ուրեք ոչ գտանէր
 զնոյն նման
 զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ
 Եւ հանդերձ հրովարտակաւք եւ պատարագաւք
 ի ձեռն մոլեկան փիսակայն
 առ իշխանն ատրպատական
 առ վարազն արձակեր...

Ահա մի կտոր էլ Խորենացու **Պատմութիւն հայոց**-ից.

այս ասէ հայկ
 գեղապատշաճ եւ անձնեալ
 քաջագանգուր
 խայտակն եւ հաստաբազուկ,
 սա ի մէջ սկայիցն քաջ եւ երեւելի լեալ
 եւ ընդդիմակաց ամենեցուն
 որք ամբառնային զձեռն
 միապետել ի վերայ
 ամենայն սկայիցն եւ դիւցազանց.
 սա խորխտացեալ
 ամբարձ զձեռն
 ընդդէմ բռնավորութեանն բելայ
 ի տարածանել ազգի մարդկան
 ընդ յայնութիւն ամենայն երկրի
 ի մէջ բազմակոյտ սկայիցն
 անհուն խաւիսց եւ ուժաւորաց.
 քանզի անդ մոլեգնեալ այր յիրաքանչիւր
 սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով
 ջանային տիրել ի վերայ միմեանց.
 ուր պատահմունք ի դէպ ելանէին բելայ

բռնանալ ունել զամենայն երկիր...

Ահա մի կտոր էլ Բարսեղ Կեսարացու **Վասն վեցարեայ արարչութեանն** գործից, ինչի թարգմանությունը հույժ բանաստեղծական է.

*...բարի եւ գեղեցիկ է ծով
ի խաղաղ ժամանակի
յորժամ հանդարտացեալ
կայցե յալեաց
եւ ի մրրկաց
եւ յստակ ժամանակի
յորժամ մի եղեալ
նայիցիս ընդ ծիծաղելի
ջուրց նորա
որ յազգի ազգի
գոյնս ցուցանեն
գերփն երփն նարաւտուց
մերթ ծիրանոյ
մերթ կապուտակի
մերթ սեւաներկ
երանգաց.
եւ յորժամ քաղցրաշունչ
տողոխ վէտս վէտս
զմկանունս ճոճեալ
ճեմեցուցանիցէ.
յորժամ ոչ բռնութեամբ
աւղոյ յանդգնութեան
ծփեալ կոծիցէ գերկիր
զիր դրացի
այլ խոր խաղաղութեամբ
եւ ջերմեռանդ սիրով
գիրկս արկեալ պատեալ
կայցե զգամաքան.*

Ահա մի կտոր էլ Նարեկացու **Մատեան ողբերգութիւն**-ից (հիշեցնեմ, որ տողատաժն իմն ա): Սրա մեջը արդեն ազատ ոտանավորին հատուկ ռիթմի հետ հստակ էրեվում են ազատ գործածած մոտ-մոտ ու հեռու-հեռու հանգերը, բայց տողերի վանկերի թվի հավասարությունը չկա: Նարեկացու վեռ-լիբրը կատարյալ ա:

Բայց, ոնց-որ արդեն ասել եմ, Նարեկացու աշխարհաբար թարգմանություններն էլ ուրիշ գլխավոր թերություն ունեն: Սրանք արվում են մեր էսօրվա դասական մետր ու ռիթմով, ու Նարեկացու ուղղակի չքնաղ ազատ ոտանավորը դառնում ա (իմ կարծիքով) բավական անհամ ոտանավոր, ու մենակ բովանդակության հզորությունն ա փրկում էտ թարգմանությունը:

*անկեալ կամ չարեաւք
ի մահիճս ախտից
ընկողնոց մեղաց
դի կենդանի եւ խոսուն մեռեալ
կարեկցեալ իմումս թշուառութեան
ողբականաւք քրուանաց ձայնից*

ով բարերար որդի աստուծոյ
աւրհնաբանեալ աչացոյ ցողով
վերականգնեսցես ի կենդանութիւն
իբր զսիրելին
ի անշնչական մեռելութիւնէ:
ստոյգ դառնացողս
ի գբի մեղաց
կամ տարակուսեալ
ձեռն մատուցեալ
արեւ անստուեր
որդի բարձրելոյ
հանցես զիս ի լոյս
քումդ նշուից.

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՏԱՂԵՐ ԵՎ ԳԱՆՁԵՐ
Աշխատասիրությամբ ԱՐՄԻՆԵ ՔՅՈՇԿԵՐՅԱՆԻ
Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ, 1981, Երևան

ԺԱ. ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ,
ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ ԱՍԱՑԵԱԼ, էջ 97

Սէր առաւաւտէ,
Սէր առաւաւտէ ճեմեալ
Իւր անձուկ ծագմամբ:

Ծագմանն արեւելք,
Ծագմանն արեւելք անուն
Այն արուսեկին:

Մի՞թէ յայն ի վայր,
Մի՞թէ յայն ի վայր վայրի
Տաւիղ տարածեալ.

Կամ սիրոյ շրջան,
Կամ սիրոյ շրջան առեալ,
Աստեղքք բոլորեալ:

Նա ծով վաղընթաց,
Նա ծով վաղընթաց ածեալ
Դուռն արեւելեան.

Ծայրարձակ լերանց,
Ծայրարձակ լերանց
Յաւղ տարածանէր:

Արեւմտենի,
Արեւմտենի սեռի
Լրմամբ միացեալ:

ԺԹ. ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴԵԱՆ,
Ի ԳՐԻԳՈՐԷ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ, էջ 123

Երգ զարմանալի, երգ շարժվարժենի,
Տեղի եղեր բարեկերտին:
Խորհուրդ, խորհուրդ համերամ,
Ջարդ երամից, զարդ:
Նոճ ի նոճ յեռ ի սափոր եղեգնատնկոյն,
Մատնարինարէն նշդարենի ոահ:
Յունից նրբենից կից ի մի կից կամար,
Նէճեմ, թէ նէճեմ միջարեւի ժամ:
Աչքն ծո՛վ ի ծո՛վ ծիծաղախիտ ծաւալանայր յառաւաւտուն՝

Երկու փայլականաձեւ արեգական նման.
 Շողն ի շմաթէն իջեալ յառաւաւտէ լոյս:
 Յայտէն նռնենի սարդիատունկ գեղաշիտակ ծայրից ծաղկանց,
 Որոյ սիւնն ի սրտին նուսխայարէն կարկաջահոս սաթբերունի սեր:
 Ատիճա՛ղ-պատիճա՛ղ ստղի-հտղի հուռն.
 Հոսէր գելեւեալսն ընդ միմեանս,
 Հանդարտիկ խաղայր, թէկնիթիկին ճեմ:
 Բերանն երկթերթ, վարդն ի շրթանցն կաթեր.
 Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն:

Բնականաբար, այսպիսի ստեղծագործությունները պետք է երգվեին շատ ավելի հարուստ եղանակներով, ուստի, եթե գանձերի խազերը պարզ են ու աղքատիկ, ապա տաղերինը, ընդհակառակը, անհամեմատ ճոխ են: Էջ 33

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Հայրենի կարգավ, կազմեց Ավ. Ղուկասյան, 1957, Հայպետհրատ, Երևան:

- Ա՛յ, գնա, չի պիտիս դուն ինձ, լուկ պեզար՝ իմ սիրտս ի քենե.
- Զերա խոցեցիր դուն զիս, լուկ վերցավ սրտիկս ի քենե.
- Թե գան ու գքեզ ջուր ասեն, կամ ջրին ճարակն ի քենե,–
- Տարեկ մի ծարված կենամ,– չի խմեմ կաթիկ մի քենե:

- Երթամ, չի կենամ ի հոս, ուր երթամ՝ հոն ալ չի կենամ.
- Երթամ քանց Հոռոմն ի վար, այլ իսկի չի գամ.
- Թե գան ու զիմ տեղն ասեն, նա հեռու եմ՝ այլ հեռանամ.
- Թե գան ու գքո տեղն ասեն, նա զենճիլն իմ կտրեմ ու գամ:

Իմ **Թարգմանելու արվեստը** գրքի մեջը [16] (տես կամ էլ [18]-ը) մանրամասն ասել եմ, թե 60-ական թվերին մերոնք ոնց ու խի՛ թողին դասական ոտանավորի մեր հայ հնագույն դասականների ու մանավանդ նորերի (օրինակ, Թումանյանի) գծած ուղին ու անցան իրանց էս *վեռ-լիբր* կոչված ազատ ոտանավորին:

Էս գործերից [18]-ը հրատարակել եմ 2005 թվին, այսինքը, 8 տարի առաջ, ու հլը որ մեր պաշտոնական գրականագետ- գրաքննադատները սրա մասին ձեն ու ծպտուն չեն հանե: Սրանց մեջ բերել էի Դիլան Թոմասի մի քանի ոտանավորի բնագրերն ու սրանց իմ ու Արտեմ Հարությունյանի թարգմանություններն ու ցույց էի տվե, որ վերջինները լրիվ են անընդունելի, ու հեշ մի գրամ էլ պոեզիա չեն:

Բայց մերոնք, խաբվելով էս ու սրանց պես «թարգմանություններից», հենց իմացան, թե «լուսավոր ու առաջադեմ եվրոպաների» ոտանավորն արդեն հասել ա սրանց էս «չքնաղ» մակարդակին ու, հետեվելով սրանց, սկսեցին սրանց հայկական տարբերակները մշակելը: (Հենց սրանց եմ ասում «արտեմիստ»):

Հին աշխարհի սաղ ժողովուրդներն էլ մենակ ազատ ոտանավոր էին գրում, ու մեր էսօրվա հանգավոր ու կանոնավոր ռիթմով ու տաղաչափությունով ոտանավորը հետո են քթե, ինչը տարածվեց ու բազմապատկվեց սկսած վաղ Վերածննդից:

Բայց հետո, մանավանդ 19-րդ դարում, ու մանավանդ ամերիկացի Վոլտ Վիթմենի (Walt Whitman, 1819-1892) **Leaves of Grass** գործից հետո, ինչը գրած էր ոտանավորի լրիվ ազատ ոճով, պոեզիայի էս տեսակը նորից տարածվեց, ու էսօր աշխարհում ոնց-որ թե հենց էսի՛ ա մոդա:

Իմ կարծիքով սրա տարածվելու հիմնական պատճառներն էրկուսն են: Նախ ազատ ոտանավորով գրելը շատ ավելի հեշտ ա, որտեվ կարաս հանգ ու ռիթմին էնքան էլ ուշ չդարձես: Երկրորդ պատճառի անունը դրել եմ՝ **թագավորի նոր հագուստի սինդրոմ**, Հ. Մ. Անդերսենի համանուն հեքիաթի գաղափարի էսօրվա կիրառության համար (տես [16]-ը):

Սեփական կարծիք չունեցող մարդը վախում ա ասի, որ մերոնք գրած ազատ ոտանավորների մեծագույն մասը բանի պետք չի ու ոտանավոր էլ չի:

Սրանք թութակի պես կրկնում են ուրիշների մեծամիտ շաղակրատանքը, որտեվ չգիդեն, թե իսկական ազատ ոտանավորն ի՛նչ ա, որտեվ չգիդեն, որ մեր հին գրականության ամենարնտիր գործերն ու, օրինակ, Նարեկացու չքնաղ տաղերն ու Աստվածաշնչի **Երգ երգոցն** ու Խորենացու **Ողբը** հենց ազատ ոտանավոր են, որ կան:

Մեր արտեմիստներին մանավանդ ոգեվորում են Թոմաս Ստիռնզ Էլիոթի (Thomas Stearns Eliot-ի, 1888-1965) ազատ ոտանավորով գրածների, մանավանդ սրա մի քանի գործի հայերեն թարգմանությունները, որտեվ Էլիոթին 1948 թվին (իրա մանավանդ **Ամայի երկրի** = **Waste Land**-ի համար) Նոբելյան մրցանակ տվին:

Մերոնք էլ, որ մեծ մասով սնոբ են, չգիդեն, որ մրցանակները (ու էս նոբելյան մրցանակն էլ սրանց հետը), անարժաններին է՛լ են տալի, ու տալիս են նույնիսկ հանցագործներին:

Ու մերոնք հենց իմացան, թե դասական ոտանավորի դարն անցել ա, թե միակ իսկական ոտանավորը հենց ազատ ոտանավորն ա, բայց մենակ իրանց իմացած ազատ ոտանավորը, որտեվ ոչ տեղը տեղին օտար լեզու գիդեն, ոչ է՛լ ազատ ու անկախ մտածողություն ունեն, որ կարդային ու իմանային, թե իսկական ազատ ոտանավորն ի՛նչ ա:

Ես շատ-շատ եմ հավանում մեր հին գրողների ու մանավանդ Նարեկացու տաղերն ու Քուչակին վերագրվող ազատ ոտանավորները: Հավանում եմ համ էլ, օրինակ ամերիկացի Ռոբերտ Ֆրոստի ու (մի քիչ էլ) Դայվիդ Հերբերտ Լովրենսի (համ էլ ուրիշների) ազատ ոտանավորները:

Բայց Վոլտ Վիթմենի ազատ ոտանավորն ըտենց էլ դուրըս չէկավ, չնայած 80-ականների վերջերին թարգմանեցի իրա **Calamus**-ը, ինչը մի ծավալուն գիրք ա: (Բայց էտի չեմ հրատարակե, որտեվ էտի արել էի դասական մետրիկայով, ինչը հմի անթույլատրելի եմ համարում):

Էլիոթի մասին ուզում եմ ասեմ հետեվյալը: Էլիոթի Ամայի երկիրն ու սրա պես գործերը հեշ չեմ հավանում ու համարում եմ, որ սրանք գրվել են հենց թագավորի նոր հագուստի սինդրոմի նկատառումներով:

Էլիոթի պոեզիան ահափոր անձնական ա, ու իրանից ու իրան լավ իմացողներից (օրինակ, Էզրա Փաունդից) բացի երեվի ոչ մեկն էլ չի հասկանում:

Էսի ինքան ա բարդ, որ, օրինակ, Օքսֆորդի հրատարակած 20-րդ դարի անգլիական գրականության անթոլոգիայի մեջը **□** Էլիոթի **Ամայի երկրի** (կամ **Փուչ մարդու** = **Hollow Men**-ի) բացատրությունների ծավալը համարյա հավասար ա հենց էս գործերի ծավալներին, ու նույնիսկ սրանցից հետո էլ պարզ չի, թե Էլիոթի ասելիքն ի՞նչ ա:

Էս բացատրությունների մի մասը հենց Էլիոթինն ա, մյուսը՝ զանազան գրականագետներինը: Ու հենց իրանք, հենց էս անթոլոգիան կազմողներն են ասում, որ Էլիոթի պոեզիան խրթին ա ու մութ [Ib., էջ 473]:

Էլիոթն իրա Ամայի երկիրը գրել ա 1921 թվի աշնանը, երբ նյարդային կոլապսի եզրին էր [Ib., էջ 472]: Հաջորդ տարին Էլիոթը իրա էս 1000 տողանոց ձեռագիրը տանում ա Փարիզ ու տալիս ա Էզրա Փաունդին, ով էտ 1000 տողը կրճատում ու թողում ա 433 տող:

Չնայած էս պոեմը համարվում ա 20-րդ դարի անգլիական պոեզիայի կենտրոնական գործը [Ib., էջ 473], բայց էսի էնքան ա անկանոն ու խրթին, որ նույնիսկ անգլիացի ինտելեկտուալը պոի էսի մի «վեցը անգամ կարդա, որ իֆտուլիցիայով մի ինչ-որ ձեվ սրա մեջը կանոն ու իմաստ տենա» [Ib., էջ 473]:

Էս պոեմը յանի հիմնված ա պտղաբերության մայր աստված Կիբելե-Իշտար-Ափրոդիտե-Վեներա (ևն)-ի պաշտամունքի մեկ-երկու գաղափարի վրա: Էս պաշտամունքի գերագանց հետազոտողը անգլիացի Ջեյմզ Ջորջ Ֆրեզերն ա (James George Frazer-ը, 1854-1941), ով 1890-1915 թվերին հրատարակեց իրա Ոսկե ճուղը 12 հատորանոց գործը, ըստ էության, հիմնադրելով պատմահամեմատական ազգագրությունը:

Էլիոթն էս պաշտամունքի մասին իմացել ա ազգագրագետ Jessie L. Weston-ի From ritual to Romance (1920) գործից, բայց սրա մասին ուղղակի բան չկա ասած պոեմի մեջ, ոնց-որ ոչ մի ուղղակի բան չկա ասած համ էլ էն բազում պատկերի մասին, որ էղել են Էլիոթի մտքում՝ պոեմը գրելուց (օրինակ, դանթեի Աստվածային կատակերգությունից, իռլանդական էպոսից կամ Աստվածաշնչից ևն, ևն): Հայ ընթերցողին սրանք ոչ մի բան չեն ասում:

Անկասկած ա, որ Էլիոթը չափազանց օժտված պոետ ա, բայց Դալիի, ու շրջանի Պիկասոյի, Պարաջանովի ու սրանց պես տաղանդավոր ստեղծողների նման օգտվել ա թագավորի նոր հագուստի սինդրոմից: Ուրիշները ոնց կուզեն, բայց էս սրան հավատում են:

Էլիոթի հաստատած ազատ ոտանավորի էս մոդան սաղ աշխարհի ու մանավանդ հայ նոր պոեզիայի համար համարյա կործանարար էղավ: Բայց եթե արեվմուտքի ազատ ոտանավորն էլի մի բանի նման ա, որտեվ բոլորը չեն, որ Էլիոթի պես ծայր աստիճան խրթին են գրում, հայ նոր պոեզիան, իսկական ազատ ոտանավորից խաբար չըլնելով, հենց իմացան, թե որ ահափոր խրթին կամ անսովոր արձակ գրեն ու էտի ոտանավորի պես տողատեն, ուրեմը, իսկական ազատ ոտանավոր գրած կըլնեն: Ափսոս:

Սրա ներքեվը դրել են Էլիոթի **Փուչ մարդը** պոեմի իմ ու Սամվել Մկրտչյանի թարգմանությունները (ձեռս մենակ էսի ունի Էլիոթից թարգմանած): Ես ձգտել են Էլիոթի գործի պոեզիան պահեմ, պահեմ դրա հանգերի, ալիտերացիաների ու ասոնանսների առկայությունը, ինչքան կարացել են: Սկզբում դրել են Էլիոթի բնագիրը:

Բնագրի մեջը կարեվոր են սուլող հնչյունները, մոտիկ ու հեռու հանգերը, նման բաղաձայններն ու նույնական ձայնավորները: Սրանցից ամենակարեվորները հաստացրե ու թեքել են:

Ս. Մկրտչյանի արածը շատ բարեխիղճ արած բառացի թարգմանություն ա, բայց էտի պոեզիա չի, որտեվ հանգ համարյա չունի, էղածն էլ խեղճ ու կրակ ա, մնացած բաների մասին էլ չեն ասում:

The Hollow Men <i>Mistah Kurtz – he dead.</i> <i>A penny for the Old Guy</i>	
1	Trembling with tenderness

We are the hollow **men**
 We are the stuffed **men**
 Leaning together
 Head**piece** filled with straw. *Alas!*
 Our dried **voices**, when
 We **whisper** together
 Are quiet and meaningless
 As **wind** in dry grass
 Or rats' feet over broken **glass**
 In our dry cellar

Shape without form, **shade** without colour,
 Paralysed force, gesture without motion;

Those who have crossed
 With direct eyes, to death's other Kingdom
 Remember us – if at all – not as **lost**
 Violent souls, but only
 As the hollow **men**
 The stuffed **men**.

2
 Eyes I dare not meet in **dreams**
 In death's **dream kingdom**
 These do not appear:
 There, the eyes are
 Sunlight on a broken **column**
 There, is a tree **swinging**
 And **voices** are
 In the wind's **singing**
 More **distant** and more **solemn**
 Than a fading star.

Let me be no nearer
 In death's **dream kingdom**
 Let me also wear
 Such delectate disguises
 Rat's coat, crowskin, crossed **staves**
 In a field
Behaving as the wind behaves
 No nearer –

Not that final meeting
 In the **twilight kingdom**.

3
This is the dead land
This is the cactus **land**
 Here the **stone** images
 Are raised, here they receive
 The supplication of a **dead** man's hand
 Under the twinkle of a **fading** star.
 Is it like this
 In death's other **kingdom**
 Waking alone
 At the hour when we are

Lips that would kiss
 Form prayers to broken stone.

4
 The eyes are not here
 There are no eyes here
 In this valley of dying stars
 In this hollow valley
 This broken jaw of our lost kingdoms

In this **last** of meeting places
 We grope together
 And avoid **speech**
 Gathered on this **beach** of the tumid **river**

Sightless, unless
 The eyes reappear
 As the perpetual **star**
 Multifoliate rose
 Of death's twilight kingdom
 The hope only
 Of empty men.

Here we go round the prickly pear
Prickly pear prickly pear
Here we go round the prickly pear
At five o'clock in the morning.

Between the idea
 And the realty
 Between the **motion**
 And the act
 Falls the shadow

For Thine is the Kingdom

Between the conception
 And the **crat**ion
 Between the **emotion**
 And the response
 Falls the shadow

Life is very long

Between the desire
 And the spasm
 Between the potency
 And the **existence**
 Between the **essence**
 And the descent
 Falls the shadow
 For Thine is the Kingdom

For Thine is
 Life is
 For Thine is the

This is the way the world ends

Trembling with tenderness Lips that would kiss Form prayers to broken stone.	<i>This is the way the world ends This is the way the world ends Not with a bang but a whimper.</i>
--	---

<p>Քանդակած, ըստե ձե՛ռը մեռածի Աղաչո՛ւմ ա դրանց Աղջամուղջ աստղի թրթռոցի տակ:</p> <p>Ըսե՛նց ա որ Է՛ն մի Արքայության մեջ մահի Որ գարթնես մեն-մենակ Է՛ն ժամին Երբ դողում ենք քնքշանքից Շուրթերը որ պտի համբուրեին Աղոթո՛ւմ են ջարդուխուրդ քարին:</p> <p>4 Աչքերն ըստե չե՛ն Չէ՛, չէ՛, ըստե չե՛ն Մեռնող աստղերի էս դաշտում Էս փո՛ւշ դաշտում Էս ջարդուխուրդ ծնո՛ւտը Մեր կորած արքայության:</p> <p>Ամբոխված – վարար գետի է՛ս ափին Ժամադրության էս վերջի՛ն վայրում Իրա՛ր հետ խարխափում Ու խոսքից ե՛նք խուսափում:</p> <p>Անտեսարան, մինչև Աչքերը նորից չերեվան Ոնց որ ա՛ստղը հավերժ Մթնշաղ մահի արքայության Բազմաթերթ վարդ – Դատարկ մարդու Հո՛ւյսը մեն-միակ:</p> <p>5 <i>Պարում ենք շուրջը փշոտ տանձի Պարում ենք շուրջը փշոտ տանձի Պարում ենք շուրջը փշոտ տանձի Առավոտը-լուս վեց անց կեսին:</i></p> <p>Արանքն իդեայի ու Գոյի Արանքը շարժի ու Գործողության Ստվե՛րն ա ընգած</p> <p style="text-align: right;">Ձի քո՛ է արքայություն</p> <p>Արանքը հղանալու ու Արարելու Արանքն զգացմունքի ու Արձագանքի Ստվերն ա ընգած</p> <p style="text-align: right;">Կյանքը շա՛տ ա երկար</p> <p>Արանքը ցանկության ու Կարկամելու Արանքն ունակության ու Կեցության</p>	<p>3 Սա մեռած երկիրն է, Կակտուսի երկիրը Այստեղ են հառնում քարե Կուռքերը և ստանում Ողորմածությունը մեռյալ ձեռքի Հանգչող աստղերի շողի ներքո:</p> <p>Այսպե՛ս է լինում Մահվան մյուս արքայությունում Արթնանալ մենակ Այն ժամին երբ մենք Դողում ենք քնքշանքից Շուրթեր որոնք գիտեին համբուրել Ջարդված քարին են աղոթք ասում:</p> <p>4 Աչքերն այստեղ չեն Այստեղ աչքեր չկան Մեռնող աստղերի այս դաշտավայրում Սնամեջ դաշտում Եվ մեր կորուսյալ արքայությունների Ջարդված երախում</p> <p>Որ վերջին վայրն է մեր հանդիպման Մենք խարխափում ենք կուրացած Եվ չենք խոսում Հղի գետի ափին կանգնած</p> <p>Կուրացած, մինչեվ Աչքերն են հայտնվում Ինչպես աստղը մշտնջենական Կամ աղջամուղջի արքայության Վարդը բազմաթերթ Որ դատարկ մարդկանց Հույսն է հավետ:</p> <p>5 <i>Շուրջայար ենք բռնել կակտուսի շուրջը Կակտուսի շուրջը կակտուսի շուրջը Շուրջայար ենք բռնել կակտուսի շուրջը Առավոտվա ժամը հինգին:</i></p> <p>Գաղափարի և Իրականության միջեվ Ընթացքի և Գործողության միջեվ Ստվերն է ընկնում</p> <p style="text-align: right;">Ձի քոնն է արքայությունը</p> <p>Հղացման և Արարման միջեվ Զգացմունքի և Պատասխանի միջեվ Ստվերն է ընկնում</p> <p style="text-align: right;">Կյանքը շատ երկար է</p>
--	---

<p>Արանքն հավերժի ու Գահավեժի Ստվերն ա ընգած <i>Ձի քո՛ է արքայություն</i></p> <p><i>Ձի քո՛ է Կյանքը շա՛տ ա Ձի քո՛ է արք...</i></p> <p><i>Կյանքն ըսե՛նց ա պրծնում Կյանքն ըսե՛նց ա պրծնում Կյանքն ըսե՛նց ա պրծնում Ոչ թե շրիկոցով այլ կաղկանձով:</i></p>	<p>Ցանկության Եղ ջղացնցման միջեվ Կարողության Եվ գոյության միջեվ Էության Եվ անկման միջեվ Ստվերն է ընկնում <i>Ձի քոնն է արքայությունը</i></p> <p><i>Ձի քոնն է Կյանքը Ձի քոնն է</i></p> <p><i>Այսպես է վերջանում աշխարհը Այսպես է վերջանում աշխարհը Այսպես է վերջանում աշխարհը Ոչ թե պայթյունով այլ կաղկանձով:</i></p>
--	---

1. Աբեղյան Մ. – *Հայոց լեզվի տեսություն*, Լույս հր., Երևան, 1931, 1964:
2. Աբեղյան Մ. – *Երկեր, Ը հտ., Հովհաննես Թումանյանց «Բանաստեղծություններ»*, ՀՍՍՀ ԳԱ հր., Երևան, 1975:
3. Աբեղյան Մ. – *Երկեր, Է հտ., Մի քանի քերականական խնդիրների մասին*, ՀՍՍՀ ԳԱ հր., Երևան, 1985:
4. Աբովյան Խ. – *Վերջ Հայաստանի*, Սովետական գրող, Երևան, 1984:
5. Աղայան Ղ. – *Երկեր, Գ հատ.*, Հայպետհրատ, Երևան, 1940:
6. Աճառյան Հր. – *ԼԲՀԼ = Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, հատ. 1-8, Երևան, 1952-1967:
7. Աճառյան Հր. – *ՀԱԲ = Հայերեն արմատական բառարան*, ԵՊՀ հր., հատ. Ա-Դ, **Երևան**:
8. *Արիստոտել, Աթենական հասարակարգը*, «Հայաստան», Երևան, 2000:
9. Eckersley C. E. – *Essential English, book 3*, Longmans, Green @ Co. Ltd., London; Sofia, 1967:
10. Թումանյան Հ., *Երկերի ժողովածու*, «Հայաստան», հտ. 1-4, **Երևան**:
11. Թումանյան Հ. – *Երկերի ժողովածու՝ չորս հատորով 4-րդ հտ., «Մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին»*, «Հայաստան», 1969, Երևան: Տես նաև «*Հորիզոն*» թերթը, փետրվարի 4, # 26, Երևան, 1910:
12. Լոուկոսկա Չ. – *Գրի զարգացումը*, Հայպետհրատ, Երեվան, 1955:
13. Hayek, F.A. – *The Fatal Conceit: The Errors of Socialism*, “Routledge”, London, 1988:
14. Hayek, F.A. – *Law, Liberty and Legislation, vol. 1, 2 and 3*, Routledge, London.
15. Hayek, F.A. – *Law, Legislation and Liberty*, հատոր 1-ին՝ *Rules and Order*, 1973; հտ. 2-րդ՝ *The Mirage of Social Justice*, 1976; հտ. 3-րդ՝ *The Political Order of a Free People*, 1979. London, Routledge ևն):
16. Հարությունյան Մ. – *Թարգմանելու արվեստը*, «Լուսաբաց», Երևան, 2008:
17. Հարությունյան Մ. – *Մաթեմատիկայի և բնական գիտությունների դասագրքերի ոճը*. «Ինտեգրալ, գիտամեթոդական բնագիտական հանդես», հտ. 11-րդ, թողարկում 2, Երևան, 2008:
18. Հարությունյան Մ. – *Արտեմիզմն ու հայ պոեզիայի ողբերգությունը*, «Նոր աշխարհ», # 1 (6), Երևան, 2005: (Ընդգրկված ա էս ցուցակի 15-ի մեջ, սրա թարգմանական կանոնների ցուցադրության օրինակի համար):
19. Հարությունյան Մ. – *Կոմիտասի և Աբեղյանի անձնական ու մեր ընդհանուր ողբերգությունը*, «Լուսաբաց», Երևան, 2010, 2011:
20. Mises L. – *Human Action: A Treatise on Economics*, Fox & Wilkes, San Francisco, 1965.
21. Չարենց Ե. – *Երկերի ժողովածու 4 հատորով*, «Սովետական գրող», Երևան, 1986:
22. Պոպեր Կ. Ռ. – *Բաց հասարակությունն ու դրա թշնամիները*, հտ. 1, «Հայաստան», 2001:
23. Պոպեր Կ. Ռ. – *Բաց հասարակությունն ու դրա թշնամիները*, հտ. 2, «Հայաստան», 2006:
24. Николис Г., Пригожин И. – *Познание сложного*, “Мир,” Москва, 1990:
25. Սարուխան Հ. – *Վկայություններ*, «Խորհրդային գրող», Երեվան, 1989:
26. Տերյան Վ. – *Երկեր*, «Սովետական գրող», Երևան, 1989:
27. Толстой, Л. Н. – Собрание сочинений в двадцати двух томах, том 16-ый, “*О народном образовании; Воспитание и образование; Прогресс и определение образования*,” Художественная литература, Москва, 1983:
28. Толстой, Л. Н. – Собрание сочинений в двенадцати томах, том 9-ый, *Новая азбука и Русские книги для чтения*, Правда, Москва, 1987:
29. Осипов А. – *Самоорганизация и хаос*, Москва, 1983.

ՀԱՎԵԼՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. **Աճառյան Հր.** – *Հայոց լեզվի պատմություն*, հատ. I, II, Հայպետհրատ, Երևան, 1940-51:
2. **Աբրահամյան Ա. Ա.** – *Գրաբարի ձեռնարկ*, «Լույս», Երևան, 1976:
3. **Абу-ль-аля-аль-Маари – Избранные**, Москва, 1990.
4. **Адонц Н.** – *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915:
5. **Էլիոթ Թ. Ս.** – *Մեռյալ երկիրը*, Ս. Մկրտչանի թարգմ., 1991, Ապոլոն հրատ, Երևան:
6. **Kermode F., Hollander J.** – *Modern British Literature*, 1973, Oxford University Press, London.
7. **Հարությունյան Մ.** – *Արևելահայ գրական լեզվի էսորվա վիճակը*, «Երկիր», 1992, ապրիլի 10-ի, 11-ի ու 14-ի համարները, Երևան:
8. **Հարությունյան Մ.** – *Հայագիտության ամենաողբերգական ու ամենախայտառակ էջը*,
9. **Հարությունյան Մ.** – *Ջոնգոլիզմը*, «Աղբյուր», # 3-4, Երևան, 1999:
10. **Հարությունյան Մ.** – *Ինչո՞ւ են հայոց լեզվի քննությունները միշտ անարդար*, «Առավոտ» օրաթերթ, Երևան, 2009 թվի օգոստոսի 26-ի ու 27-ի համարները:
11. **Հարությունյան Մ.** – *Զվարճալի այբ ու բեն*, «Անտարես», Երևան, 2003:
12. **Հարությունյան Մ.** – *Սաթեմատիկայի և բնական գիտությունների դասագրքերի ոճը*, «Ինտեգրալ, գիտամեթոդական բնագիտական հանդես», հատոր 11, թողարկում 2, Երևան, 2008:
13. **Հարությունյան Մ.** – *Թվական-գոյական զույգի գործածությունը*, «Ինտեգրալ, գիտամեթոդական բնագիտական հանդես», հատոր 11, թողարկում 2, 2008, Երևան:
14. **Ղազարյան Ա. Ղ.** – *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Երեվան, 1981:
15. **Մանանդյան Հ.** – *Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1925:
16. **Մելիք-Բաշխյան Ստ.** – *Հայկական հնագրություն*, ԵՊՀ հր., Երևան, 1987:
17. **Մելյե Ա.** – *Հայագիտական ուսումնասիրություններ*, ԵՊՀ հրատ, Երևան, 1978:
18. **Նարեկացի Գ.** – *Մատյան ողբերգության*, Մկրտիչ Խերանյանի թարգմ., «Հայպետհրատ», Երևան, 1960:
19. **Խորենացի Մ.** – *Պատմություն հայոց*, ԵՊՀ հրատ, Երևան, 1981:
20. **Մնացականյան Աս.** – *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, 1956, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երեվան:
21. **Նարեկացի Գ.** – *Տաղեր և գանձեր*, Աշխ. Արմինե Քյոչկերյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1981:
22. **Նարեկացի Գ.** – *Մատյան ողբերգության*, Վազգեն Գևորգյանի թարգմ., «Սովետական գրող», Երևան, 1979,:
23. **Նարեկացի Գ.** – *Մատյան ողբերգության*, Աշոտ Պետրոսյանի թարգմ., «Լեգալ Պլիս», Երևան, 2008:
24. **Շարաբխանյան Պ. Ե.** – *Գրաբարի դասընթաց*, ԵՊՀ հրատ, Երևան, 1974:
25. **Շահագիզ Ե.** – *Դիվան Խ. Աբովյանի*, Արմֆան, Յերեվան, 1949:
26. **Քուչակ Ն.** – *Հայրենի կարգավ*, կազմ. Ավ. Ղուկասյան, Հայպետհրատ, Երևան, 1957:
27. **Feynman R. P., Leighton R. B., Sands M.** – *The Feynman Lectures on Physics*, Addison-Wesley, Massachusetts, 1963-1965:
28. **Ֆրեզեր Ջ. Ջ.** – *Ոսկե ճյուղը*, «Հայաստան», Երևան, 1989:
29. **Frazer J. G.** – *Adonis, Attis, Osiris*, “MacMillan,” London, 1907:
- 30.

1. Արիստոտել – Աթենական հասարակարգը [8]:

Թարգմանած ա անգլերենից: Էս գործն Արիստոտելի մեզ հասած միակ «պատմական» աշխատությունն ա, ինչը նվիրված ա Աթենքի սահմանադրության պատմությանը: Թարգմանությանը կցած են թարգմանի շեղատառ դիտողություններն ու ծանոթությունները: Տեղեկություններ կան, որ Արիստոտելի նման շարադրանքների թիվը էղել ա մոտ 158, բայց մեզ մենակ էսի՝ ա հասե: Երեվի էս 158 հատն էլ գրվել ա Արիստոտելի հանձնարարությամբ, որոնց հիման վրա էլ գրել ա իր հիմնարար գործերից մեկը՝ *Politica-ն*:

2. Կառլ Ռեյմունդ Պոպեր – Բաց հասարակությունն ու դրա թշնամիները [22-23]:

Թարգմանած ա անգլերենից: Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության, լիբերալիզմի ու լիբերալիզմի պատմության մասին ա: Առաջի հատորը Պլատոնի գործերի վերլուծությունն ու հին հունական դեմոկրատիայի պատմությունն ա, ու ցույց ա տրված, որ մեր օրերի տոտալիտարիզմի ու ավտորիտարիզմի ակունքները Պլատոնի ու Հերակլիտոսի աշխատություններն են: Առաջին հատորում նաև թարգմանի դիտողություններն ու ծանոթագրություններն են, ու թարգմանն առաջարկել է նյութը լուսաբանող զգալի թվով գրականություն: Նույնն արված էր համ էլ 2-րդ հատորում, բայց հրատարակիչը դրանք հանեց: Երկրորդ հատորը նվիրված ա Արիստոտելի, Հեգելի ու Մարքսի գործերի վերլուծությանը, ու ցույց ա տրված, որ մեր օրերի տոտալիտարիզմը, ավտորիտարիզմը, բոլոր գույն ու երանգի նացիզմները գալիս են Հեգելի ու սրա գաղափարների վրա հիմնված Մարքսի ու Ֆիխտեի ու այլոց գործերից, իսկ Հեգելի ակունքներն էլ՝ Պլատոնի ու Հերակլիտոսի գաղափարներն են:

3. Զվարճալի այբ ու բեն, «Անտարես», 2003, Երևան:

Էս գրքի առաջին մասը կազմված ա հայերենի այբուբենի տառերով սկսվող զվարճալի քառյակներից, իսկ երկրորդ մասն այբուբեն ստեղծելու սկզբունքների ու հայերենի այբուբենի աստիճանական փոփոխությունների կարճ պատմությունն ա: Հիշատակված են նաև հայկական երաժշտական խազերն ու հայկական ու հռոմեական տառալին թվանշաններն ու թվերը:

4. Հեքիաթների գանձարան – «Լուսաբաց», 2004, Երևան:

Էսի Չ. Դիկենսի, Սոմերսեթ Մոեմի, Կարել Չապեկի ու Հանս Բրիստիան Անդերսենի մի քանի հեքիաթի փոխադրությունն ա:

5. Թարգմանելու արվեստը [16]:

Թարգմանելու արվեստին նվիրված այս գիրքն իր նախադեպը չունի ոչ միայն հայ գրականության պատմության մեջ, այլև առհասարակ, եթե նկատի առնվի սրա հակիրճությունը, սիստեմատիկայի ձևը, հեղինակա-

յին մեկնություններն ու թարգմանական «կանոնները» համակարգելու փորձը, ինչը (գոնե հայերենի համար) իրո՛ք առաջին անգամ է արվում: Համեմատված են՝ Դիլան Թոմասի, Լերմոնտովի, Պուշկինի, Բլոկի, Եսենինի, Պաստերնակի, Բրոդսկու, Բյորնսի, Ֆր ոստի, Յեյցի, Դ. Հ. Լովրենսի, Հարդու ու Էմսոնի ոտանավորների բնագրերը սրանց հայերեն թարգմանությունների հետ: Համեմատության համար ընտրված են՝ Պ. Սևակի, Վ. Դավթյանի, Հ. Սահյանի, Վ. Գևորգյանի, Հ. Միրզոյանի, Սաղաթյանի, Ս. Վահունու, Ա. Հարությունյանի, Հ. Թամրազյանի, Ն. Աթաբեկյանի, Ա. Պողոսյանի ու այս գրքի հեղինակի թարգմանությունները:

Գրքի հավելվածը ներկայացնում ա օտար լեզուներից հայերենի փոխ առած է՛ն բոլոր բառերը, որոնք գործածվել են մեր աշխարհաբար գրականության մեջ: Հեղինակն այդ բառերը քաղել ա Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից»: Էս հավելվածը օքտակար կլիսի հայերենի քննություն հանձնողներին ու ուսուցիչներին, ու, առհասարակ, հայ ընթերցողին:

Գիրքը նախատեսված ա համալսարանների ու քոլեջների է՛նն ուսանողների համար, ովքեր մասնագիտանում են թարգմանության ասպարեզում, չնայած էսի օքտակար կամ հետաքրքիր կլիսի հայ գրականությամբ շահագրգիռ բոլոր անձանց՝ արձակագիրներին, բանաստեղծներին, լրագրողներին, ուսուցիչներին ու աշակերտներին ու, առհասարակ, բոլոր ինտելեկտուալներին:

6. *Կոմիտասի և Աբեղյանի անձնական ու մեր ընդհանուր ողբերգությունը,*

Էս գիրքը պնդում ա, թե մենք չենք հետևում Մաշտոցի, Աբովյանի, Կոմիտասի, Թումանյանի ու մեր մնացած մեծերի պատգամներին, չնայած անընդհատ պնդում ենք, թե պահպանում ենք մեր ազգային արժեքները: Ու էսի համ էլ պատմում ա **սնափառ հայագովության** վնասների մասին:

Մերութան Զավենի Հարությունյան

ԸՆԶԱՌՅՈՒԾՆ ԱԶԱՏ, ՆՐԲԱԳԵՂ ՈՒ ԾԱՊՈՒԿ
(ԳՐԵԼՈՒ ԱՐՎԵՍԸ)

Հրատարակչության տնօրեն՝
Հեղինակի լուսանկարը՝ Արթուր Հարությունյանի

Ըրընդունվել է

Ընդունվել է տպագրության ...-ը հունվարի 2013
Տպագրված է
«... հրատարակչատան»
տպարանում

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ